3394

281
9-95

2010

2001

e - f

200
315-3Ա
281
գ-95
Աr
Ա.

200
315-3Ա

ՍՐԲՈՅ ՀՕՐՆ ՄԵՐՈՅ

ԵՐԱՆԵԼՒՈՅՆ

ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ

ՅԱՃԱԽԱՊԱՏՈՒՄ ՃԱՌՔ

ԼՈՒՍԱՒՈՐՔ

ՀՍԽՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Публичная Библиотека С.С.Р.А.
7/XI 1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

«Գրել ձեզ եւ ուսուցանել կամիմ՝ եղբարք իմ եւ որդիք՝ զորս ի Քրիստոս Աւետարանաւն ծնայ»։
Գւ՛ ժէ։

10094
19904

ՅԱՌԱՋԱԲԱՆՈՎ՝ ՀԱՄԵՄԱՏՈՒԹԵԱՄԲ
ԵՒ ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ

Ա. ՏԷՐ ՄԻՔԵԼԵԱՆԻ.

ՏՊԱՐԱՆ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ
1894 — ՌՅԽԳ

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ՄԿՐՏՉԻ Ա.

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

29865-Ա.հ.
13615-58

ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ

Տ. Տ. ՄԿՐՏՉԻ

ՍՈՒՐԲ ԼՈՒՍԱՒՈՐՉԵԱՆ ԳԱՀԱԿԱԼԻ

ԱՍՏՈՒԱԾԸՆՏԻՐ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՈՐԴԻԱԿԱՆ ԱԿՆԱԾՈՒԹԵԱՄԲ

ԱՄԵՆԱԽՈՆԱՐՀԱԲԱՐ ԸՆԾԱՅԱԲԷՐԷ

Ի ՍՐԲԱՆՈՒԷՐ ՎԱՍՏԱԿՈՑ

ՀՐԱՏԱՐԱԿԻՉՆ·

ՅԱՌԱՋԱԲԱՆ.

Հայաստանեայց Եկեղեցու առաքելական վարդապետութեան հիմնական աղբիւրը Ս. Գրքից յետոյ Ս. Գրիգոր Լուսաւորչի Յաճախապատում ճառերն են, որոնք անփոփ տալիս են դաւանական և բարոյական բոլոր սկզբունքներն իբրև հիմունք և սահման նորա հաւատարիմ որդոց։ Այս ճառերն երկրորդ տեղն են բռնում այն վարդապետութիւնից յետոյ, որով ուսոյց մեր Ս. Հայրապետը Հայաստանեայց վերածնեալ զաւակներին և որ աւանդուած է Ագաթանգեղոսի պատմութեան մէջ։ Սակայն Յաճախապատումի բովանդակութիւնն այնքան բազմակողմանի է և մտքերով ու գաղափարներով հարուստ, այնքան գրաւիչ է և ընտիր ու ճիշդ արտայայտութիւններով ճոխ, որ մենք կարող ենք ամենայն իրաւամբ նոյն իսկ գիտնական տեսակէտով պահանջել իւրաքանչիւր ընթերցասէր Հայից՝ ունենալ այս գրքոյկը սեղանի վրայ։

Հարկաւ Ս. Գիրքը բովանդակում է իւր մէջ այն ամենն, ինչ որ հզօրապէս կարող է կրթել և մխիթարել ամենայն հաւատացողի, այնով հանդերձ Յաճախապատումն ունի և իւր յատուկ օգնականութիւնը, վասն զի ոչ միայն կրացայայտէ աստուածային խօսքի առանձնայատկութիւնք. այլ և կարճ ի կարճոյ կհամառօտէ, հետևաբար բանավարելով զարկ կտայ մտքերի զարթուցման և երկնային յայտնութեան ընդարձակ տեսութիւնն ամփոփելով՝ կներշնչէ յարմարապէս մտածող Հայի հոգու մէջ։ Որքան նոր ի նորոյ ոճերով, դարձուածներով և օրինակներով մատչելի դառնան Քրիստոսի խօսքերը նոր սերնդի համար, այնքան առաւել կրեղմնաւորուին, վասն զի Աստուծոյ խօսքը կենդանի խօսք է՝ ըստ ամենայնի կատարեալ, և Ս. Հոգու շնորհն առաքելական աւանդութեամբ պարգևատրող եկեղեցու մէջ ընդունակ է՝ ամեն ժամանակ գեղեցկապէս ներգործելու իւր ծառաների հոգու վրայ։

Սակայն քանի ևս առաւել կներգործեն և զուարթութիւն կցօղեն Հայոց սրտերի վրայ այն քարոզներն, որոնք բղխում են Հայ ազգը լուսաւորող և վերածնող մեծ Հօր աստուածաբարբառ խրատների տակ կրթուած հոգուց։ Ս. Գրիգոր Լուսաւորիչն է մեր հոգևոր ծնողը. նա է մեր հոգենուէր դաստիարակն ու բարեխօսը. նորան ուղարկեց Աստուած, որ առաքելոց խոպանացած անդերը նորոպէս վարէ և Քրիստոսի սերմերը ցանէ Հայոց սրտերում։ Արդ՝

ուրեմն և Հայաստանեայց Եկեղեցու լուսածին զաւակները Նորա զուլթանով պէտք է բարեզարդուին և Նորա եղանակով Ս. Աւետարանի սերմերն ընդունեն ու Աստուած փառաւորեն։ Նա է Քրիստոսի պաշտօնեան դարձել մեզ համար և Նա է Ս. Հոգու շնորհները ստացել ու իւր արժանաւոր յաջորդներին աւանդել, որպէս զի միշտ բաց պահեն երկնային դռները Հայաստանեայց Ս. Եկեղեցու որդւոցն առաջ։

Բայց ի՞նչ ենք տեսնում. մինչև այսօր անընդհատ է ժամանակս Հայոց և մինչև անգամ հոգևորականաց համար մեր Ս. Հօր ընտիր գրութիւնը։ Երկու անգամ հրատարակուեց ի Կ. Պօլիս և երրորդ անգամ ի Վենետիկ, սակայն շատ հազուագիւտ են այն անձինք, որոնց ձեռքում կարողանանք գտնել այդ տպագրութիւնք։ Ուրախ ենք, որ այժմ այս ընտիր գրուածքը լոյս է տեսնում Նորին Վեհափառութեան բարձր տնօրինութեամբ Ս. Էջմիածնի տպարանից և կարող ենք յուսալ թէ շուտով կտարածուի՝ ուր հարկն է։

Հարկաւ՝ տալիս ենք այն, ինչ որ գտնում ենք Ս. Էջմիածնի մատենադարանում. անշուշտ այս շարժառիթ կլինի թերևս վանքերի անկիւններում գտնուին հնագոյն գրչագիր օրինակներ և ուղարկուին Ս. Էջմիածին, որպէս զի կարողանանք ապագայում տասնել և ճշդել ընթերցուածքները։ Մեր օրինակներն առ այժմ այնքան նըպաստեցին, որ նախկին տպագրութեանց բազմաթիւ սխալներն և վրիպակները վերստին սրբագրուեցան։ Այլ և առաջին երկու ճառերը մեծ մասամբ այլ են իւրեանց ընդհանուր ձևակերպութեամբ ըստ հին օրինակաց, քան թէ մինչև այժմ մեզ յայտնի եղածները։ Մեր օրինակին համաձայն են և գրչագրաց մէջ պատահած վկայութիւնք այս երկու գլուխներից։

Յաճախապատումն, որ առաջին անգամ լսեցրել է Հայոց մէջ Ս. Գրքի ձայնը, յուսալ է տալիս նաև, որ նախագուշակ կլինի Ս. Գրքի մօտալուտ հրատարակութեան։ Անշուշտ այսպիսով օրըստօրէ աւելի կհնչի Ս. Աւետարանի ձայնը նոյնպէս ժողովրդի մասնաւոր անկիւններում և շրջաններում և կկրթէ նոցա, ինչպէս որ պահանջում է աստուածային ձայնը Հայաստանեայց Ս. Եկեղեցում։

Երբ որ Ս. Գ. Լուսաւորչի նախակրթական վարդապետութիւնն և Ագաթանգեղոսի պատմութեան մէջ ընտիր համեմատութեամբ հրատարակուի, այն ժամանակ լոյս կընծայենք և մեր Ս. Հօր մանրամասն կենսագրութիւնն իւր բոլոր պարագաներով, որում և ամ-

փոփ կյառաջադրենք նորա դաւանական և բարոյական վարդապետութիւնն հասարակաց բարբառով. այդ նպատակի համար կան արդէն բաւականաչափ նիւթեր ժողովուած։ Իսկ նախ քան այդ անկարելի է հիմնովին խօսել նաև Յաճախապատումի մատենագրական հարցերի վրայ։ Եթէ մատենագրական տեսութեան ենթարկենք, այն ժամանակ պէտք կունենանք նաև Ագաթանգեղոսից օգտուելու և կամ նորա հետ համեմատելու, մինչդեռ այդ անհնար է, քանի որ ցայժմեան հրատարակութիւնք չափից դուրս լիք են սխալներով Մայր Աթոռի մատենադարանի 12 հատ ընտիր և հին գրչագրների դիմաց։

Առ այժմ միայն այսքանս կասենք, որ Յաճախապատումը Ս. Գրիգոր Լուսաւորչի աւանդածն է և այդ նկատմամբ ոչ մի կասկած չունինք. Դեռ մինչև օրս օրինաւոր հիմքերով կասկած յայտնողներ չեն եղել, ուրեմն և առժամայն երկար խօսելու պէտք չունինք, սակայն աւելորդ չի լինիլ մեզ բերել քանի մի գլխաւոր փաստեր, որոնք ակներև են կայնում մեր համոզմունքը,

Նախ որ՝ մեր հնագոյն պատմութեանց մէջ յիշատակութիւն կայ՝

Բ. Որ մեր նախնիք վկայութիւններ են բերում Յաճախապատումից.

Գ. Յաճախապատումի ոճերն ու դարձուածները պատահում են նաև մեր Ս. Հայրերի գրուածքներում.

Դ. Ս. Սահակի հրամանով Եզնիկ Կողբացու թարգմանած այն կանոնագրութեան մէջ, որ Ս. Գ. Լուսաւորչունն է, կրկնւում են Յաճախապատումի դարձուածներն և մտքերի ընթացքը.

Ե. Յաճախապատումի մտքերը շատ անգամ ակներև ցոյց են տալիս, որ ասուած են մի նախաքարոզ անձից առ մի նորադարձ ժողովուրդ.

Զ. Յաճախապատումը քարոզուել է մի այնպիսի ժամանակ, երբ Յոյները դեռ հեթանոս էին, ինչպէս տեսնումենք Ը. ճառից.

Է. Դաւանանքների պատմութեան ուղիղ տեսակէտով ոչինչ չենք գտնում բովանդակութեան մէջ, որ անյարմար լինէր Դ. դարում Հայաստանեայց Եկեղեցու զարգացման աստիճանին.

Ը. Յաճախապատումը միշտ տիրապետող դաստիարակիչ է եղել Հայոց Եկեղեցու հայրերի համար և մինչև անգամ կարդացուել է եկեղեցում՝ անշուշտ աւանդական հին սովորութեամբ. ինչպէս օրինակ պահոց ճառն, որ գտնումենք գրեթէ բոլոր ճառընտիրների մէջ.

Թ. Ս. Գրիգոր Լուսաւորիչը չէր կարող թողնել իւր հօտն առանց

մի Հաստատուն վարդապետութեան, քանի որ Նորա յաջորդներն և աշակերտները շարունակարար շեշտում են իւրեանց գործունէութեան ուանցքը՝ թէ պէտք է և պարտ է միշտ Հաւատարիմ մնալ Հայաստանեայց Եկեղեցու Հռչակաւոր Ս. Հօր պատուիրաններին։

Առ այժմ բաւ Համարելով յիշեալ կէտերը, դառնանք Հաւաստիարար դէպի այն գրչագրներն, որոնք ծառայել են մեզ բնագրի ճշգութիւնը վերականգնելու Համար։

Ս, Էջմիածնի մատենադարանում կան Յաճախապատումի Հինգ գրչագրներ, որոնք կարելի է երեք կարգերի բաժանել։ Առաջին կարգին են պատկանում երկու Հնագոյն գրչագրներ, որոնք Ա. և Բ. մեծատառերով ենք Նշանակում։ Երկրորդ կարգում է Գ. օրինակն, որ պատկանում է Վենետկի Հրատարակութեան խմբին. իսկ Դ և Ե օրինակները կազմում են Կ. Պօլսի տպագրութեան Հետ երրորդ կարգը։

Ա. օրինակն (№ 1655), որչափ մեզ յայտնի է, ամենահին գրչագիրն է Յաճախապատումի, որ կայ Հայոց մատենադարաններում։ Այս գիրքը քառածալ է, գրուած է թղթի վրայ բոլորագիր, կաշեկազմ և բաւական վնասուած է թէ արտաքուստ և թէ թերթերով։ Սորա մէջ բովանդակուած է սկզբում և Ագաթանգեղոսի պատմութիւնը, գրուած նոյն գրչով։

Այս գրչագրի մէջ գտնում ենք Հետևեալ յիշատակարանը

«Արդ պատուական Հայրապետին տեառն Համազասպայ, յուսով Բարերարին Աստուծոյ Տեառն Յիսուսի, Նայեցեալ ի սէր վկային և ի Համբերութիւն սուրբ Հօրս մերոյ Գրիգորի Լուսաւորչիս, ետ գրեալ զսուրբ մատեանս, կոչեցեալ Ագաթանգեղոս, վասն յիշատակի և միջնորդութեան յաւուր աՀոր (աՀաւոր) և մեծ ատենի, անդ ուր բանքն սպառին և գործքն թագաւորեն։

Եւ ընծայեցոյց զսա ի սուրբ Կարապետն, ի վանս Յոհաննու, ի լուսաւորութիւն Հաւատացելոց և ի վարժումն մանկանց եկեղեցւոյ և ի փառս անմահ Բանին Աստուծոյ, որ է օրՀնեալ յաւիտեանս։ Ի թվին ՉԽԲ», այն է 1293։

Կայ և Նորոգման յիշատակարան միմիայն Ագաթանգեղոսի վերջում յիշեալ յիշատակարանից յետոյ, մինչդեռ նոյն Նորոգողի յիշատակարանը Յաճախապատումի վերջում պատռուած է։ Դնենք այստեղ այդ յիշատակարանը.

«ՇնորՀօք և ողորմութեամբ ամենազօր Ս. Հոգւոյն եղև Նորո-

գումն այսմ պատմագրի, որ կոչի Ագաթանգեղոս, որ պատմէ զվարս և զգործս Ս. Գրիգորի Լուսաւորչին և մեծազօր արքային Տրդատայ սկզբանէ մինչև ցկատարումն և զբուն վարդապետութիւնն և զՅաճախապատումն. ի թուին ՌՃԽ և Գ. ի Թորգոմեան սեռի, (=1691) յերկրիս Արարատեան, ի գաւառս Կարբւոյ, ի Հրաշափառ և գերապանծ ս. ուխտիս Յօհաննու վանք, ընդ հովանեաւ մեծի ամլորդւոյն Յօհաննու Կարապետին և Մատթէոսի աւետարանչի և Պարսամայ ճգնաւորի և Պանտալէոնի բժշկի, և այլ միայեղէն սրբոցս, որք կան աստէն ժողովեալ. ի թագաւորութեան Պարսից Շահ Սուլէմանի, և յիշխանութեան տանս Արարատեան Հաճղուլի-բէկի: Եւ ի կաթուղիկոսութեան Ս. Էջմիածնի Տեառն Նահապետի: Եւ (յ)առաջնորդութեան ս. ուխտիս Սարգիս վարդապետի: Ձեռամբ աղկաղկի և տրպի Զաքարեա արշի սարկաւագի Քանաքեռցւոյ, որ ամս Ծ և Դ. ստ ծառայեմ՝ անհաճոյ գեգերմամբ. որ ԿԵ. ամի կենաց իմոց նորոգեցի չքաւորութեամբ և աղքատութեամբ իմով և ոչ ոք էր, որ օժանդակ լինէր: Սակայն որպէս և է՝ նորոգեալ աւարտեցի և աւանդեցի զսա յառաջին բնակութիւն իւր Յօհաննու վանք ի դուռն մեծի ամլորդւոյն, որ յոտին Արագածու, հանդէպ Արայու լերինն, ի գլուխս բարձրաբերձ քարանցն, ի վերայ կարկաճահոս և ծիծաղածաւալ գետին Քասաղու:

Արդ՝ որք կայք աստ և ընթեռնուք զսա, յիշեցէք առաքաւորնակ և աստուածընկալ յաղօթս ձեր զառաջնորդ վանիցս զՍարգիս վարդապետն և այլ միայեղէն միաբանք սորա, զ'Բ. Գրիգոր և զՅակոբ վարդապետք, զտէր Ղազար եղտէր Յովսափ, զփակակալ Մկրտիչ սարկաւագ, զԽաչատուր, զՄարգարէ սարկաւագունք, զՄօսէս Վասիլ տնտես, զԴօլան և զՅովսէփ և զՅարութիւն մուղտեսիք և այլ մանկունք նորա թուով Լ., որք մակաղեալ կան ի գոգս և ի ծոց ս. Կարապետին. և զիս խոկ Զաքարեայս, որ բազում չարչարանօք հազիւ կարացի կատարել, քանզի յոյժ ապականեալ էր, վասն զի բազում լուսանցս հատեալ էին և իւրեանց կարիքն անցուցեալ, և ես զոր ինչ կարացի նորոգեցի, և զոր ոչն կարացի, ներեցէք ինձ և զաշխատանս իմ ապախտ մի առնէք վասն Աստուծոյ. զի և դու որ ընթեռնուս՝ յԱստուծոյ ասցես զվարձս. ամէն:

Այս յիշատակարանին հետեւում է.

«Սեղանս կազմեալ արքունական, ի խրախուսթիւնս հոգեկան,
Յօրժամ գայցէ անմահ փեսայն, Նստի աթոռ դատողական.

Յայնժամ կոչէ զազգս ամենայն հաստուցանել զվարձս մարդկան.
Անդ պատահի Զաքարիայն, երթ յետս յինէն՝ լսէ զձայն,
Ով եղկելի թշուառական վայ և եղուկ ո՜հ քեզ կարդան»։

«Անուն իմ բաղկանայ չորից տառից, առաջինն ի միակէն, երկրորդն ի երկրորդէն, երրորդն և չորրորդն ի չ-րրորդէն, և Քրիստոսի փառք յաւիտեանս ամէն»։

Նորոգութեան միջոցին խառնուած թերթերից շատերը տեղափոխուած են մնացել։

Հնութեան ուրիշ հետքերից զատ նշանաւոր է բովանդակութեան մէջ և այս, որ շարունակ Հոգւի, Հոգւիք, Որդւի եայլն է գրուած փոխանակ Հոգի. Հոգիք. Որդիք։

Այս օրինակի կարգաւոր արտագրութիւնն է Բ. (№ 1658)։ Սորա մէջ Ագաթանգեղոսի վերջում կայ և մի հաւատամք, որին հետեւում է և դաշանց թուղթը թերատ։ Սոյն կտորները նոտրագիր են, մինչդեռ մնացեալը նախընթացին նոյնանման բոլորագիր է։ Յիշատակարան կամ որ և իցէ յուշագրութիւն չկայ, ըստ երեւոյթին մոռացուած է, զի տեղեր թողուած են վերջերում։

Գ. օրինակն է №. 1484, թղթեայ. քառածալ, կաշեկազմ և մաքուր բոլորագիր։ Սկզբումն ունի Յաճախապատումն որին հետեւում են.

«Դաւանութիւն պատուական և ցանկալի յոյժ հաւաքեալք ի մի բազմաց սրբոց վարդապետաց»։

«Յաղագս մարդացելոյ Բանին Աստուծոյ դաւանումն»։

«Ա յսէ սկիզբն դաւանութեան ս. Երրորդութեանն, զոր խոստովանի և փառաւորէ ընդհանուր կաթուղիկէ եկեղեցիք, որպէս աւանդ(դ)եցին մեզ ականատեսքն Բանին Ճշմարտութեան՝ առաքեալք և մարգարէք և ուղղափառ վարդապետք եկեղեցւոյ»։

«Դաւանութիւն և խոստովանութիւն ի ս. Երրորդութիւնն, ասացեալ Եսայի վարդապետի յեզր վիրապին»։

«Հարցումն Յոհնանի և պատասխանիք Մովսէսի Հայոց Քերթողի և Դաւթի անյաղթ փիլիսոփայի»։ (= Գիրք էակաց)։

«Գիրք հաստատութեան և արմատ հաւատոյ և պատասխանիք ընդդէմ Նեստորականացն։ Զի ասեն հերետիկոսքն, եթէ ոչ միացաւ աստուածութիւն ընդ մարմնոյն, այլ որիշ որիշ խոստովանին զաստուածութիւն ի մարմնոյն, զոր քաւ լիցի ուղղափառաց զմտաւ ածել այսպիսի ինչ. այլ արիաբար վկայութիւն բերել պարտ է զմարգարէականքն զաւետարանականն և զառաքելականն և համարձակու-

թեամբ տալ պատասխանի ընդդէմ երկու բանիցն վկայութիւնք յաղագս Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի և եռանձնեայ աստուածութեան և մի բնութեան »:

Ջանազան հարց և պատասխանիք.

« Մխիթար քահանայի Սկևռացւոյ՝ յաղագս համապատուութեան երկոտասան առաքելոց . . . . »:

« Խրատ առ ուղղափառ հաւատացեալսն » Կիրակոս և Յովհաննէս վարդապետների:

« Սուրբ վարդապետին Վարդանայ խրատ »:

Գրիգոր Տաթևացու « Լուծումն պարապմանց ս Կիւրղի »:

« Յովհաննու Որոտնեցւոյ ասացեալ ի բան առաքելոյն Պօղոսի՝ որ ասէ՝ « Մարդով եղև մահ . . . . »:

« Յաղագս մանկանց առ ի կրթութիւն և վարժումն ի կրօնս քրիստոնէութեան »:

Վերջում կայ հետևեալ յիշատակարանը.

« Փառք ամենասուրբ Երրորդութեանն և մի Աստուածութեան Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ՝ այժմ և միշտ . . . : Եւ արդ ի թուականութեանս մերում հայկազեան սեռի ՌՃԾԵ ամին (1706) ես Նուաստ և Թարմատարս Յովսէփ անուամբ և եթ վարդապետս՝ որ եմ րաբունի և սրբազան Յակոբ վարդապետին՝ վերափոխեցելոյն առ Քրիստոս ի յոյսն ամենեցուն: իսկ Նարգենիս Աստուծոյ՝ ես վերոյգրեալ տկարս հոգով, որ եղէ շնորհօքն Քրիստոսի կարգեալ վերատեսուչ ս. աթոռոյս ս. Ստեփաննոսի վանից՝ որ ի մայրաքաղաքին Աստապատու: Զի կարի ըղձմամբ և փափականօք ի հալալ արդեանց իմոց ստացայ զայս յաճախապատում ս. Գրիգորի մերոյ Լուսաւորչի գիրքս և այլ ժողովածու աստուածաբանութեան գիրքս՝ որ են ի մի կարգ և ի տփի՝ և որպէս որ կայ ի կարգ ցանկին գրեալ: Յաղագս որոյ խնդրեմ հարցդ սրբազանից և աղերսեմ յեղբարցդ մաքրագունից՝ զի յորում աւուր և ժամանակի՝ որք պատահիքդ՝ զայս Յաճախապատում ս. Գրիգորի մերոյ Լուսաւորչի գիրս առ ի (ու)սումն կամ ընթեռնելով և կամ գաղափարելով՝ յիշեսջիք ի մաքրափայլ յաղօթս ձեր գիս վերոգրեալ ծերունի Յովսէփ փազերայս և զմարմնաւոր ծնողսն իմ Աւետիսն և Մարիամն, և յեղբարցն իմ, Հայրապետին, Օհաննիսին, Վարդանին և երկամբք սնուցեալ ուսուցիչս իմ, որ առ Աստուած են փոխեցեալ՝ միով Հայր մեղայիւ յիշեսջիք: Եւ որ առատն է ի տուրս բարեաց Քրիստոս

Աստուածն մեր, ձեզ յիշողացդ և մեղաց Թողութիւն հայցողացդ և մեզ յիշեցելոցս, ողորմեսցի ի միւս անգամ ս. գալստեանն իւրոյ։ Եւ արժանիս արասցէ լսել զիւր երանաւէտ և քաղցրալուր բարբառոյն, որ ասէ յաջակողմեան դասուն. եկայք օրհնեալք Հօր իմոյ, ժառանգեցէք զանսպառ արքայութիւնն երկնից։ Որ է օրհնեալ անզրաւ յաւիտեանս յաւիտենից, ամէն։ Հայր մեր որ յերկինս։ Գրեցաւ Ցաճախապատում գիրքս ի գիւղաքաղաքն Շօռօթ. ձեռամբ փծուն Սարգիս գրչի, որդի գոլով տէր Բագարատի։ Ով ընթերցողք ասացէք ողորմի՝ գրողին և ստացողին ամենայնի. որ է օրհնեալ յաւիտեանս ամէն»։

Այս օրինակը շատ նոյնանում է Վենետկի (Վ.) հրատարակութեան հետ, թէև տարբերութիւններ ես ունի։

Դ օրինակը № 1486, կաշեկազմ, թղթեայ, վեցածալ, նոտրագիր, բովանդակում է Ցաճախապատումն և մի «Քարոզ վերափոխման ս. Աստուածածնին ի բանն որ ասէ Սողոմոն «բազում դստերք ստացան մեծութիւն»», որի վերջում յուշագրուած է. «Զ.Յակոբ վարդապ՚տ արարող բանիս յիշեցէք ի Տէր և զգծող սորին զսուտանուն Լաջինս. զայս ետակս տետրս ի Թվին ՌՃԽԱ. մարտի Ի օրն գրեցի»։

Գրչագրիս յիշատակարանն է.

«Փառք ամենասուրբ Երրորդութեան անեղի և անիմանալի և յանհասանելի Աստուծոյն իմոյ և զիս արարողի և զօրութիւն տուողի իմոյ տկարութեանս և լոյս աչաց խաւարելոյս երկու մասամբք կատարել զհոգելից վարդապետական տառ մատենի ս. Գրիգորի Լուսաւորչի այսքան ազանց Հայաստանեայց, որ սուրբ և հոգեշահ բանիւք իւրովք և յաւետարանական բանիւք իբրև կաթն ջամբեաց տղայոց և ըսկալի (!) առակօք զիմանալին յայտարարեալ յանուշակ բանիւ, զի զամենեսեան մերձեցուսցէ յաստուածայինսն և որք լուիցեն, պայծառասցին երեսք հոգոցն, որպէս զանշէջ ճառագայթս։ Զի զամենեսեան հրաւիրէ յերկնային հարսանիսն, մանաւանդ զմիանձունս, որք ճգնաւորական յաշխատութեամբ կան և որք ունին զաստիճան առաջնորդութեան, և որք գործավարք են նոցուն, կեալ անարատ և յամբիծ ի կենցաղս, զի հասցեն յաւետեացն Հօր. վասն որոյ ցանկացող եղէ ես ծառայ Յիսուսի Քրիստոսի սուտանուն Լաջին գրիչս, որ գրեցի և յաւարտեցի զսա ի Թվին ՌՃԾԱ. ի փետր. ԺԻ օրն ի վայելումն անձին իմոյ և որդեակին իմոյ Պօղոսին, ի հայրապետութեան Հայոց Տ. Նահապետի և մերոյ յարհի եպիսկո-

պտղին Տ. Գալուստին ի գրան Է. եկեղեցոյն և ամենայն սրբոց, որ աստ կան հաւաքեալ: Դարձեալ գրեցի զսա ի լաւ և ընտիր օրինակէ ի վայելումն իմ և որդեկիս Պօղոսին ի Թվին ՌՃԾԱ. ի փետր. ԺԳ. պատկեր յօրն շաբաթ ի մայրաքաղաքն Թոխաթ ի վայելումն իմոյ և յիշատակ ծնողաց իմոց Պօղոսին և մօրն իմոյ Մարիամին և յամենայն յարեան մերձաւորաց մերոց: Դարձեալ յիշեսջիք ի մաքրափայլ աղօթս ձեր զսուտանուն գրիչս և զկողակիցն իմ զԽանզատէն և զորդեակն իմ զՊօղոսն և զեղբայրն իմ զՄինասն և զամենայն զհեռաւորս և զմերձաւորս մեր միով Հայր մեղայիւ և դուք յիշեալ լիջիք ապենիազ բարերար մարդասիրէն:

Դարձեալ յերես անկեալ աղաչեմ զդաս սուրբ երամիցս, յիշեցէք յերկնագնաց յաղօթս ձեր զպապն իմ զմահտեսի Լաչինն զմամն իմ զԱսմինն, և զհայրն իմ զմահտեսի Պօղոսն և զմայրն իմ զՄարիամն և զամենայն զննջեցեալսն մեր առհասարակ, յիշեալ իջիք ի Տեառնէ, որ ասէ, եկայք օրհնեալք Հօր (իմոյ) ժառանգեցէք զպատրաստեալ ուրախութիւնսն . . . . :

Նոյն գրիչը դնում է իւրաքանչիւր ճառի վերջում և իւր աղօթական յուշագրութիւնը:

Ե. օրինակն է № 1435, կաշեկազմ Թղթեայ, վեցածալ, նոտրագիր, և բովանդակում է բացի Յաճախապատումից նաև «Յորդորակ Ոսկերերանի ասացեալ ի մեկնութենէ ս. Աւետարանի Յովհաննու»

Սորա յիշատակարանն է.

«Օրհնեալ է անբաւ գթութիւն մարդասիրին Աստուծոյ, որ առեալ զձեռանէ մեղսատագնապ գծողիս, ի յաւարտ հասոյց զսա ի յայսմ լուսազարթ և հոգեշահ տառիս. և որք օգտիք ի սմանէ, զսևերես և զապիկարս միով Հայր մեղայիւ յիշատակել մի խնայէք, զի թերևս ողորմեսցի ինձ բարերարն և այց արասցէ ի միւսանգամ գալստեանն իւրոյ աղօթիւք ձերովք»:

«Յիշատակարան օրինակի ս. գոյս, զոր աստ գրեցաք առ ի հասկանալոյ ձեզ թէ ուստի էր. և էր այսպէս գրեալ»:

«Փառք ամենասուրբ Երրորդութեանն Հօր և Որդոյ և Հոգւոյն սրբոյ յաւիտեանս յաւիտենից ամէն: Ի բազում տեսակս զանազանին օրինակք ուրախութեան հանդստից և աւելորդ է մեզ ի պէտութիւն առաջի եկելոյս զամենայն մի ըստ միոջէ թուել: Բայց որքան ի մրրկեալ և ի կուտակադէզ ալեաց ծովու նաւ ի խաղաղն ժամանէ նաւահանգիստ, նոյնպէս և գրիչ ի տաժանելի ճգանցն ի վերջին

գիծն զկայ առեալ՝ զգոհացողականաանէ Աստուծոյ գոհութիւն և օրհնութիւն

«Արդ՝ սմին այսորիկ հոգելից և առատաշնորհ մատենի ս. Լուսաւորչի երանելոյն Գրիգորի ցանկացող եղեալ յոժալից և փափագմամբ սիրով արժանաւոր քահանայ ոմն Կարապետ անուն, և ստացաւ զսա յիշատակ իւր և ծնողաց իւրոց և եղբարց՝ ձեռամբ իմով Բարսղի քահանայի, զի ես թէպէտ անտեղեակ էի արհեստի դպրութեան, բայց յօժարութիւն տեսի, յայնմ լուսակիր առն և ձեռն ի գործ արկեալ և ի կատար հասուցի ի մեծ և հռչակաւոր ս. ուխտս Սկևռայ յամի վեց հարիւրերորդի վաթսներորդի և հինգերորդի թուականութեանս Հայոց (1216·) ի տիրապետութեան Տ. Յովհաննիսի և ի թագաւորութեանն Հայոց մեծաց քրիստոսապսակին Լևոնի։ Ընդ հովանեաւ ս. Փրկչիս և մօր իւրոյ սրբուհոյ Աստուածածնիս և ս. կենսակիր ս. Նշանիս, որ մերձ դղեկին անմատոյց Լամբու (!) յորջորջելոյ։ Իսկ բարեաց պարտն Տէրն յիշեսցէ զստացողք և զգրող զսուրբ գրոյս։ Ամէն»։

«Եւ դարձեալ ես վերջին ստացող և զգրող ս. լուսազարդ և հոգեշահ տառիս ս. Լուսաւորչին, Մովսէս անարժան և գործովք վատթարացեալ քահանայս, առ ոտս անկեալ սրտի մտօք ընթերցողացդ և կողկողելով հայցեմ ի ձէնջ, զի թողութիւն մեղաց խնդրիցէք ի Տեառնէ ինձ մեղապարտիս, որ յոլով վշտակրութեամբ գրեցի ս. գիրքս ի նեղ և վշտալից ժամանակիս, որում վերջացեալք են ամենայն առաքինութիւնք յաշխարհէ և առհասարակ ամենեքեանքս թողեալք զլուսաւոր շաւիղս սրբոց հարցն առաջնոց, զկնի կամաց մարմնոց և զմտաց ընթանամք և ցամաքեալք ի ս. սիրոյ հոգևորացն, հանապազ ցանկութեան և բարկութեան և նախանձու բոցով տապանամք և խորովիմք»։

«Վայ և եղուկ է անձանց մերոց յաւուրն ահեղ ատենին և անաչառ դատաստանին Քրիստոսի։ — Ի կատար հասուցի և յիշատակ ինձ Մովսէսի անարժանիս թողի, նաև ծնողացն իմոց Ալէքսանին և Շնորհաւորին և հոգևոր ծնողին իմոյ Տէր Ալիքսանին և եղբարց և որդոց իմոց և ամենայն արեան մերձաւորացն»։

«Ի թուականութեանս Հայոց ՌՃԽ. և չորս ամին (= 1695) և յամսեանն սեպտ. ի Ժ։ Ի յերկիրս Երինճակու ի գիւղն Նորաշէն կոչեցեալ՝ ընդ հովանեաւ ս. Կարապետի և ս. Նախավկայի տաճարիս ի կաթուղիկոսութեան Տ. Նահապետի, և մերոյ առաջնորդու

թեան Տէր Մատթէոս արհի եպիսկոպոսի Ապրակունեցւոյ։ Եւ որք հանդիպիք սմա ընթեռնելով և կամ օրինակելով, յիշեցէք ի Քրիստոս զվերոգրեալքս, զի և դուք մասն և բաժին ընկալջիք ամենառատ մարդասիրէն Աստուծոյ։ Ամէն, Հայր մեր։

Սրտի մտօք ընթերցջիք՝ զի կարի պիտանի դեղ է խղխայթեալ վիրաց եկեղեցականաց, որ հանէ զսլագ մեղաց, նետից չարին ի մտաց մարդոյ, և է խթան ընդոստուցիչ ծուլից և թմրեցելոց։ Ապա եթէ մեռեալ ես և ոչ զգաս զձայն բարձրագոչ փողոյս, ի յօր մահու· կենդանացեալ՝ զգալոց ես և սգալոց»։

Այսոնց հետ բաւական միաբանում է և Կ. Պօլսի տպագրութիւնն [1], որ պակասութիւններ շատ ունի, մանաւանդ սխալներ՝ որոնք բոլորովին փոխում են ընթերցուածքների իմաստը։ Կ. Պօլսի օրինակը մէկ տպագրութիւն ևս ունեցել է, որից այս է արտատպուել Տպագրողի յիշատակարանն ոչինչ տեղեկութիւն չէ տալիս գրչագրների մասին։ Այսոր վերջում կան և ներբողներ ի ս. Գրիգոր Լուսաւորիչ, մէկը Յօհան Երզնկացունը, միւսը Պաղտասար Պարտաւոր դպրի ասացեալ ի թուին 1158 (1709)։

Վենետկի տպագրութիւնն (1838), որ նոյնանում է Գ. օրինակի հետ, շատ անգոհացուցիչ է հանդիսանում երբ ի նկատի ենք առնում շատ ակներև սխալներ։ Հրատարակիչը միմիայն այսքան ծանօթութիւն է տալիս իւրեանց գրչագրների վերաբերմամբ.

«Արդ մերոյ հաւատարիմ տպագրիս օրինակ գրեալ էր ի ՌՃԻԲ (1673) գաղափարեալ ի հին երկաթագիր օրինակէ գրելոյ ի Թուին ՅՀԸ. (929), որ պահէր յարկեղս գրոց ի Սիս քաղաքի, որպէս ազդ առնէ յիշատակարանն, և քննեալ մեր մանրախուզիւ զգաղափարն վկայեմք երկիւղածութեան գրչին յամենայնի անայլայլակ առեալ զհաւասարն ըստ ամենայն նշանախեցից հնագիր օրինակին, մինչև զմիոյ կամ զերկուց տառից անգամ որ ի հնութենէ խանգարեալ էին ի հինն՝ դատարկ թողուլ զտեղին։ Առ հնութեան դար-

---

1, Գիրք որ կոչի Յաճախապատում՝ ասացեալ Ս, Հօրն մերոյ երանելւոյն Գրիգորի Լուսաւորչին, յորում պարունակին ճառք յոգնապատումք քսան եւ երեք, վասն անճառ էութեանն Աստուծոյ, եւ խնամոցն եւ սիրոյն որ առ ստեղծուածս, Եւ վարուց ուղղութեան եւ հատուցմանն գործոց, Տպեալ վերստին՝ արդեամբ եւ ծախիւք առն ազգասիրի եւ բարեպաշտի Ակնեցի մահտեսի Յօհաննեան մահտեսի Աբրահամ ամիրայի։ Յիւրում իսկ սեփհական գործարանի յամի Տեառն 1824, ի Կ, Պօլիս։

ձեալ քանզի թուղթք անկեալ էին ի սկզբանէ (մինչև ցպարբերութիւնն Բ. ճառին «Եւ բարբառք ահաւոր սպառնալեացն զամբարիշտս . . . .») և զնախ ի պակասորդն յաջողեցաւ մեզ յայլմէ օրինակէ լրացուցանել, որ թէպէտ և նորագիր ի ՌԿԴ (1615), այլ հարազատութեամբն ոչինչ նուազ քան զգաղափար երկաթագիր օրինակիս»։

Նոյն իսկ այդ պակասորդ մասում զգալապէս այլ է մեր Ա. օրինակը, թէև միւս երեք օրինակները նման են Վ. ի* հետ, բայց նոյն չեն։ Սակայն և այնպէս Վ. ն ընտրելագոյն է Կ. Պոլսի հրատարակութիւնից, ուստի և մենք առաջինի վրայ արինք մեր համեմատութիւնը։ Նշանաւոր տարբերութիւնք, որոնք կային Վ. ի և մեր օրինակաց մէջ, դրել ենք բաղդատական տախտակի վրայ, չենք նշանակել միմիայն այնոնք, որոնք պարզապէս կամ տպագրական կամ գրչակի սխալներ ու վրիպակներ են։

Մենք աշխատել ենք բնագիրը ճշդապէս վերականգնել, ձգտելով մի և նոյն ժամանակը հաւատարիմ մնալ մեր օրինակներին։ Թէ այդ մեզ ո՞րքան է յաջողուել՝ կարենք ուղղապէս նկատել ապագայում, երբ բախտ ունենանք աւելի ևս հնագոյն կամ ընտրելագոյն օրինակ ձեռք բերել։ Թէպէտ և այդ յաջողութիւնը պարզ երևումէ այժմ նախկին տպագրութեանց համեմատութիւնից։ Պարիզի ազգային մատենադարանում կայ երկու օրինակ՝ մի և նոյն գրչից թէև տարբեր թանաքով գրուած։ Երկուքն ևս կազմուած են միասին, միայն չենք յիշում՝ արդեօ՞ք Ագաթանգեղոսի հին (1254) օրինակին հետ նոյնաժամանակ է, թէ յետոյն է։ Եթէ առաջինը լինի, յայտ է որ մեր Ա. օրինակից 39 տարով հին է։

Համեմատութեան տարբերութիւնները դրինք վերջում, ի նկատի ունենալով որ ընթերցողների շատ փոքրաթիւ մասը միայն շահ ունի այդոնց վրայ ուշ դարձնելու։ Այլ և ճառերի մութ կէտերը լուսաբանելու համար անհրաժեշտ համարեցինք համառօտ ծանօթու-

---

* Տես յիշատակարանը Հ. Զարբհանալ. Պատ. Հ. Դպր. էջ 178. «Կատարեցաւ . . . գիրքս այս որ կոչի Յաճախապատում . . . էր օրինակն սորին ԳՃԸ. տարի էր առաջի թուականին Հայոց ի Լուսաւորչէն, եւ առեալ օրինակ ի մայրաքաղաքն Կիլիկեայ, որ է ի ժամանակին Հայոց թագաւորաց եւ քաջաց իշխանաց»։ «Եղբարք իմ, զայս Յաճախապատումս օրինակն Սսայ գրեցաքն առաք՝ ի մեր թուականին ԳՃԸ. թիւն էր. այժմուս մեք գրեցաք մեր օրինակաց ժամանակին թիւն էր ՌՃԻԲ»։ Ըստ երևոյթին այստեղ միայն մէկ գրչագրի յիշատակութիւն չէն։

թիւններ տալ յաւելուածի մէջ, ջանալով խուսափել գրքի ստուաբանալուց։ Հուսկ ապա կազմել ենք և մի ցանկ, որ բովանդակում է ճառերի էական նիւթերի տեղերն ըստ յայտանիշ բառերի *։

Իսկ բնագրի ստորև նշանակել ենք ս. գրոց այն տեղերն, որոնցից վկայութիւններ և յիշատակութիւններ կան ճառերի մէջ։ Այդոնք շատ կարևոր են բանալ և կարդալ ընթերցանութեան ժամանակ, վասն զի յաճախ պարզում են դժուարըմբռնելի մտքերը։ Առհասարակ սուրբ Գրիգոր Լուսաւորիչը խօսում է ս. գրոց լեզուով, սակայն նշանակած տեղերը վերաբերում են միմիայն մեծ վկայութեանց և նշանաւոր իմաստներին։

Լիայոյս ենք որ Յաճախապատումի այս հրատարակութիւնը ** մատչելի կլինի գոնէ այն անձանց ընթերցասիրութեան, որոնք ի պաշտօնէ կոչուած են Հայաստանեայց ս. եկեղեցու վարդապետութեան անվեհեր քարոզը լինելու։ Իսկ այս գործը նուաստիս վիճակուած լինելով, թող խնկարկութիւն լինի մեր Վեհապանծ Սուրբ Հօր։

Ա. ՏԷՐ ՄԻՔԵԼԵԱՆ.

2 Ապրիլի 1894
Ս. Գրիգոր Լուսաւորչի տօնին
Մուտն ի Վիրապն։

---

* Դիւրութեան համար նշանակել ենք լուսանցքների վրայ տողահամարներ 1. 5. 10 ևլն., ըստ որում զօրօր. 3 տողը գտնելու համար պէտք է համարել 1—3, 12 տողը—10—12, և այլն,

** Յաճախապատումը թարգմանուած կայ գերմաներէն „Reden und Lehren des heiligen Gregorius des Erleuchters, Patriarch V. Armenien. Von I. M. Schmid. Regensburg. 1872:

ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ

ՀԱՅՈՑ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ

ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՆ

ՃԱՌՔ

ՅԱՃԱԽԱՊԱՏՈՒՄՔ ԵՒ ԼՈՒՍԱՒՈՐՔ

Ա.

Ի Ս. ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆՆ

Մի է ինքնութիւն գոյութեանն, որ իւր ինքնութիւնն յիւրմէ[1] գոյութենէ անտի.[2] իսկութիւնն անծին, էութիւնն անսկիզբն, մշտնջենաւորութիւնն անսահման, ճշմարտութիւնն անփոփոխ,[3] կեանքն[4] կեցուցիչք, ամենայն կենդանեաց Հայրն և Արարիչ, հաստիչն Աստուած, մին բարերարութեամբն և կամօք, անպատճառն, որ ամենեցուն պատճառ է՝ աներևութից և երևելեաց, և Որդւոյ և Հոգւոյ ծննդեամբ և բղխմամբ:[5] իսկին անծնի զէն[6] անսկիզբն ծնեալ, մշտնջենաւորութեանն[7] անսահմանի՝ զճշմարտութիւնն անփոփոխ ծնեալ, կենացն կենարարաց[8] ըղ կեանս կենսատու ծնեալ. լուսոյն կենդանւոյ՝[9] զկենդանի լոյսն կուսածին[10] ծնեալ[11], Արարչին[12] զԱրարիչն ծնեալ. այլ այլոց ամենեցուն՝ աներևութից և հոգևորաց, և երևելեաց տարրաւորաց, արարչութեամբ լեալ պատճառ՝ երկնից և երկնաւորաց, ջուրց և ամենայն՝ որ ի նոսա,[13] լի կատարեալն, որ զամենայն լնու, և ինքն ոչ թերանայ[14] և ոչ նուազի, զի[15] ոչ հնանայ, և ոչ լնու՝ զի[16] ոչ պակասի: Զի ինքն նոյն[17] է ի լրութեան իւրում և յամբաւու-

թեան, և չիք ուստեք եկամուտ կամ յաւելուած[18], յայն յանբաւ և յանսահման, և յանհաս և ի կատարեալ բարերարութիւնն։[19] Որում ոչ բաւեն կարծիք մտաց, և ոչ ընթացք հրեշտակաց, զի հրեշտակք իբրև զմիտս մարդկան երագունք են, ուր ակնարկեն կամք նորա, և չեն լեալ բաւական, յորմէ հետէ լեալ են և հաստատեալ։ Եթէ յերկնից և ի վեր, յո՞ր վայր է Տէրն և Արարիչն, կամ թէ յայնկոյս ծովուց, երբ, կամ երկրիս ներքոյ, յո՞ր վայր։ Զի որպէս երկինքս այս ի հրամանի նորա հաստատեալ կան, առանց որմոց, և առանց սեանց, և առանց զանգուածոյ օգնականութեան լերամբք, և աղբերբք, և ծովուք՝ հանդերձ գետովք. և չիք ինչ յարարածոց քան զերկինս և քան զերկիր արտաքոյ, բայց ինքնութիւն տէրութեան, որ է յատակ և պարզ, ամենակալ զօրութիւն, որ առէ և լինի,[20] կայի և հաստատին, ի վերոյ քան զերկինըս երկնից, և ի ներքոյ քան զերկիր, և արտաքոյ քան զծով։ Ամենայնի ինքն անբաւ է, կանխագիտութիւն և անզեղջ իմաստութիւն և ամենայնի ինքն կեանքն կեցուցիչ, և ամենայն ինքն անբաւն և անճառն և անհասն սէր է՝ կենդանի երանութեամբքն լցեալ. և ամենայն ինքն լոյս է՝ կենդանի՝ մտաւոր, ահեղ, անմատոյց։ Եւ ամենայն ինքն գթութիւն է, կենդանի խնամօքն. և ամենայն ինքն ողորմութիւն է բարերար շնորհօքն. և ամենայն ինքն ընդերկայնամտութիւն է՝ դարմանօքն կերակրելովն. և ամենայն ինքն սըրբութիւն է անբիծ և անարատ՝ ազատելով և լուսաւորելովն, խրատուն սաստկութեան, հատուցմամբ բարկութեան և սրտմտութեամբ, անշէջ հրովն, և պսակելովն փառօք, ժամանեցուցանելովն ի հանգիստ հանգստարար, ի խնամըս սուրբ սիրոյն, կենդանի երանութեամբքն, պսակօքն առաքինութեան, ի նորա շնորհացն գրգանս, զի մեծութիւն անքննին անսկզբնութեանն արտաքս է քան զարարածս՝

յանսահմանութեան և յանբաւութեան։ Եւ դարմանօք և տեսչութեամբ իւրով լի են ամենայն արարածք ըստ բանին գրոց թէ՝ Աստուած ի վեր յերկինս և յերկրի, որ գիտէ զխորհուրդս սրտից, և քննէ զերիկամունս, և առաջնորդէ հոգևոր օրինօք խրատուն կենարարաւ՝ յօթևանս փրկութեան և կենաց, յանմոռաց ուրախութիւնս յանդադար խնդութիւնն, յանճառ և յանպատում արքայութիւնդ երկնից։[21]

Արդ այս ամենայն արուեստք[22] ինքնաբոյք անսահման մշտնջենաւորութեան[23] դարմանիք են արարածոց[24], ի միոյ ինքնութեանն, բարերար արարչութեանն, կեցուցիչ արուեստիւքն իւրովք, որ անբաւն է և անքնին, և ոչ կարեն կարծել միտք, և ոչ քննել խորհուրդք, որում ոչ բաւէ իմաստութիւն հոգևոր զօրացն,[25] և ոչ գիտութիւն որդւոց մարդկան, մեծութեանն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ։

Այլ ի գործոց անտի իւրոց և յերախտեաց միայն գիտի[26] և ճանաչի և անուանի՝[27] Հայրն և բարերարն և հաստիչն ամենայն երախտաւոր արուեստիւքն իւրովք։ Զի որ կատարեալքն են՝ երախտեացն նորա միայն կարեն հասու լինել, բայց որ ախմարքն են՝ և ոչ այնմ։

Զի որպէս մի է արև և լոյս և ջերմութիւն[28] իւր, և մի արև ասի և ոչ երբէք արևք․ և որպէս հուրն և լոյսն և տապն՝ մի հուր ասի և ոչ երբէք հուրք․ և որպէս աղբիւրն և գետն և ջուրն մի ջուր ասի և ոչ երբէք ջուրք․ և որպէս հոգի, միտք և բան՝ մի հոգի ասի և ոչ երբէք հոգիք․ այլ հոգի ասի կենդանութիւնս և միտք ասի իմաստութիւնս, և բան ասի խօսողութիւնս՝ միոյ հոգւոյն․ այդպէս և Հայր՝ անծին իսկութեամբ, անսկիզբն էութեամբ, Հայր՝ վասն միշտ Որդւոյն՝ որ ընդ նմա, և իսկ Հոգւոյն որ ընդ նմա։

Իսկ արդ՝ է՞ր երբէք արեգակն առանց լուսոյն իւրոյ և ջերմութեան. կամ է՞ր երբէք հուր առանց լուսոյն իւրոյ և կամ տապոյ. կամ է՞ր երբէք աղբիւր առանց բղխման իւրոյ և խոնաւութեան. կամ է՞ր երբէք հոգին՝ առանց բանի և առանց մտաց. այնպէս՝ չէր Հայր առանց Որդւոյ իւրոյ և Հոգւոյն Սրբոյ:

Բ.

ԱՌԱՆՁՆԱՒՈՐՈՒԹԻՒՆՔ.

Կատարեալ Հայրն՝ անձամբ, զօրութեամբ գիտութեամբ, և իմաստութեամբ, արարչութեամբ և բարերարութեամբ, զամենայն զիւրն անծին իսկութեամբ ունի:

Կատարեալ է և Որդի՝ անձամբ և զօրութեամբ, գիտութեամբ և իմաստութեամբ, արարչութեամբ և բարերարութեամբ, և զամենայն զիւրն անսկիզբն էութեամբ ունի:

Նոյնպէս և Հոգին Սուրբ՝ կատարեալ անձամբ, զօրութեամբ, գիտութեամբ և իմաստութեամբ, արարչութեամբ և բարերարութեամբ և զամենայն զիւրն անսկիզբն մշտնջենաւորութեամբ ունի:

Մի բնութիւն է նոցա և մի անփոփոխ իսկութիւն և մի արարչութիւն, մի աստուածութիւն և մի զօրութիւն և չիք ուստեք եկամուտ և զօդուած կամ յաւելուած յանսկիզբն երրորդութիւնն, այլ նա է աղբիւր և ի նմանէ է բաժանումն ընդ ամենայն արարածս՝ խնամք արարչութեանն, որ յօրինէց և կազմէց, և զարմանք բարերարութեան նորա. իւրովք զարմանաւէր խնամօքն, որ տայ, և զարմանէ և սնուցանէ և առաջնորդէ ի կատարումն չափոյ հասակին. այդ տու՝ առ երեւելի պէտս, և առ աներեւոյթսն առաջնորդէ վարդապետութեամբ իւրով և օգնէ շնորհօք իւրովք յարքայութիւնն երկնից՝ յանփոփոխն

և լինին ամենայն երանութեամբ հաւատացելոց իւրոց և ապաւինելոց յայսմիկ ուսումն, և հաւատք վայելենճշմարիտ հաւատացելոց:

Արդ այն հայրն և արարիչն, տէրն և հաստիչն Աստուած, ճշմարիտ անփոփոխն, կեանքն, կեցուցիչն՝ յիւր կենդանարար լոյսն և յիւր կենդանարար փառսն և ի սիրոյն իւրոյ կենդանի երանութիւնս լուցեալ բորբոքէր, յիւր իսկ երանութիւնս յառաջ քան զյաւիտեանս, և քան զաշխարհս իւրով անփոփոխ զօրութեամբն և ամենահնար և անզեղջ իմաստութեամբն և զօրաւոր կանխագիտութեամբն և անպատում բարերարութեամբն և իւր բարերարութիւնըն, իւր բարեկամացն եցոյց: Վասն զի սէր արարչութեան ստիպեաց Արարչին առնել զարարածս վասն ամենագէտ սիրոյն իւրոյ և բարերար կամացն, և ոչ յիւր ինչ պէտս առնել, այլ ի փառս և ի պատիւ ստացուածոց իւրոց: Եւ որպէս չառնու կեանք ինչ ի կենդանեաց, այլ տայ նոցա ըզ լինելն և զգլուխն և զկեալն և զմշտնջենաւորելն, և ոչ առնու լոյս ինչ ի լուսոց, այլ տայ նոցա զտեսանելն և զառաջնորդելն, և այնպէս Աստուած չէ կարօտ առնուլ ինչ յարարածոց ի զօրաց հոգևորաց և յորդւոց մարդկան, այլ տայ նոցա զլինելն և զգոլն ամենաբարի և սուրբ հանգամանօք զպէտսն բարերարութեան ի ձեռն օրինացն եդելոց զընտրութիւն օրինացն առնուլ: Եւ ոչ արար զարարածս անկազմն և անարգս, այլ ետ անձնիշխան և ազատ կամս և ընտրող միտս զսէր և զախորժել զփոյթ զօրաց հոգևորաց և զորդւոց մարդկան, զի անձնիշխան կամօքն և սիրովն իւրեանց և ընտրող մտօք իւրեանց սիրեսցեն և զհոգասցեն և գովեսցեն զբարերար կամսն, որ կոչեացն զնոսա յոչնչէն ի յինչսն և ի չգոյէն ի գոյն, յանարգութենէն ի պատիւ և ի փոքրութենէն ի պատիւ մեծաւորս և բանաւորս: Եւ զամենայն զոր ինչ և արար վասն նոցա արար

զերկինս և զերկիր, զծով և զամենայն որ ի նոսա ի վկայութիւն իւրոյ սիրոյն։ Եւ եղև ինքն վարդապետ բարեբար ամենաշահ մտօքն իւրովք՝ գործակից առնել զարարածըս իւր, կեցուցիչ կամաց իւրոց, և արարածք ունիցին վկայս սիրոյն և զմտերմութեան իւրեանց զհանդէսս հաւատոց և ճշմարտութեան ի ձեռն օրինացն եդելոց, այլ ընտիր լինել հանդիսաւորքն առաքինութեան՝ մշտնջենաւոր ուրախութեանցն վայելելով, որ զերեւելիս ի հարկի և ի ծառայութեան կացուցեալ և աներևութիցն անմահ անուշակ արքայութեան ժառանգաւոր պատրաստեալ և այդու խնամօք ցուցեալ զվայելչութիւն բարերար հայրութեան, զսիրոյ և զտէրութեան զարարչութեան։

Սոյնպէս և արարածք ճշմարիտ հաւատօք հնազանդութեամբ օրինաւոր սուրբ պատուիրանացն և յուսովն անմահ արքայութեան երկնից՝ զայդ վկայութիւնս ունելով առ արարչութիւն տէրութեանն և արքայութեան, և լինի պարգևատու· զի գոհացողք իցեմք վասն տեառն բարերարութեան խնամոցն, խոստովանողք և դաւանողք առ ի մերոց հաւատոցն ճշմարտութիւն և կալ ի հնազանդութիւն հանդիսիցն լուսաւորութեան, անքակ կալ ի ճշմարտութենէն և ի սրբութենէ մտաց և մարմնոյ ի վիշտս նեղութեան և յողջանս պատրանաց, չանուանել զնորա անունն այլ ումեք և ոչ զճշմարիտ հաճոյս նորա մոլորել մըտաց, այլ առողջ անարատութեամբ և անբիծ երախտեօք կալ ի մտերմութեան հանապազ։ Եւ այս ամենայն յօրինուածք յարդարութեան կամաց նորա բարերարաց կարգեալ է, որ կամի և որ ոչ կամի։ Վասն այսորիկ լաւ ամենայն մտօք ի դատարկ և յանօգ. քննութենէ, այլ զհետ երթալ խրատու ս. Գրոց, որ գրեալ է ի հին և ի նոր կտակարանս ըստ հաճոյ օրինադրին, որ ասաց եթէ «ես եմ տէր Աստուած քո, ինձ լուիցես և յանձն իմ երդնուցուս և

օրինաց իմոց հնազանդեցիս, և ես տարայց զքեզ ի յաւետիս հարց քոց, զոր խոստացայ լինել զքեզ ինձ ժառանգ յաւիտենանս»։ Ասա ի յայսմ աշխարհի լինել վանք հաճոյից հայրութեան տէրութեանն և յաւիտեանս անփոփոխ արքայութեանն ժառանգաւոր լինել ըստ բանի մարգարէին զի ասէ. «եկայք որդիք* իմ և լուարուք ինձ,** զի կոչեաց զամենայն լսելիս ի հնազանդութիւն հոգևոր օրինացըն, ըստ բանին՝ զոր ասաց աւետարանելի «ով կացցէ ի սէրն իմ և պահեսցէ զպատուիրանն իմ՝ ես և հայր իմ եկեսցուք և օթևանս առ նմա արասցուք։*** Սիրել զտէր Աստուած և զընկերն իբրև զանձն, զի վանք իցեն երրորդութեանն սիրոյն և վայելեսցեն յանճառ և յանպատում խնամոցն յերանելի գրգանսն։[1] Որպէս զի ի բնակել ոգւոցս մերոց նորա կամօքն վայելեսցուք յամենայն բարութիւնս երկնաւորս և երկրաւորս. քանիօ՞ն և անմեծութեան համեմատ, աննման, անկշիռ, անսահման, անպատում, կեանք և կեցուցիչ ամենայն արարածոց, արժանի արասցէ օթեւանաց իւրոյ հոգւոյն, իւրոյ սիրոյն, իւրոյ կենացն, որ անհամեմատն է և աննման յամենայնի, որ առի և լսի, զի նորա բնակութիւնքն են ամենայն և նորա սիրովն կենարարովն վայելիցեմք ի բարութիւնս, որ արտաքս է քան զամենայն բնակութիւնս արարածոց՝ երկնաւորաց և երկրաւորաց և երևելի արարածոցս. և նախ վասն իւր փոխէ յիւր անմահութեանն կարգ և ապա ընդ դրունս կենաց տանի ի ժառանգութիւն սրբութեանցն վայելելոյ։[2]

Եւ որպէս հոգիք մտաւորք՝ զի կենդանի են և անմահ և չունին զպայման հասակին գնացից, զի թէպէտ քան զերկինս ի վեր բարձրանան և թէպէտ քան զծով անդր ելանեն յիշատակօք գիտութեան[3] և իմաստութեան, որ ա-

---

* Որդեակք. Բ, ** Սաղմ. ԼԲ. 12. *** Յովհ. ԺԴ, 23.
1. Երանելի գրգանսն. 2. Վայելոյ Ա. 3. Անգիտութեան. Ա. Բ.

ռաջնորդութենէ գրոց սրբոց, և յական թօթափել անդրէն փոփոխին ի կեանս մարմնոյն կենաց. այսպէս առ ժամ մարմնականքս յարութեամբ յուրախութիւն անդր փոխին ի բիւրակերպարանեայ ճառագայթմն, ի կենդանի փառսն, յանփոփոխ յանկասկածութիւն բարեաց: Եւ որպէս անարգ և փոքր և տխուր է տեսիլ մարմնականացս մահկանացուացս քան զոգւոց, զկենդանեաց և զանմահից, այսպէս ճառագայթք և լուսաւորք ամենայն երեւելի արարածոցս չեն ինչ համեմատ և նման կենդանի անմահ ճառագայթիցն արեգականըն արդարութեան փառաց, զոր զգենլոց են սուրբքն յանմահութեան հոգւոց և մարմնոց: Որպէս զի զգեցեալք զարեգականն զլոյս, բաւական լինի յարեւելից յարեւմուտս տեսանել և ընթացք արեգականս բաւեն, որ շրջանելոցս է, ըստ բանին աւետարանին զի ասէ. «արեգակն խաւարեսցի և լուսինն մթասցէ, և աստեղք թօթափեսցին յերկնից»* և արդարքն ի ճառագայթս լուսոյ արեգականն արդարութեան յանմահ կենդանի փառսն աստուածեղէն վառեալ լուցանին, ըստ բանի առաքելոյ զի ասէ. «յորժամ Քրիստոս յայտնեսցի կեանքն ձեր, յայնժամ և դուք ընդ նմա յայտնեսջիք փառօք,»** ըստ նմանութեան կենդանի արեգականն, լուցեալ ի նորա կենդանի փառաց լուսոյն: ըստ այնմ՝ որպէս բիբ ական, որ փոքր է որպէս հատ կորեկան, և յորժամ իւրով լուսովն շրջանելեաւ զգենուցու զանշրջանելի լոյսն զարեգական, բաւական լինի յարեւելից կողմանէ յարեւմուտս նայել և լնուլ զերկինս և զերկիր առաջնորդութեամբ արեգական լուսոյն. որչափ ևս յոր ժամանակս զգեցցի զանմահութեան կենդանի լուսովն, զգեցեալ զկենարարի զարեգականն արդարութեանն զլոյսն՝ որ լին է երանութեամբք, նորա փառօք կարող է բաւական

* Մատթ. ԻԴ, 29: ** Կող. Գ, 4:

լինել ի չափս և յանչափս. ըստ այնմ՝ լուսոյն, որ զգեցաւ զնա ի վայելչութիւն խնամոց կենդանի լուսոյն՝ վայելել ի փառս, զոր ոչ բերան մարմնաւոր ասել կարէ և ոչ ունկն լսել, ըստ բանի առաքելոյն զի ասէ, եթէ լիցի ամենայն յամենայնի Աստուած, որ կամի ցուցանել զժառանգաւորս իւր ի բարութիւնս յանսպառ, ըստ բանի Աւետարանին զի ասաց. թէ Հայր, որպէս ես և դու մի եմք, այսպէս և որ ինև ի քեզ հաւատացեալք են՝ եկեսցեն և խառնեսցին ի միաբանութիւն. * զի յայտ պէտս արար Աստուած զօրաբանս իւր, զկենդանի և զբանաւոր, զի աճեցուցէ և ածցէ ի յայդպիսի՝ փառս: Զի զայս աշխարհս արար և կարգեաց Հայրն և Արարիչն Աստուած ի ծնունդս, ի սնունդս, ի խրատ և յաւաքինանալ հանդիսիւքն լաւութեան. իսկ զայն զանմաշն և զանուշակն, ի կենդանի յաստուածեղէն փառսն փոխէ յանվախճան բարութիւնսն: Եւ զայս աստ֊ցուք իբրև ի մասն մի, որպէս աղայ յորովայնի մօր, զի ոչ կարէ գիտել՝ թէ յորպիսի հասակ փոփոխելոց է, կամ որպէս երկինք և երկիր և ծով և ամենայն որ ի նոսա է՝ ի հարկի և ի ծառայութեան կալոց են նորա. ըստ բանին Պօղոսի թէ «փոքր ի շատէ մարգարէանամք, և յորժամ գայ կատարումն, փոքր ի շատէս խափանեսցի **» վասն առաւելութեան այնր, որ ոչ պատմի բերանովք:

Վասն այսր ամենայնի բարութեան զամենայն ինչ գինս առնել հաճոյից նորա և կալ ի մշակութեան բարութեան ըստ կամաց բարերարին, փախչել յաղտեղի և ի գժնդակ բարուց, որ վշտագինն է, և զհետ երթալ բարուց սրբութեան. լինել երախտաւոր եղբարց սիրով և ամենայն ուրուք պէտս փրկութեան և կենաց, մշակք ճշմարտութեան, հրաւիրեալք և կոչեցեալք յաւիտենիս անդր նորա ի մշա-

* Յով. ԺԷ. 21. ** Ա. Կորնթ. ԺԳ. 9.

կութիւն այգւոյն ճշմարտութեան, որ վարձք լի են կենդանի երանութեամբք բարուքն, զոր անկեաց ի մեզ տէր Աստուած գործի՝ անձնիշխան կամացս՝ զսէր և զախորժել, զփոյթ և զհնազանդութիւն, այլովն ևս ամենայնիւ զհոգևորացն զվարդապետութիւն յանփոփոխ յոյսն կենդանութեան, ի բնակութիւն ըստ իւր կամաց բարերարաց անձնիշխան կամօք հրեշտակաց և մարդկան՝ ժառանգաւոր լինել անմահ անուշակ կենացն փառաւորեալ, և գովեալ ի բարերար արարչին կենդանի երանութեանցն:

Եւ ետ անձնիշխան և ազատ կամաց արարածոց երկուս դատաւորակս, իբրև որդւոյ, սպառնալիս և աւետիս, չառնել զվնասակարն և առնել զշահաւորն և զերախտաւորն ի ձեռն վարդապետացն ճշմարտութեան և ի ձեռն թագաւորաց և դատաւորաց՝ հարթ և հաւան կշռոյն արդարութեան: Եւ ետ զմարգարէութիւն և զքահանայութիւն, վարդապետ և առաջնորդ՝ տեղեակ և հասու լինել Աստուծոյ բարերար կամացն. և երախտաւոր կամօք բարերարին զվաստակ ճգանց վկայ ունելով առ Աստուած և մտերմութեամբ օրհնեալ զտէր զուողն ամենայն բարեաց, և գոհանալով փառաւորել զնա: Այլև տէր ինքնին զիւր երախտիքն վկայ ունի իւրոյ սիրոյն և բարերարութեանցն, զընտրեալսն և զկատարեալսն, որ ի նոսա զեղուն շնորհքն Աստուծոյ: Այլ և առ ախտացեալսն հոգւով դարձելոցն յապաշխարութիւն խոստովանութեամբքն՝ ներէ և խնամէ և բժշկէ ողորմութեամբ և թողու զմեղս ըստ բազում գթութեան իւրոյ:

Իսկ զամբարիշտս և զանիրաւս անքարտաւանեալս չարութեամբ, որոց խաւարեալ են միտք և օտարացեալք ի կենաց սրբոց և արդարոց, և առ նոսա երկայնամտէ, զի դարձցին ի զղջումն: Ապա թէ ոչ այսպէս, բարկութիւն և սրտմտութիւն կայ և մնայ ի վերայ նոցա յաւե-

նեցուցն արարչէն ըստ բանի * Առաքելոյն։

Այսպէս են արուեստք կենաց կենարարին և ստացողին՝ որ զարմանօք սրբոյն իւրոյ խնամէ զարարածս երևելեօք և աներևութիւնքն հանապազ։ Եւ արդար է [30] բարերարութեամբն իւրով ի սնուցանել և ի զարմանել պէսպէս շնորհօք իւրովք գիտութեամբ և իմաստութեամբ, [31] զի խելամուտս և հնարարուեստս [32] արասցէ պահպանութիւն [33] պատուիրանին իւրոյ։ Եւ զօրութեամբ իւրով կարող և հաստատուն պահէ, [34] զի զօրացեալք ընդդէմ կացցեն հնարից սատանայի, և անշարժ և հաստատուն կացցեն առ ճշմարտութիւնն, սրբովն [35] յորդորել յառաքինութիւն [36] լաւութեան, և ի գործս պիտանութեան, որ ի փառս պատուէ։ Եւ այսպէս վայելեալք ի բարիսն, զի վասն կենդանի աւետեաց երանութեան առցեն զառհաւատչեայն ճշմարիտ հաւատով և յուսով [37] զհանդերձեալսն [38] ճաշակօք սրբոյն կենդանութեան, որ անբաւն է և անքննին, զի նովաւ ի նորին երանութիւնսն վայելեսցեն, և ընդ նորա խնդութեամբն ի նորա ուրախութիւնսն յանճառս [39]։ Զի գթութեամբն իւրով խնամէ ի պէտս հոգւոյ և մարմնոյ ըստ մեծի ողորմութեանն իւրոյ զի զօրացեալք ի շնորհացն և յաստուածատուր պարգևացն յառողջութեան և ի խաղաղութեան վայելեսցեն։

Եւ յայսպիսի [40] յերկայնամտութեան առ նորոգումն բարւոյն Աստուծոյ վերաբերեալ, յառաջադէմն նկրտի [41] յերևելիս և յաներևոյթս, * և սրբեալ յաղտոյ ի սրբոյն Աստուծոյ ազատանայ, և լուսաւորի ի փառս տէրական ազատութեամբն, [42] և անհպելի լինի թշնամւոյն [43] և զերծեալ ի մահուանէ մեղաց յուսով յարութեանն լուսաւորեալ կայ մնայ անբիծ և սուրբ և բարձրագոյն խոնարհու

---

* Հռով. Ա, 18. Բ, 5.

թեամբն փառօք, որովք ամբարտաւանութիւն կործանի տեառն փառօք և յարգանօք։ [44] Զի խոնարհք և հնազանդք և հեզք բարձրանան, և ամբարտաւանք և խիստք և անհաւատք [45] կործանեսցին առաջի ահին տեառն [46]։ Եւ ճշմարտեալքն ամենայն ուղղութեամբ, [47] պսակեսցին և փառաւորեսցին յարարչէն յարքայութեանն արդարոց։ Զի ամենայն բարեաւք աւետեաց զհաւատացեալս և զլաւս և զառաքինիս ի գրուճս ճշմարտութեան [48] են հրաւիրելոց ի նորա յարկսն [49] և ի նորա պսակ փառացն [50] մնացելոց զի ողորմութեամբ և գթութեամբ են խնամեալք, [51] որք և կատարեալ ապաշխարութեամբ զթողութիւն ի միւզօր [52] տէրութենէն առնուն։

Եւ բարեաւք ահաւոր սպառնալեացն զամբարիշտս և զանառակս և զցանկասէրս և զանհնազանդս զանարգելսն ի մեղս՝ հրաւիրեն [53] ի տանջանսն յաւիտենից և յանմահ տառապումն ի գժոխս զի արհամարհեցին զգութ և զխնամս արարչին, և հեռացեալ օտարացան ի սոյգ ապաշխարութենէն՝ որ սրբէր զնոսա և արդարացուցանէր և մերձաւորս առնէր կենացն անմահից [54]։ Եւ վասն այսորիկ ընկալցին զամօթ և զանշէջ հուրն, զոր պատրաստեալ է սատանայի և դիւաց նորա։

Եւ այս ամենայն ի բարերար կամացն են կարգեալ ի պէտս և ի խնամս [55] սուրբ և բարի կողմանն խոստմունք աւետեացն որ ի տեառնէ [56]։ Իսկ չար և անհնազանդ կողմանն՝ զսպառնալիս [57] բարկութեանն և սրտմտութեան ի ձեռըն հրեշտակի չարի զվրէժս ընկալցին։ Զի թէ կամեցեալք էին, կարող էին զնիւթ [58] բարկութեանն շիջուցանել և ի բաց ջնջել ուղիղ ապաշխարութեամբ ըստ մեծի ողորմութեան արարչին։ Եւ այսպէս խոստմամբ բարւոյն և սպառնալեօք մատակարարէ առ ի յուղղութիւն զի զամենեսեան կամի զի կեցցեն և արքայութեան հասցեն։ Այլ զի որ ընտրելքն

իցեն ի մեզ՝ երևեսցին, ըստ արդարութեան օրինացն կենցաղաւարեալք[59]: Զի այն որ բարի է բնութեամբ և խոկութեամբ յառաջ քան զյաւիտեանս, յորում չիք եկամուտ առ կատարեալ բարերարութիւնն, այլ կայ մնայ միշտ բարի:

Այլ որ առի[60] զԱստուծոյ ցասումն կամ բարկութիւն կամ սպառնալիք, զօրինացն զիրաւունսն առէ. զի զանիրաւս և զանզգամս ածէ յուղղութիւն սպառնալեօքն՝ որ լին է բարկութեամբ: Զի չիք արատ կամ բիծ առ կատարեալ բարերարութեանն և քաղցրութեանն. ոչ ի նմանէ բուսանի, և ոչ եկամուտ ուստեք լինի ի նմա չար. զի որ նորոյն է, խոկութեամբ բարի է. և չիք ի նմա բնաւ[61] չարութիւն: Այլ[62] մեզ մեր ցասուցանեն զԱստուած. և նա խրատէ զմեզ պատժովք,[63] և ի բարկութեան զողորմութիւնս յիշելով, զի խրատեալք գտցուք այցելութիւն յարարչէն: Զի արժան է մեզ ատել զմեղս, և սիրել զարդարութիւն և զսրբութիւն և զճշմարտութիւն, որ ուրախ առնէ զարարիչն հանդերձ երկնային զօրօքն:

Եւ այս իսկ է սիրոյ նորա ցոյցք. որ խնդայ ընդ մարդկան ուղղութիւն և իրաւունս, որք դառնան ի չար վարուց: Զի ինքն կեանք է և կեցուցիչ և սէր ամենայնից պարգևօք իւրովք. զի ոչ ոք կարէ ասել զարժանն զնորա զամենազօր մեծութենէն. ոչ ոք ի բիւրաւոր զօրացն երկնաւոր բանակացն, և ոչ ի մարդկանէ, յորոց հաճեցաւ օրհնութիւն առնուլ և երկրպագութիւն: Զի ամենայն հայհոյութիւնք դիւաց և հեթանոսաց և ամբարշտաց և մեղաւորաց ոչ հպին յանհպելի լոյս աստուածութեանն: Եւ ամենայն բիւրաւոր բանակք հրեշտակաց, որ կան յանդադար փառաբանութեան, և ընտրեալ[64] ի յորդւոց մարդկանէ՝ ոչ կարեն զարժանաւորն օրհնել զԱստուած: Զի աստուածութիւնն ոչ յարգի յումեքէ և ոչ անպատուի, զի ոչ փոխի յիւրոց[65] անտի փառացն. զի կեանք է և լոյս անփոփոխելի, որ ոչ անցանէ:

Բայց զարմանալի այս է, զի վասն առաւել սիրոյն իւրոյ անանուննն յանուն գայ. զի ոչ ոք էր ընդ անսկզբանն՝ որ կոչէր զանուն. այլ ինքն վասն բարերար[66] կամաց իւրոց արարիչ արարածոց անուանի: Զի արարիչ և բարերար և լոյս և կեանք ի խնամս արարածոց զանուանս ունի. այլ զիւր անուն ինքն միայն գիտէ: Զի լուսոյ լոյս է անշիջանելի, և կենդանեաց կեանք, և հուր անիւթ և նիւթականաց[67] արարող: Այլ որպէս էրն և է և կայ յաւիտեան, ինքն միայն գիտէ. այլ սիրովն իւրով յայտնեցաւ արարածոց, և խնամօվք ծանուցեալ եղև:

Այլ և զարարածս կոչեաց յիւր բարերարութեանն յաշակերտութիւն[68] զազգս մարդկան, «Նախ զառաքեալս, ասէ Պաւղոս[69], ապա զմարգարէս, ապա զվարդապետս» * և որ զկնի այսորիկ յորս բաժանէ հոգին սուրբ զշնորհսն գործակից առնել[70] կոչմանն, որ հրաւիրեաց յարքայութիւնն[71]: Ցայտնեաց զխնամս տեսչութեան իւրոյ սիրոյն. զի լիցուք արդարացեալք ի հաւատոց անտի, որով մտանիցեմք ի փառաւորեալ ժառանգութիւնն Քրիստոսի Աստուծոյ: Զի այգի իւր անուանեաց զհաւատացեալս և[72] մշակ զհայրն երկնաւոր, այլ և զառաքեալսն մշակս ** որով սրբին և ժողովին ի հնձանան յաւիտենից. որ յառաջին ժամէն մինչև ցվերջին ժամն գործեցին, և ըստ յօժար կամացն զառաջնոցն առին զվարձս ի գիտողէն: Զի որ ոչ նմանեցին Աստուծոյ սիրոյն՝ որ ծագէ[73] զարեգակն ի վերայ չարեաց և բարեաց, այլ խանդացան ոչ որպէս զորդիս Աստուծոյ առին զվարձս: Այլ սուրբք ամենայն գործեցին զարդարութիւն և զհոգևոր մշակութիւն, և հասին աւետեացն՝ որ ի Քրիստոս՝ ճշմարիտ քարոզութեամբն, որ ի փառս ամենասուրբ Երրորդութեանն, և լցին զտիեզերս կենաց բանիւն՝

* Եփես. Դ. 11: ** Մատթ. Ի. 1—16:

և ջրովն և հոգւովն վերստին նորոգեցին զհաւատացեալս[74]։ Այլ և խոստովանութեամբ և ապաշխարութեամբ զփրկութիւն քարոզեցին ի ձեռն շնորհաց Որդւոյն Աստուծոյ։

Զի հայր է բնութեամբ միածնի Որդւոյ իւրոյ. և կենաց կեանք, և լուսոյ լոյս, և ի բարւոյ բարի։ Այլ և մեզ ըստ շնորհի հայր անուանեալ, և լոյս՝ որ լուսաւորէ զմեզ հաւատովն, և կեանք՝ որ կենագործէ զմեզ։ Որպէս առ մարդիկ այս օրինակս ճշմարտութեան[75] երևի, ոմանց բնութեամբ, և կիսոց խնամածութեամբ՝ որոց[76] հայր։ Այսպէս զմեզ մերձաւորս առնէ, այլ և նմանողս արարչական սիրոյն և խնամածութեան. զմոլորեալս դարձուցանել յաստուածգիտութիւն շնորհօք բարերարի հօրն։ Այլ և բարերարութեանցն նման նմա գթասիրութեամբն լինել առ մեղաւորս[77], ուսուցանէ, զի մի իսպառ կորիցեն. այլ խորագիտութեամբ ածել յուղղութիւն աստուածային օրինօքն, առուսանել գիտել ճանաչել զիմաստութիւն և զխրատ, և ուղղել զթիւրեալսն նշանօք և արուեստիւք. զաշակերտեալսն հաստատել ի հաւատս, և անփոփոխ մնալ ի ճշմարտութեանն[78] համբերութեամբ բազմաւ յամենայն փորձութիւնս։ Եւ ըստ օրինակի տեառն սիրոյն յորդորել ի նորա կոչմանն սէր, գթութեամբ խնամել[79] և դարմանել. բառնալ զբեռինս և զկարիս բազմաց, և կոչել առ շնորհս աւազանին և ապաշխարութեան, և երկայնամտութեամբ և հանճարով զամենեսեան որսալ հոգևոր ուռկանաւ առ բարեպաշտութիւն։ Եւ լուսաւորեալ զխաւարեալսն մեղօք և անիրաւութեամբ, սրբել մաքրել և ազատել ի ծառայութենէ սատանայի, և նորոգել զնորն՝ որ ըստ Աստուծոյ է լուսաւորութիւն յարդարութիւն և ճշմարտութիւն, և մերկանալ զհին մարդն գործովք իւրովք չարեօք, որպէս զի արժանի լիցին պսակաց և փառաց։

Զայս արուեստ ի հօրէ և յՈրդւոյ և ի հոգւոյն սրբոյ

տեսեալք՝ որ միշտ գործակից տանէ իւր բարերար կամացն ըստ ճշմարտութեան աւանդիցն. որ զժողովուրդս հաւատով անվրէպ մերձեցուցանէ [80] յօթևանս սրբոց. Եւ այսպէս աշակերտեալք յընտրութենէ անտի [81] օրինացն ի հաւատս և ի յոյս և ի սէր արդարութեան ըստ հանդիսից առաքինեաց [82] և ճշմարիտ առաքելոցն և մարգարէիցն և ուղղափառ վարդապետացն, և որք ի նոցանէն ուսան վկայք զհամբերութիւն [83] ի տանջանս, խոստովանողք զժուժկալութիւն, ճգնաւոր կուսանք զսրբութիւն և զառաքինութիւն [84]։ Եւ այսու ամենայնիւ ընտրեաց ի մարդկանէ իւր ժողովուրդ Աստուած՝ նախանձաւորս լինել գործոց բարութեանց, և տանել զպսակս անեղծութեանց յիւրմէ բարերարութենէն։ Զի սիրեցին զարարիչն և սիրեցան ի նմանէ, որպէս շնորհօք իւրովք փառաւորս և անուանիս արար յերկրի և յերկինս որ կան մնան միշտ։

Զի թէ ոչ էր լեալ ընտրութիւնք ի Տեառնէ ըստ արդարութեան օրինացն, ոչ երևելի [85] լինէր առաքինութեանցն մտերմութիւնք և քաջութիւնք, և խափանեալ լինէր հանդէսք նահատակացն՝ որ յերանելի կեանսն տանի, և զրկեալք ի կենդանի երանութեանցն ժառանգութենէն սուրբքն։ Նա և զօրք հոգեղինացն որք կացին [86] ի սէր Աստուծոյ։ Զի որք յարարչին խնամոցն վրիպեցան, ընդունին զպատիժս յաւէտ դատաւորէն, որ ըստ գործոցն [87] հատուցանէ զի երթիցեն արդարքն ի կեանսն յաւիտենից, և մեղաւորք ի տանջանսն յաւիտենից։ Երկուքանչիւրոցն աստուածային բանն յայտ առնէ. «Եկայք՝ ասէ՝ օրհնեալք Հօր իմոյ. ժառանգեցէք զարքայութիւն Աստուծոյ» և «Երթայք յինէն, անիծեալք, ի հուրն յաւիտենից, զոր պատրաստեալ է սատանայի և հրեշտակաց նորա» ։* Զի նախ

* Մատթ. ԻԵ. 39. ԻԵ. 41.

յորդորէ [88] և կոչէ ի բարի գործս. «Եկայք՝ ասէ՝ առ իս ամենայն վաստակեալք և բեռնաւորք՝ և ես հանգուցից զձեզ. առէք զլուծ իմ ի ձեզ՝ և ուսարուք յինէն զհեզութիւն և զխոնարհութիւն՝ և գտջիք հանգիստ անձանց ձերոց * »: Եւ առաքեալ ասէ. «Նմանեցարուք Աստուծոյ որպէս որդիք սիրելիք, և գնացէք սիրով, որպէս Քրիստոս սիրեաց զմեզ [89] և զանձն իւր մատնեաց վասն ձեր պատարագ Աստուծոյ»: **

Զի Որդին Աստուծոյ զորդիս մարդկան իւր ժառանգորդս արար, և սփռեաց ի մեզ զշնորհս Հոգւոյն սրբոյ առատաբար: Զի բարերար բարբառովն կոչեաց յապաշխարութիւն զմեղաւորս խոստովանութեամբ, և ի հնազանդութիւն աւետարանին կենաց. զի նորոգեսցէ զհաւատացեալս լուսաւոր աւազանաւն յորդեգրութիւն իւրում Հօրն: Որ [90] բնութեամբ է Որդի զի շնորհօք արար զմեզ եղբարս իւր: Եւ զարատ և զբիծ մեղացն լուծանէ զնորածնեալս աւազանաւն ի Հոգւոյն [92] և ազատէ ի ծառայութենէ չարին: Զի որք ի Քրիստոս մկրտեցան, զՔրիստոս զգեցան, արու և էգ. եթէ հրեայ իցէ և եթէ հեթանոս, *** եթէ ծառայ իցէ և եթէ ազատ, ամենեքեան մի են շնորհօք որդիք Աստուծոյ և ժառանգակիցք Քրիստոսի: Որք իջին յորդանն Հոգևոր աւազանին պարգևօք ամենասուրբ Երրորդութեան, օրհնութեամբք և քահանայական խորհրդածութեամբք, և ծնանին [93] Հոգւով ի Քրիստոս լուսաւորեալ՝ ըստ բանին տեառն, առէք Հոգին սուրբ՝ յորդէգրութիւն Հօրն երկնաւորի. [94] **** Զի՛ նմա ունին իշխանութիւն քահանայք կապելոյ և արձակելոյ. զի զմկրտեալսն հրաժարեցուցանէ ի սատանայէ և մեռանել զմեղացն

* Անդ. ԺԱ. 29. ** Եփես. Ե 2. *** Գաղ. Գ. 27. **** Յովհ. Ի. 22.

ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
7/XI 1922
ИМЕНИ А. МЯСНИКЯНА
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

մահ, զի մի այլ ևս մեղօք կեցցեն [95] յերկրի: Զի որպէս մեռեալն լուէ յամենայն արուեստից, նոյնպէս և մկրտեալն եղիցի մեռեալ մեղաց և կենդանի արդարութեան, [96] զի զկերպարանս Քրիստոսի շնորհաց սուրբ Երրորդութեանն առնու. յայնմ հետէ զվերինն խորհել ըստ ճշմարտութեան աւետարանին * քարոզութեան և հաճոյից անմահ թագաւորին, արդար և ճշմարիտ վարուք հաստատել [97] յօթևանս կենացն անմահից ի Քրիստոս Յիսուս: Զի այսպէս վերստին ծնունդ հոգևոր աւազանին, որ զախտաւոր ծննունդն վերստին ստանայ առանց ախտի՝ շնորհօք և մարդասիրութեամբ ամենասուրբ [98] Երրորդութեան: Որք ոչ յարենէ, ասէ, և ոչ ի կամաց առն, այլ յԱստուծոյ ծնան ** առհաւատչեայ՝ ի ժառանգութիւն Քրիստոսի: Զի այսպէս ծնանին որդիք Աստուծոյ ի կերպարանս Որդւոյն Աստուծոյ, և լինին քարոզ ճշմարտութեան ի նեղութեան և յանդորրու, և անսասանելի կան ի սէրն Աստուծոյ ուղիղ սրտիւ և ուղղափառ խոստովանութեամբ. Եւ որք կենարար Հօրն ընծայեն երկնաւորին անճառ շնորհօք և յայնմ հետէ զգործ Աստուծոյ գործեսցեն և զկամս նորա արասցեն ըստ երախտեաց բարերարին, և կցորդակից լինին զօրաց երկնաւորաց որ ի պահպանութիւն [99] մարդկան շնորհօք արարչին, այնոցիկ՝ որ ժառանգելոց են զփրկութիւն յաւիտենից ի Քրիստոս:

Եւ որպէս Որդին Աստուծոյ եղև որդի մարդոյ և զգեցաւ զմեր բնութիւնս և կատարեաց զարդարութիւնս [100] ամենայն և հոգւով մարմնով, այսպէս և մեք զգեցցուք զուղղութիւն և կատարեսցուք զամենայն արդարութիւնս ի Քրիստոս. զի որդիք Աստուծոյ լիցուք, և աստուածք սիրով: [101] Զի մարմնացաւ Որդին Աստուծոյ կամօք, և

* Կող. Գ. 1—3: ** Յովհ. Ա, 13:

յանձն էառ զամենայն կիրս [102] մարդկան բնութեանս մերոյ բաց ի մեղաց։ Սոյնպէս և մեզ լիցի աստուածեղէն զօրութեամբն ընդ ամենայն կիրս անցանել առանց յանցման. զի կարողք լիցուք հասանել ի չափ հասակի կատարմանն Քրիստոսի. և այնպէս ճշմարտեալ ի կերպարանս Աստուծոյ, ժառանգեսցուք զարքայութիւնն Քրիստոսի։ Եւ պիտոյ է միշտ դաստիարակութիւն աւետարանին. որ հրահանգէ զմեզ ի լաւութեան կարգս. զի յանձանձեալ ի շնորհաց Հոգւոյն սրբոյ՝ ճշմարտութեամբ աճեցուսցուք զվաստակս արդարութեան սուրբ սրտիւ և ուղափառ հաւատով յԱստուած։ Եւ ի տեսչութենէ նախախնամական սիրոյն Աստուծոյ արթունք և զուարթունք եղիցուք ի պատրանաց բանսարկուին միշտ. և հաստատուն յուսով և առաքինութեամբ, սուրբ վարուք, մաքուր հոգւով և մարմնով հասանել ի նուահանգիստ խաղաղութեան ի յաւիտենական կեանսն, և յանպատում ուրախութիւնսն [103] որ պատրաստեցաւ սրբոցն յանճառ սիրոյն Աստուծոյ։ Եւ որպէս արեգակնս այս, որ լուսաւորէ զերկիր և որ ի սմա են արարածք՝ որ երևելիք են ի ծովու և ի ցամաքի, այսպէս հաւատոյն ճշմարտութիւնն և սրբութիւնն լուսաւորէ զմիտս սիրողաց [104] Աստուծոյ։ Եւ անձնիշխան կամօք երկնաւորք և երկրաւորք, մարդիկ և հրեշտակք, ճշմարտութեանն վարդապետք եղեն ի շնորհաց Հոգւոյն սրբոյ՝ սրտոյ գիտութեամբ և անմոլար իմաստութեամբ ըստ արդարութեան օրինացն։ Եւ այնպէս առաջնորդեալ լուսով Երրորդութեանն սրտոյ պատմութեամբ արարչական էութեամբ [105] լցին զերկինս և զերկիր ճառագայթիւք որպէս զարեգականս լոյս ի կեանս և ի փառս երկնաւորաց և երկրաւորացս։

Իսկ սատանայ որ աստուածանալն կամեցաւ, տեսեալ զինքն ի պայծառութեանն, և ամբարհաւաճեալ, և որպէս կարծէր՝ վրիպեցաւ ի փառացն, և ի վայր կործանեցաւ ի

պատուոյն, և զմարդիկ որսաց[106] ի կորուստ, սնոտի յուսովն սուերկրեալ հոգւով մոլորութեամբ[107] ընկէց ի սիրոյն Աստուծոյ ի պէսպէս ցանկութիւնս ամբարշտութեան։[108]

Այլ թէ ասիցէ ոք, որպէս ներեաց Աստուած սատանայի այնքան տարածել զմոլորութիւնն և զանօրէնութիւնս, իմացիր, զի իշխանական կամս է հրեշտակաց և մարդկան՝ որ յԱստուծոյ պատուեալ. զի որ ընտիրքն իցեն ի նոսա երեւեսցին, և ըստ արժանեացն ընկալցին զհատուցումն ի դէպ ժամանակի զփառս և զտանջանս յարարչէն ամենայն արարածոց։ Զի որպէս մահ թագաւորեաց ի ձեռն յանցուածոցն Ադամայ, այսպէս և սատանայ ի վերայ մեղաւորաց տիրեաց։ «Զի սիրեցին, ասէ, մարդիկ զմոլորութիւն. վասն այսորիկ առաքեաց նոցա Աստուած ազդեցութիւն մոլորութեան զի դատապարտեսցին. զի հաճեցան ընդ չարն։» *

Սակայն ոչ եթող զարարածս ի նախախնամական սիրոյն իւրոյ, այլ գալստեամբ Որդւոյն իւրոյ՝ որ եկն յաշխարհս փրկել զմեղաւորս ի ծառայութենէ սատանայի, հաւատովք յազատութիւն փառաց Որդւոյն Աստուծոյ. զի լուծաւ բռնութիւն նորա յորդւոց մարդկանէ, որ տիրէր մեղօք, յերևել փրկչին մերոյ։ Եւ շնորհօք թագաւորեցին հաւատովք՝ որ ի սուրբ Երրորդութիւնն. և գտեալք զթողութիւն լուսաւոր աւազանաւն և մարմնով և արեամբ Քրիստոսի, ընդունելութեամբ հոգւոյն սրբոյ՝ որ աղբիւրաբար բաշխեաց[110] զշնորհս յարարածս։ Զի արդարացեալք ի հաւատոց անտի, զխաղաղութիւն կալցուք առ Աստուած ի ձեռն Յիսուսի Քրիստոսի առ հաւատչեայ ժառանգութիւնն. զի նորոգեաց[111] ի փառս անեղծութեան կամաւոր խաչելութեամբն[112] իւրով և մահուամբ եղծ զմահ, և յարութեամբն իւրով զմեզ ի

*) Յովհ. Գ. 19,

1 ввести в заблуждение

մեռելութենէ մեղաց յարոյց՝ զի մեք ի նորոգումն կենաց կացցուք [113] և մնասցուք յուսով յարութեանն ի փառս ամենասուրբ Երրորդութեանն այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից։

Գ

ՄԻՏՔ ՀԱՒԱՏՈՑ

ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ՀԱՅՈՑ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ [1]

ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆ հաւատոյ[2] լոյս է աչաց[3] մտացն, շարժմանցն խորհրդոց յիշատակացն,[4] զգացեալ[5] զլոյսն գիտութեան և զիմաստութեան շնորհաց Հոգւոյն սրբոյ: Որ[6] զառաջնորդական միտսն լուսաւորէ, և[7] գրովք սրբովք յանդիման կացուցանէ զաներևոյթսն, որպէս զտեսիլ[8] աչաց զարեգական զլոյս[9] և զայլ ևս զլոյսս[10] այսպէս երեւութանայ աստուածային տէրութեանցն[11] մեծութիւնք անքնինք: Զի[12] աննման և անհամեմատ է, անպատում և անսահման, անհաս և անբաւ. այլ հաւատով տեսանի ի մեզանէ[13] և իմանի և օրհնի յարարածոց աներկբայ հաւատով ի նեղութեան և յանդորրու, և զօրացեալ հաւատովն որ ի սուրբ Երրորդութիւնն, կայ և մնայ անսասանելի առ մարտակիցսն[14] հաւատոցն: Զի լուսաւորեալք ուղիղ հաւատովք յանսկիզբն էութիւնն,[15] ի մշտընջենաւոր լոյսն, յանփոփոխ ճշմարտութիւնն, ի կենդանարար կենդանութիւնն, մի ևս խոտորեսցուք յունայնաբանութիւնս՝ որ ի Հայր և յՈրդի և ի սուրբ Հոգին հայհոյութիւնք:

Այլ զգրեալսն[16] աւետեացն շնորհաց մի իւիք թողցուք, զի հասցուք խոստացեալ երանութեանցն և անմահութեան և անեղծութեանց: Եւ զզարմանս իւրոյ[17] բարերարութեանն միշտ ընկալցուք զտէրութեանն. և զարքայու-

թեանն զյոյսն ի սիրտս մեր հանապազ ունել, և զկենդանարար պարգևս շնորհացն ոչ մոռանալ որ ի Տեառնէ. և զխնամակալութիւնն՝ [18] մերոյ անգիտութեանս և տկարութեանս օգնական ունել ընդդէմ հնարից սատանայի, որ յամենայն ժամ է թշնամի։ Եւ զօրացեալ ի կենաց առաջնորդին խրատուց, ըստ աճման հաւատոց ի կատարումն առաքինութեան եկեսցուք։ Եւ յամենայն [19] վարս զխրատ սրբոյն ի միտ ունել յերևելիս և յաներևոյթս, և այնպէս ծանիցես զճշմարտութիւնն։ Վասն զի ոչ ի քէն բաւես հասու լինել աստուածային [20] մեծութեան փառացն, նա և ոչ հոգեղինացն գունդք հրեշտակաց, սերոբէիցն և քէրոբէիցն. և ամենայն երկնաւոր զօրութիւնքն անհաս են աստուածային փառացն։

*Մովսէս մտերիմ ծառայն Աստուծոյ զէութիւնն քարոզեաց մեզ և զկատարեալ գիտութիւն [23] իսկ յԱստուծոյ։ «Ես եմ, ասէ, Աստուած որ էն»։ * Եւ այսպէս սփռեաց յարարածս զլոյս աստուածային էութեանն. [24] զի անմոլար գիտութեամբն խոստովանեսցին զանբաւ մեծութիւն փառացն, զանծին իսկութիւնն և զանսկիզբն էութեանն ճշմարտութիւն, զանփոփոխ մշտնջենաւորութիւնն և զանհաս և զանվրէպ զիմաստութիւնն, զորս քարոզեցին օրէնսդիրք [25] և օրինապահք ըստ իւրաքանչիւր շնորհի։ Զի զդժնդակ և զաղտեղի և զվնասակար ապերախտին խլեսցէ և զլուսաւոր և զշահաւոր և զօգտակար զերախտին յորդորեսցէ մինչև ի վախճան ժամանակաց։ Եւ այսու փառաւորեցան և պատուեցան արքանեակք բարերարին։ Զի յորժամ առաքեաց Աստուած զՄովսէս առ ապերախտ ժողովուրդն, եցոյց զխնամոց իւրոց զքաղցրութիւն. զի ասէ, «Գթած եմ ես և ողորմած, երկայնամիտ և բազումողորմ և զղջա-*

---

*) Ելք. Գ. 14։

նամբ ի վերայ արարածոց։ * Զի այսպէս ուղղեաց զվրիպեալսն ի շնորհէն, և նորոգեաց վերստին ամենայն զօրութեամբն և ամենառատ պարգևատու[26] սիրովն որ կոչեաց զմեզ յորդէգրութեան շնորհս։ Եւ այսպիսւոք ազատ առաքինութեամբ յանարատ սրբութիւնն փափագանօք մնացուցանէ[27] լուսաւորս յաշխարհիս ամենասուրբ Երրորդութիւնն, և յորդէգրութիւն կարգէ[28] անփոփոխ ճշմարտութեամբն։ Զի Տէրն է այսոցիկ արուեստից արուեստաւոր, աշակերտել և ստանալ նահատակս առաքինիս և ճշմարտութեանն գործակից յիւրոց արարածոց, զի այսպէս տեսուչք հոգւոց և մարմնոց լինիցին ի սէրն Աստուծոյ հետևաւորաց և մերձաւորաց։

Արդ հաւատովք, ճշմարտութեամբ և առաքինութեան հանդիսիւքն, յարդարութեան և ի սրբութեան[29] լիցուք հաստատեալք յաներևոյթ մեծութեանն, ի փառս որ անքննելի է և անպատում ըստ աւետեացն անսպառ և անճառ փառաւորութեանն։ Եւ անզեղջ[30] սրտիւ և ճշմարիտ խոստովանութեամբ օրհնել զանքննելին մեծութիւն արարչին, և անշարժ մնալ ի յոյսն կենդանի և ի հանգստարար հանգիստն որպէս երևմամբք[31] լինել· զոր ակն ոչ ետես, և ունկն ոչ լուաւ, և ի սիրտ մարդոյ ոչ անկաւ, զոր պատրաստեաց Աստուած սիրելեաց իւրոց։ Զի անճառ են բարութիւնքն զոր վայելեն[32] սուրբքն բորբոքմամբ խնամոց և կենդանարար սիրոյն Աստուծոյ։

Ի վերայ այսր ամենայնի գոհանալ պարտիմք միշտ զարարչական խնամոցն Աստուծոյ, որ արժանի[33] առնէ այնքան բարեաց երևելեօք և աներևութիւք։ Եւ օրհնելով օրհնեսցուք զանմահ տէրութիւնն[34] ի տուէ և ի գիշերի անմեղկելի սիրով[35] մտերիմ կամօք և անարատ սրբութեամբ·

---

*) Օր. Ե, 10, Եղք. ԼԴ. 6,

անմոռաց յիշատակօք զխնամս սրբութեանն ի [36] մտի ունել ի գովեստ փառացն Աստուծոյ վկայութեամբ հաճոյից նորա։ Զի որպէս ճառագայթք արեգական յառաջ ընթանան և զկնի ծաւալին, այսպէս յառաջ [37] ճշմարտութիւն էութեանն, անփոփոխ իսկութեանն, որ անհաս է քան զմիտս և զխորհուրդս. որ պատմի նախ քան [38] զյաւիտեանս յաւիտենից. որ ի վերոյ է քան զերկինս երկնից և ի խոնարհ քան զանդունդս ծովու, որ յանբաւութեան կայ և մնայ։ Զմիոյ անսկիզբն էութեանն բարերար կամացն ունին զայցելութիւն յարարչէն արարածք. զի այնպէս անսահման է և անկշիռ, անբաւ և յատակ աղբիւր, և ամենազօր և ամենակալ։ Կեանք է և կեցուցիչ, լոյս մշտնջենաւոր, անհեղ, հզօր, ամենիմաստ և յառաջագէտ, բարերար և տուող բարեաց, գթած և ողորմած, ներող և երկայնամիտ, սուրբ սրբոց և մաքրութիւն ամենայն արարածոց։ Զի եթէ բիւրաւոր զօրք անմարմնոցն և լուսաւորք երկնից և որ երևին և որ ոչ ևս երևին, և որդիք մարդկան, և որ ի յերկրի են և որ ի ծովու անբան [39] կենդանիք և որ այլ ևս ի նոսա անշունչք արարածք ի լեզուս գայցեն, և ի բան գովութեան ոչ բաւեն ըստ նորա մեծութեան փառացն գովութիւն մատուցանել զարժանն իւր։

Արդ որ այնքան անհունն [40] է մեծութեան [41] փառօք, և բարձրագոյն քան զամենայն իմանալիս և տեսանելիս, այլ խոնարհի յարարածս, և իմանի և տեսանի ըստ մերոյ [42] զօրութեան և խնամոց իւրոց։ Եւ հրեշտակք որ քան զմիտս մարդկան սրագոյնք են, և ոչ բաւեն [43] հասու լինել մասին, [44] զիարդ կարասցուք մեք երկրաւորքս հասու լինել փառացն։ «Զի ոչ ոք գիտէ, ասէ, զՀայր, բայց Որդի. և ոչ, զՈրդի և զՀոգի, եթէ ոչ Հայր»։ *

---

*) Մատթ. ԺԱ. 27.

Իսկ խնամք բարերար կամաց սիրոյն Աստուծոյ [45] բազմարուեստ դարմանօք, որ յանսկիզբն էութենէն և յանփոփոխ մշտնջենաւորութենէն, տնօրինէ յարարածս ի հովուել և ի խնամել, ամենասուրբ Երրորդութիւնն որ մին է ամենարուեստ բարեօք [46]: Զի բազմաւատ շնորհօք իւրովք և կենդանարար առաքինի ընտրեալ առաքինութեամբք [47] յերանելի հանգիստն ժողովէ և փառօք պսակէ ի մշտնջենաւոր և յանուշակ պարգևսն: Զի վասն այսորիկ ստեղծ արարիչն զզօրս հրեշտակաց և զմարդիկ յանձնիշխան կամս, զի ընտրութեամբ հոգևոր օրինացն զփոփոխումն առցեն. ի փոքրկութենէ զմեծութիւնս, յանարգութենէ զպատիւս, յապականութենէ յանապականութիւն, ի մահկանացուացս [48] յանմահութիւն աստուածութեանն, որ ի Քրիստոս Յիսուս: Ուր չիք փոփոխումն ժամանակաց և հանումն բարեացն տուելոց յարքայութեանն Աստուծոյ: Միշտ ի մշտնջենաւոր երանութիւնսն վայելել ի փառս ամենասուրբ Երրորդութեան Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Դ

ԵՐԱՆԵԼՈՅՆ ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ՀԱՅՈՑ

ԼՈՒՍԱՒՈՐՉԻ

ՅԱՆԴԻՄԱՆՈՒԹԻՒՆ ՄՈԼՈՐԵԼՈՑ

Ի ԳԻՏՈՒԹԻՒՆ ԱՍՏՈՒԱԾՊԱՇՏՈՒԹԵԱՆ

Զի անհամեմատ է ամենակալ ամենասուրբ Երրորդութիւն. և յանսկիզբն էութենէն և ի մշտնջենաւորութենէն հաստատեցան ամենայն արարածք երևելիք և աներևոյթք: Երկինք և երկիր և ամենայն որ ի նոսա, ի միոյ արարչէն արարան ամենակարող զօրութեամբն, ամենակալ[2] լուսովն և կենդանարար տերամբն. զի լի են արարածք ամենայն փառօք նորա: Որ ամենիմաստ և ամենագէտ և ամենատես բարերար կամօքն իւրովք խնամէ զարարածս իւր, զոր յոչընչէ և ի չգոյէ գոյացոյց. զհոգևորս և զմարմնաւորս, զշնչաւորս և զանշունչս: Եւ զտարերս ամենայն չորիւք յեղանակօք յարդարեաց, բարձրութեամբ և խորութեամբ, լայնութեամբ և ընդարձակութեամբ[3]: Եւ զոր արար կենդանիս և անմահս, մտաւորս և բանաւորս, որ են գունդք հրեշտակաց և երկնաւոր զօրք, որ կարգեալ են ի պատիւ և ի պաշտօն և յանդադար փառաբանութիւն ամենազօր տէրութեան[4]: Կացոյց և լուսաւորս յերկինս յառաջնորդութիւն և ի փոփոխումն աւուրց և ժամանակաց, ի սնունդ մարդկան և ամենայն կենդանեաց և բուսոց և տնկոց: Նա և զհուր և զջուր, զամպս և զհողմս յարդարեաց ի պէտս ազգի ազգի բուսոց և տնկոց, որ ի պէտս մարմնականս[5] արարան իւրաքանչիւր պտղովք

և սերմամբք,[6] և որ ի ջուրս են զուղակք և ձկունք. ազգազգանաց պէսպէս բնութեամբ և զանազան կերպարանօք ի ծովու և ի ցամաքի, մեծամեծք և փոքունք, քաղցրունք և դառինք, շահեկանք և անշահք: Նմանապէս ի տունկս և ի բոյսս որ ի պէտս երևին մարդկան, և ոչ արարչին[7] արարան: Ոսկի և արծաթ և պղինձ և երկաթ, և պատուական քարինք և անսրգք[8] ի պէտս մարդկան ի վկայութիւն մեծին Աստուծոյ հաստատեցան: Եւ ի չորից նիւթոյ զերևելիսս եցոյց, խոնաւ և ցամաք, ցուրտ և ջերմ յԱստուծոյ կազմեցան: Եւ ի նոյն նիւթոյ արարեալ զմարդն, և շնչեաց ի նա հոգի կենդանի և անմահ, մտաւոր և բանաւոր: Եւ խառնեաց զհոգևորն ընդ մարմնաւորն. զի զհանդէս մտերմութեանն ցուցցէ առ արարիչն, ժուժկալեալ հոգևոր սիրով[9] պահիցէ զպատուիրանն ահիւ Տեառն, զի հաճոյացեալ Աստուծոյ ժառանգորդ լիցի անվախճան ուրախութեանցն. զի «Արար, ասէ, զմարդն ի պատկեր իւր, և տէր ամենայնի կացոյց[10] զմարդն, և զպատկերի իւրոյ արար զնա»* որ ըստ Քրիստոսի մարմնանալոյն[11] է իմանալ: Եւ անձնիշխան կամօք մեծարեաց զմարդիկ որպէս զհրեշտակս. և ելից իմաստութեամբ և գիտութեամբ, և տեղեակ ամենայն հանգամանաց և լուսատու հոգևոր իրաց[12] առ ի հաճոյս տէրութեանն իւրոյ. զի լիցի տեսուչ արարչին արարածոց ըստ պատուիրանի նորա: Եւ զամենայն տարերս ի գործ արկցէ արուեստիւ հանճարոյն մարդոյ առ ի շինութիւն աշխարհի ըստ գաւառաց և քաղաքաց. այլ և կահս և կազմած և անօթս ըստ արուեստիցն կազմեսցէ առ ի պէտս վարուց աշխարհիս, որով[13] պէտք տնօրինին:

Եւ շնչաւորաց անասնոց և գազանաց և թռչնոց ետ բարս և ուշ առ ի պէտս, որոց ուշն զբարսն շարժող առ-

---

*) Ա, 27:

նէր գոյացութեան[14] և բարուց նոցա վարդապետ զմիտս մարդկան առ ի պէտս իւրաքանչիւրոցն և մերոյ սպասաւորութեանս: Եւ ի նոսին են մանունք և մեծամեծք, անարգք[15] և շահեկանք, պիտանիք և անպիտանք, զազիրք և գեղեցիկք. զի երևեսցի լաւն ի վատթարէն և անարգն ի պատուականէն: Որպէս և ի խաւարի լոյս երևի, և ի զազանաց զգօնն, և ի թիւնաւորաց անմեղանչականն, և յանշահեկանէն շահեկանն, սոյնպէս է և խունկս և ի բոյսս, այլազոյնք հոտովք և համովք քաղցր և դառն, անոյշ և անհամ[16] զի երևեսցի լաւն ի վատթարէն, որ առ դարման և առ բժշկութիւն կազմեցան, կարգեցան ըստ ներգործութեանն Աստուծոյ: Եւ են որ անծանօթք են, և են որ ծանուցեալք ըստ տեղեաց տեղեաց: Է ինչ և ի սողունս իրաց ինչ ի պէտս, որպէս յօձիցն առէ զթիրակէն: Զի այսպէս յօրինեալ արարչին զնախախնամութիւն յարարածս իւր, որ երևին և որ ոչն երևին, և այսր ամենայնի տէր և իշխան և ժառանգաւոր արար զմարդն երևելեօքս արուեստաւոր մտօք:[17] Զի յոչընչէ արար զամենայնս և թագաւորեցոյց զմարդն և մեծարեաց, զի նովաւ ծանիցի արարողն և փառաւորեսցի միշտ. և մարդն ծանիցէ զինքեան զպատիւն որ յանպատուութենէ ի պատիւ վերաբերեաց յամենայն արարածոց: Որ[18] արուեստաւոր խելամտութեամբ որ յարարչէն՝ կարիցէ ի գործ արկանել զշնչաւորս և զանշունչս. զի երևեսցի գործ իմաստութեանն ըստ ամենայնի, որք ընդ հնազանդութեամբ են անկեալք ի Տեառնէ ի գործ պիտոյից, և կամ առ շինութիւն և ի զարդ, կամ առ այլ ինչ փարթամութիւնս. յայսոսիկ վայելելով իշխանական ճոխութեամբն փառաւորեսցէ միշտ զբարեգործողն:

Զի այսքան պատիւ տուաւ մարմնաւորացս որպէս և հոգեղինացն և անմահից անմարմնոցն. և արար ընտրողս և զննողս արարչութեանն, որ միշտ օրհնեսցեն զնա ի ձեռն

օրինաց եղելոց. զի իւրեանց իշխանական[19] կամօքն հաստատեսցին ի հաւատս ճշմարտութեանն, և ընտրեսցեն զարարիչն և զխնամիչն միմիանց, զդարմանիչն և զդարմանաւորսն զկեցուցիչն ամենայն կենդանեաց. որով լնու զպէտս պիտոյից ամենայն արարածոց:

Եւ զի արժան է յամենայն ժամ կարդալ առ նա, և խնդրել զայցելութիւն հոգևորաց և մարմնաւորաց, և գործակից լինել բարերար կամաց նորա, և անվնաս մնալ առ երախտաւորն Աստուած: Եւ այսու օրինակաւ փոխել ի վատթարէն ի լաւն, յանարգանացն ի պատիւ, ի ծառայութենէ յազատութիւն Որդւոյն Աստուծոյ, և յընդանութիւն ճշմարիտ հաւատոցն որ ի Հայր և յՈրդի և յամենասուրբ Հոգին, ժառանգաւորք լինել երկնից արքայութեան և անվախճան երանութեան: Զի նա է արարիչ ամենայնի, որ արար զպաշտօնեայս իւր հոգիս և ի բոց հրոյ, զվերինն զօրսն, և զմարդիկ յերկրէ ստեղծեալ աստատին և զկեալն ունի դարմանօք: Որք և ի հրեշտակաց դաստիարակին ի հոգեղինացն վարս ըստ նախախնամութեանն Աստուծոյ, որ զօրէնսն յօգնականութիւն ետ, որ ի հրեշտակաց քարոզեցաւ:

Այլ և ի մարդկանէ հաճեցաւ Աստուած քարոզ լինել ճշմարիտ աւանդիցն[22]. որք հաւատարիմ գտան ի պատուիրանս նորա և հաճոյացան Աստուծոյ, և զբազումս ի մարդկանէ դարձուցին յաստուածգիտութիւն[23] և յուղղութիւն ըստ կամաց արարողին կենաց: Եւ որք արհամարհօղք գտան ի լուր[24] Աստուծոյ և նանրացեալ ի խորհուրդս իւրեանց և խաւարեալ անմտութեամբ սիրտք նոցա, որպէս ասաց Առաքեալ,[25] զրկեցան յամենաշատ բարերարութեանցն: Զի ոչ միայն զխնամս արարչին արգելին իւրեանց անհնազանդ բարուքն և յետընդէմ գնացիւքն, այլ և զբարկութիւն Աստուծոյ յինքեանս շարժեցին յարդար և ի*

---

*) Եփ. Դ. 17.

մարգաւէր գաւառաւորէն և անկան ի փառաց և ի պատուոյ՝ ի նախախնամութենէ բարերար կամացն, և ի հրեշտակաց դաստիարակութենէ որ զօրավիգն էին։[26]

Այլ որք մտերմութեամբ կացին մնացին համբերութեամբ յամենայն նեղութիւնս, ի նորին խնամսն վայելեն աստ և ի հանդերձելումն։ Եւ որք մոլորեցան ի ճշմարտութենէ անտի՝ բարկութիւն Աստուծոյ կայ մնայ ի վերայ նոցա[27]։ Զի զտարերս ամենայն աստուածս արարին՝ զշնչաւորս և զանշունչս, զջուր և զհուր։ Զի ջուրն ի պէտս կենդանեաց արարան յԱստուծոյ՝ որ արբուցանեն զերկիր. և դարձեալ ապականին նեխելով և նուազելով։ Եւ հուր առ ի պէտս մեր արարաւ՝ որ դարմանօք վառի և սպասաւորէ մեզ. և ի պակասել կերակրոյն՝[28] շիջանի և ապականի։ Նոյնպէս և հողմք եւամպք ի պէտս եւս այլ արարածոց արարան՝ և ոչ ինքեանք եղեն. և ապականացուք են յորդելով և պակասելով օգտել և վնասել, զիւրեանց տկարութիւնն ցուցանելով։ Եւ երկինք և երկիր ոչ ինքեանք եղեալք[29], և որ ի նոսա[30] զեռունք իցեն և անշունչք՝ այլ յԱստուծոյ արարան՝ և ապականացուք[31] են։ Երկինք լուսաւորօք և երկիր կենդանեօք և բուսովք և տնկովք և ամենայն ձեռակերտօք[32] արուեստից՝ որ ստեղծանեն[33] պատկերս յարարածոց Աստուծոյ աստուածս՝[34] սուտ են և ապականին.[35] որպէս իմաստնոց է քաջայայտ։ Նա և ոսկի և արծաթ և ակունք պատուականք և պղինձ և երկաթ ի մարդկանէ ճարտարաց ի պէտս ինչ իրաց կազմեցին[36], և կամ ի զարդ ինչ նիւթոյ հասարակաց արարչին առնելոյ իմաստութեանն Աստուծոյ[37] նախախնամեալ։ Զի երկինք և երկիր և չեն և ամենայն զարդ նոցա յԱստուծոյ արարան յոչընչէ՝ աստուածք տարերքս ամենայն՝ այլ արարածք հասարակաց արարողին։

Արարածք են Աստուծոյ և լուսաւորք արեգակն և լու-

սին և աստեղք ամենայն, որք իւրեանց փոփոխմամբն ցուցանեն զիւրեանց սպասաւորութիւնն ըստ սահմանելոյն[38] այլ ևս արարածոց։ Եւ յայտ առնեն մեզ եթէ արարածք են օգտելով և վնասելով, ամարանի ջերմամբքն և ցրտութեամբ ձմերանոյ, մանրապատում օգտի[39] շահիւք և վնասակարութեամբ, որպէս իմանալի է։ Զի որպէս մարդիկ ոչ կացին ի պատուիրանապահութեան Աստուծոյ և ըստ հրամանի դարմանողին[40] յօգտակարսն վայելեցին, այլ նանրացան, այնպէս և դարմանիչ արարածք փոփոխեցան յօգտակարացն[41] ի վնասակարս։ Որպէս ձմեռն ոչ միայն զովացուցանէ, այլ և սպանանէ. և ամառն ոչ միայն ջեռուցանէ, այլ և խարշակահար առնէ. և հուր ոչ միայն ջեռուցանէ և զպէտսն լնու, այլ այրէ և ապականէ, և ջուր ոչ միայն արբուցանէ զերկիր, այլ և ողողէ և վնաս առնէ։ Այսպէս և ամենայն դարմանքն. որպէս իւղ և մեղր և գինի և այլն ամենայն ըստ նմին օրինակի։ Եւ չափով են խնամք դարմանոցն, և անչափն տանջանքն մահ. զի սանձեսցէ[42] զժպիրհ և զյանդուգն կամս ագահութեան և զանձնիշխան կամացն զհոսումն և ի վայր ցնդումն անառակութեան և անխնայ չարութեան, որ է ճանապարհ անդորր[43], որ տանի ի կորուստ։ Եւ նեղ և նուրբ ճանապարհ սիրոյ և արդարութեան օրինացն, որ տանի ի կեանսն յաղագս սրբութեան և ճըշմարտութեան որ ընթացուցանեն զճանապարհորդն ի դուռըն[44] կենաց և փրկութեան։

Զի այսպէս երևելեօքս և աներևութիւքն աչիւն Աստուծոյ սանձահարեալ զանձն ի զգաստութիւն, և զդժպհութիւն[45] և զյայրատութիւն անձնիշխան կամացն լուծանել ի չարէ և ի բարիսն շարժել և յորդորել ըստ օրինացն։ Կշռել և խորհել, ասել և առնել, որ ի հաճոյս Աստուծոյ աւարտի ճշմարիտ վկայութեամբ սուրբ գրոց։ Եւ մի անկանել ի բազմախոյզ խնդիրս՝ որ վրիպեցուցանեն ի

սուրբ[47] հաւատոյ: Զի ճշմարիտ գիտութիւն իմաստիւք[48] կենարար շահիւքն լցուցանէ միշտ. և ամրացեալ պահպանութեամբ պատուիրանին ի հոգևոր վարդապետութենէն կայ մնայ անսասանելի: Այլ և զամուրս ամենայն քակէ զհպարտացեալս ի վերայ գիտութեան Աստուծոյ, և ածէ ի հաւանութիւն հաւատոյն*:

Զի մինչ մարդն հնազանդէր օրինացն Աստուծոյ, և գազանք թունաւորք հնազանդէին մարդոյն որպէս տեառն և թագաւորի: Որպէս[49] Դանիէլին որ եկաց ի պատուիրանին, և որպէս երեք մանկունքն ի հնոցին**, և որպէս ձուկն՝ Պետրոսի. նա և ամենայն սրբոց արարածք հնազանդեցան ի կամաց Աստուծոյ: Եւ որք ապստամբք են ի պատուիրանէն Աստուծոյ[50] ամենայն արարածք շնչաւորք և անշունչք հակառակս յայտնին[51]. և երկիրս ամենայն տնկովք և բուսովք յապականութիւն դառնան: «Արար, ասէ, զերկիրն պտղաբեր՝ յաղտաղտուկ վասն չարութեան բնակչացն»: Եւ որքան ջանք և հնարք եղեն սրբոցն զմարդիկ ածել յուղղութիւն[52] հաւատոյ՝ օրինօքն և աւետարանաւն Քրիստոսի, սոյնպէս և մարդկան ըստ Աստուծոյ շնորհին հնարիւք ածել ի հնազանդութիւն զգազանս և զանասունս և զթռչունս արբանեկեալ պիտոյից[53] և զերկիր ի գործ արկանել ի պէտս: Եւ առ հուր և առ ջուր և հողմ հնարիւք սպասաւորս առնել մեզ՝ իմաստութեան Աստուծոյ առաջնորդեալ:[54] Եւ նախախնամութիւն արարչին աներևութաբար ներգործէ ի մեր հնազանդութիւն գազանաց և անասնոց և թռչնոց և սողնոց և զեռնոց, որ ի ծովս և որ ի ցամաքի են: Զի եթէ ոչ էր ահ տեառն ի վերայ մեր ամենեքեան զմեզ սատակէին: Եւ ուր ուրեք վնասիցեն[55]

*) Բ. Կորնթ. Ժ, Ե.

**) Դան. Զ. 18, Գ. 4.

զմեզ, յերկիւղ Աստուծոյ շարժեն. զի վերաբերեալ ի հեղգութենէ՝ յառաքինութեան վարս փութասցուք միշտ: Զի և գազանք ոչ եթէ բնութեամբ եղեն չարք, որպէս ընդելութեամբն ցուցանեն օձք [56] առ թովիչսն. և առիւծ և ինձ և արարածք հնազանդին մարդկան, որպէս եղեն և շուն և այլ ամենայն՝ որք ընդ լծով անկանին և շողոքորթեն, և առ անընդելսն գազանանան, և մահ գործեն անծանօթիցն և վէրս: [57]

Եւ որպէս ի պատճառէ խմբէ կատաղութիւն ի խելսն անկանի և հանէ ի դարմանոց, և յընտանութենէ ի վայրագութիւն մոլորեցուցանէ և ի կորուստ ինքեան և այլոց ևս, նոյնպէս և առ ուսմունս մոլորութիւն ի խելս մտացն անկանի և ցնորեցուցանէ որպէս զկատաղին, և անծանօթս առնէ ի ճշմարտութենէն ամբարիշտ և այլանդակ վարուք. որք ելանեն ընդ սահմանս բարեպաշտութեան, [58] բայց թէ բժշկի ուրեք որպէս կատաղի: Վասն այսորիկ պիտոյ է յոյժ զգուշութիւն՝ պահելով զլսելիս և զմիտս յայնպիսեաց անտի վնասուց, և խորհել [59] յօրէնս տեառն ի տուէ և ի գիշերի, որ փրկութեամբ լի է և կենօք: Զի և մարդն միտաւոր և բանաւոր՝ շնորհիւ Աստուծոյ անշարժ կացցէ ի լաւութիւն մտերիմ՝ հաւատով և անարատ վարուք: Փոփոխել ի վնասակարացն ի լաւագոյնս. [60] արժանաւոր լինել հոգևոր առողջութեան և անբիծ սրբութեան երախտեօք ճշմարիտ սիրոյն Աստուծոյ. և ընդունել շնորհս առաքելութեան, մարգարէութեան, վարդապետութեան, քահանայութեան շնորհի հաւանական կամօք արժանի լինել, և լուսաւորել զամենայն խորհուրդս մտաց լուսով գիտութեան. և արժանաւոր երախտաւոր վարուք հասանել ի նաւահանգիստն կենաց:

Եւ մարդս [61] յաղագս անձնիշխանական կամաց ունի զօրութիւն մնալ ի մտերմութեան սուրբ սիրոյն ի տէր, և

կամ ի հնազանդութեան[63] հոգևոր օրինացն, և ի բարեացն ի վայր կործանել ի խորս չարեաց, և զանարգանաց անուն ժառանգել և զանառակութեան և զամբարշտութեան զանօրէն և զչար և զպիղծ: Սոյնպէս և անմարմին զօրացն է իշխանական կամօք կալ ի հրամանի արարչին՝ և կամ սառնգանել Տեառն: Որպէս իմանալի է, հոգեղինացն կալ մնալ ի սէրն Աստուծոյ միշտ յանդադար փառաբանութեան արարչին իւրեանց: Այլ և զապստամբսն ի նոցանէ իսկ ասի սատանայ[64]. և որք ընդ նմաւ զօրք, այսք պիղծ և չարասէրք[65] անուանին: Արդ այսպէս յանուանէն ունին զհանգամանս[66] բնութեանցն բարւոյ և չարի, յայտնել մեզ զլաւն և զանարգն: Եւ զիւրաքանչիւրոցն ծանուցեալ զպատիւ և զանարգանս, զհետ երթիցուք բարւոյն և ատեսցուք զչարն. զի լուիցուք զբարբառն երանելին, որ ասէ. «Ազնիւ, ծառայ բարի և հաւատարիմ, որով սակաւուդ հաւատարիմ եղեր, ի վերայ բազմաց կացուցից զքեզ. մուտ յուրախութիւն Տեառն քո»: *

Եւ որք հիւանդքն են և սոյգ ապաշխարեսցեն, նոքա փրկութեան հասանիցեն՝ որ ի Քրիստոս Յիսուս: Զի ոչ է պարտ հիւանդացն ի դարմանս արդարոց[67] վայելել, և վատացն առ քաջսն, և մեղաւորացն ընդ անմեղսն, և անսրբոցն ընդ սուրբս հաւասարել: Այլ կալ մնալ յիւրաքանչիւր կարգի ուսման, ումն ուսուցանել և ումն ուսանել:[68] Զի այսու շնորհիւ հրաւիրանօք կոչեաց զամենեսեան յիւր արքայութիւն. և կանուխ գիտութեամբն ընտրեաց զառաքեալսն իսպառ պաշտաման ճշմարիտ քարոզութեամբ[69] հասարակաց արարչին: Եւ նոքօք ած զբազումս ի ժառանգութիւն աստուածգիտութեան: Եւ վասն այսորիկ բարեբար[70] կոչի և թագաւոր թագաւորաց և տէր տերանց.

---

* Մատթ. ԻԵ, 21.

որ միայն ունի զնախախնամութիւն իվերայ մտերիմ ծառայից առաքինեաց ի նեղութեան և յանդորրու. զի ցուցանէ զօգնութիւն առ ապաւինեալսն իւր: Զի դատաւոր արդար է ի վերայ օրինաց, և բժիշկ հիւանդաց՝ որք ախտացան ի զանազան ախտս և ի ցաւս, յորժամ դառնան յապաշխարութիւն խոստովանութեամբ: Այլ և դարմանք հոգևորք պատրաստեալ կան, խրատք առողջութեան ի սուրբ գիրս [71] և աւետիք թողութեան և հանդերձեալ երանութիւնն որք կամիցին: Զի որպէս ամպ երբեմն կարկտիւ և հրով շրջի [72] և երբեմն քաղցր անձրևով, [73] այսպէս հրաման Տեառն շարժի ի վերայ անարժանից բարկութեամբ և արժանաւորացն քաղցրութեամբ ըստ արդար դատաւորութեանն:

Եւ արարիչն Աստուած և հաստիչն Տէր ի գործոց անտի իւրոց ունի զփառաւորութիւն և զկեցուցիչ [74] անուանսըն զերախտեաց իւրոց, զբարերարն և զողորմածն և զգթածըն, զսուրբն, զերկայնամիտն, զատոյգն, զճշմարիտն, զաներևոյթ զզօրութիւնն երևելեօքս ի հանդիսի կացուցեալ ի խրատ և յառաջնորդութիւն աներևոյթ զօրաց հոգեղինացն և երևելի որդւոց մարդկան ըստ ընտրութեան լաւութեան առաքինութեան գործոցն սրբութեան: Որ փառաւորեալք են արարչին կենարար արուեստիւք, որ գործակիցն է իւրովք շնորհօք: Եւ զնոյն անուանս ստանայ արարածն զարարչին իւրոյ, և նոքիմբք մեծարեալ մտանէ ի ժառանգութիւն Որդւոյն Աստուծոյ և մարդասիրի, և ի բարութիւնս վայելէ յանվախճան և յանսպառ երանութիւնսն [75] ընդ անմահ արքային յաւիտեանս միշտ:

Շնորհալից մտաց և հաւատացելոց սակաւ բանք խրատուց բաւական են յուղղութիւն. իսկ անհաւատից և անշնորհից և հոլովից բանք խրատուց ոչ ինչ օգուտ գործեն, որոց խաւարեալ են միտք իւրեանց և օտարացեալք

ի շնորհաց անտի[76]։ Արդ յուշ լիցի ամենեցուն աստուածեղէն խրատն, որով[77] լուսաւորիմք իմանալի լուսովն որ անստուերն է, և չիք ինմա խաւարի մասն։ Արար զմեզ բանաւորս և մտաւորս, զի ծանիցուք զարարիչն և արասցուք զհաճոյս նորա. որ յոչընչէ ի լինելութիւն եած և ի չգոյէ ի գոյ։ Եւ մտակարարեալ ի մարմնի՝ վերափոխէ զկացեալսն ի պատուիրանապահութեան[78] յաստուածեղէն փառսն Քրիստոսի. Զի որք ասենն եթէ ընդէր այսպէս արար զմեզ ապականացուս և ոչ անապականս, «միթէ ասիցէ՞ ստեղծուածն ընդ ստեղծիչն իւր թէ ընդէր այդպէս արարեր զիս։ * Զի ուսցուք զմեզ ինքեանս ըստ իշխանական կամաց մեղուցեալս և ապականեալս, և անմեղս և անապականս։ Որոց իւրաքանչիւրոցն է[79] պատրաստեալ՝ մեղուցելոցն մահ, և անմեղացն կեանք յետ աստեացս վճարելոյ. որոց կենաց և մահու փոփոխումն չիք։ Որ անփոփոխն է կենդանի երանութեամբն ի սիրոյն Քրիստոսի[80] կազմեալ. «Զոր ակն ոչ ետես և ունկն ոչ լուաւ, զոր պատրաստեաց Աստուած սիրելեաց իւրոց», ** ասէ աստուածային Առաքեալն։[81]

Այլ յայնժամ ի յարութեանն[82] աւուրն յայտնի յորժամ լինիցի ահաւոր ատեանն յերևել փառաց Որդւոյն Աստուծոյ. զի երկինք և երկիր անցցեն, և նա կայ մնայ անմահ և մշտնջենաւոր և անսպառ յաւիտեանս յաւիտենից։ Զի անհնազանդից և անհաւատից, ամբարշտաց և մեղաւորաց կազմեցան տանջանքն անվախճանք, որպէս սատանայի և դիւաց[83] նորա։ Զի յերկրի որպէս ի ծովու ծփեցան հողմակոծեալ և մրրկեալ մեղօք։ Այլ որք հաւատարիմքն և լուսաւորեալքն շնորհօք՝ անսասանելի մնացին ի պատուի[84]

* Հռով. Թ, 20.
** Ա. Կորնթ. Ա, 19.

արարողին, զի լուսաւորեցան վարք[85] նոցա. և որք տեսին գործս նոցա բարիս, փառաւորեցին զՀայրն, որ յերկինսն է՝ ըստ բանի աւետարանին: * Այլ արարչին բոլորից և ամենեցուն Տեառնն[86] ոչ ոք կարէ հասու լինել և բաւական յասել զամենարար զօրութեանն նորա զմեծութիւն և զիմաստութիւն: Այլ ըստ իւրում բարերարութեանն եբաց զդուռն կենաց արարածոց իւրոց հաւատացելոց ի ձեռն Յիսուսի Քրիստոսի և որբոց իւրոց: Որոյ աշակերտեալք ի նոյնն գնասցուք հաւատով և սիրով և յուսով. զի ընդ նմին ժառանգեսցուք զանսպառ բարութիւնն[87] ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր. որում փառք յաւիտեանս յաւիտենից, ամէն:

* Մատթ. Ե, 14, 16

Է

ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ԿԵՆԱՐԱՐ ԽՐԱՏՈՒՑ

ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ՀԱՅՈՑ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ ԱՍԱՑԵԱԼ

ՅԱՅՏՆԻ *է իմաստնոց սրբոց, որ ունի զգիտութիւն ի գրոց մարգարէից և առաքելոց և վարդապետաց, թէ մի է բնութիւն ամենասուրբ Երրորդութեան զօրութեամբ և փառօք և միտնջենաւորութեամբ։ Անսահման*[1] *էութիւն, անսկիզբն իսկութիւն, անփոփոխ ճշմարտութիւն, կեանք և կեցուցիչ մարդկան և ամենայն կենդանեաց։ Հայր է Հայրն միածնի Որդւոյ, և բխումն*[2] *Հոգւոյն սրբոյ պատճառ նոցունց իսկութեանցն ի նոյն բնութենէ։ Երրորդութիւն կատարեալ և մի աստուածութիւն, փառաւորեալ միշտ ի զօրաց երկնաւորաց և ի մարդկանէ, որպէս զԱստուած և զարարիչ գոլով։*[3] *Զի յոչընչէ արար զլուսաւորս*[4] *և զամենայնս որ երևին և որ ոչն երևին և յերկինս և յերկրի։ Եւ Հոգեղինացն և բանաւորացս տուեալ զիշխանական կամս, որով երևեսցին պատուեալք, և ցուցցեն զլաւութիւն մտերմութեան առ արարիչն, փառաւորելով զտէրն փառաց և առնել զհաճոյս նորա, և արուեստից նորա տեղեակ և աշակերտ լինել անարատութեամբ և սրբութեամբ։ Եւ երախտաւոր լինել առ դարմանս որդւոց մարդկան. հովուել և բժշկել և առաջնորդել յերևելի և յաներևոյթ պէտս ըստ ամենայն օգտից գործակցութեամբ Հոգւոյն ըստ օրինացն, բարի կամօք և բարի խորհրդով և բարի գործովք ցուցեալ*[5] *զգործ պիտանութեան։ Զի եղեալք և հաստատեալքս ի բարին՝ ի նոյնս կացցուք։ Զի աղբիւր է ամենայն բարեաց և կենդանութիւն*[6] *սուրբ խրատուց, որ*

զամենեցուն միտս լուսաւորէ ի գործակցութիւն կամաց իւրոց բարեսիրաց խնամողութեամբ գործոց սրբոց՝ մտանել ի ժառանգութիւն արքայութեանն, որ առ անվախճան կեանսն տանի: Այս է բարերարութեանն նորա հանդէսք. աննախանձ և առատ առ արարածս իւր. զի զամենեսեան կոչէ յիւր փառսն և յերանութիւնսն գործակցութեան [7] ըստ իւր բարերար կամացն: [8]

Եւ զի արարածոց կամք հաղորդեալ իցեն ընդ նորա բարի կամացն ի ձեռն օրինացն եդելոց, և լիցին աշակերտք բանին կենաց: Զի նախ նորա միայնոյ ամենակալ զօրութեանն և բարերար կամացն և ամենագիտ սիրոյն գործ երևեցաւ, զի յոչընչէ արար զերկինս և զերկիր և որ ի նոսա արարածք իցեն, որ երևին և որ ոչն երևին: Երկրորդ՝ լաւութեամբ մտաւորացն և բանաւորացն և որք ի նոցանէ զգործս մտերմութեան և հնազանդութեան և սիրոյ ցուցանեն, [9] յայլ պատիւ փոխեցին յանուն և ի փառս հրեշտակաց և հրեշտակապետաց, սերովբէից և քերովբէից և զուարթնոց և ամենայն երկնաւոր զօրացն որք փառաւորին [10]: Իսկ երկրաւորացս տուեալ շնորհս առաքելութեան, մարգարէութեան, քահանայութեան, աւետարանութեան, ճշմարիտ վարդապետութեան. մարտիրոսութեան, կուսութեան, սրբութեան, կատարեալ ապաշխարութեան: [11] Զի երկոքին կողմանքն միոյ բարերար կամացն արբանեակք են և աշակերտք, վերին զօրք և մարդիկ: Զի մի է Աստուած Հայր, յորմէ ամենայն. և մի տէր Յիսուս Քրիստոս, որով ամենայնքս. և մի սուրբ Հոգի նորոգող. Երրորդութիւն սուրբ: Զի բանիւ Տեառն երկինք և երկիր հաստատեցան, և Հոգւով բերանոյ նորա ամենայն զօրութիւնք նորա, [12] որպէս ասացաւ ի մարգարէէն. որ միշտ օրհնի յարարածոց:

Է· վանազանութիւն կարգաց և պատուոց [13] յԱստուածոյ

ի հրեշտակս և ի մարդիկ ըստ իւրաքանչիւրոց յօժարութեան և սիրոյն որ առ Աստուած։ Զի յանուանցն ծանուցանիցեն [14] մեզ երկնաւորք և երկրաւորք կալ ի մտերմութեան և ի բարեխոնարհութեան [15] ի բարի գործս․ յորդորել և զայլս ի բարին և ի հաճոյսն ամենազօր տէրութեանն, և խափանումն առնել աղտեղի բարուց շարժմանց։ Զվերինսն խորհել զհրեշտակայն, և զԱրարչին կամաց, [16] զի զնոյն փառս և զպատիւ առցուք, ևլինել սպասաւոր բանին կենաց և արարչին կամաց ճշմարիտ քարոզութեամբ զանմոլար գիտութիւն սփռել ի լսելիս մարդկան, զարթուցանել ի գործ բարեաց, և ունել զերասանակս անձնիշխան կամաց ի պահպանութիւն պատուիրանին և յիրաւունս Տեառն։ Ով զայս արասցէ, քերովբէի նմանի, և զնոյն պատիւ առցէ յարարչէն։ Եւ որ զհակառակաւէր և զդժնդակ վարս ուղղէ ի հնազանդութիւն և ի հեզութիւն և յանարատ սըրբութիւն, խլելով ի մտաց և ի մարմնոյ զանիրաւ բոյս որոմն չարութեան, ապիրատութեան, խորամանկութեան, խարդախութեան [17] և ամենայն վնասակարաց, և ցանկացողս առնէ աստուածային օրինացն արդարութեան, ըզսերովբէի զկարգ ունի և զպատիւ։

Իսկ որ արթունն կայ ի հանդէս առաքինութեան սուրբ և անարատ, և ոչ պղերգանայցէ յօգտակարացն, ի հոգևորացն կամ ի մարմնականացն, զուարթնոցն զկարգ ունի, զփառս և զերանութիւնս։ *

Իսկ որ զկորուսեալն գտանէ և զգտեալն պահէ, և զամբոխեալն բարկութեամբ և ամբարտաւանութեամբ՝ զիջուցանէ ի խաղաղութիւն և ի խոնարհութիւն և ի հաշտութիւն, նմանեալ լինի Որդւոյն Աստուծոյ և ժառանգակից ըստ իւրում բանին․ «Երանի խաղաղարարաց, զի նոքա որդիք Աստուծոյ կոչեսցին»։ **

* Սաղմ․ ԼԲ․
** Մատթ․ Ե․ 9․

Իսկ որ զօտարսն ընդանեցուցանէ, և զգլորեալսն ի մեղս՝ կանգնէ, և զհիւանդացեալսն անհաւատութեամբ և երկմտութեամբ՝ բժշկէ ուղափառ [18] հաւատով և բարի գործովք, և զաղտեղիսն [19] հոգւով և մարմնով ախտացեալս սրբէ սուրբ խոստովանութեամբ ըստ աւազանին շնորհի, և զայս յապաշխարութիւն, գործակից լինի [20] հոգւոյն սրբոյ, և նորին բնակարան, ըստ բանին. «Դուք տաճար Աստուծոյ էք շինեալ իրաւամբք և սրբութեամբ. և հոգի Աստուծոյ, ասէ, բնակեալ է ի ձեզ» * իւրովք աստուածային փառօքն ի սրբեալսն։

Իսկ որ զանյոյսն յուսով նորոգէ ի յոյս կենացն յաւիտենից, և զհարթուցեալս և զհեռացեալսն հանդարտեցուցանէ և զետեղէ երկայնմտութեամբ ի համբերութիւն, և գթած խնամովք յանձանձէ, և շնորհօք ողորմութեամբ ուղղէ ի լաւագոյնսն ի լուսաւորութիւն աստուածգիտութեան և մաքուր վարուց, ժառանգորդ լինել Քրիստոսի և արքայութեան երկնից։ Որ նմանեցաւ նորին մարդասիրութեան ըստ ամենայնի, և ի խնամս սուրբ Երրորդութեան վայելեցէ յերանելի կեանսն [21]։ Զի Աստուծոյ երախտեօքն ի փոքուն հաւատարիմ եղեն հոգեւոր դարմանօքն և մարմնաւոր. զի «Քաղցեալ, ասէ, և ետուք ինձ ուտել. ծարաւի էի [22] և արբուցէք զիս» ** և որ այլն ևս։ Զի սովհեալն. արարէք միում ի փոքրկանց, ինձ արարէք, *** ասաց։ Զի այսպէս են խնամք սիրոյն ի մեզ։

Իսկ որ ծուլանան առ բարի գործսն [23], և արհամարհանօք արհամարհեն զօրէնսդիրն, և որոշեն զանձինս ի Տեառնէ հպարտութեամբ և անհաւանութեամբ [24], ապստամբեալ ի բանէն կենաց, ամբարտաւանեալ ընդդէմ նե-

* Ա. Կորնթ. Գ, 16։
** Մատթ. ԻԵ, 35։
*** Անդ. ԻԵ, 40։

րող տէրութեանն ամենակալ զօրութեանն, և լինին յոլովից կորստեան պատճառք, վրիպեալք [25] ի յաւիտեանցն բարեաց և յերանելի յուսոյն, սատանայի են նմանեալ և զնոյն պատիժս առցեն [26] ի յաւիտենից տանջանսն։ Որք սատէն են գրաւեալք ի ներքոյ ահաւոր սպառնալեաց [27] արդար դատաստանին յաղագս ապախտաւոր և անառակ գործոց [28] չարեաց։

Իսկ որ ստահակեն և մոլին ի չարիս, և նենգելով լինին բանսարկու և մոլորեցուցանեն [29] յուղիղ հաւատոց և ի սուրբ վարուց, և նախանձին ընդ բարեգործս, և լինին խռովարարք և բարկացողք և պղտորիչք պարզամտաց, զդիւաց զկամս ունին, և նոցին լինին ժառանգորդ ի յաւիտենից տանջանսն. եթէ յանմարմնոց իցէ և եթէ ի մարմնաւոր հողեղինացս [30]։

Իսկ որ անխտիրն է յաղտեղութիւնս. լկտեալ յանառակութիւն [31] և վարեալ ի պէսպէս ցանկութիւնս պատիր պատճառաւ բազմոստեայ [32] անօրէնութեամբ ի գողանալ ի ստել, յերդնուլ, և բազմարմատ [33] դժընդակութեամբք պատճառք լինի բազմաց ի կորուստ, այնպիսին զպիղծ և զաղտեղի անուն ժառանգէ. հրաժարեալ ի կենդանի լուսոյն [34] և ի սրբութեան փառացն, ելանէ ի խաւարն արտաքին հրախառն. ուր [35] որդն նոցա ոչ վախճանի և հուրն ոչ շիջանի *, և լինի ի տեսիլ ամենայն մարդկան։ [36]

Իսկ որ անխնայ են ի չարութեան [37] և լի են անիրաւութեամբ յերևելիս և յաներևոյթս, յանառակութիւն և յանզգամութիւնս, ի հարկանել և ի զրկել, ի նեղել ի սպանանել և ի կորուսանել, այնպիսին զանողորմ չարագործացն զպատուհասն ընդունի [38]. զի չարքն չարաւ կորնչին [39]։

---

* Եսայ, ԿԶ, 24։

իմացա՞ր ըստ իւրաքանչիւրոց խորհրդոց և գործոց զհատուցումն Աստուծոյ արդար կշռօքն [40]։ Զի եղաւ պատուիրան մարդկան՝ կալ հաստատուն յանարատ սրբութեան, և գործել զարժանն և զիրաւն [41], և կալ մնալ անշարժ ի լաւագոյնսն [42] որպէս ասացաւ։ Զի այսպէս կարեն [43] ընդունակ լինել շնորհաց մարգարէութեան, և խորհրդակից լինին բարերար կամաց տէրութեանն ճշմարիտ քարոզութեանն [44] և զարթուցանել զամենայն միտս [45] ի քնոյ յանկնկալութիւն յուսոյն, [46] սպասել կենդանի աւետեացն խոստացելոց, և ժառանգաւոր լինել անքննելին փառացն՝ որ արդարոցն է։

Եւ որք հրաժարեն ի պատիր խաբէութենէ մարմնաւոր փարուցս՝ լուացեալ զմիտս շնորհօք ի խղճէ չարեաց ստոյգ զղջմամբ ապաշխարութեամբ և արտասուօք, [47] ատել զչարն և սիրել զբարին, խափան լինել մոլար խաբէութեան ուսման, և ընծայաբեր լինել ճշմարիտ հաւատով ամենասուրբ Երրորդութեանն [48], որք այսմ արժանի լինին, առնուն զանուն առաքելութեան [49] աւետեաց Նորոց կտակարանաց, և ժառանգաւոր լինին արքայութեանն երկնից։ Եւ որք նախ զառնելն ընծայեցուցանեն ըստ ուղիղ քարոզութեանն. զի որոյ գործք իւր վկայեն քարոզութեանն, ապա և լսողացն ընդունելի են առ ի խափանումն սուտ և պատիր [50] խաբէութեան մտացն շարժմանց։ «Զի որ քրիստոսեանքն [51] են, ասէ Առաքեալ, զմարմինս իւրեանց ի խաչ հանին կարեօք և ցանկութեամբ հանդերձ»*։ Եւ այնպիսիքն են բնակարան աստուածութեանն, և վկայք ճշմարտութեան ամենայն հաւատացելոց։

Իսկ որ միամտութեամբ սրբութեամբ ընդրեն սրբեալ զմիտս և [52] զմարմինս յամենայն խղճէ չարէ յերևելեաց

* Գաղ. Ե, 24.

և յաներևութից՝ արժանի սրբոյ Հոգւոյն կոչմանն՝ առաքինեալք[53] որպէս զքաջ նահատակս՝ անարատ սրբութեամբ յանդիմանել զմարմնաւոր բարուցն[54] միշտ զշարժմունս՝ և քակել զկիրս մարմնաւորս և շինել զհոգևորսն՝ զամբծութիւն և զամենայն արդարութիւն փափաքանօք և անմեղկելի ի շահաւոր[55] գիտս և ի փրկութիւն մերձաւորին և հեռաւորին[56]։ Զի որք այսպիսի վարուք հանդիսանան՝ նոքա են արժանի Հոգւոյն սրբոյ օծման՝ և քահանայանալ Աստուծոյ և ընծայել ժողովուրդ Տեառն նախանձաւորս գործոց բարեաց և պաշտօնեայս սուրբ Երրորդութեանն ի ձեռն շնորհաց սուրբ աւազանին և մարմնոյ և արեանն Քրիստոսի կցորդ ըստ որդէգրութեանն[57]. և ի բաց ընկենուլ զհին մարդն՝ և զգենուլ ըզնորն որ ըստ պատկերին Աստուծոյ է՝ արդար և սուրբ՝ մեկնեալ իչարեաց։ իսկ որք կամին վանս առնել զանցաւորս՝ և առնուլ զմշտնջենաւորսն ի ժառանգութիւն՝ ատեսցեն զվարս մարմնաւորս՝ և և սիրեսցեն զվարս հոգևորս՝ նահատակեալք բազում առաքինութեամբ. զի առցեն զանուն խոստովանողաց և վկայից սուրբ մարտիրոսաց՝ որ երանութեամբ պսակին։

իսկ որ զգեցեալ են զանարատ սրբութիւն կուսութեան[58] և զմիամտութիւն բարերար կամաց հաճոյիցն՝ և ըստ արդարութեան օրինացն և կրօնից սուրբ հարցն՝ նոքա են որ մտանեն յառագաստն լուսոյ և վայելեն ի փառս անմահ Թագաւորին[59]։ իսկ որք անկեալ են ի փորձութիւնս մեղաց աղտեղութեան և դժնդակութեան ի հաղբս[60] սատանայի՝ և յիշեսցեն զբանն կենդանի որ ասէ՝ «Դարձարուք առ իս ի մեղաց՝ և խոստովան լերուք և ապաշխարեցէք. և ես դառնամ առ ձեզ յողորմութիւն շնորհօք ի բժշկել իփրկել ի կեցուցանել »[61] զի զօրացեալ ի Տեառնէ՝ յաղթեսցէ սովորական ցանկութեանցն՝[62] որ ըստ հոգ-

ւոյ և մարմնոյ է մարտն բանացեալ։ Եւ հանդիսացեալ յառաքինութեան մրցմունս [63], յաղթեսցէ և յամօթ արասցէ զիշխանն մեղաց առհաւատչեայ յուսոյն և աւետաւոր յարութեամբն։ Զի ի ձեռն մարմնոյ և արեան Տեառն ազատեալք լիցուք ի տանջանացն, և լիցուք ժառանգորդ արքայութեանն։ Զի «փառք և պատիւ և խաղաղութիւն ամէ, որ գործէ զբարի. և բարկութիւն և նեղութիւն և տանջանք, որ գործէ զչար» *։ Տեառնն, յետ այնչափ ընդբութեանցն և քննութեանց ոչ դառնայ յողորմութենէ ի խնամել զարարածս իւր. այլ զմոլորեալս դարձուցանէ, զանկեալսն յարուցանէ, զգլորեալսն [64] կանգնէ, զբեկեալսն պատէ, զհիւանդս [65] բժշկէ, զաղտեղեալսն մաքրէ արտասուօք, զերկմիտսն հաստատէ ի հաւատս, և զամենեսեան լուսաւորէ։

Արդ ո՞վ բաւական է բարեաց բարերարին [66] գոհութիւն մատուցանել, որ յամենայն կողմանց փոյթ է ի կեցուցանել զարարածս իւր։ Զապառնալիսն որպէս հուր վառէ ի վերայ ամբարշտաց և մեղաւորաց, անօրէնց և պղծոց, զի դարձցին ի չարեաց և ապրեսցին ի բարկութենէն որ գալոցն է։ Եւ զաւետիսն որպէս զլոյս ծաւալեցուցանէ. [67] զի զարթուցեալ և սթափեալ որպէս ի քնոյ ի բարիսն ժամանեսցեն, և զկենդանի բարութիւնս [68] ժառանգեսցեն յարարչէն։ Իսկ որք ոչն դառնան և ապաշխարեն, պատրաստեցաւ նոցա տանջանք ի Տեառնէ ըստ իւրաքանչիւրոցն։ Զի որպէս գթած է անունն ի խնամել և ողորմած է ի շնորհելն [69] և երկայնամիտ ի ներելն և սուրբ առ ի սրբելն և լոյս առ ի լուսաւորելն [70], այսպէս և ճշմարիտ անուն է նորա արդար դատաւոր. որ ըստ իրաւանց օրինացն հատուցանէ ըստ բարեաց գործոց և չարեաց։ Արդ զորոյ զգործն ունի

---

* Մաղաք. Գ, 7.

և զկամս, և [71] զանուն և զփառսն ժառանգէ [72], կամ զանարգանս՝ ըստ չարեացն զպատիժս յարդար դատաւորէն։ Զի որպէս զերկրաւոր դատաւորս իրաւարարս ասեմք, որ զչարագործս և զպիղծս և զանիրաւս ի բանդս և ի կապանս և ի տանջանս և ի սատակումն մարմնոյ մատնեն, զի խաղաղութիւն առցէ աշխարհս, և իւրքն [73] փառաւորեսցին, այսպէս է իմանալ և զԱստուծոյ դատաստանն։

Եւ մի ոք երկմտիցէ թէ ո՞վ գիտէ զայս՝ եթէ են պատիժք մեղաւորաց ի մարդասիրէն Աստուծոյ պատրաստեալ։ Ի սոյն յիշեսցէ զսատակումն՝ որ ի ջուրցն հեղեղէ. ամենայն շունչ կենդանի ապականեալ կորեաւ, բաց ի տապանէն՝ որ [74] ցուցաւն յԱստուծոյ։ Ապա թէ այսմ անհաւատ իցես, երթ ի Սոդոմ և ի Գոմոր ընդ հինգ թագաւորացն տունս, * և զանցսն տեսցես զաղետիցն ըստ պատմութեանն [75], որ տեղեաց ի տեառնէ հուր և ծծումբ յերկնից, ** և այրեաց զմարդ և զանասունս, զթռչունս երկնից և զձկունս ծովու, զքար և զհող և զջուր և զանտառս։

Եւ եթէ զայս հեռի համարեսցիս, արդէն իսկ ընդ ժամանակս ժամանակս զսով և զսուր և զգերութիւն և զմահս տարաժամս և զմահս անասնոց, այլ և զհարուածս և զցաւս և զհիւանդութիւնս չարաչարս, այլ և խռովութիւնս, հօր առ որդի, և որդւոց անհաւանութիւն [76], և եղբարց և սիրելեաց առ միմեանս ատելութիւն, և դառն հարուածք և մահ. վասն մեղաց զայսոսիկ բացայայտեն մեզ աստուածային [77] գիրք։ Զի գիտութիւն ճշմարտութեան և իմաստութեան և խնամք [78] արուեստից ըստ բարուց շարժեալ յամենակալ հօրէն և յարարչէն և ի փրկիչ թագաւորէն՝ մատակարարի յարանս ամենայն։ Զի նա է աղբիւր կենաց և տուիչ բարեաց և վարդապետ

* Ծն. ԺԴ, 2.

** Ծն. ԺԹ, 24.

և շինիչ երևելեաց և աներևութից։ Նա իմաստք որ ի մարդիկ՝ ի նմանէ յառաջագային պէսպէս արուեստից և հնարագիտից[79]։ Զի նախ ի միտսն գանձին շնորհք[80] արուեստիցն, և ապա յիշատակք իւրացն վարդապետին ի զգայութիւնսն, ճշմարիտ տեղեկութեամբ ստացեալ ի շնորհաց տուողէն[81]. որպէս և Բեսելիէլին[82] և նորին ընկերացն առ շինութիւն խորանին*. զի Հոգին սուրբ ազդէր ի նոսա զազգի ազգի հանգամանս արուեստից։ Զի նախ նոքա եղեն ճարտարագործք արուեստից ի պարգևաց Հոգւոյն, և ապա այլք ի նոցանէ աշակերտեալք մինչև ցայսօր[83] ժամանակի։

Զի որ զգարբնութիւնն ուսեալ կամ զոսկերչութիւնն կամ զայլ արուեստս՝ ի մտի ունի զհանգամանս իւրացն և զկահուցն զկազմս, և խոկայ[84] միշտ՝ զի կարասցէ գեղեցկագոյն յօրինել զէնս կամ զարդս և կամ այլ ինչ գործուածըս՝[85] որ ըստ աշխարհիս է իմանալ։ Նոյնպէս և բժիշկք որ երակօքն իմանան զցաւս, և դեղովքն զառողջութիւն շնորհեն ի շնորհացն Աստուծոյ։ Այլ և հանդերձարարք և շինողք և հողագործք և խորտկարարք, և որ այլ և արուեստք ի պէտս մարդկան ընտրեցան, ո՞չ ապաքէն յԱստուծոյ շնորհացն ունին զմտաւութիւն[86]. որ գովութեան և պատուի արժանի են և վարձուց, որք առնուն։ Իսկ որք ծուլութեամբ և արհամարհանօք յանցանեն ըստ հնարագիտութեան արուեստիցն, անպիտանս առնեն[87]. ապա և զուշն ի յիշատակաց արուեստիցն աստանդեցուցանեն[88] ի ծուլութենէն, և ագեղութիւն և խանգարումն երևութանայ, որպէս անհանճարից. և արուեստքն անկանին ի հնարագիտութենէ իմաստից և գործն անարգի և անպիտան լինի, և արուեստագէտքն անգոսնին և ամօթալից լինին, և անկանին ի տայժս ի տուգանս և ի տանջանս՝ անարգեալք յամենայնէ[89]։

* Ելք. ԼԱ. 35.

Սոյնպէս և կարգ քրիստոնէութեան և աստուածպաշտութեան է զգուշալի [90]. զի ամենայն իմաստութեամբ և հնարագիտութեամբ ուղղեսցէ զբարսն [91] և զզգայարանսն ի լաւագոյնսն վարդապետութեամբ հոգևոր օրինացն և ըստ հաճոյից բարերար կամաց արարչին: Զտիւ և զգիշեր ի կամս Տեառն խորհել, և յուշ առնել մտացն և զգայութեանցն զերկիւղն Աստուծոյ. զի առ ամենայն պէտս բարի գործոց պատրաստ իցեն միտքն խորհել և առնել զբարիսն առաջնորդութեամբ վերնատուողին. և ի հնարս մտեալ առ ի գրաւել ի յինքն զյիշատակս աստուածգիտութեան [92]: Յամենայն ժամ՝ ի կամս Տեառն նայել, ի նորա սէրն և յերկիւղն կալ միշտ. զի կարող է զանգոյսն ի գոյ ածել, և զանարգսն պատուականս առնել, և զմեղսն լուծանել ստոյգ [93] խոստովանութեամբ և ապաշխարութեամբ, և իմաստութեամբ առաջնորդել ըստ արուեստից արդարութեանն [94]. Հանապազ կալ ի մշակութիւն հաճոյից ամենակալ տէրութեանն անշարժ հաւատով և ամբիծ վարուք: Ականկալութեամբ յուսոյն կենաց զամենայն անդր գանձել, ուր ոչ ցեց ուտէ և ոչ ժանգ [95] ապականէ և ոչ գողք ական հատանեն * յաստուածային պահպանութենէն:

Եւ քաղցր յիշատակօք սուրբ սիրոյն անքակ կալ ի նմանէ անարատ սրբութեամբ: Այլ և երախտաւոր լինել առ հեռաւորս և մերձաւորս, ի նեղութեան և յանդորրու կալ միշտ ի ճշմարտութեանն: Խլել ի մտաց և ի զգայութեանց զսուտ և զպատիր խաբէութեանց զշարժմունս զեկամուտս նենգաւոր չարին [96] աղտեղի ցանկութեամբ և խիստ ամբարտաւանութեամբ: Եւ զղջմամբ և ապաշխարութեամբ լուացեալ զսիրտս ի [97] խղճէ չարեաց, և սրբեալ կամս բարիս առ ամենայն մարդ: Եւ փութալ և պահել զպատուիրանսն,

* Մատթ. Զ, 19.

և ընդ Աստուծոյ սիրոյն կապիլ միշտ. և անդ զմիտսն ամբառնալ, և զնորա գութն ի մեզ ձգել կենդանի խնամօք հուրովք։ Եւ աչիւ նորա զգուշանալ, և զգաստանալ մտերիմ սիրով և հաւատով, և արթունս և պատրաստ լինել, և յամենայն երկրաւորաց [98] ի բաց կալ, որ խափանիչ և վրիպիչ է շահաւոր օգտութեանցն։ Ոչ խօսել զվնասակարսն՝ զոր չէ արժան. այլ խօսել զճշմարիտն և զօգտակարն։ Եւ ոչ լսել զլուրն խարդախութեան. այլ որ յաստուածայինսն յորդորէ ի սէր [99] Աստուծոյ։ Եւ ոչ նայել ուր չէ արժան՝ ի շաւղս մարմնոյ զբօսանաց ախտի։ [100] Եւ ազատամիտ [101] լինել յագահութենէ, և աննախանձ բարերար առ ամենեսեան, և օգնական [102] տկարաց հոգևորականաց և մարմնականաց։

Եւ ոչ է արժան զաղանդսն խուզել, և ի նոսա դեգերել ի կորուստ։ Եւ զգուշանալ [103] յամենայն անիրաւութենէ, ի բարկութենէ, ի հարկանելոյ, ի զրկելոյ, ի թշնամանաց, յերդմանէ, ի ստութենէ, յոխակալութենէ, ի չարախօսութենէ, ի նենգութենէ, ի յանշահ չարէ [104] զի մի բարկասցի տէր և կորիցեն՝ [105] որք այսպիսիս ունիցին վարս։

Իսկ որք ընդդէմ այսոցիկ զառաքինութիւնս ծնիցեն, [106] մեծարանք և պատիւք և պարգևք ի տեառնէ, և զերանութիւնս յաւիտենից ժառանգեսցեն։ Զի ամենայն շարժմունս [107] արուեստիցն որ ի մարդիկ՝ ի կամացն շարժին ի լաւն կամ ի վատթարսն, զի իշխանականն ունի զերկաքանչիւրոցն զկամս բարւոյն և չարին։ [108] Բազմադիմի են սերմանք բարւոյն ի մարդիկ. զի աներևելի սիրովն Աստուծոյ երևելի ցուցցէ զմիտս [109] բարւոյն։ Եւ առաւելեալ բարեօք փառաւորեսցի ի պարծանս սրբոցն, և փայլեսցէ կենաց աւետեօքն։ [110] Իսկ դժնդակ վարուց և աղտեղի՝ որ ի սերմանէ չարին որոմն [111] բուսանի, յայտնի է ի բծիցն՝ աներևութիցն յերևելիս գոլով, [112] ոչ ընկալեալ զսերմն

բարւոյն ըստ ընդրութեան օրինացն. որք զհատուցումն ընկալցին [113] ի տեառնէ զանշէջ հուրն անմահ որդամբն [114]. զի ատեցին զբարին և սիրեցին զչարն. զի ընդրութիւնք են յԱստուծոյ բարւոյն և չարին ըստ օրինացն։ Զի որոց կամքն շարժին զգայութեամբքն ի բարի կամ ի չար, զնոյն և հատուցումն ընդունիցին։

Սիրոյն Աստուծոյ սրբութիւն հաստատի. բարեխոհութիւն, [115] ուղղահաւատութիւն, բարեգործութիւն, արդարութիւն, ճշմարտութիւն, եղբայրսիրութիւն, հեզութիւն, խոնարհութիւն, հնազանդութիւն, գործասիրութիւն, միամտութիւն, և որ այլ ևս են առաքինութիւն շահաւոր օգտիւք պահպանեալ երևելեօք և աներևութիւք։ Զգթութիւն բարի կամօք սիրել, ողորմութիւն քաղցր շնորհօք, զերկայնմտութիւն զուարթ յօժարութեամբ, անձանձրոյթ յօժարութեամբ յաղօթս, պահովք ընդեալ, զայս [116] սիրել, զայս պահել, յայսոսիկ [117] զփոյթն ունել միշտ և յայսոսիկ բարւոք ցուցանել զհանդէս մտերմութեան սիրոյն՝ որ առ Հայրն երկնաւոր և Որդին միածին և Հոգին սուրբ համազօր տէրութեանն։

Եւ որ սոցա հակառակս է, ատել զգժնդակսն, զչարեացըն զցանկութիւնսն [118] և զչ·որ խորհրդածութիւնս և զչար գործս անօրէնութեան, զխաբեբայ մոլորութիւն և զպիղծ [119] անառակութիւն, զսուտ պատիր նենգութեան [120] երդմունք, զանհամբոյր բարս անհաւանս, զստմտութիւն ի բարկութիւն շարժեալ, զստահակութիւնն ի թշնամանս, զանհնազանդութիւն յամառ, զծուլութիւն և զմեղկութիւն [121] զյայրատութիւն և զխեղկատակութիւն, զկռութիւն և զանառակութիւն, զոխակալութիւն և զնախանձ, զորովայնամոլութիւն և զարբեցութիւն, և զփառասիրութիւն և զամբարհաւաճութիւն հանդերձ ամենայն բծիւք և անխնայ չարեօք և անխտիր աղտեղութեամբք, որ անարգանօք լի է։

Այսոքիկ են դժնդակ վարք և վնասակար որոման սերմանք. զի առանձինն ընութեամբ՝ չարն չար ոչ է, և ոչ բարին բարի. այլ ի միտսն ունի բարի և չար լինել[122] զի սիրելն Աստուծոյ սիրել զբարին և ատել զչարն՝ բարի է. և ատել զբարին և սիրել զչարն՝ չար է. Նախանձել ընդ բարիսն և լինել բարի՝ բարի է, և ընդ չարսն՝ չար է. և և նախանձն նոյն է: Բարւոյն ցանկալ բարի է, և չարին չար. և ցանկութիւն նոյն է[123]: Սոյնպէս և առ ամենայն բարիս և չարիս է իմանալ զնախանձ և զցանկութիւն: Զի ամենատեառն բարերարի զբարին սերմանեալ ի մարդիկ, և յիշխանական կամսն թողեալ՝ որք կամիցին վարել ի բարի կամ ի չար: Արութեամբն ի հանդէս բարեպաշտութեանն, և հեշտութեամբն ի չարն հակամիտէ միշտ: Եւ կատարեալ բարւոյն բարութեանց աստուածսիրութիւնն է և եղբայրսիրութիւնն. զի սէր ոչ խորհի զչար: Իսկ չարեացն է անաստուածութիւնն և անձնասիրութիւնն կատարեալ. ըստ Առաքելոյ * բանի՝ օտարանալն յԱստուծոյ և առնել զկամս մարմնոյ և զմտաց, և լինել որդի բարկութեան: Եւ դարձեալ ասէ. ** «կենդանի եմ ոչ ես, այլ կենդանի է յիս Քրիստոս.» այսինքն հաճոյքն Քրիստոսի. արդարութեան, սրբութեան, ճշմարտութեան: Եւ դարձեալ ասէ. «Վասն ասեմ զթշնամեաց խաչին Քրիստոսի, և զկատարածն կորուստ. որք զերկրաւորս և եթ խորհին *** և խօսին և առնեն զչար, զլցեալսն ամենայն անիրաւութեամբք և գժընդակ չարեօք»: Իսկ ընդդէմ չարեացն զբարիսն գործել՝ ոյակաց և փառաց և պատուի արժանի է ընդ սուրբս:

Իսկ որ զԱստուած սիրել ասէ՝ և ատէ զեղբարս, այն-

* Եփ. Բ, 3.

** Գաղ. Բ, 20.

*** Փիլ. Գ, 18. 19.

պէս է, որ գտանէ և կորուսանէ, և որ լնու և հեղու· զի ամենայն ժամ զբարեաց զհետ երթիցուք [124] և ընդդէմ կացցուք չարեաց մարտից։ Որ առիթ լինի չարին, զփոխարէնս չարեաց առցէ. նոյնպէս և բարեաց առիթ՝ բարի ընդունի յամենակալ տեառնէն և ժառանգէ զերանութիւնն։ [125] Զի խափանիչք բարւոյ և չարասէրք՝ յանշէջ հուր գեհենին ընդ դևս պարտաւորեալ տանջին։ Եւ յերկոցունց վերայ աստէն իսկ անսուտ բանն Քրիստոսի զդատաւճիռն առնէ. * «Երթիցեն արդարքն ի կեանսն յաւիտենից, և մեղաւորքն ի տանջանսն յաւիտենից, զոր պատրաստեալ է սատանայի և հրեշտակացն նորա»։ Զի սասցեալ է վասն Ներինն ** «Մարդն անօրէնութեան, որդին կորստեան Հակառակորդն, որ հոգւով բերանոյ իւրոյ սատակէ զչարն՝ Քրիստոս»։ Նոյն պատիժք որ զնոյնս առնեն, զդժնդակ վարս և զչար գործս։ Զորս սպանանել [126] Հրամայէ Քարոզն՝ [127] զմեղացն անդամս, *** զցանկութիւնս չարեաց ամենայնի, որպէս ասէ. որ է մեղաց մարդ և կորստեան որդի և ժառանգ յաւիտենից տանջանացն։ [128] իսկ ստացեալ զվարս սուրբս և զանարատս ըստ պատուիրանին Աստուծոյ, մարդ կոչի արդար և սուրբ և ճշմարիտ ամենայն առաքինութեամբք կատարեալ ի Քրիստոս, ժառանգաւոր լինել [129] երկնից արքայութեանն և անանց բարեացն։

Արդ զայսպիսի խրատ միշտ ի մտի ունել և չթողուլ ի մտաց. որպէս անդեղեայ, որ զցաւս ոգւոց և մարմնոց բժշկէ, և առողջութիւն շնորհէ հակառակացն՝ որք վնասեն զերևելիս և զաներևոյթս յուղղութենէն։ Արդ զգոյշ լեր այսոցիկ յուսուցանել, ի լսել և ի յառնել միշտ զխրատս կե-

* Մատթ. Իե, 46։

** Թեսաղ. Բ, 3։ *** Կո. Գ, 15։

նաց, որ մաշիչ է ամբարտաւանութեան [124] և անօրէնութեան և աղտեղութեան մարդկան. և կանգնէ զգլորեալսն ի մեղս, և զարդարսն պահէ միշտ։ [125] Զի որ զպատուղ իւր ի ժամու տայ, եղև նա որպէս ծառ, որ տնկեալ է ի գնացս ջուրց՝ ի հոգևոր խրատս. և զամենայն ինչ զոր առնէ, [126] աջողեսցի նմա, ասէ։* Եւ լիցէ ի Քրիստոսէ. ծառայ բարի և հաւատարիմ, որովհետև ի սակաւուդ հաւատարիմ եղեր. եկ մուտ յուրախութիւն տեառն քո, որ պատրաստեցաւ քեզ ըստ վաստակոց քոց։ Որ ունի ականջս լսելոյ, լուիցէ հոգևոր խրատուցս շնորհօքն Աստուծոյ ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր. որում փառք յաւիտեանս. ամէն։

* Սաղմ. Ա, 3.

Զ

ՅԱՆԴԻՄԱՆՈՒԹԻՒՆՔ ԾԱԾԿՈՒԹԵԱՅ ԻՐԱՅ ՈՐ ԶԱՆԵՐԵՒՈՅԹՍՆ ՅԵՐԵՒԵԼԻՍ ԱԾԷ ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ՀԱՅՈՑ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ

Չի ոչ է Հայր ծնեալ ուստեք, այլ Որդի ծնեալ ի Հօրէ [1] և ոչ արարեալ. և ոչ Հոգին սուրբ ստացեալ, այլ բղխեալ։ Մշտնջենաւորք, միաքան խոկութեամբ [2] ընդ Հօր և առ Հօր [3] և ի Հօրէ։ Որպէս բոց և ջերմութիւն ի հուր. [4] որպէս լոյս [5] և տապ յարեգակն. որպէս ջուր և բղխումն յաղբիւրէ. որպէս բան և հոգի ի մտաց [6]։ Շարժեալ առանձնաւորութիւնքն, [7] այլ [8] միաբանութիւն մի է բնութեանն [9], և ոչ եկամուտ յառանձնաւորութիւնսն միշտ։

Այս առակք ճշմարիտ Երրորդութեանն [10]։ Խոկութիւն անսկիզբն, կեանքն կեցուցիչ, [11] ամենագիտ սէր և ամենակալ զօրութիւն, Հայր և Որդի և Հոգի սուրբ։ Երեք անձինք և մի բնութիւն և կամք [12]. արարիչն և բարերարն և հաստիչն։ Աստուած էր և է. էր անսկիզբն յիւրում փառսն, և մշտնջենաւոր անվախճան [13] առ խնամն [14] արարածոց։ Եւ ճշմարտութիւնն էր և է. էր յիւրում անփոփոխմանն [15], և է հաստատութիւն արարածոց [16]։ Անվրէպ ամենաշահ գիտութիւնն էր, և է յիւրում [17] անքաւութեանն և առ լուսաւորութիւն արարածոց։ Անհաս իմաստութեանն իրաւունք [18] էր, և է յիւրում անճառելի նախախնամութեանն յարարածս [19] ամենայն։ Կենդանարար [20] ամենագիտ ամենաշահ խրատիւք յանփոփոխ [21] հաւատարմութեան իւրոյ [22] էութեանն էր, և է յաւէժ փրկական

շնորհօքն[23] յազգս մարդկան առ մերձաւորութիւն հաղորդութեան կենդանական սիրոյ: Ամենակարող զօրութիւնն էր յիւրում գոյացութեանն[24], և է առ ի զօրացուցանել[25] զանզօրս ի մարտս հոգևոր պատերազմի ընդդէմ աներևոյթ թշնամւոյ: [26] Կենդանի երանութիւն[27] սիրոյն Աստուծոյ[28] էր, և է բորբոքմամբ բարեաց[29] ի խնամել և ի պահել զարդարս, և ի զզջումն ածել զմեղաւորս: Լուսաւորեալ և փառաւորեալ սրբութիւնքն էր[30], և է ի պայծառացուցանել, ի փառաւորել ի նորոգել զարարածս բազմանշոյլ[31] շնորհօք և լուսաւոր աւազանաւն: Գթութեանցն[32] խնամքն էր, և է անպատում բարերարութեամբ առ խնամածութիւն արարածոց երևելի և աներևոյթ[33], զի հասցեն ի նաւահանգիստն բարեաց, աւետեացն խոստացելոց երկնաւոր կոչմանն, որ լին է կենդանի[34] երանութեամբ ի կեանս: Ողորմութեան շնորհքն էր, և է իւր անպատում բարութեամբք և ամենառատ պարգևօք ի տալ և ի ցուցանել զարգիւնս մարդասիրութեանն[35] և զկոչումն ընծայութեան յորդէգրութեանն շնորհս: Երկայնամիտ և ներող էր և է քաղցրութեամբ և բարերար կամօք անյիշաչար երևեալ[39], և ոչ զամենեսեան ատէն պատժէ, զի դարձեալ ի մեղաց կեցցեն: Ամենասուրբ Երրորդութեանն[36] բարերարութիւնքն կամօքն[37] իւրովք էր և առ արարածս իւր, և է յանպակաս լիութեան, որ ոչ պակասի, ոչ կշռի և ոչ պարփակի երևելեօք և աներևութիւք առ ողոքանս[38] և խոստանկանս[39] ըստ հնարագէտ մատակարարութեանն: Զի ըղշահաւորն և զօգտակարն[40] ստացին արարածք իւր. և զեկամուսան ի բանաւորս և ի մնաւորս ածցէ ի լաւագոյնն ամենիմաստ էութեանն իւրոյ[41] և ի ժառանգութիւն կենացն, քաջագէտք[42] առաքինութեամբք պսակեալ յարքայութեանն երկնից:

Այակիսի յուսով հաւանել և հնազանդել[43] որոց աշա-

կերտ եղև[44] աստուածային վարդապետութեանն, որ բարին է և հաճոյն և կատարեալն. զի մշտնջենաւոր և անեղծ կենացն հացէ[45], որ էն և է և կայ յանքաւութեանն իւրոյ[46] և բարւոք բարերարութեամբն[47] իւրով խնամէ զարարածս ամենայն. որ աննուազն է և անբաւ և անսահման. որ ի վեր է քան զարարածս ամենայն անքննին մեծութեամբ և փառօք. որ կենաց և փառաց և լուսոյ է տուող ամենաշահ կենարար երանութեամբն։ Ինքն յինքենէ բաւական է առ ամենեսեան. որ արդարացուցանէ և լուսաւորէ և փառաւոր առնէ։ Որ է Հայր[48] միածնի Որդւոյ և բխումն Հոգւոյն սրբոյ։ Եւ նոցա[49] բարերար կամօքն և ամենաշահ սիրովն և ամենագիտ հանճարով[50] ժառանգաւորս առնէ զմարդիկ անմարմնոցն դասուց և[51] արքայութեան երկնից և անսպառ բարեացն։

Իսկ պատիր խաբէութիւն[52] ստութեանն և բանսարկութեան, ուստի կորուստ ոչ էր ի սկզբանն՝ մինչ ոչ էր մոլորութեանն[53] յառաջագայիլ և վրիպեցուցանել ի չարն։ Եւ այժմ ոչ զօրէ ատողացն[54] դչար, որ լսէ[55] աւետաւոր քարոզութեանն և հաւատոյ[56], և վերստին ծնանի ի Ջրոյ և ի Հոգւոյ, և այլ ոչ ևս դառնայ յապականութիւն և յապաշխարելոյ պէտս։ Մահ ոչ էր, մինչ մեղք ոչ էին. և այժմ լուծեալ է լուսաւոր Քրիստոսի յարութեամբն, և անարգի ի սրբոցն Աստուծոյ։ Ամենապատիր խաբէութիւն և խորամանկ կեղծաւորութիւն և ամբարտաւանութիւն ոչ էր[57] նախկին, մինչ ոչ էր բանսարկեալ սատանայի. և այժմ տկար է և ոչ է յերևել[58] ճշմարտութեանս։ Անհաւատութիւն և ցանկութիւն չարեաց ոչ էր ի սկզբանն՝ մինչ ոչ էր հակառակաւէր աստուածամարտն ի վայր կործանեալ. և այժմ ոչ է յերևել[59] հաւատոցն և օրինացն ընդդրութեան և աստուածսիրութեանն ցուցումն։ Անհնազանդութիւն և ստահակութիւն ոչ էր նախ[60], մինչ ոչ էր անհաւանեալ

Աստուծոյ սատանայ և մարդն. և այժմ ոչ է ի հնազանդել Քրիստոսի մերոյս և ուղղել զմերս [61] ի նմին։ Խաբէութիւն և նենգութիւն ոչ էր նախ, մինչ ոչ էր խորամանգեալ չարն. և այժմ ոչ է ի Քրիստոսի ճշմարտեալ։ Նախանձ և քէն ոչ էր, մինչ ոչ էր մախացեալ չարն և ի քէնս մտեալ. և այժմ ոչ է ըստ Քրիստոսի քաղցր և աննախանձ կամացն ի մեզ շնորհացն [62]։ Ատելութիւն և բարկութիւն ոչ էր, մինչ ոչ էր ի չարէն և ի մէնջ [63] լեալ. և այժմ ոչ է ըստ բազում սիրոյ հեզոյն և մարդասիրի փրկչին։ Ամբարտաւանութիւն և անձնասիրութիւն [64] ոչ էր, յորժամ ոչ էր հպարտացեալ չարն և պատրեալ [65] զմեզ. և այժմ ոչ է յերևել խոնարհին և զմեզ սիրողին, այլ ամենայն ուրուք պահէ զհեզս և զխոնարհս սրտիւ և լինի հանգիստ *; [66] Ցասումն և [67] թշնամանք ոչ էր նախ. և այժմ ոչ է յորժամ գուլթք ողորմութեան շարժի ի խնամս։ Անյագութիւն որովայնամոլութիւն և ագահութիւն և այժմ ոչ է պարկեշտից սրբոց [68] և արհամարհողաց զերկրաւորս։ Անժոյժ աղտեղութիւնք ոչ էին, մինչ ոչ էր մաքրութիւնն [69] լուծեալ. իսկ յորժամ ծագեցին սրբութիւնք սրբութեանց աստուածային շնորհացն, լուծաւ գարշութիւն ախտի։

Եւ ամենայն մեղք և անխնայ չարութիւնք երևելիք և աներևոյթք ոչ էին գործակցաւն [70] իւրեանց սատանայիւ [71] ի սկզբան անդ [72]. յետոյ [73] ի ներքս մտին ի հակառակորդէն՝ որ ի նոսա [74] զմեզ ընկեաց. և այժմ ոչ է յորժամ կենարար գառնն նուիրեցաւ պատարագ ի վերայ խաչին վասըն քաւութեան մեղաց և հաշտութեան Հօր ընդ արարածըս. և վերստին ծննդեամբ [75] աւազանին և փրկական խորհրդովն [76] կենագործեաց զհաւատացեալս ի սուրբ Երրորդութիւն։ Եւ զամբարիշտս, զհպարտս [77] և զանբարտա-

---

* Մատթ. ԺԱ, 29.

ւանս կործանեաց, և բարձրացոյց զխոնարհս առհաւատչեայ յուսոյն։ Եւ լուծաւ եկամուտ մեղքն, և այն՝ որ զկշխանութիւն[78] ունէր, այսինքն է սատանայ։ Զի կեցուցէ զմիաբանեալսն ի նմանէ ի նորա կամսն՝ երևելի շնորհօք և մարդասիրութեամբն իւրով։

Յորոց բազումք երևեցան ընտիրք[79] ի սկզբանէ վկայք կենսաբեր գալստեանն, որ նորոգելոցն է ի յԱբելէ արդարոյ.[80] զի զանուն արդար յանարատ վարուցն ստացաւ։ Որպէս Ենովս յուսովն, և Ենովք հաճոյից Աստուծոյ փոխելովն[81], և Նոյ կատարեալ արդարութեամբն, և Աբրահամ հաւատովն, և Իսահակ ուխտեացն Որդւոյն Աստուծոյ և Իսրայէլ տեսող մարտի առաքինութեանն, և Յովսէփ պարկեշտութեամբն, և Մովսէս օրէնսդրութեամբն, և Դաւիթ ուղիղ և հեզ թագաւորութեամբն։ Նա և ամենայն սուրբ մարգարէքն և Մակաբայեցիքն և երեք մանկունքն ի հնոցին մինչև ցՅովհաննէս՝ որ ճրագն էր արեգականն արդարութեան, որ լուսաւորէ զամենայն մարդ եկեալ յաշխարհ լուսով աստուածգիտութեամբ և[82] իմաստութեամբ և արդարութեամբ՝ Քրիստոս փրկիչն, որ եկն յաշխարհ փրկել զմեղաւորս, և լուսաւորեաց զհաւատացելոց զսիրտ բարերար կամօք արարչին մերոյ, պատուաբեր լինել ըստ արդարութեան օրինացն և իրաւանցն և հաճոյից տէրութեանն ամենակալի։ Եւ արքայութեանն յուսովն[83] անսասան փառաց ընթանալ ի կէտ վերին կոչմանն. և լիցուք կատարեալք, որպէս և Հայրն մեր երկնաւոր կատարեալ է։*

Որ կամօք[84] բարերարութեանն իւրոյ լնու զամենայն արարածս, և յօրդորէ զամենայն միտս ի գործակցութիւն բարերար կամացն[85]։ Որ յերկնից յերկիր խօսէր զբարերարութիւն[86] զդարձ ապաշխարութեան մեղաւորաց. խօս-

---

* Մատթ. Ե. 48.

տովանելով զյանցանսն, և զղջանալ[87] վասն որոյ[88] գործեցին, և պտուղս արժանի ապաշխարութեան առնել. որ զզօրս Հրեշտակացն ուրախացուցանէ ըստ բանին տեառն *: Զի ասէ[89] եթէ վասն միոյ մեղաւորի որ դառնայ յապաշխարութիւն, ուրախութիւն է Հրեշտակաց ի յերկինս, զի՞նչ[90] պարտ է վասն արդարոցն ասել, առաքելոց և մարգարէից և մարտիրոսաց և վարդապետաց և ճգնաւոր[91] կուսանաց և պարկեշտ ամուսնացելոց. որ ոչ ունին զաղտեղի ցասումն[92] և զվնասակարս ոգւոց, և զամբարտաւանութիւն և զբարկութիւն, զատելութիւն և զնախանձ և զորովայնամոլութիւն. և մշակել ի ջանս բարեպաշտութեան և խլել ի միջոյ զչար սովորութիւնն յորդորմամբ սուրբ սիրոյն[93] որ սիրեացն զմեզ:

Զի սատանայութիւն ոչ էր, մինչ ոչ էր Հակառակեալ չարըն բարւոյն: Զի յետ վեց աւուր՝ մինչ ոչ էր ստացեալ զամբարշտութեան զմիտս, վկայի ի տեառնէ՝ թէ զամենայն զոր արար Աստուած, բարի են յոյժ. ** զի թէ ի բնէ չար էր, ոչ զբարւոյ վկայէր Աստուածն ամենակալ: Եւ յաւետարանին[94] առ աշակերտսն ասէ. «Ո՞չ ես ընտրեցի զձեզ երկոտասանըս. և մինդ ի ձէնջ սատանայ է»: *** Զի ոչ զրպարտեաց զնա արդար դատաւորն նախ, մի՛նչև եղև երևոյթ չարին՝ ի չար կամաց շարժեալ ի չար անդր. և ապա զսատանայ անուն առնու և քակի ի սուրբ պաշտամանէն, և ի կենդանարար սիրոյն որոշի, և անյոյս լեալ՝ ի մահ զինքն ձգէ, որպէս դևքն ի ծովակն խողիւքն, որք ասէին **** «Զի՞ կայ մեր և քո, Որդի Աստուծոյ, յառաջ քան զժամանակն եկիր կորուսանել զմեզ, սուրբդ Աստուծոյ»:[95] գիտեն և նո-

* Ղուկ. ժե, 7:
** Ծնն. Ա. 31.
*** Յովհ. Զ. 71.
**** Մատթ. Ը. 29.

քա զժամանակս դատաստանին իւրեանց և մեր, և ըստ արժանեաց զհատուցումնն անօրինաց և անհնազանդից, անարգաց և պղծոց։ Զի սատանայ ոչ էր, մինչ ոչ էր ամբարշտեալ. և այժմ անզօր է ըստ ասելոյն Տեառն՝ թէ * «Իշխան աշխարհիս այսորիկ դատապարտեալ է», և ընկեցի արտաքս»։ [96] Զի խաւար ոչ էր և ոչ է. զի ստուեր է տարերց և ոչ բնութիւն ինչ։ Զի ածուխ սեաւ է քան զստուեր և որ այլ ինչ սեւութիւնք իցեն. և ի ծագել արեգական և լուսաւորաց նոյնպէս կան սեւութիւնքն։ Բայց ստուեր որ է խաւար, ի գալ լուսոյն լուծանի և ոչ ևս ուր ընդդէմ։ Եւ մահ ոչ էր, մինչ ոչ էր պարտական լեալ մեղօք. և այժմ ոչ է ի յայտնել կենաց և յարութեանն որ ի մեռելոց. և երկուքին հրաժեշտ տալին՝ մահ և խաւար ի ծագել լուսոյ և ի գալ կենացն։

Եւ այս ամենայն յօրինուածք իրաց և օրինաց ի տեառնէ են։ Եւ յաղագս այսորիկ որ քաջքն են, և պիտանիքն՝ երևեսցին [97] պսակեալ ըստ լաւութեան առաքինութեանն, և թագ ի գլուխ մնցեն ի հանգիստն լուսոյ և կենացն յաւիտենից։ Եւ որ վատքն իցեն և ծոյլք և արհամարհօղք Աստուծոյ պատուիրանին, ընկալցին զպատուհասն պատիժս յանշէջ հուր գեհենին՝ որ կազմեցաւ նոցա։ Զի առանց եպերանաց է արդար դատաւորին իրաւունք, որ առաջի ճշմարտութեանն փակեալ կան [98] երկուքին [99] կողմանքն լաւացն և վատթարացն, որ փառացն է յոյս՛ և որ թշուառութեանն և տանջանացն ակնկալութիւն։ [100] Եւ երկուքանչիւրոցն խրատէ. բարեաւն յորդորէ և ահիւն զկծեցուցանէ, զի մի ոք զրկեսցի յաւիտենիցն խոստացելոց։ Զի զերկոսին կողմանս սիրովն խնամէ. զքաջսն՝ զի մի՛ յերկուացին ի յուսոյն կենաց, և զվատսն՝ զի ահիւ տեառն

* Յովհ. ԺԲ, 31։

ժամանեսցեն ապաշխարութեամբ յանկարօտ լիութիւն շնորհացն[101] ընդ այնոսիկ՝ որ պարծանօք ի փառսն վայելեն։ Զի երևեսցին շնորհքն տեառն ի վերայ սիրողացն,[102] որք ծառայեցին տեառն աչիւ և սրտիւ. զի ընկալեալք ի տեառնէ ընդ մեծարեալսն և ընդ փառաւորեալսն, որդէգրութեանն արժանաւորեալք, յանսպառ բարիսն Քրիստոսի վայելեսցեն ընդ ամենայն սուրբս։ Զի ամենակալ ամենասուրբ Երրորդութեանն բարերարութիւնն[103] խնամէ զարարածս ամենագիտ սիրովն իւրով և ամենաշահ երախտեօքն իւրովք և անփոփոխ ճշմարտութեամբն՝ որ յերևելիս և որ[104] յաներևոյթս ուղղէ, և ոչ թողու քայքայել որ[105] ի մեզ բարին մատակարարի ի մշտնջենաւորէն[106]։ Զի անեղծ է և անապական. ոչ ինքն փոփոխի, այլ զայլսն փոփոխէ ի լաւ. արըն. և զկենդանութիւն ստեղծուածոց զարմանալի յօրինուածովք իւրովք՝ և զչգոյսն[107] ի գոյ երևելի ածէ, և զանարգսն առնէ պատուականս իւրովք յարգանօք և հանդիսիւք լաւութեամբն ի գործ անդր. և զանյարմարսն յարմարէ[108] պէսպէս յօրինուածովք ի բարիսն. և զվրիպեալսն յերկմտութիւն[109] փոխէ ի հաւատարմութիւն իւր. և զստութիւն[110] և զերդմնահարութիւն զմեքենայս չարին ածէ ի ստուգութիւն։

Ատեան կազմէ Աստուած խրատու ի սուրբ գրոց[111] ի լուսաւորութիւն ամենայն անձին. հնարագիտութեամբ կենդանարար և կատարեալ իմաստիւք բարւոյ մասինն հաղորդեալ[112]։ Եւ զեկամուտ քայլն չար կամացն և չար խորհրդոցն և չար գործոյն խլել խոստովանութեամբ։ Եւ զխոպանացեալ միտսն ի ծուլութիւն և յարհամարհանս՝ ուղղել և ի գործ ածել բարւոյ և զգուշանալ և զգաստանալ։ Եւ զկամակորութիւն մտացն և մարմնոյն ածել ի հաւանութիւն և ի հնազանդութիւն հոգևոր կարգաց և կրօնից. խլել և ի միջոյ ի բաց բառնալ զչար սովորութիւն ա-

հին և սիրով։ Եւ զամենայն շարժմունսն յաստուածային-ոյն բերելով, և ի շահ եղբարց մեծաւ [113] ճգամբք և վաստակովք մշակել յառաքինութիւնս․ և ցուցանել զհանդէս մտերմութեան ի կանուխս և անագանս, որպէս զի երևեսցի պտուղ բարի։ Որպէս լոյս ոչ փոխի ի խաւար՝ այլ զխաւարն լուսաւորէ, և ոչ կեանք ի մահ՝ այլ զմահացեալսն կենագործէ ի տէր, այսպէս զանարգսն թողուլ և զլաւսն մեծարել [114] շնորհօք ամենակալին, երևեալք որպէս լուսաւորք յաշխարհի՝ զբանն կենաց ունելով յանձինս և յառաջնորդութիւն բազմաց՝ և ի կեանս անբիծս [115]։ Ի հանդէս բարեպաշտութեան անցուցանել [116] զայս [117] ևս ժամանակս ըստ արդարութեան կարգացն, անարատ սուրբ և ճշմարիտ վարս ստացեալ [118] գործակցութեամբ բարերար կամօք արարչին։ Մաքրիմ և քաջախրտ հաւատով զանարժան իրս հալածել և արժանաւոր օգուտք զշահսն ժողովել, ուստի անուն քաջութեան և պարծանաց յերկրի թողուլ․ և յերկինս ամբարէ զյաւիտենականն՝ ուր վարք և անապառ բարիքն պատրաստեալ կան յուսացելոցն։

Որք զաստիս արհամարհեցին, կենդանարար սիրովն և անճառ երանութեամբքն յուսով որ ի տէր՝ և վայելուչ առաքինութեամբն թագաւորեալք ի փառս բարձրելոյն, և առ բեկումն [119] թշնամւոյն և ի բարձրանալ ընդրելոցն։ Որք հաւատով պարտեցին աստէն զհանապազորդ թշնամին, և անդ զուարճացեալ բերկրին անանց ուրախութեամբքն և անճառ բարութեամբք [120] որ են ի Հայր և յՈրդին և ի Հոգին սուրբ [121]։ Ուստի մերժեալ են տրտմականք [122] ամենայն, և բղխեալ են [123] պէսպէս բարիքն՝ որ կան և մնան ի վայելումն կենացն անվախճանից ամենայն սրբոց Աստուծոյ ըստ երանութեան սիրոյն սրբոյ, [124] ի կոչումն Հրաւիրանաց ուրախութեան հարսանեացն։ Որք ըստ կամաց երկնաւոր Հօրն պատրաստեցին զանձինս, որք և պսակին

լուսաւոր պսակօք ի գովեստ փառացն Աստուծոյ յանվախճան խնդութիւնն։ Աստ առեալ զառհաւատչեայ յուսոյն կենաց, և անդ կարգեալք [125] ընդ երախտաւորսն ի ժառանգութիւն արքայութեանն երկնից։ Աստ ազատեալք յամօթոյ անարգանաց, և անդ ի վշտաց սպառնալեաց արդար դատաստանին ի պատուհասիցն տուժից և տուգանաց դառին տանջանացն։ Եւ գգուեալ [126] արդար անուամբ սուրբ և ճշմարիտ պարգևօքն մեծացեալ, և յարգանօք և պատուով փառաւորեալ պարծանօքն, և այնպէս զերծեա՛լք ի սպառնալեաց գեհենին և տանջանացն. հաւատացեալ [127] ի բանն՝ որ ի վերայ ամբարշտաց և մեղաւորաց ասացաւ ի տեառնէ. «Երթայք, [128] ասէ, անիծեալք յանշէջ հուրն յաւիտենից, ուր լալ աչաց է և կրճել ատամանց. որ պատրաստեալ է սատանայի և արբանեկացն նորա»։ * Եւ առ հաւատարիմսն ասէ. ** «Եկայք օրհնեալք Հօր իմոյ յարքայութիւնս, որով ի սակաւուդ հաւատարիմ եղէք, ի վերայ բազմաց կացուցից զձեզ. մտէք յուրախութիւն տեառն» ի մշտնջենաւոր կեանսն ընդ սուրբ հրեշտակս առ Թագաւորն փառաց, որ ասացն. «Ուր եսն եմ՝ անդ և պաշտօնեայն իմ եղիցի»։ *** Որ կենդանի ուրախութեամբն ուրախ առնէ զսիրելիս իւր ըստ իւրաքանչիւր վաստակոց։

Զի իւրեանց ճգամբք մեծացան ի տեառնէ [129] յանքննին յամենագիւտ սիրոյն ժառանգութիւն, յանմահ և յանհամեմատ յաննման և յանկշիռ լուսոյն ժառանգութիւն. զարթուցեալք յերկրաւոր ճրաց և ի զբօսանաց մարմնաւորաց, զմտաւ ածել զհնարս զամենագիւտս զգուշութեամբ և ըզգաստութեամբ, որ ի յերկրի. զտիւ և զգիշեր անախ խորհրդովք [130] ընդ տեառն զարմանալի լուսաւոր գեղն պշնուլ

* Մատթ. ԻԵ. 41։
** Անդ. ԻԽ. 23։
*** Յովհ. ԺԲ. 26։

ջերմեռանդն սիրով և յիշատակօք խոստացեալ որդէգրութեանն՝ անձկաւ ի նորա բարիսն փափաքել և գրաւել ևս ընդ իւր զկամս շարժմանց մարմնոյն։ Հիւթ առեալ ի տեառն սուրբ օգնականութեննէն՝ զի անարատ կայցեն. արտաքոյ լինել քան զամենայն ծուխս մարմնաւորս, և ներքոյ վարագուրին մնալ սուրբ և անարատ ի հոգևոր օրինացն պահպանութիւն, ամրացեալ և զգուշացեալ ի կամս տեառըն։ Եւ սուրբ զգաստութեամբ պարթուցեալ ի վերին կոչմանն աւետիս [131] առնուլ զգրաւական սիրոյն զմխիթարութիւն անարգել սուրբ շարժմամբք։ Եւ բորբոքմամբ սիրոյն յորդեալք [132] ի կեանս անուշակս կենդանարար բանին, հազորդութեամբ [133] սուրբ խորհրդոյն, յիշատակօք անճառիցըն, նայել ընդ գեղ խոստացելոց աւետեացն։ Որպէս զմեղուացն է իմանալ. որ ի ծաղկանցն զկարևորսն ի մեղուացն [134] բերեն, և նոքօք գործեն զքաղցրութիւն զանուշացուցիչ [135] ամենայն դաժանի և զառն ճաշակաց։ Այսպէս և ի կենարար խրատսն ժրացեալք, և յայնցանէ ընկալեալք զօգտակարսն իմաստութեամբ, առաջնորդեալ յամենայն բարեգործութիւնս առ ի պատրաստութիւն հաւատոց և ճշմարիտ սուրբ վարուց. քաղցր յուսովն ընթանալ զանմոլար ճանապարհն՝ որ տանի ի կեանսն յաւիտենից, և հասանել յօթևանս կենացն ի դուռն [136] փրկութեան։ Մեծաւ ցանկութեամբ [137] և սաստիկ ծարաւով ճաշակեալ զանուշակս քաղցրութեանն [138] զբարերարին զխնամսն, և ի նոսին վայելել միշտ զանճառսն մտաւոր իմաստութեամբն ի Քրիստոս, սուրբ խանդաղատանօք ի նորոգութիւն մերձեցեալ [139]։ Ընկալեալ զառհաւատչեայ կեանսն, և ի նոսին կալ մնալ անկարօտ յերանութիւնսն անսպառ միշտ յանճառսն և յանբաւսն լեալ, անձանձրոյթ զուարթութեամբ յափշութենէ աշխարհիս զբօսանաց, որ շարժէ զմիտսն ի մոլարսն, և ըզմարմինսն ի հարուածս ցանկութեան. որ ամօթոյ և անարգանաց արժանի է ի պատիժս։

Այլ պարտ է ի յերկրի ուշ ունել և զվերինսն խորհել պատրաստութեամբ հաճոյից [140] Աստուծոյ։ Ի վեր ունել զմիտսն առ այն՝ որ ի վեր է քան զվերինս և զներքինս որ պատճառք է մեր կենացս և փրկութեան․ որ գործակից արար զմեզ իւր բարերար կամացն առ ի գիւտ կորուսելոցն և առ ի պահպանութիւն լաւացն։ Եւ առաջնորդել ի բարիսն, և մերձաւորս առնել զհեռաւորս, և ընտանեցուցանել զօտարս․ խնամօք մարդասիրութեամբ հայցել ամենեցուն ի փրկութիւն և ի կեանս հեռաւորաց և մերձաւորաց։ Պատրաստ ունել զկամսն առ ի սպասաւորութիւն եղբարց առ ամենայն պէտս [141] բարւոյ։ Մերկանալ [142] զցանկութիւնս չարին և զամենայն վնասակար խորհրդածութիւնս։ Սուրբ սրտիւ և անբիծ վարուք և ուղիղ հաւատով ըստ ամենայնի յառաջանալ ի տէր, և սիրել զնա ի բոլոր սրտէ, և անքակ կալ ի ծառայութիւն նորա սուրբ [143]․ և ի նորա քաղցրութենէն լուսաւորել զամենայն զգայարանս, որպէս երկիր յարեգական ճառագայթից [144]։ Եւ յիշատակօք նորա սիրովն փակեալ [145] և ամրացեալ ի խնամակալ սիրոյն և նորա ուսմանն կցորդ լինել սրբոց ի լաւանդր յորդորելով։ Օգնական ունելով միշտ զշնորհս բարերարին․ և յամենայնի գոհանալով օրհնել միշտ զամենակալն և զտուողն բարեաց Աստուած, և փառս տալ՝ որ արժանի արար գործակից լինել իւրոյ բարերար կամացն։

Եւ մեք ցուցցուք ի նեղութեան և յանդորրու զհանդէս մտերմութեան մերոյ առ տէրն․ և նա անսուտ զիւր շնորհսն պարգևէ․ զի զամենեցուն կամի զկեալ և ժառանգաւոր լինել անանց փառացն [146] և մեծութեանն որ ի Քրիստոս Յիսուս ի տէր մեր։ Եւ մեք որ նովաւ եղեաք փրկեալք [147] իւրաքանչիւր վաստակօք և առաքինութեամբ և սրբեալք ի չար ցանկութեանց, և առիթ լեալ [148] բազմաց փրկութեան, և ճշմարտեալ վարուք փոխել յերկրէ

յերկնաւոր հանգիստն յանուշակ յարքայութիւնն՝ միշտ ընդ Քրիստոսի լեալ և ի նորա երանելի[149] բարութիւնսն վայելել: Եւ որպէս անդամօք կանգնի հասակ՝ այսպէս բարի գործովք կանգնին հաւատք՝ և հաւատով ստուգի յոյս՝ և յուսովն հանդէսք: Եւ այնպէս յորդորել յաստուածային սէրն՝ ընդունել զշնորհս Հոգւոյն սրբոյ և ի վերագոյնս լեալ երկնայնոցն՝ անմահից կենացն լինել ժառանգորդ. ի բնակարանս սրբոցն ի կենարար սէրն ծաղկեալ գեղեցկագոյն փառօք[150] յանճառելիսն ի մշտնջենաւորսն՝ փառաւորել միշտ զամենասուրբ զերրորդութիւնն յաւիտեանս յաւիտենից.[151] ամէն:

Է

ԵՐԱՆԵԼՒՈՅՆ ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ՀԱՅՈՑ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ [1]

ՎԱՍՆ ՅՕՐԻՆՈՒԱԾՈՑ ԱՐԱՐԱԾՈՑ

ՅՈՐԺԱՄ՝ բազմացաւ իմաստութիւն յաճումն չափոց հասակի արարածոց, և եհաս ողջութիւնն յայր կատարեալ, զի բաւականասցի լսել բանից [2] ճշմարտութեան, որ ղիտոյ եղև քարոզութեան [3] մարգարէից զանմոլար գիտութիւնն սփռել [4] ի լսելիս մարդկան. զի հաւատով ընկալցին [5] զանմոլար իմաստութեանն [6] զխրատսն [7], և գիտութեան արարչին և հաճոյից [8] տեղեակ լիցին [9] ի ձեռն ճշմարիտ հոգևոր օրինացն և պաշտանութեամբ պատուիրանացն [10] անվնաս կալ առ դժնդակ վարս [11], և հանդիսանալ [12] ի բարի վարս, և պատճառ օգտից լինել հեռաւորաց և մերձաւորաց ի փրկութիւն:

Եւ այս ամենայն յանհաս իմաստութենէ արարչին մատակարարի [13] յարարածս ամենայն. որ [14] լուսաւոր ճառագայթիւքն զիմանալիսն լուսաւորէ. զի նորոգեսցէ զզգայարանս հոգևոր [15] խրատուն. զի անկորուստ պահեսցի [16] աստուածային կամացն հաճոյութիւն: Եւ արդարակշիռ իրաւամբք յառաջանալ ի հանդէս բարեաց. վկայ լինել արդարութեան և ճշմարտութեան աւանդիցն: [17] Եւ այս ամենայն ի շինութիւն հոգևոր մասինն ժառանգաւորաց արքայութեանն երկնից, և կարգաց աշխարհիս երևելեաց և աներևութից, և տեղեակ լեալ [18] ամենայն լաւութեան կարգաց, և բնութեան արարածոց հասու լինել:

Զի կարգեաց Աստուած զաշխարհս [19] որպէս զպրոց. զի

ուցին արարածք զխնամս արարչին յառնելն և ի կազմելն, [20] և միշտ նախախնամութեամբ նորա դարմանեալք որ եղևին և որ ոչն եղևին: Զի յոչընչէ անտի սկիզբն արար միտըն՝ և ած մինչ ի հազարս և ի բիւրս զբիւրաքանչիւրսն. զի լաւութեան հանդիսիւք [21] առաքինացին: [22] Եւ ի գլուխ ելեալ ամենայն վարքն առաքինութեան, ի վախճանի աշխարհիս պարգևէ [23] զանմահութեան զպարգևսն յանփոփոխելի և յանհամեմատ յաստուածեղէն մըշտնջենաւորութիւն [24] արքայութեանն երկնից ի [25] Քրիստոս: Զի նախ ի սկիզբն մտացն [26] խնդրէ զուղղութիւնն օրինադիր բանին. և ապա ի մշակութիւն [27] կացուցանէ առնել զօգտակարսն, և ի բաց կալ ի վնասուց:

Նա և զքննութիւն արարածոց յօրինեաց որպէս զգիր դպրութեան և եդ անուանս, զի անուանքն զընդրութիւնն [28] տայցեն գրոյն ի միմեանց զորոշումն. և գիրն զբարս կարդասցէ անուանն [29]: Զի երկուս երկուս յօրինեաց, զի մին միւսոյն [30] քարոզիչ իցէ. և բնութեանցն երկուց՝ երկու անուանք պիտոյանան, որ որոշեն զնոսա ի միմեանց. և անուանցն՝ բնութիւնքն պիտոյ էին [31] որ կային ունէին զանուանսն. զի «էր», ասէ [32], աներևոյթ և անպատրաստ երկիր ամենայնիւ»* Եւ սկիզբն արարեալ բանիւ յօրինել զարարածս, կոչեաց, ասէ, զլոյսն տիւ, որ յայտնիչ է արարածոց կազմածոց. զի զոր բանն յօրինեսցէ, լոյսն զյօրինուածսն ցուցանիցէ. զի աներևոյթն և անկազմն ծածկեալ ունէր որպէս խաւար զերկիր: Որպէս կոչեաց զլոյսն տիւ, սկիզբն արար կարգելոյ պատմութեանն, [33] զի ի թիւ անկցին: Եւ եթէ ոչ էր խաւար, լոյս իւ անուանէր տիւ, և կամ խաւարն գիշեր: Դարձեալ քաղցր և դառն ասի՝ որ համահամք քմացն ճանաչի. և յանուանէ [34] որոշի քաղց-

* Ծննդ. Ա, 2.

րըն և գառնն. և այս ի տեսչութենէն արարողին է հաստատեալ: Եւ լոյսն զմարդիկ յորդորէ յամենայն պէտս օգտի, զի ամենայն գիտք աշխարհիս՝ գործոց[55] կամ արուեստից՝ իւր աշխատութեանն գինք[56] իցեն. եթէ դարբնութիւն է, եթէ մշակութիւն, եթէ ճանապարհորդութիւն և եթէ այլ ինչ պէսպէս արուեստք շահից, զոր ետ Աստուած ի պատիւ անձնիշխան կամացն[57] որպէս որդւոց ի խնամակալութիւն. և զգիշերն ետ ի հանգիստ[58] քնոյ՝ դարման աշխատութեան, զի տկարութիւնն զօրասցի, և նորոգեալ հանգստեամբն անդրէն ի տիւն դարձցի ի գործսըն՝ որ օգուտ և շահ ստանայ: Որպէս քաղցրն և անուշն իցեն և դառն և կծուն ի պէտս բժշկաց[59] անօրինին, և որ այլն ևս: Որպէս զհամեմսն է գիտել առ զանազան խորտիկսն անուշել զի սոքա յարգեսցին նոքօք, և նոքա սոքօք:

Այլ և անուանս ունին. զի որպէս հանգիստն և աշխատութիւնն կարօտ են միմեանց, զի աշխատութեամբ շահին ի հանգստեանն վայելեսցէ, այսպէս է խմանալ պամենայն խառնուածս արարածոց ի միասին[40]: Որպէս ցուրտ[41] և տօթ, որ մինն զամացուցանէ և միւսն ջեռուցանէ. երկոքանչիւրոյն[42] պիտոյացեալ գեղեցիկ խառնուածովք լոյս[43] բարեաց արարածին՝ և ոչ[44] ի պատիժս ինչ շարժեալ ի սահմանէն. զի «Սահման եդիր, ասէ,* որ ոչ անցանեն»:[45] Զի մարդ հնարագէտ է ի խնամակալութենէ արարչին առ ի պէտս[46] իւրոյ փրկութեանն և վայելելոյ ի բարութիւնսն անձնիշխան կամօք: Զի որպէս որդի ի հօր խնամս վայելեսցեն, և ոչ որպէս ծառայ ընդ հարկօք[47], և ոչ որպէս և այլ արարածք իցեն:

Կարծեալ օդք՝ են որ յամաքեցուցանեն, և են որ խոնաւեցուցանեն զերկիր և զբոյսս. են որ յօգուտ մատակարա-

* Առակ. Ը. 29.

րին, [48] և են որ ի վնաս, ըստ նախախնամութեան Աստուծոյ ի միմեանս խառնեալ. այլ և անուանս ունին։ Սոյնպէս և առողջութիւն և ցաւք. զի առողջութիւն ի գործ մշակութեան առաքինութեանն յորդորէ և յարուեստ շահիցն. և ցաւք՝ բժշկաց կարօտին [49] Աստուծոյ և մարդկան։ Այլ և համբերութեամբ զթողութիւն սխալանացն գտցէ, [50] և վարձքս ևս, որպէս և Յոբ. և անուանս ունին։ Սոյնպէս տրտմութիւն և խնդութիւն յարժամ ըստ իրաց աշխարհիս իցէ, մահ և ապականութիւն գործէ ի մեզ. իսկ ըստ Աստուծոյ լինել, մխիթարութիւն ընձեռէ, և յուսով զխնդութիւն ըստ խոստացեալ բարեացն. և անուանս ևս ունին։ Սոյնպէս լիութիւն և կարօտութիւն միմեամբք յարգին. զի լիութիւն կարօտութեամբն վայելէ, և կարօտութիւնն զհանդէս ժուժկալութեանն ցուցանէ [51], և ժրութիւն մշակութեամբն ամենարուեստ. [52] և միաբանեալք օգուտս ունին և անուանս ըստ երևմանցն։ Սոյնպէս երկիւղ և անհոգութիւն. զի երկիւղ անհոգութեան ցանկայ, և անհոգութիւն երկեղի, որ զգուշացուցանէ ի կամս տեառն, և ոչ թողու յապիրատութիւն։ Եւ ի միմեանս խառնեալ ըստ պատուիրանին՝ զօգտակարսն ի մեզ ամբարեն ըստ անուան կոչմանն։ Սոյնպէս փառաւորութիւն և անարգութիւն միմեանց տեղի տալով՝ ի սահմանին կան մնան. ապա թէ ելանեն ըստ չափուն, վնաս առնեն ի հոգեւորս և ի մարմնաւորս. որպէս և ամենեցուն քաջայայտ է այս և յանուանցն ծանիցուք զկիրսն։ Սոյնպէս և բարիք [53] և պատիժք ոչ են մի, և երկոքին մեզ պիտոյանան. մին յորդորէ ի բարի գործս, և միւսն զհամարձակեալս [54] ի մեղս արգելու. և խոշտանգանօք լուծցեն զվարսն [55] և դարձցին ի լաւն։ Եւ բարեգործք մի մոռասցին զբարերարն և զերանելի ժառանգութիւնն և զաւետիսն [56] խոստացեալ, որ առաւելու ի բարիսն. և այնպէս զանուանսն առնուն։

Եւ ազատութիւնքն ազատ են ի մէջ մեղաց և փառաւորեալ յամենայնի. և նկուն մեղքն ի մէջ արդարոց. զի ցանկացեալ արդարութեան, և յիշեսցեն զսպառնալիս մեղաւորացն, և փութասցեն յապաշխարութիւն խոստովանութեամբ, և ապրեսցին ի բարկութենէն որ գալոցն է ի վերայ անօրինաց և անհնազանդից, անսրբոց և պղծոց. և լինել յարդարութեան՝ կեցցեն։ Իսկ արդարքն որ ունին զառհաւատչեայ ազատութիւնն որդէգրութեան ի ճշմարտութենէ անտի՝ յաւելցեն յարդարութիւնն, զի լիցին կատարեալ որպէս և Հայրն երկնաւոր. և միմեամբք զանուն առին։ Եւ անանկութիւն կարօտ է մեծութեան, որ զեղու ի նոսա զլիութիւն. և մեծութիւն՝ կամաւոր անանկութեան[57], որ ամբծութեամբ և անարատութեամբ հասցէ անանց մեծութեան։ Այլ և արդարակորով մեծութեամբն ոչ զրկի ի մշտնջենաւոր մեծութենէն[58]. որ միմեամբք զանուանոն առին մեծութեան և անանկութեան[59]։

Եւ տկարութիւն[60] և զօրութիւն ձեռնտու լինել[61] միմեանց՝ գովելոյ արժանի են։ Զի տկարութիւն զխոնարհութիւն և զքաղցրաբարութիւն[62] ուսուցանէ, և յուսով կայ առ իրաւունս արդար դատաւորին Քրիստոսի։ Իսկ զօրաւորքն ճշմարտեալք՝ բերդ ամուր լինել տկարացն, և օգնական և առիչ բարեաց, որք ընդունելոց են զանեղծութիւն և զանանց փառսն, որք միմեամբք զանուանոն առնուն և զհատուցումն յարարչէն։

Եւ յիմարութիւն և իմաստութիւն պիտոյ են յերկրաւոր վարս։ Յիմարն զհաւանութիւն և զհնազանդութիւն առ իմաստունն[63] ունի, գիտել առ ի նմանէ զլաւն. զի իմաստութիւն զառաջնորդական միտս ստացեալ ունի, որ խրատէ և ուղղէ յարդարութիւն,[64] որ հաւանութեամբ մտցէ յարքայութիւնն. զի յիմարն Աստուծոյ իմաստնագոյն է քան զիմաստունս աշխարհիս։ Իսկ[65] Աստուծոյ իմաստութիւննախ

զի սուրբ է, և ապա խաղաղարար. լի բարեօք և արդար պտղովք. ոչ բարւոք միամտութեամբ, որպէս զաղաւնի, [66] և ոչ ըստ օձին խորամանկեալ [67] և պատժեալ. այլ ըստ անուանցն ծանուցեալք յանձեղութիւն իմաստիւք:

Յաջողութիւն և տխմարութիւն առ միմեանս օգուտս գործեն. միոյն շահս աջողութեան, և միւսոյն կատարումն պիտոյից յոր ինչ ցանկութիւնն է: Եւ երկոցունցն հարկաւոր է հաւատարմութիւն ըստ գործոց արուեստին և վարձուցն՝ որ ի կամս նախախնամողին լիցի, և որ զանուանսն տացէ:

Եւ կեանքն կենդանի են յարդարութեան [68] կեցեալ. և մեռեալքն մեղօք և տարակուսանօք ի մահ, որոց տանջանքն մթերեալ կան: Եւ կենդանիքն որ ի սէրն Աստուծոյ և ի սըրբութեան և ի հաւատս ճշմարտութեան և ի յոյսն հաստատեալ կան յառհաւատչեայ կեանսն՝ զնոցայն ոչ մահ, այլ կեանս ի գրոց իմանալի է, և քուն, [69] զոր Քրիստոս յարուցանէ բանիւ ի ձեռն հրեշտակապետացն փողոց: Որոց զբարիսն գործեալ են՝ փառք և պատիւ և անմահ կեանք, և որոց զչար արարեալ իցէ՝ տանջանք և անմահ մահն որ յաւիտենից: Եւ յայսր ամենայնի [70] տեղեակ լեալ. փախիցուք ի չարէ զի անձնիշխան կամօք խնդրեսցուք զօգտակարսն և որոշեսցուք ի վնասակարացն, ի հարկի կալ առաքինութեանցըն՝ յուսով որ ի տէր: Զի առցեն զանուն եղբայրութեանն որ ի Քրիստոս, և վայելեսցեն ի նորա բարիսն, և զերկոսին կողմանս յօգուտս կազմեալ: Զի արդարակորովքն երանութեամբքն պսակին ըստ առաքինութեանն. որ պարծանօք ըստ [71] համբերութեան գովին ի տեառնէ, և անվրէպ ունին յազատութեան զհամարձակութիւնն [72] յիրաւանց [73] արդարութեան. և վայելեն ի բարութիւնսն ըստ արժանաւորութեանն, և երանութեամբք պսակին:

Արար Աստուած զերևելի արարածս զգայականս զարմա-

նիչ մարդկան կենաց։ Որպէս երկինք ամպովք և ցօղովք և լուսաւորօք խնամէ և հասուցանէ զպտուղս բուսոց և տնկոց։ Որ և հողմոց պիտոյանան ըստ ժամանակի հովուց և ջերմութեանց, որ սնուցանէ և անվնաս պահէ. և ջրով ոռոգանէ զերկիրս և արբուցանէ զմարդիկ և զանասունս, զգազանս և զթռչունս և զամենայն զեռունս և զողունս և որ ունին շունչ կենդանի։

Եւ եթէ դառնան մարդիկ ի ստահակութիւն կամակար մտօք, նովին զարմանօքն որով խնամէր՝ տանջէ և խրատէ անբերութեամբ և բարկութեամբ զանդարձսն։ Զի նոյն արարածք որ զարմանիչք առնին ըստ իրաւանց վայելել ի բարութիւնս, յորժամ յղփանայ և ելանէ արտաքս քան զսահմանն օրինադրին՝ յայնժամ զնոյն դայեակ զպարացուցանէ և նորօք խրատէ. զի սովով և նուազութեամբ ամենայնիւ յաղթահարութիւն առնէ։ Այլ և ցրտով և ջերմով զտունկս և զբոյսս ապականէ, և զանձրևս ի կարկուտ և ի ձիւն դարձուցանէ, և զցօղ յեղեմն մնասակար, և զառողջութիւն ի ցաւս զանազանս, և զխնդութիւն ի տրտմութիւն, և փառքն յանփառութիւն։ Եւ ամենայն յաջողուած բարեաց՝ ի թշուառութիւն, և զօգտակարսն ի վայելս բարեաց՝ ի դժնդակս և ի վշտագին նեղութիւնս։ Եւ զխաղաղութիւնն և զշինութիւնն որ պարապեալ[74] ունին խնդամտութեամբ, [75] ի խռովութիւն և ի տարակուսանս դարձուցանէ և յանհնարին չարիս. խռովութիւնս ընտանեաց և օտարաց, ծառայից և տերանց և ի պէսպէս չար համբաւս. զի այսոքիւք դարձցին ի զղջումն։

Ապա եթէ ի նոյն յամառեալ կայցեն ի չարիսն, և ոչ դառնան խոստովանութեամբ յապաշխարութիւն, խրատէ մեծամեծ պատժօք արդար դատաւորն։ Որք պղծեն զսրբութիւնըս անսուրբ վարուք, և արհամարհեն զօրէնս և զհրամանս անանկաց և զողորմութիւնս կարօտելոց, և զճշմարտութիւնն

անիրաւութեամբ ունին, և անտես առնեն զարտասուս նեղելոց, և ձայնի զրկելոց ոչ լսեն, և որ այլ ևս իցեն[76] չարիք: Եւ յաղագս այսորիկ մատնէ արդար դատաւորն ի սով և ի սուր և ի գերութիւն և ի կորուստ: Եւ որպէս ասաց տէր ի ձեռն օրինաց և մարգարէից դառնալ յապաշխարութիւն[77] և ոչ լուան, և աղաղակեցին առ տէր և ոչ լուաւ նոցա ի նեղութեան իւրեանց, որպէս ասացաւ[78] ի գրոց սրբոց: Զի կամք անձնիշխանականք որ ոչ գնացին յիրաւունս արդարութեան և ի դարմանս աղքատաց և տնանկաց՝ պատժին:

Բայց բարերարն Աստուած ըստ բազում սիրոյն իւրոյ որ սիրեաց զմարդիկ, խրատելով խրատէ և ի մահ ոչ մատնէ, և ոչ սատակէ և ոչ բառնայ զյիշատակս ստահակաց և անզգամաց: Այլ զի ոչ գիտացին գոհանալ զպարգևացն Աստուծոյ և հնազանդել օրինաց նորա, մատնէ զփառս նոցա և զյղփութիւն ի ձեռս թշուառութեան՝ ողբոց և արտասուաց արժանաւորս: Զի խրատեսցին և ճշմարտեալք սրբեսցին և մնասցեն ընդ խնամօք բարերարին, գործել միշտ զբարիս առաջի նորա. և ի բաց կացցեն ի դժնդակ և յանառակ վարուց, և մի զերախտաւոր կարգս յապախտաւորս փոխեսցեն, և զժամանակն խաղաղութեան և անդորրութեան ի դառնութիւն և ի հարուածս չարաչար ախտից: Եթէ փոխեն զդժնդակ վարսն ի լաւութիւն, դառնայ և ժամանակն ի խաղաղութիւն. զի գործակից եմք տէրութեան խնամոց և համառօտ դատաւորութեանն: «Փառք և պատիւ և խաղաղութիւն գործողացն զբարին, ասէ Առաքեալն երանելի. և բարկութիւն և սրտմտութիւն և նեղութիւն, ասէ,* ի վերայ ամենայնի՝ որ գործէ զչար»: Արդ բարե-

* Հռ. Բ, 9:

գործքն բարեկեցիկք են ի բարերարութեանն նորա, և ժառանգիցք զարմանոց[79] նորա և խնամոց և աւետեացն որ ի Քրիստոս: Զի յերկրի ի խնամս նորա վայելեն, և յուսով ըստ անսուտ խոստմանցն ժառանգեն զանսպառ բարիսն ըստ արդարութեանն: Իսկ անհնազանդքն և անառակքն գործակից են սպառնալեացն տեառն· որ փոխեն զքաղցր ժամանակ խնամոց նորա ի դառն հատուցումն տուժից և տուգանաց և պէսպէս հարուածոց:

Տես որչափ իշխան է մարդն· զի և զԱստուած ի կամս իւր ածէ յառնելն զբարին: Զի «Ոչ կամիմ, ասէ տէր մարգարէին,* զմահ[80] մեղաւորին· որպէս զդառնալ նորա ի չար ճանապարհէն և կեալ»: Զի արդար դատաւոր է և ըստ արժանեացն դատի, որ ինչ գործէ մարդ յաւուրս իւր՝ եթէ բարի և եթէ չար: Եւ իշխանութիւն է մեզ փոխել զժամանակն՝ բարի գործով ի բարիս: Եւ դարձեալ ի չար, եթէ մեղսասէրք լիցուք: Զի մեզ է զխոշտանգանս ի գգուանս դարձուցանել· և դարձեալ զնոյն սէր՝ ի բարկութիւն: Զի ոչ ի բաց թողու ի սատահակելն· այլ ներէ, զի դարձեալ զղջասցին և հնազանդեսցին ընդ ամենագութ խնամոց բարերարին Աստուծոյ: Զի ասէ.** «Ոչ եկի կոչել զարդարս, այլ զմեղաւորս յապաշխարութիւն· և ոչ է պիտոյ բժիշկ ողջոց, այլ հիւանդաց»: Եւ դարձեալ մարգարէին ասէ.*** «Արդարութիւն արդարոյն ի վերայ նորին եղիցի ի կեանս· և անօրէնութիւն անօրինին ի վերայ նորին եղիցի ի մահ, եթէ մնասցէ ի նմին»: Եւ եթէ դարձցի արդարն ի մեղս, մահու մեռցի· և մեղաւորն յարդարութիւն, կելով կեցցէ:

Լսե՜ս[81] զարդար դատաստան արդարոց և մեղաւորաց

---

* Եզկե. ԼԳ, 11:

** Ղուկ. Ե, 32:

*** Եզեկ. ԺԸ. 20:

ի տեառնէ: Որպէս զիարդ և կամիմք, կարեմք փոխել զաւետիսն ի սպառնալիս և զողոքանս ի պատուհաս: Կարող եմք և զկեանսն մեր փոխել ի մահ, և զմահն ի կեանս. և զարկեալ սահմանն Աստուծոյ որպէս կամիմք՝ շրջեմք ի բարի և ի չար. որ Աստուծոյ միայն է կարողութիւն: Ըստ մարգարէին որ ասէ.* «Եթէ ախորժեսջիք և լուիջիք ինձ, ըզբարութիւնս երկրի կերիջիք. և եթէ ոչ կամիցիք լսել ինձ, սուր կերիցէ զձեզ. զի բերան տեառն ամենակալի խօսեցաւ զայս»: Եւ Առաքեալ ասէ. «Ամենայն ինչ վասն ձեր է. եթէ մահ, եթէ կեանք, եթէ աշխարհ, եթէ անաշխարհ, եթէ բարձրութիւն, եթէ խորութիւնք. դուք Քրիստոսի, ասէ, Քրիստոս Աստուծոյ»:

Այլ զի ասաց՝ «ամենայն ինչ վասն ձեր է», [82] որ ի կեանս իւրեանց նորա կենդանի սիրովն և կամօք յաշխարհի վարին: Զի որպէս բուրուառն որ անուշահոտ խնկովք ուրախ առնէ զմերձաւորս զմեծամեծս և զփոքունս, այսպէս դաւանութեան մերոյ և մաքրութեան հոտ բուրեսցի առաջի Քրիստոսի հանապազ: Եւ զի ասէ՝ «եթէ մահ», [83] զի մահն մեր որ վասն Քրիստոսի՝ վկայ լիցի սիրոյն նորա. այնպիսի մահուամբ փոխեսցուք յանմահական կեանսն անեղծութեանն, որ ի Քրիստոս Յիսուս: Զի ոչ միայն այնոցիկ է պատուական մահ, որ զվկայութեանն [84] աստիճան առին ի ժամանակի հալածանաց սրով և հրով և ջրով և կամ այլ [85] ազգ ինչ չարիւ, այլ ամենեքեան որ ի Քրիստոս մկրտեցան և զՔրիստոս զգեցան, զհին մարդն մերկացան գործովք հանդերձ, և զգեցան զնորն նորոգեալ [86] որ ըստ պատկերի Աստուծոյ է յարդարութեան և ի սրբութեան և ի ճշմարտութեան.** որք մեռանն մեղաց, և կենդանի են միշտ արդարութեանն: «Զի որպէս յարեաւ Քրիստոս ի մեռելոց փառօք

* Եսայ. Ա, 11. Ա. Կոր. Գ, 22.
** Եփես. Դ, 24, 25.

Հօր՝ նոյնպէս և մեք ի նորոգումն կենաց շրջեսցուք» * ասաց։[87] Զի մեռանելն մարմնով և մնալ մարմնաւորաց և կեալ սրբութեամբ և անարատ ըստ արդարութեան օրինաց աւետարանին Քրիստոսի՝ կարասցէ ասել. կենդանի եմ այսուհետև՝[88] ոչ ես, այլ կենդանի է յիս Քրիստոս։** Զի եթէ այս աշխարհ՝ որով զհանդէս առաքինութեանս ցուցանեմք, և եթէ հանդերձեալքն՝ ամենայն նովաւ և ի նորա խնամս[89] և ի փառս կատարի, որ զամենայն յամենայնի լնու *** ի խորութեան և ի բարձրութեան։

Դարձեալ խորութիւն՝ զտկարութիւն մարմնոյն է իմանալ յերկրի, և Քրիստոսիւ վերանալ ի բարիսն։ Իսկ բարձրութիւն[90] զզօրութիւն հոգւոյ ըստ երկնայնոցն և անմահիցն որ ի Քրիստոս։ «Ամենայն ասէ,[91] Քրիստոսի ձեր է. և դուք նորա ի փառս Հօր և Հոգւոյն»։[92] Յորժամ զբանն նորա պահեսցուք և մնասցուք ի սէրն նորա և յանարատ վարս, այնուհետև ոչ ևս է զմեզ մարմնով իմանալ, այլ հոգւով. զի որ հոգւովն Աստուծոյ վարին, նոքա են որդիք Աստուծոյ և ժառանգակիցք Քրիստոսի։ Զի եթէ չարչարանացն կցորդիմք յերկրի և փառացն հաղորդ լինելոց եմք յերկինս, որ կան և մնան։**** Զի թէպէտ և գիտեմք յաղագս փրկութեան և կենաց, այլ արդ ոչ ևս նոյնպէս գիտեմք։ Այլ Աստուած ամենայն յամենայնի անճառելի, որ սիրովն խնամէ զարարածս ամենայն, և խոստացեալ է տալ զարքայութիւնն[93] և զանապառ բարիսն՝ որ ի Հայր և յՈրդի և ի Հոգին սուրբ։ Որում փառք յաւիտեանս ամէն։

---

* Հռ. Զ, 4։
** Գաղ. Բ, 20։
*** Եփես. Ա, 23։
**** Հռ. Ը, 17։

Ը

ԵՐԱՆԵԼՒՈՅՆ ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ՀԱՅՈՑ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ [1]

ՅԱՆԴԻՄԱՆՈՒԹԻՒՆ ԴԺՆԴԱԿ ՎԱՐՈՒՑ

ԵՒ ԸՆԾԱՑՈՒԹԻՒՆ ԱՌԱՔԻՆՈՒԹԵԱՆ ՀԱՆԴԻՍԻՑ

ԴԱՐՄԱՆՔ [2] *մարգարէից և առաքելոց քարոզութիւնք յառաւելութիւն բարեաց զմեզ ընթացուցանեն ըստ լաւ մաւրենն որ ի Քրիստոս: Եւ գլխաւորելով յառաւելոյն յորդորեն, որ դրաւնք են ամենայն բարութեանց և երանութեանց. և ընդ նոսա միաւնեն աւետիք խոստացեալ պարգևացն Աստուծոյ [3] ի հոգևոր դարմանոն: Այլ և ի մարմնաւորսն լիութիւն և առատութիւն և խաղաղութիւն այլովքն հանդերձ հարկաւորօք: Եւ բարութիւնք յուսոյն կենացն յաւիտենից և շնորհք աներևոյթ սիրոյն՝ որ են գանձք գիտութեան և իմաստութեան, որով գիտէ ընտրել զլաւն ի վատթարէն, [4] հաստատեցի ի մեզ որ հոգւով վարեցաւք: [5] Եւ այս վասն ընտրութիւնս առնելոյ ի միմեանց առաքինեացն [6] հաւատացաւ. և անհաւատիցն լքումն տայ առ ի յընտրել զլուրի հաւատ աստուածգիտութեան: Եւ արդարքն մի՛ վրիպեսցին ի փրկութեան յուսոյն: Այլ և զգժնդակ վարսն զամենաչարն և զամենավնասն սանձել, որ դրաւնք են բարկութեան և սրտմտութեան, սովոյ, սրոյ և գերութեան և պէսպէս չարի: Զի [7] որ աղբիւրն է ամենայն բարեաց և արարիչ ամենայն արարածոց, երկնաւորաց և երկրաւորաց, հոգևորաց և մարմնաւորաց, ամենազօրն ամենակալն երախտաւորն ամենայն կենաց, [8] ասէ. «Ես եմ տէր Աստուած ձեր. զպատուիրանս իմ*

պահեցէք և կեցջիք»․ * զի «զամենեսեան կամի զի կեցցեն և ի գիտութիւն ճշմարտութեան եկեսցեն։ **» Եւ այսպէս զամենեսեան կոչէ ի կեանս իւր․ որ կենաց տուիչ և դարմանիչ է ամենահնար բարերարութեամբն։

Պարտ է զնա սիրել յամենայն անձնէ և ի զօրութենէ և ի մտաց՝ այլ և զընկերս իբրև զանձն ամենայն սրբութեամբ․ զի ապրեսցուք յաշխարհէ աստի չարէ ըստ շնորհացն Աստուծոյ որ ի մեզ։ Եւ սանձահարել զգժնդակ բարսն, և զանհաստատութիւն մտաց ի հաստատութիւն յուսոյ ի նեղութեան և յանդորրու։ Եւ տալ զանառակութիւնս՝ որ զընութիւն [9] շարժէ և պղտորէ, և ի պոռնկութիւն և ի շնութիւն հակամիտէ։ Զի պոռնկութիւն ստերիւրէ ի պէսպէս անարժան հրապոյրս վնասուց․ և վրիպեցուցանէ [10] ի հաւատոց և [11] ի սուրբ վարուց ի պտղաբանս մեղաց, յանառակութիւնս աղտեղիս։

Արդ փախիցուք ի պոռնկութենէ ի մօրէն չարեաց, որ յորդորիչ է ամենայն վնասուց․ [12] զի զբազումս կորոյս ջրով և հրով և այլ և այլ ազգ պատուհասիւք, [13] որպէս ասեն գիրք։ Զի որ շնայ կամ պոռնկի, կորուստ անձին ստանայ․ և ի տեառնէ ի բաց եկաց անսուրբ անձն։ Զի տաճար են սուրբք ամենայն ամենասուրբ Երրորդութեան․ և տաճար գիւաց են պոռնիկք և շունք։ Զի զկոյսս ապականէ և մերժէ ի տեառնէ, և զամուսնութիւնս քակէ և ընդ բազում չարեօք առնէ։ Զի վասն պոռնկութեան զկախարդս յօգնութիւն [14] պղծութեան ըստ հրապուրանաց սատանայի առնուն կաշառօք։ Վասն պոռնկութեան նախանձու զչարն և զզազիր խորհուրդ աղտեղութեան միշտ ունին։ Վասն պոռնկութեան ոխութիւնք և այլանդակութիւնք ի կորուստ արանց և կանանց լինի։ Վասն պոռնկութեան դժպհութիւնք [15] և երդ-

* Ղևտ․ ԺԹ, 37․
** Ա․ Տիմ․ Բ, 4․

մնահարութիւնք և սուտութիւնք և գողութիւնք: Վասն պոռնկութեան հեղկութիւն աղօթից և պահոց և պղերգութիւն առ ի գործս: Վասն պոռնկութեան բազմակնաս նենգութիւնք նիւթին ինքեանք [16] առ օտարս և ընտանիս: Վասն պոռնկութեան խորամանկութիւնք և պէսպէս մահք յայտնիք և գաղտնիք: Կէսք յորովայնի ճմլեն և տարաժամ անցուցանեն զմանկունս, և կամ դեղովք ապականեն յորովայնի. և են որ զծնեալսն սպանանեն: Եւ է զի մնոյ [17] տէրն և սեղեխն ի միմեանց մեռանին, կամ յայտնի մարտիւ կամ գաղտնի իւիք չարիւ: Եւ է զի հոմանիքն ի միմեանց խողխողին ի վերայ բոզիցն: Եւ է որ բոզքն խաղս ինչ ուսանին ի կախարդաց, զի սպանցեն զարսն վասն հոմանեաց ցանկասիրաց:

Եւ բազում չարիս ունի ախտիցն ցանկութիւն յարս և ի կանայս, զոր ասելն կամ լսելն զազիր է մաքրեցելոցն մտաց և սրբեցելոց: Այլ զառաջեալն և զոր ասելոցս եմ, լուիցեն որք յայսոսիկ ի սատանայէ ըմբռնեալ են [18] արբեալ ախտիւ պոռնկութեան. [19] վասն որոյ մարգարէն ասէր.* «Վայ որ արբեալդ էք ի ցանկութենէ և ոչ ի գինւոյ»: Զի ամենայն չարեաց պատճառ պոռնկութիւնն է և մայր մեղաց և դուռն ամենայն չարեաց նաւելոց ի մեղս: Զի վասն այսորիկ գայ բարկութիւն Աստուծոյ ի վերայ երկրի, սովոյ և սրոյ և գերութեանց և պէսպէս ախտից. խռովութեանց ընտանեաց և օտարաց, ծնողաց և ծննդոց, ծառայից և տերանց. յորս կագք և կռիւք և մահք:

Նա ևս չարագոյն քան զառաջեալս է ախտիցն գարշութիւնք. որ և քան զանասունս և զգազանս և զսողունս անարգել են յախտս, որ յանասունս և յարուս պղծին. Թողեալք զպէտս իգութեան արուացն և իգացն, բորբոքեցան ցանկութեամբք իւրեանց ** յանասելի աղտեղութիւնս. զոր

---

* Ես. Ա, 21:
** Հռ. Ա, 26:

և ոչ է տեսանել [20] յայլ ի շնչաւորս զգարշութիւն ախտիցն։ Ո՞վ չարեացն և անարգել ախտին. որ արտաքս ելանէ քան զսահմանն, և գլուխ է ամենայն դժնդակ չարեաց։ Աստուծոյ օրէնքն [21] քարկոծ առնէին և կամ հրովայրէին. և [22] նորա՝ արտաքս ունի յեկեղեցւոյ և ի ժողովրդոց. [23] մինչև բազում լալով ի տուէ և ի գիշերի ի խորգ և ի մոխիր պահօք ապաշխարեսցէ, անհատ աղօթիւք և աշխատութեամբ բեկեալ սրտիւ։ Զի թէ տէրն զհայելն ի կին պոռնաւոր առնէ շնութեան, վասն այլ [24] գարշութեան ախտիցն զի՞նչ պարտ է ասել զպատիժսն։ Եւ որքան երանէ զմաքուրսն. քանզի ասէ. «Երանի [25] որ սուրբ են սրտիւք, զի նոքա զաստուած տեսցեն հոգւով»։ *

Ո՞րքան է սրբոցն հատուցումն, [26] զԱստուած տեսանել և յանպատում բարիսն [27] վայելել։ Զի եթէ զարեգակն տեսանեմք յետ գիշերային ցրտութեան ի ջեռուցանել ի լուսաւորել՝ խնդամք, որ փոփոխելի և անցաւոր է. ապա [28] զանճառելի լոյսն զնորա արարիչն և զմեր՝ զի՞նչ պարտ է ասել զանհամեմատ բարին Աստուած։ Որ լցուցանէ զսրբոցն անձինսն շնորհօք և վայելեցուցանէ յանբաւ բարիսն և յանվախճան երանութիւնսն և յանսպառ ուրախութիւնսն։ Զի ոչ զնմանութիւն ինչ կայանիցն է ասել հնար [29] և զանճառիցն. բայց որ սուրբքն են սրտիւք և անարատք անդամօք մարմնոց, նոցա երևի Քրիստոս անճառապէս։ Բայց եթէ անսուրբք իցեն հոգւով և մարմնով, ապաքէն ի սրտէն առնու զհանգամանս գործոց մարմնին. զի ի սրտէն, ասէ տէրն, ** ելանեն չար խորհրդոցն չարիքն, և մարմնով գործի։ Եւ զի ասէ, *** «Եթէ ակն քո կամ ձեռն կամ այլ ինչ անդամ գայթագղեցուցանէ զքեզ, հատ զնա և ընկեա ի քէն». և այս

* Մատթ. Ե, 8։
** Մատթ. ԺԵ, 19։
*** Անդ. Ե, 29։

հրաման ոչ զանգաման հատանել տայ, այլ զցանկութիւն շարժման ախտիցն որ ի նոսա գործի ի կորուստ անձինն. զի լուցկիք [50] է պոռնկութիւն անշէջ հրոյն ամենայն չարեօքն հանդերձ։

Եւ յորժամ փրկիչն զառաքեալսն յաշխարհ առաքէր սերմանել զբանն ճշմարտութեան յանդս [51] մտաց հաւատացելոց, և նոյնա ածել [52] ի կարգ ուղղութեան, նախ զփուշն խլել զցանկութիւն [53] բուսոցն հրամայէ, զկամս մարմնոյ և ըզմտաց, և հնազանդել աւետարանին. և ապա սերմանել զաւետիս հրաւիրելոցն. կոչել [54] խոստովանութեամբ յապաշխարութիւն և ի հաշտութիւն ամենեցուն արարչին։ Եւ հնազանդեալք ըստ աւետարանին քարոզութեան, արժանաւորիլ սուրբ երախտեացն կենդանի յուսովն, զի ժամանեսցուք յօթևանս կենացն յաւիտենից ի Քրիստոս Յիսուս։ Եւ ի ժողովս առաքելոցն * վասն խնդրոյն այնորիկ Հրէից և հեթանոսաց նախ զայս աւանդեցին, և ընտրեցին ի բաց կալ ի պոռնկութենէ և ի հեղձուցելոյ և յարենէ։ [55] Որոց արարեալ զայս բարի գործս, ստանան անձանց զարդիս և զապառնին։

Սկիզբն նախ զպոռնկութեանն հատումն առնէ, զի զբազում ոստս որ ի նմանէն լինաք՝ խափանեսցին. և զմեռելոտի գործս և զուտել արգելցեն և զարիւն նորին. այլ և որ ի սպանութիւն մտաբերեն, այսպէս խափանեսցին։ Զի հնազանդութեամբ նուաճեալք առ սրբութիւն և պարկեշտութիւն և խոհականութիւն, և ընտանացեալք [57] հաւատով մտցեն յաւետիս խոստացեալ բարեացն։ [58] Եւ զգժնդակութիւնսն ամենայն ատել և ի բաց ընկենուլ սպառնալեօք անվախճան տանջանացն, որ պատրաստեալ է ի տեառնէ անսրբոց և պղծոց ի պոռնկութիւն։ Զի եթէ մեռելոտի

* Գործք. առ. ԺԵ, 20.

ուտել և զարբուն անասնոց ըմպել՝ եղկութիւն և թշուառութիւն ի միջի կայ, որքան պատիժք որ զազգակիցս վտանգեն նեղութեամբք, զոգիսն և զմարմինս ճնշեն [39] պէսպէս վտանգիւք և զառն տանջանօք և մահուամբ յարդար դատաւորէն պատրաստեալ: Եւ Առաքեալ ասէ. * «Մի խաբիք [40] ոչ պոռնիկք, ոչ շունք, ոչ իգացեալք, ոչ արուագէտք, ոչ գողք, ոչ ագահողք, և որք զհետ այսոցիկ, զարքայութիւնն Աստուծոյ ոչ ժառանգեն», [41] այլ զանշէջ հուրն. ըստ մարգարէին՝ թէ ** «Հուրն նոցա ոչ շիջանի, և որդն նոցա ոչ վախճանի»: [42] Զի պատուական ասէ զամուսնութիւն և անարատ զանկողինս, և նախապատիւ զկուսութիւն. այլ և զպոռնիկս և զշունս դատի Աստուած: *** [43] Եւ դարձեալ ասէ՝ «Դուք տաճար էք Աստուծոյ, և Հոգին Աստուծոյ բնակեալ է ի ձեզ»: Այլ ինքն անարատ յաղտեղութենէ: «Զի սուրբ է տաճար քո սքանչելի արդարութեամբ» ասէ Դաւիթ: «Եւ եթէ ✠ ոք զտաճար Աստուծոյ ապականէ, ապականեսցէ զնա Աստուած. զի տաճար Աստուծոյ սուրբ է, որ էք դուք ի մէջ կամակոր և աղտեղի ազգաց»: [44]

Զի որպէս ջրհեղեղաւն ապականեցաւ երկիր, որ գէջ պղծութեամբն էին ապականեալ, մեք զիա՞րդ ոչ երկիցուք, որ այսպիսի մեղաց բարկութեան վկայ ունիմք զհամաշխարհական կորուստն ջրհեղեղին: Այլ և զՍոդոմ և զԳոմոր հրով և ծծմբով տոչորեալ ըստ ջերմութեան և զազիր ախտից, որովք ըմբռնեալ էին՝ սատակեցան հինգ թագաւորացն պղծեալ տանքն հանդերձ լրիւ իւրով երկիրն: Եւ զայս երկուս հարուածս յաղագս գիջութեան և պղծութեան երկուս վկայս կացոյց ահաւոր դատաստանին, որ լինելոց է պատիժս այն-

* Ա. Կորնթ. Զ, 9.
** Ես. ԿԶ, 24.
*** Եբր. ԺԳ. 4. Ա. Կոր. Է, 26.
✠. Ա. Կորն. Գ, 16.

պխսի պղծոց յաւուրն այցելութեան ամենայն ազգաց։ Զի որպէս էին, ասէ տէրն, * յաւուրսն Նոյի՝ կանայս առնէին և արանց լինէին և յուրախութեան վայելէին, մինչև եկն Ջրհեղեղն և կորոյս զամենեսեան առ հասարակ. նոյնպէս և յաւուրս Ղովտայ ի վափկութեան և յամենայն ուրախութեան վայելէին, այլ և յանառակ ցանկութիւնս, մինչև տէր եհան զՂովտ անտի, և զնոսա այրեաց առ հասարակ հրով. [45] բայց դուք լոյս էք ի տէր ի սրբութեան։ Խաւար ասէ զգործսն խաւարի, որ ոչ գայ [46] ի լոյս։ Իսկ ի խաւարէ մեղաց զերծեալ սուրբ լուսոյն երևի։ ** Դարձեալ ասէ, թէ որ մերձենայ ի պոռնիկն՝ մի մարմին է. *** զի որպէս միով մարմնով մեղքն կատարին. զի հասարակաց է չարն ի գործելն ի խօսելն ի տեսանելն ի լսելն, և այլ ամենայն խծբծք չարեաց նոցին։ Եւ որ մերձենայ ի տէր՝ մի հոգի է, ընկղմեալ ի կենդանի սրբութեան։ [47] Զի սրբեալ անդամքն մարմնով և հոգւով միաւորի ընդ Քրիստոսի ի կեանսն հաւատով և ճշմարտութեամբ, և լինի սուրբ անդամ Քրիստոսի հանդերձ ամենայն առաքինութեամբն։ Զի կարասցէ ասել առ մարտ թշնամւոյն. արդ առեալ զանդամս Քրիստոսի՝ առնիցեմք անդամ պոռնկի՞. *** քաւ լիցի զսրբութիւնս մատնել յանմաքրութիւն։

Զպոռնիկն բազում անգամ վտանգէր Պօղոս վասն պղծութեան և խրատէր, և մատնէր ի ձեռս սատանայի ի սատակումն մարմնոյ, զի ոգին ապրեսցի հանդերձ սոյգ զղջմամբ, ✠ [49] ճնշելով զմարմինն պահովք պնդութեան և աղօթիւք հրահանգել ի սրբութիւն, լնուլ զասացեալս ի նոսա՝ որ յաղագս այնորիկ են հանդէսք։ Զի ի ձեռն [50] պոռնկու-

* Մատթ. ԻԴ, 37. ԼԸ, 39.
** Եփ. Ե, 8.
*** Ա. Կորնթ. Զ, 15. 16.
✠ Ա. Կորնթ. Ե, 5.

թեան պէսպէս անօրէնութիւնք յաճախին ի յերկրի. զի բազմաչար է պոռնկութիւն և անյագ առ ցանկութիւնս ախտից։ Վասն այսորիկ Առաքեալն զմեզ ուսուցանէ և խրատէ սպառնալեօք, փախչել յայնպիսի ախտից և ի պղծութենէ, որոց վախճանն է կորուստ։ [51] Զի ասէ. * «Մի պոռնկեսցուք, որպէս ոմանք ի Հրէիցն, և կորեան ի սատակչէ անտի յաղագս պոռնկութեանն ի միում աւուր քսան և չորս հազար»։ Զի ոչ եթէ անիրաւ ինչ էր Աստուած՝ որ էած զբարկութիւնն ի վերայ նոցա, որ գիտէ զամենայն։

Վասն այսորիկ զհարուածսն ընդ իշխանութիւնս եմոյծ ի ժողովուրդսն. որպէս զի նոքա էին որդիք կորստեան պատճառս ի մեղսն, թէպէտ և ի միասին մեղան որք մեղանն։ [52] Զի և մարգարէն ասէ. ** «Անձն՝ որ մեղիցէ, նոյնն և մեռցի»։ [53] Թէպէտ ասէ, «Հարք ազոխ կերան, և որդւոց ատամունք առին»։ *** Զի են ոմանք որ ի մեղս իւրեանց վախճանին առանց ապաշխարութեան, եցոյց եթէ ոչ լինի մոռացումն յիրաւանցն Աստուծոյ. այլ կայ պահի արդարութիւն աւետեաց սրբոց, և առ անօրէնութիւն՝ սպառնալեացն արհաւիրք։ Զի որդիք մեղաւորացն երկիցեն և մի արասցեն ըզմեղս, [54] որպէս և հարք իւրեանց. այլ արդարութեամբն իւրեանց ապրեսցին ի բարկութենէն՝ որ սպառնացաւ նոցա։ Զի որդի որ ատէ զամբարշտութիւնս հօր, և արասցէ իրաւունս, կելով կեցցէ, ասէ տէր։ **** Եւ մի փորձեսցուք զտէր և կամ տրտնջեսցուք, որպէս ոմանք ի նոցանէ, և յօձից անտի սատակեցան։ ✠ Զի ուսումն վարդապետութեան խրատէ [55] յուղղութիւն, որոշէ զլաւն ի վատթարէն, և

---

* Ա. Կոր. Ժ, 8.
** Եզեկ. Ը, 20.
*** Եզեկ. ԺԸ, 2.
**** Անդ. ԺԸ, 19. Թիւ. ԻԱ, 6. Եզեկ. ԼԳ, 14.
✠ Ա. Կոր. Ժ. 9.

պահել զսրբութիւնն ըստ օրինացն արդարութեան և ըստ աւետարանական լուսաւորութեան խորհրդով և բանիւ և գործով։ Զի ապրեսցուք ի բարկութենէն որ գալոցն է ի վերայ անօրինաց և պղծոց, և կալ առաջի Քրիստոսի սուրբք, և ժառանգել զանպատում բարիսն։

Այլ և վերակացուք մի հեղգասցին ի պատմել զպատունալիս տեառն Աստուծոյ. զի ասէ մարգարէիւն. * «դէտ կացուցի զքեզ, զի ասասցես՝ մահու մեռցիս եթէ մեղիցես։ Եթէ լուիցէ քեզ, կեցցէ. ապա եթէ ոչ լուիցէ քեզ՝ մեռցի. և դու ապրեցուսցես զանձն քո։ Ապա եթէ ոչ ասասցես զպատունալիսն որք զայնպիսիսն գործեն՝ եթէ սուր գայ և բորկութիւն, զարիւն նոցա ի ձեռաց քոց խնդրեցից»։ Զի կամ ողոքանօք աւետեաց երանութեանցն յուսով ուղղեսցին, և կամ սպառնալեօք հարուածոց և վշտաց և նեղութեանց՝ որ յերկրի աստ, և կամ ահեղ աւուրն [56] մեղաւորաց և անհնազանդից։ Զի իբրև հրեշտակք են Աստուծոյ հրամանք, [57] որ առաքին յիշխանութենէ ընդ ամենայն արարածս. ընդ երկնաւորսն առ զօրս հրեշտակաց, և ընդ երկրաւորս առ ազգս մարդկան. առնել զշահաւորն ի մեզ ի սիրոյ տէրութենէն ի նեղութեան և յանդորրու ի պէտս մեր, Զի անքակ կացցուք ի ճշմարտութեան աւանդսն մաքուր վարուք մարմնով և հոգւով առ տէրութիւնն, և երախտաւոր լինել ամենաշահ դարմանօք առ կեանս և փրկութիւն ընկերաց։ Այլ և արուեստիցն [58] ճշմարտից կալ ի մշակութեան, և արքանեակ լինել առ հաճոյս բարերար կամացն Աստուծոյ, և շնորհօք Հոգւոյն վայելել ի կեանս աշխարհիս. զի ազատեալք ի մեղաց, լիցին [59] արդարութեանն միշտ պտղաբերք հանդերձ ամենայն սրբութեամբ համբերութեամբ բազմաւ. զի այսպէս ժառանգաւոր լինել կարասցուք աւետեացն սուրբ Երրորդութեանն։

* Եզեկ. ԼԳ, 7.

Այլ և վկայութիւնք լաւութեանն որ մտերիմ է անձնիշխան կամօք ի վարդապետութիւն հոգւոյն սրբոյ. որ ի ձեռըն մարգարէից և առաքելոց և վարդապետաց գրովք աւանդեցան մեզ. զի ծանիցուք զԱստուած՝ զերախտաւորն, զարդարն, զբարերարն, զսուրբն, զճշմարիտն. և մերժել և հեռանալ ի դժնդակ վարուց, յապախտաւոր և յանհաւան յանխրատ և յանխտիր անօրէնութենէ, և սրբել ի մտաց և մարմնոյ զվնասակար զամբարշտութիւնսն միշտ։

Նա և Պարսիկք և այլ խուժադուժ ազգք, որ ոչ գիտեն զօրէնս, բնութեամբ զօրինացն գործեն ըստ Առաքելոյ * բանին [60] և ի ձեռն դատաւորաց պատժեն զպիղծս և զանիրաւս։ Եւ միշտ սպառնալիք իշխանաց և դատաւորաց առանխտիրան ի չարիս, առ սուտս և երդմնաստս, նենգաւորս, գողս, սպանողս. շունս, կախարդս, գիւթս, և որ ի նոյնս [61] են հայք մեղաց։ Զորս բանդիւք և երկաթի կապանօք և պէսպէս տանջանօք խոշտանգեն և մահ ի վերայ ածեն, զի այլքն երկիւղ ունիցին և արգելցին յանխնայ անօրէնութենէն։ Իսկ որ խրատին և գան ի լաւութիւն կարգաց և իրաւանց թագաւորի, ի միամտութեանն և ի հպատակութեան կացուցանեն զանձինս, այնպիսեացն փառք և պատիւ և պարգևք ազատութեան շնորհեն։

Դոյն օրինակ և Յոյնք գրով կարգեալ ունին զիրաւունս. երախտաւորացն և մտերմիցն պարգևօք և մեծարանօք պատուեն, իսկ անօրինացն և անհնազանդիցն և ամբարհաւանիցն և անառակիցն և պղծոցն պատուհասիւք և պատժովք և դառն նեղութեամբք նեղեն, զի խրատեսցին ի բացկալ ի մեղաց և գործել զբարիս հանապազօր. զի մի վրդովեսցի [62] աշխարհս յանիրաւաց, այլ զխաղաղութիւն և զշինութիւն կալցի։ Նոյնպէս և ամենայն ազգք եթէ ոչ կայցեն յիրաւունս արդար դատաստանին Աստուծոյ. զի ունին կարգիչս և

* Հռ. Բ, 14։

իրաւունս դատաստանօք և խրատու ուղղել, և մի ամբոխ և մարտ յուզեսցին։ Եւ իրաւանցն արդարութեան երկու բարբառք են, որ յարգեն և պատուեն զիրաւախորհսն աւետեօք և պարգևօք, և սպառնալեօք և պէսպէս նեղութեամբք պատժեն զապախտաւորսն և զանիրաւսն. զի չիք ազգք որոց ոչ իցեն իրաւունք ի դատաւորաց։ Եւ այս ամենայն կարգք ի շինութիւն աշխարհի կարգեալ են ի տեառնէ ըստ նախախնամութեանն որ առ ազգս մարդկան. թէպէտ և ոչ՛ ծանեան զԱստուած և փառաւորեցին կամ գոհացան, զի[65] ոչ խնդրեցին զԱստուած ունել ի գիտութեան. այլ նանրացան ի խորհուրդս իւրեանց և խաւարեցան անմտութեամբ։ * Այլ ոչ անտես առնէ արարիչն զարարածս. զի հայր է շնորհիւ և տէր. որ հրաւիրեաց և կոչեաց զամենեսեան յարքայութիւնն։ [66]

Արդ այս ամենայն կարգք իրաւանց և արդարութեան վկայք են Աստուծոյ հոգևոր օրինացն, որ քարոզեցաւ մարգարէիւք գրովք սրբովք։ Որք յանիրաւութենէ յիրաւունս ածեն, յանարգութենէ ի փառս, յանցաւորացս ի մշտնջենաւորսն, յերկրաւորէս յերկնաւորսն առաքինութեան հանդիսիւք. և ամենայն կարգաց իրաւանց և սրբութեան պատկառ կալ, [68] ճշմարիտ հաւատովք և կենդանի սիրով անմեկնելի լինել ի կամացն Աստուծոյ ի նեղութեան և յանդորրու. Կոխել զպատրանս աշխարհիս և հաստատել ի յոյս կենացն յաւիտենից խաղաղարար սրբութեամբ. զի հասցէ ի բնակարանս սրբոց յերանելի և ի սքանչելի փառսն. վայելել ի բարութիւնսն անպատում, յանհամեմատ վայելչութիւնսն, յանուշակ արքայութիւնն Հօրն ամենակալի և Որդւոյն բարերարի տուողի մեզ զկեանս, և Հոգւոյն սրբոյ նորոգողի զհաւատացեալս. միասնական սուրբ Երրորդութեանն. որում փառք յաւիտեանս. ամէն։

---

* Հռ. Ա, 21·

Թ

ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ ԿԱՏԱՐԵԱԼ Ի ՏԷՐ ԱՄԵՆԱՐՈՒԵՍՏ[1] ՊԱՀՈՑ[2]

ԵՐԱՆԵԼՒՈՅՆ ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ՀԱՅՈՑ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ

*Եւ քանզի ամենայն կարգաց չափ եղեալ յամենակալ տեառնէն և յարարչէն, որպէս զի հանդիսացեալք կատարեսցուք զառաքինութիւն ահին Աստուծոյ, որ փառօք[3] պսակի հաւատովք և շնորհօքն Քրիստոսի: Զի ամենարուեստ քաջութեամբն նահատակեալ ի մշակութիւն օրինացն՝[4] սուրբ սիրովն զօրացեալք, որպէս և զզօրս հոգեղինացն: [5] Որով և օրէնսդիրն փառաւորեցաւ, և օրինապահքն պսակեցան, և առաջնորդեն յօթևանս երկնից արքայութեանն օրինակօք ամենագիտ սիրոյն ի բարերար խնամսն: Զի նմանեալք նոցա խորհել յօրէնս տեառն ի տուէ և ի գիշերի՝ ընկալցուք զարդարութեան և զժուժկալութեան զշնորհսն. զի ըստ իւրաքանչիւրոցն լաւութեան վարուցն՝ թագ ի գլուխ մըտցեն յարքայութիւնն[6] ի մշտնջենաւոր և յանվախճան կեանսըն. երկնայնոյն և անմահիցն կցորդ լինել ըստ ընդրութեան շնորհացն գործելով յանդիման առաջի Աստուծոյ և զօրաց անմարմնոց. զոր յերկրի աստ մատակարարեալ և[7] յերկնաւորսն երևի: Այսու յուսով յորդորէ զորդիս մարդկան ըստ աւետեացն, և ժառանգորդս առնէ Քրիստոսի կենացն[8] հայրն բարերար և հոգին սուրբ ամենախնամ. որ ոչ թողու զարարածս իւր նախախնամական սիրովն. զի զամենեցուն կամի զկեանս և ի գիտութիւն ճըշմարտութեանն հասանել: «Զի որ արասցէ և ուսուսցէ, ասէ, նա մեծ կոչեսցի յարքայութեանն երկնից»: **

---

* Մատթ. Ե, 19:

Եւ որպէս հրեշտակացն կարգաւորութիւն է յարքայից արքայէն, և ի նոյնս կան մնան ըստ բարերար կամաց կենարարին և ոչ ևս անցանեն, սոյնպէս յորդորէ և զմարդիկ ի հրեշտակային կարգաւորութիւնս։ [9] Սոյնպէս [10] և սերոբէք և քերովբէք ընծայեալ են յիւրեանց սպասաւորութեանն ամենակալ տէրութեանն. որով արարածք զարմանին ի խնամս բարերարութեանն միշտ։ Այլ և ամենայն [11] զուարթունք և զօրք հոգեղինացն և անմարմնոցն յիւրաքանչիւր կարգի հաստատեալ կան պաշտօնեայք ակնարկման կամաց բարերարին։ Այսօրիկ բանակք բիւրաւոր զօրացն հաւանեալք [12] և հնազանդեալք ի հաճոյս տէրութեանն՝ ցուցին զսպասաւորութիւն իւրեանց անհանգիստ օրհնութեամբ ի տէր. գործակից լինել բարերարին Աստուծոյ երախտեացն, և փառաբանիչք նորա մեծութեանն և աստուածութեանն. որով ուրախացեալք [13] ի պայծառութիւն արարչին միշտ։ Իսկ ստամբակեալն ի նոցանէ իւր բանակօքն և դժնդակ բարս ստացեալ՝ սատանայ անուանեցաւ, և դևք՝ որ նորա են արբանեակք չարի սպասաւորք. որք ցուցանեն [14] զգործս անօրէնութեան և հակառակ են արդարութեան վարուցն։ Զի ինքեանք անկան ի պատուոյ, և զմարդիկ որսան ի կորուստ. որոց Աստուած խոստացաւ տալ զնոցա պատիւն մարդկան։ Զի աստուածամարտ է և մեղսասէր, և հանապազորդ թշնամի մարդկան, և հակառակ արդարութեան և սրբութեան. և ոչ դադարէ յիւրմէ խորամանկութենէն ի խաբել ի կորուսանել զմարդիկ պէսպէս և զանազան չարեօք։ Վասն այսորիկ գրեալ [15] է ընդ սպառնալեօք ահաւոր տանջանացն և անմահ սատակմանն։ Ոչ միայն նմա և նորին զօրացն, այլ և որք սիրեցին առնել զկամս նորա խորհրդով և բանիւ և գործով. «Երթիցեն, ասէ տէրն, մեղաւորքն ի տանջանս յաւիտենից զոր պատրաստեալ է սատանայի և հրեշտակաց նորա» *։ Այսօրիկ ի կամաց լինին և ոչ ի հարկէ։

* Մատթ. ԻԵ, 46։

Իսկ մեզ պատուիրան տուաւ ի տեառնէ, զի ծանիցուք զնորա զպատուիրանսն [16] և զերծցուք ի նորա խաղէիցն միշտ, և աւետեօք բարի խոստմանցն գործեսցուք միշտ զբարիս առաջի տեառն յամենայն ժամ և մտերիմ հաճոյիւքն Աստուծոյ կալ յանվնաս մշակութեան [17], և յորդորել զբազումս ի լաւն և որ լին է փրկութեամբ և ամենազարդ սրբութեամբ: Վասն որոյ փառք և պատիւ իբրաբերար տեառնէն յաղագս արդար և սուրբ գործոցն պատրաստեալ կան: Զի յուսով զօրացեալ կան յամենայն փորձանս. ոչ վրիպեն ի ստոյգ [18] և յուղիղ վարուցս աստուածախրութեանն առաջնորդեալ [19] յամենայն առաքինութիւնս, և կալ մնալ անսասանելի: Զի զմարդն [20] յիւրում կարգին հաստատեալ [21] ի ներքոյ իւրոյ չափոյն, զի լիցի արբանեակ ճշմարիտ քարոզութեանն հրաւիրանաց վերին կոչմանն, և ըստ մարգարէութեան շնորհի խորհրդակից լինել կամաց արարչին: Եւ ի գիտութիւն աւետեաց նորոց կտակարանաց և ի նորոգումն [22] կենացն անմահից ուղիղ հաւատով ընծայել քահանայական շնորհիւ օծմամբ և հոգւով՝ խնամովք տեսչութեան սիրոյն Քրիստոսի: Մերկանալ զհին մարդն և զգենուլ զնորն՝ որ ըստ պատկերի Աստուծոյ է սուրբ և արդար *: Մերկանալ յամենայն չարէ աւաղանի շնորհօք, և մարմնով և արեամբն Քրիստոսի միանալ ի ժառանգութիւն որդէգրութեան հօրն երկնաւորի և ի թիւ իմաստուն կուսանացն և ամենայն սրբոց, որք ըզմարմինս իւրեանց ի խաչ հանին, որպէս ասաց Առաքեալ ** ամենայն ցանկութեամբք հանդերձ: Զի հոգւով գնասցուք և զցանկութիւնս մարմնոյ մի կատարեսցուք: Եւ այսպէս յամօթ առնէ զայն՝ որ զիշխանութիւնն [25] ունի սատանայ:

---

* Եփ. Դ. 22.

** Գաղ. Ե, 24.

Զի ապրեսցին որսացեալքն ի նմանէն շնորհօք արարչին, և առաքինեալք յարդարութիւն և ի սրբութիւն և ի ճշմարտութիւն հաւատարիմ պատերազմաւ՝ անարատ մաքուր[26] և անբիծ կատարեալ սիրովն որ ի Քրիստոս, և համբերութիւն ի վտանկս,[27] ուրքս հասցեն խոստացելոց բարեացն որ ի Քրիստոս:

Իսկ որք ոչ ընկալան զօրէնս արդարութեան կարգաց և կրօնից, և խաւարեցան անմտութեամբ սիրտք նոցա, մատնեալք եղեն ի բանսարկուէն յանառակ ցանկութիւնս և յամբարշտութիւնս և ի հպարտութիւնս և յամենայն անօրէնութիւնս, մատնեաց զնոսա Աստուած տանջանաց անմահ մահու: Սակայն խնամք արարչին ոչ թողին անդարման զաբարածս իւր. այլ վասն բազում մարդասիրութեան իւրոյ քարոզեաց զդարձ և զապաշխարութիւն ի քաւութիւն ամենայն մեղաց: Զի դարձեալ վերստին առցուք արտասուօք զաւազանին լուացումնն ի ձեռն հաւատարիմ և անսուտ խոստովանութեանն և ապաշխարութեանն, որ արտասուօքն խառնեալ է: Զի գթացեալ Տէր ողորմեսցի և տացէ զորդէգրութեան պշնորհս: Այնուհետև հնազանդեալ ընդ բարի կամացն՝ կատարեսցէ զարդարութիւնսն ամենայն, և խլեսցէ զչար սովորութիւնսն[29] ամենայն ազտեղի չար ցանկութեամբն հանդերձ. և ազատեալք ի դառն պղրահեաց գեհենին՝ և ժառանգորդ լինել կենդանի խնամոց բարերար սիրոյն սուրբ Երրորդութեանն. զի յորդորեալք[30] յառաքինութիւն և ի սուրբ վարս՝ ժառանգեսցեն զարքայութիւնն:

Զի յորժամ յաւելուածք սուտ կարծեացն մտին ի նախատեղծն մարդն յայրն և ի կինն ի մախանաց բանսարկուին, և ի հրապուրանաց հեշտութեանն քարշեալ՝ և սուտ կարծեօք աստուածք[31] լինել խաբեցան, և ոչ պահեցին ըզպատուէր արարչին իւրեանց, և ելին ի փափկութեան դր-

բախտէն և զմահ ստացեալ ժառանգեցին: Զի յառաջագոյն պատուիրեցաւ նոցա գործել և պահել զդրախտն ժուժկալութեամբ պահոց. յորս ուտել նոցա ի պտղոց, և յորս ոչ: Նոյնպէս և այժմ քարոզեցաւ ի մեզ պահք, յոր ուտելիս պահելի, և յորս լուծանելի. որպէս օրինադրեցաւ ի մարգարէիցն և յառաքելոցն և ի սուրբ հարց մերձաւորացն Աստուծոյ: Զի որ պահէ զսրբութիւն և զամենայն արդարութիւնս իմանալի[32] դրախտին, կայ մնայ ի նմին անմեղ ի դրախտի արդարութեան և առաքինութեան անկացն ի վայելս շնորհօք արարողին կենաց աստ, և անդ փոխել յանճառելիսն: Զայս ասելով ոչ իմանալի ասեմ զդրախտն, այլ տեսանելի առաջին մարդոյն. թէպէտ և ի մէնջ ծածկեաց հրեղէն սուրն ըստ խորին իմաստութեանն Աստուծոյ: Զի երկդիմի է իմանալ. մինն շօշափելի և տեսանելի, և միւսն իմանալի՝ որ յառաքինութիւնսն վերաբերի:

Զի պահք դաստիարակ են մարդկան: Զի որպէս զաղայս դաստիարակն հրահանգէ ի բաց կալ ի վնասակարաց և յօգտակարսն կալ մնալ և մի յանօգուտսն զբաղնուլ անժուժկալութեամբ: Վասն այսորիկ եդան մեզ պահք[33] խափանիչ անժուժկալութեան ամենայն վնասուց, որ ի մեզսն է հակամիտութիւն հոգւոց և մարմնոց, զի կատարեսցուք ըզսրբութիւն ահիւն Աստուծոյ. անցցուք յանդորրութիւնսն յանքննելիսն որ կայ և մնայ պահողացն:[54] Եւ մի որպէս որովայնամոլքն՝ որ նստան ուտել և ըմպել և յարեան ի խաղալ, և սատակեցան ի բարկութենէն տեառն իսկոյն յոլովք:[55] Զի զպատուիրանս նորա ոչ պահեցին. այլ նանրացան ի խորհուրդս իւրեանց, և զհրամանս պահոցն անարգեցին որկորըստութեամբ, և ոչ կացին յուխտին,[57] և խստացեալ պարգևացն ոչ հաւատացին և բարկացուցին զԱստուած. և էած ի վերայ նոցա հարուածս և սատակեաց: Իսկ որ ամ-*

* Ա. Կոր. Ժ, 7, 8.

փափեցան ի պնդութիւնս պահոց, և ցուցին զփոյթ համբերութեան և ժուժկալութեան, պահեցին զհրամանն տեառն, և կացին մնացին ժուժկալք յօրինադրեալ պահոն սրբութեան ամենայն բարեձև կարգօք, նորա ընկալցին զհանգիստըն որ ի Քրիստոս։

Զի են մեզ պահք բժիշկք. զի զոր անժուժկալութեամբ մթերեալ ի հոգի և ի մարմին զվնաս զպէսպէս ճաշակաց մեղաց, և ի միմեանց վերայ շեղջակուտեալ և նեխեալս յայլանդակ խորհուրդս և յանմաքուր վարս, ի ժուժկալութիւն և ի պահս մտեալ՝ նորոգեալ սրբէ ի մթերից մեղացն, և լինի բնակարան սրբութեան։ Զի պահք մերձ եկեալ՝ զդեղ առողջութեան շնորհելն ի ժուժկալս, և ջերմութեամբ հոգւոյ սիրոյ հալէ զմթերս ապտեղութեան և յառաքինութիւնսն վերաբերէ։ Եւ անուշահոտ վարուք ցամաքէ զժահահոտութիւնս և ի միջոյ բառնայ, և զառողջութիւն տայ հիւանդաց որք մեղօքն ապականեալք իցեն։ Եւ զսրբութիւն և զանարատ վարս յանձին ցուցանէ զկնի առողջութեանն՝ նահատակեալ ի սրբութիւն։ Եւ զայն որ վիրաւորեացն զնա ապտեղի ցանկութեամբ և անխտիր անառակութեամբ, հարցէ զնոսա սրբութեամբ և անարատ ամբծութեամբ. և դատեսցէ զորովայնամոլութիւնն միշտ պահովք, և խլեսցէ զչար սովորութիւնն յանձնէ։ Զի դատապարտեսցին ի ձեռն շնորհայն Քրիստոսի մեղքն և իշխան մեղացն, և առցեն զկատարեալ առողջութիւն փրկական խորհրդովն ի սատոյգ խոստովանութեան և ապաշխարութեան, պահօք և աղօթիւք ամրացեալ [57] ի վնասուցն։ Եւ այսպէս առցեն զպսակ յաղթութեան՝ որ գովութեամբ և պարծանօք յօրինեալ է պահողացն։ Զի բազմարուեստք են [58] կարգք պահոց, և բազում շահս ստանան անձանց՝ որք սիրեն զնա և պահեն միշտ։

Պահք կատարեալ հաւատոյ ճշմարտութեան ազդեցութիւն. յԱստուծոյ ակնկալութիւն և յայտն առողջութեան

տանի անարատ և ամբիծ և սուրբ երախտեօք սիրոյն որ առ Աստուած: Եւ այնոքիւք դադարէ այլանդակութիւն մտացն և շուայտութիւն զգայութեանցն. աչաց ի տեսանել և ականջաց ի լսել, լեզուի առ ի խօսել, և ձեռաց առ ի գործել, և որտիւ ուղիղ, և ճաշակելեօք առ ի պարկեշտութիւն. ամենեքումբք պնդեալ ի պահս սուրբս, և զամենայն կամս ցանկութեան զգայութեանցն արմատաքի [59] խլել, և զմոռացումն բարեացն զարթուցանել նշողիւք աստուածսիրութեանն: Եւ հրաժարել ի չար լուծմանէ մեղացն, ի պոռնկութենէ, յորովայնամոլութենէ, յամբարտաւանութենէ, ի նախանձու, ի բարկութենէ, յագահութենէ, ի գողանալոյ, ի սըտութենէ, յերդմանէ, ի չարախօսութենէ, ի զրկելոյ, ի նենգութենէ, ի ցասմանէ, ի թշնամանաց, յոխակալութենէ, ի ծուլութենէ, ի ծիծաղելոյ, ի խեղկատականաց, յարբեցութենէ և ի բամբասանաց: Զայսոսիկ զմահաբեր լուծուածըս [40] ի բաց փախել ուղիղ խոստովանութեամբ, և առնուլ զդեղն կենաց, և առողջացեալք սիրով Հոգւոյն՝ յառաքինութեան ասպարէզն նահատակեսցուք ընդդէմ վնասակարացն զուգլութեան վարս: Եւ միամտութեամբ հնազանդեալք բարերար կամացն փակել զամենայն յօրդորումն չար բարուց: [41] Եւ զչար և զդառն շարժմունս մտաց և զգայութեանց արգելուլ միշտ, որ է լրումն և կատարումն պահոց. որ հասուցանէ ի դրունս կենաց: Արմատացեալք ի ներքոյ պահոցն ժուժկալութեամբ համբերութեամբ, և զգուշութեամբ ի զգաստութեան մնալով [42] և յորդորել ի գութ և յողորմութիւն առ կարօտեալս հեռաւորս և մերձաւորս ի փառս և ի պարծանս համօրէն ատենին և յարութեանն մեռելոց:

Պահք զծածկեալ հիւանդութիւնս որ ի մարմնի՛ արտաքս հանէ. որպէս դեղ մաղձոյ՝ որ ընդ ճաշա՛կելն իւրում զմաղձն արտաքս փախէ և զառողջութիւն տայ, սոյնպէս և զմեղսն

պահք. զի ի նուազել կերակրոց՝ և մարմինն հանդարտանայ և սրբի: Զի զմարմնոյ պէտս երթեալ՝ կորուստ անձին սատանայ. իսկ զհոգւոյ՝ զկեանսն յաւիտենականս ի տէր: Պահք զօրացուցիչ են հոգևոր փառաց և խափանիչ մարմնական շարժմանց. զի ի զօրանալ միայն՝ միւսն տկարանայ: Զի որպէս գիշակեր թռչունք տկարանան ի թռչել յանխնայ ուտելոյն, և դիւրաւ ըմբռնին յորսողաց ի մահ, իսկ սակաւակերքն երագաթռիչք են և անըմբռնելիք յորոգայթադիր որսողաց, նոյնպէս է իմանալ զորկորամոլսն և զպարկեշտսն ի պահս սուրբս:

Եւ Եղիա [43] մարգարէն յորդորէ զմեզ ի պահս պնդութեան, որ պահեաց զքառասուն տիւ և զքառասուն գիշեր, և երարձ զամենայն կարիս յինքենէ զմարդկային շարժմանց, և երևման Աստուծոյ արժանաւոր լինել՝ վերացաւ հրեղէն կառօք * յերկինս: [44] Այնպէս և Մովսէս պահեաց զքառասուն տիւ և զքառասուն գիշեր. ոչ մի անգամ, այլ երրորդ անգամ, [45] զի զինքեան զկարիսն լուծցէ, և զբարկութիւնն Աստուծոյ որ ի վերայ ժողովրդեանն՝ որ ուտելով և ըմպելով ի խաղս լինել պաշտեցին զգլուխ որթուն և սատակեցան, արգելցէ պահօքն, և լիցի օրէնսդիր ** յԱստուծոյ՝ Իսրայէլի: [46] Այնպէս Յովհաննու ամենայն կենացն ըղպահօն բացայայտէ. որ ոչ ուտէր և ոչ ըմպէր՝ ի բերից երկրաւորաց կազմեալ կերակուր. այլ մարախով և վայրենի մեղերբ զկէտս վճարէր յանապատին: Եւ սրբեալ ի պահոց՝ եղև կարապետ և տեսող անճառելցն ըստ աւետարանին: Այսպէս և տէրն [47] յետ մկրտութեանն պահօք՝ պնդեալ աստուածախառն մարմնովն ընդդէմ թշնամւոյն զպատերազմն առնէր. զի այնպէս ուսուսցէ զմարդիկ սպառազի-

* Գ. Թագ. ԺԹ, Դ. Թագ, Բ, 11.
** Ելք. ԻԴ.

նել պահովք ընդդէմ թշնամւոյն մարտից, և նահատակեալ պահովք և բովանդակ առաքինութեամբք՝ առնուլ շնորհս յաղթութեան և յաղթեալ փորձողին։ Որպէս և տէրն մեր որ վերացաւ ի թևս հոգւոյն ընդ աջմէ մեծութեանն ի բարձունս, և զնոյն իսկ զմարտն պահովք եցոյց մեզ։ Զի զորկորստութիւն և զամենայն զբօսանս որ են բեռինք մեղաց՝ ի բաց ընկեսցուք, զի արժանի լիցուք թևօք [48] հոգւոյն վերանալ և զտէրն փառաց տեսանել, և լսել եթէ՝ եկայք օրհնեալք հօր իմոյ, ժառանգեցէք զարքայութիւնս իմ։

Զի ամենայն սրբոցն՝ պահք եղեն առիթ սրբութեան և յերկրէս ամբառնալոյ և մերձենալ ի հոգեղէնս։ Զի որպէս հրով զսրբութիւնսն ընկալան ի ձեռն պահոց, և ապա ընտանեցաւ նոցա հուրն կիզող, որպէս երից մանկանցն ի հնոցին՝ որ պահովքն էին սրբեալք։ Զի հուր զայրելիսն այրէ, և զսրբեալսն պահովք առաւել լուսաւորէ և պայծառս կազմէ լուսով։ Իսկ որ ոչն էին արժանի և մերձ եղեն ի հուրըն, իբրև զխռիւ այրեցան. զի չէին ընկալեալք ի պահոց զսրբութիւն։ Իսկ եթէ արդարոց կատարումն են պահք՝ ի հոգեղէնս և ի հրեղէնս [49] լինել, քանի՛ օգուտս բերէ մեղաւորաց՝ որ ի պէսպէս ցանկութիւնս իցեն։ [50] Զի սրբեալն պահովք՝ ազատէ ի մեղաց զներքին և զարտաքին մարդն ի բծից անտի, որպէս զոսկի և զարծաթ հրով սրբեալ և պարզեալ յաղտոյ անտի. [51] և այսպէս լինի անօթ պատուական պիտանի տեառն իւրոյ. և կամ որպէս զերկաթ ընդրեալ ի գործողաց կարծր և մաքրական հրով կազմեալ ի պէտս մարդկան։ Զի և սուրբ առաքեալքն և մարգարէքն [52] նախ ինքեանք սրբեցան պահովք և ամենայն սուրբ կարգօք, և ապա քարոզեցին զհաւատս և զուղիղ վարս համդերձ ամենայն սրբութեամբ։ Որք հաւատացին ի ձեռն շնորհացն ի Քրիստոս, սրբեցան և եղեն օթևան [53] աստուածութեանն։ Զի եղեն սուրբքն աղբիւրք հրեղէնք, և զամե-

նեսեան արքունցին հրով Հոգւոյն սրբութեամբ պահոց• որք ընթանան ի կէտ կոչմանն որ ի Քրիստոս։

Պահք աղ են, որ անուշացուցանեն զնեխութիւնս հոգւոց և մարմնոց աղտեղութեան մեղաց, և անուշացուցանեն ընդ անոյշ կամս Հոգւոյն սրբոյ անարատութեամբ• զի և աղ յերկրէ ելանէ և անուշացուցանէ զայլսն։ Պահք յորդորեն զմարդիկ յապաշխարութիւն և յուղղութիւն ածեն• և ըստ խոստովանութեան կարգին հաստատեալ ի պահս՝ լուծանին մեղքն։ Զի որպէս զանասուն համարեալ են՝ որք ոչ զգան ի ձեռն պահոցն սրբութեամբ մերձենալ առ Տէր։ Եւ իմաստունք են՝ որ զառհաւատչեայ յուսոյն կենաց ընկալեալ են յանձինս• և յիմարք են՝ որ ի պարտիս[54] յուսահատութեան իւրեանց կապեալ են։ Եւ երկոցունց պիտոյ են պահք• զի որ կատարեալ է ի գիտութեանն, անուշացուցանեն պահք զճաշակս սրբութեան ըստ հաճոյից Տեառն, և զախմարսն ածեն ի գիտութիւն ճշմարտութեան հաւատոյն։ Եւ որք կենդանիքն են առ սրբութիւնն, ամրացեալ պահեն անարատս պահք։ Եւ որ մեղօքն են մեռեալ, կենդանացուցանեն պահք, խառնեալ ընդ նմա զամենայն արդարութիւնս։ Զի որպէս կերակուրք աղիւ համեմին և ի պէտս մարդկան հրով անուշանան, այսպէս կամք մտաց և մարմնոյն կատարեալ պահովք համեմին ի շնորհաց Հոգւոյն, և ի մեծութիւն տէրութեանն նուիրին և տան զխաղաղութիւն։ Զի Հոգին սուրբ թշնամանի յանժոյժ որկորատութենէ և ի ստահակ յանդգնութենէ և ի զբօսանաց արբշռաց,[55] որք զանձինս իւրեանց եդուն ի կամս շւայլութեան։ Զի որպէս անժուժկալութիւնն Եւայի և Ադամայ անէծս ի վերայ էած և մահ, նոյնպէս ծնելոցս ի նոցանէ որ զնոյն անժուժութիւն ունին՝ արտաքոյ բարւոյն ուրախանալութեամբն անկանիցին։ Իսկ պահք և ժուժկալութիւն փրկչին եբարձ զթշնամութիւն ի միջոյ և հաշտեցոյց զԱստուած ընդ մարդկան ի ձեռն խաչի

և կամաւոր չարչարանաց. որք հաւատացին կենսաբեր քարոզութեանն, որ կոչեաց զմարդիկ ի կեանս վերստին նորոգմանն:

Պահք պարիսպ հզօր և դուռն ամուր, որ պահէ ի մոլից վնասակարաց ի խորամանկ թշնամւոյն մերոյ: Զի մի լիցուք որպէս զորդիսն Հեղեայ * անժոյժք, որ զբարկութիւն Աստուծոյ շարժեցին ի վերայ ինքեանց և հօրն և ժողովրդեանն Աստուծոյ: Այլ ժուժկալք որպէս Սամուէլն, ** որ պահօք սնեալ ի մանկութենէ՝ եղև գլուխ մարգարէից: Պահք շիջուցանեն զբորբոքեալ հուրն ցանկութեան. զի որպէս հուր ի նիւթոյ պակասեալ շիջանի, նոյնպէս և որովայնամոլութիւն և արբեցութիւն պակասեալ՝ ցանկութեանն բոց շիջանի, և սրբութեանն և արդարութեանն բորբոքի պահովք սնդեալ: Պահք ցամաքեցուցանեն զգիջութիւն պղծութեան. և որպէս յերաշտութենէ նեխեալ երկիր չորանայ, այսպէս դարշացեալ անձն ի գիջական զազիր ախտէ սրբեալ անուշահոտանայ: [57] Պահք արգելու զեռանդն ցանկութեան մանկանց. որ հրով ախտին տոչորի ի թշնամւոյն շարժմանց: Պահք դադարեցուցանեն զլկտութիւնս որ ի կերողութենէ և յարբեցութենէ յառաջագային. զի սրբեալ զմարմինս վերստին հաստատի սրբութիւն: [58] Պահք խափանեն զյոյզս մտաց [59] և մարմնոյ՝ պղտորեալս ի յուզից ցանկութեանց հոսմանց, և յստակեալ սրբուցանէ զիմանալի և զհոգեկիր երկիրս:

Պահք նաւահանգիստ են խաղաղ ծովածուփ ալեաց ախտից և ամենայն վնասուց, և առաջնորդէ ի կենաց նաւահանգիստն, զի մի վնասեսցի յորկորստութենէ և յարբեցութենէ ի մահ՝ ի ծովու մեղաց ալէկոծելով: [60] Պահք եկեալ՝ խաղաղութիւն առնեն ամբոխից, և հանգուցանեն

* Ա. Թագ. Դ, 4:
** Անդ. Ա, 11:

զօպաստաւորս, և ամենեցուն առաջնորդ լինի ՚ի զգաստութիւն՝ զվերինսն խորհելով որ ի Քրիստոս: Պահք սանձք է ստահակաց՝ որ անարգել են յանիրաւութիւնս: Զի որպէս ձիոյ սանձս ի բերանս դնի, և ամենայն մարմինն նուաճի և անսայ ի կամս երասանակալին առ հոգևոր պատերազմն: Իսկ որոց միտքն վառեալ իցեն արդար և սուրբ խորհրդովք, զգայարանն կազմեալ[61] պատուիրանապահութեամբն, և եթէ ոչ ունի զպահոցն պնդութիւն, յարձակել[62] մարտին դիւրաւ ըմբռնի:

Առաւել ևս զգուշացուցանէ ի մսոյ և ի գինւոյ բանս խրատու. զի գինի առաւել յիմարեցուցանէ զգայութիւնս և զմիտս և եռացուցանէ զցանկութիւնս և յանառակութիւն շարժէ, մանաւանդ զմանկութիւն. և հոսումն գիջութեան ի մարմնոյն լինի: Գինի թմբրութիւն սրտի, պապանձումն բերանոյ, խաւար աչաց, խլութիւն ականջաց, լուծութիւն[63] ձեռաց, գայթակղութիւն ոտից, ցնորք խորհրդոց, ծանրութիւն քնոյ, թշնամի արդարութեան: Գինի զերկիւղ մերժէ,[64] զպատկառանս ի բաց մղէ, և զյիշատակս պատուիրանացն քամահէ, և զխնամս սուրբ սիրոյն զանցուցանէ, և յուղիղ հաւատոցն զարտուղի հանէ, և զահեղ դատաստանն անյիշելի թողու, և ոչ տայ թոյլ զմտաւ ածել զմահ և զանվախճան տանջանսն:

Զայս ասելով[65] ոչ ի հիւանդաց և ի տկարաց արգելում զսակաւապիտութիւն գինւոյ ըստ Առաքելոյ խրատուն վասըն ստամոքսի և ստէպ հիւանդութեան առ տկարս և առ ծերս: Իսկ որ կարողք և մանկագոյնք են հասակաւ, զգոյշ կացցեն ի մսոյ և ի գինւոյ, զի մի դիւրաւ ըմբռնեսցին ի հանապազորդ թշնամւոյն, որսացեալք ի նմանէ ի նորա կամս: Զի գինի և արբեցութիւն ապականեն զկատարեալ արս իմաստունս. իսկ զանկատարս մարմնով և մտօք զի՞նչ պարտ է ասել: Զի որպէս հրով տոչորէ և վառէ զցանկութեան

բոց. զի հուր զմարմինն միայն այրէ, իսկ միս և գինի զհոգին շարժմամբ ցանկութեան։ Եթէ հուր առանց նիւթոյ շիջանի, ապա և ցանկութիւն ի պահոց։ Ապա եթէ անարգել յուտել և յըմպել և ի զբօսանս իցէ մանկութիւնն, մի ակն ունիցի ողջախոհանալ ի սրբութիւնս, այլ եռացեալ ցանկութիւն որովայնամոլութեամբն՝ հեղու զհոսանս և այրէ զորս գտանէ ախտին սիրովն, [66] և կազմէ դատաստանս ինքեան [67] սրտմտութեան և հաղորդակցաց իւրոց։ «Զի որդն նոցա, ասէ մարգարէն,* ոչ վախճանի և հուրն ոչ շիջանի. և եղիցին ի տեսիլ ամենայն մսեղեաց»։ [68] Այսքան պատիժք ունին որովայնամոլք և արբեցողք. որք կան և մնան ի նըմին և ապականեն զանձինս պէսպէս գարշութեամբ ախտիւք։

Պահք ճշմարիտ զամենայն ցանկութիւնս ի բաց մերժէ զհոգւոց և զմարմնոց, և հեռաւել յամենայն արդարութիւնս, և ժուժկալ լինել՝ որք զինուորինն ընդդէմ հոգւոց և մարմնոց առ ի լուծումն մեղաց։ Այլ կալ մնալ ի բարեպաշտութեան ջանս [69] ի Քրիստոս Յիսուս ի տէր մեր. որում փառք յաւիտեանս. ամէն։

---

* Ես. ԿԶ, 24.

Ժ

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ՀԱՅՈՑ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ[1]

ԵՐԱԽՏԱՒՈՐՈՒԹԻՒՆ ԱՆՁԵՂՋ ԲԱՐԵՐԱՐ ԿԱՄԱՑՆ ԵՒ ՅՈՐԴՈՐՈՒՄՆ Ի ԼԱՒՆ ԵՒ ՑԱՌԱՒԵԼՆ ԸՍՏ ՃՇՄԱՐԻՏ ԱՌԱՔԻՆՈՒԹԵԱՆՆ

Ի ՓԱՌՍ ԱՄԵՆԱՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹԵԱՆՆ ՃԱՌԵԱԼ

ՇՆՈՐՀՍ *ունիմ երախտեաց բարերարութեանն անսկիզբն և անփոփոխ մշտնջենաւոր տէրութեանն սուրբ Երրորդութեան, որ աղբիւրն է ամենայն արարածոց երկնաւորաց և երկրաւորաց, և որ ի նորա արարածք են։ Եւ արբուցանէ զամենեսեան առ հասարակ բարերար կամօք, ամենագիտ սիրոյն խնամովք. զի ժառանգորդս արասցէ զբանաւորս մշտնջենաւոր երանութեանցն։*[2] *Զի առողջ, սուրբ և անաղտ*[3] *լիցուք ի պատուիրանացն պահպանութիւնս, և անբիծ երախտեօք՝ մտերիմ սիրով և ուղիղ հաւատով լինել օթևան սուրբ՝ ամենասուրբ Երրորդութեանն. և կալ ի մշակութեան հանապազ վասն առնուլ սիրոյ արարչին,*[4] *և կենաց և փրկութեան ընկերաց. աշակերտել բարերար կամացն և հնազանդել, և ցուցանել զհանդէս լաւութեան ըստ հոգևոր օրինացն յորդորման*[5] *յուսոյն։ Առեալ*[6] *զկենդանի խրատուն զսերմնն, և հաստուցանել զարմտիս հարիւրաւորս. զի որպէս եղեալք ի նմանէ, նոյնպէս խնամեալք ի նորա շնորհացն։*[7] *Որպէս երկիր բարի զսերմն բարի*[8] *ընկալեալ՝*[9] *բազմապատիկ առնէ զարդիւնս արմտեացն, նոյնպէս զսերմանեալն ի մեզ խրատս բազմապատիկս արասցուք*[10] *արդիւնս իշխանական կամօք. զի և ընդրութիւնք են ի տեսողէն լաւաց և վատթարաց արմտեաց։*

Զի որ զընկերն սիրէ ըստ Աստուծոյ սուրբ սիրոյն՝ արմունք լինին սուրբ. է որ ի ձեռն շահաւոր օգտից, և է որ ի ձեռն բարի խրատուց [11] յորդորել ի հոգևոր շահս, և առնել զինասակարսն սիրով հոգւոյն: Զի «Սէր առէ,* ոչ կերպարանի, ոչ ամբարտաւանի, ոչ ամբարհաւաճէ, ոչ նախանձի, ոչ խորհի զչար ընկերի, այլ զբարի. ամենայնի տանի, ամենայնի համբերէ, և ոչ երբէք սէր ի չար փոխի ի բարւոյն»: [11] Եւ ամենայն առաքելոց և մարգարէից գլուխ սէր է՛ որ ի միասին և յԱստուած կապէ: [12] «Սիրեսցես զտէր Աստուած քո, առէ, յամենայն սրտէ. և զընկերն քո իբրև զանձն քո»: ** Զի որ կայ ի սէրն, կայ յԱստուած: Զի սիրել զընկերն՝ զԱստուած է սիրել: [13] Եւ բազում շահս անձինն ստանալ յԱստուծոյ և ընկերաց սիրողաց Աստուծոյ: Իսկ որք անձնասէրքն են աւելի քան զարժանն, զընկերին շահս յինքեանս ձգեն. և անդ լինի զրկումն և զլացումն և ագահութիւն, ատութիւն, երդմնահարութիւնք, զզուել հարկանել սպանանել: Եւ վասըն այսորիկ օրինադրեաց մարգարէիւք, և քարոզեաց առաքելովք, և խրատէ քահանայապետիւք և ժառանգաւորօք եկեղեցւոյ, զի ողջախոհացին յարգարութիւն և ի սրբութիւն և յիրաւունս. յուսով արքայութեանն առնուլ ստա զառհաւատչեայ արդարութիւն [13] և անհոգութիւն մեծարանօք ի գոհութիւն Աստուծոյ. զանձն և զտուն ազգօք ազատել ի պատժոց և օրհնիլ ի տեառնէ. և ի հանդերձեալսն փառս և պսակս անեղծս պարծանօք ի Քրիստոսէ:

Այլ և զթագաւորս և զիշխանս և զդատաւորս ի խաղաղութիւն և ի շինութիւն աշխարհի կարգեաց Աստուած. զի զամբարիշտս, զշունս, զգողս, զկախարդս և զամենայն անիրաւս պէսպէս տանջանօք և մահուամբ զարհուրեցուցեն. զի ամենայն չարագործք ըմբռնեալ ի յահէ արգելցին

* Ա. Կոր. ԺԳ, 4.

** Մատթ. ԻԲ, 36.

ի չարեաց։ Բայց է և ի նոսա անիրաւութիւնք նման նոցա և առաւել ևս, որք կաշառօք և կամ այլ ևս չարեօք բազմացուցանեն զանօրէնութիւնս համարձակեալ ի վնասս։ Եւ վասն այսորիկ բանան դրունք բարկութեան [14] սովոյ և սրոյ և գերութեան և պէսպէս վտանգից և մահուց. և յետ աստեացս ի հրախառն խաւարն արտաքին, ուր լալ աչաց է և կրճել ատամանց։

Իսկ իրաւախորհքն և արդարադատքն փրկութեան և կենաց պատճառք լինին բազմաց, առողջութեան և խաղաղութեան և շինութեան աստ, և անդ փառօք պսակեալ ի գլուխ բազմականացն արդարոց։ Զի աղբիւրք են յիրաւանցն Աստուծոյ՝ ուստի կեանք բաշխին բարեգործացն, և հարուածք և մահք անիրաւացն։ Եւ լոյս [15] գիտութեան աստուածային գրոց յայտ առնեն զբարեգործացն բարի հատուցումն, և անիրաւացն զհարուածս բարկութեան։ [16] Եւ յերկոցունց կողմանց յայտնի լինին տարբերն իրաւունք՝ զարդարոյն փառաւոր առնէ, որ հոգևոր օրինօքն հաճոյացան [17] տէրութեանն, և կացին ի ճշմարտութեան ի սրբութեան յամենայն արդարութիւնս. որք և անանց լուսովն փառաւորեալ պսակին ի տիեզերական ատենին յաւուրն յետնում առաջի երկնաւորաց և երկրաւորաց։ Ուր և զանիրաւսն անարգանօք դատապարտէ ի պատիժս, որք արհամարհեցին [18] զպատուիրանս նորա և ոչ պահեցին զսրբութիւն և զիրաւունս և չթողին յոյս անձանց [19] և վասն այսորիկ եղեն ժառանգորդք յաւիտենական տանջանացն։

Զի յանձնիշխան կամացն այլ և այլ բարք ծնանին, և ի բարուցն գործք և ի գործոցն անուանք չար կամ բարի, և ըստ անուանն հատուցումն։ Եւ բարւոյ կամացն ծնունդ բարի և հնազանդութիւն, և ի հնազանդութենէ հպատակութիւն, և ի հպատակութենէ սէր, և ի սիրոյ բազ-

մաշահ երախտիք բարեաց։ Դոյնպէս [20] յարհամարհանաց և ի ծուլութենէ և յանհնազանդութենէ ամենայն դժնդակութիւնք ծնանին, և ապախտաւորութիւն առ երախտիս արարչին մերոյ։ Եւ պատճառ այսոցիկ ծննդոց անձնիշխան կամակարութիւն մնաց. [21] որ զանբռնելիսն յերևելիս բերէն ի լաւն կամ ի վատթարն համամիտեալ։ Այլ որ ընտրէ զբարին և առնէ, զնա երանելի է, իսկ ապիրատքն պատժին խրատիւք. զի զղջասցին և ապաշխարեսցեն զկամակար վարսըն անիրաւութեանց, և գտցեն զողորմութեան շնորհ ի բարերար տեառնէն՝ որ գթայ առ արարածս իւր և ոչ թողու ի խնամակալ [22] սիրոյն իւրոյ։ Զի զանբաւ [23] և զանպատում բարիսն տայ որք խնդրենն ի նմանէ, և լինի պարգևատու որք աղաղակեն առ նա ի տուէ և ի գիշերի, և ըստ աւետարանական երանութեանցն կոչէ յիւր արքայութիւնն և ի փառս. զի ճշմարտեալ ըստ կարգացն Քրիստոսի՝ ժառանգեսցուք զերանութիւնսն։

«Երանի, [24] ասէ տէրն, աղքատաց հոգւով, զի նոցա է արքայութիւն երկնից»։ * որք վասն աւետեացն՝ հոգւով կամաւ աղքատացան, ի բաց ընկեցեալ զմարմնաւոր դժնդակ մեծութիւնս՝ և հոգևոր յուսովն զգեցան զմշտնջենաւոր մեծութիւնսն։ Սուրբ մտօք և մարմնով անկեղծաւոր հաւատով կատարեցին [25] զկամսն տեառն սիրով. որպէս իմաստուն նաւապետք ուղղելով զնաւ մարմնոյս ի ծովածուփ աշխարհական ալեաց, թափեալ զծանր բեռինսն յաշխարհիս ծովու, և հոգւով [26] թռուցեալ հասցեն ի նաւահանգիստն խաղաղութեան։ Այսպէս հոգւով աղքատացեալքն երանին, որ ընդ ամենայն վտանգս աշխարհիս անցանելով հոգւով և ճշմարտութեամբ անվնաս պահեցին զանձինս ի չար ցանկութեանց, ի փառասիրութենէ, յընչասիրութենէ։ [27] Առ ձեռն

* Մատթ. Ե, 3։

պատրաստ ունելով զամենայն ցանկութիւնս, և զամենեքումբք զանց արարին վասն անճառ երանութեանն՝ որ կայ պահի յուսացելոցն ի Քրիստոս, որ վասն մեր աղքատացաւ ստուգապէս, որ տէրն է փառաց։ Զի հայեցեալք յելս գնացից կամաւոր աղքատութեանն երախտաւորին՝ հասցեն յոթեւանս կենաց ի դուռն փրկութեան յանփոփոխ երանութիւնսն, որ լին է կենդանի անուշակ երանութեամբ։

«Երանի հեզոց, զի նոքա ժառանգեսցեն զերկիր»։ ** Զաւետիս եկեղեցւոյ ասէ երկիր. որ ամենաշահ [29] կենօք հանդարտութեամբ են վարք, ազատեալք յամբոխից և ի խռովութենէ փորձանաց։ Ցամենայն դժնդակացն որք զինուորին՝ անշարժ մնալ միշտ։ Հեզութեամբն ցածուցանել զամենայն բարկութիւն և զվնասակար շարժմունս՝ զինքեան և զամենեցուն, որ ամբաստանօք [30] լի է, ի կշտամբանս, ի տոյժս, ի տուգանս, յանարգանս, յամօթ և ի պէսպէս տանջանս։ Իրաւամբք հեզութեան առաջնորդել յամենայն արդարութիւնս. յամբծութիւն, ի սրբութիւն, ի սէր անշարժ, յուղիղ հաւատս։ Շնորհօք հեզութեամբն բնակել յերկրի, և զուարթածաղիկ առ ամենայն առաքինութիւնս անուշահոտ հեզութեամբն զարդարեալ, և յուսով ակն ունել մշտնջենաւոր անփոփոխ անվախճան կենսատու երանութեանցն։

«Երանի, ասէ, սգաւորաց, զի նոքա մխիթարեսցին»։ *** Որոց ընկալեալ են շնորհս ի Հոգւոյն որ առ Աստուած. սէր բաղձալի, խնդիրս [31] արտասուօք. անմեկնելի [32] լինել յԱստուծոյ սգաւորն, որ անձկայ շնորհօք տեսանել զանճառելին՝ որ սրբոյն տուաւ։ Այլ և զզղջացեալսն է իմանալ սըգաւորս, [33] որք դառնան ի չարաչար վարուց ստոյգ խոստովանութեամբ, և հանապազ արտասուօք խնդրեն զթողութիւն մեղաց [34] յամենեցունց տեառնէն. զի կարասցեն հա-

---

* Անդ. Ե, 4.

** Անդ. Ե, 5.

սանել յօթեւանս կենաց՝ որ լին է անզեղջ ի մխիթարել [35] և զուսլթածայիկ զուրախութիւնսն ընդ ճշմարիտ սգաւորսն ժառանգել զերանութիւնսն՝ որ յաւիտենից մխիթարութիւնն է։

«Երանի որ քաղցեալ և ծարաւի իցեն արդարութեան, զի նոքա յագեսցին»։ * Որք հրաւիրանաւն կոչեցան ի հոգեւոր հարսանիսն, զի վայելեսցեն զբարիսն. որք մեծաւ բաղձանօք ցանկան լինել արդարութեան ճաշակօքն։ Որպէս քաղցեալքն և ծարաւիքն ըստ համահամ քմացն խորտկաց և ըմպելեաց լցուցանեն զպէտս ցանկութեան ի կերակուրս և յըմպելիս, այսպէս և փափաքողք աստուածայնոյն վայելից՝ արժանաւոր կալզօք փութան հասանել ի բաղձալին և ի յոյժ ախորժելի ճաշակումն՝ որ կայ մնայ միշտ, որ երանութեամբն է զարդարեալ յարքայութեանն արդարոց։ Որ միշտ վայելեն զաննուազ և զանսպառ բարիսն, որք աստէն ժողովեցին ի շտեմարանս անմահ կենացն։ [36]

«Երանի որք լան այժմ, [57] զի նոքա ծիծաղեսցին»։ ** Որք զերծանել ցանկան [58] յերկրաւոր զբօսանաց, ի յագահութենէ, ի չար ցանկութեանց. և ջանան մտանել առ Աստուած, ջերմեռանդ արտասուօք խոշտանգեալ զանձն և նեղեալ բազում նեղութեամբք. զի սուրբ և անբիծ և անարատ երախտեօք բարերարին հասցէ յուրախութիւնսն տեառն ի վայելսըն անուշակս հանգստեան սիրոյն սրբութեան՝ լինել զբաղձանս անձկոյն [59] որ առ Աստուած, զոր արտասուօքն խնդրէր միշտ զերանութիւնսն զորդէգրութեան շնորհս, որ լին է անճառ խնդութեամբ ի փառս աստուածութեանն։

«Երանի ողորմածաց, զի նոքա ողորմութիւն գտցեն»։ *** Որ գործակցութեամբ ողորմութեանցն Աստուծոյ նմանեալ,

* Մատթ. Ե, 6.

** Ղուկ. Զ, 21.

*** Մատթ. Ե, 7.

ույժ օգտութեան առեալ յԱստուածեղէն զօրութենէ անտի. զի ամենեցուն ողորմեսցին առաջնորդել, ուսուցանել, օգնել նեղելոց, լցուցանել զկարօտեալս ի պէտս[40] հոգևորս և մարմնաւորս։ Զի ընկալցի զբարիսն յերկրի[41] տաս ողորմութեան շնորհս ի տեառնէ, և ի հանդերձեալսն զառատապարգև բարիսն՝ որ լի՛ն է ամենայն երանութեամբք, զոր պատրաստեաց Աստուած ողորմածացն։

«Երանի այնոցիկ որ սուրբ են սրտիւք, զի նոքա զԱստուած տեսցեն»։ * Որ շնորհօքն Աստուծոյ հաւատով և ճշմարտութեամբ, սրբութեամբ և արդարութեամբ զամենայն բիծս մարմնոյ և զմնաց սրբել՝ զչար ցանկութիւնս։[42] Եւ մաքուր խորհրդով և անարատ մարմնով հայել ի փառս[43] տեառն. իբրև ընդ հայելի տեսանել իմանալեօքն զիմանալի աստուածութեանն զլոյս։ Ապա եթէ ժանգով մեղացն աղտեղեալ իցէ, չար ցանկութեամբքն և չար խորհրդովքն և չար գործովքն, և ոչ սրբէ զխորհուրդս և զզգայարանսն և նայի ի վեր ի ճառագայթս աստուածութեանն որ ի Քրիստոսն է արդարութեան արեգակն,[44] ոչ տեսանէ զլոյսն մեծ ամենասուրբ Երրորդութեանն, որ յիմանալիսն ծագէ և լուսաւորէ զսուրբսն սրտիւ և զանարատսն անդամօք։ Զի ժառանգեսցեն զերանութիւնս կենացն անմահից, որ տայ զառհաւատչեայ տեսութիւնն ի Քրիստոս Յիսուս։

«Երանի խաղաղարարաց, զի նոքա որդիք Աստուծոյ կոչեսցին»։ ** Որ գործակից են Որդւոյն Աստուծոյ, որ արար խաղաղութիւն և հաշտեցոյց զՀայր ընդ արարածս։[45] Զի որ հրաժարեալ է ի չար ամբոխից և ի խռովութենէ և ի ցասմանէ և ի չար ցանկութենէ, և խաղաղացեալ սիրով՝ այնպիսին ունի զհիմն խաղաղութեան մտաւոր հոգւոյ ի Քը-

* Մատթ. Ե, 8։

** Ընդ. Ե. 9, Կող. Ա, 20։

րիստոս։ Զի որպէս Որդին Աստուծոյ որ եբարձ զխռովութիւն որ յաղագս մեղացն պարտեայն էր առ մարդիկ, և աւետարանեաց և մեզ զխաղաղութիւն, նոյնպէս, [46] ասէ, լինել խաղաղարարին։ Զի թէ մեծաց իրաց խաղաղարար լինի և կամ փոքունց յաղագս Աստուծոյ և մարդկան փրկութեան, և բառնայ ի միջոյ զվնասակար թշնամութիւն Հոգւոյ և մարմնոյ, հաշտ և խաղաղականին հանդիպի, և զանուն և զփառս Որդւոյն Աստուծոյ ժառանգէ հանդիսիւք լաւութեան, սուրբ և անբիծ և անարատ խաղաղարար ի Քրիստոս. որ աստ մեծարի և պատուի, և անդր բարձրանայ և փառաւորի խաղաղարար երանութեամբք ի Քրիստոս։

«Երանի որ հալածեալ իցեն վասն արդարութեան, զի նոցա է արքայութիւնն երկնից»։* Զվերջին զհանդէս ցուցանէ բանս և զամենայն առաքինութեանց. [47] զի որ յամենայնէ օտար է, և մասն չունի ինչ ընդ երկրաւորս [48] և պատճառս ինչ եկամուտ զբաղմանց, անյար ի վնասակար ցանկութիւնըս, այնոքիկ են որ ի չարէն հալածեալք և առ Աստուած դիմագրաւեալք հաւատով վասն ճշմարտութեան աւետարանին քարոզութեան։ [49] Որպէս և Առաքեալ** ասէ՝ եթէ «Որ կամիցին աստուածպաշտութեամբ կեալ ի Քրիստոս Յիսուս, [50] ի հալածանս կացցեն. զի մարդք չարք և կախարդք յառաջ եկեսցեն ի չար անդր ի մոլորեցուցանել»։ Իսկ սուրբք հալածին ի չարէ ի բարին որ առ Աստուած և յԱստուծոյ առեալ. զի մի նմանեսցին անառակ որդւոյն, խաբեալ ի դիւաց ելցեն ի հայրենի [52] խնամոցն, վասնել զորբութեան վարուն անառակութեամբ։ Այլ դարձցին՝ նմանեալ ի հայրենի խնամսն՝ ի չարասիրաց հալածչաց ի դիւաց և ի մարդկանէ, զի հասցեն հալածանօքն ի խոստացեալ աւետիսն արքայու-

---

* Մատթ. Ե, 10.

** Բ. Թեսաղ. Գ, 12. Բ. Տիմ. Գ, 12, 14.

թեանն[53] անճառ երանութեամբքն պսակեալք ի փառս ամենազօր տեառն Աստուծոյ:

«Երանի՛, ասէ, ձեզ, յորժամ նախատիցեն զձեզ մարդիկ և հալածեսցեն և ասասցեն[54] զամենայն բանս չարս զձէնջ սուտ վասն իմ. ցնծացէք և ուրախ լերուք, զի վարձք ձեր բազում են յերկինս»: * Զի ի ձեռն լաւութեան փառք և պարծանք[55] ընծային յԱստուծոյ հանդիսիւք նահատակեալ ի Քրիստոս, որ զինուորէին ընդդէմ հակառակ ճշմարտութեանն: Այլ օգտակար է առ ամենայն մարտուցեալսն համբերութիւն ի կամս Աստուծոյ, զի զաւետիս բարեացն ունիցին զարդիս և զհանդերձելոցն:

«Զի այսպէս, ասէ, առնէին սրբոցն՝ որք յառաջ քան զձեզն էին»: որք զանուն և զոգիս ժառանգեցին համբերութեամբ բազմաւ: Ոմանք որպէս զերկաթ անվտանգ, և կէոք իբրև զպարխապ պղնձի ամուր. այլք որպէս զարծաթ զտեալ և սրբեալ որպէս ի հրոյ փորձութեամբն: Իսկ այլք որպէս զոսկի պատուական ի սպաս, կամ որպէս զմարգարիտ գեղեցիկ, կամ որպէս ակունս մեծագինս՝ որ ի փառս թագաւորաց: Այնպէս և սրբոց և համբերողաց որ զանազան փորձանօք ի դժնդակացն կազմեցան, և եղեն վկայք արարչին և ի փառաւորութիւն անմահ թագաւորին:[56]

Զի որպէս զանազանք են հանդէսք իւրաքանչիւրոցն վըկայից՝ խոստովանողաց և կուսանաց և պարկեշտ ամուսնացելոց, նոյնպէս և պարգևք ըստ իւրաքանչիւր արժանաւորութեան[57] բաժանին և որոշին յամենեցունց տեառնէն, որ ի միտ առնու զամենեցուն զխորհուրդս զբանս և զգործս: Զի որք ճշմարտութեամբ և անարատութեամբ և անբիծ սիրով նահատակին ընդդէմ չար ցանկութեանցն և ամենայն վնասակարաց յաղթող լինել՝ զմարտիրոսացն առ-

* Մատթ. Ե, 11 12:

նուն զպատկոն. զի լնուն զբանն տեառն. «Առցէ, ասէ, * զխաչ իւր հանապազ, և եկեսցէ զհետ իմ»: [58] Զի խաչ մարմնական ախտից և զժնդակ վարուց մահ գործէ. որպէս և սուրբքն զմարմինս իւրեանց ի խաչ հանին կարեօքն և ցանկութեամբքն հանդերձ, յԱռաքելոյ վկայեալ զայս: Զի որպէս նոցա պէսպէս տանջանքն, սոյնպէս և սոցա զանազան փորձանք. [59] զի [60] յամենայն մարտուցելոցն չարաչար տաժանմանցն ոչ յաղթահարի ի հոգևոր պատերազմին որպէս քաջամարտիկ, այլ զյաղթութեան զշնորհս երևելի ցուցեալ ի փառս Աստուծոյ:

Բայց է և ի նոսա առաւելութիւն կամ պակասութիւն առաքինութեան, ըստ նմին և վարձն, եպիսկոպոսաց և քահանայից և սարկաւագաց և դպրաց, որք կուսութեամբ նահատակին: Այլ և միանձունք և սուրբ ամուսնացեալք զանազանեալք ի վարս. որք ստուգապէս ցուցանեն յաւուրն յետնում յարութեան որ ի մեռելոց՝ զիւրաքանչիւրոցն ըզվարուցն պտուղս: Այլ և որք զճշմարտութիւնն անխրաւութեամբ ունին, կերպարանեալ պատճառանօք զարդարութիւն: Այլ և անսուրբք և կաշառառուք և զօշաքաղք և մարդահաճոյք և որ այլ ևս են արատք և արածք [61] զորս ծածկել ջանան: «Զի ոչ ինչ է ծածուկ՝ որ ոչ յայտնեսցի, ասէ տէրն, ** և գաղտնի՝ որ ոչ ծանիցի»: Զի ստոյգ երևին սուրբք և արդարք. որք ճշմարիտ հանդիսիւքն վշտացան և նախատանօք և թշնամանօք և բազում նեղութեամբք տանջեալ, [62] և ի ճշմարտութենէն ոչ վրիպեալ: Որք և աստ առին զառհաւատչեայ յուսոյն զերանութիւնսն. զի վիշտքն անցանեն, բայց աւետիք երանութեանցն կան մնան միշտ: Զի աստ առին զազատութիւն, և անդ ժառանգեսցեն զարքայութիւնն: Զի ամենայն հանդիսիւք լաւութեան զերանու-

* Մատթ. ԺԶ, 24:

** Մատթ. Ժ, 26:

թեանցն զգրաւականն ընկալան բարի վարուքն, որ պատճառ է փրկութեան յերևելիս և յաներևոյթս, ի պատմելիս և յանպատմելիս։ Բանն Որդի[64] առ Հայր ասէ.* «Որպէս դու և ես մի եմք, այսպէս հաւատացեալքն ի մեզ իցեն»։ Զի զիւրն տայ զորդէգրութեան շնորհ ի Հօրէ, և ժառանգորդս իւր առնէ զսուրբս իւր։

Զի ետ մեզ լոյս աչաց և խրատ մտաց, զի արթունք և զուարթունք եղիցուք. կենաց լուսովն առաջնորդեալ և հոգևորական խրատուքն յամենայն գործս արդարութեան, և իմանալի լուսովն սուրբ և արդար կալ մնալ։ Զի հոգևոր սուրբ գրոց խրատք՝ գիտութիւն ճշմարիտ վարուցն տան, և ի հոգևոր կարգս յորդորեն։ Զի զոր ինչ խորհի ոք զաստիս ի հիւթանիւթ իրս, զնոյն և շարժմունս մարմնաւորս յիշատակօք ունի զաղտեղութիւնն, որ պղտորէ զմիտս և զզգայարանս մարմնոյ։ Իսկ եթէ զհոգևորսն խորհի ի սրբութիւն ի Սրբոյ Հոգւոյն ազդեցութենէ, և զհոգևոր վարուցն խորհի և ջանայ ի կատարումն առաքինութեան, և վայելէ ի շնորհս Հոգւոյն զոր անասելի է և անլսելի. վասն զի հոգևոր է և մտաւոր, և նա միայն գիտէ՝ որում ազդի։

Եւ որ գիտաց մերձենալ ի շնորհս յիշատակաւ սրբութեան և անմեկնելի լինել յանուշութեան վայելիցն, և ի նորա գեղն ցանկ պշնուլ, լուսաւորեալ խորհրդովք մերժել զչարին յարձակումն մթագին խորհրդոցն։ Կանխել[65] յաղօթս ի խնդրուածս ջերմեռանդ արտասուօք և պինդ պահովք ամրացեալ, ունել զգրունս ողորմութեան։ Եւ հանցէ և բարձրացուսցէ ի վերոյ քան զամենայն երկրաւորացս շարժմունս և ազդմունս, և առնուլ զհաստատութիւն հոգևոր օգտութեանցն որ ըստ հաճոյից Աստուծոյ, յորդորի՝ ըստ

---

* Յովհ. ԺԷ, 21.

*Առաքելոյ բանի ի վեր նայել, զվերինսն խորհել՝ ուր Քրիստոս նստի ընդ աջմէ Հօր * «Զի մեռարուք, ասէ, զմեղացն մահ, և կեանքն ձեր ծածկեալ են ընդ Քրիստոսիւ յԱստուած Հայր»: ** Զի զամենայն զհոգս երկրաւորս ի բաց ընկեցեալ որ խափանիչ [66] է հոգևոր և երկնային կոչմանն. որպէս մշակք առ գործն և զինուորք առ պատերազմ զինեալք, այսպէս և մեզ ի պատերազմ առաքինութեան հանդիսանալ միշտ և արիանալ. զի կարասցուք հարկանել զգունդս չարեացն, զցանկութիւն և զամբարտաւանութիւն և զագահութիւն, և որ ընդ նոքօք են արկածք վնասուց յազգմանէ չարին: Զի նմանեալք հաւատարիմ ծառային՝ մտցուք յուրախութիւն տեառն ընդունել զերանութիւնսն ի Քրիստոս, որ կեանքն է հաւատացելոց:*

*Զի ոչ լուսով նորա գնայ յոյրատն և ստահակն, զի ոչ գնայ ընդ ճանապարհն արդարոց որ տանի ի կեանսն. զի ոչ առնու ի սիրտ զխրատս իմաստնոց և զաստուածային գըրոց. այլ որպէս Թակարդ զհոգսն անցուցանէ զխրատն: Եւ յաղագս այսորիկ ասէ տէրն *** ոչ տալ զսրբութիւն շանց, և արկանել զմարգարիտն առաջի խոզից: [67] «Զի մարդ բարի, ասէ, ի բարի գանձուց սրտէ հանէ զբարին. և մարդ չար զչարն ի վեր բերէ»: [68] Զի անձնիշխանական կամքն [69] շարժէ յոր և կամի, եթէ ի լաւն և եթէ ի վատթարն: Եւ վասն այսորիկ ասէ Առաքեալ. «Յառնէ ամբարշտէ յետ երից խրատուց հրաժարեա»: **** Եւ Դաւիթ ոչ տայ Թոյլ մեղաւորին պատմել զօրէնսն. որ ատեաց զխրատս և յետս ընկեաց զիրաւունսն որ յԱստուծոյ եղան: Յանդիմանէ խստագոյ-*

---

* Կող. Գ, 1, 3.
** Անդ. Գ, 3.
*** Մատթ. Է, 6 ԺԲ, 35.
**** Տիտ. Գ, 10.

նըս՝ որ զօրէնսն ասեն և ոչ առնեն, * և որք լսեն և քամահեն։ Զի ամենայն գիրք ի խրատ են և յանդիմանութիւն, որ քարոզեն զփրկութիւն այնոցիկ՝ որք հաւատով ամբարեն յանձինս։ [70] Զի որ[թ]ուի մարտուցելոցն պատերազմ դժուարին, և յաղթեալք՝ խնդան ոչ սակաւ, և ևս առաւել մարտին՝ յաղթութիւնք հոգևորացն է խնդումն։

Չի և մեծատունք և աղքատք յանձնիշխան կամսն ունին առ բարիսն շարժումն և առ չարն։ Զի աղքատն լի է փառօք մեծացեալ, որ աղատութեամբ [71] և ամենայն առաքինութեամբ է յարդարեալ։ Նոյնպէս և մեծատունքն և ամբիծքն և ողորմածք [72] որք զտառապեալս լցուցանեն. զի ըղձեղս [73] աղքատութիւն որպէս բոլ զոսկի սրբէ ի յաղտոյ, և ի պատիւ փառացն Աստուծոյ բարձրացուցանէ երկնից մեծութեամբն։ Այլպէս համբերութիւնք և ժուժկալութիւնք որ անտրտունջ ունին զաղքատութիւն՝ մեծանան։ Սոյնպէս մեծատունք որ գթով խնամեն և դարմանեն զկարօտեալսն, նոքա զանմահութիւն և զփառս և զպատիւ ժառանգեն, որ անանցանելին է։ Ապա եթէ զաղքատութիւն ոք անհրաւութեամբ ունի, և անխտիր յանառակութիւն, ի շնութիւն, ի գողութիւն, ի չարութիւն, ի ստութիւն, յամենայն գործըս չարս, նոքա ընկալցին զպատիժս յերկրի, և անդ զանզերծ պատուհասն։ Իւ մեծատունք որ արգելուն զկարօտելոց զպէտս, և ի շռայլութեան և յարբեցութեան կեան, եկեսցէ առէ տէրն, մահ՝ յորում ոչ գիտեն, և ընդ մէջն կտրեսցէ ի կենաց, և զմասն նորա ընդ անհաւատս դիցէ յանշէջ հուր գեհենին. ** զի էր յանառակութեան, և ըղտուեալն յԱստուծոյ մեծութիւն՝ ոչ իրաւապէս բաշխեաց յաղքատս։ Զի երկաքանչիւրոցն [74] են իրաւունք, ըստ բարեացն գործոց միանգամայն և անիրաւաց ի դատաստանին։

* Մատթ. ԻԳ, 3։

** Ղուկ. ԺԲ, 45. Մատթ. ԻԴ, 51.

Սոյնպէս և առողջութիւնն ունի զշահս [75] և զվնասն. զի առողջն մարմնով՝ որ կայցէ ի հոգևոր առողջութեանն, ժրացեալ ի բարեպաշտութեան ջանս, ընդունի զաշխատութեանն զհատուցումն զհանգիստ անանց. ապա եթէ ծուլութեամբ ի վնաս, զանհանգիստ ընդունի զպատիժս անդ: Սոյնպէս և հիւանդն մարմնով և առողջ հոգւով կայցէ ի համբերութեան ի գոհութեան Աստուծոյ, և մաքրեալ յամենայն սխալանաց. և յուսացեալ յԱստուած և նմա հաւատոյ զշահ անձին՝ զմահ և զկեանս, ընդունի զօրհնութիւն յԱստուծոյ և զկատարեալ առողջութիւն. ուստի մերժեալ են ցաւք և տրտմութիւնք և հեծութիւնք. ապա եթէ ոչ, և սա ընդունի ըստ արժանեացն զհատուցումն:

Սոյնպէս և իշխանքն որ ունին զվերակացութիւն աշխարհի, երկոցունց հոգասցի. զԱստուած ունել ի միտ և ոչ թողուլ ի մտաց զկամս նորա, և անձինն սրբութիւն և ամբըծութիւն և զամենայն արդարութիւն և զուղղութիւնս՝ և զիրաւունս առ ամենեսեան ցուցանել: Եւ որք ընդ իշխանութեամբ են, ի մտերմութեան կեալ. «Զի ոչ ուստեք է, ասէ, * իշխանութիւն բաց յԱստուծոյ. և որք են՝ յԱստուծոյ են»: [76] Եւ իւրաքանչիւր ոք զիւր վարձս առցէ յարդար դատաւորէն, իշխանք և որք ընդ իշխանութեամբ են. զի ամենեցունց մի է տէր արդար՝ որ ըստ արժանեացն պատժէ և փառաւորէ յորժամ գայ փառօք հօր ի դատել զերկիր: Զի որ արդարք են և լլկին, անդ բազմապատիկ ընդունին զհատուցումն բարեաց յարդար դատաւորէն: Իսկ որ մեղաւորք են և լլկին, զպարտիս մեղաց իւրեանց հատուցանեն. որ արհամարհեցին զբանն Աստուծոյ և ոչ ապաշխարեցին. զի ամենայնի լինիցի հատուցումն խորհրդոց և բանից և գործոց երկրաւորաց: Զի զօրաւորաց և տկա-

* Յովհ. ԺԹ, 11. Հռ. ԺԳ, 1.

բաց և ամենեցուն իսկ կայ յանդիման լինել առաջի բեմին[77] Քրիստոսի· որոց բարիս գործեալ իցէ, խնդրեն զկեանս յաւիտենից. իսկ որ ապստամբք են ի ճշմարտութենէ և գործեցին դչար, անվախճան տանջանքն կան մնան։

Սոյնպէս վերակացութիւնք և որք ընդ վերակացութեամբքն են՝ ունին դշահս և զվնասս։ Զի որ զվերակացութիւն ունի, և զինքն Աստուծոյ կամացն[78] տուեալ է ի հնազանդութիւն յերևելիս և յաներևոյթս, սուրբ և անարատ, և առաջնորդ զԱստուած ունել ի խորհուրդս միամիտս, և զինքն արքանեակ տեառն կազմեալ, այնպիսիքն առաջնորդեալ յամենայն արդարութիւնս, զանվախճան վերակացութիւնն առնուն ընդ սերովբէս և ընդ քերովբէս և ընդ երկնային զինուորութիւնսն սպասաւորս Աստուծոյ։ Զի առաքեալք և մարգարէք և քահանայք սուրբք առին իշխանութիւն ի տեառնէ, և եղեն ճշմարտութեան վերակացուք։[79] Եւ զոր կապեցին յերկրի, եղիցին կապեալ յերկինս. և զոր արձակեցին յերկրի, եղիցին արձակեալ յերկինս։ * Սոյնպէս և ամենայն սրբոց տուան շնորհքս այս ի փրկչէն։

Իսկ եթէ առեալ զվերակացութիւն՝ յղփասցի և ծուլասցի հպարտացեալ իշխանական ճոխութեամբքն, և ըստ կամաց իւրոց վարէ զառաջնորդութիւնն և ոչ ի կամս Աստուծոյ, և երկբայեսցի յուսոյն[80] որ ի Քրիստոս, անկցի ի փորձանս, և առանց բժշկութեան է նորա բեկումն։ Այսպէս եղև դժնդակ բարուք սատանայ, և խոտորեալ ի տեառնէ անկաւ ի բարձրութենէն և լուսաւոր կարգացն, և առանց բժշկութեան է բեկումն նորա։[81] Տեսանէի, ասէ տէրն, զսատանայ անկեալ յերկնից զառաջնորդն դիւաց հանդերձ իւր հաւանելովքն, և եղև կոխան սրբոց և առաքինեաց։ **

* Յովհ. Ի, 23.

** Ղուկ. Ժ, 18. Յայտն. ԺԲ, 9.

Որք առին հրաման ի տեառնէ լուծանել զնորա թոյնսն որպէս օձից և քարբից, և ոչ կարեն մեղանչել։ [82] Իսկ հաւանեալքն նորա կամացն և ապստամբեալք ի ճշմարտութենէն զնոյն պատիժս կրեսցեն։ Զի ի ձեռն իշխանաց արդարոց և առաջնորդաց սրբոց է շինութիւն աշխարհի և եկեղեցւոյ Աստուծոյ հաստատութիւն ի բարի կամս. զի նոքօք զօրանան իրաւունք յերկրի և մեծարի սրբութիւն։ Որք և ընդունին զհատուցումն բարի ըստ բարեաց գործոց. համանգամայն և չարեացն որք ոչ կամեցան գնալ յօրէնս տեառըն։ Եւ իմաստութիւն ի դիմացն [83] երևի, որք ըստ Աստուծոյ վարին և որք ոչ ըստ Աստուծոյ։ Զի որ իմաստութեամբն տիրէ, և խորհի յօրէնս տեառն ի տուէ և ի գիշերի, և ամենեցուն լինի առիթ փրկութեան, այն է վերին իմաստութիւն սուրբ և խաղաղարար, լի բարեօք և պտղովք արդարութեան։ *

Իսկ խորամանկն նմանեալ է բանսարկուին լի անիրաւութեամբ և դժնդակութեամբ և նախանձոտ, շոգմոգք, չարախօսք, աստուածատեացք, գտիչ են և նորոգիչ չարեաց. ** որք տայցեն վրէժս ի հուր գեհենին՝ որ պատրաստեալ է սատանայի և որսացելոցն ի նմանէ ի նորա կամսն։ Զի դիւրագոյն է որք ընդ իշխանութեամբն են՝ կատարել զհաւանութիւն, քան կամակար իշխանութեամբն. «Զի որում շատըն տուաւ, ասէ, *** շատ խնդրեսցի»։ [84] Զի որք կարգաւորք են ի վարս իւրեանց ի հնազանդութեան արքանեկութեան վկայութեամբ սուրբ գրոց, սոքա երանեսցին։ Զի անդանդաղ [85] վաստակօք ի պէտս կարօտելոցն բաւական լիցին միշտ. և ի մտերմութեան կացեալ և յանարատ սրբութեան՝ ոչ իւիք դրդեալ ի հակառակացն որք ընդդէմ են

* Յակ. Գ, 17.
** Հռ. Ա, 29.
*** Ղուկ. ԺԲ, 48.

բարեացն գործոց. և ազատեալք ի ծառայութենէ մեղաց՝ և արբանեակք որդութեան և արդարութեան վարուցն միշտ լինել, աստ զյիշատակ փոխութեան թողցեն, և անդ զփառս և զպարծանսն յաւիտենականս առցեն, որ ոչ անցանեն։ Զի կամք է բարերարին ամենեցուն լինել բարերար և ժառանգորդ անսպառ բարեացն՝ որ յուսացելոցն է։

Աղբիւր է Աստուած ամենայն բարեաց՝ որ արբուցանէ զհաւատացեալս ըստ իւրաքանչիւր բարւոյ ցանկութեան սուրբ շնորհօք։ Եւ կեանք է կենդանարար և մշտնջենաւոր, որ զկենդանութիւն տայ ամենայն արարածոց իւրոց։ Եւ բարերար է առ ամենեսեան, որ պարգևօք իւրովք շնորհէ ըզքաւութիւն որք դառնան ի չարէն։ [86] Եւ լոյս է, որ լուսաւոր առնէ զամենայն մարդ որ կամի ի խաւարային մեղացն զերծանել ի սուրբ լոյսն։ Եւ ճշմարտութեանն մօտ է, որք նախաշաւիղ ճանապարհորդեն որդութեամբ ի ճշմարիտ բարիսն։ Եւ ի նմանէ ումեք ի բաց է լինել չիք, ոչ վերնոց և ոչ ներքնոց. զի զամենայն արարածս ընդ ի՛քեամբ ունի ամենակալող զօրութեամբն իւրով՝ զերկնայինսն և զերկրայինս։ Եւ գիտէ զխորհուրդս մարդկան և ի միտ առնու զամենայն գործս նոցա և ըստ արժանեացն հատուցանէ։ «Զի ես եմ՝ ասէ, Աստուած. և չիք այլ ոք. [87] որ սպանանեմ զմեղաւորս, և կեցուցանեմ զարդարս». և ոչ ոք է որ հանէ ի նմանէ զարարածս իւր։

Եւ է զոր խրատէ վտանգաւոր պատուհասիւք, որ ապիրատ վարուք ընթանան. և է զոր շնորհօք յորդորէ ի լաւն և յառաւել փառաց ժառանգութիւն, որք հաւատով և երկիւղիւ և սուրբ սիրով մերձենան առ աստուածութիւնն. և սրբեալ մեր ի նորա [88] շնորհացն երախտեօքն նորա ծանիցուք զպարգևատուն բարեաց։ Կոչեաց զհաւատացեալս իւր ժողովուրդ. զի խնդրեսցուք զողորմութիւն ի նմանէ և արասցուք զկամս նորա։ Կոչեաց զմեզ ծառայս. զի մտերիմ

և սուրբ սիրով և սուրբ վարուք կատարեսցուք զկամս նորա։ Կոչեաց զմեզ և որդիս․ զի ի հայրենական խնամսն վայելիցեմք և յորդէգրութենէն մի արտաքս ելցուք անսուրբ վարուք։ Զի սուրբ է տէր և ի սուրբս բնակեալ է․ զի եղբարս իւր անուանէ զսուրբս․ ասէ․ «Պատմեցից զանուն քո եղբարց իմոց, ի մէջ եկեղեցեաց օրհնեցից զքեզ»։[89] * Եւ դարձեալ ասէ․ «Յորժամ բարձրացայց, զամենեսեան ձգեցից առ իս»։ ** Զի եկն Որդին Աստուծոյ փրկել զազգս մարդկան, և ուրախ արար զհաւատացեալս իւր․ զի նովաւ եղեաք և նովաւ փրկեցաք, և առ նա երթիցուք՝ որ հրաւիրեաց զմեզ և կոչեաց յիւր արքայութիւնն և ի փառսն, յանեղծ և յանվախճան և յանպատում կեանսն, զոմանս ինքեամբ և զոմանս ի ձեռս առաքելոց և մարգարէից և հոգևոր վարդապետաց․[90] զի զամենեցուն կամի զկեալն և ժառանգորդս լինել կենացն անվախճանից[91] ի փառս ամենասուրբ Երրորդութեանն այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից․ ամէն։

* Սաղմ. ԻԱ, 23.
** Յովհ. ԺԲ, 32.

ԺԱ

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ՀԱՅՈՑ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ[1]

ՎԱՍՆ ՎԱՐՈՒՑ ԱՌԱՔԻՆՈՒԹԵԱՆ

ՈՐ ՀԱՆԴԻՍԻՒՔ ԼԱՒՈՒԹԵԱՆ ՊՍԱԿԵԱԼ ԵՐԱՆԻՆ[2]

ԱՄԵՆԱՅՆ *արուեստից լաւութեան և քաջութեան և առաքինութեան սուրբ Երրորդութիւնն է, որ շնորհօք յարդարէ.*[5] *վասն զի Նա է տուիչ և յաջողիչ երկնաւորաց և երկրաւորաց. և որ զմտերիմ հաւատացեալս և զսուրբս և զսիրելիս իւր աշակերտեաց։ Որք*[4] *ընկալան զարուեստ լուսաւոր կարգացն, և վառեցան որպէս զճառագայթս լուսոյ ի մէջ աշխարհաց. զի ասէ տէրն.* * *«Դուք լոյս աշխարհի էք, և լուսաւորէ լոյս ձեր զմարդիկ, որպէս զի տեսցեն զգործս ձեր բարիս, և փառաւորեսցեն*[5] *զՀայր ձեր որ յերկինսն է»։ Եւ Առաքեալ իբրև լուսաւորս ասէ շրջել*[6] *յաշխարհի, զբանն կենաց ունել ի զգուշութիւն անձանց և ի շահ օգտի բազմաց։ Որ Նոքօք սփռեաց զճառագայթս բանին կենաց ճշմարտութեան ընդ ամենայն տիեզերս, և կոչեաց զհաւատացեալս ի հաղորդութիւն բարերար կամացն իւրոց ի կենդանի փառսն անեղծութեան. զի ժառանգաւոր լինիցին արարածք արքայութեան արարչին և աւետեաց ուրախութեան անճառ բարեացն։*

Այսպիսի[7] *յուսով հաճոյացան*[8] *սուրբքն, և կամօք արարչին զամենայն դժնդակութիւնս յաղթմանէ չարին և ըղշարժմունս մտաց և մարմնոցն խափանեցին շնորհօքն Քրիստոսի. անարատ սրբութեամբ, անդադար աղօթիւք և*

---

* Մատթ. Ե, 14։

ջերմեռանդն արտասուօք, կատարեալ ժուժկալութեան պահուք. [9] սանձել զագահութիւն և զորկորստութիւն, զլկտութիւն և զանառակութիւն և զստահակութիւն ի չար անդր։ Ունել զդրունս ողորմութեան յիշատակօք [10] սիրոյն Քրիստոսի. յորդորեալք ի հանդէս բարեաց, և արժանի եղեալ ազատութեան շնորհաց և պարգևաց Հոգւոյն սրբոյ վկայութեամբ հանդիսից լաւութեան, սուրբ սիրով, մտերիմ հաւատով ի նեղութեան և յանդորրու։ Անզբօս և անբիծ ունել զմիտս և զզգայութիւնս ամենայն ճշմարտութեամբ։ Մի իւիք ունել խորդախութիւն և կեղծաւոր խորհուրդս, անհաւատութեան և անսրբութեան վարս, որ են պատճառք կորստեան։ Այլ զլուսաւոր զսրբութիւնն միշտ յանձինս ունել անբիծ երախտեօք սիրոյն սրբութեան. ծաղկեալք [11] առաքինասէր վարուք և պսակեալք յաւիտենական յուսովն ի գովեստ փառացն Աստուծոյ։ [12] Զի հրով Հոգւոյն սրբոյ յանարատ սրբութիւնն վերաբերեալ՝ օթևանք ամենասուրբ Երրորդութեանն լինին յերկրի։ Զի ամենայն հանդիսից և առաքինութեանց զարդ սրբութիւն [13] է յերևելիս և յաներևոյթս հոգւով և մարմնով։ Եւ ամենայն արդարութեան և քաջութեան թագ և պսակ պարծանաց սրբութիւնն է միշտ։ Եւ ամենայն կարգաց երկնաւորաց [14] և երկրաւորաց փառք և պատիւ և մեծարանք սրբութիւնն է, որ ընտանեցուցանէ Քրիստոսի Աստուծոյ և ամենայն երկնային զօրութեանցն։ Պատմուճան լուսոյ և արմատ բարեաց սրբութիւնն է. և որ ճշմարտեալ և միաբանեալ են ի գովեստ փառացն Աստուծոյ՝ անմարմնոցն դասք, և լուսաւոր [15] վարուք հաստատեալ կան ի սրբութեան. վասն այնորիկ են ամենասուրբ տէրութեանն [16] սպասաւորք։

Նոյնպէս հրաման տուին առաքեալքն [17] զսուրբսն կարգել ի սպասաւորութիւն եկեղեցւոյ Աստուծոյ, զի հաղորդ լիցին հրեշտակաց՝ սպասաւոր Քրիստոսի պատարագին։ [18] Զի որ-

պէս հոգին ի մարմինն [19] յարմարի և աճէ զաճումն հասակի, սոյնպէս միաւոր հոգին զամենայնն քննէ և որոշէ ըզլաւն ի վատթարէն։ Սոյնպէս են և հաւատք ճշմարիտ աստուածգիտութեանն. որ աճէ զաճումն առաքինութեանցն որ ի Քրիստոս, և լինի կատարումն հասակի արդարութեանն հաւանութեամբ [20] հաւասարել անդամոյն ի միաբանութիւն հաճոյիցն Աստուծոյ։ Զի ամենայն լուսաւոր վարք հաւատովքն բովանդակին յերևելիս և յաներևոյթս. զի լուսաւորեալ ի գիտութիւն ճշմարտութեան՝ զօրացի ի հանդէս բարեպաշտութեանցն որ ի Քրիստոս. զի ամենայնի Քրիստոսիւ եղև կատարումն՝ եթէ յերկինս և եթէ յերկրի, ասէ Առաքեալ. * զի զաներևոյթսն յերևելիս ցուցանեն հաւատք, և զերևելիս յաներևոյթսն [21] ի կամս տեառն։

Գանձ անկապուտ [22] են հաւատք, որք զբարիսն ի մեզ ամբարեն. և ի ձեռն շնորհացն յայտնեաց հաւատովք զպարգևս փրկութեան և կենացն անմահից, զի զամենայն երանութիւնսն յուսով վայելեսցուք. զի իբրև առաջի աչաց ունի զուարթածաղիկ զուրախութիւնսն [23] յուսով. զի մի հեղգասցուք ի հանդիսիցն, որ առաջնորդեն մեզ յանանց բարիսն՝ որ պատրաստեալ է սրբոցն։ Զի նախ սէրն նովաւ լըցեալ և զարդարեալ ճառագայթիւք յիշատակօք սրբութեանն և ամենայն անդամոցն և մտացն առաջնորդէ յարդարութիւն հաւատովք յամենասուրբ Երրորդութիւնն, և ի կամս նորա սիրով հաստատի։ Զի սիրտ սուրբ տաճար է հոգւոյն սրբոյ. և սէր սուրբ ունել՝ բնակարան Քրիստոսի, և ի նմա հանգուցեալ են աստուածեղէն կամք։ «Զի որ կայ ի սէրն իմ և պահեսցէ զբանս իմ, ասէ տէրն, ես և Հայր իմ եկեսցուք և օթևանս առ նմա արասցուք»։ ** Զորս [24] սիրով

---

* Կող. Ա, 16.

** Յովհ. ԺԴ, 23։

բարերարութեամբն յանճառ բարիսն վայելացուցանէ։ Եւ ո՞րք [25] են որ զբան նորա պահեն։ Որք սուրբ սրտիւ և անարատ յամենայն վնասուց [26] մնան անբիծք։ Զի որ սիրեն զնա, սիրեսցին ի նմանէ. և որք խնդրեն զնա, [27] լինի պարգևատու։ Իսկ որք ոչ պահեսցեն զնորա զբանն, ասէ, ինքնին բանն զոր խօսեցայ ընդ ձեզ, նա դատի զձեզ յաւուրն յետնում։ *

Իսկ որ զբանն նորա պահէ, խլէ ի սրտէ զգժնդակ խորհուրդս մեղաց. [29] զանհաւատութիւն, [30] զերկմտութիւն, զչարութիւն, զնախանձ, զաղտեղի ցանկութիւնս հանդերձ ամենայն վնասակարօքն, և ի ներքս բերեալ զբարեխորհրդութիւնն սուրբ՝ որ լին է բարեօք ի Քրիստոս։ Զի ազատեալք ի բծից զգայարանքն՝ կատարեսցեն զարդարութիւնս, և արթուն կայցեն միտքն զգայութեամբքն ի վերայ շահից և կենարար գիւտից։ Եւ մի ի սասականալ պատերազմին լքանել և լուծանել զմարտն, այլ ճշմարիտ համբերութեամբ [31] զգէմ ունել. և երկայնամտեալ յուսով և զօրացեալ ի Քրիստոսի շնորհացն՝ [32] յաղթեսցէ մարտին, և հասցէ ի նաւահանգիստն Քրիստոսի, չիջուցեալ [33] զաղդմունս չարին և զշարժմունս բարուց չարութեան։ [34] Եւ զյաղթութեան ըզշնորհս ընկալեալ և զգովութիւն ի վերնոց և ի ներքնոց, պսակեսցի փառօք և պարծանօք աւետեաց փրկութեան կենացն։ [35] Զի որ կայցէ յայն սէրն որ ի Քրիստոսն, որ փըրկեացն զաշխարհս և եբարձ զթշնամութիւն ի միջոյ, տեառնըն է բնակիչ։ Եղիցուք նմանօղք նորա մեծութեանն, և շահեսցուք զբարիս և զեղբարս, և փոխանակեսցուք զբարին մեր առ նոցա կարիսն, և զկեանս մեր ընդ մահու նոցա. և լինիցիմք ժառանգաւոր նորա տէրութեանն, [36] և բնակարան կենդանի կամաց նորա, և հաղորդս սքանչելի և սուրբ սիրոյ նորա, և կցորդ փառաւորեալ փառաց նորա։

* Յովհ. ԺԲ, 14.

Սէր սուրբ մայր է առողջութեան, անարատութեան, անբծութեան. որ խնամէ և յորդորէ յառաքինութիւն և յարդարէ յամենայն բարեգործութիւնս: Սէր աղբիւր է ամենայն բարեաց, որ արբուցանէ զսուրբ անձինս. և է գրաւական ամենայն երանութեանցն, և մեծութեան պարգևացն Աստուծոյ բաշխող: Սէր բղխումն երախտեաց Քրիստոսի, և վայելեցուցիչ յանպատում շնորհս նորա. լուծիչ խռովութեան և տուիչ խաղաղութեան. լուսաւորիչ մտաց և անդամոց: Սէր սուրբ հոգւոյ և մարմնոյ անեղծ ստացուած է, որք ունին զնա միշտ. և կենդանի շնորհօք ի Քրիստոս ամենաշահ երանութեամբն յարդարեալ ի գովեստ փառացն Աստուծոյ: [37] *Սէր աւետեօք կենդանի յուսոյն սփոփիչ է նեղութեան* [38] *և վշտաց, և լուծիչ ամենայն դժնդակութեանց ի վերայ եկելոց՝ որ զինուորին ընդդէմ առաքինութեան հանդիսից: Սէր սուրբ երախտեօքն հրեշտակ է խաղաղարար, որ զցասումն մերժէ և զոխութիւն* [39] *լուծանէ և զնախանձ արտաքս մղէ և ցածուցանէ զչար: Սէր սուրբ այգի վայելուչ, որ խաղողով և գինեաւ* [40] *զուարթացուցանէ զսիրտն և զզգայարանսն ի տրամականացն եկամտից, և ուրախ առնէ ի կամս տեառն: Սէր սուրբ ձիթենի պտղալից է ի սրտի բարեխորհրդին, մղելով զձէթ ի լուսաւորութիւն իմանալեաց և յօծումն, երևելի անդամոցն ի զուարթութիւն: Սէր սուրբ հոգևոր կարգաց յարդարիչ է և մարմնաւոր վարուց յանձանձիչ. որ ի միասին կապէ, և ոչ տայ բաժանել և քայքայել զհասարակաց բարին: Սէր սուրբ բանալի է դրանն* [41] *կենաց, որ զկեանսն բաշխէ. և աներևոյթ շնորհացն Աստուծոյ գանձուցն բաշխող ի սուրբ անձինս, և դժնդակ վարուց խափանիչ և ընդդիմամարտ մեղաց:* [42]

Զի ամենայն արուեստք առաքինութեան սիրով յարդարին, սրբութիւն, արդարութիւն. և նովաւ ցուցանեն զհանդէս լաւութեան իւրեանց, որ է վարիչ չարի և յորդորիչ

բարւոյ, զօրավիգն աստուածասիրաց և կործանիչ խոտամանկաց և մեղսասիրաց։ Եւ խառնեալ սուրբ սէրն ընդ հաւատոյ և ընդ յուսոյ՝ հանդիսանայ ի բարեպաշտութեան վարս, և միմեանց խաղաղութեամբն յայտնի առնէ զլուսաւոր կարգս։ Զի պատճառք առաքինութեամբքն լուսատու թագօքն պսակեցին յանուշակ յերկնաւոր հօրն խընամն, [43] և վայելեցեն յանվախճան և յանպատում բարութիւնս նորա։ Զի որ ունի զխնամս սիրոյն սրբութեան առ ամենեսեան հեռաւորս և մերձաւորս, առ հոգիս և մարմինս ամենայն ճշմարտութեամբ, երանութեամբք սուրբ սիրոյն, յամենասուրբ Երրորդութենէն օրհնեալք պսակին և մեծարին և մշտնջենաւոր խնդութեամբքն վայելեն յանվախճան և յանհամեմատ բարութիւնսն։ [44]

Զի և հաստատութիւն ուղեղ հաւատոյ բովանդակիչ է սուրբ սիրոյն և յուսոյն անսասանելի կալ։ Զի շնորհօք սուրբ հոգւոյն՝ այնոքիւք միաւորելոցն՝ պարիսպ ամուր ապաստանի ամենայն առաքինութեամբք շրջապատէ։ Որ ոչ ոք վստահասցի առնուլ զամուրսն, զի պահեսցի ի զգուշութեան հաւատովն արթնութեամբ, սուրբ յիշատակօք յուսոյն անդրդուելի միշտ. գոհանալով և օրհնելով զտէր անյագ բաղձանօք, հաւանական կամօք, [45] յորդ և քաղցր անձկաւ փափաքել առ աղբիւրն շնորհացն և ըմպել անյագ ի նորա բըղխմանէն, և արբուցանել զտունկս արդարութեան և զսերմանս բարեպաշտութեան շնորհաց արտասուացն վտակօք, զի զառհաւատչեայն բերցեն զպտուղ։ Զի զարուն հոգևոր է աճմանն հաւատոյ և սրբութեան սիրոյն, որ զամենայն առաքինութիւնս բողբոջեն. որպէս տունկք և բոյսք զսաղարթս և զծաղիկս ի ձմերնային կապանացն լուծեալք։ Այսպէս ջերմութիւնք սուրբ սիրոյն հաւատով շնորհալից արտասուօք՝ զառաքինութիւնսն փայլէ ամենասուրբ Երրորդութեանն կամօք և շնորհօք։

Եւ հաւանութիւն[46] հաւատոյ և սուրբ սիրոյն հաւասարութիւն յոր կողմ յորդորի՝ զամենայն հաւանեալսն[47] ի Քրիստոս ժողովէ։ Եւ նա է նաւահանգիստ մեր և բաշխող պարգևաց. կենդանի աղբիւր և ճաշակք անմահութեան, որ զամենայն սուրբս վայելչութեամբ պսակէ յաւէժ կենդանի երանութեամբքն։[48] Եւ զիւրաքանչիւրոցն քաջութիւնք ի վեր բերեալ՝ յօրինին և կազմին օգտակար շահիցն փառք, և լուսաւոր առաքինութեանցն հանդէսք ցուցանին ըստ արուեստիցն բարութեանցն.[49] զի զգուշութիւն զգաստութեան ամենայն զգայութեանց հաւատով և սուրբ սիրով սիրեալ զանարատ ամբծութիւնս յինքն հպեսցէ. որ ի բաց մերժէ զախտ և զբիծ ի մարմնոյ և ի մտաց, յստակ և սուրբ սիրովն որ առ Աստուած։ Որ կարողն է ընդրել զօգտակարըն և անարգել զվնասակարսն, և յորդորիչ լինել մտաց և զգայութեանց ի բարիսն, և զխարդախութեան վնասն պահել զմուտս ահիւ և զգաստութեամբ միշտ։ Չի յերկիւղն Աստուծոյ ամփոփին միտք ի զգուշութիւն Աստուծոյ բանին. և զգաստութեանն առաջնորդեալ՝ անարգեսցէ զչարն և ընդրեսցէ զբարին. և կացցէ մնասցէ սուրբ և արդար յերևելիս և յաներևոյթս արթուն և զուարթուն։ Չի մի խորամանգեալ չարին ներքս մտցէ ընդ միտսն և ընդ զգայութիւնսն[50] և յափշտակեսցէ զառաքինութեան զգանձն. և պարտաւորեալ գտանի ի հեղգացելոցն դատաստանն, որ ոչ հսկեալ պահեաց զտուն գանձուցն առաքինութեան, այլ թոյլ ետ ական հատանել և գողանալ զբարի մեծութիւնն, զորս վայելելոց էր ի հանդերձեալսն. և վասն այնորիկ պատժի ի գեհենին յաղագս հեղգութեան։

Արդ եղիցի զգուշութիւն ի պահել զամուրսն և զգաստութեան գանձսն ի Քրիստոս, որ ի մարմնին է զարդարեալ շնորհօք. զի նովաւ ապրեսցուք ի խորամանկութենէ բանսարկուին և ի պատրանաց։ Եւ հաճոյացեալք ի նորա կամ-

սըն՛ [51] մտցուք ի խոստացեալ բարութիւնսն առանց ամօթոյ վնասուց· զամենայն ճշմարտութիւնս և զպարծանս սուրբ վարուց ընդ մեզ ունելով՝ հանգիցուք ի գոգ հանգըստեանն և ի գիրկս մխիթարութեանն և ի լոյս անշիջանելի փառացն։ Եւ ըստ բազմաբեր պտղոցն մեր՝ առաւելեսցին պտուղ և փառք մեր· և ազատեալք ի Քրիստոս՝ առցուք զպսակն պարծանաց յամենակալ Հօրէն։

Ասացից և վասն սուրբ հեզութեան՝ որ առողջութիւն է խլրտման [52] ցասման մտաց և մարմնոյ։ Զի լուսաւորեալ անարատ հեզութեամբ և ամբիծ սիրով, որ հաւատովքն յարդարեալ է ի հաճոյս սուրբ Հոգւոյն և ի կամս Որդւոյն և ի փառս Հօրն երկնաւորի, առողջացեալ և ճշմարտեալ ի սուրբ սէրն նորա՝ պահեսցի, [53] և ի հարուածոց ցանկութեանց ազատեսցի, և հանդարտութիւն առցէ ի վնասակար մարտից, և ի շնչել այսոյն չարութեանն ցածուսցէ ի միտս և ի մարմինս։

Հեզութիւն սանձք է բարկութեան և շարժմանց ցասման և վնասակարաց լկտութեան և ստահակութեան և ի թըշնամանս յանդգնեալ [54] ըստ ամենայնի։ Հեզութիւն քաղցր և անոյշ ճաշակք են քմաց և ցածուցիչ խռովութեան ամբոխից, որ յամբարտաւանութենէ գերին։ Հեզութիւն հանդարտեցուցիչ է մրրկեալ ալեաց մտաց և մարմնոց ալէկոծելոց ի փորձանս ինչ։ Հեզութիւն արմատք խոնարհութեան և համբերութեան և ժուժկալութեան են՝ որ մերձաւորի Քրիստոսի։ Հեզութիւն զօրութիւն է ամենայն առաքինութեան և հիմն ամենայն բարեաց յերևելիս ի մեզ։ Հեզութիւն շինուած է խաղաղութեան, և քակտումն և հերքիչ խռովութեան, ոխութեան [55] և նախանձու՝ երևելի և գաղտնի։ Հեզութիւն աղբիւր յստակ է և ամպ քաղցր ցօղով, որ արբուցանէ զերաշտութիւն չորացելոց։ [56]

Հեզութիւն դաստիարակ է մանկութեան և հաւանութեան

խրատուց և կարգաց [57] ուսուցիչ: Հեզութիւն փառք ծերոց, որ նովաւ են հրահանգեալ յողջախոհութիւն և յամենայն առաքինութիւնս: Հեզութիւն պատիւ երիտասարդաց, որ նովաւ յաղթեցին ամենայն հակառակաց, ստահակաց և անիրաւաց խոնարհութեամբ և քաղցրութեամբ:

Հեզութիւն պսակ է պարծանաց կուսանաց, որ ամենապատուեստ երախտեօք և բազմահանդէս առաքինութեամբքն ի կոչումն ընծայեալք սիրոյն սրբութեան: Զարթուցեալք, անվեհեր քաջութեամբ հնազանդեալք, և զհեզգութիւն և զյամառութիւն յորդորել [58] ի հաւատ ճշմարտութեան: փոյթ յառաքինութեան գործառնութիւն. [59] անքակ աղօթիւք, մտերիմ կամօք, խոնարհ շարժմամբք, քաղցր հնարիւք, յորդորեալ յիշատակօք, սիրոյն սրբութեամբ, կատարեալ պահօք սանձել զգժնդակ և զաղտեղի խորհրդոցն շարժմունս [60] յազդմանէ չարին. շիջուցանել [61] զհուր ցանկութեան ջերմեռանդն արտասուօք: Բայց ունել զգութն ողորմութեան ի պէտս կարօտելոց, և ակն ունել յուսով խոստացեալ աւետեացն իմաստուն կուսանացն: «Եկայք, ասէ, օրհնեալք Հօր իմոյ, ժառանգեցէք զարքայութիւն սուրբ»:

Հեզութիւն՝ մանկանց եկեղեցւոյ սնունդ է, և յորդորիչ ըստ անձանն զգաստութեան և ճշմարտութեան. որոց սկիզբն առեալ ի տղայութենէ ի սրբութիւն և ի պիտանութիւն զլուսաւոր վարդապետութիւնն և ըղհանգամանս բանից և ձայնից որպէս ճառագայթս արեգական փայլեցուցանել փառաւորութեամբ ի փառս Աստուծոյ վերնոց և ներքնոց, հանդերձ ամենայն սուրբ վարուք և խոնարհ սրտիւք. զի այնպէս լինիցին վերնոցն փառակից:

Հեզութիւն զգաստութիւն է առաքինեաց և քարոզիչ նոցա հանդիսիցն. որ իմացան զերկրաւորս անցաւոր, և բուռն հարին զանանց կենացն միամիտ սրտիւ և անհեղգ մարմնով, ազատեալ յամենայն վնասակարաց մտօք և մարմ-

նովː [62] Զի կատարեալ զամենայն հրամայեալսն ի տեառնէ՝ և զայլս յորդորեսցեն որպէս պարտ է պահել արդարոց ըզսրբութիւն և զամենայն առաքինութիւն. կամ որպէս մեղաւորաց դառնալ ի խոստովանութիւն ապաշխարութեան. զի ապրեսցին։ [63]

Հեզութիւն՝ գովելի մեծութիւն է տնանկաց. զի երկրաւոր մեծութիւնս մաշի և կորնչի հպարտութիւն. այլ տնանկացն հեզութիւնքն [64] մեծացեալ կան և մնան անանցք. զոր ոչ ցեց ուտէ և ոչ ուտիչ ապականէ, կամ գողք ական հատանեն և գողանան։ Եւ յաղագս այսորիկ երանէ տէրն ըզհեզս. քանզի ասէ. «Երանի հեզոց՝ զի նոքա ժառանգեսցեն զերկիրն կենդանեաց», որ ոչ լսի համբաւ մահու, որպէս և Դաւիթ ասէ, * «Հաճոյ լինել առաջի տեառն յերկրին կենդանեաց»։ Այլ և աստէն ունի զհանդարտութիւն մըտաց և անդամոց և առ ամենեսեան՝ ոյք ճակատամարտին։ Զի զաղքատս ի համբերութիւն կրթէ, զզօրաւորս զգօն առնէ, և առանց խռովութեան ունել զիշխանութիւնս երկրաւորս և առանց ողմկի հանապազորդ. յամենայնի ամենեքումբք է համեստութիւն, մեծաց և փոքունց դաստիարակ։

Հեզութիւն լուսաւորութիւն է քահանայական շնորհի. զառաջնորդական միտսն ի հնազանդութեան ունի, և ոչ տայ թոյլ ցասման շարժել ի բարկութիւն և ի թշնամանս. անգիտացեալ որ ինչ խորհրդոցն է ամբարտաւանել ի ցասմանն։ Այլ հեզութեամբն մտայոյզ եղեալ ըստ Քրիստոսի աւետարանութեանն ուղղէ զհրաման իրացն առ սովին գիտութեամբն. և լուսաւորէ այնպէս հեզութիւն, որպէս զի տեսցեն զգործս ձեր բարիս, ասէ տէրն, և փառաւորեսցեն զհայրն ձեր որ յերկինս է։ Հեզութիւն որպէս աղ է ա-

* Սաղմ. ՃԺԴ, 9։

նուշիչ խորհկաց՝ որ զհամեղութիւն ճաշակացն համահամ քմացն [65] տայ։ Զի բանք ձեր՝ ասէ՝ որպէս աղիւ համեմեալ լի շնորհօք և ճշմարտութեամբ՝ յարդարեալ հեղ վարդապետութեամբ. զի տացէ շնորհս լսողացն վասն հանդերձեալ դատաստանին արդարոյ և մեղաւորաց. զի որք լուիցենն՝ իմաստնասցին ի Քրիստոս։ Հեզութիւն անարգամեծար է. զձկնորսս քարոզս [66] արար և աղբիւր կենդանաբար շնորհաց սուրբ Հոգւոյն՝ արբուցանելով զհաւատացեալս յաստուածգիտութիւն։

Հեզութիւն պատկառ է յանդուգն և յաշուր բարուց՝ որպէս Մովսէս և Դաւիթ վկայեն. ոմն առ ապարասան [67] ժողովուրդն՝ և ոմն առ Սաւուղ բազում անգամ երևի։ Հեզութիւն իմաստնոց՝ իմացուցանէ լսողաց զբանս հանճարոյ՝ ի միտ առնուլ զարդարութիւն ճշմարիտ և ուղղել զխրատունս և զամենայն առաքինութիւնս։ Հեզութիւն զարդ է երևելի առաքինեաց անձանց՝ հաւատոյ, յուսոյ, սիրոյ, սրբութեան, աղօթից, պահոց, խոնարհութեան, ժուժկալութեան, և ամենայն բարեաց։ Հեզութիւն՝ սրբութեան ըզգեստ է, որ մերկացան և ի բաց ընկեցին զաշխարհական ըզցանկութիւնս, և զգաստութեամբ կատարեցին զկեանս ի Քրիստոս։ Հեզութիւն մեծաքանչ ջուք և պատկառ է ի մէջ բազմամբոխ հրապարակաց. որ զհոգևոր օրէնսն հանգարտութեամբ ճառէ, և հրեշտակ խաղաղարար լինի առ ամենայն լսողս, և անուն տեառն փառաւորի. ի հեզոյն և ի մարգարէէն Աստուծոյ փառաւորեալ՝ վերագրի [68] ի կեանըս, և լսէ ի տեառնէ՝ եկ, հաւատարիմ ծառայ և հեզ, որով ի սակաւուդ հաւատարիմ ես, [69] ի վերայ բազմաց կացուցից զքեզ։

Հեզութիւն կերպարանք փառաց է տէրութեանն, [70] և գիտք հանգստարար յաւիտենից. որ իւրովք զարմանօք ի ձեռն հեզութեանն իւրոյ վանք է երկնաւորացն և մտերմաց

հաւատացելոց սրբոց ի նա· որ խոնարհեցաւ ի յերկնից ի յերկիր ի մեծութենէ փառաց և էառ զծառայի կերպարանս, զի ծառայքս զնորա կերպարանս առցուք արդարութեամբ, սրբութեամբ, ճշմարտութեամբ վասն բարերար և ամենագիտ սուրբ սիրոյն, և գրաւականաւն զոր էառ ի մէնջ և ինքեամբ նստոյց ընդ աջմէ Հօր ի բարձունս, և ետ յոյս վերստին նորոգման ամենայն[71] հաւատացելոց խոստացեալ աւետեօքն՝ «Ուր եսն եմ, անդ և պաշտօնեայն իմ եղիցի»։ * վասն որոյ հրաւիրեաց զամենեսեան և կոչեաց յիւր արքայութիւնն և ի փառսն· եկայք առ իս, ասէ, ամենայն աշխատեալք ճգնաւորական հանդիսիւք և բեռնաւորք մեղօք յապաշխարութիւն խոստովանութեան, և ուսարուք յինէն զհեզութիւն զխոնարհութիւն, և գտջիք հանգիստ անձանց ձերոց· զի լուծ աշխատելոց յուսով հեզոյն քաղցր է, և բեռինք մեղաց խոնարհութեամբն փոքրոգի լինին։ Եւ յերկոցունց հաստատութենէ[72] կայ ընդ աջմէ Աստուծոյ սուրբ և անարատ, ոչ ինչ ունելով զձախակողմանն զդժնդակութիւն, այլ զաջակողմանն արդարութիւն· զի որ զայս ունին, Քրիստոսի նմանին հեզոյն և խոնարհին առ արարածս՝[73] և երանութեամբք պսակին ի խնամոց սուրբ սիրոյն հեզքն և խոնարհքն[74] սրտիւք յամենասուրբ Երրորդութենէն· ազատեալք ի վշտաց և ի յաւիտենական տանջանացն, և յանանց խնդութիւնս և յանհամեմատ բարութիւնսն վայելեցուցանէ։ Զի բազմաբոյս առաքինութեամբքն ի բազմազգ կեանսըն ուրախանան, և փառաւորեալ և պսակեալ՝ զանճառ ըղլոյսն զգենուն ի Քրիստոսէ յանպատում և յանանց կեանսըն, որ պատրաստեալ է ամենայն սրբոց ի խորանսն յաւիտենից։

Զի բազում և առաւել ևս է ճաշակ քաղցրութեան և

---

* Յովհ. ԺԲ, 26.

խոնարհութեան և հնազանդութեան, ողջախոհութեամբ և անարատ վարուց և անբիծ սիրոյն երախտեօք: Որովք խորտակեցան դրունք պղնձիք անհաւատութեանն, և նիգք երկաթիք անհնազանդութեանն փշրեցան, և յաւար եղեն գանձք աներևոյթ թշնամւոյն ճշմարիտ իմաստութեամբն Քրիստոսի հաւատովք աւետարանին քարոզութեան. լուսաւորացն նմանեալ՝ որ ճառագայթիւք լնուն զտիեզերս, և ուղիղ ըգգնացս մարդկան ունին ըստ արդարութեան ճանապարհին: Զի քաղցրութիւն խոնարհութեան և հնազանդութեան աղբիւր բարութեան վայելեցուցիչ են, և բժիշկ դառն ցաւոց՝ որ զառողջութիւն տան. և բարեաց առաջնորդք՝ որ ուղիղ ճանապարհօք յերանութիւնսն տանին, ազատեալ յամենայն վշտագին վտանգից:

Քաղցրութիւն խոնարհութեամբ հնազանդութեամբ և հեզութեամբ միաւորեալ՝ որսորդ [75] բարեաց է և ժողովող ամենայն առաքինութեան և վանք սրբոյ Երրորդութեանն: Քաղցրութիւն և խոնարհութիւն և հնազանդութիւն միաւորեալ՝ զժողովս ճգնաւորաց ի միաբան ունին, և ոչ թողու քայքայել ի միմեանց: Քաղցրութիւն և խոնարհութիւն և հնազանդութիւն ընտանեցուցիչ է օտարաց և զգաստութիւն մերձաւորաց, նուաստութիւն ամբարտաւանից և զօրութիւն հեղգացելոց, ցածուցիչ ամենայն ստահակաց, զարթուցիչ է կենաց յուսոյն, և համարձակութիւն վարանելոց որ ի մեղացն ազատեցան ի ծառայութենէ: Պատճառք է ամենայն հոգևոր շահից, և խափանիչ կորստեան վնասակար խորհրդոց և գործոց: Բացիչ է ճշմարիտ խոստովանութեան, և արձակիչ կապելոց զղջմամբ ի թողութիւն մեղաց: Հրաժեշտ վնասակարաց, և մուտ յորդէգրութիւն: [76] Օտարացուցիչ է ամենայն դժնդակաց, և մերձաւորիչ յուսոյն կենացն յաւիտենից: Տօն է ճշմարիտ քարոզութեանն խնամոց, և աղբիւր սննդեան հոգւոյ սրբոյ բղխման: Հե-

ռացուցիչ է անգիտութեան, և տուն գանձի է իմաստութեան և հանճարոյ։ Ընտանեցուցիչ է ճշմարիտ բարեկամաց, և յանդիմանիչ սպրդողաց սուտ եղբարց ամբարշտաց։ Ցրուելոց ճշմարտասիրաց է ժողովիչ, և անիրաւաց ցրուիչ։ Հեշտացուցիչ [77] սարտուցելոց. պարգևատու շնորհօք՝ որ դառնան յիրաւունս արդարութեան, և կարգաւորիչ ի լաւն առհասարակ։ Մխիթարիչ է սգաւորաց, և սփոփանք ամենայն վտանգելոց։ [78]

Քաղցրութիւն և խոնարհութիւն և հնազանդութիւն անդորրութիւն է ի զարմանս մարդասէր խնամոց։ Առողջութիւն ցաւագնելոց, և յոյս հաստատուն ի հանդերձեալսն։ Ծփելոց նաւահանգիստ, և օգնական առաքինութեան. սըրբութեան ամենագիտ հնարք, և պղերգաց ձեռնտու ի գործս այգւոյն՝ որ առնու վարձս առաջնոցն։ Դուռն բաց է ի կենսաբեր մուտսն, որ ունի զբաղձանս արքայութեանն՝ ընդ ինքեան ունելով զբարիսն։ Եւ փակի ապախտաւորաց և անհնազանդից, ամբարշտաց և մեղաւորաց և որք ոչ լուան նորա բանին։ Եւ որք խոնարհեալ հնազանդին ընդ քաղցըր լծով ապաշխարութեանն, և սոքա ոչ զրկին ի խոստացեալ աւետեացն սոյդ խոստովանողացն և ապաշխարողացըն. զի ոչ եկն [79] կոչել զարդարս, այլ զմեղաւորս։ [80] Զի որ զայս վարս առաքինութեան ունին, կենդանի երանութեամբքըն [81] պսակեսցի յամենասուրբ Երրորդութենէն։ Ազատեալ ի դառն վշտաց գեհենին, և մշտնջենաւոր անմահ խնդութեամբն յանհամեմատ բարիսն վայելեսցէ ի Քրիստոս սքանչելի և լի ամենայն երանութեամբ։ Ուղիղ միաբանութիւն հաւատոյ և սուրբ վարուց առողջ [82] ամբիծ անարատ ունի զերախտիս սիրոյն առ ամենեսեան անդամոցն յարմարութիւն ի Քրիստոս։ * Զի նովաւ հաստատին ի մի կամս Քրիս-

---

* Կող. Բ, 19։

տոսի և ի մի հաւատ. ի նմա բնակի Աստուծոյ յորդորումն և առաքինութեան աճումն։ [83]

Միաբանութիւն հաւատոյ և սուրբ վարուց՝ աղբիւր գիտութեան. ի նոյանէ բաշխի անծախաբար այն՝ որ տայ իւրաքանչիւր զէնս նահատակութեան, զկամս բարիս, ընդրողական միտս. ատել զչարն, և կանխել ի սէրն Աստուծոյ և ի շինութիւն կամացն՝ կատարեալ ապաշխարութեամբ և մտերիմ խոստովանութեամբ։ Միաբանութիւն հաւատոյ և սուրբ վարուց՝ խառնէ ընդ արարիչն զշնորհս, և ի սուրբ յիշատակաց նորա անքակ ունի զամենայն անդամս, և առ դրունս ողորմութեան սիրոյ նորա կայ միշտ վասն ամենայն բարեացն որ յարարածս է։ Եւ ընդ այն դուռն մըտանեն պարգևք միաբանութեան, որ պայծառէ և մեծացուցանէ. և նովին միաբանութեամբ ընդունին անդամքն ի միմեանց զօգնութիւն առ շինութիւն իւրաքանչիւր կարգի։ Եւ ամենայն որ քակի ի միաբանութենէ հաւատոյն և ի սուրբ վարուցն, ոչ միայն հրաժեշտ լինի յերանութենէ անտի, այլ և ի պատիժ [84] մատնի. որպէս անդամ ի մարմնոյ հատեալ անպիտան լինի, և կամ ոստ ի ծառոյ կըտրեալ ի հուր։

Միաբանութիւն հաւատոյ յամենասուրբ Երրորդութիւնն ի սուրբ վարս՝ քաղաք ամուր է երկնային զօրութեամբն պարսպեալ. բնակութիւն է սիրոյն Աստուծոյ և վերին զօրացն, ժողովել ի նոսա ամենայն սրբովք յանճառ օրհնութիւնսն միաբանեալ, ընկղմեալ յուրախութիւնս խնամոց սուրբ սիրոյն՝ վառեալք յուսով փառացն Աստուծոյ. որոց սիրել զմիաբանութիւն անարատ սրբութեանն ամբիծ երախտեօքն Յիսուսի Քրիստոսի։ Զի որ այսպէս [85] անքակ զմիաբանութիւն ունի սիրով Հոգւոյն, հաւատով և սուրբ վարուք, կենդանի երանութեամբն պսակի ի խնամոց սուրբ Երրորդութեանն. ազատեալ ի դառն տանջանաց գեհենին,

և մշտնջենաւոր անհամեմատ բարեօքն բերկրի յանանց կեանսն։

Աստանօր վասն գթութեանց ունիմ ասել, որ կապ է միաբանութեան և մայր է սիրոյ և գոգ հանգստեան առողջութեան, անարատ սուրբ անբիծ երախտաւոր սիրոյ աւետեացն Քրիստոսի։ Զի առատապարգև է առ մերձաւորս և հեռաւորս. դաստիարակ է մեծամեծաց և օգնական տկարաց. սնուցիչ է ընտանեաց և դարմանիչ օտարաց. սիրելի առ երախտաւորս, և ոչ ատեաց զապախտաւորս. սիրէ զբարեկամս ի բարութիւն և կամի զդարձ ատելեաց, զի հասցեն սուրբ սիրոյն։

Գթութիւն խնամք է սուրբ սիրոյն, բորբոքումն անձկոյ առ սիրողն. յիշատակ ծնողաց և յորդորումն ծննդոց. խնդիր հեռացելոց և սնունդ մերձաւորացն միշտ։ Գթութիւն արմատ բարեաց, և ոստք նորա խնդութիւն, և տերև նորա զուարթութիւն, և ծաղիկ նորա ուրախութիւն, և պտուղ նորա անհամեմատ անուշութիւն։ Զի գըթոյն բառնայ զտրտմութիւն անձանց[86] և զտաղտուկ ձանձրութիւնս՝ որ վհատեն զանձն, և զսուգ՝ որ օտարացուցանեն և յիմարեցուցանեն։ Խափանիչ է վատութեան և յորդորիչ առատութեան, խլիչ ագահութեան և ընդունիչ սակաւապետութեան, յանդիմանիչ լկտութեան և ծաղկեցուցիչ սրբութեան, շիջումն թերահաւատութեան և նշոյլք լուսոյ հաւատոց, ելք երկմտութեան և մուտք կենդանի յուսոյն. օտարացուցիչ ատելութեան և անդորրիչ[87] վտանգելոց, և ամենայն նեղելոց սփոփիչ։

Գթութիւն կափիչ է հպարտութեան և լուծիչ նենգութեանց. խայտառակիչ խորամանգութեան և մերժումն ոխակալութեան և նախանձու. խոշտանգանք է անհնազանդից և քաջալերիչ համբերողաց. զօրացուցիչ ժուժկալաց և սրբիչ գիջութեան. խրախոյս է երկայնամտաց և ձեռնտու

խոնարհաց· պսակ զգաստութեան և ամբծութեան և յորդորիչ առաքինութեան· զարթուցիչ է քնէածից [88] և պըղերգաց, և հաստուցիչ ի գործս հանգստեան, որ լին է ամենայն բարութեամբ, որ ունի զխնամս գթութեան առողջ, սուրբ, անարատ, ամբիծ երախտեօք խնամօք սիրոյն: Զի որ զայս հոգևոր գութ յանձին ստացեալ ունի ի վերայ սուրբ փառուց, կենդանի երանութեամբքն պսակի ի խնամոց սիրոյն ամենասուրբ Երրորդութեանն. որ ազատէ ի դառն վշտաց գեհենին և մշտնջենաւոր, անհամեմատ բարեօքն վայելեցուցանէ ի բարիսն:

Այլ և զգաստութիւն իմանալեացն որ հաստատեալ է ի հաւատոն որ ի տէր, իշխանական կամօքն խլէ ի զգայութեանցն զվնասակարսն, և ի ներքս բերէ զառաքինութիւնսն, զսրբութիւն, զխոնարհութիւն, զճշմարտութիւն ըստ ամենայնի: Խզել [89] զգժնդակացն զեկամուտսն, և փառել զէնս հակառակ չարին, և ի վայր կործանել զհակառակս արդարութեանն: Եւ հրով Հոգւոյն հալել զձմեռնային խըստութիւն սառնամանեաց ջերմեռանդ արտասուօք: Եւ արձակել [90] արմատս՝ զքաղցր սրբութիւն և զանոյշ [91] խոնարհութիւն և զբարի հնազանդութիւն ամենայն ճշմարտութեամբ ի Քրիստոս: Եւ բարձրացուցանէ զոստս հաւանութեան հաւատով յամենայն առաքինութեան անմուծս որպէս զծառս, [92] որ տնկեալ են ի գնացս ջուրց: * Որ մեծաւ ցանկութեամբ ի շնորհացն Աստուծոյ շարժին փտակք արտասուացն, որով մաքրին երևելիք և աներևոյթք· և խաղաղ և հեզ ցօղով արբուցանէ զտունկս և զբոյս զկանուխ և զանագան. և յորդորէ զամենայն անդամն յաճումն արդարութեան ի լաւն և յառաւելն. զի եկեսցէ [93] ի կատարումն առաքինութեան պտղովք, խլեալ [94] զոտա-

---

* Սաղմ· Ա, 3·

բանի բոյսն՝ զորոմնն և որ այլ ևս չար սերմանք[95] ի թշնամւոյն սերմանեալ * ի միտս և ի զգայութիւնս, և ըղխռովութիւն ըստ ամենայն սրտմտութեան շարժմանց. ըղյայրատութիւն, զյանդգնութիւն, զանզգամութիւն, զանհնազանդութիւն, զբարկութիւն, զամբարտաւանութիւն, զփառասիրութիւն, զհպարտութիւն, զագահութիւն, զանխտրութիւն,[96] զպղերգութիւն։ Այս են պատճառք կորստեան. վրիպել ի մեծ բարեացն շահից, ի գովութենէ առաքինութեանն փառաց։

Այլք իմանալեօքն որոշել զբարին ի միմիտ խորհուրդս և հաւանական կամօք գործել զբարիս անոյշ և քաղցր և լուսաւոր յորդորմամբ ամենագիտա շնորհօքն Քրիստոսի։ Ցիշատակօք երախտեաց սիրոյն սրբութեան ըստ հաճոյից կամաց տեառն բարերարի արժանեակ լինել շնորհացն ի փառս և ի պատիւ կենաց տուողին։ Եւ գործակից լինել նորա բարերար կամացն հանապազ, և ճշմարտեալ ի հաւատս՝ առաջի սուրբ անարատ անբիծ երախտեօքն հաստատեալ կացցէ։

Եւ զի գլուխ է ամենայն զգայութեանցն իմանալիքն՝ որ ի Քրիստոս շնորհօք ամենայն անդամօք յօդեալ[97] և պատշաճեալ է, և աճէ զաճումն Աստուծոյ, որպէս Առաքեալն ասէ։ ** Եւ ի նմանէ բաշխին շնորհք իմաստութեանն յամենայն անդամսն, յերևելի պէտս և յաներևոյթ։ Եւ ի նմանէ ըմպեն զհանճար բարեաց ի մուտս օգտից և մերժելոյ ի վնասակարացն։ Եւ անտի ծագէ լոյսն յայտնիչ ամենայն քննութեանց[98], և իմաստնանան[99] ամենայն զգայարանքն ի ճաշակս հոգևորական վայելիցն և ընդրայք ըղլաւսն անձանց, և առաջնորդին ի զգուշութիւն իմաստից,[100] և զդրունս բանան զմտից շնորհացն. և զգաստացեալ և

* Մատթ. ԺԳ, 25։
** Կող. Բ, 18։

լուսաւորեալ անվեհեր փութով հանդիսանայ յընթացս վերին կոչմանն, պատրաստ ունելով զօգտակար շահն [101] հոգւոց և մարմնոյ, զի ժառանգեսցէ զառհաւատչեայ երանութիւնսն։

Եւ բերանն բղխէ յիշխանական հոգւոյն զճշմարիտ վարդապետութիւնն առողջութեան անարատ սրբութեան [102] անբիծ սիրով։ Եւ ընդ նա գնան ամենայն վտակք իմաստութեան ի սրտէն յառաջագայեալ արբուցանել և պարարել զշահեկան երկիրն բանիւն կենաց առ ի յաճումն բարութեան բուսոց և առ ծաղիկս անուշահոտս վայելչացեալ քաղցր պտղով։ Եւ զի բերանն է ճշմարիտ բանին որպէս ճրագարան լուսոյ, որ հալածէ զխաւար և յայտնէ զամօթ, և ցուցանէ զաղտեղութիւն և երևեցուցանէ զգայթակղութիւն՝ ուստի բեկանին։ Ուստի Ոգին Աստուծոյ հնարիւք իւրովք զսպառազինութիւն նորա յափշտակեաց, ըզխորամանկութիւնն, զյանդգնութիւն, զյափշտակութիւն, և զողոքանս խաբէից և զարհաւիրս, հարթուցանելով ի ճշմարտութենէ անտի. և որ այլ ևս են մեքենայք չարին, որ յայտնեն նշոյլք վարդապետութեանն Քրիստոսի։ [103] Զի տացէ հնարս նահատակաց առաքինանալ, և յորդորել ընդդէմ չարեացն զուղղութիւնն, և բառնալ ի միտաց զիմաստութիւն մոլորականն, և ամփոփել զինքն ի ճշմարիտ վարս, և զգուշանալ յամենայն վնասուց. [104] առաջնորդել և այլոց ի բարիս։ Եւ զյիշատակ սրբութեան սիրոյն որպէս խարիսխ մեղու ունել ի քիմս բերանոյ իւրոյ. զի նա է որ քաղցրացուցանէ զդառնութիւն չարին։

Իսկ որ բանայ [105] զաչս իւր ի լոյս արեգական ի միջօրէի, ոչ մերձենայ խաւար ի բիբս նորա։ Այնպէս որոյ նայելիքն յատակ են յիշատակաւ սրբութեան, և լոյս ուրախարար է նորա կենդանի սիրոյն խնամք՝ որ պահէ զնա առանց վնասուց տաժից անբիծ և անարատ։ Եւ նովին լուսաւոր շնոր-

հիւ տեսանէ զկորուսելոյն զգիւտս, և մերձաւորս առնէ ողորմութեան փրկչին և ի ներքոյ խնամոց նորա կարգէ։ Զի ճաճանչ լուսոյ քարոզութեան [106] բանին ցուցանէ զդեղ կենդանի յուսոյն, և զդարմանս արքայութեանն զանճառսն և զանպատումսն։ Ի ձեռն ճշմարիտ հաւատոց ընթացուցանէ ընդ ճանապարհ վերին կոչմանն առ Հայրն ամենակալ և առ Որդին բարերար և Հոգին կենդանարար. որ անճառելի է մեծութիւն [107] փառացն։

Արդ [108] և գունդք վերին զօրացն եղեն փեսաւէրք Որդւոյն Աստուծոյ և առիթ փրկութեան մերոյ. և քաջալերեն զսիրելիս Աստուծոյ, որ փրկեաց զմարդիկ ի մահուանէ մեղաց։ Զի ուրախութիւն եղիցի յերկինս, որք դառնան առ Աստուած և ապաշխարեն։ * Եւ որք հաւատացին յԱստուած և հաճոյացան նմա, արար զնոսա ժառանգակիցս իւր արքայութեանն։ Այնպէս և [109] որ այժմ ճշմարիտ հաւատով կատարեցին զբան նորա, և ուսուցին առողջութեամբ, անարատ սրբութեամբ, ամբիծ [110] երախտեօք սուրբ սիրոյն Աստուծոյ։ Զի որ զայս վարս ստացեալ ունի յանձին ըստ ամենայնի ճշմարտեալ, կենդանի երանութեամբք պսակեսցի ի սուրբ Երրորդութենէն. ազատեալ ի դառն տանջանացն, և մշտնջենաւոր յանհամեմատ բարութիւնսն [111] վայելէ։

Եւ աչքն հաւատով սրբեալ, տեսչութիւն խնամոցն նշոյլք է լուսոյ անպակաս [112] ուրախութեանցն։ Որով վառեալ լուցանի լոյսն արեգականն արդարութեան, որ լուսաւորէ զամենայն սուրբս, և մերձաւորս առնէ ի սէր շնորհաց իւրոց, և բառնայ զխաւարային մոլորութիւն, և անսխալ գնացիւքըն [113] ընթանայ ի կէտ կոչմանն վերին յօթևանս հանգստեան [114] ըստ քաղցրութեան լուսոյն Աստուծոյ։ Զի նովաւ հպի ի գիրկս սուրբ սիրոյն Որդւոյն Աստուծոյ, և ի գգուա-

---

* Ղուկ. ԺԵ, 10.

նըս Հօրն երկնաւորի, և ի պարգևս Հոգւոյն սրբոյ յանճառելիսն: Որ տայ զվիճակ ժառանգութեան իւրոյ այնոցիկ՝ որ ի կամս նորա վարեցան յաշխարհի, և զինուորեցան հոգևոր զինուք ընդդէմ չարեացն առնելով միշտ [115] զբարիսն ըստ աւետարանին Քրիստոսի: Եւ կցորդ եղեն նորա չարչարանացըն, և խաչակից եղեն կամաւոր մահուան ամենայն համբերութեամբ ճշմարտեալ անքակ սուրբ սիրով ի նեղութեան և յանդորրու: Շիջուցին զպարտիս [116] ողոքանաց և զխիստ բռնութիւնս կատարեալ ժուժկալութեամբ. հանապազ ակն կալեալ խնամակալ աջոյն, որ զօրացուցանէ զյուսացեալս իւր. զի իմանալեաց աչաց և երևելեաց յոյսն նա է: [117] Զի հանապազ կանխել ի պաղատանս խոնարհ սրտիւ և ջերմեռանդ արտասուօք զաղօթսն մատուցանել Աստուծոյ ի բոլոր սրտէ, և յաչացն հեղուլ զարտասուաց հոսանս, որ ի ձեռն գթոյ անձկոյ յառաջագայի ի նշողից շնորհաց աւետեացն՝ որ բառնայ զվիշտս և զհարուածս և զամենայն վտանգ ի բնաւորաց, և լնու բարութեամբ յորդառատ զղջմամբ, և ընդունարան լինի Հոգւոյն սրբոյ. որ յայտնէ զծածկեալս և զանքնինս [118] սիրելեաց Աստուծոյ. զի և փափաքումն կարօտութեան անձկոյն լցուցանէ կենդանի և անճառ ճաշակօք ի բարերարութենէն: Եւ լոյսն ահեղ անմատոյց ոչ մերժի սքանչելապէս յանձանց անտի. և տեսիլ աչացն հաւատով լուսաւորի. և ի նշողից [119] շնորհացն լնու միշտ և ծաղկեցուցանէ զզգայութիւնսն, և զուարթացուցանէ [120] անմահական խնամովք զայնոսիկ՝ որ մերժեալ են յինքեանց զաշխարհական զցանկութիւնս և զգեցեալ զսրբութեան վերարկու, ամբիծ հաւատով ի սուրբ Երրորդութիւնն ճշմարտեալ, և ի թևս սուրբ Հոգւոյն վարեալ յաշխարհի ի շինութիւն և ի խաղաղութիւն ըստ ամենայնի հոգևորօք և մարմնաւորօք մինչև հասցէ յանքոյթ նաւահանգիստն իմանալի տեսութեամբն, առաջ անբիծ անմա-

րատ խնամօք սուրբ սիրոյ[121] երախտեօքն Քրիստոսի։ Զի որ զայս շնորհս ստացեալ ունի յԱստուծոյ՝ ի վերայ ամենայն սուրբ վարուց կենդանի խնամօք սուրբ սիրոյն յամենասուրբ Երրորդութենէն պսակեցի․ ազատեալ ի դառն տանջանաց[122] և մշտնջենաւոր անհամեմատ խնդութեամբն վայելէ ի բարիսն։

Եւ լսելիք անխարդախ հաւատով հնազանդեալ յառողջութիւն և յանարատ սրբութիւն՝[123] ամբիծ խնամովք երախտաւոր սիրոյն, ընդ որս մտանեն աստուածային պատգամաց աւետիքն, և կերպարանէ ի ներքին մարդն զկերպարանս փրկչին մերոյ[124] Քրիստոսի իւրով փառօքն։ Որ ունի յաջմէ զնիշ խաղաղութեան, և յահեկէ իւրմէ զհաստատութիւն որդէգրութեան, և ի գլուխն իւր ունի զպսակըն պարծանաց, և ընդ մէջ ածեալ զկամարն սրբութեան, և ճշմարիտ զգաստութեամբ պատեալ զկողս իւր ի զօրութեան Քրիստոսի։

Լսելիք դրունք են հաւատոց ի մուտս զգուշութեան անարատ վարուց, երկիւղիւ և խնդութեամբ խառնեալ․ և ելք նորա արդարութիւն և իրաւունք․ ըստ հոգևոր օրինացն կատարեալ սրբութեամբ ծաղկեալ, և ի ներքս բուրէ զանուշահոտութիւն զսաղմոսից[125] և զօրհնութեանց․ և անդ հնչեն փառք Թագաւորին անմահի, և բուրեն օրալէս յանոյշ խնկոց ի բերանոյ սրբոց իւրոց պաշտօնէից, որք սրբութեամբ գովեն զամենասուրբ զԵրրորդութիւնն։ Անդ գունդք հրեշտակաց բանակեալք, և պատրաստութիւնք[126] զուարթնոց, որ վառեալ բորբոքին յերգս հոգևորս, հաւասարեալք ամենեքեան ի միասին հատուցանել զփառս։

Լսելիք հաւատով ճշմարտեալ՝ ընդունելութիւն է ծառոյն կենաց և հաւատոյն[127] քաւութեան և արթուն փրկութեան։ Եւ ի նմանէ[128] արձակեն զարմատս ի սիրտս կատարեալս Աստուծոյ, որ շնորհօք զարմանին հանապազ, և

պարարէ զնա ի ցօղոյ Հոգւոյն սրբոյ։ Եւ ամենայն արարածք որ գրաւեալ են սրբութեամբ ի սէր նորա, ուրախ են ընդ նմա. գոհանան և փառաւորեն զբարերարն Աստուած որ արար զամենայնս, և յարդարեալ պահէ ի փառաւորութիւն[129] սուրբ անուանն իւրոյ։ Լսելիք ճշմարտեալ հաւատով վաւկք են, ոռոգել[130] ի կենաց աղբիւրէն զանդս մտաց և զգայութեանց յաճումն առաքինութեանց։ Եւ զդժնդակաց զբերումն արտաքս հանելով յաւագոյն ժրութեամբն, որ ի նիւթ հրոյն ունի զչանգամանս։ Լսելիք ճըշմարտեալ՝[131] զաստուածոյն յինքն ամփոփէ. որ վերատեղծու զգաստս գիտել,[132] ճանաչել զբարի և զչար։ Որպէս այլալեզուքն զիւրեանց լսեն առ ի պէտս խօսս՝ և ոչ զմերըս, այսպէս և որ զայս լսելիս սրբութեամբ ունի, զաստուածոյն լսէ և ոչ զչարին։ Եւ ունկն սրբոյն բանի որ ի բերանոյ Աստուծոյ՝[133] լսէ, որ մուտ է և անց բանի. որ սրբէ զմիտս և զզգայարանս, և ի հնազանդութիւն յորդորէ հոգևոր օրինացն առողջութեան անարատ և սուրբ երախտաւոր սիրոյն. որ կենդանի խնամօք սիրոյն յամենասուրբ Երրորդութենէն լուսաւոր երանութեամբք պսակեսցի. ազատեալ ի դառն տանջանացն՝ յանհամեմատ բարիսն[134] վայելեսցէ խոպա։

Եւ հոտոտելիք հաւատով հոտոցն[135] են զգայութիւնք գիտութեան և իմաստութեան, առողջ անարատ ամբիծ երախտեօք սուրբ սիրոյն. և ճշմարտեալ անուշութեամբ ի հոգևոր հոտ գիտութեան՝ արբուցանէ ի Հոգւոյն սրբոյ զանձն ի հոգևոր օրինացն։ Չի ի նոցանէ յառաջագայի հոտ գիտութեան Հօր,[136] և ճանաչէ զՈրդի, և իմանայ զՀոգին սուրբ։ Գիտութիւն Հօր տաճար է նորա փառացն. և որք մտանեն ի նա խոստովանութեամբ, գտանեն զնա։ Իմաստութիւն Որդւոյ խորան է նորա ծնելութեանն. զի որք հային ի նա դաւանութեամբ, մերձեցուցանէ առ ինքն։

Եւ ճանաչէ զհոգին սուրբ զտուիչ բարեաց ի ձեռն ճշմարիտ հաւատոցն, որ ցուցանէ զլոյս աստուածութեանն, որ շնորհօք զտեսողսն լուսաւորէ, և հաստ գիտութեան վերաբերէ ընդ վերին զօրսն փառեալ յօրհնութիւն Հօր ի բարձունս և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ ճշմարիտ հաւատով:

Հաստատելք[1] [156] իմաստութեան հաւատոց տայ ճանաչել զհայր ամենակալ, և գիտել զՈրդի մարդասէր գոլ, և ըզհոգին սուրբ պարգևատու: Հաստատելք հաւատոց ընթացուցանեն յարքայութիւնն երկնից: Եւ բանան զդրունս կենաց. որք առ սուրբ Երրորդութիւնն անձկացեալ են, ընդ ինքեանս ունելով զառաքինութիւնս. և փառակից լինել վերին զօրացըն՝ օրհնեն զհայրն ընդ սերովբէսն, և գովեն զՈրդի ընդ քերովբէսն, երկրպագեն[157] Հոգւոյն սրբոյ ընդ հրեշտակս միոյ աստուածութեանն: Հաստատելք ճշմարտեալ հաւատով որոշեն զհատ կենաց և մահու, զարքայութեան և զդժոխոցն, զսրբութեան և զաղտեղութեան,[158] զարդարութեան և զանիրաւութեան: Ոմանց գովութեամբ և շնորհօք բուրէ, և ոմանց պարսաւանօք և զազիրս: Զոմանս վայելչացեալս յերկրէս ամբառնայ առ Աստուած, և զոմանս ի վայր բերեալ և խոտորեալ ի վիհս կորստեան ընկենու:

Հաստատելք ճշմարտեալ հաւատով ճանաչէ զորդիս լուսոյ և զորդիս խաւարի. իմանայ լ՛ս Ի՛,[159] ի-ր սք անչիւր զուղղութեան և զմոլորութեան, որ այլանդակ և այլուսմունք են, որ որոշեն զնոսա ի բաց հատոյն սուրբ ըստ հրամանի տեառն՝ արտաքս հանելով ի խնամոց Աստուծոյ ի խաւարն արտաքին, ուր լալ աչաց է և կրճել ատամանց: Եւ զսուրբսն անուշահոտ վարուքն ծնուցանէ առաքինութեամբ, մինչև հասցեն ի չափ հասակի կատարմանն Քրիստոսի ժառանգորդ լինել անուշակ արքայութեանն. որ ճշմարտեալ են ի հաւատս լուսաւոր և սուրբ վարուք, անարատ և ամբիծ երախտեօք սիրոյն: Զի որ զայս շնորհալից

Հոտ առաքինութեան ունի ի վերայ այլոց սուրբ վարուց՝ կենդանի երանութեամբ պսակեսցի ի խնամոց սիրոյն յամենասուրբ Երրորդութենէն. ազատեալ ի դառն վշտաց գեհենին, և մշտնջենաւոր անհամեմատ երանութեամբն[140] վայելեսցէ ի բարութիւնսն անապառ և անվախճան։

Եւ ձեռք ճշմարտեալ ի բարի գործս հաւատով առողջ անարատ անբիծ երախտեօք սուրբ սիրոյն, են մշակք պատրաստեալ հանդերձեալ աշխարհին արքայութեանն երկնից։ Եւ երախտաւոր լինի բարի գործով՝ լնու բարի սերմամբ զանդս յուսով պտղոցն բարեաց. ձեռնտու գլորելոց՝ զբեկեալսն պատէ, զանկեալսն կանգնէ, զտկարացեալսն զօրացուցանէ, զկարօտեալս յագեցուցանէ. գործեսցէ ձեռօք՝ զի բաւական լիցի տալ * իւրաքանչիւր ըստ շնորհելոյն նմա յԱստուծոյ առողջութեան առ շինութիւն հաւատոց։ Յիշել զԱռաքելոյ ասելն և առնել. ** «Զիս, ասէ, և որ ընդ իմն էին, պաշտեցին ձեռքս այս հանապազ»։[141]

Ձեռք սուրբ հաւատով բուրվառք են անուշահոտ խնկով ի հրոյ Հոգւոյն սրբոյ՝ բուրեալ ի բարի գործս հեռաւորաց և մերձաւորաց ի վայելս. և ի վեր ամբառնալ ամենասուրբս և գոհութիւն ընծայել Աստուծոյ։ Ձեռք ճշմարտեալ հաւատով գործարան են մտաց և մարմնոյ, որ զիւրաքանչիւրոցն զպէտսն վճարէ յերևելիսս և յաներևոյթսն անարատ յօրինեալ գովութեամբ ի փառս Աստուծոյ *** ըստ աւետարանին։ Ուստի ծագէ լոյսն աւետեաց՝ ձեռացն տարածմամբ, և գործողի զյաղթութեան զվարձս առնուլ։ Ձեռք ճշմարտեալ հաւատով՝ անօթ է խորհրդոյ խաչին, որ խլէ զփուշ յանդէ՝ զանիծիցն զտատասկ մեղացն, և անկէ ըղ-

* Եփես. Դ, 28։

** Գործք. Ի, 34։

*** Մատթ. Ե, 16։

ծառն կենաց՝ որ պտղաբերէ ի մեզ զՔրիստոսի մարմինն և զարիւնն ի թողութիւն մեղաց ի ձեռն սրբութեան և խոնարհութեան և հնազանդութեան. զի այսպէս մտցուք ի յարկս լուսոյն կենաց: Ձեռք ճշմարտեալ հաւատով մշակք հոգւոյն ճշմարտութեան են, որ ի ձեռն վաստակոց իւրեանց առաքինութեանն առնուն պարծանօք զվարձսն և որպէս ի ծովու յաշխարհէս ձեռօք վարեն զնաւս, զի հասցեն ի նաւահանգիստն խաղաղութեան և հանգիցեն ի Քրիստոս Յիսուս: Ձեռք ճշմարտեալք[142] հաւատով որսորդք են ոչ ձըկանց, այլ մարդկան. որ քահանայական ձեռնադրութեամբ շնորհս ընձեռի[143] ի հոգւոյն սրբոյ ազգմանէ, որսալով աւետարանին ուռկանաւն, առողջ և անարատ անբիծ երախտեօք խնամակալ սուրբ սիրոյն: Զի որ զձեռագործս ստուգութեամբ[144] կատարեսցէ հանդերձ սուրբ վարուք, կենդանի երանութեամբքն երախտաւոր սիրովն պսակեսցի յամենասուրբ Երրորդութենէն. ազատեալ ի պատժոց գեհենին, յանհամեմատ բարութիւնսն[145] վայելէ յանանց և յանսպառ:

Եւ տուք ուղղեալ հաւատով՝ ի գնացս սրբութեան, անարատ և անբիծ երախտեօք սուրբ սիրոյն՝ նախաշաւիղ ճանապարհորդէ ըստ աւետարանին ի հանդերձեալսն յօթևանս արդարոց որ ի Քրիստոս: Ոտք ուղղեալ հաւատով՝ հասուցանեն ամենասուրբ վարուք և կարգօք ի քաղաքն կենդանեաց ի սրբոցն ժողովն: Ոտք ուղղեալ հաւատով՝ երիվարք են սուրբ կամաց, որք ընթացուցանեն ի գործ նահատակութեան վերին[146] կոչմանն: Ոտք ուղղեալ հաւատով՝ ըղ հրաւիրեալս և զկոչեցեալս յորդորէ ի հոգևոր ուրախութիւնն պայծառ և սուրբ գնացիւք, հանդերձ յարմարական առաքինութեամբ, ոչ ինչ խածեալ զգարշապարս: Ոտք ուղղեալ հաւատով՝ ընթացուցանեն զհետ մոլորելոց ի դարձուցանել զհողեղէնս ի հոգեղէնս, զապիրատս յիրաւունս, զան-

հնազանդս ի հնազանդութիւն արդարութեան գնացից:[147] Ոտք ուղղեալ հաւատով առաջնորդեն վերնայնոցն[148] զհետ երթալ՝ ուր սրբոցն բնակութիւն. և կոխել զզօրութիւն թշնամւոյն, ամրացեալ պահպանական կօշկօք առաքինութեան. որ ոչ կարասցէ խածանել[149] օձն ի ճանապարհի, և լուծանել ըստ Աստուծոյ զգնացսն: Ոտք ուղղեալ հաւատով՝ կոխեն զհուր ըստ օրինակի երից մանկանցն՝ գնալով ի հընոցին:** կամ որպէս Պետրոս ի վերայ ծովուն գնալով որպէս ի վերայ յատակի. եթէ ոչ էր ի թերահաւատութենէն ընկղմեալ, ոչ օգնականութեան Յիսուսի կարօտանայր, որ վերստին զգնացս հաստատեաց ի վերայ ալեաց ծովուն:*** Զի որ այսպէս հանդիսացեալք ըստ աւետարանական գընացից արդարութիւն,[150] աւետեօք յուսոյն պսակեցին յամենասուրբ Երրորդութենէն, և զանսպառ բարիսն ժառանգեսցեն:[151]

Այսօրիկ խրատեալք և պսակեալք առ հաւատչեայ լուսովն,[152] ծառայել առաջի տեառն երկիւղիւ և ցնծալ առաջի նորա դողութեամբ, ընդ[153] Դաւթայ ասել. «Ընկալարուք զխրատ Նորա՝ զի մի բարկասցի տէր, և կորնչիջիք ի ճանապարհաց արդարութեան ի ժամանակի յորում զարթչիցի[154] բարկութիւն Նորա»* ի դատել զերկիրս և հատուցանել ըստ արդար դատաստանին, դժնդակացն և յանցաւորացն, որք մեղան և ոչ ապաշխարեցին, որդն անմահ և խաւարն արտաքին, ուր լալ աչաց է և կրճել ատամանց, և անշէջ հուր գեհենին պատրաստեալ կայ անմահ տանջա-

* Մատթ. ԺԴ, 29.
** Դան. Գ, 49.
*** Մատթ. ԺԴ, 28.
* Սաղմ. Բ, 12.

նացն։ Իսկ որ սրբեցին զանձինս իւրեանց յամենայն աղտեղի ցանկութեանց և կատարեցին զարդարութիւնս ամենայն, անհամեմատ երանութեամբք մեծարեալ և փառաւորեալ պարծանօք պսակեսցին յամենասուրբ Երրորդութենէն։ Որում փառք յաւիտեանս յաւիտենից ամէն։

ԵՐԱՆԵԼՒՈՅՆ ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ՀԱՅՈՑ ԼՈՒՍԱՒՈՐՉԻՆ

ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ ԲԱՐԵՐԱՐ ԱՐԱՐՉԻՆ ԽՆԱՄՈՑ ԵՒ ԿՇՏԱՄԲՈՒԹԻՒՆ ԱՆՀՆԱԶԱՆԴՈՒԹԵԱՆ ԵՒ ՍՏԱՀԱԿՈՒԹԵԱՆ [1]

ԵՒ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ԲԱՐՈՒԹԵԱՆ ԲԱՐԵԱՑՆ [2] ԼԱՒՈՒԹԵԱՆ

ԺԲ

ԲԱԶՄԱԴԻՄԻ *են երախտիք շնորհաց միոյ Հօրն բարեբարի, և միոյ Տեառն կենարարի խնամք արարչութեանն լուսաւոր փոփոխմանցն, և միոյ Հոգւոյն սրբոյ խնամոցն պարգևք և ամենագիտ սիրոյն առ երկնաւորս և երկրաւորս և որ ի նոսա են արարածք ամենայն։*

Ջուր և օդ ըստ փոփոխման արարչին յօրինուածոց ցուցանեն [3] վերնոց և ներքնոց, առ փոքր փոքր զաճումն առեալ, և ի կատարումն ընթացուցանեն Հաճոյից Աստուծոյ, և զհանդէս մտերմութեան բացայայտեն երկրաւորացս և երկնաւորացն լուսաւորացն մտերմութեան գործակցութեամբ հոգևոր օրինացն բարձրացուցանել ի փառս և ի պատիւ լրմամբ խոստացեալ բարեացն. որ փառօք և պարծանօք մեծարեալ են բարերար և առատ և աննախանձ կենդանարար շնորհօքն։ Եւ զփոփոխմունս յարգանացն տեսեալ՝ յառաւել մտերմութեան հանդէսն յորդորին, և զաներևոյթսն երևելեօքս ցուցանեն առողջ անարատ լուսաւոր սրբութեան յորդորմամբ՝ անբիծ երախտեօք սիրոյն։ Եւ ընձայաբեր լինել տեառն ըստ միոյ միոյ պարգևին գործակցութեամբ ամենաշահ նորա խրատուցն զմերս մեծարելով հաւանի [4] և բարերար կամաց շնորհողին. կարգելով [5] մշակս ճշմարտու-

թեան * առ երախտիս բարեացն ամենայնի յաներևոյթ ան [6] յանմարմին զօրութիւնսն ասեմ, և յերևելիս որդիս մարդկան։ Զի նովաւ կեան և շարժին երկնաւորքն և երկրաւորքս։ **

Ի բարերար կամացն Աստուծոյ արբանեակք լինին և սիրելեաց նորա վերին զօրքն, առաքելոց և մարգարէից և ուղիղ վարդապետաց, վկայից սրբոց, քահանայից, կուսանաց, արդարոց և ամենայն ճշմարտասիրաց՝ որք առաքինութեամբ նահատակին ի փրկութիւն անձանց և մերձաւորաց գործակցութեամբ հոգևոր օրինացն տեառն։ Եւ առ փոքր փոքր յաւելուածովն գալ ի կատարումն սննդեամբն։ Որպէս և ինքն իսկ եցոյց զիւրոց գործոցն զյօրինուածս ի ծնունդս. որ յոչնչէ ի սաղմնէն յարգանդէն ի հաւանութենէ արուին և իգին ըստ օրինաւոր ամուսնութեան կարգացըն Աստուծոյ՝ զաւակ ստանան ի սփոփանս անձանց և մերձաւորաց և ի գոհութիւն պարգևատուին, և բազում ուրախութիւն ցուցանեն ի ծննդեանն, և բարեկամօք և մերձաւորօք տօն կատարի ծննդեանն և անուանակոչութեանն։ Որ ի մթին և յաղջամղջին յորովայնէ յառաջ եկեալ մարդկերպարանեալ ցուցանի յերկրի։ Եւ յորժամ սննդեամբ մարմինն աճէ ի կատարեալ հասակ պատրաստութեամբ արուեստիցն ուսմամբ, [7] և ոգիքն բանաւորք և մտաւորք ըստ մարմնոյ աճմանն զգիտութիւն և զիմաստութիւն ըստ [8] նմին բացայայտեն ի ձեռն ուսուցչացն խրատուց. որ և պետութեանց և իշխանութեանց հանդիպին յերկրի։

Եւ նախ քան զամենայն ճանաչելն զԱստուած, և արարածովքս իմանալ զարարիչն երկնի և երկրի և որ ի նոսա արարածք իցեն. և լինել աշակերտ և արբանեակ նորա կամա-

---

* Մատթ. ԻԵ, 21։

** Գործք. ԺԷ, 28։

ցըն՝ նմանեալ նորա բարերարութեան։ Ատել զչարն և սիրել [9] զբարին․ պատճառ լինել շահից և խլիչ վնասուց կորստեան․ երախտաւոր լինել հեռաւորաց և մերձաւորաց առ դրացիս և ընտանիս․ բարի կամօք և բարի գնացիւք և բարի գործովք առ ամենեսեան, լինել արժանաւոր իրաւամբք, և արդար և ուղիղ և սուրբ և ճշմարիտ վարս ստանալ։ Եւ այնպէս երանելի երևեալ յաշխարհի՝ ամենայն առաքինութեամբ զարդարեալ ըստ պատկերի Աստուծոյ, փոխի յանուշակն՝ կենդանի յանմահ փառսն ի յոյժ յարութեան, և ընդունի զերանութիւն սիրոյն։ Զի խնամով սիրոյն լի են երկինք և երկիր և որ ի նոսա արարածք իցեն, և նորա նախախնամութեամբն դարմանին

Եւ ոգիք կատարելոց սիրելեաց Աստուծոյ ուր և են, ի նորա սուրբ սիրոյն ի գիր կան, և ի նորա կենդանի խնամսն վայելեն։ Նոյնպէս և մարմինք ի նորա գիրն [10] անկեալ [11] ի խնամոցն պահին, եթէ ի ցամաքի և եթէ ի ջուրս՝ ուր և իցեն։ Զի Աստուած մեր յերկինս և յերկրի, ի ծովս և յամենայն խորս, ասէ մարգարէն։ Եւ դարձեալ ասէ․ «Եթէ [12] ելանեմ յերկինս, դու անդ ես․ և եթէ իջանեմ ի դժոխս, և անդր մօտ ես․ եթէ առից զթևս իմ ընդ առաւօտս և բնակեցայց յեզերս ծովու, սակայն և անդ ձեռն քո առաջնորդեսցէ ինձ և աջ քո ընկալցէ զիս սիրով»։ * Դժոխս ասէ զգերեզմանն ապականիչ՝ որ Աստուծոյ խնամովքն պահի [13] ի յոյս յարութեանն․ ուստի վերստին նորոգին ի կեանս յաւիտենից՝ ընդունելով զհոգիս իւրեանց։ Եւ որ սուրբք իցեն, ի Քրիստոս մերձ լինին․ զի «Ուր եսն եմ, անդ և պաշտօնեայն իմ եղիցի»։ [14]

Այլ և զմեղաւորացն զմարմինս և զհոգիս պահէ, ուր և իցեն, ի յանդիմանութիւն կշտամբանաց մեծի աւուրն դա-

* Սաղ ԼԸ, 7։

տատանի և յարութեանն որ ի մեռելոց։ Զի դիմադարձ եղեն օրինացն արդարութեան, սիրեցին զչար և ատեցին զբարի, և զպատուիրանս նորա ոչ պահեցին։ Իսկ որք ճըշմարտեալ սիրով խնդրեցին զնա, եղև նոցա պարգևատու. զի արդար է տէր և ուղիղ են դատաստանք նորա, թէպէտ և մեզ է այս անհասանելի։ Որ ծագէ զարեգակն ի վերայ չարեաց և բարեաց, [15] և որ այլ ևս են խնամք հասարակաց ի տեառնէ։ Բայց որ առնէ զկամս նորա, մնայ յաւիտեան. զի «Եղերուք սուրբք և արդարք, զի և ես սուրբ եմ և արդար, ասէ տէր»։* Իսկ որ զայս աւետիս ունին [16] յանձինս, սրբեն զինքեանս յամենայն ցանկութեանց, [17] և լինին արբանեակք ճշմարիտ և սուրբ վարուց, և այնպէս լինին ընդունարան Աստուածային շնորհացն և օթևանք Աստուծոյ։ [18] Արդ որ այսպիսիք են, ի խնամս սիրոյն հաստատեալ կան։ Որպէս և ասաց՝ ** եթէ «Բնակեցայց ի նոսա և գնացից ի նոսա և եղէց նոցա յԱստուած, և նոքա եղիցին ինձ ժողովուրդ». [19] և դարձեալ. «Ես եղէց նոցա ի հայր, և նոքա եղիցին ինձ յուստերս և ի դստերս, ասէ տէր ամենակալ»։

Արդ ամենայն արարածք ի ներքոյ զօրութեան նորա կախեալ կան. բայց զսիրելիս իւր և զկամարարս ի ներքոյ վարագուրի խնամոց սիրոյն պահէ յամենայն վտանգից։ Եւ այլ կայեանք են, որք [20] արհամարհեցին զօրէնս նորա, և ծառայեցին դժնդակ ցանկութեանց անխտիր և պէսպէս չարեաց, որք ժառանգեն [21] զարտաքին խաւարն։ Խաւար է [22] աստ արտաքին չար, որոց խաւարեալ են միտք և զգայութիւնք, և օտարացեալ են ի կենաց անտի, որպէս ասէ առաքեալ։ [23] Եւ են անդ [24] ի հուր գեհենին, ուր լալ աչաց է [25]

* Թիւք. ԻԶ, 12.

** Եր. ԼԱ, 33. Բ. Կորն. Զ, 16.

և ոչ զոք տեսանէ, և որ ի նոյն են տանջանք՝ որ պատրաստեալ է դիւաց [26] և պղծոց։

Զի իբրև երկրաւոր կեանքս ի ձեռն մահուան ի գլուխ ելանեն, հոգիքն յուղարկին առ Աստուած՝ որ ետ զնա, և մարմինն դառնայ ի հող՝ յորմէ ստեղծաւ յարարչէն։ [27] Եւ սուրբ և արդար հոգեացն ընդ առաջ գան հրեշտակք և սրբոցն [28] հոգիքն, և տանին առաջի Աստուծոյ սաղմոսիւք և օրհնութեամբ և երգօք հոգևորօք, գովելով զամենազօր փառս տէրութեանն ամենասուրբ Երրորդութեանն. և գոհանան զերախտաւոր բարերարութենէն, որ փոխէ [29] յերկրաւորացս յերկնաւորն, յանարգութենէ ի պատիւ ըզհրաւիրեալսն և զկոչեցեալսն յիւր արքայութիւնն և ի փառսն. որ նա միայն է փառաց և պատուոյ և օրհնութեանց արժանի։ Քաղցր խոնարհութեամբ, հնազանդութեամբ օրինացն, ընծայիւք պատարագաց ի նուէրս լրութեան գործոց բարեաց, զՔրիստոս [30] պատարագեալ զարսափելի [31] զխորհուրդն [32] վասն նորա փրկութեան և յուսոյն քահանայական խորհրդածութեամբ։ [33] Զկապեալս արձակել, ըզպարտս թողուլ, զկարօտեալս լցուցանել, և որ այլ ևս են բարեգործութիւն ի բազմաձեռնութեամբ աղօթիւք և խնդրուածովք, ջերմեռանդ արտասուօք վասն հանդերձելոցն [34] փրկանաց։ Այսոքիւք յուղարկել զհրաժարեալսն [35] ի յոյս կենացն յաւիտենից ի Քրիստոս, որ այսօքիւք հաշտեսցի Հայրն գթած և Որդին բարերար և Հոգին սուրբ բարեխնամող. և ուրախութիւն լինի ի վերայ այսոցիկ վերին զօրացն, որպէս ի վերայ մեղաւորաց որ դառնան ստուգապէս խոստովանութեամբ յապաշխարութիւն. և ընդունին զհոգիսն յօթևանս ըստ իւրաքանչիւր արժանաւորութեան, բաժանել և որոշել [36] զհանգիստ և զտեղի ըստ տեսչութեանն Աստուծոյ։

Ի վերայ այսոցիկ հաւատացելոց և արժանաւորաց յուսոյ, որ անյուսութեամբն լան և կոծին և ցաւին[37] զհրաժարեալսն յերկրէս որպէս զհեթանոսս՝ որոց ոչ գոյ յոյս, բարկացուցանեն զԱստուած։ Եւ ի գործոց երախտեաց չարեացն որ ընծայեցաւ Աստուծոյ[38] վասն հրաժարելոյն, զըրկեն այնուիկ զնա ի հանգստենէն, և տրտմեցուցանեն ըզզօրս երկնաւորս և զհոգիս արդարոց, և զնոցին զհոգիսն իսկ՝ վասն որոյ զսուգն յերկարեն։ Եւ ինքեանք անկանին ի պատիժս վասն անյուսութեանն, և առնուն զվճիռս պատուհասիցն։ Զի որ խռովեցուցանէ զԱստուած և տրտմեցուցանէ զերկնային զօրսն և զարդարոցն հոգիս և զրկէ զհոգի հանգուցելոցն[39] ի հանգստենէն, կրեսցէ զդատաստան ո ոք և իցէ՝ ըստ Առաքելոյ բանին։* Արդ որ զմարդիկ խռովեցուցանեն՝ պատուհաս կրեսցեն, ո՞րքան որ զԱստուած և զընտանիսն նորա զհրեշտակս և զսուրբս։ Զի Աստուծոյ դատաստանքն ճշմարտութեամբ են, ասէ,** ի վերայ այնոցիկ՝ որ զայնպիսին գործեն։[40]

Եւ զի[41] երրորդ մարդկային կեանք բացայայտին, առաջին է յորովայնի մօրն սաղմն առեալ և աճեալ, ի մթին և յաղջամղջին արգանդին զկեանս տնօրինեալ մինչև ի ժամանակ[42] ծննդեանն։ Եւ երկրորդ՝ կեանք երկրագործ․ որ յաշխարհիս քաղաքավարի ըստ աշխարհիս բերմանց,[43] նախախնամութեամբ արարչին դարմանեալ յերկրէ և ի ծովէ։ Իսկ երրորդ՝ կենդանեաց աշխարհն․ ուր ոչ լսի համբաւ մահու․ այլ ոչ փոփոխի կենդանի երանութիւնքն, անհրաժեշտ պայծառութիւնն, անմոռաց ուրախութիւնն։ Զոր ոչ կարէ ասել բան, զի անճառելիք են՝ և ոչ ունկն կարէ լսել, զի անհամեմատ է ի լսել․ և ոչ միտք բովանդակեն, զի անխա-

---

* Գաղ. Ե, 10։

** Հռ. Բ, 2։

նալի է քննողաց։ Զի և ոչ զյորովայնի զկեանսն կարէ ոք ասել զյօրինուածսն. այլ և ոչ զերեւելիսս ոք բովանդակել[44] ասել, որ ի յերկինս և ի յերկրէ և ի ծովէ կեանք մարդկան ի խնամոց Աստուծոյ մատակարարին, թող թէ զառհաւատչեայ յուսոյն զանանց կեանսն։ Բայց Հրաւիրեն[45]. միայն գիրք խոստմամբք զարքայութիւնն հաւատացելոց, և յորդորեն յուսով զողջախոհսն՝ թէ որ զերկինս և զերկիր ետ լրիւ-իւրովլ ի սնունդ ամենայն բարեօք վասն ոչ մի իւիք[46] լաւութեան, ապա ի սոցանէ յայտնէ զայն անսուտ խոստմունքն ի բարերար տեառնէն սիրողաց իւրոց։

Եւ զի ոչ կարեն ճառել սիրողք Աստուծոյ զհանդերձեալսըն, այլ ի բանէն տեառն. [47] «Ծագեսցեն, ասէ, [48] արդարքըն որպէս զարեգակն յարքայութեան Աստուծոյ»։ * Եւ որպէս ոչ է նման խաւար՝ արեգական լուսոյ, սոյնպէս և ոչ արեգական լոյս կենդանի լուսոյ փառացն համեմատ է, զոր զգենլոց են սուրբքն զանստուեր լոյսն զմշտնջենաւորն զանփոփոխն՝ որ լին է կենդանարար բարութեամբք։ Զի որպէս ի զգալիսս արեգակս, յիմանալիսն Աստուած է՝ որ լուսաւորէ զամենայն։

Զի որք աստ ըստ խրատու պատուիրանաց տեառն հրահանգեն զինքեանս ի վարս առաքինութեան, առհաւատչեայ յուսոյն իբրև ի տուընջեան բարեձև կարգօք վարեն զաշխարհ, և ոչ մեկնին ի նորա կամացն, ոչ ի տխրականաց և ոչ ի հեշտականաց, և ոչ խռովեցուցանէ զԱստուած և ըզգօրս անմարմնոցն տրտմեցուցանէ և զհոգիս արդարոցն ի զգայութենէ շնորհացն, Որ յամենայն դժնդակաց շարժմունս՝ որ ի սուգ և ի վիշտս՝ ի նեղութեան և յանդորրութեան արտաքոյ կամացն[49] Աստուծոյ գործէ։ Իսկ որ առաքինաբար անցանեն ընդ վիշտս և ընդ նեղութիւնս՝ ոչ ինչ վնաս-

* Մատթ. ԺԳ, 43։

եալ ի պատահեալսն, ուրախ առնեն զԱստուած, և ի Հըրճուանս զզօրս Հրեշտակաց և զգլխ արդարոց՝ ըստ այնմ օրինակի զոր վերագոյնն ասացաք։ Եւ լուսաւորեալք լուսով աւետեացն՝ փոխին յանմահութեան կեանսն։

Իսկ որք մեղաւորքն են վախճանեալ ամբարշտութեամբ և անիրաւութեամբ և յուսահատութեամբ, նոքա են ողբոց արժանի և արտասուաց։ Որք վրիպեցան ի խոստացեալ բարեացն և յանսպառ ուրախութեանցն, և Հրաւիրեցան յանշէջ հուր գեհենին և յանմահ սատակումն, ուր լալ աչաց և կրճել ատամանց է միշտ։ Զի որ զճշմարտեալսն Հաւատով և զբարեգործսն վարուք սգան անյոյս, նոքա ընդունին զպատուհաս փոխանակ անյուսութեան ի տեառնէ, և զՀրաժարելոցն հոգիսն վնասեն։ Արտասուք [50] օգտակար այս են ի տէր, որ զմեռելոցն գլխշատակս մեղացն և զանձանց [51] առաջի Աստուծոյ ընծայել և ոչ առաջի Հրապարակաց. որ լինի սրբարան մեղաց և ոչ ի պատիժ։ Եւ ջերմեռանդ արտասուօք միշտ յաղօթսն կանխել ի տուէ և ի գիշերի հսկել։ Եւ ցաւագին հեծութեամբ և պահօք պընդութեամբ, բազում զղջմամբ և ապաշաւանօք զխալանսըն սգալ համապազ, որ վրիպեցան յերանելի [52] լուսոյն և ի յայտնութեան փառաց մեծին Աստուծոյ։ Զի որ իւր մեղօքն ի խոստացեալ Աստուծոյ բարեացն զրկեցաւ, զնա սըգասցուք այնպիսի ապաշաւանօք, և եղուկ վարկանել ըզվրիպեալսն յանանց բարեացն։ Եւ արտասուալից աղօթիւք և առատատուր ողորմութեամբ և ամենայն բարեգործութեամբք հանդերձ Քրիստոսի [53] պատարագաւն զԱստուած ի հաշտութիւն ածել, և Հրաժարելոյն մխիթար լինել ի Հանդերձեալսն։

Այսքիկ են որ զանձն օգտեցուցանեն, և զհրաժարեալսըն՝ իւրեանց մերձաւորօքն և զմտերիմ սէրն ցուցանեն վասն հրաժարելոյն յերկրէ։ Վասն հաւատացելոցն յուսով

զննջեցելոյն [54] և Առաքեալ մխիթարէ և ասէ. «Մի տրտմիք որպէս և հեթանոսք, որոց ոչ գոյ յոյս. զի որպէս յարեաւ Քրիստոս ի մեռելոց, նոյնպէս և զննջեցելոյն [55] մեր և զմեզ յարուսցէ և յանդիման կացուսցէ իւր հանդերձ ամենայն սրբովք ի գալստեանն իւրում Քրիստոս»: * Ի զօրըս [56] մակաբայեցւոց երևի յոյս. ** որ զնիշ հեթանոսաց յանձին ունելով անկան ի պատերազմի, և զնոցա աւարն ետուն ցքահանայսն, զի աղքատաց բաշխեսցեն ի քաւութիւն նոցա մեղացն՝ վրիպելոց [57] ի ճշմարտիցն: Եւ զի գիրք են մեր վարդապետք, և ի ձեռն նոցա զյաւիտենից զյոյսն ընկալցուք. և նոքօք վարեսցուք յաշխարհի. զի ճշմարտեալք սուրբ սիրով փոխեսցուք ի կենդանի լոյսն երանութեան՝ որ կայ և մնայ:

Պատուական՝ ասէ մարգարէն *** զմահ սրբոց առաջի տեառն ամենակալի: Եւ ի՞ւ է պատուական մահ սրբոց. որ ճշմարիտ որոշմամբ զլուսն ի հանդէս առաքինութեանն ցուցեալ ի յոյս կենացն յաւիտենականաց: Ի՞ւ է պատուական մահ սրբոցն Աստուծոյ. [58] զի յանցաւոր կենացս յայսցանէ ի մշտնջենաւոր [59] կեանսն փոխին: Ի՞ւ է պատուական մահ սրբոցն Աստուծոյ. զի ի վշտագին նեղութեանցս այսոցիկ ի հանգիստ բարեացն փոխին: Ի՞ւ է պատուական մահ սըրբոցն Աստուծոյ. զի ի թշուառութենէ և յեղկելի կենացս յերանելի կեանսն փոխին: Ի՞ւ է պատուական մահ սրբոց Աստուծոյ. զի յակամայ փորձանաց հոգւոյ և մարմնոյ ազատի և յանդորր փոխի: Ի՞ւ է պատուական մահ սրբոց Աստուծոյ. զի զծերութիւն և զտկարութիւն թողուն, և ի նորոգութիւնս վերստին փոխին: Ի՞ւ է պատուական մահ սրբոցն Աստուծոյ. զի սիրովն որով յաղթեցին ամենայն

---

* Ա. Թեսաղ. Դ, 12.

** Բ. Մակ. ԺԲ, 40.

*** Սաղմ. ՃԺԴ, 6.

կարեաց մարմնոյն, ի նա փոխին։ [60] Ի՞ւ է պատուական մահ սրբոցն Աստուծոյ. զի զմեղացն մահ մեռան յերկրի, և կենդանի յուսոյն փափաքեցին. զի յորժամ Քրիստոս յայտնեսցի կեանքն մեր, յայնժամ և սուրբք ընդ նմա փառաւորին։ Զի սուրբք կենդանի երանութեամբք կացին յաշխարհի, և այժմ կենդանի են առ Աստուծոյ խնամին։ Զի հոգիք արդարոց ի ձեռին Աստուծոյ * են ուրախարար յուսովըն ըստ անսուտ խոստմանցն Աստուծոյ. զոր ի յարութեանն ընդունելոց են զփառս յաղագս սրբութեան և արդարութեան և ճշմարտութեանն յարքայութեանն երկնից յամենասուրբ Երրորդութենէն։

Իսկ որ կենդանի մարմնով մեղացն յաշխարհի վարին զաղիր ախտիւք և դժնդակ վարուք, կենդանի մեռեալս կոչեն Աստուածային գիրք։ Որպէս զայն որ ասաց տէրն՝ մեռելոցն մեղօք թաղեալ [61] զհայրն մեռեալ, և նմա քարոզել զարքայութիւն Աստուծոյ։ ** Զի որ յուսահատ են ի կենաց անտի և օտարացեալք յԱստուծոյ և յուղիղ վարուց նոքա են ստուգապէս մեռեալ։ Եւ որք արարին զկամս մարմնոյ և զմտաց, որպէս ի գերեզմանի թաղեալ կան նեխեալ մեղօք ի մարմինս անսրբոց և պղծոց և անխտիր յամենայն յանցանս. որք և ժահահոտութիւնս բուրեն զանօրէնութեանցն։ Որպէս տէրն ցուցանէ *** զփարիսեցւոցն ժողովսն. որ ի վեր երևին ինչ, և ի ներքոյ լի են ամբարշտութեամբ չարեօք և հայհոյութեամբ։ [62] Զի որպէս գերեզմանք բաց են կոկորդք նոցա, ասէ մարգարէն. դատեա զնոսա, տէր Աստուած, զի անկցին ի խորհրդոց իւրեանց

---

* Իմաստ. Գ, 1.

** Ղուկ. Թ, 59.

*** Մատթ. ԻԳ, 27.

չարաց։* Զայնպիսիսն ողբասցուք, որ կենդանի մեռեալք էին և մեռան զհասարակացն մահ անմխիթար։

Զմահ մեղաւորաց՝ չար ասէ մարգարէն յաղագս դժնդակ անսուրբ վարուց.** բայց որ ատէին զարդարս յաղագս ողջախոհ խրատուց՝ զղջացին, զի հրաւիրեցան յանշէջ հուր գեհենին։ Ի՞ւ է չար մահ մեղաւորին. զի յուսահատութեամբ է վախճան նոցա. զի մեռան և ոչ զղջացան և ոչ ապաշխարեցին և հաշտեցուցին զԱստուած։ Ի՞ւ է չար մահ մեղաւորին. զի ելին ի ժառանգութենէ հրեշտակաց, և եղեն ժառանգորդք դիւաց և յաւիտենից տանջանացն՝ որ նոցա էր պատրաստեալ յամենեցունց տեառնէն։ Ի՞ւ է չար մահ մեղաւորին. զի ել յայս աշխարհէս որ անզգայաբար կեայր և ոչ առնոյր ի միտ զօր ելիցն. զոր ոչ կարէ գործել զկնի աստի վճարելոյն զբարի և մտանել առ Աստուած։ Ի՞ւ է չար մահ մեղաւորին. զի լսեն յամենեցուն տեառնէն՝ երթայք յինէն անիծեալք ի հուրն յաւիտենից. որ սատանայի կամարարք եղեն և ոչ Աստուծոյ՝ որ արար զամենայն ի բարի կամս։ Ի՞ւ է չար մահ մեղաւորաց. զի դրունք կենաց ապաշխարութեան փակեցան, և ոչ ևս է լսել ի տեառնէ՝ դարձարուք առիս, և ես դառնամ առ ձեզ.*** այլ թէ՝ հանէք ի խաւարն արտաքին, զի ոչ լուան ինձ։**** Ի՞ւ է չար մահ մեղաւորաց. զի բանան դրունք մահաբեր դժոխոցն յաղագս զանազան դժնդակ չարեացն զոր գործեցին, և ոչ յիշեցին զտանջանսն յաւիտենից մեղաւորաց։

Զի անդ զղջումն անօգուտ է. զի արգելեալ է գութ մարդասիրութեանն, որք յառագաստէն արտաքս անկան։ Եւ կամ կաթի ջրոյն կարօտին Ղազարու,[62] և կամ շիջեալ

* Սաղմ. Ե, 11.

** Սաղմ. ԼԳ,

*** Մաղ. Գ, 7.

**** Մատթ. ԻԲ, 13.

Ջահից իւղ, և որ այլ ևս են անշրջելիք. և ոչ ուստեք գըտանել այցելութիւն: Այլ երթիցեն մեղաւորքն ի տանջանսըն յաւիտենից, ասաց բանն Աստուծոյ մեզ. իսկ արդարքըն ի կեանսն յաւիտենից: Որոց պատուական ցուցաւ մահ սրբոցն առաջի տեառն յաղագս սուրբ և ուղիղ[63] վարուց ճշմարիտ հաւատով, լուսաւորեալք ի լոյս կենացն յաւիտենից: Զի ի վերայ արդարոց և մեղաւորաց յանսուտ բանէն յաւիտենիցն է հաստատեալ, և ոչ ունի փոփոխումն[64] «Երթիցեն մեղաւորքն յաւիտենից տանջանսն, և արդարքն յաւիտենից կեանսն»: Եւ գովիչք և փառաւորիչք լինին միոյ աստուածութեանն, և փառօք և պատուով և պարծանօք երանին և պսակին, և մտանեն ի ժառանգութիւն որդէգրութեանն, և վայելեն յանսպառ բարիսն ի փառս ամենասուրբ Երրորդութեանն այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ՀԱՆԴԷՍ ՎԱՍՆ ԼԱՒՈՒԹԵԱՆ ՑԻՇԱՏԱԿԱՑ Ի ՊԷՏՍ ՕԳՏԻՑ

ԶԱՆԵՐԵՒՈՅԹՍ ՅԵՐԵՒԵԼԻՍ ՅՈՒՅԱՆԵԼՈՎ Ի ԳՈՐԾՍ ԱՌԱՔԻՆՈՒԹԵԱՆ

ՓՈԽԻԼ Ի ՅՈՅՍՆ ԿԵՆԴԱՆԻ Ի ԲԱՆԱԿՍ ԶՈՒԱՐԹՆՈՑՆ ՈՐ ԱՍՏ ԿԱՏԱՐԵՑԻՆ 2 ԶՀԱՃՈՅՍՆ ԱՍՏՈՒԾՈՅ

ԵՐԱՆԵԼՒՈՅՆ ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ՀԱՅՈՑ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ [5]

ԺԳ

«Ով խորք մեծութեան և գիտութեան և իմաստութեանն Աստուծոյ» * որ բազում հնարիւք ունկնդրաց և հնազանդելոց առաջնորդէ ի հաճոյս տէրութեանն իւրոյ, և զգուշութեամբ և զգաստութեամբ սուրբ սիրովն յորդորէ ի պահպանութիւն պատուիրանին. զի հասցուք ի գուռն փըրկութեան ի կենաց [4] հանգիստն [5] նախախնամական սիրովն, և իրաւամբք արդարութեանն ժառանգեսցուք զպատիւ փառացն, և հաւատովք հասանել ի յոյսն ճշմարիտ։ Զարթնուլ ի կոչումն բանին կենաց ըստ պէսպէս շնորհացն. լինել զարժանն և զիրաւն. առնուլ յուսով զառհաւատչեայ աւետիսն, և թռչել թեւօք հոգւոյն յերկնից արքայութիւնն, և գեղեցիկ վարուք լինել ճանապարհ բազմաց ի կեանս։ [6] Եւ յիշատակօք լուսոյն յառաջիկայսն ընթանալ, և զկնի ծաւալել ճշմարիտ հաւատով զստուգութեան վարսն ի նախանձ բազմաց։ Զի առաջինքն օրինակ են վերջնոցս ի բարի յորդորումն, և վերջինքս հանապազ նորոգին յիշատակօք առաջնոցն առաքինութեամբք։ Գովելով զնոսա և գոհանալով փառաւորեն զԱստուած զտուիչն այնպիսի շնորհաց

---

* Հռ. ԺԱ, 33։

մարդկան։ Եւ այնպէս յորդորիլ ի սէրն Աստուծոյ, և բերանով խոստովանիլ զճշմարտութիւն ամենակալ զօրութեանն Աստուծոյ, և ընծայաբեր լինել բարի պարգևօք արդարութեան ամենեցունց տեառնն՝ առաջնոյն գործակցութեամբ ճշմարիտ [7] նորա հանդիսիւքն։ Անքակ համարել [8] զանձինս ի նորա անուն յուսոյն և ի մտերիմ սիրոյն և առհաւատչեայ միշտ բարեխօս առ տէր. [9] որպէս զի ճշմարտեալ հետևող լիցին ի կատարումն լման [10] առաջնոյն՝ որ յուսովն իւրեանց կենդանի են Աստուծոյ։

Եւ հասարակաց յոյսն մի շահ է. [11] զի առաջինքն ուրախ [12] լինին ի վերջնոցն բարեգործութիւնս. և վերջինքս հաստատին յառաջնոցն կատարելութիւն յուսոյն։ Եւ առաքինութիւնք առաջնոցն ժառանգութիւն տանի վերջնոցս. զի մնացուածք բարի գործոց առաջնոցն առնու լրումն ի վերջնոց աստի։ Եւ եթէ յանցաւոր ես իցէ լինել և ստոյգ խոստովանեալ և ապաշխարեալ ջերմեռանդն արտասուօք և գթով տնանկաց և ամենայն լաւութեան հանդիսիւք որ ընդդէմ մեղացն, եթող զկարգ բարի վերջնոցս իբրև ժառանգութիւն խոստովանողաց և ապաշխարողաց և ջատագով մեղուցելոց։ Զի գթութիւնն Աստուծոյ կոչէ զվերջինս ըստ առաջնոցն կարգաց. զի բարձցի ի միջոյ պարտիքն մնասուց, և ազատեալ ի մեղաց ստոյգ ապաշխարութեամբ [13] մտցեն ի ժառանգութիւն հեռացեալքն [14] յամենայն մնասակարաց, որ անհաւատութեամբ և անսուրբ վարուք ապականեալ էր ի հօսանս չարեացն, և բժշկեալ լինէին ի սրբութիւն և յառողջութիւն ամենայն անդամոցն։

Եւ սովորութիւն իսկ է գրոց՝ զառաջնոց լաւացն զբարի յիշատակս՝ որպէս և նուէրս պատարագաց վասն հասարակաց յուսոյն կատարել վերջնոցս, և հաւատով և ուղիղ վարուք կալ ի մշակութեան հաճոյից Աստուծոյ՝ որ յոյսն է կենդանեաց և մեռելոց։ Եւ բազումք են վերջինք՝ որ վասն

առաջնոցն աղօթս և պաղատանս և նուէրս մատուցին Աստուծոյ և եղեն ընդունելի. որ ուղիղ խոստովանութեամբ դարձան առ Աստուած յապաշխարութիւն: Որպէս Առաքեալ ցուցանէ զընդրութիւն հաւատոց և զարդար վարուց. [15] և նոցա յիշատակօք բարի խոստովանութեամբ [16] զհաշտութեան պատարագս մատուցանել վասն նոցա և մեր Աստուծոյ: Որպէս և զԱբէլին զարդար և զուղիղ պատարագն յիշէ. որ ամենայն պատարագաց է գլուխ, միջնորդ և բարեխօս վերջնոցս իւր մտերիմ և սուրբ հաճոյակատար [17] կամօք: * Եւ որ զկնի նորա առաքինացան անարատ մտօք, որպէս Ենովս և Ենովք և Նոյ հաճոյ եղեն Աստուծոյ, և հաշտարարք կան առաջի տէրութեան նորա վասն հաւատացելոց ի տէր Աստուած: Որպէս Աբրահամ և Իսահակ և Իսրայէլ՝ [18] որ հանդիսիւք լաւութեան առին զընդրութիւն: Վասն որոյ ոչ ամօթ համարի Աստուած առնել զնոսա խորհրդակիցս, և յայտնել զծածկեալս որպէս մտերիմ սիրելեաց:

Եւ ի նոցա ծննդոց զօրէնսդիրն և զմարգարէս և զքահանայս և զթագաւորս յարոյց բազում արդարս: [19] Զի և Մովսէս լաւ համարեցաւ չարչարել ընդ ժողովրդեանն Աստուծոյ, քան առ ժամանակ մի վայելել ի հեշտութիւն: Որոյ ելեալ ի խաւարային վարուց եգիպտացւոց յանապատն պանդխտանայր. և անդ առնոյր հրաման յԱստուծոյ դառնալ անդրէն և հանել զժողովուրդն յերկիրն աւետեաց նըշանօք և արուեստիւք, և նովաւ կատարել զաւետն որ առ հարսն էր յուսացելոց: Զի «Ես եմ՝ ասէ, Աստուած Աբրահամու և Աստուած Սահակայ և Աստուած Յակովբայ»: ** Եւ չասի Աստուած մեռելոց մեղաւորաց, այլ կենդանեաց

---

* Եբր. ԺԱ, 4:

** Ելք. Գ, 6:

արդարոց· * զի արդարք՝ Աստուծոյ կենդանի են, զի սիրովըն Աստուծոյ և յուսովն միշտ առաջի Աստուծոյ են: Եւ մեք հաստատեալ ի հաւատս և ի սուրբ սէրն Աստուծոյ, որպէս զի ճշմարտեալ սիրովն առցուք զյոյսն՝ որ առ ամենազօր տէրութիւն. և ամենայն արդարոց յիշատակօք միշտ նորոգել ի մեզ Աստուծոյ սիրոյն՝ որ ի նոսա մատակարարէր: Եւ ըստ այսմ՝ օրինակի ամենայն յոյս սրբոցն կենդանի է առաջի Աստուծոյ և անշէջ. և առանց մոռանալոյ է յիշատակ սուրբ սիրոյն յուսացելոց ի տէր: Որպէս յանցանքըն Ռուբենի առ հայրն հանին զնա յօրհնութենէ հօրն, ** և անարատ սրբութիւն ի մէջ ածէ զՅովսէփ յօրհնութիւն հօրն, և ի ժառանգութիւն եղբարց իւրոց ի յելս [20] զԵփրեմ և զՄանասէ. և եղև պատճառք կենաց ամենայն ազգին սուրբն և անարատն: ***

Հասանէ աչ ի վերայ Երուսաղէմի վասն անիրաւ ժողովըրդեանն յաւուրս Եզեկիայի ի Սենեքերիմայ: **** Այլ աղօթիւք Թագաւորին և Եսայեայ դարձոյց զբարկութիւնն ի թշնամիսն Աստուծոյ. և սատակեցան այնքան զօրք, [21] և կորեաւ յիշատակ նոցա ի միջոյ: Ցոյնոսիկ և զԴաւիթ յիշէ՝ թէ վասն նորա: «Վերակացու եղէց քաղաքիդ այդմիկ»: [22] Զի ամենայն արդարք յիշին առ այցելութիւն աշխարհի ի սուրբ գիրս յսկզբանց անտի մինչև ցգալուստն Քրիստոսի, որ զառաքինութիւն երկաքանչիւրոցն բացայայտէ. զի ըստ հաւատոց մեռան ամենայն սուրբք: ✠

Իսկ յորժամ ծագեաց տէր մեր Յիսուս Քրիստոս արե-

* Մատթ. ԻԲ. 32.

** Ծննդ. ԽԹ. 3. 4.

*** Ծննդ. Խ.

**** Դ. Թագ. ԺԸ, 17. ԺԹ, 34.

✠ Եբր. ԺԱ, 13.

*զակն արդարութեան և փրկիչ աշխարհի՝ կատարեաց և ելից զառաջին օրինակն պակասութեան. զի եբաց զնոր շընորհաց զկենացն զդրունս ի ձեռն աւազանին լուսաւորութեան ուղիղ հաւատով յամենասուրբ Երրորդութիւնն. և մեռանել զմեղացն մահ ի ջուրսն մկրտութեան [23] և ընդ Քըրիստոսի յարուցեալ՝ ի նորոգումն կենաց կալ և մնալ: * Եւ թէպէտ մեռանին, կենդանի են հոգւով ի յոյս կենացն յաւիտենից: Եւ մերկացեալ են զհին մարդն, որ վրէժխնդրութեան օրինացն պարտական [24] էր. զի զՔրիստոս զգեցան և զկերպարանս որդէգրութեան առին և ժառանգաւորք եղեն Քրիստոսի: Մանաւանդ որ զճշմարիտ հաւատս և զուղիղ վարս մինչև ցվախճանն պինդ ունիցին յուսովն Քըրիստոսի. զի յոյս նոցա ընդ Քրիստոսի է յարուցեալ, և ընդ Քրիստոսի նստի ընդ աջմէ մեծութեանն ի բարձունս ** և բարեխօսեն Քրիստոսիւ առ Հայր վասն սրբոց: Որք ի Քրիստոս մկրտեցան ճշմարիտ հաւատով և սուրբ սիրով հաղորդութեամբ մարմնոյ և արեան փրկչին. որ գրաւական է յուսոյ փառաց յարութեան ըստ բանի տեառն, «Քանիցս անգամ՝ ուտիցէք ի մարմնոյ իմմէ և ըմպիցէք յարենէ իմմէ, [25] ըզյիշատակ մահուան իմոյ պատմեսջիք մինչև ի դարձ գալըստեան իմոյ յերկիր»: ****

Զի նա է ազատիչ և արդարացուցիչ, որով լուծանին մեղք հին մարդոյն և [26] սկիզբն առնուն նորքս, որ ըստ Աստուծոյ հաւատով սուրբ և ճշմարիտ ի Քրիստոս Յիսուս. մեկնեալ յամենայն չարեաց, և յարդարեալ ամենայն բարի գործովք աւետօք [27] յուսոյն կենաց: Զի մահուամբն իւրով ելոյծ Քրիստոս զօրութիւն սատանայի, որ զիշխանութիւն

---

* Հռ. Զ, Դ:

** Եբր. Ա, 3:

*** Ա. Կորն. ԺԱ, 26:

մահու ի ձեռն մեղաց ունէր.* կեանք թագաւորեցին արդարութեամբ. և յոյս յարութեան հաստատեալ կայ ի Քրիստոս: Զի յարոյց զմեզ, ասէ, ընդ իւր, և նստոյց յերկնաւորսն ի Քրիստոս Յիսուս յոյս հաւատացելոց և սրբոց:** Զի զմարմինս իւրեանց ի խաչ հանին, ասէ, ընդ Քրիստոսի կարեօք և ցանկութեամբքն հանդերձ.*** որ և ընդ նմին փառաւորին և յուսոյն զուարճանան:

Զի Քրիստոսի սուրբ սիրովն խրախուսեալք սրբոցն յուսով ի ձեռն հաշտարար պատարագին՝ որով փրկեցան արարածք, որ զաներևոյթն երևելեօքս եցոյց կամաւոր խաչելութեամբն ի հաշտեցուցանել զարարիչն ընդ արարածս: Եւ լուսաւոր վարդապետութեամբն ստուգեաց զճշմարիտ հաւատս յամենասուրբ Երրորդութիւնն: Եւ բառնայ զվիշտս վտանգից[28] ի մարդկանէ ի պէսպէս ցաւս և ի տանջանս ըմբռնեալս. զքաղցեալս կերակրելով զբաղումս յանապատի, զմեռեալս յարուցանելով, զդևս հալածելով:[29] Եւ ազատեալ զմարդիկ ի կշտամբանաց նոցա՝ բառնայ իւրով չարչարանօքն զամենայն վիշտս ի մարդկանէ, և պէսպէս երախտեօք արժանի առնէ հայրական խնամոց և շնորհաց հոգւոյն սրբոյ և խոստմամբ բարեաց Աստուծոյ:

Եւ ի մատուցանել զահաւոր և զսարսափելի զփրկական զխորհուրդն, և անդ յիշէ զմարդասիրութեանն երախտիս. և խնդրէ ջերմեռանդ արտասուօք զքաւութիւն մեռելոց և կենդանեաց, և առնու զխնդրելին, մանաւանդ եթէ սուրբ իցէ և անարատ և ազատ ի մեղաց մատուցող պատարագին, և ճշմարտեալ հաւատով ստանայ անձին զփառացն պսակս: Եւ վասն որոյ պատարագն է, քաւութիւն յուսով շնորհէ ի բարերար տեառնէն: Զի եթէ որ ունի խէթ ինչ ընկերէն՝

* Եբր. Բ. 14:

** Եփես. Բ, 6:

*** Գաղ. Ե, 24:

թողուլ տայ զպատարագն * մինչև հաշտեսցի [30] ապա վասն այլ չարեաց և դժնդակ վարուց զի՞նչ պարտ է ասել զարհաւիրս սպառնալեաց պատուհասից, որք ոչ սրբութեամբ զպատարագն ընծայեն Աստուծոյ, և որք անարժանութեամբ հաղորդին: ** Այլ որում շատն տուաւ շնորհ, շատ խնդրի. և որում սակաւն՝ սակաւ, ասէ տէրն յաւետարանին մեզ: *** Զի կատարեալ առաքինութիւն խնդրէ ճշմարտութիւն ի սպասաւորաց խորհրդոյն. զի կեանք է փրկութեան մերոյ, և մի լիցի կամակար մտօք ի դատապարտութիւն ի տեառնէ. **** զի ամենայն ինչ նովաւ է և ի նա կատարի՝ կենդանեաց և մեռելոց:

Այլ և սրբոց առաքելոց և մարգարէից և մարտիրոսաց յիշատակք՝ Քրիստոսի պատարագաւն կատարի, խորհրդածեալ փառաբանութեամբ զսրբոցն նահատակութիւնս վերաձայնելով յորդորումն աստուածասիրաց և ի գովեստ ամենասուրբ Երրորդութեանն՝ որ ետ զյաղթութեան շնորհս ամենայն սրբոց իւրոց: Զի ուրախութիւն է զօրաց երկնաւորաց յիշատակք սրբոց, որք յաղթեցին բռնաւորաց և հրեշտակացն:

Արդ հոգիք արդարոց ի ձեռին Աստուծոյ են ընդ անմարմնոցն դասուց, սքանչելի իմն ի փառս Աստուծոյ ուրախարար յուսովն: ✠ Եւ ի հասարակաց յարութեանն զկենակից մարմինն առնու յերկրէ, որով հաճոյացաւ Աստուծոյ. և լի՞նին որպէս հրեշտակս յերկինս ըստ բանին տեառն. ասէ. «ի յարութեան ոչ կանայս առնեն և ոչ արանց լինին.

* Մատթ. Ե, 23.

** Ա. Կորնթ. ԺԱ, 27.

*** Ղուկ. ԺԲ, 48.

**** Եբր. Ժ, 26.

✠ Իմաստ. Գ, 1.

այլ են որպէս հրեշտակս յերկինս»,* զի յարութեան որդիք են և ոչ ունին մեղանչել կամ մեռանել։[31] Տեսե՞ր,[32] զի յոյս կենդանեաց բնակութիւն է հրեշտակաց և արդարոց, և ի միասին ուրախ լինին։

Այլ և որք մեղանն և սոսկ խոստովանեալ ապաշխարեցին ջերմեռանդ արտասուօք և ամենայն բարի գործով, և նոքա ոչ զրկեցան[33] ի հանդերձեալ յուսոյն. ամենայն[34] ճշմարտեալք ի հաւատս Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, լուսաւորեալ մկրտութեամբն և մարմնով և արեամբն Քրիստոսի, որդիք լուսոյ և ժառանգք արքայութեանն են, քաղաքակիցք սրբոց և ընտանիք Աստուծոյ։ Զի մի է Աստուած և մի հաւատ և մի մկրտութիւն և յոյս կենդանարար։** Եւ ուրախ լիցին յուսով՝[35] որք կատարեն զյիշատակս սրբոց հաւատովք. զի և նոքա զուարճանան նոցա սիրովն, որ յաղագս Աստուծոյ զայս յուսով կատարեն ամենայն բարեգործութեամբք ի Քրիստոս։ Եւ մնացեալքն ի բարեացն առաջնոցն առնու զլրումն վերջնովքս. զի և զմնացուածս մարգարէիցն լցին առաքեալքն, և զնոցայն հաստատեցին վարդապետք զհաւատս և զվարս և զվարձս ըստ իւրաքանչիւր վաստակոց։

Տուեալ լինին[36] յամենեցունց տեառնէն և պսակքն. զի «Այլ փառք արեգականն է», ասէ Առաքեալ,*** և այլ փառք լուսնի, այլ փառք աստեղաց, և աստղ քան զաստղ առաւել է փառօք. սոյնպէս և յարութիւն մեռելոց»։ Զի իւրաքանչիւր զիւր փառս զգենու ի տեառնէ ըստ արժանաւորութեանն ի միոյ աստուածութենէն փառաց՝ Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ։ Զի մի յոյս է վերին կոչմանն Աստուծոյ և մի բնութիւն աստուածութեան, մի իսկութիւն, մի

---

* Մատթ. ԻԲ, 30. Ղուկ. Ի, 36.

** Եփ. Դ. 5.

*** Ա. Կորնթ. ԺԵ. 41.

անփոփոխ մշտնջենաւորութիւն, մի ամենակալ զօրութիւն, մի անվրէպ գիտութիւն, անզեղջ իմաստութիւն, անսկիզբն էութիւն. որ յիւր ի ճշմարիտ ի կենդանի փառսն և յանմատոյց լոյսն բնակեալ է։ Եւ սուրբ սիրոյն իւրոյ խնամք առ արարածս լուցեալ բորբոքի անճառ և անպատում բարութիւնքն. և զարարածս ամենայն զբանաւորս և զմտաւորս յանճառ երանութիւնսն հրաւիրէ, և կոչէ յիւր արքայութիւնն և ի փառս անճառս և յանվախճան երանութեանցն ուրախութիւնսն,

Այլ զյիշատակս առնել արդարոցն կատարելոց, նոցա նահատակութեանն և սիրոյն որ առ Աստուած վկայք, և բազում շահս անձանց ստանամք սրբոցն բարեխօսութեամբ առ տէր։ Իսկ զհաւատացելոց մեղուցելոց և խոստովանողաց և ապաշխարողաց և հաղորդեալք ի փրկական խորհրդոյն, և հրաժարեալք յաշխարհէս, և նոցա կատարեսցին յիշատակք՝ Քրիստոսի պատարագաւն, և աղօթիւք և գթով տնանկաց և այլ բարի գործովք. զի վերջնովքս բարեգործութեամբք հանգուցեալքն նորոգեսցին նորոգութեամբ կենացն անվախճանից։

Եւ եթէ ասիցէ ոք, եթէ զիարդ մտ ի վախճանն զղջացեալ խոստովանի և ողբայ զգործեցեալ զյանցանսն, և խոստանայ ապաշխարել, և խնդրել զմարմին և զարիւն Քրիստոսի հաւատովք ի քաւութիւն, զի՞նչ առ նոսա յոյս [57] *փրկութեան իցէ։*

ՊԱՏԱՍԽԱՆԻ

Զի եթէ մօտ ի վախճան իցեն, և ի հրապոյրս սատանայի ըմբռնեալ ի դժնդակ վարս, և օտարացեալ ի նախախնամական սիրոյն յառաջագոյն, և դառնայ ի վախճանի ի զղջումն և ի խոստովանութիւն ջերմեռանդ արտասուօք, և ի բոլոր սրտէ հաւատով հայցէ զփրկական խորհուրդն յա-

սով ապաւինեալ ի մարդասիրութիւնն Քրիստոսի՝ մի՛ անյոյս լիցի ի վստահացեալ բարութիւնն՝ զղջմամբ և կենդանարար մարմնոյ և արեան [58] Քրիստոսի փրկչին մերոյ՝ որ տայ զկենդանութիւն ստեղծուածոց իւրոց. զի ամենայն որ կարդասցէ զանուն տեառն՝ կեցցէ: *

Այլ որ ոչ դարձան յառաջագոյն յապաշխարութիւն և ոչ ի վախճանի զղջացան՝ և յուսահատ և առանց խոստովանութեան և անմերձ ի փրկական խորհուրդն՝ զի՞նչ պարտ է ասել վասն նոցա յիշատակաց. որ բազում ողբոց և արտասուաց արժանի են՝ և ծանր վիշտս ունին ի Քրիստոսէ: Բայց յառաջագոյն մեղուցելոցն և ստոյգ խոստովանողացն և ապաշխարողաց միշտ կատարեսցին յիշատակք. և որ ի ժամ ելանելոյ [59] զղջանան: Այլ և բազում բարիս ցուցանել [40] մնացելոցն յաղագս հրաժարելոցն յաշխարհէ. զկապեալս արձակել՝ զպարտս թողուլ՝ զկարօտեալս լցուցանել բարութեամբ: Զի է զորս ինքն արար զբարիս, և է որ պատուիրեցաւ առնել. և երթան զհետ բարի գործն [41] ի հաւատարիմ սիրելեաց հրաժարելոցն յերկրէ:

Զի որ մերձեցան ի սրբութիւնս ստոյգ զղջացեալքն՝ իբրև հուր սրբիչ և աղտոնիչ և լուսաւորիչ է իւրով ընծայիւքըն՝ մտերիմ հաւատով վկայութեամբ աչիւն Աստուծոյ. որ զգուշութեամբ և արդարութեամբ լի է: Որ սկիզբն է ամենայն շահաւոր օգտից երկիւղ [42] տեառն ըստ իմաստնոյն բանին. ** և աստ՝ նոյն [43] անհնարինք հնարաւորք են երկեղածաց Աստուծոյ: Եւ որ հեռի է յերկեղէ տեառն՝ [44] ի ծուլութիւն և յարհամարհութիւն Աստուծոյ պատուիրանին կրթի՝ և յամենայն բարեաց խորհրդոց և գործոց հեռանայ՝ և յանիրաւութիւն սովորի:

---

* Գործք առ. Բ, 21:

** Առակ. Ա, 7:

Այլ որ փոյթն է ի հնազանդութիւն հոգևոր օրինացն երկիւղն Աստուծոյ, միշտ ընծայաբեր լինի Աստուծոյ ի ձեռն սուրբ հրեշտակաց ըստ բանին տեառն որ ասէ. «Զգոյշ լերուք, մի արհամարհիցէք զմի ոք ի փոքրկանցս յայսցանէ. զի հրեշտակք նոցա հանապազ տեսանեն զերեսս Հօր իմոյ որ յերկինս է»: * Զի զհաւատոյն գործովքն զօրացուցանէ, ** և զաղօթսն սիրով զղջմամբ և անձկալի և անմեղկելի խնդրուածովք. անշարժ ունել առ տէր զկամն ի նեղութեան և յանդորրու. և առնուլ զյաղթութեան շնորհ առ մարտըս մնաց և անդամոց ի բարերար խնամոցն Աստուծոյ: Եւ սուրբ սրտիւ և անկեղծաւոր հաւատով. առաքինանան և ուրախ առնեն զհրեշտակս կենդանի սիրով և զուարճանան միշտ ի նոցա բարի գործսն: Զոր ոչ է իմանալ կամ տեսանել որ յԱստուծոյ է նոքօք մեզ պահպանութիւն, որ պատրաստեցաւ յԱստուծոյ խնամոցն սիրողաց նոցա:

Զի ամենայն խորհուրդք կամ գործք մտերմութեան երկնաւորաց և երկրաւորաց և սանդարամետականաց առաջի Աստուծոյ ամենակալ տէրութեանն հանապազօր վերանայ ի կշիռս: Եւ ի կողմն ճշմարիտ հաւատացելոց և սիրողաց Աստուծոյ մահն Քրիստոսի յառաջանայ ամենաշահ չարչարանօքն՝ վկայութեամբ սուրբ սիրոյն իւրոյ: [45] Եւ առ նա ժողովի ճշմարտութիւն արդարոց, քաջութիւնք նահատակաց և արդարութիւնք սրբոց, ժուժկալութիւնք կուսանաց, համբերութիւնք մարտիրոսաց: Այլ և սոյգ խոստովանողաց վարք շարժեն զգութ և զողորմութիւն ի խնամոց սուրբ սիրոյն: Եւ գործք անօրինաց և անհնազանդից ամբարշտաց և մեղաւորաց և ամենայն չար ցանկութեանց հանդերձ չար խորհրդակցօքն դիւօք կշտամբեալ յանդիմանին, և զարժան

* Մատթ. ԺԸ. 10.
** Յակ. Բ. 20.

զհատուցումն պատուհասիցն ընդունին յարդար դատաւորէն և ի տեսողէն, [46] որ գիտէ զվերինս և զներքինս։

Իսկ որ ի սուրբ սէրն Քրիստոսի հաստատեալ են, որ զանձըն իւր ետ ի մահ վասն նոցա, զի ազատեսցէ ի դառն վըշտաց [47] յերևելեաց և յաներևութից, ապրեալք լինին, գործակից և բարեխօս ունելով զսուրբս և զամենայն արդարս։ Եւ բացցին դրունք կենաց բարերարութեան շնորհօք Հոգւոյն սրբոյ վերին կայանից, ուր ժողովք սրբոցն են հանգուցեալ։ Զի զամենեցուն կամի զկեալ և ի գիտութիւն ճշմարիտ կենացն լինել ժառանգաւոր․ զի ոչ կամի զմահ մեղաւորին, այլ զկեալն ի Քրիստոս։

Այսքան շահք օգտից են զյիշատակս հանգուցելոցն առնել ուղիղ սրտիւ, արդար և ճշմարիտ և սուրբ հաւատով, ահիւ և սուրբ սիրով՝ ողջամիտ յուսով ի գովեստ Աստուծոյ։ Զի լինիցի ընդունելի մեր պատարագն ի ներքոյ վարագուրին ի կենդանարար կեանս վերաբերելով և վայելել յերանելի բարութիւնս ի խնամս կենարար սիրոյն ամենեցուն խոստացելոցն։ «Զի ուր եսն եմ, անդ և պաշտօնեայն իմ եղիցի»։ Զոր և բարերար երկնաւոր Հայրն ուրախ առնէ զկոչեցեալսն յորդեգրութիւն, [48] մարդասէրն միածին Որդւովն իւրով և կենդանարար սուրբ Հոգւովն [49] ի բորբոքումն կենդանի սուրբ սիրովն, յանհրաժեշտ և յանվախճան և յանհամեմատ յաստուածեղէն բարութիւնսն զիւրսն վայելեցուցանելով։ Նմա գոհութիւն և պատիւ և փառք յայժմու և յաւիտեանս յաւիտենից․ ամէն։

ԵՐԱՆԵԼՒՈՅՆ ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ՀԱՅՈՑ ԼՈՒՍԱՒՈՐՉԻՆ [1]

ՅԱՂԱԳՍ ՄԱՐԴԿՈՒԹԵԱՆ [2]

ՈՐ ՑԱՍՏՈՒԾՈՅ ԽՆԱՄՔ ՏԵՍՉՈՒԹԵԱՆ

ԺԳ

Մեծ է խորհուրդ Աստուածպաշտութեանն ճշմարիտ հաւատով որ ի Հայր և յՈրդի և ի սուրբ Հոգին, և առաքինի գործովք արդար և սուրբ երևել առաւել քան զարեգակն լուսաւորէ զաչս մտաց հաւատացելոց, և հալածէ զխաւար մեղաց, և առաջնորդէ յարդարութիւն և ի սրբութիւն: Ի բաց կալ ի գժնդակ վարուց և ի չար մտաց, և գնալ ի ճանապարհս արդարոց՝ որ տանի ի կեանսն յաւիտենից: Բարի կամօք և բարի վարուք զհետ երթալ բարերար կամաց արարչին՝ որ ի չգոյէ ի գոյ էած, և յանարգութենէ ի պատիւ, երկու մասամբք՝ տկար և զօրաւոր, զմարմին և զհոգին: Զի տկարն ճգնեսցի վաստակովք, և ի զօրութիւն արարչին ապաւինեսցի, զի մի վրիպեսցի ի բարերար օգնականութեանցն՝ որ առաքինացուցանէ արդար և սուրբ վաստակովք: Եւ զանուն քաջութեան առնու, և գովութեամբ պարծանօք պսակի, [3] և ի խնամս բազմադարմանս վայելէ յուսով երանելի կենացն: Իսկ զօրաւոր մասն հոգւոյն ճշմարիտ հաւատով և անսխալ և ստոյգ գիտութեամբ սուրբ Երրորդութեանն՝ որոշէ զսուտ պատիր [4] մոլորութիւն, և ազատանայ ի ծառայութենէ մեղաց՝ վասն որոյ մահն ի ներքս եմուտ, և զերծեալ ի մեղաց՝ ժառանգաւոր կենացն [5] եղիցի ի Քրիստոս՝ տկար մարմնովն և երևեսցի մտերմութիւնն ի ճգնութիւն [6] համբերութեամբ [7] յուսոյն: Եւ զօրա-

ւոր մասամբն երեւեցի շնորհն տեառն ըստ Առաքելոյ բանին, որ խնդրեաց ի տեառնէ հրաժեշտ տկարութեանն. որ ճգնէր եւ աշխատէր եւ վշտանայր ազգի ազգի վշտօք եւ նեղութեամբ: Եւ լուէ ի տեառնէ. * «Շատ են քեզ, ասէ, շնորհք իմ. զի զօրութիւն իմ ի տկարութեան կատարի»: [8] Վասն որոյ յօժարութեամբ ընդունի զամենայն վիշտս չարչարանացն. զի տկարութիւն զօրութեամբ կատարի: [9] Զի եւ մշակք բազմադիմի աշխատութեամբ վաստակով յարգին. [10] եւ տէրն բազմաշահ պարգեւովն փառաւորէ:

Վասն այսորիկ ի չորից նիւթոց արար զարարածս, եւ յօրինեաց կարգաւ զերեւելիս եւ զաներեւոյթս, եւ անտի զմարմինս կազմեաց ի ցամաքէ, ի խոնաւոյ, ի ջերմոյ եւ ի ցրտոյ: Եւ յայս չորից նիւթոց արարած ի ծնունդս [11] եւ ի դարմանս, զի երեւեսցին խնամք արարչութեանն. երկինք ցօղովն յամպոց զիջմանէ, եւ ջերմութեամբ լուսաւորօք եւ խառնուածովք օդոյ՝ որ սնուցանեն զտունկս եւ զբոյսս եւ զամենայն շունչ կենդանի, եւ զթռչունս երկնից: Երկիր ջրով եւ լողակօք [12] եւ որ այլ զեռունք ամենայն ի խնամոց Աստուծոյ դարմանին: Զի նախ զհոգին եդ զբանական ի մարմին եւ խառնեաց, եւ ապա զպէտս դարմանոցն պատրաստեաց. զի ցուցցէ զսիրոյն իւրոյ զտեսչութիւն՝ որ յառատ բարերարութենէ անտի: Բանաւոր եւ մտաւոր ոգւոյն զօրաւոր դարմանս եցոյց ի շնորհաց Հոգւոյն սրբոյ՝ զխրատս ուսմանց ի վարդապետութենէ հոգեւոր օրինացն:

Յայսմիկ հոգեւոր դարմանս վայելել, եւ ընտանենալ ամենազօր տէրութեան եւ խնամոց արարչին, որ յերկնէ եւ յերկրէ եւ ի ջրոյ եւ յօդոյ զկեանս ամենեցուն յօրինեաց: Եւ այսոքիւք ուսուցանէ եւ ընդելացուցէ մեծի յուսոյ աւետեացն խոստացելոց որդէգրութեանն անմահ ժառան-

---

* Բ. Կոր. ԺԲ. 9

գութեանն. որ ետ աստէն զառհաւատչեայ ազատութիւնն շնորհօք աւազանին և մարմնով և արեամբն Քրիստոսի։ Զի տկար մարմնով ճգնաւորեալ ազգի ազգի առաքինութեամբք՝ զհամբերութեան զհանդէս ցուցցեն [13] ըստ հաճոյից Աստուծոյ՝ աշխու և սուրբ սիրով առնել զկամս տեառըն։ Զի եթէ տէր է, ասէ, ո՞ւր է երկիւղ նորա. և եթէ հայր, եղիցին կամք նորա որպէս յերկինս և յերկրի։ Եւ այս [14] ուղղի ի ձեռն օրինաց եդելոց և պատուիրանաց կարգելոց՝ և մարտընտիր լինել ի լաւագոյն կարգս առաքինութեան և զօրութեան. և յաղթող երևեալ՝ պսակեցի յարարչէն Քրիստոսէ։

Այսու իրաւամբք յայտնի արար զիւրոյ բարերարութեանըն զամենառատ զշնորհս։ Զի մտերիմ ծառայից գործակից է բարի վարուց. և ըստ խնամոց սիրոյն իւրոյ զնեղութիւն հանդիսից անցաւոր արար, և զհանգիստ անվախճան, Այլ և ինքն իսկ տէրն փառաց որ ամենայն զօրութեանց և զօրաց արարիչ է և պարգևիչ՝ յորժամ կամեցաւ ցուցանել զաներևոյթ սէր իւր առ ազգս մարդկան՝ ու չարչարելին էր և վշտագին՝ [15] որ աշխատելին էր. և նովին հոգւով միաւորեալ առ Աստուած Բանն՝ մտաւորն՝ և բանաւորն՝ խառնեալ ի մարմին ըստ աւետարանական բանին. զի «Բանն, ասէ, մարմին եղև և բնակեաց ի մեզ. և տեսաք [16] մեք զփառս նորա զփառս իբրև զՄիածնի Որդւոյ առ ի Հօրէ լի շնորհօք և ճշմարտութեամբ»։ *

Զի ի ձեռն ճշմարիտ շնորհաց իւրոց և կամաւոր խոնարհութեանն՝ որ կրեաց զամենայն կիրս մարմնոյ և հոգւոյ բաց ի մեղաց՝ զի ցուցցէ զփրկութեան ճանապարհն արդարոց՝ և զխնամս մեծի սիրոյն իւրոյ զգարմանս [17] տեսչութեանն՝ որպէս [18] շնորհօք դարմանէ զորդիս մարդկան

* Յովհ. Ա. 14.

յերևելիս և յաներևոյթս· զհիւանդս բժշկէր, զմեղս քաւէր, զդևս հալածէր, զմեռեալս յարուցանէր: Եւ եբաց զդրունս կենաց, և ազատեաց զհոգիս չարչարանօք մահուամբ իւրով: Եւ կատարեաց զարդարութիւնն ամենայն ի փառս և ի պարծանս մարդկութեանս [19] մերում, և եղև վարդապետ ամենայն արարածոց· զի նորա առաքինութեանն հետևողք եղեալ, և նորին փառացն հաղորդակիցք եղիցուք· կայ պահի յուսացելոց ի Քրիստոս:

Եւ վասն այսորիկ տկար է մարմինս, զի յերկրէ ունի զսնունդ՝ ի բուսոց և ի տնկոց և ի շնչաւորաց· որպէս և ամենայն անբան կենդանիք: Զի Նոյի հրամայեցաւ ուտել ըզմիս շնչոյ կենդանւոյ և ըմպել գինի յաղագս տրտմութեանն ի մխիթարութիւն, զոր ունէր վասն համատարած աշխարհի սատակմանն սուգ: * Զի որ ի դրախտին կեանք էր և սնունդ, [20] յայնմանէ վրիպեցաք յաղագս յանցանացն և ընդ բաղում տկարութեամբ անկեալք: Եւ վասն այսորիկ ի պատճառէ խմբէ ձգի մահ [21] ցուրտ և տօթ և հիւանդութիւնք մարմնոյ: Այլ և ի կերակրոյ և յըմպելւոյ առաւելութենէ լինին լլկանք և մահ· Նմանապէս և ի պակասութենէ, ի սովս և ի ծարաւոյ: Այլ և Թունաւոր ճճիք և դաժանութիւնք արմատոց և բուսոց կարեն լլկել [22] և սպանանել և անզգայացուցանել և այլամտել:

Եւ վասն այսորիկ տկար է մարմինս· զի մի յորժամ լսեմք թէ եմք Աստուծոյ պատկեր, ամբարտաւանեալ ամբառնայցեմք և անկանիցիմք ի վայր ամբառնալովն ի վիհս կորստեան, որպէս զնոյն ինքն զաստուածամարտն՝ [23] որ ի վեր քան զամպս ասէր դնել զաթոռ իւր և լինել նման բարձրելոյն· իսկ այժմ ի դժոխս էջ հանդերձ ամենայն ապստամբ զօրութեամբքն, որպէս ասաց մարգարէն յերեսաց

* Ծննդ· Թ.

տեառն: * Եւ Քրիստոս զխոնարհութեան մարմինս զայս առնլով՝ խոնարհութեամբ զնա կործանեաց, և զխոնարհս բարձրացոյց, և խայտառակեաց [24] զնորա ամբարհաւաճութիւնն: Զի այսքան միայն է նորա չարութեանն թոյնք, որպէս ճճեաց թոյնք և որպէս բուսոց և արմատոց դաժանութեան վնասք: Ասեն բժիշկք՝ թէ գոն արմատք, որ հալածեն զգեւս ի մարդկանէ. և իմանալի է այսպէս. զի Աստուծոյ ներգործութիւնն ի տկար նիւթոյ ցուցանէ զնորա տկարութիւնն և զկարծեալ զօրութիւն հակառակամարտին, զի անզօր է առ սուրբս. որ և կոխել զնա հրաման ունին ի տեառնէ. որպէս ամենայն հաւատացելոց է քաջայայտ: Եւ դարձցին յետս և ամաչեսցեն նորա կամարարք, և որք յուսան ի նորա [25] յոյսն: **

Իսկ որ ամենակալ զօրութեան ամենասուրբ Երրորդութեանն են օրհներգուք, երկրպագուք և փառաւորիչք, այսու տկար մարմնովս զհանդէս առաքինութեանն սրբապէս կատարեսցեն, [26] և անցանեն ըստ կարգս աշխարհիս ամենայն ճշմարտութեամբ. և անցանեն ժամք և աւուրք և ամք, և յառաջադէմ նկրտին. [27] և առաքինութեան ծնունդք ընդհետ երթան սուրբ և արդար վարուց. աշակերտեալք սրբութեան և ճշմարտեալ ամենայն առաքինութեամբ՝ փոխին յայսմ աշխարհէս ի կենդանեաց աշխարհն՝ որ ոչ լսի համբաւ մահու՝ յանուշակն ի մշտնջենաւոր ուրախութիւնսըն: Որ վերստին նորոգին Աստուածային զօրութեամբն յանսպառ և յանվախճան ուրախութիւնսն: Որ լուցանին որպէս զարեգակունս յանմատոյց լուսոյն, և կենդանի սուրբ սիրովն վառին և բորբոքին հրով ամենասուրբ Երրորդու-

* Ես. ԺԴ. 12:
** Սաղմ. ԿԸ, 4:

թեանն յանվախճան երանութիւնսն, և վայելեն յանսպառ և յանպատում բարութիւնսն ի Քրիստոս Յիսուս ի տէր մեր· ընդ որում Հօր ամենակալի և Հոգւոյն սրբոյ պարգևողի փառք իշխանութիւն և պատիւ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից· ամէն։

ԵՐԱՆԵԼՈՅՆ ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ՀԱՅՈՑ ԼՈՒՍԱՒՈՐՉԻՆ [1]

ՎԱՍՆ ՀՈԳԻՈՑ ՄԱՐԴԿԱՆ [2] ԲԱՑԱՅԱՅՏՈՒԹԻՒՆ

ԺԵ

ԱՍՏՈՒԱԾ *ըստ մեծի մարդասիրութեանն իւրոյ բազմադէմ տեսչութեամբն իւրով խնամէ զարարածս, որպէս վայել է իւրոյ բարերարութեանն։ Զանմահ զօրս հրեշտակացն մտաւորս և բանաւորս պաշտօնեայս իւր արար. զի փառաւորեսցեն զամենազօր տէրութիւնն, և արբանեկեսցեն կամօքն* [3] *առ ազգս մարդկան. զի հոգիք են հարկաւորք, որք առաքին ի սպասաւորութիւն բանին Աստուծոյ։ Զի ամենայն արարածք նմա են կազմեալ և բովանդակեալ. և պաշտօնեայք և սպասաւորք են մեծի փառաց Աստուածութեանն, որ նորօք հրաւիրէ և կոչէ զմարդիկ յիւր արքայութիւնն և ի փառսն։*

Իսկ ծնունդ մարդկան ի սաղմնաւորութենէ անտի նորոգի, և զլինելութիւն առնու և աճէ, ըստ սահմանի աւուրց յառաջագայի ծննդեանն, և աճէ սննդեամբ և զարգացմամբ, և ի խրատ և յուսումն աստուածգիտութեան. և ի միտ առնուլ զարդարութիւն ճշմարիտ, և ուղղել զիրաւունս հոգևոր օրինօք։ [4] *Եւ ծանիցեն զարարիչն և զսուրբ սիրոյն իւրոյ զերախտիս առ արարածս։ Եւ գիտութեամբ խրատու նորա ստանայ զհնազանդութիւն օրինացն, և ընտրէ զբարին ի վատթարացն. ի բաց կալ ի դժնդակացն, և բուռն հարկանել զարդարութեան վաստակոցն տերամբ։ Եւ այսպէս կատարեսցէ զառաքինութեան զհանդէսն ընդրութեան ըստ հոգևոր օրինացն, ըստ բազմախնամ ողորմութեանցն Աստուծոյ. համբերութեամբ բազմաւ և ճշմար-*

տեալ սիրով՝ կենդանի յուսով ընթանայ ի կէտ վերին կոչման շնորհօքն[5] ամենառատ բարերար ամենասուրբ Երրորդութեանն. և կատարեսցեն զվարս երկրաւորացս[6] ըստ կանխագիտութեանն Աստուծոյ սահմանի յերկրի առն ի ողջութեան՝ առն ի մանկութեան՝ առն յերիտասարդութեան՝ առն ի ծերութեան։ Այնպէս[7] և այս ի խնամոց Աստուծոյ մատակարարի՝ զի մի գիտասցեն զօր վախճանի իւրեանց՝ և հեղգացեալ վրիպեսցին յարդարութենէ. այլ արթունք և պատրաստք ի գործ սրբութեան զամենայն աւուրս կենաց իւրեանց։[8]

Եւ այն որ ի ողջութեանս և ի մանկութեան առնու զվախճանն աշխարհիս՝ [9]զերծեալ լինի ի փորձութեանց հոգոց աշխարհականաց. [10] և զգուշութիւն լինի այնոցիկ՝ որք վարեն զաշխարհս առ հանդէս արդարութեան և ամենայն առաքինութեան. և կատարեալ ի հաւատս և ի սէր և ի յոյս անարատ [11] և ամբիծ՝ յանմահ կեանսն փոխին յանապական ժառանգութիւնն արդարոց։ Զի հոգիքն որ ելանեն ի մարմնոյ աստի՝ երթան ի կեանսն ըստ իւրաքանչիւր արժանաւորութեան. և անդ հրճուին առաքինեացն ոգիքն ըստ խոստացեալ աւետեացն երանութեանցն[12], որ կայ պահի յուսացելոց սրբոցն անճառք՝[13] որ ի կամս Աստուծոյ վարեցան յաշխարհի ըստ աւետարանին քարոզութեան։

Երանին ի տեառնէ աղքատք հոգւով՝ որ վասն աւետեաց մեծութեանն հոգւով աղքատացան[14] վասն արքայութեանն երկնից՝ որ ի տէր Յիսուս Քրիստոս։ Երանին և խոնարհք սրտիւք՝ զի գտանեն հանգիստ յերկրէ յերկինս՝ որ անքաւ բարձրութիւն[15] է. զոր խոնարհքն ընդունին ի Քրիստոս Յիսուս։ Երանին և հեզք՝ որ ժառանգորդք[16] են երկրին կենդանեաց. յորմէ փախուցեալ են ցաւք և տրտմութիւնք և հեծութիւնք անճառ յուսով ի Քրիստոս Յիսուս։ Երանին և սգաւորք՝ որք յաղագս սիրոյն Աստուծոյ՝ որ ի խորու-

թենէ [17] սրտին հեղու զարտասուաց աղբիւրս զշնորհալիցն իմաստութեամբ, որ մխիթարութիւն ունի [18] ի Քրիստոս Յիսուս։ Երանին և սուրբք սրտիւք, որք ազատեալ և սրբեալ են յաղտեղի ցանկութեանց. զի նոքա զԱստուած տեսցեն։ Երանին և խաղաղարարք, զի նոքա նմանողք եղեն [19] Որդւոյն Աստուծոյ՝ որ արար խաղաղութիւն յերկինս և յերկրի, հեռաւորաց և մերձաւորաց. նմանապէս և սոքա եղեն։

Նա և ամենայն երանութեամբք զուարճանան և զուարթանան հոգիք արդարոցն ի հանգստեանն ի Քրիստոս [20] մինչև ի հասարակաց յարութիւնն, յորժամ գայցէ տէրն մեր փառօք հօր, և մեռեալք ի Քրիստոս՝ յարիցեն առանց ապականութեան. և առաքինեաց անձանց արդարութիւնք առաջի ընթանան ամենասուրբ Երրորդութեանն։ Զի հաւատք հասուցանեն ի ծանօթութիւն փառացն Աստուծոյ. զի՞ ևս պիտոյ է ասել վասն այնորիկ զոր ետեսն, և վասն յուսոյն որ [21] մածանէ ի ժառանգութիւն բարեացն՝ որում ցանկացեալն է, և ինքն տեղի տայ։ Զի յայնմ հետէ զի՞ ևս յուսայ կամ ակն ունի այնմ [22] զոր ժառանգեաց։* Այնպէս համբերութիւն և ժուժկալութիւն, երկայնմտութիւն և հեզութիւն, հնազանդութիւն և ուղղութիւն, սրբութիւն և ճշմարտութիւն, հանդերձ ամենայն երանութեամբք փառաւորեալ և պսակեալ, և մատուցանեն [23] զժառանգաւորն ի ժառանգութիւն արքայութեան։ Զի ուր կատարումն է, զի՞ ևս պիտոյ է առաքինութիւն հանդիսից. զի եմուտ ի վայելսն անսպառ բարեացն, [24] և ուրախանան սուրբ սիրովն յանվախճան երանութիւնսն [25] ամենասուրբ Երրորդութեանն, որ անճառ է և անքաւ և անպատում։

Այնպէս մարդք չարք և անսուրբք և ապստամբք ի ճշմարտութենէ անտի, և [26] զհետ երթեալ զանիրաւութեան

* Հռ. Ը. 24։

և ի նոյնս վախճանի, ընդ [27] նմա յառաջնում գործք իւրոյ ամբարշտութեան դառն յիշատակօք յաղագս ամենայնչար ցանկութեանցն, [28] ահաւոր սպառնալեօք ի վերայ անօրինաց և անհնազանդից, անսրբոց և պղծոց և որ այլ ևս յանցանք իցեն: Վայ ի վերայ վայի հաստատեալ կայ նոցա յԱստուածեղէն գրոց սրբոց, և յանաչառ դատաւորէն պատիժք: Զի յիմարեցան սիրտք [29] իւրեանց յիմանալոյ, և ոչ լուան ձայնի տեառն և պատուիրանաց նորա ոչ անսացին: Եւ վասն այնորիկ պատրաստեալ կայ բարկութիւն Աստուծոյ ի վերայ ամբարշտաց և մեղաւորաց, որք զճշմարտութիւն Աստուծոյ անարգեցին յանձինս իւրեանց, որոց յառաջագոյն սպառնացաւ:

Եւ այս ամենայն սպառնալիք յանցաւորաց յոյժ ի տրտմութեան ունին զոգիս մեղաւորացն ի կայանս, որ ըստ իւրաքանչիւր մեղացն բաժանեալ և որոշեալ ի տխրական տեղիք: [30] Եւ որպէս երևմամբք տեսանեն իմանալեօքն զհատուցումն արդար դատաստանօք՝ զանշէջ հուրն և զխաւարն արտաքին և զլալ աչաց և զկրճել ատամանցն, այնոքիւք ահիւ տխրեալ և տրտմեալ կան ոգիք մեղաւորացն մինչև ի հասարակաց յարութիւնն որ Քրիստոսիւն է: [31]

Ապա եթէ ասիցէ ոք եթէ այդ յառաջ քան զհանդէս ատենին և հատուցմանցն է. և դարձեալ ո՞ւր է ասացեալն յԱռաքելոյ՝ թէ առանց մեր չառնուն զկատարումն առաջինքն: Եւ դարձեալ՝ ասէ մարգարէն. «Մի յուսայք յիշխանս յորդիս [32] մարդկան. զի ելցէ հոգի ի նոցանէ, և դարձցին անդրէն ի հող, և յայնմ աւուր կորիցեն ամենայն խորհուրդք նոցա»: *

Եւ եթէ ոչ ուրախ առնին հոգիք արդարոց առանց մարմնոց, ընդէ՞ր վաղագոյն կանխէր տէր զաւետիսն. ապաքէն

* Սաղմ. ՃԽԴ, 2 3 4.

զի զոգիս արդարոց[53] ուրախ արասցէ։ կանխեաց և զըսպառնալիս ամբարշտաց և մեղաւորաց. ապաքէն զի զարհուրեցուսցէ զնոսա, և տխրեալ տրտմեսցին։ Ըստ այնմ օրինակի է իմանալ, որպէս Թագաւոր քաջամարտկաց[54] և յաղթողաց պարգևս խոստանայ. և նոքա հաստատեալ գիտեն եթէ ի դէպ ժամանակի առնուն[55] զխոստացեալ պարգևսն, ուրախութեամբ ուրախ լինին մինչև առցեն զփառս և զպսակս երանութեանցն։ Սոյնպէս և մեղաւորացն հոգիք, որոց սպառնացաւ մահ յաղագս յանցանաց որպէս Թագաւորացն մահապարտքն, միշտ կան և մնան իւրեանց տանջանացն և մահու բազում տրտմութեամբ և դողութեամբ մինչև ի ժամն[56] յորժամ առնուն ըստ արժանեացըն զհատուցումն անմահ տանջանացն զպատիժս և զպատուհաս, որ մարմնով և հոգւով ընդունին։ Այլ զոր Առաքեալ ասէ, և մեք զնոյն ասեմք. զի իւրաքանչիւր ոք զիւր վարձս առցէ ի հասարակաց յարութեանն, զոր ինչ գործեցին եթէ բարի և եթէ չար։ Եւ մի յուսալ յիշխանս, ասէ մարգարէն. զի լուծանելոց են յերկրէս ամբարտաւանեալք իշխանութեամբն և շիջանին հպարտ կամքն։ Այլ յուսալ յԱստուած, ասէ, որ անմահն է և իշխան մահու և կենաց յաւիտեան։

Եւ ոմանք որ ասեն՝ եթէ որպէս մանուկն յորովայն անըզգայ և կենդանի՝ լռեալ և դադարեալ կայ ի խօսելոյ և ի լսելոյ, ի գնալոյ և ի գործելոյ, այսպէս համարին զոգիս մարդկան լռեալ և ցածուցեալ։

Զայս գիտասցեն,[57] զի ի սաղմնաւորութենէ անտի յառաջագայի և լինի մանուկ յօրինուածովք ըստ կերպարանին մարդ, և աճումն առնու տղայն ի ծնունդ և ի սնունդ տղայութեան՝ աճմամբ մարմնոյ և մտաց յորովայնին, և յետ ծննդեան Նախախնամութիւն[58] Աստուծոյ, որպէս ինքն գիտէ կապողն հոգւոյ և մարմնոյ ի միասին՝ և գալ ի կա-

տարելութիւն մարմնոյ և մտաց, և դարձեալ պակասիլ և զմահ ստանալ [39] ըստ սահմանի Աստուծոյ։

Եւ այս վասն [40] այսորիկ, զի ըստ իւրաքանչիւր հասակաց աճմանն և զառաքինութեան զհանդէս ընդ նմին յարդարեսցին [41] ի կատարումն Քրիստոսի գլխոյն մեր հասարակաց։ Եւ հաւատով և սիրով և երկեղիւ գնալ ընդ ճանապարհս արդարոցն, [42] որպէս առաջնորդն մեր և կատարիչ առաքինութեանն Յիսուս Քրիստոս. որ [43] բազմադիմի շնորհօք իւրովք խնամէ զարարածս յերկրի։ Եւ որ [44] անդէն կայանք ննջեցելոցն հոգիք ի զգայութեան և յանճառ փառաբանութեան հրեշտակային օրհներգութեամբք։ [45] Զի աստուածային գիրք՝ կենդանի և անմահ ասեն զհոգիս մարդկան։ Որով իմանալի է ոչ անզգայս, այլ ունին և փառս տալ [46] արարչին։ Ապա եթէ ըստ մարմնոյ օրինակի իմասցիս, որպէս յորովայնի, և յետ այնորիկ գայ ի կատարելութիւն [48] մտաց և մարմնոյ և փոփոխի։

Այլ հոգի անմահ բանաւոր և մտաւոր՝ յորժամ ելանէ ի մարմնոյս, յառաւել գիտութեան իմաստից [49] է իմանալ և ճանաչել զտէրն փառաց։ Որով յառաջագոյն մարմինն որպէս ամպ ինչ ծածկեալ ունէր զիմանալի տեսութիւն, [50] թէպէտ և յուսով նահատակէր ի գործս բարիս ի ձեռն հոգւոր օրինացն, որով զընտրութիւնն առնէր բարւոյ և չարին, անարգելովն զչարն և ընտրելովն զբարին խրատու և իմաստութեամբ տեառն երախտաւոր սիրովն։ Զի ոչ է պարտ զհոգիս մարդկան մահկանացու ասել կամ անզգայս. այլ որպէս Եզեկիէլի մարգարէ ի միում վայրի յարութիւն մեռելոց՝ նախ ոսկերաց և ջղաց և մարմնոյ միաւորեալ [51] ամենայն յօրինուածովք, և ապա կոչել [52] զհոգիսն յիւրաքանչիւր կայենից հոգւով սրբով որպէս հողմով։ * Զի ** «Առա-

* Սաղմ. 60 Բ, 30.

** Եզեկ. ԼԷ.

քեզ ասէ, [55] զհոգի քո և ստանաս զնոսա և նորոգես». [54] և որ յաւետարանսն պատմին մեռելոց յարութիւնքն ի տեառնէ. զի հոգւոյն դարձ ի մարմինն վկայութիւնք այս են: [55] բերան [56] խօսի, աչք տեսանեն, ականջք լսեն, ունչք հոտոտին, ձեռք շօշափեն, ոտք գնան, սիրտ շարժի իմանալեօք՝ և փառաւոր առնեն զԱստուած կենդանարար հոգւովն՝ որ զամենայն զգայութիւնս շարժէ տերամբ: [57] Եւ յորժամ հոգին արձակի ի մարմնոյն, մեռեալ կոչեցաւ. և քակտին ամենայն յօդեալ յօրինուածք անդամոցն իւրոց: Նոյնպէս վկայութիւնք են իւրոյ հոգւոյն՝ շարժելն, իմանալն, ճանաչելն, յիշելն. զի մարմնոյս [58] այս տուիչ և վարդապետ և կենդանարար հոգիքն են ըստ Աստուծոյ կամացն: Ապա եթէ ի զգայութիւնսն [59] է պատճառ կենդանութեան, ապա ո՞ւր է անմահութիւն [60] հոգւոյն՝ որ զկեանսն ունի Աստուծով:

Եւ այսպէս իմանալի է. զի ամենայն շարժմունք՝ հոգւոյն են. և ոգիքն տան մարմնոյն զկեանս ըստ նախախնամութեանըն Աստուծոյ: Եւ որպէս մարմինքն վկայութիւն ունին ըզգործ բնութեան [61] բարուցն, այսպէս ոգիքն զիւրեանց բարուցն [62] ունին զվկայութիւն: Եւ ոգի անուանի կենդանի ի մարմինս ազդելով և աշխատելով և [63] չարչարելով և մահկանացուս, յորմէ որոշի ըստ վերին կողման արարչին ի պատրաստեալ օթևանս անմարմնոցն: Զի մարմին յերկիր դառնայ և հանգչի անհոգ. * և հոգին սուրբ և բարի աւետեօք՝ յուսոյն զուարճանայ ընդ հրեշտակս ի փառս ամենակալին՝ իբրև արդէն առեալ զառհաւատչեայ երանութիւնս երկնից արքայութեանն: Զի և հոգին, ասէ, վկայէ հոգւոյս մերում եթէ եմք որդիք Աստուծոյ և ժառանգակիցք Քրիստոսի. զերծեալք ի ծառայութենէ մեղացն յազատութիւն փառաց Որդւոյն Աստուծոյ: **

---

* Ժող. ԺԲ, 7:

** Հռ. Ը, 16:

Զի ամենայն հաւատացելոց ծանուցեալ եղեւ երախտիք սիրոյն առ արարածս իւր լուսաւոր աւազանաւն եւ փրկական խորհրդովն մարմնով եւ արեամբն [64] իւրով, որ պատարագեցաւն ի վերայ խաչին եւ երարձ զմեղս աշխարհի՝ որք հաւատով մերձեցան [65] առ փրկիչն մեր։ Եւ յորժամ դարձեալ գայցէ փառօք ի նորոգել զորդիս մարդկան, եւ յարուցանէ զմեռեալս, նորափետուր զարդարէ լուսով զարդարս կենդանիս եւ զյաւիտենից ննջեցեալս սուրբս ի տէր, եւ մուծանէ ի ժառանգութիւն իւր յանմահական կենացն ուրախութիւնն՝ * որ կայ պահի հաւատացելոց սրբոց եւ յուսացելոց ի տէր։ Եւ ինքն եղիցի, ասէ Առաքեալ, Աստուած ամենայն յամենայնի իւրով կենդանի սուրբ սիրովն եւ կենդանարար խնամովքն։ [66]

Զորս վայելեցուցանէ ի փառս աստուածութեանն զճշմարտեալսն ուղիղ հաւատով, եւ սուրբ եւ անարատ վարս [67] վըճարեալ զերկրաւոր կեանս, եւ զանանց կեանսն շահել ի Քրիստոս՝ զմշտնջենաւորն զերեւելին յանուշակ փառս միածնին։ Որ ամենայն երանութեամբք պսակէ եւ փառաւորէ ի կամս [68] հօր եւ հոգւոյն սրբոյ յաւիտեանս յաւիտենից. ամէն։

---

* Ա. Կոր. ԺԵ, 28։

ԵՐԱՆԵԼՈՅՆ ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ՀԱՅՈՑ ԼՈՒՍԱՒՈՐՉԻՆ[1]

ՎԱՍՆ ՄԱՐՏԻՐՈՍԱՑՆ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ ՈՒՍՄԱՆՑ

ԺԶ

ՏԿՍԱՆԻՄՔ *այսուհետեւ եւ վասն մարտիրոսաց ճառել բանիւ. զի պատուեսցուք զյիշատակս նոցա, եւ երանեսցուք զնոսա վասն ճշմարիտ վկայութեանն եւ սիրոյ, եւ բազում վարձս առնումք նոցա բարեխօսութեամբն*[2] *վասն մեր։ Այլ զպաշտօնն Աստուծոյ մատուսցուք սաղմոսիւք եւ օրհնութեամբ եւ երգովք հոգեւորօք, սուրբ սրտիւ գովելով զանըսկիզբն էութիւնն եւ զամենազօր տէրութիւնն, զի արժանիս արասցէ զմեզ մասին ժառանգութեան սրբոց աւետեացն ի լոյս*[3] *ի փառս տէրութեանն։ Եւ ամենայն ժողովուրդք*[4] *որ ժողովին ի յիշատակս սրբոցն, ի միտ առցեն հաւատով եւ սուրբ սիրով զհանդէս նահատակութեան նոցա։ Եւ նոցա բարեխօսութեամբ աղաչել զԱստուած ջերմեռանդ արտասուօք,*[5] *հսկելով զտիւ եւ զգիշեր ի պաղատանս սուրբ սրտիւ. զի զերծուսցէ զմեզ յաշխարհէ աստի չարէ առաքինասէր վարուք։ Որպէս զսուրբսն զայնոսիկ՝ որոց յիշատակն կատարին ի փառս Աստուծոյ, եւ զհանդէս մտերմութեան իւրեանց ցուցանել առ ամենեցունց տէրն եւ արարիչն Աստուած՝ որ ետ նոցա զայնպիսի յաղթութիւն առ բանսարկուն եւ հակառակորդսն ճշմարտութեանն։ Զի եւ մեզ տացի շնորհս յաղթել ամենայն կարեաց որ յառնեն ի վերայ մեր ճակատամարտք երեւելիք եւ աներեւոյթք. եւ ըզպաշտօնն փառաբանութեան*[6] *Աստուծոյ ընծայել երկրպագութեամբ։*

Զի այս իսկ են սրբոցն կամք, զի եւ ժողովուրդք նոցա բա-

ըեխօսութեամբն՝ յԱստուծոյ պաշտօնն յորդորեցին. և այնպէս առնուն[7] զաշխատութեան փոխարէնս յամենատուրբ Երրորդութենէն։ Զի Պօղոս և Բառնաբաս արարեալ նշանս յանուն տեառն Յիսուսի Քրիստոսի, զառ ի մօրէ զկաղն բըժըշկելով և զարմացուցեալ զամենեսեան. մինչ զի քուրմքն Աստուածս[8] զնոսա համարեցան յերկնից իջեալ և զմարդոյ կերպարանս ունելով։ Վասն որոյ զոհիւք կամէին պատուել զնոսա որպէս զաստուածս։ Եւ յաղագս այնորիկ պատառեցին զհանդերձս, և ճիչ բարձեալ ասէին. մեք ձեզ նմանեալք մարդիկ եմք ծառայք Աստուծոյ բարձրելոյն՝ որ արար զերկինս և զերկիր և որ ի նոսա արարածք իցեն. և յանուն նորա բժշկեցաւ սա։ Եւ զայս ասացեալ հազիւ լռեցուցին զամբոխն. զի լաւ համարեցան մեռանել, քան եթէ զպատիւն Աստուծոյ ձգել յինքեանս և փառաւորիլ ի մարդկանէ։ *

Այսպիսի[9] ինչ արար սատանայ, զի զԱստուծոյ պատիւն յինքն ձգեաց, և որոշեցաւ ի խնամոց արարչին իւրոյ, և անկաւ ի փառաւորեալ կարգաց հրեշտակական դասուցն, և եղև խաւար փոխանակ լուսոյ և ժառանգորդ գեհենին պատժոց։ Զի սրբոց առաքելոցն և մարգարէիցն և ճշմարիտ վարդապետացն ծառայս[10] Աստուծոյ՝ անարգս երևեցուցանելով. զի գիտէին զսատանայ[11] ի ձեռն հպարտութեան և ամբարտաւանութեան[12] և ամբարհաւաճեալ զի վայր անկումն, և զխոնարհաց և զհեզոց զի վեր ելումն ի տեղիս անկելոցն։ Մանաւանդ Քրիստոս, քանզի յայտնագոյնս եցոյց ըստ տնօրէնութեանն զանճառ զխոնարհութիւնն իւր. յորս և ասէ իսկ. «Ուսարուք յինէն, զի հեզ եմ և խոնարհ սրտիւ. և գտջիք հանգիստ անձանց ձերոց»։**

* Գործք. ԺԴ, 7—14.
** Մատթ. ԺԱ, 29.

Եւ ամենայն սուրբք իւրեանց առաջնորդութեամբ ճշմարտեալ խոնարհութեամբ առ տէրն ի բարձունս ընթացուցանեն զամենայն հաւատացեալս յԱստուած. զի արժանի լիցին յամենեցունց փրկչէն [13] փրկութեան և քաւութեան սխալանացն բարեխօսութեամբ սրբոցն, և այլ մի ևս դառնալ ի դժնդակ վարս սատանայի: Այլ լսել զխրաքանչիւրոցն նահատակութիւնս և զկատարեալ սուրբ սէրն, որ առ Աստուած էր յոյսն նոցա համբերութեանն, նախանձ ունել Քրիստոսի: Որ հրով և ցրտով, ջրով և սառնամանեօք, քերանովք և հարուածովք, բանդիւք և կապանօք, սովով և ծարաւով, սրով և մահու, սպառնալեօք և ողոքանօք. [14] զի երկչոտն զարհուրեսցի և արին կակղասցի: Այլ ոչ ինչ կարաց այսպիսեացս չարաչար տանջանացն վիշտք և նեղութիւնք և վտանգք մարմնոյ քակտել և խզել [15] զսուրբ սէրն որ յամենասուրբ Երրորդութիւնն: Եւ յաղագս առաւելութեան Աստուծոյ սիրոյն առին համարձակութիւն բարեխօսութեան [16] առ տէր: Զի զայս ամենայն դժնդակ տանջանս ի հակառակաց անտի ընկալան համբերութեամբ բազմաւ վասն երախտաւոր սուրբ սիրոյ նորա՝ որ սիրեաց զազգս մարդկան, որ հրաւիրեաց և կոչեաց: [17]

Արդ զհետ երթիցուք կոչողին զհետ սրբոցն սուրբ սիրով. խնդրեսցուք ջերմեռանդ շնորհալից արտասուօք զանտի զհանգիստն աստեօքս [18] աշխատութեամբ. զհուր ցանկութեանցն շիջուսցուք հրով հոգւոյն սրբոյ. և սրբեսցուք զանձինս զերևելի զգայարանս և զաներևոյթ հոգւոյն շարժմունս ի խղճէ չարեաց: * Զի ճշմարտեալք սիրովն [19] որ առ Աստուած՝ կարասցուք մասին սրբոցն աւետեացն արժանի [20] լինել յետ զկեանս աշխարհիս լուծանելոյ: Զի այսպէս ի ժողովս սրբոց հաղորդեսցուք և տօնեսցուք ի փառս ա-

---

* Եբր. Ժ, 22.

մենակալին Աստուծոյ, որ ետ նոցա զյաղթութիւն առ չար բռնաւորս· և փառաւորեաց յերկինս և յերկրի որ կան և մնան։

Այսպէս յուսալ և հաւատալ[21] ի սրբոցն ժողովս և ի բարեխօսութիւնսն, որպէս զքահանայս որ կան առաջի այնորիկ՝ որ նստին ընդ աջմէ Հօր, և զիւրաքանչիւրոցն պատարագս ընծայեն[22] աղօթիւք առ ի հաշտութիւն ակամայ և կամաւոր սխալմանց հաւատացեալ ժողովրդոց[23] վախճանելոց և կենդանեաց։[24] Եւ իւրեանց ճշմարտեալ հաւատովն և հանդիսաւոր ճգնութեամբ առաքինասէր վարուք՝ արդար և սուրբ և ուղիղ բաղձանօք, շնորհալից սիրով, արտասուագոչ պաղատանօք՝ հաւատան առնուլ զխնդրելին յամենեցունց փրկչէն, ըստ յուսոյ հաւատացեալ ժողովրդոց·[25] մանաւանդ ի ձեռն փրկական խորհրդոյն սրբապէս կատարմանն ի Քրիստոս Յիսուս·[26]

Այսպէս է իմանալ զսրբոցն զբարեխօսութիւն առ հաւատացեալ ժողովուրդն։[27] Զի իւրեանց մտերիմ վաստակովքն, որք զմարմինս իւրեանց պատարագեցին յերկրի վասն անուանն Աստուծոյ ի հոտ անուշից, և սուրբ հոգիք նոցա հոգևոր բարեխօսութեամբն զԱստուած[28] յողորմութիւն աշխարհի ածեն։ Եւ նշխարք ոսկերաց նոցա փրկութեան շնորհք ընծայեն ի ժողովս հաւատացելոց, որպէս ամենեցուն է քաջայայտ· զի երևեսցի սէրն Աստուծոյ ի նոցա նշխարսն բնակեալ, և նշանօքն ծանուցեալ յերկրի։

Իսկ արդ իմանալեօքն զյուսացելոց իւրաց զհաստատութիւն և զյանդիմանութիւն Աստուծոյ մերձաւորութեանն[29] ունին, զհամարձակութիւն բարեխօսութեան՝ որ ոչն երևի մարմնաւորացս· այլ երևելեօքս շնորհատուր զօրութեանն[30] Աստուծոյ ի նոցա նշխարս և ի սուրբ ժողովս զաներևոյթն իմասցուք առաւելագոյն այցելութիւն ի տեառնէ։ Զի հոգիք, ասէ, առաւել են քան զմարմինս առ արարիչն և առ արարածս։ Զի այսպիսի շնորհք տուան յԱստուծոյ առաքե-

լոց և մարգարէից և մարտիրոսաց և ամենայն ընտրելոց սրբոց յերկրի աստ և յերկինս: Զի նոցա առաջնորդական հանդիսիւքն և առաքինասէր վարուք հաճոյացաւ Աստուծոյ. և նոքա պատճառ լինին մեզ փրկութեան և կենաց միշտ բարեխօսութեամբն իւրեանց:

Եւ մեք զփառաւորեալսն յԱստուծոյ երանեսցուք. որ վասըն սիրոյն Աստուծոյ զանձինս իւրեանց մատնեցին չարչարանաց և մահու, և առին զպատիւն և զպարգևսն [51] անապական յանմահ Թագաւորէն: Այլ զպաշտօնն և զփառաբանութիւնն երկրպագութեամբ ամենասուրբ Երրորդութեանն մատուսցուք ի յիշատակս կատարման ամենայն սըրբոց [52] Աստուծոյ: Զի այս են կամք ամենեցունց տեառն և ամենայն սրբոց նորա. զի նա է փառաց և պատւոյ արժանի յամենայն սրբոց և յարարածոց այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ԵՐԱՆԵԼՒՈՅՆ[1] ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ՀԱՅՈՑ ԼՈՒՍԱՒՈՐՉԻՆ[2]

ԶԳՈՒՇՈՒԹԻՒՆ ԶԳԱՍՏՈՒԹԵԱՆ

ՇԱՀԱՒՈՐ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԵԱՆ ԸՆԴ ՄՏԵՐԻՄՍՆ ԵՒ ԸՆԴ ԴԺՆԴԱԿՍՆ ՊԱՏԻՒ ԵՒ ՊԱՏԻԺՍ[3]

ԺԷ

Գրել[4] ձեզ և ուսուցանել կամիմ եղբարք իմ և որդիք, զորս ի Քրիստոս աւետարանաւն ծնայ։ * Զի որք յարգեն զանձինս իւրեանց ի գործ բարութեան և յուսումն ճշմարտութեան, ինքեանք իսկ պատրաստին[5] ի վնասակարացն, և պէսպէս հնարիւք յառնել զբարիսն խորհին։ Որպէս զի օրինակ ճշմարտութեան եղիցին յառնել և յուսուցանել միշտ, և անխիղճ և անպատճառ իցեն առ հեռաւորս և առ[6] մերձաւորս ըստ բանին տեառն. «Լուսաւոր եղիցի ասէ, լոյս ձեր արդարութեան առաջի մարդկան. որպէս զի տեսցեն զգործս ձեր բարիս, և փառաւորեսցեն զհայրն ձեր բարիս, և փառաւորեսցեն զհայրն ձեր երկնաւոր»։ ** Եւ դարձեալ երանէ զծառայսն, յորոց անուանն օրհնի և փառաւորի. և վայ և եղուկ զայնոսիկ վարկանի, յորոց անուն տեառն հայհոյեսցի։ ***

Զի որք լինին քարոզք ճշմարտութիւնն ինքնին յարգէ[7] զնոսա անմոլար գիտութեամբն։ Եւ Աստուած փառաւորէ զնոսա, յորժամ տեսանի նոցա բարեպաշտութեան ջանքըն. զի զոր նոքայն տնկեն և սնուցանեն, Աստուած աճե-

* Ա. Կորն. Դ, 15,
** Մատթ. Ե, 16
*** Հռ. Բ. 24,

ցուցանէ և հաստատէ աւետեօք կենացն ի փառս և ի պարծանս նոցա ի տիեզերական ատենին յարութեանն որ ի մեռելոց։ Եւ կարասցեն ասել. Ահա մեք և մանկունք մեր ճըշմարտեալ զոր ետուր մեզ, Աստուած։ * Եւ պսակեալ առաքինութեամբքն առնուն զգրաւական խոստացեալ աւետեացն Քրիստոսի։ «Զի որ արասցէն, ասէ, և ուսուցէ, նա մեծ կոչեսցի յարքայութեանն երկնից»։ ** Զի «Սկսաւ, ասէ, Յիսուս առնել և ուսուցանել մինչև յօրն՝ յորում համբարձաւ յերկինս»։ ***

Իսկ որում հաւատացաւ վերակացութիւն ժողովրդոց, և հեղգասցի [9] ի նոցա խնամս ի հոգևոր ուսումն և ի խրատ, և սատնգանիցէ և կամ ոչ տայցէ զմարմնաւոր պէտս կարօտելոց, այլ ուտէ և ըմպէ անզգայաբար, յանկարծակի գայ [10] ի վերայ նորա մահ՝ յորում աւուր ակն ոչ ունիցի. և հատանող բանն Աստուծոյ սուր՝ ընդ մէջ կորեսցէ զնա, յինքըն առեալ զշնորհսն՝ որ յԱստուծոյ է, [11] և զվատթարն ընդ անհաւատսն դիցէ ի խաւարն արտաքին և ի հուր, ուր լալ աչաց է և կրճել ատամանց։ «Զի հաւատք ի լսելոյ են, ասէ Առաքեալ, և լուր ի բանէն Քրիստոսի. զի զիա՞րդ հաւատան զոր ոչն ուսան, և կամ զիա՞րդ աղաչեսցեն [12] զոր ոչ գիտեն»։ ****

Եւ դարձեալ առ մարգարէն Եզեկիէլ ✠ ասէ օրինակաւ առ ամենայն վերակացուս. այսպէս. «Դէտ կացուցի զքեզ. զգուշասջիր անձինդ և ժողովրդեանդ, և ասասցես ցանօրէնն՝ եթէ մահու մեռցիս։ Եթէ ոչ զղջասցի և դարձցի խոստովանութեամբ յապաշխարութիւն, մեռցի զմեղացն

* Ես. Ը. 18։

** Մատթ. Ե. 19։

*** Գործք. Ա. 1։

**** Հռ. · 14։

✠ Եզեկ. Գ, 17։

զմահ. և դու ապրեսցիս, զի զգուշացուցեր յառաջագոյն։ Ապա եթէ զղջասցի և դարձցի խոստովանութեամբ յապաշխարութիւն, կելով կեցցէ զարդար կեանսն և մի մեռցի զմեղացն զմահ։ Ապա եթէ ոչ զգուշացուցեր նմա, ի մեղս իւր մեռցի ի պատուհաս, և զարիւն նորա ի ձեռաց քոց խնդրեցից», ասէ զայս՝ ամենեցունց տէրն։

*Եւ Դանիէլ [13] բանիւք և արդեամբ եցոյց * զիրաւացի դատաստանն առ ծերսն՝ որք էին վերակացուք Իսրայէլի՝ զպատիժս պատուհասիցն։ Որ և ի գբին յառիւծուցն ապրեցաւ՝ ** մատնելով ստախօսն ի մահ, որ անդէն իսկ ի նոյին դառնայր մահն յառիւծուցն։ Եւ այնպէս երևելի եղև ճշմարտութիւն արդարոցն և ամբարտաւանութիւն զրպարտող չարեացն։ [14] Եւ այսպէս փառաւորէ Աստուած զփառաւորիչս իւր և զճշմարիտ վերակացուս։ Որ և զերիս մանկունսն արկին ի հնոցն առ ի յայրել վասն առ ի յԱստուած զհաւատոն ամբողջ պահելոյ, [15] զի հրամանն, ասէ, թագաւորին սաստկանայր, և հնոցն բորբոքէր առաւել, և հուրն ոչ կարէր մերձենալ առ սուրբսն որք օրհնէին զտէր Աստուած։ *** Այլ զչարսն զորս գտանէր, այրէր հուրն. զի այնու ծանուցեալ եղև արարիչն արարածոց. և թագաւորն խոստովան լինէր Աստուծոյ զմեղսն։ [14]*

*Եւ զԵրեմիաս **** արկին ի գուբն ի մահ յաղագս յանդիմանելոյ զանիրաւսն և ի դարձ ածելոյ, զի ապրեսցեն ի բարկութենէն որ գալոցն էր ի վերայ ժողովրդեանն։ [15] Որ և զգրեալ զխրատսն և զմարգարէութիւնն այրեցին, և ըստ արժանեացն ընկալան զհատուցումն մեղաց իւրեանց, և*

---

* Դան. ԺԳ, 45.

** Անգ. ԺԴ, 41.

*** Դան. Գ, 22.

**** Երեմ. ԼԸ, 6.

մատնեցան ի սով և ի սուր և ի գերութիւն։ Եւ մարգարէն փառաւորեալ պատուեցաւ ի թագաւորէն և ի մեծամեծացըն, և վերստին նորոգեաց գրով զմարգարէութիւնն և զուղիղ խրատսն։* Եւ զի ասաց, «Անիծեալ ամենայն որ գործէ զգործ տեառն ծուլութեամբ։»**

Եւ տէրն որ յաւետարանին առ Պետրոս ասաց. դու ես վէմ և ի վերայ այդր վիմի շինեցից զեկեղեցի իմ. այսինքըն զհաւատացեալ ժողովուրդն Աստուծոյ. և դրունք դըժոխոց զնա [16] մի յաղթահարեսցեն, զարձակեալսն [17] յերկրէ սուրբս և արդարս ճշմարիտ [18] հաւատով յերկինս, և զոր կապիցես յերկրի զանսուրբս և զանիրաւս և զայլահաւատս, եղիցին կապեալ ի յերկինս ի պատիժս [19] սպառնալեացն։*** Առ Պետրոս բանս ի տեառնէ առ ամենայն վերակացուս սուրբս ասացաւ։ որք զճշմարտութիւնն իրաւ ունին։

Այսպիսի ընտրութիւնք են ի մէջ լաւաց և անիրաւաց [20] որք իւրեանց սրբութեամբն և առաքինասէր վարուք եղեն արբանեակք և քարոզք բանին ճշմարտութեանն զգուշութիւն անձանց և ժողովրդոց, արհամարհողաց և անհնազանդից, անսրբոց և պղծոց և որ այլ ևս դժնդակութեան վարք իցեն, յամենայնի խելամտեալք ճանաչելով զերկաքանչիւրոցն զշարժմունս, և ընդ սխալեալսն մարտիցէ զինուք ճշմարտութեանն ողոքանօք կամ սաստիւք. որով կարասցէ շահել զմեղապարտսն։ Եւ զհեծանոյն ի ձեռն ունել, զի հողմով հոգւոյն սրբոյ շնչելով՝ որոշեսցէ զցորեանն յշտեմարանըս սրբոց, և զյարդն պատրաստիցէ ի նիւթ հրոյ գեհեննին, որպէս ասացաւ. զի ընտրութիւն է ի մէջ բարւոյ և չարի։

* Երեմ. ԼԶ, 23.
** Անդ. ԽԸ, 10.
*** Մատթ. ԺԶ, 18.

Իսկ որ ի ճշմարիտ վերակացութենէն օտար են բարկութիւնն Աստուծոյ ի վերայ նոցա պատրաստեալ կայ ի տեառնէ ըստ բանի Առաքելոյն. «Որք զճշմարտութիւնն անիրաւութեամբ ունին, և ոչ ըստ աւետարանին Քրիստոսի»։* Զի արժան է առաջնորդաց վերագոյն ըստ արդարութեան օրինացն եղեալ [21] յամենայն ի հաճոյս Աստուծոյ, և զժողովուրդն զգուշացուցանել ճշմարիտ վարդապետութեամբ վասն իւրաքանչիւրոց փրկութեանց. զի մի սպառնացեալ պատուհասն ի վերայ հասանիցէ ի ձեռն Հրեշտակի չարի։ Որպէս մարգարէին ցուցաւ սատակել զանիրաւսն և ոչ ումեք ողորմել, ծերոյն և տղայոյն, կուսին և երիտասարդին, և քահանայից և ժողովրդոց։

Բայց ասէ, որք հեծեն և յոգոց հանեն և սգան զայլոց անիրաւութիւնս, խնայել հրամանն առնու նշանաւն որ ի ճակատն առեալ ի տեառնէ, զի ապրեսցին ի սատակմանէ անտի։** Եւ սկիզբն սատակմանն ի քահանայից անտի առնու, յորոց վերակացութիւն ժողովրդեանն է յԱստուծոյ. որ զչահս մարմնոցն առնուին, և հոգևոր շահիցն անփոյթ առնէին. զի Աստուծոյ դատաստանքն ճշմարիտ են. զի «Ամենայն դպիր աշակերտեալ արքայութեանն Աստուծոյ, [22] ասէ տէրն, նման է առն տանուտեառն՝ որ հանէ ի գանձէ իւրմէ զնոր և զհին»։ ***

Տանուտէր անուանեաց զառաջնորդս եկեղեցւոյ՝ զաշակերտեալս ճշմարտութեան աւանդիցն, և գանձս զիմաստս սրտին, որ ի հնոյն և ի նորոյս ունի զատոյգ գիտութիւնն,[23] և փայլեցուցանէ զմերձաւորս և զհեռաւորս բարի խորհրդովք և բարի գործովք և անարատ սրբութեամբ։ Եւ զչար գանձուցն [24] զմթերս արտաքս պեղել, մինչ ոչ մնաս-

* Հռ. Ա, 18։
** Եզեկ. Թ, 4։
*** Մատթ. ԺԳ, 52։

ցեն նշխարք [25] չար գանձուցն ի բարի ուսմանցն, ընտրելով զլաւն ի վատթարն։

Ինքեանք, աստ, օրինակ լիցին կացիւք գնացիւք, ամենայն առաքինութեան հանդիսիւք. զի աշակերտեալքն յորդորեսցին ի ճշմարիտ վարս, որ փառս [26] է վարդապետաց, գնալ ի ճանապարհս արդարոց, և խորհել ի պատուիրանս տեառն, և առաջնորդել լուսաւոր վարդապետութեամբ ի սրբութեան վարս [27] և յարդարութիւնսն ամենայն։ Զի զամենեսեան ժառանգորդս արասցէ արքայութեանն Աստուծոյ, գործակից լինել կենարար աւետարանական խրատուն, և մի իւիք զանց առնել ի ճշմարիտ աւանդիցն։ «Զի եթէ միով իւիք ինչ, ասէ, գթիցես, եղեր ամենայն օրինացն պարտական»։ * Զի ճշմարտեալք հաւատով և սրբեալք ի խղճէ չարեաց, միշտ մերձաւորք լիցին մարմնոյ և արեանն տեառն, ի ներքին մարդն բնակել [28] Քրիստոսի, որ լուսաւորէ զսուրբս անարատ և ամբիծ երախտեօք սուրբ սիրոյն, հոգևոր և մարմնաւոր [29] դարմանօք յամենասուրբ Երրորդութենէն միշտ։

«Իսկ յորժամ Քրիստոս յայտնեսցի կեանքն մեր, ասէ Առաքեալ, ** յայնժամ և դուք ընդ նմա յայտնեսջիք փառօք»։ [30] Որպէս զի եղիցի մեզ ամենեցուն որ զգեցաք զՔրիստոս, ճշմարտեալ հաւատով և առաքինասէր վարուք հաճոյացեալք մերձենալ ի լոյսն անմատոյց, և պայծառանալ ի փառացն Քրիստոսի յուսոյն մերում ի տիեզերական տօնին յարութեանն որ ի մեռելոց։ Եւ փառաւորեսցուք զամենազօր տէրութիւնն միշտ ընդ հրեշտակս յաւիտեանս յաւիտենից. ամէն։

---

* Յակ. Բ, 10։

** Կող. Գ, 4։

ՆՈՐԻՆ ԵՐԱՆԵԼՒՈՅՆ ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ՀԱՅՈՑ ԼՈՒՍԱՒՈՐՉԻՆ

ԳՈՎՈՒԹԻՒՆՔ [1] ԱՍՏՈՒԾՈՅ ԵՐԱԽՏԵԱՑՆ

ՀԱՆԴԻՍԻՒՔ ՄԱՐՏԻՐՈՍԱՑ ՔԱՋԱՑ ԵՒ ԱՌԱՔԻՆԵԱՑ

ԺԲ

Անբաւ են խնամք բարերարին և անզեղջ պարգևք կենարարին, [2] որ հաստատեաց զզօրս երկնից ի փառս անուան իւրոյ սրբոյ, և զմարդիկ յանարգութենէ նմանապէս ի գովեստ փառաց շնորհաց իւրոց. և ետ նմա իշխանութիւն ի վերայ ամենայն երևելի արարածոց, և խոստացաւ տալ զանպատում երանութիւնսն։ Զի անձնիշխան կամս ստացան ի տեառնէ երկնաւոր զօրքն [3] և երկրաւորս [4] որդիք մարդկան. զի հաղորդ լիցին բարերար կամաց արարչին, խորհել միշտ զբարին և առնել ի կամարար մտաց ըստ կամացն Աստուծոյ, զի շահեսցին զօգտակարն անձանց։

Եւ ետ դաստիարակս երկուս, զաւետիսն և զսպառնալիսն։ Եւ վարդապետս յօրինեաց զհոգևոր օրէնսն խրատուն [5] կենաց, որ յիւրմէ կանուխ գիտութենէն ծածկեալ անձնիշխան կամացն [6] բարեօքս։ Այլ զի որ ի լաւագոյնն հնազանդեցաւ [7] մտերիմ հաւանութեամբ տեառն, փառօք պսակեսցի։ Իսկ արհամարհողն և անհնազանդն և ապստամբեալն ի ճշմարտութենէ աւանդիցն՝ պարտաւորեալ պատուհասեսցի։ Եւ արարիչն բարերար կամօք [8] ոչ եթէ հակառակ ինչ էր իւր կանուխ գիտութեանն, այլ հաւան իսկ [9] նախախնամական սիրոյն իւրոյ առ ի հաստատուն կալ ի բարիսն։ Եւ զպատիւ խոստացեալ աւետեացն արդարոցն յաւէտ առնէ միշտ. այլ և զպատիժս արհամարհողացն և անհնա-

զանդիցն ի հոգևոր օրինացն։ Զի զամենեսեան [10] զգուշացուսցէ ի հնազանդութիւն պատուիրանին, զի մի զրկեսցին ի վարձուցն հատուցման։ Այլ յորդորէ [11] յօգտակարսն, սակայն ոչ բռնայ զանձնիշխան կամս, թէպէտ և յառաջագէտ է։ Որպէս առ մանկունսն Իսահակայ, մինչդեռ յորովայնի մօրն էին, ընտրութիւնս առնէ. զՅակոբ սիրէ՝ որ բարի բացայայտի, և զԷսաւ ատեայ՝ [12] որ չար երևիւր։ *

Եթէ այդպէս է, զիա՞րդ չարն, ասեն, յառաջագայի, և ոչ բարին միշտ յառաջագայի։ Եթէ այդպէս էր, բռնայր պատիւ [13] անձնիշխան կամացն, և կորնչէր ընդրութիւնք արդարոցն, և զրկեալ լինէին քաջքն յաղագս հանդիսի պսակացն և փառօքն։

Զի արքայութիւնն երկնից, ասէ տէրն, ուսար է, [14] և բռունք յափշտակեն զնա։ ** *Զի առաքինասէրքն վարուք և մեռեալք մեղացն փոխին որպէս ի մեռելոց ի կենդանիս՝ ի սրբութիւն և յարդարութիւն ըստ ճշմարտութեան աւետարանին։ Զի մեղք՝ նոցա ոչ տիրեն. զի ոչ են ընդ օրինօք, այլ ընդ շնորհօք։* *** *Զի այլ պարգևք ի տեառնէ է որ ընդ շնորհօք են, և այլ պատիւ և փառք որ առաքինութեամբն և քաջութեամբն են շահեալք. և այլ է որ ի գիտոյ վայելէ՝ ի խոնարհութենէ պատկառանաց զգաստացեալ, և այլ է որ ի հանդէս առաքինութեան մրցին ըստ հարկաց սխալանաց անձանց։ Զի զամենայն բարութիւնս զերկնաւորսն և զերկրաւորս որ փառօքն և պարծանօքն է՝ վայելեսցեն ի բարի տուողէն։*

Այնպէս է իմանալ վասն հրեշտակաց և դիւաց, և արդարոց և մեղաւորաց. զի նախ ընտրութիւն լինի ի մէջ քա-

---

* Ծննդ. ԻԵ.

** Մատթ. ԺԱ, 12.

*** Հռ. Զ, 14.

ջացն և վատացն, և ապա ըստ իւրաքանչիւր արժանաւորութեան զհատուցումնն առնէ ըստ արդար դատաւորութեանն։ Զի քաջացն որպէս պարտս տայ զպատիւն, և վատացն [15] ողորմութեամբ՝ որպէս շնորհս և պարգևս ինչ։ Զի զօրէնսն իբրև զբոյս եդ ի փորձ, * և նովաւ առնէ զընտրութիւն ի վեր և ի խոնարհ, [16] և ըստ արժանեաց տայ ըզպատիժս և զպատիւ արդարոց և մեղաւորաց։ Զի հոգևոր օրէնքն կենդանարար են. զարդարասէրսն առաւելուն ի բարի գործս. և զպղերգսն զարթուցանեն յառաքինութիւն սպառնալեօք պատուհասիցն, և փառօքն ցանկացողս առնէ։ Ուստի հանդէսք լաւութեան կենացն նորոգին, և պըսակեալ քաջութեամբ ըստ յաջողելոյն Աստուծոյ յաւետիս արդարոցն մտանիցեն։

Արդարքն են [17] որ զարժանն և զիրաւն առնեն, և ժառանգաւոր լինին վերին կոչմանն՝ որ ի կեանսն տանի. զի ըստ միոյ միոյ առաքինութեան՝ և պսակքն փառաց և գովութեան յօրինին ի տեառնէ։ Զի բազմապատիկ են ջանք [18] ճգնաւորացն, որք զբազմաշահ օգուտսն ժողովեն ի խրատուէ կենարար օրինացն Քրիստոսի. զի ամենայն ճշմարտութեամբ եղիցին որդիք լուսոյ հօրն երկնաւորի, և ժառանգակից Քրիստոսի։ Որ իւր մտերիմ վաստակօքն էառ զմեծութիւն անբաւ բարութեանցն, և պատուոյն և փառացն և արքայութեանն երկնից եղև ժառանգաւոր։ [19] Զի եկամուտ եղև անհնազանդութիւն, ի կամաց և ոչ ի հարկէ, հանդերձ ամենայն դժնդակութեամբ. և փշալից արար զամենայն անդս մտաց և անդամոցն՝ և զմտաւորս և զբանաւորս [20] բուսովք չարութեանն և սնոտի խաբէութեամբ բանսարկուին։ [21] Վասն այնորիկ ի մշակութեան կացոյց զորդիսն ստուգութեան. զի բազում ճգնաւորական

* Իմաստ. Գ, 6։

հանդիսիւք քաղիցեն զորամն չարութեանն ի մտաց և ի մարմնոյ զբոյսս վնասակարս՝ զխաբէութիւն, զստութիւն, զհպարտութիւն, զագահութիւն և զամենայն չար ցանկութիւնս հանդերձ ամենայն վնասակարօք երևելեօք և աներևութիւք առ չարն հակամիտութիւն:

Այլ մարտ պատերազմի քաջացն ոչ միադիմի, այլ բազմադիմի է: Նախ զի մի հաղորդեսցի բանից խաբէիցն՝ ողոքանաց և պատրանաց, որ զմիտս և զանդամս շարժէ ի վնասակար և յաղտեղի ցանկութիւնս: Երկրորդ զի մի անկցի ի բուռն ամբարտաւանութեան, հպարտութեան և սնափառութեան. որ փակէ զմարմին և զհոգին ի ներքոյ կորստեան անհնարին չարեօք: Երրորդ զխաբէութեանն [22] և զստութեանն և զայլանդակութեան շարժմունս շիջուցանիցէ. ընդ նմին և զբարկութիւն և զանզգամութիւն և զստահակութիւն սանձեսցէ խոնարհ սրտիւ: Չորրորդ որ ըզտեսիլ շռայլութեան և որկորստութեան զհետ շրջի շեղջակուտելս ցանկութեան գիջութեան, աստուածային ցանկութեամբն և [23] պարկեշտութեամբ ազատանայ. ընդ նմին և զամենայն ցոփութիւնս և զգռոզութիւնս յանձանց թօթափել, [24] և զամենայն անօգուտս որ ալէկոծեն զմիտս և զգայութիւնս՝ յանձանց ի բաց ընկենուլ [25] բարի յուսովն: Հինգերորդ որ ոչ վրիպէ և ոչ մոլորի [26] և ոչ գայթակղի յերախտաւոր բարերար տեսչութենէն. որ հեռացուցանէ յերանութենէն, և ի մթագին ափշութիւն ընկենու, ստերխւրեալ ի ճանապարհացն արդարութեան՝ որ տանի յօթևանս հանգստեան: Վեցերորդն երդմնահարութեան և յափշտակութեան և զրկանաց. որ արկանէ յամօթ և ի տոյժս և ի տուգանս սպառնալեօք. և առանց պատասխանւոյ է դատաստան՝ [27] եթէ ոչ զգաստասցի ի սոցանէ: Եօթներորդ որ զարամտութիւն բարկութեամբ շարժէ և խռովեալ պղտորէ զմերձաւորս, ի [28] փորձանս խորհրդոց և բանից և գոր-

ծոց. եթէ ոչ յաղթահարեսցի հեզութեամբն, արկանէ ի պարտիս [29] յաւիտենից պատժոցն։ Ութերորդ. ոխութիւն և նախանձ և ատելութիւն. որ թէ ոչ ազատեսցի յայսոցիկ չարեաց, մահ անձին և այլոց սատանայ. զի քինայ և զչարի ի խորհուրդս սիրեղաւորս, [30] և զթոյնս դառնութեան հեղու զորս [31] ատեն։ Իններորդ. որ զանհաւատութեան [32] և զծուլութեան արմատս խլէ, [33] որ մթերք են ամենայն չարեաց և պատճառք անզեղջ կորստեան և դրունք մահու հոգւոյ և մարմնոյ։ Տասներորդ. որ անխտիր է յամբարշտութիւն և ի գարշելի ախտս և յամենայն անօրէնութիւնս. որ եթէ ոչ զգաստասցի յահ և յերկիւղ տեառն զզջմամբ, կորիցէ [34] զյաւիտենական զկորուստն։

Այս [35] են բոյսք չարութեան, զոր ժիր մշակքն քաղահան առնեն, և զբարի բոյսն սնուցանեն ոռոգմամբ շնորհալից արտասուօք [36] և առաքինասէր վարուք։ Եւ յայսոսիկ է մարտն և յաղթութիւն քաջացն և առաքինեացն որ վկայք են ճշմարտութեանն, և կենդանի մարտիրոսք սիրեցեալք ի տեառնէ։ Զի սպանին զթշնամիս արդարութեան, և ի նորոգումն կենացն՝ որ ի Քրիստոս որոշեալ [37] եղեն՝ կեցին, և յոյս նոցա հաստատեալ կայ ընդ Քրիստոսի։ Ճշմարտեալ հաւատովք և հանդիսիւք առաքինութեամբն ի լաւագոյնսն միշտ կալ զօրութեամբ հօրն ամենակալի և օգնութեամբ Որդւոյն բարերարի և շնորհօք ամենասուրբ Հոգւոյն [38] միոյ աստուածութեանն որ ապաւէն է ամենայն [39] յուսացելոց իւրոց։

Առաջին [40] և նախ քան զամենեսին ճշմարիտ հաւատոցն հաստատութիւն՝ որ ի Հայր և յՈրդի և ի Հոգին սուրբ սուրբ սիրով և յուսով։ Զի այսու վկայեցան առաջին [41] սուրբքն. իմացան և ծանեան զառ ի նմանէ յօրինուածս ամենայն արարածոց, և զնախախնամութիւն սուրբ սիրոյն և զվստահութիւն յուսոյն որ առ Աստուած, [42] որ ոչ երևի։

Երկրորդ լինել ճշմարիտ բանին քարոզութիւն [43] առ գիտըս կրթուելոցն և առ պահպանութիւն գտելոցն։ Որով կարգին ընդ սուրբ հրեշտակս՝ որ առաքին ի սպասաւորութիւն որ ժառանգելոց են զփրկութիւն և զերանութիւն ի յայս կենացն յաւիտենից։

Երրորդ որ յստակ խորհրդովք աղբիւրանան ի բարեգործութիւնս՝ յորդորումն առ երախտիս ամենայն հեռաւորաց և մերձաւորաց. ոռոգանել զանդս մտաց և անդամոց հոգևոր շահիւք և մարմնաւոր պիտոյիւք. և այնպէս բազմացուցանել զպտուղս արդարութեան արմատացն ի վայելումն անմահ կենացն։

Չորրորդ որ զհաւանութեան և զհնազանդութեան և ըզմիաբանութեան զհանգամանս ունի յօդիւ հոգւոյն սրբոյ, ի միասին ժողովելով ի խաղաղութիւն և ի փառաբանութիւն Աստուծոյ, և զմիմեանս օգտեցուցանել աննախանձ օգնականութեամբ, և յերանելի կեանսն յուղարկել։

Հինգերորդ՝ որ անարատ և ամբիծ յորդեռանդ հոգևոր սիրովն խնամէ զամենեսեան ըստ իւրաքանչիւր պիտոյից. ձեռնտու լինել զրկելոց և վշտացելոց, և եթէ այլ ինչ աղէտք իցեն որ պէտս ունին օգնականութեան հոգւոյ և կամ մարմնոյ. և այսպիսի երախտեօք մտանել ի ժառանգութիւն կենացն Քրիստոսի։

Վեցերորդ որ լինին մատակարարք ճշմարտութեան աւանդիցն՝ որ հաւատացաւ նոցա յԱստուծոյ՝ հոգեկանաց և մարմնականաց. տալ ի ժամու զհոգևորական զօգուտս և ըզմարմնական [44] զպէտս, և առնուլ զառհաւատչեայ երանութեանցն զպարգևս յարքայութեանն արդարոց։

Եօթներորդ սրբութիւն և զգուշութիւն և պահպանութիւն ամենայն առաքինութեանցն. արթուն և զուարթուն կալ յամենայն գաղտաձիգ նետս չարին, որով սպան զանմեղս ի մեղս։ Զի յամենայնի ամրացեալք և յաղթեալք նո-

րա խորամանգին՝ [45] առցուք զպսակն անեղծութեան։

Ութերորդ. լինել խոնարհ սրտիւ և հեզ բարուք և խաղաղարար առ ամենեսին՝ առ հեռաւորս և մերձաւորս, նմանել Քրիստոսի հեզոյն և խոնարհին և խաղաղարարին. զի հայեցեալք յառաջնորդն հաւատոյ՝* զհետ երթիցուք, [46] և գտցուք զանտի զհանգիստն ի խոնարհ և ի հեզ և ի խաղաղարար սիրոյն։

Իններորդ. որ պարկեշտութեամբ և համեստութեամբ բարեմտեալ ըստ ամենայնի առաջնորդական խրատուն փրկութեան և կենդանարար, հասանել ի դուռն կենաց և մտանել ի յարկսն յաւիտենից ի հանգիստն՝ որ պատրաստեալ է ի փրկչէն մերմէ ըստ իւրաքանչիւր վարձուցն։ [47]

Տասներորդ. Քրիստոսի փրկական պատարագին լինել խորհրդածու և խորհրդակից ըստ արժանաւորութեան մաքրման հաղորդելով. աղօթանուէր պաղատանօք և շնորհալից արտասուօք և ջերմեռանդ հոգւով եռացմամբ սուրբ սիրոյն առլցեալ ի Քրիստոս, ընդ երկնայինսն մերձենալ առ Աստուած և անտի լուսաւորել զհոգի և զմարմին, և բուռն հարկանել զկենացն յաւիտենից։ Եւ զերկնայինսն միշտ խոկասցի, [48] և զերկրաւորս արհամարհեսցէ, խորհրդակից և գործակից ունելով միշտ զամենազօր տէրութիւնն. և մըտերիմ կամօք զանձն անշարժ ունել ի ճշմարիտ վարս և յուղիղ հաւատս. երախտաւոր սուրբ սիրովն յառաջանալ ի բարիսն, և զայլս յորդորել ի խոստացեալ բարիսն [49] և ի կեանսն։

Այս են քաջացն և առաքինեացն հանդէսք, որ ի վերին կեանսն [50] տանի. և լսեն յամենեցունց տեառնէն, ով ծառայք բարեգործք և հաւատարիմք, որով ի սակաւուդ հաւատարիմ եղեայք յերկրի աստ, ի վերայ բազմաց կացուցից

* Եբր. ԺԲ, 2. Գործք. Գ, 15.

զձեզ ի մշտնջենաւոր կեանսն. եկայք մտէք յուրախութիւն տեառն ձերոյ յանվախճան երանութիւնսն՝[51] որ պատրաստեցաւ ձեզ: *

Այսպիսի խրատու լինել աշակերտ և խորհրդակից, և մերկանալ զբոսանս աշխարհիս և զհոգս սնոտիս, և զգենուլ զհոգևոր ազատութեանն լուսաւոր զգեստն՝ որ յառաքինութենէ կազմի անհամեմատ լուսովն: Եւ հանապազօր քննող լինել խորհրդոց և բանից և գործոց. եթէ ստուգանեալ իցէ, ուղղեսցի լաւագոյն խրատու աստուածային գրոց ի ձեռն զղջման. «Զի զոր ինչ ասէք ի սիրտս ձեր, յանկողինս ձեր զղջացարուք[52]. և մատուցէք պատարագս արդարութեան և յուսացարուք ի տէր» որ արդարացուցանէ:[53] Զի փառաւորք են ի վարդապետաց որք առնեն զայս և ուսուցանեն ի նոյն ինքն ի Հայր և յՈրդի և ի Հոգին սուրբ. որում փառք այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

* Մատթ. ԻԵ, 34.

ԵՐԱՆԵԼՈՅՆ ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ՀԱՅՈՑ ԼՈՒՍԱՒՈՐՉԻՆ

ՅՈՐԴՈՐՈՒՄՆ ԱՊԱՇԽԱՐՈՒԹԵԱՆ ԽՈՍՏՈՎԱՆԵԱԼ [1]

ԺԹ

Մեծ են յանդանք հրամանաց տեառն և անբաւ շնորհք բարերարին Աստուծոյ. զի զորս յառաջն ճանաչէր, զնոսին և կոչեաց ի յոյս կենացն անվախճանից, և արդարացոյց և փառաւորս արար։ * Որ հաւատով և երկիւղիւ պահեցին զպատուիրանս նորա, և հնազանդեցան ընդ ամենախնամ սուրբ սիրոյ նորա, և ընկալան զբանն կենաց յանձինս իւրեանց, և եղեն պտղաբերք և աճեցունք առաքինութեան վաստակոցն, որոց վարձքն կան և մնան ի հանդերձեալ կեանսն։ Իսկ ծուլիցն և անհնազանդիցն որք արհամարհեցին զբանն ճշմարտութեան, և խափանեցին զպտուղս արդարութեան, և ընկալան [2] զչարաչար սերմանս ի թշնամւոյն՝ և եղեն մեղաւորք ճշմարտութեան աւանդից և խընամակալ սիրոյն՝ մոլորեալք յուղիղ ճանապարհացն, որոց կատարածն [3] ի կորստեան վիհս ընկենու։

Սակայն բարերարին Աստուծոյ բարերար խնամքն ոչ անտես առնէ որք դառնան առ նա. բանայ զդրունս ողորմութեան շնորհացն, և ընդունի գթութեամբ երախտաւոր սուրբ սիրովն, և յանձանձէ զապաւինեալսն ի նորա գըթութիւնսն։ Եւ ի ձեռն ճշմարիտ խոստովանութեան, և խոնարհեալ և բեկեալ սրտիւն [4] ի զղջումն սգաւորի՝ գթայ ի նա և ողորմի և այցելու լինի փրկիչն։ Զի զծածկեալ մաղձըն դառնութեան ի բաց փախեաց. և եցոյց՝ [5] եթէ զմեղս

---

* Հռ. Ը, 29։

ատեցի և անարգեցի, և զօրէնս քո սիրեցի՝ ** զառողջութեան և զսրբութեան և զարդարութեան: Եւ ըստունկանութեան [6] ցաւուցն ի մարդասէր բժշկէն զառողջութեան դեղս ընկալցի՝ զարդարութեանն վարս, որ ընդդէմ մեղացն և դժնդակ ցաւոցն զոր ունէր· զի այլ մի՛ ևս անկանիցի ի նոյն, և այլ ոչ ևս գտցէ զմարդասէր բժիշկն:

Զի կոչէ բանն [7] տեառն զծանրաբեռնեալսն խոստովանութեամբ յապաշխարութիւն· զխաւարեալսն մեղօք ի լոյս արդարութեան· զմոլորեալսն ի գիտութիւն ճշմարտութեան, և զվրիպեալսն ի ճանապարհացն արդարութեան ածել յուղղութիւն· և զմահաբեր վարս ի կեանս վերստին նորոգել և խոստովանութեամբ լուծանել զամենայն խարդախութիւնս սատանայի: Զի զամենայն մարդ կամի զի կեցցեն, ասէ Առաքեալ, * և ի գիտութիւն ճշմարտութեան հասանել [8] ամենագիտ սիրոյն տեսչութեամբք:

Զի խոստովանութիւն, ասէ մարգարէն, մեծ վայելչութիւն է առաջի Աստուծոյ և քահանայից նորա· զի «Ասացի եթէ պատմեցից յինէն զմեղս իմ, և դու թողցես զամենայն ամբարշտութիւնս մեղաց իմոց»: ** Զի զվէրսն բանայ [9] և ըզցաւսն յայտնէ, և զդեղ բժշկութեանն ի վերայ ածէ զըղջմամբ զապաշխարութիւնն եռանդմամբ հոգւոյն ի հանապազորդ արտասուալից աղօթսն անդադար ի տուէ և ի գիշերի· և ողորմ կերպարանս ստանալ ճնշելով զմարմինն պահովք, զի զԱստուած խոնարհեցուսցէ ի գութ բազմախնամ շնորհօք առ ի թողութիւն մեղաց: Զի ապաշխարութիւն ոչ միով իւիք կարգի, [10] այլ բազում իրօք շինի· և ի մի համակ արդարութեան կանգնի անկեալն և աւարեալն:

Զի նախ առաջին զղջանալ և խոստովան լինել զյանցա-

---

* Սաղմ. ՃԺԹ, 113,
** Բ. Պետր. Գ, 9: Ա. Տիմ. Բ, 4.
*** Սաղմ. ԼԵ, 6,

նըս՝ և արտասուաց ընդունարան առնել զանձն յապաշխարութեան ժամանակս անդադար աղօթիւք և տքնութեամբ [11] և միշտ պահովք՝ և մեծաւ ապաշաւանօք սգալ զյանցանս գործեցեալս հանապազ։ Երկրորդ զի ատեցէ զմեղս և զգործակիցսն մեղաց ըստ ամենայն վնասուցն․ և կշտամբել զմիտս և զզգայութիւնս որք ի չարն հակամիտեցին՝ և ոչ պահեցին զհոգևոր օրէնսն՝ որ նոցա աւանդեցաւ յարարչէն։ Երրորդ սիրել զարդարս և զառաքինիս՝ և գործակիցս լինել արասցէ [12] զնոսա աղօթիւք առ Աստուած՝ և յամենայն գործս բարութեան յորդորիչս ի ճշմարտութեան աւանդս կարգաց։ Չորրորդ զի ի յանցաւորաց անտի խորշեսցէ [13] մտօք և բանիւ և ամօթով և տեսութեամբ պատկառ․ լաւ համարել զնեղութիւն կրել ընդ արդարս՝ քան զհանգիստն ընդ անիրաւս։ Հինգերորդ յահ և երկիւղ տեառն կրթել՝ և չթողուլ ի մտաց զօր վախճանին՝ այլ և զպատիժս մեղաւորաց․ և մեռուցանել զանդամսն կարեօքն և ցանկութեամբքն։ * Վեցերորդ ի տուէ և ի գիշերի հոգալ [14] վասն փրկութեան անձին եթէ ո՛րպէս կարասցէ լուծանել զմեղս՝ և ապրել ի բարկութենէն որ գալոցն է ի վերայ անապաշխարողացն։ [15] Եօթներորդ զի մի՛ մոռասցի զբեկումն անձին իւրոյ և պղերգասցի ի բարեպաշտութեան ճգանցն և դարձցի ի նոյն վնաս՝ և վերստին ոչ կարասցէ բժշկել։ Ութերորդ զի առողջացեալ զգաստացեալ սրբեալ՝ իմասցի զներքին մարդն և զարտաքին և զյիշատակս [16] խոստացեալ աւետեացն ստոյգ ապաշխարողացն։ Իններորդ զամենայն հրամայեալսն արարեալ ըստ հոգևոր օրինացն և աւետարանին Քրիստոսի՝ և ակն ունել վերստին նորոգման ի ձեռն քաւութեան պատարագին։ Տասներորդ առաւելեալ յամենայն բարեգործութիւնս երևելեօք և աներևու-

* Գաղ. Ե. 24։

թիւք, և զայլս մեղացն ջնջել զհոգւոյ և զմարմնոյ, և յաղթող երևել ի հանդիսի ապաշխարութեանն՝ կարասցէ համարձակել ի մեղսաքաւիչ խորհուրդն կենդանարար,[17] և լինել հաղորդակից[18] և մարմնակից և կցորդս անճառելեացն։ Եւ յայսմ հետէ զվերինն խորհել, ուր Քրիստոս նստի և սուրբք ընդ նմա առհաւատչեայ երանութեամբն։[19]

Եւ ստոյգ խոստովանողք և ապաշխարողք ազատեալք փրկաւէտ մարմնով և արեամբն Քրիստոսի· զի նա է յոյս մեր և առիթ քաւութեան, և նովաւ լինի ազատութիւն և մուտ յուրախութիւն և ի ժառանգութիւն արդարոցն երախտեօք Քրիստոսի սուրբ սիրոյն, որ արդարացուցանէ զմեղաւորս՝ որ ապաշխարեսցեն։[20] Զի որպէս սուր որ հատանէ զմարմինն և վտանգէ զանձն, և կարօտանայ բժշկի որ շիջուցանէ[21] զվտանգսն դեղովք ոմամբք յառողջութիւն, այսպէս դեղովք ապաշխարութեան զհարուածս ցանկութեան և զաղտեղի յիշատակս ջերմեռանդ արտասուօք լուանալ զվէրսն[22] և բժշկել անարատ սրբութեամբ։[23] Զի արտասուաց դրունք են վիշտք նեղութեանց և ախտից ինչ ցաւք, վնասուց կսկիծք, հոգւոց տագնապք, վրէպք օգտից, պատահարք թշուառութեանց, վտանգք ի բռնաւորաց, աղքատութիւն յանկարծահաս, կորստեան[24] սիրելեաց, ցաւք պէսպէս դժնդակաց անըմբերելի, և որ այլ ինչ սոցին նըմանեալ։ Իսկ հոգւոյն շարժմունք յայսոյն չարութենէ յափըշտակեալ յանխտիր ցանկութիւնս՝ վշտացուցանէ զմիտս ի դժնդակ խորհուրդս ապախտաւորս, որ ոչ ունի զկայանս արդարութեան։

Վասն այսորիկ պիտոյ է պաղատանք[25] արտասուալից առ փրկիչն, զի զերծուսցէ յայնքան վնասուց։ Եւ իմանալեօք ընդ վրէժխնդրութիւն նոցա նայել, և ի վայր կործանել զինուք առաքինութեան զնոսա, և զօրավիգ ունել զապաւէն կենացն մերոց զՔրիստոս Յիսուս· և աստէն զայցելու-

թիւնն առնուլ բարեացն ցանկութեամբք, գութ առ ընտանիս հաւատոց, անձուկ հեռաւորաց սիրողաց Աստուծոյ, ծարաւ մտերմութեան գիտից հոգևորաց, փափաքումն առ սուրբս, քարոզ խաղաղութեան, խոկումն [26] խոնարհութեան, քաղցրալից բարբառք խրատուց՝ որ զկարծրացեալ միտս շարժէ ի յորդորումն առաքինութեան: Զամենեսեան օգտեցուցանել առ խնամս սիրոյ փրկութեան, և առ օգուտըս ի լրումն հոգևորացն, և ի շահս բարեաց վայելից, և ի համբերութիւն ի նեղութեան՝ վայելել ի պարգևս շնորհաց, որ տայ ի յատակ աղբերէն կենաց: Վասն որոյ աղօթք և խնդրուածք [27] մտերմութեամբ ի բոլոր սրտէ՝ տանի ի նաւահանգիստն շնորհօք:

Եւ ճնշեալ զմիտսն ի զղջումն արտասուաց ի յիշատակս [28] աւետեաց խնամոլից պաղատանօք եռանդնասէր խանդաղատանօք հեղուլ զարտասուս շնորհալիցս առ ի մաքրութիւն մտաց և մարմնոց, որ զանմաքրութիւն ստացեալ ունէին [30] զչար և զաղտեղի ցանկութիւնս: Զի արտասուք ըզմեղացն հարուածոց դառնութիւն սրբեն և ողջացուցանեն, և զխոտանն ի բաց ընկենուն ի մտաց և ի զգայութեանց. և լինի ընդ հովանեաւ նախախնամական սիրոյ փրկչին, և առնու յուսով զմխիթարութիւն: Արտասուք շարժեն զմիտըս առ Աստուած, և զարթուցանեն յափշութենէ [31] մեղացն որպէս ի քնոյ, և վառեն ի զգուշութիւն զգաստութեան [32] շահաւորն [33] օգտից սիրով: Արտասուք արբուցանեն զհոգևոր ըմպելին ի խնամս սուրբ սիրոյն ի գութ յիշատակաց բարերարին տեսչութեան քաղցր կամացն ի շնորհալից աղբերէն բղխեալ յաղատութիւն և ի ժառանգութիւն կենդանարար յուսոյն յաւիտենից:

Այսչափ շահք օգտից ի զղջմանէ արտասուաց. որ շարժեն զբարս հոսանուտս ի գիտս փրկութեան և ի պահպանութիւն Աստուծոյ կամացն, և զմիտս ամփոփեն ի հաճոյս

Աստուծոյ։ Եւ որքան ի յայտնանէ շահք [54] բարեաց, այնքան առաւել վնասք ի ծուլութենէ և յարհամարհանաց զարտօսըր՝ ի խորութենէ սրտի յառաջագայի, և ի պղերգութենէ արգելեալք գժնդակացն լինի մուտք ի չարին ազդմանէ. և շարժեն զմիտս և զանդամս ի յանխտիր չարիս. և ելք զղջման և արտասուաց ի ծուլութենէ և ի խստացեալ ամբարտաւան սրտէ, որ քամահէ զգեղջ շնորհացն և ոչ հոգայ վասն այնր որ զրկեցաւն։ Եւ ընդունի փոխանակ բարեացն զչար, զարհամարհութիւն, զամբարտաւանութիւն, զապիրատութիւն, զյամառութիւն, զամբարշտութիւն, զանափառութիւն, զագահութիւն, զորկորստութիւն, զցանկութիւն, և որ այլ ևս են մուտք չարին։ Եւ որ յայտնի ըմբռնեալ է, դժուարաւ բժշկելի է։

Բայց ոչ անյոյս առնէ մարդասիրութեան բանն որ զղջանան և գան ի հնազանդութիւն ահին Աստուծոյ, և ընդդէմ չափեն մեղացն զուղղութիւնն, անիրաւութեանն զիրաւունս, անսրբութեանն զսրբութիւն, ամբարտաւանութեանն զխոնարհութիւնն, բարկութեանն զհեզութիւն, որովայնամոլութեանն զպարկեշտութիւն, հեղգութեանն ըզպընդութիւն, ստութեանն զճշմարտութիւն միշտ. անհնազանդութեանն զհնազանդութիւն, ագահութեանն զշափաւորութիւն, կեղծաւորութեանն զպարզամտութիւն, երդմնահարութեանն զչերդնուլն, մախանացն զբարերարութիւն, ոխութեանն [55] զանոխակալութիւն, խստութեանն զքաղցրութիւն, ատելութեանն զսուրբ սէրն միշտ. անզղջութեանն զզղջումն արտասուաց, անխոստովանութեանն անխղճի ըզխոստովանութիւն խղճի մեղացն, [56] անյուսութեանն զյոյսն ուղիղ, թերահաւատութեանն զուղեղ հաւատս յանձին հաստատել և այլոց քարոզել զճշմարտութիւնն։

Այս է ստոյգ աւանդիցն դէմք ապաշխարութեան. ամենայն որ ինչ հակառակ է մեղացն՝ առնել զարգարութիւնն

ամենայն որ երևելին և ոչն երևելին ի խորհուրդս մտերիմս և ի յիշատակս աւետեացն ստոյգ ապաշխարողացն, և դարձեալ ի սպառնալեաց անապաշխարողացն յամենեցունց տեառնէն։ Ցայսոսիկ [37] զգուշանալ և ի պատրաստի ունել զհաճոյսն Աստուծոյ ահին տեառն, յիշատակօք անվրէպ գիտութեանն Աստուծոյ համարս առնելոյ արդար դատաւորին յաւուրն դատաստանի, յորում ոչ ինչ ծածկի ի խորհրդոց և ի բանից և ի գործոց։

Զի ընտրութիւնք են առաքինեաց և պղերգացն, հաւատացելոց և անհաւատից, և ըստ արժանեացն հատուցմունք։ Պատիւք և մեծարանք և երանութիւնք յաղթողացն են՝ որք մարտեան ընդդէմ մեղացն և հակառակորդին, և յաղթեցին և պսակեալ փառաւորին [58]․ և դարձեալ որք ստոյգ ապաշխարեցին զվնասս իւրեանց։ Իսկ ահաւոր սպառնալիք տանջանացն պաշարէ զանիրաւսն և զամբարիշտսն ի տոչորումն պատժոց, որ ոչ անկան [59] յապաշխարութիւն։ Եւ զխոնարհեալսն և զնուաճեալսն ընդ կարգօք ապաշխարութեանն ընդունի յօթևանս կենացն ըստ արժանաւորութեան մաքրմանն ըստ բազում ողորմութեանն իւրոյ։ Զի նեղեալն և վտանգեալն արտասուօք և բարի շարժմամբք յողորմութիւն դարձուցանէ [40] յաղագս սխալանաց ինչ այսպէս զմարդասէր տէրն։ [41]

Եւ որպէս տղայքն որ ոչ գիտեն բառիւք զպէտս ի մարցըն խնամոցն առնուլ, այլ արտասուօք զպիտոյսն խնդրեն և առնուն ի խնամոց սիրոյն, զի ոչ դադարեն ի լալոյ մինչև ամենայն խնամք ի մարցն կատարի՝ ապա դադարէ և զուարճանայ և հանգչի, այսպէս պարտ է մեզ լինել առ բարեգութ տէրն, որ խնամէ զմեզ յաներևոյթս արարչական սիրոյն․ որ նստի յանարուեստ աթոռս, և բարերարութեամբըն իւրով խնամէ զարարածս․ և ի ձեռն նախահարցն ծանոյց զաստուածգիտութիւն, որ ի ձեռն մարգարէից եցոյց

զապաշխարութեան հանգամանս՝ որք դառնան։ Իսկ ի գալըստեանն իւրում եբաց զդուռն ողորմութեան և ասէ. ոչ եկի կոչել զարդարս, այլ զմեղաւորս յապաշխարութիւն խոստովանութեամբ արարչական խնամակալ սիրովն։[42] Զի փութացեալք ի կոչումն աւետեացն՝ առցուք զպարգևս ի շնորհողէն ապաշխարութեամբն զքաւութիւն. որ յաներևոյթն զհոգին բժշկէ, և յերևելիս զզգայարանս։

Զի նախ յաւազանէն է թողութիւն հաւատացելոց յամենասուրբ Երրորդութիւնն ճշմարիտ խոստովանութեամբ. Զի ասէ[43] ցաշակերտսն. յերթեալդ[44] մկրտեցէք, ասէ, ըզհաւատացեալս յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. և ուսուցէք պահել զամենայն պատուիրեալսն ի Քրիստոսէ։* Զի որք ի Քրիստոս մկրտեցան, զՔրիստոս զգեցան, և եղեն որդիք լուսոյ և ժառանգք արքայութեանն վերստին ծննդեամբ։** Զի շնորհօք լինին որդիք տուընջեան,[45] ի գիշերային ծննդենէն ազատեալք յիշխանութենէ խաւարի, և լուսաւոր վարուք կեալ յերկրիս օգնականութեամբ բարերարին։ Եւ ըստ արուեստից նորին շնորհաց զհեռաւորս մերձաւորս առնելով և զօտարացեալսն ընտանեցուցանել ճշմարտեալ[46] հաւատով և անբիծ սիրով։ Եւ զըմբռնեալսն ի սատանայէ ի մեղս և վասն մեղացն ի մահ՝ արդարացուցանէ և կենագործէ և հրաւիրէ յիւր արքայութիւնն և ի փառսն զոր պատրաստեաց սիրողաց։[47]

Դարձեալ և յաղագս մեղուցելոց և զպարգևս ապաշխարութեանն եցոյց և յայտնի արար առաջնովքն։ Որպէս ըզԴաւթայ լսեմք մեղուցեալ, և խոստովանեալ դարձեալ և ապաշխարեալ. որ լայր զամենայն գիշերն և զըմպելին արտասուօք խառնէր վասն բարկութեանն տեառն. յորոյ ա-

---

* Մատթ. ԻԸ, 20։

** Գաղ. Գ. 27։

չացն վտակք արտասուաց հոսէին առ ի չպահելն զպատուիրանն տեառն. որ զցանկացող աչսն մաշէր յարտասուս և սրբէր ի մեղաց: Եւ զՊետրոս ի նորոյս է իմանալ, որ ուրացաւ և ոչ յիշեաց զյառաջագոյն զասացեալն [48] տեառն. մինչև հայելովն յուշ գայ [49] ի հաւուն ձայնն, և ելեալ, ասէ, արտաքս՝ ելաց դառնապէս: * Եւ յաղագս ջերմ արտասուացն եգիտ զթողութիւն. և առաքելական շնորհքն անդէն մնացին, ** որպէս Դաւիթ մարգարէականն: Թողում ասել և զայլ եւս զհնոյն և զնորոցս մեղուցեալս և ապաշխարեալս որպէս ասեն աստուածային գիրք, որք ցուցանեն զօրինակս զստոյգ ապաշխարութեան:

Եւ այսպէս ոչ փակի դուռն կենաց ապաշխարութեան մինչև ի վախճան աշխարհի: Զի զհանապազորդ սխալանսն հանապազորդ արտասուօք աւազանին լուանալ և սրբել. զի [50] հանապազօր մեղանչեմք՝ որ խորհրդով, որ բանիւ, որ լսելով, որ տեսանելով, որ շարժմամբ իւիք այսուքիկ, [51] հանապազորդ աղօթք և լուացք արտասուաց մի պակասեսցեն:

Զի կատակուն [52] են մեղք, այսինքն ընդ կանոնօք, այնոցիկ ժամանակք որոշին և զատանին [53] յեկեղեցւոյ և ի ժողովրդենէ և ի սեղանոյ. զի ըստ մեծի վնասուցն և մեծ ջանք և աշխատութիւնք պիտոյանան: Եւ որոց նուազ ունին սխալանսն, և բժշկութիւնս արտասուօք սրբել: Իսկ որ ի խորութեան սրտին է աղտ ապականեալ անդամօք, անդ վտակք արտասուաց և հուր և եռացումն հոգւոյ պիտոյանան որ սրբէ և հալէ և ի բաց մերժէ [54]: Եւ որ փոքր ինչ սխալանս ունի ակամայ վրիպեալ, զղջանալ և յոգւոց հանել և արտասուօք անդէն իսկ սրբել:

Այլ որ սաստիկ ունի զվէրս մեղաց, և կամաւ ըմբռ-

---

* Մատթ. ԻԶ. 75,

** Յով. ԻԱ. 15,

նեալ, որ կանոնաւ ունի զանուն և զկարգ որ ի տեառնէ, ունի զհանգամանս սպառնալեաց. բաղում ջանք և ջերմեռանդ արտասուօք և բեկումն սրտի և որոշումն ժամանակաց ըստ յանցանացն ի ներքս բերիցէ առ ի լուծանել ըզդժնդակ ձմեռն խստութեան մեղացն: Զի գարունն հոգեւոր երևեսցի ի շնչել հարաւոյ ջերմութեան հոգւոյն. և ի վերուստ սաստիկ անձրևով զհոսանս արտասուաց. որ երկիր զբոյսս և զծաղիկս բացայայտէ, և տունկք զպտղաբերս և զպտուղս առ ի վայելս թագաւորաց և ռամկաց, որովք զուարճանան: Այնպէս և որ ջերմութեամբ հոգւոյն զհոսանս արտասուացն հեղու և լուծանէ զկապանս ձմեռնային մեղացն, արձակէն բոյսք առաքինութեանն և պտուղք արդարութեան տնկոյն, որով ուրախանան երկնաւորք և երկրաւորք ի փառս Աստուծոյ:

Զի այսպիսի միտս և բարս պարտ է ստանալ ապաշխարողաց, զի ազատեսցին ի պարտեաց հարուածոց գեհեննին անշէջ հրոյն և անմահ որդանց: Եւ ճշմարտեալ ստոյգ ապաշխարութեամբ արտասուաց աւազանաւն՝ ժառանգաւորք արքայութեանն եղեցին, զգեցեալ զպատմուճան սրբութեան լուսոյն ճառագայթեալ առաքինութեանն հանդիսիւք, պըսակեալ և վայելեալ [55] յանվախճան երանութիւնսն ընդ սուրբս:

Զի ապաշխարութիւն է ստգտանելն [55] զինքն և հրաժարել ի վնասակարացն և ի չար ցանկութեանցն: Եւ փոխանակ միոյ միոյ չարեացն զարդարութիւնն ընդդէմ դնել, զի խափանեսցէ զմեղսն, և զարդարութիւնսն աճեցուսցէ սուրբ սիրով և արտասուալից աղօթիւք, և պահովք ցամաքեցուսցէ զպղտորեալ զանժոյժ բղխումն գիջութեան՝ որ ապականութիւն է յանդամն: Զի ջուրք աղբերաց և սըրսկմունք անձրևաց զերևելի հուր շիջուցանեն. իսկ առ Աստուած սէրն և ջերմեռանդ արտասուք զհուր ցանկու-

թեան [56] շիջուցանեն, և խափանեն զկամս մարմնոյ, [58] զինքնագործութեան շօշափելեօք զաղտեղի շարժմանցն ըղհոսմունս. և այլ մի ևս մերձենալ ի նոյն գարշութիւնս ախտից, այլ մաքուր մտօք զմաքրութիւն ստանալ։ Զի մի ըմպառնացեալ [59] պատուհասն անսրբութեան ի վերայ հասանիցէ յաւուր յորում ոչ գիտիցէ, և ի ժամու յորում ոչ կարծիցէ, և տայցէ վրէժս ըստ վնասուց։ [60]

Այլ սիրել զսրբութիւն ի տէր որ ի սուրբս բնակէ։ Եւ զանսրբոցն ասէ. «Որդն նոցա ոչ մեռանի և հուրն ոչ շիջանի. և լինիցի [61] տեսիլ ամենայն մսեղեաց»։* Եւ զամենայն արկուածս [62] մեղաց ի մտաց և ի մարմնոյ ի բաց թօթափել. մինչ զի կարասցէ ասել, գայ իշխան աշխարհիս այսորիկ մեղսասէր, և յիս ինչ ոչ գտանէ զմեղացն նշխար.** այլ Քրիստոս ըստ աւետարանին կենաց՝ որ վերստին նորոգեաց առոյգ խոստովանութեամբ և արտասուօք ապաշխարութեամբ և գթով անանկաց հանդերձ ամենայն առաքինասէր վարուք յարդարեալ [63] ի հաճոյսն Աստուծոյ։ Եւ մշակք լինել այգւոյն ճշմարտութեան ի սկզբան հաւատոց և ուղիղ վարուց, որով կայ ի վերայ երկրի և առաքինանայ։ Եւ ելանելով յաշխարհէս՝ ընդ իւր տանի զարդարութիւնս ամենայն, զողջութեան անմեղութիւնն, զմանկութեան անարատութիւնն, զերիտասարդութեան անբծութիւնն, զծերութեան զմաքրութիւնն, գլխաւորելով ըստ իւրաքանչիւր հասակացն զամենայն առաքինութիւն, և ըղվարձս առցեն ըստ իւրաքանչիւր վաստակոց յամենեցունց տեառնէն գործողաց այգւոյն հաւատացելոց ըստ ժամանակացն փոփոխմանց։ Օժանդակ լիեալ առ վերին կոչումն,

* Եսայ. ԿԶ, 24։
** Յովհ. ԺԴ, 30։

ուր Քրիստոս նստի ընդ աջմէ Աստուծոյ * յԵրուսաղէմն վերին՝ որ է մայր մեր ամենեցուն. ուր և յառաջագոյն գանձք առաքինութեանն բարեաց ամբարեցան. ուր յոյսն մեր է հաստատեալ՝ անմահ երանութիւնքն, անսպառ վայելչութիւնքն, [64] անվախճան ուրախութիւնն, անզեղջ բարութիւնքն ի վայելումն Քրիստոսի։ Միահաւան խնդութիւն երկնաւորաց և երկրաւորաց երանութիւն ի փառս Քրիստոսի գործակցութեամբ բարերար երախտեօք սուրբ սիրոյն։ Որ մատոյց զմեզ ի յորդէգրութիւն Հօր և ի խնամս սուրբ Հոգւոյն և ի ժառանգութիւն արքայութեան իւրոյ։ Որ աստ արդարացոյց, և անդ թագ ի գլուխ պսակեալ փառաւորէ յաստուածեղէն խրախճանութիւնս, [65] Հանապազորդ ի Հըրճուանս յանսպառ բարիսն ամենասուրբ Երրորդութեանն։ Զի նմա վայելէ փառք իշխանութիւն և պատիւ յաւիտեանըս յաւիտենից. ամէն։

* Գաղ. Դ, 1.

ԵՐԱՆԵԼՈՅՆ ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ

ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ԱՄԵՆԱՐՈՒԵՍՏ ԽՐԱՏՈՒՑ ւ
ՀԱՆԴԱՄԱՆՔ ԳԻՏՈՒԹԵԱՆ ԵՒ ԻՄԱՍՏԻՑ

Ի

ՍՐԴԻՍԻ գոհութիւն և օրհնութիւն և փառս տալ արժան է ամենակալ տէրութեանն ամենառատ բարերարութեանըն․ որ ոչ թողու ի խնամակալ սիրոյն իւրոյ, այլ յանձանձէ և առլիւրաբար բաշխէ զշնորհս յարարածս իւր։ Նախ զի իշխան կացոյց և տէր [2] ի վերայ երկրի, որ ընդ իշխանութեամբ են վերնոցն․ զի ծանիցուք զնորա խնամս արարչական սիրոյն, և աշակերտեալք նորա պատուիրանին՝ կատարեսցուք զարդարութիւնսն ամենայն, և առցուք զհատուցումն բարի ի ժամանակի այցելութեան․ և ըստ օրինակի՝ [5] անապականութեան վարուցն հետևող լինել։

Որպէս ի սկզբանէ նախաստեղծին կեանքն յարդարեցան ի տեառնէ անմեղութեամբ, զայն [4] սուրբ սէրն հաստատել ի մեզ։ Որպէս և Քրիստոս սիրեաց զմեզ, և զանձն իւր մատոյց [5] պատարագ ի հոտ անուշից։ * Որ բարկացուցաք զարարիչն, զի ոչ պահեցաք զպատուիրանս նորա։ Ցխնամս սիրոյն իւրոյ ոչ որպէս առ երախտաւորս եցոյց, այլ յապախտաւորս որպէս Աստուծոյ վայել է։ Զի զշարիսն զոր եցոյց մեզ Աստուած, ոչ ըստ մերում արժանաւորութեան, այլ յաղթեալ յարարչական սուրբ և անբիծ սիրոյն՝ զառձաւ յողորմութիւն։ Զի [6] և ոչ իսկ փոխարէնս խնդրէ ի մէնջ փոխանակ երախտեացն․ այլ կամի՝ զի կեցցուք [7] արդարասէր, և ժառանգորդք լիցուք երկնից արքայութեանն։

* Եփ. Ե. 2։

Զի նա է լոյս և կեանք մեր և աղբիւր բարեաց: [8] Զի ոչ խնդրէ աղբիւր ջուր, և ոչ արեգակն լոյս. այսպէս և Աստուած տուող է բարեաց և ոչ առող ինչ յաղագս մեծի բարերարութեանն իւրոյ և անկարօտ լինելութեանն: Այլ որ առ միմեանս լինին երախտիք, զայն իւր համարի, և ինքն առնէ զփոխարէնս յերկրի և յերկինս որ կան և մնան: Զի միմեանց բարի առնել, փոխարէնս [9] ի նմանէ առաքին երանելիք և աներևոյթք: * Զի որպէս արիւնն Աբէլի առ Աստուած բողոքեաց, որ սպանաւ ի Կայենէ և պատժի [10] ի տեառնէ, ** սոյնպէս բարի բողոք զԱստուած ի բարի խնամըս շարժէ բարեգործաց: Զի որք ոչ խնդրեն զվրէժս ի զըրկողաց, ինքն առնու վրէժս ըստ արդար [11] դատաստանին.*** զի ըստ արժանեացն է հատուցումն առ բարեգործսն և առ չարսն:

Եւ Աստուծոյ նմանել այս է, որ ապերախտին երախտաւոր լինի, [12] զկորուսեալսն խնդրելով, զգտեալսն պահել իւրով աշխատութեամբ և ջանիւ: Նմանել Որդւոյն Աստուծոյ՝ որ ետ զանձն իւր ի մահ վասն մեր. և կամաւոր չարչարանօք ազատեաց զմեզ [13] ի ծառայութենէ մեղաց, և ի վայելումն [14] բարեաց կենաց և աւետեաց զմեզ հրաւիրեաց, և Հոգւոյն սրբոյ ընդունելութեան արժանի արար: Եւ զամենակալ Հօրն [15] զանհամեմատ զերանութիւնսն խոստացաւ. զի միասնական Երրորդութեանն միշտ հանցուք զորհնութիւնս, որ հանապազ ի բաց ունի զդրունս փրկութեան կենաց հաւատացելոց, և ապաւէն ամենեցուն որ կարդան առ նա: Եւ աշակերտեալ առաջնորդական բանին՝ գործակից լինել բարերար կամացն, և խորհել զբարին և առնել, և լնուլ զհաճոյս արարչին ի խնամս մերձաւորաց և հեռա-

* Մատթ. ԻԵ, 40:

** Ծննդ. Դ. 10:

*** Ա. Թես. Դ, 6:

ւորաց։ Զի զփոխարէնսն առցեն զբարեացն ըստ անմեղութեան սուրբ սիրոյն. և ի նոյնս յառաջանալ ի լաւսն, և պատերազմել ընդդէմ մեղացն [16] առաքինութեան հանդիսիւք. և ի բոլոր սրտէ ապաւինեալք ի խնամս մարդասիրութեանն, [17] և խլել զամենայն բոյսս անօրէնութեան ի մտաց և ի զգայութեանց հանդերձ ամենայն աղտեղի և չար ախտիւք։ Եւ ի բաց բառնալ զհպարտութիւն ի միջոյ, զագահութիւն, զխորամանկութիւն, զբարկութիւն, զոխակալութիւն, զնենգութիւն, զստութիւն, զերդմնահարութիւն, ըզնախանձ, զորովայնամոլութիւն արբշռաց։

Զայսոսիկ վնասակարութիւնս և որ սոցին նման են դժընդակութիւնք մեղաց՝ սպառնալեօք յաւիտենական տանջանացն արտաքս հանել, և տնկել զբարեացն տունկսն ի միտըս և ի վարս հանդերձ յարմարական առաքինութեամբքն և անարատ սրբութեամբ և ճշմարիտ հաւատով, խրախուսեալք յԱստուած յուսով աւետեացն խոստմամբք. զազատութիւն առհաւատչեայ աստ առեալ, և հրաւիրեալ ի պատրաստեալ արքայութիւնն երկնից ի յոյսն կենդանեաց, ի բարութիւնսն անվախճան երանութեանցն, [18] որ ոչ մտօք իմանալի է և ոչ բանիւ ճառելի որ անդէն երանութիւնքն։

Զի որպէս մանկունք որ յորովայնի մարցն լինին յապաժոյժ, և ի խաւարի թաղեալ. և ոչ գիտեն զերկրիս վայելչութիւն, զարեգական պայծառութիւն, և զլուսնի և զաստեղաց և զժամուց [19] և զամսոց շրջագայութիւն, և զբուսոց և զտնկոց պտղաբերութիւն ի վայելս կենդանեաց և որ այլ ևս անասնոց նախիրք և գազանաց և թռչնոց [20] որ ի կերակուր և որք ի հնազանդութիւն են անկեալ, որք որդոց մարդկան [21] ի ցամաքի և որք ի ջուրս են ղուղակք՝ որ պատրաստեալ որոգայթիւք ըմբռնին յորսողաց, և որ այլ ևս իցեն վայելչութիւնք և պայծառութիւնք հանդերձից, և ոսկւոյ և արծաթոյ և ականց պատուականաց՝ [22] որ ի զարդ

մարդկան գործեցան և ի փառս Թագաւորաց՝ յորս ուրախանան աշխարհաւէրք։ Արդ որպէս ոչ գիտել մանկանցն զայս կեանս և ոչ նման է յորովայնի կենացն, սոյնպէս և ոչ մեզ իմանալ զհանդերձեալ կեանսն. և ոչ համեմատի այս լոյս և կեանք առ այնր կեանք և լուսաւորութիւն փառաց ամենազօր տէրութեանն, [23] *զոր ակն ոչ ետես և ունկն ոչ լուաւ և ի սիրտ մարդոյ ոչ անկաւ զոր պատրաստեաց Աստուած սիրելեաց իւրոց զանվախճան երանութիւնսն* [24] *ի Քրիստոս Յիսուս։*

Նա և ոչ որ յաշխարհիս են նեղութիւնք և վիշտք և չարչարանք և տանջանք [25] *հրով և ջրով որպէս Սոդոմայն և Ջրհեղեղին, ոչ համեմատեն անշէջ հրոյն և յաւիտենական տանջանացն՝ որ պատրաստեալ է ամբարշտաց և մեղաւորաց։ Զի Աստուած զմիտս և զզգայարանս գործի* [26] *կենաց ստեղծեալ ամենիմաստ կենօք* [27] *ի սրբութիւն, ի ճշմարտութիւն, յամենայն բարեգործութիւնս. և շահիւք* [28] *բարեացն լցուսցէ զանձն իւր և զայլս, և ուրախ արասցէ զտէրն. զի ի բերանոյն քարոզեսցի* [29] *ճշմարտութիւն հաւատոց և անբիծ փառուց։ Զի արթուն և զուարթուն պահեսցէ զինքն և զամենեսին զհաւանեալսն* [30] *յաղջախոհութիւն. և աչք և սուրբ սրտով կայ ի հնազանդութիւն հոգևոր օրինացն, որ ատել տայ զչարն և սիրել զբարին, որ քաղցր և անոյշ բարեօք լի է. և զովիչք և* [31] *զովութիւնքն* [32] *ի վեր ելանեն առ Աստուած, և պատրաստեն զերանութիւնսն արքայութեան երկնից։ Զի հաճոյացան Աստուծոյ ի նեղութեան և յանդորրու. և անքակ մնացին ի սիրոյ նորա ճշմարտեալ հաւատով, խաղաղասէր և բարեսէր առ ամենեսեան. մեկնեալ յամենայն իրաց չարեաց, յերևելեաց և յաներևութից սրխալանաց։ Զի «Ես եմ»ասէ, Աստուած որ ատեմ զանիրաւութիւն և սիրեմ զարդարութիւն»։ Եւ ի յայսմ երևին սիրելիք Աստուծոյ և ընտանիք հաւատոց,* [33] *զի զնոյն սէր*

ունիցիմք առ սրբութիւն և արդարութիւնսն ամենայն միշտ։[34] Եւ դարձեալ զատելութիւն առ զազիր ցանկութիւնս և առ ամենայն մեղս։ Զի գրեալ է՝ թէ. «Զմեղս ատեցի և անարգեցի, և զօրէնս քո սիրեցի»։ *

Զի այնպիսիքն են բերան Աստուծոյ, որ դարմանօք կենդանարար խրատուն լի է, և որպէս յաղբերէ բղխէ զկենացըն խրատս։ Զի ամենայն որ կարդասցէ զանուն տեառն՝ կեցցէ, որ զյոյսն յարդարէ[35] ի Քրիստոս Յիսուս։ Իսկ որ ապիրատս խօսին առ ի կորուստ բազմաց խորամանկութեան, այլանդակութեան, պատրանաց և պէսպէս վնասակարութեանց, որ վրիպեցուցանեն զոգէսս ի ճշմարտութեան աւանդիցն, տայցեն վրէժս վասն կորստեան անիրաւելոցն ըստ արդար դատաւորութեանն Աստուծոյ. որ ժառանգորդ լինին անշէջ հրոյն և յաւիտենից տանջանացն։

Եւ աչքն որ ճշմարտութեան զտեսութիւն ունին, առաջնորդութեամբ իմանալեօքն անվրէպ զգուշանալ ի վնասակարացն. ամենայն անդամոցն անարատ և սուրբ և անբիծ ըզտեսութիւնն հրահանգել յԱստուած։[36] Զի ճրագ մարմնոյ ակն՝ ասէ տէրն։ ** Զի որոյ աչքն լուսաւոր են, ամենայն մարմինն լուսաւոր եղիցի. որ չունի մասն խաւարի զմեղացն իրս, այլ լուսաւորեալ կացցէ ի լոյսն Աստուծոյ։ Ապա եթէ խաւարեալ է ի նշողիցն լուսոյն ի ցանկական աղտեղութիւնս և յամենայն աշխարհասէր պատրանս երևելեացս ամենաչար, որ շլացուցանէ ի ճշմարիտ տեսութենէ,[37] և ի մեղացըն որպէս բիժ զակամբ եկեալ՝ ոչ թողացուցանել տալ տեսանել[38] զպատշաճն՝[39] այլ զխաւար չարին, նոքա են որ ժառանգորդ լինին արտաքին[40] խաւարին[41] ուր լալ աչաց և կուրութիւն յանշէջ հուր գեհենին։ Զի երկաքանչիւրոցն է

* Սաղմ. ՃԺԸ, 113.
** Մատթ. Զ, 22.

հատուցումն, ճշմարտասէր տեսողացն և ցանկասէր վատթարատեսացն:

Եւ լսելիք որ բացին զդրունս ունկնդրութեան ճշմարիտ քարոզութեան [43] և ընդունակ արարին [44] կենդանարար [45] բանին զմիտս և զզգայարանս ամենայն հաւատոց և ամենայն ճշմարտութեան Աստուծոյ պատուիրանին յերևելիս և յաներևոյթս, ընդ նոյն լսելիս մտանեն բարբառք աւետեացն. «Եկայք մտէք, ասէ, յուրախութիւն տեառն, և վայելեցէք զբարիսն զանճառս և անվախճանս, որ ի սակաւուդ հաւատարիմ երևեցայք յերկրի»: * Իսկ որ խնու զականջսն առ ճշմարտութիւն աւետարանին, և մուտ առնեն կորստեան բարբառոյ և ամենապատիր վնասակարաց, և առնեն զմիտսն բոյն իժից և քարբից՝ զի մի՛ առցեն [46] ըղկենաց դեղ զգայութեանցն ի դեղատուէ աստուածային բանիցն, ** լսելոց են զբօթ և զգոյժ ահաւոր սպառնալեօք ի տեառնէ. *** «Երթայք յինէն անիծեալք ի հուրն յաւիտենից, որ պատրաստեալ է սատանայի և հրեշտակաց նորա յաւուրն այցելութեան»: [47]

Եւ հոտոտելիք հոտոցն են՝ զգայութիւնք, որք որոշեն զանոյշ սրբոցն հոգւոյն զհոտ [48] բուրման շնորհացն. որ սըրբեալ են յամենայն գարշութեանց [49] ախտից մարմնականաց, ըստ Առաքելոյ. **** «Հոտ անոյշ եմք Քրիստոսի [50] ի մէջ փրկելոցն և ի մէջ կորուսելոցն. ոմանց հոտ ի մահուանէ ի մահ, և ոմանց ի կենդանութենէ ի կենդանութիւն. [51] և առ այս ո՞վ իցէ բաւական»: Որք որոշեն զլաւն ի վատթարէն՝ զհաւատոցն և զվարուցն ամբծութիւն, [52] որք վայելեն [53] յանոյշ բարիսն: Իսկ որ զհոտս անսրբութեան զամբարշտու-

---

* Մատթ. ԻԵ, 23.
** Սաղմ. ԾԷ, 5.
*** Անդ. ԻԵ, 41.
**** Բ. Կորն. Բ, 15.

թեան բուրեն յորոշումն և զաշխարհական ցանկութեանց՝ [54] որ լին է ժահահոտութեամբ և անառակ և անխտիր շարժմամբք, հրաժարեալ ի շնորհալից հոտոցն, առնլոց են այնպիսիքն զհոտ ժահից [55] հարուածոցն անքուն որդանցն և կիզման հրոյն. և գրաւին ի ներքս յապաժոյժ տանջանսըն [56] ի հաշումն և ի մաշումն հոգւոց և մարմնոց:

Եւ ձեռք ի խնամս տեսչութեան գործաւորութեան առ ի պտղաբերութիւն յարդարեսցին միշտ, և գլորելոյն և կարօտելոյն օգնական և ձեռնտու լինել ըստ ամենայն պիտոյից, և ի գործ [57] Աստուծոյ ոչ դանդաղանօք. [58] զի զանձին պէտս ինչ իրաց և զմերձաւորաց և զհեռաւորաց ըստուգապէս ներգործեսցէ ըստ շնորհելոյ նմա ի տեառնէ աջողութիւն: [59] Այսպիսի ձեռք առնելոց են ի տեառնէ ըզվճիռ ազատութեան, զմուրհակն որդէգրութեան, զպսակն անապական՝ որ փառօք և պարծանօք յօրինեալ է ի ձեռաց Աստուծոյ: Իսկ ձեռք որ ըստ աղտեղի ցանկութեանց ի յամօթոյսն [60] շարամերձեալ ինքեան և կամ՛ գործակցաց ախտասիրաց, և դարձեալ որ գողանան, որ տանջեն [61] և նեղեն և սպանանեն, այն ձեռք կապին հրեղէն կապանօք և մատնին անվախճան տանջանացն անշէջ հրոյն, և ջնջին ի կենդանի գրոյն տախտակացն Քրիստոսի:

Եւ ոտք որ եղեն երիվարք [62] շինութեան և խաղաղութեան սուրբ փառաց և ճշմարիտ քարոզութեան առ ամենայն օգուտս [63] հոգևորս ի հեռաւորս և ի մերձաւորս ի հաճութիւն կամաց տէրութեանն, և արհամարհեցին զաշխատութիւնս ոտից առ հանդէս վերին կոչմանն, այն ոտք ելանեն ի դրունս կենաց [64] և մտանեն յօթևանս ուրախութեան հարսանեաց զարդուն փայելչութեան ընդ աջմէ մեծութեան յանանց ուրախութիւնսն: Իսկ որ [65] զարտուղեցան ոտք յարդարութեան [66] ճանապարհէն, և զրահետ եղեալ մոլորեցան ի չար անդր ի վնասակարսն ընթանալով,

յանսրբութիւն, յաւազակութիւն, յապիրատութիւն, ի ըստահակութիւն, անիրաւ յամենայն ճանապարհս գնալ որ տանի ի կորուստ յաւիտենից, այնպիսի ոտք մեկնեալ ի կենաց անտի [67] առաքին ի վիհս դժոխոց, որ ոչ իջէ վախճան և կամ հանումն ի կապանաց տանջանացն լուծանել։ [68]

Եւ իմացուք խելացն՝ որ բնակեալ է յլիղն որ ի գլուխն է, որ է ի վերայ ամենայն անդամոցն պսակ՝ և զգայութեանցն գործարան, շարժմանցն առաջնորդ, և տեսուչ և վարդապետ և հրամանատար ամենայն անդամոցն, որ զթիւրեալ անդամն ուղղէ, զվրիպեալսն հաստատէ, զանգէտսն իմաստնացուցանէ, զկարօտեալսն լցուցանէ, ամենայն հնարիւք զգիտս փրկութեան անձինն ստանայ և այլոց, և լինի տուն զանձուց հոգևոր իմաստից մերձաւորաց և հեռաւորաց ըստ շնորհելոյն նմա ի հոգւոյն սրբոյ՝ որ աղբիւրն է ամենայն բարեաց և իմաստից, ուստի ծագէ լոյս գիտութեան և զամենայն մարմինս լուսաւորէ ըստ Քրիստոսի աւետարանութեանն սուրբ և բարի հանգամանացն, և նոյն զամենայն անդամս երանութեամբք ըստ ճշմարտութեան բարերար կամացն, և առնու զթագ արքայութեանն որ ի Քրիստոս։ Իսկ խելք՝ [69] որ մոլորեցան ի ճշմարտութեան իմաստիցն, և անկան ի ցանկութիւնս ախտից և յամենայն վնասս անիրաւութեան անխնայ մեղացն, և փոխանակ կենաց մահու պատճառք եղեն անձանց և բազմաց, և նոքա կրեն սաստիկ պատուհաս· [70] «կորիցեն, ասէ, մեղաւորք յերկրէ ի դժոխսն, և ամբարիշտք ոչ ևս գտցեն զհանգիստ ի չարաչար տանջանսն»։ * Զի այս է որք ի վտանգս անկանին, չար կորուստ է նոցա և մութ և խաւար ի չարաչար և դառն տանջանացն, և զլոյս ոչ տեսանեն, և ոչ զայլ ոք ի մխիթարութիւն առ տանջանսն։

---

* Եսայ· ԾԷ, 20·

Իմանալի է և զսիրտն՝ որ ընդունարան է հոգւոյն շարժմանց․ * «Զսիրտ սուրբ հաստատեա յիս Աստուած [71] և ըզհոգի ուղիղ յանձին նորոգելով»։ [72] Որ խնդութեամբ յուսոյն [73] վերստեղծու ի զգաստութիւն առաքինասէր վարուց, և շարժէ զամենայն անդամսն ի վատթարացն ի լաւագոյնսն բարի խորհրդով առ հաւատչեայ յուսոյն առնուլ զազատութեանն զկտակ, և մտանել ի ժառանգութիւն արքայութեանն [74] երկնից։ Իսկ որ ի սրտէն բղխէ զգունդս չարութեան, որպէս ասաց Տէրն, զամենայն դժնդակաց զեղսն [75] ի սրտէն, զշնութիւն, զամբարտաւանութիւն, ըզբարկութիւն և զայլ ամենայն չարիսն, նոքա ելանեն ի խնամոց բարերարին ի խաւարն արտաքին և ի կորուստ յաւիտենից․ զոր ոչ բաւեմ [76] ասել զայնքան աղէտս տանջանացն։

Է իմանալ և ի փորձն [77] սրբութիւն ըստ ամենայնի․ որով ներքին մարդն նորոգի օր ըստ օրէ, որպէս ասաց Առաքեալ։ ** Զի առժամայն թեթև նեղութեամբք զյաճախութիւն բարեացն գործէ յանձինս ի ցաւս և ի հարուածս փարոտեացն մի ըստ միոջէ՝ որք զանուանսն ունին, լեարդ և թոք և փայծաղն և աղիք և երիկամունք․ այնպէս տնօրինեալ․ որպէս ի սկզբանն էին առանց սխալանաց։ Եւ ամենայնիւ մեղուցեալ երևելի մարմնով և աներևոյթ հոգւով և ամենայն փորոտեօքն, դարձեալ լինել բարի խորհրդոց ընդունարան։ Զի ամօթոյ անդամքն առաւել ևս բարկեշտութիւն ունիցին, [78] ասէ Առաքեալ ***․ այսինքն զանարատ սրբութիւն և զամբիծ մաքրութիւն ի հոմանցն մեռուցանելով զնա ճգնաւորական պարկեշտութեամբ, և զհուր ցանկութեանն հրով հոգւոյն և շնորհալից արտասուօք շիջուցանել։

* Սաղմ. Ծ, 12.
** Բ. Կոր. Դ, 16.
*** Ա. Կորն. ԺԲ. 29.

Զի ամենայն անդամօք և փորոտեօք և հոգւով ի կամակար մտաց պարտաւորեալք [79] և արդարացաք [80] ի ձեռն լուսաւոր աւազանին և վերստին ծննդեամբն շնորհօքն Քրիստոսի։ Որ ազատեաց զմեզ ի մահուանէ [81] մեղաց յազատութիւն նորոգման իւրոյ․ զգեցաւ զնոյն մարմին և զհոգի, և խառնեաց ընդ Աստուածութիւնն իւր յաղագս անբաւ սիրոյն իւրոյ, և զամենայն կիրս մարդկայինս կրեաց բաց ի մեղաց․ և զմեզ յորդորէ հայել յելս գնացից նորա [82] և նմանող լինել ճշմարտութեան սուրբ վարուցն մարմնաւորաց․ զի եթէ կցորդեսցուք չարչարանացն՝ և փառացն հաղորդեսցուք ի սիրոյ նորա։ *

Եւ պատուիրան առաք սիրել զնա, որպէս և նայն սիրեաց զմեզ, և ետ զանձն իւր փրկանս ընդ ամենեցուն։ ** Զի յայս երկու պատուիրանս օրէնք և մարգարէք կախեալ կան, ասէ տէրն․ սիրելն զԱստուած, և սիրել զընկերն։ *** Զի որ սիրէ զԱստուած, հեռի է յամենայն անիրաւութենէ յերևելեաց և յաներևութից, և մերձ յամենայն արդարութիւն և ի սրբութիւն․ զի իշխանութիւն առեալ աստուածային սիրոյն՝ խափանէ [83] զանիրաւ սէրս որ գերեն զմիտս և զգայարանս։ Նմանապէս և որ զընկերն սիրէ նմանութեամբ Քրիստոսի սուրբ սիրոյն, որ եհեղ ի մարդիկ առատապէս։ Զնոյն սէր, ասէ Առաքեալ, **** յանձին ունել․ համաշունչք և միախորհուրդք առ հաճոյս Աստուծոյ։ փախչել յանձնասիրութենէ պարտեաց, և խոնարհութեամբ առաւել համարել զընկերս քան զանձինս։ Զի հոգևոր և սուրբ սիրով [84] առ Աստուած և առ ընկերս ճշմարտեալք,

* Եբր․ ԺԲ․ 2․
** Յով․ ԺԽ․ 12․
*** Մատթ․ ԻԲ, 40․
**** Փիլիպ․ Բ, 2․

երկնայնոցն լիցուք ժառանգորդք։ [85] Որ զսերմն բարի սերմանեաց Քրիստոս, և թշնամին արդարութեան սատանայ՝ զորոմն անիրաւութեան. զոր Քրիստոս հրամայէ խլել ի ժամանակի և նիւթ հրոյ արկանել. և զբարի սերմանսն աճեցուցանել, որ բերէ պտուղ զհարիւրաւորսն և որ ըստ իւրաքանչիւրոցն է սերմն առաւել կամ պակաս սերմանեալ։ *

Եւ սատանայ ի սկզբանն ոչ թշնամի արարաւ, այլ յանձնիշխան կամացն եղև հակառակ բարւոյ. զի ըստ երբայեցւոց բառիցն հակառակ թարգմանի։ Որպէս և զՊետրոսէ լսեմք ի տեառնէ. ասէ. «Երթ յետս իմ սատանայ. զի ոչ խորհիս զԱստուծոյսն, այլ զմարդկանն»։ ** Որ անգէտ էր փրկական չարչարանացն, և հակառակ էր արգելուլ [86] և ամենայն որ բարւոյ կայ, սատանայ անուանի։

Զի ամենայն արարածք ի բարերարէն բարի ստեղծան. և ի կամակար մտացն եղեն չարք ի հրեշտակաց և ի մարդկանէ՝ ամբարիշտք դևք։ [87] Զի զսատանայ անձնհաճ հպարտութիւնն իւր ընկեաց ի փառաց. նմանապէս և զմարդիկ որ զնոյնն ախտացան ի սատանայի խաբմանց զաստուածութեանն զպատիւ խոստանայր, զի աստուածամարտ լիցին իբրև զինքն։ Եւ Գաբրիէլ հրեշտակապետ էր, այլ աւետաւոր լինի [88] առ կոյսն, զուրախ լեր բերկրեալն աւետարանելով և ազգի մարդկան զփրկութիւն։ Որ ի ձեռն մարմնանալոյ Որդւոյն Աստուծոյ որով ազատեցան տիեզերք ի յանցուածոցն որ ի սատանայէ՝ պարտեցան [89] և զմահ ստացան։ Զոր Քրիստոս կենդանացոյց և արար հաշտութիւն, արարչին ընդ արարածս. և հրաւիրեաց զհաւատացեալս յամենասուրբ Երրորդութիւնն առաքինասէր վարուք յերկնից

---

* Մատթ. ԺԳ. 8.

** Մատթ. ԺԶ. 23.

արքայութիւնն։ Զոր և դէքն խոստովանէին * Որդի Աստուծոյ՝ և զիւրեանց զպատիժս. [90] «Գիտեմք զքեզ ով ես՝ Որդի Աստուծոյ. որ եկիր յաշխարհ, և յառաջ քան զժամանակն տանջես մեզ։ [91]

Զի եթէ չար էր բնութեամբ և սուտ, զիա՞րդ կարէր ասել արդար զեղեալսն և զլինելոցն դէքն. զի չիք ոք եղեալ բնութեամբ չար, այլ ի կամաց և ի գործոց իւրոց առնու զանուն ճշմարտիւ, և ըստ չար կամաց ունի զհատուցումն։ Վասն այսորիկ որք ուսուցանեն զչարն և որք ուսանին, առնուն զհատուցումն յանշէջ հուրն։ Որ հրապուրէ և ուսուցանէ զչար՝ սատանայ է. և որ ոչ հրապուրին և ուսանին զչար՝ մարդիկ։ Զի գողն և գողակիցն ի միում պատժի են. և որ այլ ևս չարագործաց հաղորդակիցք իցեն, ընդ նոսին տայցեն վրէժս։ ** Զի «Երթիցեն, ասէ տէրն, մեղաւորքն ի հուրն յաւիտենից, զոր պատրաստեալ է սատանայի և հրեշտակաց նորա» *** որ հրապուրիչք են։

Իսկ զաւետարանին գործակիցսն զքահանայսն սուրբս և զպաշտօնեայս [92] եկեղեցւոյ, որ սրբութեանց են սպասաւոր հրեշտակային կարգաւորութեամբ, ոչ վարկպարազի համարեսցուք. այլ որպէս յԱստուծոյ կարգեալ ի փրկութիւն հաւատացեալ ժողովրդեանն Աստուծոյ։ Զի զառաջնորդս եկեղեցւոյ ի տեղի առաքելոյն կարգեաց քարոզս և ասաց՝ եթէ «Որ զձեզ ընդունի, զիս ընդունի. և որ զձեզ անարգէ, զիս անարգէ». **** և դարձեալ ասէ. ✠ «Զոր կապիցէք յերկրի, եղիցի կապեալ յերկինս»։ [93] և զոր արձակիցէք յերկրի, եղիցի արձակեալ յերկինս»։ [94] Զի իշխանութիւն որ

* Մատթ. Ը, 29.

** Հռ. Ա, 32.

*** Մատթ. ԻԵ, 41.

**** Մատթ. Ժ, 40։ Ղուկ. Ժ, 16.

✠ Մատթ. ԺԸ, 18.

յԱստուծոյ է, զօրութիւն ունի մեղաց թողութեան, և ախտաժետաց առողջութեան, և դիւաց հանումն ի մարդկանէ։ Զի զոր Աստուած կարգէ, զգործս Աստուծոյ գործէ շնորհօքն Քրիստոսի։ Եւ երախտիք որ ի նոցանէ յառաջագայի՝ պարգևք են. որ զյուսահատսն ի յոյս կենդանի ածէ, և ըզփրկութիւն աւետարանէ, զմահապարտս և զամենայն յանցաւորս խոստովանութեամբ յապաշխարութիւն ածէ ստոյգ և ճշմարիտ վարդապետութեամբ ըստ հոգևոր օրինացն և ըստ աւետարանին փրկանաց [94] ի փառս և ի գովութիւն ամենասուրբ Երրորդութեանն։ «Զի հրեշտակ տեառն ամենակալի է, ասէ մարգարէն, և ի բերանոյ նորա օրէնս հայցեն»։ * Զի որ սուրբք են առաջնորդք բանին և ուսմամբ աշակերտեն ի ճշմարիտն, նոքա առցեն զերանութեանն զփառըս և զպսակ ընդ սուրբ հրեշտակապետս և ընդ ամենայն սուրբս յամենակալ տէրութենէն։

Եւ ընդրութիւնք են հրեշտակաց և մարդկան յերկինս և յերկրի։ Արդ հրեշտակապետք և հրեշտակք՝ առաջնորդք սուրբք և ամենայն ընդրեալք և սիրելիք Աստուծոյ։ Արդ ի վերին զօրացն որոշեալ ի հրեշտակապետացն հակառակ բարւոյ սատանայ անուանեցաւ. և զօրքն իւր՝ դևք, հաւանեալք կամաց նորա և ապստամբեալք ի ճշմարիտ կարգաց։ Սոյնպէս և աստ մարդիկ թիւրեալ ի հերձուածս կորստեան և ի վարս անօրէնութեան բազում ժողովրդովք. [95] որք և առաջնորդք կոչեցան, և հպարտացեալ զարտուղի անկան. և բազմաց եղեն պատճառք կորստեան, որսացեալք ի սատանայէ ի նորա կամսն ըստ ամենայն վնասուց։ ** Զի ճշմարտութեան վերակացուք առաքեալք և մարգարէք և քահանայք սուրբք միաբանեալ են ընդ սուրբ զօրս երկնաւորաց [96] ի լուսաւորութիւն վերնոց և ներքնոց։ Եւ այըս-

* Մաղ. Բ, 7։
** Բ. Տիմ. Բ, 26

տամբեալք ի մերոց և ամբարշտեալք ի բանէն որ աշակերտեցաք զճշմարտութիւնն՝ օտարացան և յետս կացին. որպէս քուրմք և կախարդք և այլ ևս չարք։

Զի բարի են գործք և արարածք Աստուծոյ. և անիրաւքն նմանապէս յանձնիշխան կամաց եղեն չարք՝ դևք և մարդիկ։ Որպէս տաճար բարութեամբք է թագաւորի, սոյնպէս բանդք բանդակալօք։ [97] Բարի մասն ուրախութեանն և ամենագեղ զարդունք [98] մտերմացն և բարեխորհ բարեգործացն է։ Իսկ գոնն և խրատն և զանազան տանջանքն՝ անիրաւաց [99] և պղծոց է որ անխտիր են յամբարշտութեան։ Զի բանդ ասի դժոխքն, որ զպոռնիկս և զկախարդս և զսպանողս և զամենայն անիրաւս ի տանջանսն ըմբռնէ, որք արհամարհեցին զբանն տեառն և ոչ պահեցին զարդարութիւն։

Ապա եթէ իշխանութիւն դժոխոցն սատանայի է, յայտ է՝ եթէ վրէժխնդիր Աստուծոյ է ըստ արդար օրինացն սատանայ։ Այլ մի լիցի այսպէս իմանալ. զի և դժոխք ի տեառնէ վասն նորա պատրաստեցաւ և նորա արբանեկացն և ոչ վասն մարդկան։ Այլ որք ախորժեն զնոյն խորհել և գործել զչար՝ ընդ նոսա պարտաւորեալ տանջին զանմահ մահն։ Զօրէնսն Աստուծոյ և զիրաւունսն երևելի արարածովքս իմացեալ տեսանի՝ * զի անձրևք պիտանիք և շայեկան ցօղք զխնամոցն Աստուծոյ բացայայտեն առապէտս [100] արարածոց։ Իսկ որոտմունք և կարկուտք և հրացանութիւնք գուշակեն մեզ զահեղ բարկութիւնն՝ զսպառնալիս ամբարշտաց և մեղաւորաց, զոր յայտնելոց է ի վախճանի։ [101]

Զի և ջրհեղեղն համաշխարհական վասն անսրբոցն և պղծոցն ի տեառնէ անօրինաց լինի ի ջնջումն, ի յերկնէ և ի յերկրէ պատուհասեալ. [102] և զարդարսն պահէ ընդ

---

* Հռ. Ա. 20.

ամենախնամ ողորմութեանն իւրոյ ի ձեռն տապանին և զայլ ևս շնչաւորս՝ Թողլով աշխարհի սերման։

Եւ զսոդոմայեցիսն սատակեաց հրով և ծծմբով՝ զի հրով ցանկութեամբն և զաղխ գիջութեամբն ապականեալք էին. և զարդարն զՂովտ ապրեցոյց ի դառն հարուածոց սատակմանն։ Որ հող և ջուր և քար և տունկք և բոյսք բնակչօքըն հանդերձ տոչորեալ հրդեհեցան։ [103] Եւ այսոքիւք ցուցեալ եղև ամբարշտացն և [104] մեղաւորացն սատակագոյն սատակումն յարդար դատաւորէն Աստուծոյ՝ և փրկութիւն արդարոց ի խնամակալ սիրոյն։ Եւ այժմ տեսանի ի Սոդոմ և ի Գոմոր բարկութեան Աստուծոյ պատիժք ի հող և ի ջուր և ի քար և ի տունկս։ [105] Զի տեսեալ զայնոսիկ արհաւիրսն այժմ՝ և երկիցեն ի բարկութենէն որ գալոցն է. որք զմեղս իւրեանց որպէս սոդոմայեցւոյն պատմեցին և յայտ արարին՝ ասէ մարգարէն։ * Նա և այլ ևս գայցեն այժմ յաղագս մեղաց սով և սուր և գերութիւն և տարաժամ մահք և պէսպէս ցաւք և հիւանդութիւնք և վտանգք առ ի խրատ և յանդիմանութիւն. զի զղջասցին և ապրեսցին ի բարկութենէն որ գալոցն է յերկնից։

Արդ յամօթ լիցին որ զսատանայ ասեն խրատտու [106] պատուհասիցն տեառն [107] տէր՝ և ոչ զամենակալն Աստուած։ Զի յումմէ օրինադրութիւնն է՝ նորա և հրաման պատուհասից և ողորմութեան ըստ իւր խորին իմաստութեանն և մատակարարութեանն։ Զի բովք է ամենայն մրտաց. որ զմտերմացն հանդէսս յայտնէ իւրեանց սիրովն և երկիւղիւն՝ վկայութեամբ բարեբար երախտեացն ի բարեբար կամացն յարդարեալ։ Զի Աստուած միշտ ցուցանէ զսուրբ սիրոյն իւրոյ զերախտիսն՝ զտեսչութիւն շնորհաց իւրոց առ հնազանդս [108] և ողջախոհս. զի որպէս որդւոց մաներ-

* Ես. Գ, Թ։

մաց ժառանգութիւն և կեանս պատրաստեաց ամենայն բարեօք։

Իսկ որ ցուցանեն զարհամարհութիւն առ օրէնսն և զանհնազանդութիւն առ կամս նորա, և զնան խոտորնակս և անխտիր յաղտեղիս և յամենայն դժնդակութիւնս մեղաց, վասն այսորիկ, ասէ, գայ բարկութիւնն Աստուծոյ ի վերայ որդւոցն անհաւանութեան, ասէ Առաքեալ։* Զի ցուցցէ զիւրոյ արդար իրաւունսն արդարոց և մեղաւորաց, արդար դատաստանն յերկրի, և ի հանդերձեալսն որ կան և մնան երանութիւնք և տանջանք։

Զի հարուածք որ գան յաշխարհ, վասն մեղաց է իմանալ. զի զղջացեալ զգաստասցին և դարձցին յապաշխարութիւն փրկութեան։ Եւ առ այնոսիկ ասէ տէր մարգարէիւն. «Մըխիթարեցէք, ասէ, քահանայք զժողովուրդ իմ, զի լի եղև տառապանօք. թողեալ լիցին դմա մեղք իւր, զի ընկալաւ ի ձեռանէ տեառն կրկին զհատուցումն մեղաց իւրոց»։** Զի հարուածք՝ դարձելոցն ի թողութիւն մեղաց լինի պատուհասիքն ի վերայ եկելոցն ի տեառնէ։ Զի «Ես եմ, ասէ տէր, որ սպանանեմ և կեցուցանեմ. հարկանեմ և բժշկեմ. և ոչ ոք իցէ որ հանիցէ զձեզ ի ձեռաց իմոց»։*** Զի զամենայն անկնկալութիւն արարածոց դարձուսցէ ի ճշմարիտ կենդանի յոյսն, զի մի մոլորեսցին զկնի սուտ կարծեաց և պատիր խաբերայ բանից սպանդակաց և աղանդաւորաց. այլ յաստուածայնոցն [110] իմացեալք ի ճշմարտութեան աւանդիցն սուրբ գրոց և յուղիղ հանգամանաց. որոշեալ յամենայն սնոտի կարծեաց, ի մշտնջենաւոր երանութիւնսն վերացուսցուք զմիտս հանապազ։

---

* Եփ. Ե, 6։

** Ես. Խ, 2։

*** Բ. Օր. ԼԲ, 39։

վասն այսորիկ միտք և զգայութիւնք յիշխանական[111] կամաց լի են ամենայն[112] շահիւք իմաստութեանն՝ առաջնորդեալ յառաքինանէր վարս յերևելիս և յաներևոյթս: Զի նովաւ կեամք և շարժիմք, և նովաւ յառաջիկայս ի բարիսն ընթանամք միշտ յաղագս աւետեացն և անսուտ խոստմանցն: * Զի նա է արարարիչ մեր, և մեք արարածք նորա· զի մեք կարդասցուք զնա Հայր մեր՝ առնելով զկամս նորա, և նա ասասցէ՝ որդիք իմ էք, և ես ընկալայց զձեզ սիրով, այլ և եղեց ձեզ Աստուած, և դուք եղիջիք ինձ ժողովուրդ ասէ տէր ամենակալ: ** Եւ զի ասէ մարգարէն. «Եկայք որդիք իմ և լուարուք ինձ, և զերկիւղ տեառն ուսուցից ձեզ»: *** Եւ ետ մեզ Որդին աստուծոյ Հայր կոչել զընութեան Հայրն իւր[113] և զԱստուած մեր. և ոչ համարեցաւ զմեզ անարգս՝ հաղորդս առնել եղբայրութեանն և ժառանգորդս իւր արքայութեանն: Եւ Հայր ի վերուստ ասէ զսիրելութիւն Որդւոյ և առնել զկամս նորա, և զամենայն որ ինչ ի Հօրէ ասացաւ: Եւ վասն Հոգւոյն ասէ. նա եկեալ ուսուսցէ ձեզ զամենայն կամս Հօր և Որդւոյ ի փրկութիւն: **** Զի ի Հօրէ և յՈրդւոյ և ի Հոգւոյն սրբոյ ազատեալք առցուք[114] շնորհս, և կատարեսցուք[115] զառաքինութիւնս:

Բայց զարմանալ արժան է, զի անուանք արարչին յարարածս խոնարհեցան, Հօր առ հարս, և Որդւոյ առ որդիս, և Հոգւոյն սրբոյ առ հոգիս մարդկան. զի այսու իմացուք զառաւելեալսն ի մեզ սուրբ սիրոյն իւրոյ զնախախնամութիւնն: Այս եթէ զայսքան երախտեաց և առաւելեալս ի մեզ սուրբ սիրոյն զանց արասցուք, մի թէ անիրաւ ինչ է ած որ ածէ զբարկութիւն իւր ի վերայ այնոցիկ որ ըզ-

---

* Գործք. ԺԷ, 28:

** Բ. Կորնթ. Զ, 18:

*** Սաղմ ԼԴ. 12:

**** Յովհ. ԺԶ, 13.

բարերարութեանն զսէր արհամարհանօք արհամարհեն, և թողուն ի մոռաց զյիշումն առատ պարգևացն և սուրբ սիրոյն զոր եհեղ ի մեզ առատաբար: * Եւ որպէս ի ձեռն Մովսէսի առնն Աստուծոյ այս է դատաստանն, որ ապականէ բռնաւոր այր զկին տկար յոչ կամաց, անզօր եղեալ ի նորա զօրութենէն, այրն մեռցի, և կինն կեցցէ ըստ արդար դատաստանին. ** Նոյնպէս է իմանալ մեզ զսատանայի՝ զակամայ ի մեզ զխաղանս իրաց ինչ խորհրդոց և կամ շարժմանց անդամոց: Զի ասէ մարգարէիւն տէրն. անձն հօր իմ է, և անձն որդւոյ իմ է. և անձն որ մեղիցէ, նոյն և մեռցի: Զի կամաց է մեղանչել անձինն: Եւ դարձեալ ասէ *** ցարդարն. կելով կեցցէ, որ զարդարութեան զհետ երթիցէ. և մեռանելով մեռանիցի, որ զհետ անօրէնութեան: [116] Զի արդար է տէր և ուղիղ են դատաստանք նորա արդարոց [117] և մեղաւորաց:

Եւ անձնիշխան կամօք կարող եմք զԱստուած ի բարի կամս դարձուցանել ի ձեռն բարի գործոց. և դարձեալ ի պատուհաս ըստ չար գործոց: Զի ի մեր կամս է վայելել ի բարիսն և կամ արտաքսել: Զի ոչ կամի զմահ մեղաւորին, որպէս զդառնալ նորա ի չար ճանապարհէն և կեալ ապաշխարութեամբ. **** «Զի ողորմած եմ ես, ասէ տէր, և ոչ պահեմ ոխս դարձուցելոցն յուղղութիւն»: * Զի որում արժան է գթալ կամ ողորմել կամ ներել, ոչ անտես առնէ. այլ որպէս մարդասէր բժիշկ բժշկէ զներքին և զարտաքին անդամսն, և զանբժշկելին ի բաց կտրէ՝ որ յայլսն զվնասն առնեն: [118] Զի որք ոչ դառնան յապականեալ վարուց, յուշ

* Տիտ. Գ, 6.
** Բ. Օր. ԻԲ, 25, 26.
*** Եզեկ. ԺԸ, 4.
**** Եզեկ. ԺԸ, 23.
* Եր. Գ, 12.

լիցի նոցա ջրհեղեղին կորուստ և սոդոմայեցւոց հրով տոչորումն և սատակումն, որ աստ դատեցան և անդ դատելոց են ըստ բանին տեառն որ յաւետարանսն: *

Իսկ որ զղջանան և դառնան յապաշխարութիւն, նմանեն նինուէացւոցն, զի զապաշխարութիւնն և զեկեալ պատիժս ի տեառնէ ըստ մարգարէութեան Յովհաննու յողորմութիւն դարձուցանեն. և այցելութիւն տեառըն կանխէ առ նոսա, և ընդունին զխնամս սուրբ սիրոյն: Իսկ որ խստացուցանեն զսիրտս իւրեանց նմանութեամբ փարաւոնի, զայն հարուածս կրեսցեն. որ ոչ լուան Մովսէսի և Ահարոնի զառ ի յԱստուծոյ պատուիրեալս նոցա ** որ և անդէն սատակեցաւ իւրովքն, և ժողովուրդն Աստուծոյ ապրեցան: ***

Զի մի է Աստուած արարիչ երկնաւորաց և երկրաւորաց, և յանձնիշխան կամս արարեալ զհրեշտակս և զմարդիկ. և ի նոցանէ ի կամակար մտաց չարք որոշեցան ի հրեշտակաց և ի մարդկանէ: Եւ անմարմնոց և մարմնաւորաց սըրբոց փառք և պսակք պատրաստեալ կան ի տեառնէ: Եւ պատիժս և տանջանք և դժոխք դիւաց անմարմնոց չարաց, և մարմնաւորաց ամբարշտաց և պղծոց ըստ արժանեաց իւրաքանչիւրոցն յարդար դատաւորէն: Զի ի գործոց չարեաց ունին զանուանս դևք հանդէպ իւրեանց. և մարդիկ չարք կախարդք և պիղծք յառաջ եկեալք ի չար անդր և միաբանեալ ընդ չար դևսն:

Այլ որ կամիցի ի հակառակացն փախչել հրեշտակ լինել, աստուածասէր լիցի, և զհաճոյս նորա կատարեսցէ յամենայն սրտէ և յանձնէ և ի զօրութենէ, և զնկերս սուրբ

---

* Ղուկ. ԺԷ, 26.
** Ելք. Է, 2.
*** Ելք. ԻԴ, 28.

սիրով [119] երեւելեօք եւ աներեւութիւք․ ամենայն բարեաց երախտաւոր լինել հեռաւորաց եւ մերձաւորաց․ սուրբ, անբիծ, անարատ, առողջ, միամիտ, հաւան, հլու, հնազանդ, խաղաղարար, ճշմարիտ, մեկնեալ յամենայն իրաց չարաց․ սիրել զբարի եւ ատել զչար, եւ ի գործոց բարեաց զբարի անուն առնուլ եւ ի փառս լինել։ Եւ որ ի բարւոյն մեկուսանայ, եւ նմանող լինի սատանայի հակառակ բարւոյ, անհնազանդ, մեղսասէր, ցանկասէր, հպարտ, ամբարտաւան, խորամանկ, նենգաւոր, սուտ, բանսարկու, խռովարար, չարասէր եւ ոչ բարեսէր․ մեկնեալ ի ճշմարտիցն, եւ զչար գործոց զանուն առնու չար, եւ զհատուցումն բարկութեան անմահ տանջանացն․ զի ըստ արժանեացն է պարգեւք եւ պատուհասք։

Արդ մտաւորաց եւ բանաւորաց տուեալ զանձնիշխան կամս ի պատիւ եւ ի փառս, զի փառաւորեսցեն զբարեգործն Աստուած, եւ առաքինասէր վարուք յանձնիշխան կամաց յօրինեսցեն անձանց պսակս հրեշտակային կարգաւորութեամբ․ եւ շնորհս ընդունել ի տեառնէ յաղագս հանդիսաւոր եւ սուրբ վարուց առաքելութեան, մարգարէութեան, քահանայութեան։ Զի ճշմարտեալք ըստ ամենայնի առցուք զարքայութիւնն պատրաստեալ։ Զի որպէս Աստուծոյ սեփհական է արքայութիւնն, եւ մեզ կազմեցաւ սեփհական առնել զարքայութիւնն ի ձեռն ուղիղ հաւատոյ եւ ճշմարիտ վարուց վասն բազում սիրոյն որ սիրեաց զմեզ եւ եցոյց զերախտիսն։ Եւ որոց վարք անսուրբք եւ պղերգ են յառաքինութիւնս, եւ մոլախարք եւ մեղսասէրք, նոքա նուաղեալ են ի փառացն Աստուծոյ․ * աղարտին, անարգին, անկանին ի շնորհացն [120] յամօթ եւ ի նախատինս ամենեցուն։

---

* Հռ. Գ, 23.

Եւ վասն այսորիկ Աստուած և տէրն զարքայութիւնն արդարոցն կազմեաց, և մեղաւորացն զպատիժս պատուհասից. զի ծանիցեն ամենեքեան զուղիղ դատաստանն, արդարք և ամբարիշտք։ Եւ մի ոք զարմասցի որ աստ ներէ, «Զի քաղցրութիւնն Աստուծոյ ասէ, զնոսա յապաշխարութիւն ածէ»։ Ապա եթէ ոչ զղջասցին, առանց ողորմութեան դատեսցին յաւուրն բարկութեան երևման։ Եւ տեսցեն մեղաւորք զփառս արդարոց, և կորացեալ հալեսցին ի տխրականս և յամօթն յաւիտենական. որ յերկրի մեծ գոյ զինքեանս քան զարդարսն համարեալ՝ զհպարտութիւն ոչ թողացուցանէին տեսանել՝ զինչ արդարքն իցեն և [121] զինչ մեղաւորքն։ Բայց զկնի վճարելոյն [122] երևի արդարոցն փառք և մեղաւորացն [123] ամօթն յաւիտենից։

Եւ այս յայտնի է, զի ոչ տոհմից փառաւորութիւն փառաւոր առնէ առ Աստուծոյ, այլ առաքինութեան բարետոհմութիւն։ Զի ի Հայս ոչ ինչ մեծագոյն և ի Պարս՝ քան զարշակունեաց ազգս և տոհմս. որ և յԱբրահամէ սերեցան աստ, նա և յամենայն ազգս թագաւորք երկրի ըստ անսուտ բանին տեառն ամենեցուն։ * Այլ եթէ ոչ զգաստասցին ի բարի կրօնս, [124] աւելի պատուհաս ընկալցին ի տեառնէ։ Եւ ծառայք նոցա որ հաճոյ եղեն Աստուծոյ, թագաւորեալք փառաւորեսցին ի տեառնէ. և նոքա պարտաւորեալք յաղագս մեղաց՝ պատժեսցին յարդար իրաւանցն։ Եւ թագաւորք և իշխանք և դատաւորք եթէ արդարախորհք և արդարակշիռք ի յիրաւունս Աստուծոյ, և արդարադատք [125] ըստ հոգևոր մասինն և ըստ մարմնաւոր, որբոյն և այրւոյն տեսուչք և ամենայն զրկելոց խնամակալք, և ձեռնտու ամենայն վտանկելոց, նոքա են հիմունք բարեաց, որ հաստատեալ ունին զաշխարհ հնարագիտու-

* Ծննդ. ԺԷ. 6.

Թեամբ իւրեանց ի հնարս[126] սիրոյ ամենեցուն արարչին։ Որով աշխարհի բարին յառաջանայ ի գովեստ փառաց շնորհացն Աստուծոյ, և ի գովութիւն ամենազօր տէրութեանն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. որում պատիւ իշխանութիւն և փառք վայելեն այժմ և միշտ և յաւիտեանս ամէն։

ԵՐԱՆԵԼՈՅՆ ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ՀԱՅՈՑ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ [1]

ՎԱՍՆ ՏՐՈՑ ԻՄԱՍՏՈՒԹԵԱՆ ՈՐ Ի ՀՈԳՒՈՅՆ ՍՐԲՈՅ ՊԱՐԳԵՒԵՑԱՒ ՍՈՒՂ ԻՆՉ ԲԱՆՍ

ԻԱ

ԱՆԲԱՒ *են խնամք տեսչութեան արարչին,* [2] *և լուսաւորութիւն ի* [3] *յօրինուածս արարածոց իւրոց։ Զի որում շատն տուաւ, բազումս խնդրէ զարմոխ բարեացն Աստուած. և որում սակաւն, յաւելուածս շահիցն ըստ առաւելն առցէ զշահսն։ Որպէս յառակս տաղանդացն է իմանալ յաւելուածոյն* [4] *ի սակաւուցն, և ընտրողական մտօք, զոր ետ Աստուած հրեշտակաց և մարդկան. զի լիցին արբանեակք բարերարին կամացն* [5] *և քարոզք շնորհացն նորա, սերմանել զերախտիս նորա ընդ ամենայն արարածս հաւանական կամօք և ընտրողական շնորհիւ։ Եւ զի գոն առաւելութիւնք իմաստութեան և զօրութեան և մեծութեան յերկինս և յերկրի։*

Զայս լուսաւորական ուխտ՝ [6] *գիտութեանն Աստուծոյ կարգեալ է ի մեզ. զի որ բազումն առ՝ առաւել սիրեսցէ, և զառաւել բարիսն ընծայէ Աստուծոյ.* [7] *իսկ որ սակաւն, և այն յԱստուծոյ խորին գիտութենէն ըստ կարին և ըզմտերիմ շահիցն զիրաւն* [8] *խնդրէ։ Եւ դարձեալ որ դժնդակ վարս ունին, և առ նոսա է զանազանութիւն չարի առաւել և կամ նուազ։ Եւ որք դառնան, ոչ անտես առնէ* [9] *ի խնամոց սիրոյն, թէպէտ և արբանեակք եղեն չարին ի կամակար մտաց. զի այսու ցուցցի բարերարութեան խնամք։ Զի մի՛ ոք կարծեսցէ ակնառութեամբ բաշխել զշնորհս յարարածս,* [10] *այլ ըստ արժանեացն։*

Առնէ այցելութիւն և անարժանիցն, թէպէտ և ոչ զգան. զի խաւարեալ է առաջնորդական միտքն, և ոչ տեսանեն զլոյսն իւրեանց: [11] Զի մտահոսան խորհուրդ [12] երկասիրաց ոչ թողացուցանէ [13] տեսանել զպատշաճն. այլ ի հոգս մնասակարս ծփին, յորոց բարի ինչ ոչ, [14] այլ չար: Եւ վասն այսորիկ արգելեալ է ի նոցանէ շնորհն, զի արգելեալ է ի նոցանէ սուրբ սիրոյն կամք և առաքինութեանցն յօժարութիւնք, բազմադարման երախտիքն կատարեալ հանդիսիւքն բազում համբերութեամբ [15] և ճշմարիտ հաւատով. որպէս զի արժանի լինէին արքանեակք ճշմարտութեանն ի կեանս, և ի փառս անձին և այլոց: Եւ եթէ արդարոյն միայն էր բազմացուցեալ [16] զմիտս իմաստութեանն, երևէր թէ յաղագս այնորիկ յառաջանան արդարք յառաքինութիւնն. այլ ամենեցուն իմացեալ, [17] զի զարդարսն՝ Աստուծոյ երկիւղն յորդորէ, և զմեղաւորս աներկեղութիւնն լքուցանէ: Եւ վասն այսորիկ մեղան և խաւարեցան ի խորհուրդս իւրեանց և կուրացան մեղօք անմտութեամբ: Որք զանձինս իմաստունս համարեցան, * և յաչս [18] իւրեանց խորհրդականք, և զճանապարհս իմաստութեան ոչ ծանեան. ** զի ոչ է երկիւղ Աստուծոյ առաջի աչաց նոցա: Եւ վասն այնորիկ ապականեցան և պղծեցան, և ընդ ուղիղն [19] ոչ գնացին:

Բայց աստուածասիրաց իմաստութեանն յառաջնորդել յարդարութիւնն ամենայն ի լաւն և յառաւելն, զի միշտ անքակ մնացէ ի վերին իմաստութենէն ի սուրբ և ի խաղաղարար և լի պտղովք բարեօք: *** Զի ստուգութեամբ կարգօքն լուսաւորեալ՝ ի միտ առնու զարդարութիւն ճշմա-

* Հռ. Ա, 22.
** Հռ. Գ, 17.
*** Յակ. Գ, 17.

րիտ, և ուղղէ զիրաւունս * արդարութեան [20] միշտ: Զիմաստութիւն խօսիմ առ [21] կատարեալս, որ գիտեն որոշել զմշտնջենաւորսն յանցաւորացս. զիմաստութիւն ոչ զաշխարհիս այսորիկ զխափանելոց, այլ որ յԱստուծոյ արդարութիւնք են, ** ճշմարիտ հաւատք և սուրբ սէր, սրբութիւն և խոնարհութիւն, հեզութիւն և ճշմարտութիւն ամենայն առաքինութեամբ յարդարեալ [22] աչիւն Աստուծոյ. և զգուշանալ ամենապատիր պատրանաց, և որոշել ընդրողական իմաստիւք զբարին խորհրդոց և բանից և գործոց: Զի դուռըն կենաց իմաստութեանն բաց է. և հակառակորդք բազում են գործակցաւ բանսարկուին որ որսայն զորդիս մարդկան ի կորուստ: Այլ Աստուած ոչ թողու զյուսացեալս և զապաւինեալս իւր, որ կարդան առ նա ի տուէ և ի գիշերի. և խնդրեն զողորմութիւն և զյաղթութիւն առ ամենայն լնաակարութիւնս դիւաց. զի փառաւորեսցի Աստուած այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ամէն:

* Առակ. Ա, 3.
** Ա. Կոր. Բ, 6.

ԵՐԱՆԵԼՈՅՆ ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ՀԱՅՈՑ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ

ՎԱՍՆ ԱՆՓՈՓՈԽ ԻՆՔՆՈՒԹԵԱՆ ԷՈՒԹԵԱՆՆ ԱՍՏՈՒԾՈՅ

ԻԲ

Որ տկարութիւն դնէ աստուածութեանն զօրութեանն, տարբս ճշմարտութեան հաւատոյն է: Զի ասեն, երբեմն կարող և երբեմն ոչ: Անմիտք.[1] եթէ Աստուած տկարանայ, ո՞վ է որ զօրացուցանէ:[2] Ի բաց լիցի չար վարդապետին և չար ուսմունքն. զի Աստուած կարող է և կատարեալ. ոչ երբէք նուազէ ի կատարելութենէն և ի զօրութենէն այլ զամենեսեան լնու և զօրացուցանէ, և ինքն ոչ յումեքէ լնու և զօրանայ:[3]

*Վասն այսորիկ արարչութեանն անուն հաստատեալ[4] կայ Աստուծոյ միշտ. և ի հրեշտակաց և ի մարդկանէ զառաքեալս և զմարգարէս և զայլս ընտրեալս, զի եղիցին վըկայք ճշմարտութեան աստուածգիտութեանն և արդարասէր և սուրբ վարուց. այլ և զօրութեամբ, նշանօք և արուեստիւք, զի նոքօք Աստուած փառաւորեսցի: Եւ ոչ օգնութիւն առնու արարիչն յարարածոց յերկնաւորաց և յերկրաւորաց. այլ նա նոյն է օգնական և զօրացուցիչ: Զի որպէս մարգարէին[5] ասէր Աստուած, թէ «Մինչև ըստեղծեալ էի յորովայնի գիտեմ զքեզ. և մինչև ելեալ էիր յարգանդէ՝ սրբեցի զքեզ շնորհօք մարգարէ». * Այնպէս ըստ կանուխ գիտութեանն իւրոյ հրաւիրէ և կոչէ և արդարացուցանէ և փառաւորս առնէ սիրով: ***

---

* Եր. Ա, 5:

** Հռ. Ը, 30:

Զի ամենայն արարածք յարարչէն միշտ կարօտանան օգնականութեան, և ոչ արարիչն յարարածոցս: Զի անփոփոխելի է Աստուած, և փոփոխումն ունին արարածք. որպէս տղայն յերիտասարդութիւն, և երիտասարդն ի ծերութիւն, և ծերն յապականութիւն. և որպէս գարուն յամառն, և ամառն յաշուն, և աշուն ի ձմեռն՝ որ խափուցանէ [6] զամենայն կենդանեաց յորդորումն և զանկոց և զբուսոց: Եւ արեգակն փոփոխումն ունի ըստ ժամանակաց նոցա [7] ըստ սահմանելոյն Աստուծոյ զերկայնութիւն աւուրց և զպակասութիւն: «Ի ծագաց երկնից են ելք նորա, ասէ. հանգիստ նորա ի նոյն. և ոչ ոք իցէ՝ որ թաքիցէ ի լուսոյ տապոյ նորա». * և այսպէս կայ ի սպասաւորութիւն ըստ հրամանի արարչին յարարածս: [8] Նմանապէս և լուսին զիւրն ունի սպասաւորութիւն զժամանակացն զփոփոխումն ի մաշելն և ի լնուլն. զի նովաւ ծանիցուք զմաշումն երկրաւորացս և զնորոգումն յարութեան: Այլ և աստեղք ըսպասաւորեն ի գիշերի նաւագնացաց, և ըստ այլ ևս շարժմանց առ ի պէտս մարմնաւորաց. այլ ոչ ըստ հեթանոսական բարբանջմանցն, որ բախտս և ծնունդս ասեն:

Զի Աստուած է որ արար զամենայն և յօրինեաց, և սահման եդ և ոչ անցանեն ըստ կարգին: Եւ ամենայն արարածք ի նմանէ են, և կան ունին ի խնամակալ զօրութենէն յօդուածովք [9] իմաստութեան: Եւ գիտութիւնք հնարից և արուեստք պիտոյից և կարգք յօրինուածոց և չափք կշռոց ի նորա տեսչութենէ և ի խնամոց յօրինեալ է: Եւ չիք ոք գեր ի վերոյ քան զնա և կարող, որ ի նմանէ առնու զհնարագիտութիւն կամ զզօրութիւն: Զի ինքն իսկ է ամենայն յամենայնի աղբիւր բարեաց, որ լնու զերկինս և զերկիր և որ ի նոսա արարածք են: Որ յոչընչէ արար զամենայն, և՛ դարձեալ եղծանէ որպէս և կամի: Եւ նորա առաջ գիտութիւն [10] և հանճար և իմաստութիւն և զօ-

*բութիւն։ Որպէս և յարարածս է տեսանել. որ զօրութեամբ բարձեալ * [11] ունի զջուրն երկինք՝ որ ի վերայ քան զնա, և երկիր զծով և զգետս և զլերինս և որ այլ ևս արարածք իցեն։ Եւ ոչ կարօտանայ սեանց և օգնականի և հիմանց երկինք և երկիր. այլ զօրութեամբ նորա պահեալ կան, և ոչ ապականին առանց նորա **։ [12]*

*Արդ որպիսի պատիժս պատրաստեալ է որ խօսին զԱստուծոյ զհայհոյութիւն։ Նոքա տկարք զօրութիւն ստանան. նոքա արդարք խրախուսեն և յաղթեն հակառակորդաց բանաւորաց, և հանդիսանան ի պահել զպատուիրանս նորա, և իմաստնանան ի բարիս։ Ո՞վ է վերակացու և և օգնական վտանգելոց ի նեղութեան՝ որ առնէ ըզփորձութեան զելս, *** եթէ ոչ նոյն Աստուած։ [13]*

*Այլ և զայնս յետս հարցուք զչար լեզուսն, որ ի վերին զօրացն պէտս ունին օգնականութեան, կամ յերկրէս արդարոց առեն զամենակալն Աստուած։ Զի ոչ ինքն ի նոցանէ առնու օգնականութիւն, [14] այլ սպասաւորութիւն վասն այնոցիկ՝ որ ժառանգելոցն են զփրկութիւն նորօք ըստ կամաց արարչին։ **** Զի նորա իսկ են արարածք վերին զօրք յանգոյից արարեալ. և ի նորա շնորհացն ընտրեցան սուրբք ի մարդկանէ։ Եւ զմտաւորս և զբանաւորս զորս հաստատեաց յանձնիշխան կամս, և դարձեալ փառաւորէ զողջախոհսն ի միասին զերկնաւորս և զերկրաւորս, որք պահեցին զհրամանս նորա և ժառանգորդք արքայութեան նորա եղեն։ Եւ երևեցի Աստուած ամենայն յամենայնի հրեշտակաց և մարդկան անդանօր։ Զի Բանիւ տեառն եր-*

---

* Սաղմ ԺԸ, 7.

** Յովբ. ԼԸ.

*** Ա. Կորնթ. Ժ. 13.

**** Եբր. Ա, 14.

կինք և երկիր հաստատեցաւ, և Հոգւով բերանոյ նորա ամենայն զօրութիւնք նոցա: *

Եւ յաղագս այնորիկ սուրբ մանկունքն ի հնոցին զամենայն արարածս ի փառաբանութիւն ամենակալ և ամենազօր և ամենապարգև տէրութեանն [15] յորդորեն հանապազ: Քանզի ասէին. ** օրհնեցէք ամենայն գործք Տեառն ըզ-տէր օրհնեցէք զարարիչն երկնի և երկրի և որ ի նոսա արարածք իցեն, որ երևելին և որ ոչն երևելին: Զամենեսեան յանուանէ կոչեն ի գովեստ օրհնութեան և փառաբանութեան ամենասուրբ անուանն, [16] զմտաւորս և զբանաւորս, զտիւ և զգիշեր, զլոյս և զխաւար, զծով և զցամաք զողակօք և զեռնօք, զգազանս և զանասունս, զսողունս և ըզ-թռչունս, զամպս և զանձրևս, և զեղեամն և ըզ-ձիւն, զցուրտ և զտօթ, զօդս և զմրրիկս, [17] զառունկս և ըզ-բոյսս, զլերինս և զբլուրս, զդաշտս և զանդունդս խորոց, զվիշապս և զկէտս, զհուր և զջուր աղբերաց և գետոց: Ի վերայ ամենայնի զԻսրայէլ կոչէ յօրհնութիւնս. յորոց ընտրեալ հարքն և մարգարէքն և առաքեալքն և մնացորդք ընտրութեան շնորհացն երևեցան ծառայք Աստուծոյ բարձրելոյ և քահանայք Տեառն, և անձինք և հոգիք արդարոց և սուրբք և խոնարհք սրտիւք. և ի վերայ ինքեանց աւարտեն զօրհնութիւնն առ Աստուած, զի մի՛ այլ ազգ ինչ թուիցին. այլ զի ծանիցեն ամենեքեան թէ և նոքա արարածք իցեն ամենեցունց արարչին, զորս ի փառաբանութիւն կոչեցին հոգևոր երգովք անուամբք:

Որ և մեզ աւանդեցաւ այս հոգևոր երգ. զի այսպիսի հոգևոր երգովք [18] յօրինուածովք խորհրդածութեամբ ըստ տօնից, ըստ Քրիստոսի մարդանալոյն, և մերոյ փրկութեան,

* Սաղմ. ԼԲ. 6.

** Դան. Գ. 57.

և նահատակութեան սրբոց յիշատակաց, և զղջման ապաշխարողաց, և հանգուցելոց յայսոսիկ շարալծեալ, օրհնեսցուք, գովեսցուք և բարձր արասցուք ամենասուրբ Երրորդութիւնն, որ արար զամենայն արարածս, և ետ մեզ մխիթարութիւն և զլոյս բարի ի փառս իւր։ Զի որ անսկիզբն է և ամենիմաց և մշտնջենաւոր և աղբիւր ամենայն բարութեանց վերնոց և ներքնոց, նորա խնամովք ի բարի գործս արարան, և կան ի կամս նորա միշտ։ Զի ամենայն եղեալք՝ որպէս գոյութիւն բնութեանցն եկամուտ է, այսպէս և ամենայն ինչ որ ըստ սոցայն է ըստ իւրեանց կարգին եկամուտ է. իբրու գիտութեան և իմաստութեան, և ամենայն քաջաց և առաքինեաց է զօրավիգն։ Որ ի չգոյէ ի գոյ էած, և և երևելիս և փառաւորս արար զսուրբս և զարդարս. * և հրաւիրանօք կոչեաց ** յիւր արքայութիւնն և ի փառսն [19] յանփոփոխ երանութիւնսն, յանապառ յուրախութիւնսն, և յանեղծ և յանապական կեանսն։ Ուստի հեռի են ամենայն տրտմականք և ախտականք, և մերձ յանմատոյց լոյսն. ի փառս և ի գովութիւն և օրհնութիւն ամենասուրբ Երրորդութեանն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ այժմ և միշտ յաւիտենից [20] յաւիտեանս. ամէն։

* Հռ. Դ, 17.
** Հռ. Ը, 28.

ԵՐԱՆԵԼՈՅՆ ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ՀԱՅՈՑ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ

ԽՐԱՏՔ ՃԳՆՈՒԹԵԱՆ [1] ԵՒ ՑՈՅՑՔ ՀԱՆԴԻՍԻՑ ՈՐ ՅԱՌԱՔԻՆՈՒԹԵԱՆ ՑՈՐԴՈՐՄՈՒՆՍ [2]

ԻԳ

ԱՄԵՆԱՅՆ ոք որ հրաժարեցան յաշխարհէս և ընծայեցին Աստուծոյ զանձինս ի հնազանդութիւն ճշմարտութեան սուրբ հարցն աւանդից՝ կուսութեամբ ճգնաւորեալք [3] յաղագս խոստացեալ աւետեացն, զգոյշ կացցեն ի խորհրդոց և բանից և գործոց. զի մի խայթեսցէ դարանակալ օձն, * և խափանեսցէ ըստ Աստուծոյ զգնացս սրբութեան և արդարութեան առաքինասէր վարուց։

Ամենայն հոգևոր խրատուց անխարդախ կեալ. [4] բարկութեանն զհեզութիւնն միշտ. անզգամութեանն զհանդարտութիւնն. թշնամութեան զբարերարութիւն. [5] անհնազանդութեանն զհնազանդութիւնն. ստահակութեանն զհաւանութիւնն. անհամբերութեան զհամբերութիւնն. ոխակալութեանն զանոխակալութիւնն. մախանացն զաննախանձութիւն. դառնութեանն զքաղցրութիւնն. չարութեան զբարութիւն. անգործութեանն զգործասիրութիւնն. մեղմեխութեանն զառոշնութիւնն. յարատութեանն զհամեստութիւն. կատականաց և ծաղեր զարտասուս. ատելութեանն զսէրն սուրբ ունել. անյուսութեանն զյոյսն առնուլ. տրտմութեանըն զզուարթութիւնն. փորձանաց զերկայնմտութիւն. ագահութեանն զցափաւորութիւնն. ընչասիրութեանն զարհամարհանս. պատուասիրութեանն զնուաստութիւնն. թերահաւատութեանն զհաւատս ճշմարիտս, և որ այլ ևս են չա-

---

* Թիւք ԻԱ, 6.

րին ձեքենայք՝ որ ընդդէմ ճշմարտութեանն զպատերազմ տանեն ընդ աչս և ընդ լսելիս և ընդ ունչս և ընդ ճաշակելիս և ընդ լեզուս և ընդ ձեռս և ընդ ոտս և ընդ սիրտս՝ որ խորհրդոցն է շտեմարան ի լաւն կամ ի վատթարն հակամիտել: Ջորս պարտ է վերագոյն լինել [6] ամենայն վնասակարաց՝ տարբինակէր փորուք ըստ յառաջ տացելոց հանգամանաց խրատուց, որ ընդդէմ չարեաց ըղպատերազմն տանէ գյարուցեալսն ի վերայ ճգնաւորացն ճակատամարտ միշտ: Յայտնի է [5] մարտ մեծ. և դարձեալ յաղթութիւն մեծագոյն, որովք հակառակամարտն կործանեսցի՝ որ յայտնի է պանծացեալ, և հրապուրանօք յուսոյ յաղթել նորամտիցն:

Բայց դու, ով անձն, որ ընձայեցար Աստուծոյ, մի՛ ընա քեզ խորհրդակից առնուր. այլ մարտիր զբարիոքն մարտն, և բուռն հար զայսոցիկ խրատուց, անմոռաց ունելով զախոյեանն սուրբ ճգնաւորաց, որ շալեն և պատեն զոգիս և զմարմինս: [6] Ուշ ունելով մտերիմ խորհրդով և արժանաւորապէս ըստ աւետարանին Քրիստոսի կրօնաւորիլ: Մերկանալ զհին մարդն աշխարհական յանդգնութիւնս [7] ամենայն, և զգենուլ զնոր մարդն ամենայն բարի գործովք զարդարեալ ներքոյ և արտաքոյ սուրբ և անարատ կատարեալ արդարութեամբ և որբեալ յամենայն ցանկութեանց երկրաւորաց:

Նախ զատուածսիրութեան զհանգամանս յանձին հաստատել սուրբ սրտի [8] և անկեղծաւոր հաւատով. պատրաստ լինել ըստ արժանի իւրոյ ընծայութեանն յոր կոչեցաւն. յամենայն բծից անարատ և մաքուր և հաճոյ Աստուծոյ լինել: Մտօք և ամենայն անդամովք հաստատուն և անշարժ և անդրդուելի կալ ի կարգի ճգնաւորական հանդիսիցըն: Մարտնչել ի հոգևորական մարտին ընդդէմ հանապազորդեան թշնամւոյն. որ ընդ զգայութիւնսն և ընդ խոր-

հուրդան ի ներքս պատերազմի և յաղթի ի վերին օգնականութենէն. իմաստութիւն հոգւոյն առաջնորդել [9] յամենայն արդարութիւն, և ի վայր կործանել զհակառակամարտն բարեձևութեան [10] կարգաց և կրօնից: Զի զէն զինուորութեան [11] ճգնաւորաց չէ մարմնաւոր, այլ հոգևոր յԱստուծոյ առ վանումն չարին: * Անարգութեանն զարգութիւնն ի ներքս ամբարել յամենայն անդամսն. և յանմաքուր խորհուրդան զողջախոհութիւն սրբել [12] յամենայնի: Անկարգութեանն զպարկեշտութիւնն. արբշռութեանն զժուժկալութիւնն. շուայտութեանն զհամեստութիւնն. ծուլութեանն զհանդէսս առ ամենայն ջանս: Թուլութեանն. զպնդութիւնն. ձանձրութեանն զփոյթն. ամբարտաւանութեանն զխոնարհութիւնն. հպարտութեանն զնուաստութիւնն. սնափառութեանն զանփառութիւնն. ստութեանն զստուգութիւնն. [13] երդմնահարութեանն զճշմարտութիւնն. խորամանկութեանն զկատարեալ սէր:

Արդ զգուշացեալ ամրացեալ կացցես աղօթիւք և պահովք ջերմեռանդ արտասուօք, սուրբ սիրով, շնորհալից յուսով և բաղձալից գթով առ Աստուծոյ կամսն: Ահիւ և երկիւղիւ ի բարեպաշտութեան ջանս յառաջանալ միշտ, և առաւելուլ ի բարի գործս, և ոչ պակասեցուցանել յառաքինութեան վաստակոց յերևելեաց կամ յաներևութից. և զհանգամանս չարին խափանեցանել [14] հանդիսաւոր յառաջադիմութեամբ: Զփառասիրութիւն զամենայն ի բաց ընկենուլ զցանկութիւն չարեաց և զմեղս զխորաշորժս իրաւամբք արդարութեան, առողջութեան անարատութեան: Ամբիծ երախտեօք սուրբ սիրոյն անհանգիստ կալ ի ճգնաւորական մշակութեանն ըստ բարերար սիրոյ երախտեացն Քրիստոսի Աստուծոյ առ ի հնազանդութիւն Աստուծոյ և առ որս հաղորդութիւնն եղև սիրով:

* Բ. Կորն. Ժ. 4:

Զի ճշմարտեալ պահեսցէ [15] զմիաբանութիւնն յօղիւ խաղաղութեան անփորձ մտածութեամբք առ ի կատարեալ հաւանութիւնն և ի հնազանդութիւն եղբայրութեանն և հաւատացեալ առաջնորդին. որով և զխոստովանութիւնն նովաւ ընծայեաց Աստուծոյ ստուգապէս. որով և զպտուղ ապաշխարութեանն առնէ ըստ սխալանաց խորհրդոց և բանից և գործոց: Զի զթողութիւն մեղացն առցեն ի փրկչէն վկայութեամբք առաջնորդին և եղբօրն. [16] և յայնոսիկ անշարժ հաստատուն արմատացեալ [17] կայցեն ի նոյն վանս: Եւ մի երկմտեսցեն. զի որ երկմիտն է, նման է հողմակոծեալ և տատանեալ ալեաց ծովու. մի ակն կալցի մարդն այն առնուլ ինչ յԱստուծոյ բարիս: * Այլ ճշմարտեալ հաւատով և անբիծ վարուք կատարեսցէ զառաքինութիւնն ահիւ Աստուծոյ ի շնորհաց սուրբ Հոգւոյն զօրացեալ համբերութեամբ բազմաւ ըստ Առաքելոյ խրատուն, ի նեղութիւնս ի վիշտս, ի չարչարանս, ի գանս, ի բանդս, ի խռովութիւնս, յաշխատութիւնս, ի հսկմունս, ի պահս, ի սրբութիւն, ի քաղցրութիւն, ի բարութիւն [18] Հոգւոյն սրբոյ յարդարեալ: **

Զի որ սիրէն զիս, ասէ տէրն, զպատուիրանս իմ պահեսցէ զոր սուրբ Հոգին ազդեաց. ապա ես և Հայր իմ եկեսցուք և օթևանս առ նմա արասցուք: *** Ո՛րքան է մեծութիւն և փառք և շնորհք, որք անճառ լինին ամենասուրբ Երրորդութեանն. զի «Բնակեցայց ի նոսա, ասէ, և սիրեցից [19] և եղէց նոցա Աստուած, և նոքա եղիցին ինձ ի ժողովուրդ, ասէ տէր ամենակալ»: ****

Արդ քանզի որ զայս ուսեալ ունին ճգնաւորք, կատարեսցուք [20] զբարութիւն ահիւն Աստուծոյ. անբիծ անարատ

* Յակ. Ա. 7.
** Բ. Կոր. Զ. 5.
*** Յովհ. ԺԴ, 23.
**** Բ. Կորն. Զ, 16.

սուրբ սիրով հնազանդել ընդ ամենահեշտ լծովն՝ [21] որ թեթեւ է առաքինեաց անձանց եւ ծանր աշխարհասիրաց՝ զորս եւ կոչեաց քաղցր ձայնիւ. եւ ասէ. Եկայք առ իս ամենայն աշխատեալք եւ բեռնաւորք, եւ ես հանգուցից զձեզ, առէք զլուծ իմ ի ձեզ, եւ ուսարուք յինէն զհեզութիւն, ըզխոնարհութիւն եւ զհնազանդութիւն եւ զամենայն արդարութիւնս, եւ գտջիք հանգիստ անձանց ձերոց. զի լուծ իմ քաղցր է յաղագս յուսոյն, եւ բեռն իմ փոքրոգի * յաղագս առնել վարձուցն [22] հատուցմանց:

Զամենայն զժնդակ ապարասանութիւնս զբարուց շարժմանց սանձել խաղաղարար ազատութեամբն եւ անարատ սրբութեամբն, եւ մտանել ի նաւահանգիստն հանդարտութեան հոգւոյ եւ մարմնոյ, եւ յամենայն վշտագին հարուածոց չար ցանկութեանց ազատանալ: Ունկնդիր լինել առաջնորդաց խրատուց եւ հպատակ կալ նոցա հրամանացն. ** եւ նոքա մի անհոգ լիցին ժողովրդեան ուխտին, զի համարս տալոց են վասն նոցա յաւուրն այցելութեան: [23]

Եղիցի յամեննեսեան ճշմարտասիրութիւն. մի բանսարկուս, մի խորամանկս, մի հակառակօղս առ հրամանս վերակացուին, [24] մի տրտնջօղք ի գործ կամ յայլ ինչ իրս, մի խռովարարք եւ թշնամանօղք: «Զի որ զձեզ խռովեցուցանէ, կրեսցէ դատաստան ո՞ ոք եւ իցէ» ասէ Առաքեալ: *** Այլ զհետ երթալ խաղաղութեան եւ զսուրբ սիրոյ. եւ լինել որդիք Աստուծոյ եւ ժառանգակիցք Քրիստոսի, որ արար խաղաղութիւն յերկինս եւ յերկրի: Եւ հնազանդ լինել եւ հաւանել միմեանց երկիւղիւն տեառն: Անխզելի պահել զմիաբանութիւն եղբայրութեանն հաւանական սուրբ սիրովն, որ ի միմեանս կայէ

---

* Մատթ. ԺԱ. 28.
** Եբր. ԺԳ. 17.
*** Գաղ. Ե. 10.

և ոչ թողու քայքայել և անջատել ի միմեանց պատճառանօք՝ որ զանձանց վրէժ խնդրեն և ոչ զմիաբանութիւն սիրոյ։

Եւ [25] որ վերակացուն է զգաստ լիցի առ մերձաւորս և նախատեսս առ հեռաւորսն. խրատել զեղբարս խորագիտութեամբ ըստ ժամանակին, ըստ ընդունելութեանն, ըստ բարուց սրտին։ Զկրսերն խրատել յահ և յերկիւղ տեառն և ի հնազանդութիւն եղբարցն։ Եւ հաւանեալ ամենեցուն ի կամս առաջնորդին եղբայրութեանն՝ ոչ ինչ ի գործելեացն առանց կամաց նորա եղիցի։ Եւ որ արտաքոյ նորա կամացըն խորհի ինչ կամ առնէ կամ գործէ, պարտաւոր է ապաշխարութեան. զի զառաջնորդն արհամարհեալ՝ զԱստուած արհամարհէ. քանզի ասաց տէրն. «Որ զձեզ անարգէ, զիս անարգէ. և որ զձեզ ընդունի, զիս ընդունի. և որ զբանն ձեր պահեսցէ, զիմն պահեսցէ»։ *

Այլ խոնարհութեամբ և կամաւոր հնազանդութեամբ նուաճեալք առ հասարակաց օգուտն, և հաւանութիւն [26] Աստուծոյ պատուիրանին և հաւատացեալ յԱստուծոյ առաջնորդին։ «Զի որք են, ասէ, յԱստուծոյ կարգեալ են. և որք ընդդիմակացքն են, կրեսցեն դատաստան որք և իցեն»։** Եւ [27] հաւանեալ ի մի վանս և ի մի միաբանութիւն փառաց ամենասուրբ Երրորդութեանն միաշունչք և միախորհուրդք՝ ոչ ըստ գրգռութեան իրիք և ոչ ըստ սնապարծութեան, որպէս օրինադրէ Առաքեալ. այլ խոնարհութեամբ զմիմեանս առաւել լաւ համարել քան զանձինս։*** Նոքա են՝ որ զսուրբ սիրոյն զխուղն միշտ յինքեանս ունին, և պայծառ լապտերօքն մտանեն**** յառագաստն։ [28] Զօրս ամենակալ Հայրն

* Ղուկ. Ժ, 16,
** Հռ. ԺԳ, 1.
*** Փիլպ. Բ, 2 3.
**** Մատթ. ԻԵ, 10.

ուրախ առնէ յաւետիս երկնաւոր փեսային յանապատ ուրախութիւնն:

Բայց որ որոշին և մեկնին ի միաբանութենէ եղբայրութեանն, և զիւղ սիրոյն ոչ ունին. նոքա նմանեալք են յիմար կուսանացն, [29] որոց փակի առագաստն յաղագս շիջանելոյ հարսնկան ջահիցն: Որք լսեն ի ձայնէ փեսային, զի արդ ոչ ցուցէք յեղբարս զսէրն, և զմիաբանութեան կապն խզեցէք, երթայք ի խաւարն արտաքին: Եւ որք զմիաբանութիւն հոգևոր սիրոյ առ եղբայրութիւնն առաջի պահեցին և զմիամտութիւն առ վերակացուն, երանելիք են. և ամենայն բարի [50] հանգամանաց [51] և առաքինութեան ցոյցք ի նոսա է տպաւորեալ:

Եղբայր զեղբայր յորդորելով ի բարի գործս ի հանդէս բարի նախանձու ի սէր աստուածութեանն ամենայն հաւատարմութեամբ զիւրաքանչիւր գործն յառաջացուցանել փութասցէ, և զանդանդաղ զփառաբանութիւնն կատարել ի տէր. և օր ըստ օրէ յաւելուած լիցի ի լաւութեան և ի պիտանութեան: [52] Զգաստութիւն և զգուշութիւն եղիցի գործաւորացն որ ինչ [53] հաւատացաւ իւրոյն՝ զամենայն ստուգութեամբ աւարտեսցեն ի հաճոյս Աստուծոյ [54] և առաջնորդին և եղբայրութեանն:

Եւ հասարակաց պաշտօնն մի պատճառանօք ինչ խափանեսցի, բայց եթէ ի պէտս ինչ եկեղեցւոյն զբաղեալ հրամանաւ վերակացուին. [55] սակայն և անդ կատարեսցի աղօթքն: Եւ ամենայն ուրեք պաշտօն աղօթիցն հոգևորապէս կատարեսցի անխափան. ի նստել ի տան, ի գնալ ի ճանապարհի, ի գործել և ի ննջել և ի յառնել: Եւ չթողուլ ի միտաց զյիշումն [56] Աստուծոյ. այլ և զկամսն նորա առնել ըստ ամենայն արուեստից սրբութեամբ և արդարութեամբ. և մտօքն հանապազ գեգերեալ կացցէ ի դրունս ողորմութեանն Աստուծոյ անդադար խնդրուածովք եռանդնաւէր հոգւով և

արտասուօք ջերմեռանդ միշտ, դի ընդունելութեան արժանի լինիցին աղօթքն. և պարգևատու լինի ամենակալն Աստուած, որ զամենեցուն կամի զփրկութիւն, և արքայութեանն արժանաւոր լինել ի Քրիստոս Յիսուս:

Եւ զիւրահաւանութիւն [57] ճշմարիտ սուրբ սիրով առ վերակացուն եղիցի ամենեցուն. և մի ըստ իւր կամացն խնդրեսցէ զգործն ի նմանէ, այլ զոր նայն հաւատայ ի հասարակաց օգուտն, ի մարմնաւոր պէտս և ի հոգևոր շահս: Զի կարասցեն առնել ամենեքեան՝ թէ յորմէ հետէ ընծայեցաք Աստուծոյ, զամենայն կամս մարմնոյ և զմտաց խափանեցաք, և տուաք զանձինս ի ծառայութիւն նախ տեառն և ապա առաջնորդին ի հնազանդութիւն ըստ պատուիրանին Աստուծոյ, որ ի սուրբ Հոգւոյն [58] մեզ աւանդեցաւ: Զի որպէս անդամք մարմնոյն մի մարմին են յօդեալ և պատշաճեալ, սակայն իւրաքանչիւր զիւր ներգործութիւնն առանձին ունի, աչք տեսանեն, ականջք լսեն, ունչք հոտոտին, լեզու խօսի և բերան ճաշակէ, ձեռք գործեն, ոտք գնան և միտք իմանան, և նոյնու շարժին զգայութիւնքն ի գործ հոգևորաց և մարմնաւորաց, այսպէս ժողովուրդ Աստուծոյ սիրով յօդեալ և միաւորեալ ի կամս Աստուծոյ և առաջնորդական միտքն [59] որ զտեսչութիւն ի վերակացութեան՝ եղբայրութեանն ունի միշտ. և այլք զհնազանդութիւն ըստ իւրաքանչիւր ներգործութեան: [40] Զի որ թուին յանդամն եթէ տկարագոյնք են, կարևորք են այլոցն առ սպասաւորութեանն հանգամանս: Եւ որպէս չէ հնար յառողջ անդամացն հատանել, բայց ապականեալն յանբժշկելեացն ի բաց հատանի՝ որ առանց բժշկութեան ունի զվէրս. և զի ոչ է հնար յայլոց անդամոց յայլս յարել, նոյնպէս առանց բժշկութեան է որ ի միաւորեալ եղբայրութենէն հատանի և ի վանացն որոշի, և զուխտն և զսէր և զդաշինսն որ առաջի Աստուծոյ՝ անարգէ, և լինի պարտաւոր յաւիտենից [41] տանջանացն:

Բայց եթէ ի կամաց վերակացուին և ի հասարակաց եղբայրութեանն [42] բռնադատեսցի յեպիսկոպոսութիւն կամ յառաջնորդութիւն այլոց և ի քահանայութիւն՝ որ զնոյն կարգ ունիցին ի տէր։ Եւ զայս ոչ յօժար կամօք ընդունել։ Բայց եթէ յառաջնորդէն և յեղբարցն հարկաւորեալ բռնադատեսցի, բազում արտասուօք և ապաշխարանօք յաղագս փրկութեան այլոց հաւանեսցի, եթէ իցէ այնպիսի ոք՝ որ ոչ հաճոյեսցի անուն տեառն Աստուծոյ մերոյ. Բայց ճշմարիտ սուրբ սիրոյն ի յեղբայրութենէ և հաւատարմութիւն յառաջնորդէն մի հանցի. այլ որպէս զմիմեանս հագասցեն ի հոգևոր լրումն։

Նա և ամենայն ուղղափառ ժողովք եպիսկոպոսաց՝ որ զուղղափառ հաւատոյն հաստատեցին և կանոն սահմանեցին եկեղեցւոյ, և զայս սահմանեցին նզովիւք. Եղբայր ոք, ասէ, մի իշխեսցէ ի վանացն ելանել կալ այր և կամեսցի առանց կամաց առաջնորդին [44] և եղբայրութեանն. և որ ոք յանդգնեալ զայս առնէ, ընդ նզովիւք կապեսցի ի հարցըն։ Զի ամենայն ոք յոր ինչ կոչեցաւն՝ ի նմին կացցէ ասէ Առաքեալն Աստուծոյ։ * Զի ամենեքեան ի մի յոյս կոչեցան ի Քրիստոս. զի մի մարմին պատուական ի սուրբ մարմնոյ Նորա և յարենէ պատրաստեցան [45] ի փառաւորութիւն։

Ապա եթէ ունի ինչ պատճառս մեկուսանալոյ, մի ծածկեսցէ յառաջնորդէն և յեղբայրութեանն. և բազմացն վկայութիւնքն հաւատարիմ է առաջի Աստուծոյ և ամենայն ուխտին։ Զի արհամարհեալ ուրուք զօրէնսն Մովսէսի առանց ողորմութեան առ երկու կամ երիւք վկայիւք մեռանէր. իսկ ո՜րչափ սաստիկ պատժոց արժանի համարեսցուք զայնոսիկ՝ որ մարմնով և արեամբ դաշնաւորեալք ի միաբանութիւն ըստ ուխտի և հրաժարման յաշխարհէս իսկ-

* Ա. Կորնթ. Է. 20.

բան[46] կարգին ի պաշել զաւանդն միաբանութեամբ մինչև ցվախճան: Եւ գիտեմք զայն որ ասացն տէր. «Իմ են վրէժխնդրութիւնք, և ես հատուցից ասէ տէր՝ զհնոյն[47] և զնորոյն պատիժս»: *

Այլ այս ջանի ի մտի կացցէ վերակացուին՝ գաղտնի և յայտնի խրատ առ ամենեսեան, զի կարասցէ ուղղել զթիւրեալսն ի ճանապարհացն արդարութենէ ի ճշմարտութեան աւանդսն: Եւ յամենայնի ոչ անհոգ լինել ի խոստովանութիւնս և յուղղութիւնս հոգւոյ և մարմնոյ. զի զամենայն որք նմա հաւատացան՝ կատարեալս կացուսցէ առաջի բեմին Քրիստոսի: ** Զի որ արասցէ և ուսուսցէ, մեծ է առաջի Աստուծոյ: [48]

Այլ որ անտեսն է՝ համարեսցի զինքն Աստուծոյ մատակարար. աչիւ և երկիւղիւ անտեսեսցէ զհաւատացեալսն յԱստուծոյ զաւանդսն. և զգուշասցի անօթոյն. մի ի ծուլութենէ կորուսցէ, և կամ յարհամարհանաց արտաքս ընկեսցէ. և անփոյթ արասցէ[49] աւանդիցն յաճախ ի ծախս[50] առ ոչ ի հաճոյս Աստուծոյ. և կրեսցէ դատաստան ի տեառնէ՝ որ ի միտ առնու զամենայն զխորհուրդս և զգործս. զի ամենայն ինչ յԱստուծոյ է նուիրեալ յաղագս պիտոյից եղբայրութեանն: Մի հեղգասցի ի գործ կամ ի բաշխելն անհաւասար. այլ յամենայնի զԱստուած առաջի աչաց կալցէ, և աչիւն Աստուծոյ ստուգապէս մատակարարեսցէ հրամաննաւ վերակացուին: Արթուն և զգաստ լինել առ ամենայն կամս օտարութեան. ըստ իւրաքանչիւրոցն արժանի ըստ պիտոյիցն զդարմանն առնել: Ծերոցն հիւանդաց, ուկարաց, ճանապարհորդաց, վաստակաւորացն և որ ի վնասուցն կարգի իցեն, ըստ արժանեացն եղիցի մատակարա-

* Բ. Օր. ԼԲ, 35.
** Կող. Ա. 28.

բեղն հոգևորապէս ըստ Աստուծոյ։ Մի աչառանօք և կամ հեռի, զի մի զրկեսցին ի վարձուցն հատուցմանց. այլ որպէս մայր[51] գթովք առ ամենեսեան լիցի, զի տացէ զվարձն յամենակալ հօրէն՝ եկայք օրհնեալք հօր իմոյ, ժառանգեցէք զարքայութիւնն. զի որովհետև արարէք տնտեսութիւն եղբարց, ինձ արարէք։ * Թողում ասել և որք այսպէս ոչ արարին՝ զպատիժ պատուհասիցն, զհուրն անշէջ։

Եւ որք շաբաթուորքն են, կահուցն զգուշասցին, և ըղգործոն մտերմութեամբ կատարեսցեն։

Եւ տեսուչք հիւրոցն[52] մի անտես առնել զկարօտեալսն, և զհիւրն զարմանսն ըստ իւրաքանչիւրոցն զպէտսն լնլով զուարթամտութեամբ. և մի տրտմել առ խնդրելիսն,[53] այլ սիրով և անխռով զամենեսեան յուղարկել բանիւք և իրօք։ Եւ ինքեանք մի լուծցեն պատճառանօք հիւրոցն ըղպահս և զաղօթս, զի մի զրկեսցին ի վարձուցն Աստուծոյ. այլ զգաստասցին ամենայն գործովք ի ժամ աղօթիցն, որ մի ի հեղգացելոյն ի պատուհասն անկանիցին։ ** Եւ յամենայն իրս ի կամաց վերակացուին եղիցի հրաման. զի առաջեալն ի նմանէ ընդունելի եղիցի ամենայն յամենայնի ի կամս տեառն։ Եւ որ ինչ նորօք մատակարարին, նմա պարտ է գիտել զամենայն որպէս արժանն է։

Այլ և որ տեսուչք են եզանց հողագործաց կամ խաշանց արօտականաց և հօտից կթոց և գրաստուց բեռնակրաց, ամենեքին ուշ կալցին խնամածութեամբ,[54] և հաւատարմութեամբ ցուցանել զարդիւնս շահեկանս ամենայն ճշմարտութեամբ, որպէս Աստուծոյ գործավարք և իմաստուն մշակք արդիւնակարարք՝ ժողովել յշտեմարանս, զի լիցէ անմուրաց տալ ում պիտոյ իցէ ի նոցա աշխատութեանցն

---

* Մատթ. ԻԵ. 40։

** Ղուկ. ԺԲ. 45։

*պտղաբերութիւն ի տուն տեառն Աստուծոյ. և զհատուցումնըն առցեն յարարչէն ըստ իւրաքանչիւր վաստակոց. որ տեսանէ ի ծածուկ և հատուցանէ յայտնապէս յաւուրն այցելութեան զանսպառ բարիսն. որ ի սակաւուն հաւատարիմ եղեալ՝ ի բազում * բարիսն վայելեսցեն:*[55]

Սոյնպէս և որոց օգն հաւատացաւ՝ զիւրաքանչիւրոցն ըղպէտսն կօշկաց կատարեսցեն առանց հակառակութեան և ակնառութեան, և որ այլ ինչ պէտք են օգոյն:[56] *Ամենեցուն հեզութիւն եղիցի նպաստաւոր խնդրողացն և կատարողաց զառ ի պէտսն արժանաւոր սիրով և խոնարհ սրտիւ, զի ժառանգեսցէ զօրհնութիւնս:*

Նոյնպէս և ամենայն ոք որոց գործ հաւատացաւ և հոգք առ ի պէտս եղբայրութեանն, աշխւ և զգաստութեամբ և առանց խարդախութեան ըստ ամենայնի լիցի: Միշտ զԱստուած ունել առաջի աչաց, և ոչ խիկք ի ճշմարտութենէն վերջանալ. այլ ստուգապէս որպէս Աստուծոյ մշակ անխարդախ յամենայնի: Ամենեցուն գործավարաց և գործակալաց սկիզբն վերստին յերկիւղ տեառն լիցի. և երկիւղիւ յարմարել զգործն ի շահ օգտից հոգէխառն յառաջադիմութեամբ հաւատարիմ ի գործ մշակութեան անվեհեր փութով: Ոչ որպէս մարդկան հաճոյ, այլ որպէս Աստուծոյ՝ որ քննէ զսիրտս և զերիկամունս. ի միտ առնուլ զիւրաքանչիւրոցն զյօժարութիւն, զբան և զգործ: Որ հաւատարիմն են յամենայնի հոգևոր շահիւքն և մարմնաւոր ըստ Աստուծոյ պատուիրանին, և շինութիւն եղբայրութեանն ի հաւանութիւն ուխտին, ժառանգեն զկեանսն յաւիտենից:

Իսկ որ զհակառակութեան և զանսրտացաւութեան և ըղպերգութեան զմիտս ունիցին, մեկնեալ ի ճշմարտութենէն,[57] *ի հեռ և ի նախանձ, ի ստահակութիւն և ի տըր-*

* **Մատթ. ԻԵ, 21.**

տունջ, ի բամբասանս և ի շոգմոգութեան բանսարկել, բարկութիւնն Աստուծոյ կայ և մնայ ի վերայ նոցա. հուրն ահեղ և ամենափորձ՝ որ այրէ զխոտանսն, [58] և զուրբսն լուսաւորէ անշիջանելի լուսովն:

Եւ եղիցի վերակացուն հայր բարեմիտ, բարեխորհ և բարեգործ. օրինակ լինել ամենայն բարեձևութեան կարգաց և կրօնից, աղօթից և պահոց, խոնարհութեան և հեզութեան, ուղղութեան և ճշմարտութեան, տըքնութեան և արտասուաց, խաղաղութեան և հանդարտութեան, սիրոյ և երկայնմտութեան, իրաւանց և արդարութեան, աշխատութեան և ժուժկալութեան, պարկեշտութեան և զգաստութեան, անարատութեան և անբծութեան[59] անբամբաս յամենայնի ի վերագոյնն՝ ըստ օրինաց արդարութեան եղեալ յամենայնի. և հաստատեալ նմա յԱստուծոյ ժողովուրդ իմաստութեամբ և գիտութեամբ խրատել. ի սրբութիւն և յամենայն առաքինասէր վարս զաստուածային սէրն զօրացուցանել յանձինս, և արհամարհել զաշխարհիս սէր: Եւ երկաքանչիւրոցն հաստատիւք երևեալ [60] առ ամենեսեան՝ աստուածային սուրբ սէրն: «Զի որ սիրէն զիս, ասէ տէրն, զպատուիրանս իմ պահեսցէ. և որ ոչն սիրէ զիս, զպատուիրանս իմ ոչ պահէ»: *

Եւ զի վերակացուն հայր հոգևոր կոչեցաւ, և ծնեալքն առ ի նմանէ հոգևոր որդիք ըստ կարգի ճգնաւորաց. որ առաւել ունի զհանգամանս քան զմարմնաւոր ծննդոց. որպէս զմկրտութեանն ունի զնմանութիւն [61] ըստ ամենայնի: Եւ այսպէս լինել որդիք լուսոյ և որդիք արդարութեան՝ հրաժարեալք յաշխարհական ի զբաղմանց, որ մթացուցանեն զմիտս և խաւարեցուցանեն զգայութիւնս, և առնեն որդիք խաւարի և ժառանգք [62] դժոխոց:

---

* Յովհ. ԺԴ, 23.

Եւ զի պարտ է հոգևոր ծննդոց հոգևոր վարս ստանալ կատարեալ հնազանդութեամբ առ հոգևոր հայրութիւնն, նմին զխոստովանութիւնն Աստուծոյ ընծայել ստուգութեամբ, և մի սուտ ի խոստովանութեանն լինել: Ըստ ամենայն սխալանաց վնասուց զդեղ բժշկութեանն դիւրաւ ընկալցին. [63] Եւ առ ամենայն հրամանս հաւան և հպատակք, որպէս յերկնաւոր Հօրէն առեալ հրաման առ ի գործ պատուիրանին, որ զհասարակաց եղբայրութեանն զհանգամանս հոգւով և ճշմարտութեամբ: [64] «Զայն խորհել և անել որ և ի Քրիստոս Յիսուս, որ հնազանդ եղև Հօր մահու չափ և մահու խաչի»: * Եւ նա ոչ ամօթ համարի զկոչեցեալսըն և զհրաւիրեալսն ի կարգ աստուածային կրօնից եղբարս անուանել զնոսա ինքեան և ասել, «Պատմեցից զանուն քո եղբարց իմոց, ի մէջ եկեղեցեաց [65] օրհնեցից զքեզ»: **

Եւ այսպիսի հաւանական միօք և սուրբ սիրով վերաբերել յամենայն վնասակարացն՝ որ ընդ երկիր քարշէ, վերնոյն զհետ երթալ երկնայնոցն և անմահից, որ կուսութեամբ է նոցա սեպհականութիւնն և անարատ վարք և հանապազորդ փառաբանութիւն ամենասուրբ Երրորդութեանն: Զի մաքուր և անբիծ և անարատ կուսութիւն ընտանութիւն [66] ունի առ վերին զօրս երկնաւորացն ժողովսն. և զփառաբանութիւնն նմանապէս ունին առ Աստուած: Զի վարք ճգնաւորաց՝ երկնայնոցն նմանեցան, և ի նոցանէ ունին ըղհանգամանս կարգաց արուեստից ըստ ամենայն հանդիսից: Զի երկրաւոր բանակք ճգնաւորաց ճշմարտեալք սուրբ սիրով և անբիծ զգաստութեամբ՝ [67] յարդարեալք հրեշտակական կարգաւորութեամբ՝ զերկնաւոր բանակացն ունին զհամեստութիւն: Արդ պետք և իշխանք զօրացն անմարմ-

---

* Փիլ. Բ. 8.

** Սաղմ. ԻԱ, 22.

նոց որ սպասաւորութիւն ըստ իւրաքանչիւր կարգի ունին առ Աստուած կամաւ, և առ միմեանս և առ ազգս մարդկան, որպէս և կամք ամենեցունց տեառնն սահմանեցին զիւրաքանչիւրոցն զիշխանութիւն և զպատիւ և զսպասաւորութիւն ըստ նախախնամութեանն: Իսկ ստամբակեալն ի վերին իշխանացն բանակաւն իւրով ի բարւոյն ի վայր անկեալ՝ մեզ [68] պատերազմողք եղեն, և սատանայ անուանեցան և դևք. ըստ անուանցն զհակառակ բարւոյ զգործս ունին առ ամենայն մեղսասիրութիւն, ինքն և ամենայն չար զօրք իւր:

Եւ իմանալի է բանակս ճգնաւորաց՝ որք զհրեշտակային կարգս զգեցեալ ունին ի յերկրի. ի նոյն կարգս հրեշտակաց վերամբառնան ի տեղի անկելոց հրեշտակացն: Եւ «Տացի նոցա, ասէ [69] մարգարէն, տեղի անուանի առաւել քան զուստերաց և զդստերաց իմոց. և անուն յաւիտենական տաց նոցա, և մի պակասեսցին [70] փառքն»: * Զայս աւետիս ունին բանակք սուրբ ժողովոց, միաբանեալք սուրբ սիրով և առաքինասէր վարուք ընդ աստուածութեանն իսկ կապեալք և ոչ ի վայր բերեալք յերկնայնոցն յուսոյն պատրանօք բանսարկուին՝ որ մախացող է [71] ճգնաւորաց կրօնից, հանապազ թշնամի արդարութեան: Եւ նա է որ հրապուրէ և օտարէ ի ճշմարիտ աւանդիցն. զոմանս բաժանէ նախառութեամբ յեղբարցն պատճառանօք բարեգործութեան և սնոտի խաբէութեամբ ի մեղս, և է որ ընդ խորհուրդսըն և ընդ զգայութիւնսն ի ներքս մուծանէ զամբարշտութեան վնասսն:

Ցոյս այսպիսի ունել [72] կրօնաւորաց՝ բազում զգուշութեամբ կացցեն ի մշակութեան բարեձևութեամբ վարուց և սրբութեամբ երևելեօք և աներևութիւք. զի մի զրկեա-

* Ես. ԾԶ, 5.

ցին յայնքան առաքինութեան պատուոյն ի Հրեշտակականն դասուցն և ի փառացն, որ նոցայն աւանդեցաւ յորարչէն։ Լնուլ զպակասութիւն վերնոցն՝ ներքնովքս առաքինութեամբք վերաբերեալք ի գետնաքարշիցս, և հաղորդակից լինել բարւոյ քաղաքավարութեանն, [73] և ընդ նոսա միաձայնեալ՝ [74] ամենասուրբ Երրորդութեանն մատուցանեն [75] զփառս անճառելի օրհնութեամբ։

Եթէ այսպէս արդարացեալք ճշմարիտ հաւատով և անարատ վարուք կրօնաւորեալք և սուրբ սիրով, եղիցի նոցա երկիր նոր ի նորոգումն կենաց հաճոյիցն Աստուծոյ, և երկինք նոր * պայծառազգեստութեամբ, [76] զոր ակն ոչ ետես և ունկն ոչ լուաւ և ի սիրտ մարդոյ ոչ անկաւ, զոր պատրաստեաց Աստուած սրբոց կուսանաց և ճշմարտասէր կրօնաւորաց։

Այլ յիշատակօք վերնոցն յուսով՝ հարք բարեսէրք և բարեգութք և բարեխորհք լիցին նմանեալք Հօրն երկնաւորի, որ նախախնամական սիրովն իւրով [77] խնամէ զարարածս ամենայն հոգևորապէս և մարմնաւորապէս երևելի և աներևոյթ դարմանօք, հոգեխառն սիրով և բարեպաշտագոյն երևմամբ ի Քրիստոս Յիսուս։ Եւ որդիք բարեհաւանք և սըրբասէրք և ճշմարտասէրք, [78] որոշեալք յամենայն գժնդակացն [79] որ երևին և որ ոչն երևին։ Եւ բուռն հարեալ ըղհրեշտակական վարուց, սուրբ սրտիւ և անարատ [80] մարմնով, ողջախոհ խորհրդով և անկեղծաւոր հաւատով, իրաւախոհք և հնազանդք առ Հայրն հոգեացն և տեսուչ մարմնոցն։ Առ [81] որ միանգամ հանգուցեալ եղիցին հոգւով պաշտմամբ հաճութեանն, վստահութեամբ ընտանութեանն հոգևոր հարազատութեանն, անկարծիս միաւորութեամբ իբրև անդամք մարմնոյ առ ի միմեանս։ Քանզի մի մարմին

* Ես. ԿԶ, 22։

եմք ի Քրիստոս, պինդ կալցուք զխոստովանութիւն անշարժ յուսոյն, և սովին հաւատովք կատարեալք լիցուք, կացեալք միով հոգւով յարմարմամբք յօդիւք, ընդեալք սովին հաւատովք անխզելի կապակցութեամբ․ և ոչ մի իւիք բարեձևութեամբ խաբէութեան զամրութիւն միաբանութեան եղբայրութեանն քակել։ Վասն զի այս միայն աւանդ ի տեառնէ առաքելովքն անվրէպ մեզ հաւատացաւ, որ ասէրն՝ թէ «Այսու ծանիջիք յամենեցունց թէ աշակերտք իմ էք, եթէ սէր ընդ միմեանս անքակ ունիջիք», ** որ է գլուխ մերոյ կատարման։ Եւ առանց այսր՝ եթէ ոք առանձին մտաբերիցէ յառաքինութեան համարի, զոր և գործիցէ իսկ ի բարձրագունիցն առանց կամաց առաջնորդին և եղբայրութեանն, անընդունելի է Աստուծոյ, և ի մեղս համարեսցի։ Իսկ որ զճշմարիտ աւանդութիւնս հաստատուն պահեն, տաց նոցա ի տան իմում տեղի ի միասին բնակելով հոգևորօք և մարմնաւորօք․ և ոչ անջատեալ ի միմեանց, այլ սուրբ սիրով առ միմեանս կեալ միաբանութեամբ․ վասն զի սա է մայր ամենայն բարեաց։ Վասն այսորիկ յաճախագոյն ասեմ զբանս սիրոյն․ վասն զի այս է բարի և ընդունելի Աստուծոյ, և նոյն ինքն հրամանք նորին։

Այլ մի՛ ոք [82] խորհրդով յածիլ և մարմնով գայթակղիլ․ այլ մնալ ի լաւագոյն կարգաւորութեանն [83] ի կամս միամիտս և յիշատակս վերին որդեգրութեան Հօրն երկնաւորի և [84] մարդասիրի։ Առնուլ [85] զգրաւականն հոգևոր և ուսանել զհանգամանս․ և որոշեալ զէսն [86] և զերևեալսն՝ երկնայնոցն փափագելով [87] զերկրայինս արհամարհել։ [88] Եւ մեկնել [89] ի զբաղմանց աշխարհիս, [90] մերձ ի հրեշտակայինսն լինել վարս․ [91] որ զհանգամանս իւրացն իբրև ընդ հայելեաւ և առակաւ տայ տեսանել՝ լուսոյն առ ընդունելու-

* Յովհ. ԺԳ, 34. 35.

թեան աստէն, [92] որ ի ձեռն մարմնոյ և արեանն տեառն վերստեղծու ի զգաստութիւն, [93] Հանապազ արժանաւորապէս [94] Հաղորդելով աստ ճշմարիտ մարմանն և կենդանարար Քրիստոսի ազատութեանն, որ շնորհեցաւ սիրողաց Աստուծոյ և կոչեցելոց սրբոց ի կարգ աստուածային։ Եւ ի միւսանգամ գալստեանն իւրոյ [95] շնորհէ զանպառ բարիսն [96] ի Հայր և յՈրդի և ի Հոգին սուրբ. որում [97] փառք յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ԱՂՕԹՔ

ՅՈՐԺԱՄ ՅՈՐՈԴԱՅԹ ԱՆԿԱՆԻՑԻ ՈՔ

ԶՈՐ ԱՍԱՑԵԱԼ Է

ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԻՆ

ՕՐՀՆԵԱԼ *է անբաւ մարդասիրութիւն քո, տէր իմ Յիսուս Քրիստոս. ընդէ՞ր լքանես զիս. եթէ վասն մեղաց, դու միայն ես առանց մեղաց, և անուն քո զանոխակալութիւն և զմարդասիրութիւն ցուցանէ: Գթա յիս, վասն զի դու միայն ես մարդասէր: Ապրեցո զիս զանկեալս ի մեղս. վասն զի դու միայն ես առանց մեղաց: Հան զիս ի տղմոյ անօրէնութեան իմոյ, զի մի՛ ընկղմեցայց յաւիտեան: Փրկեա զիս ի թշնամւոյ իմոյ, քանզի ահա իբրև զառիւծ մռնչէ կամելով կլանել զիս: Արդ տէր իմ, փայլատակեա զփայլատակունս քո և կործանեա զզօրութիւն նորա. երկիցէ և խաւարեսցի յերեսաց քոց. քանզի տկար է և ոչ ունի զօրութիւն կալ առաջի քո և ոչ առաջի սիրողացն զքեզ: Տեսանէ զզօրութիւն նշանի խաչի քո և զարհուրի, և ամաչելով ի բաց հալածի յայնցանէ՝ որ կարդան առ քեզ: Այժմ տէր, կեցո զիս և ապրեցո, վասն զի ի քեզ ապաւինեցայ. հան ի նեղութենէ զանձն իմ, զի մի՛ իսպառ կորուսցէ զիս նենգաւորն՝ որ մարտնչի ընդ իս ծածուկ հնարիւք: Որ խորհրդոց ես տէր և քննես զսիրտս և զերիկամունս, սրբեա զսիրտ իմ և զխորհուրդս ի զազիր և ի պիղծ խորհրդոց, զի մի՛ իսպառ կորեայց յաւիտենական կորուստն: Որ կարող ես յամենայնի, ողորմեա ինձ Աստուած իմ. տուր ընդ շնորհս արտասուաց մեղուցեալ ոգւոյս, որպէս զի լուացից*

զբաղմունթիւն մեղաց, զի ապրեցայց ի ձեռաց անողորմ հրեշտակաց՝ որք արկանեն զամբարիշտն ի հուր գեհենին։ Երանի թէ լալի հանապազ աղաչելով զքեզ Աստուած, զի մի անարժան գտայց ի ժամուն՝ որ գալոց ես։ Մի լուայց զահաւոր զձայնն՝ եթէ երթ ի բաց մշա՛կդ անօրէնութեան, ոչ գիտեմ ուստի ես։ Աստուած բարձրեալ՝ միայն առանց մեղաց, շնորհեա ինձ մեղաւորիս յաւուր յայնմիկ զբաղում գթութիւն քո. զի մի յայտնեսցին ծածուկ ամբարշտութիւնք իմ առաջի տեսողաց հրեշտակաց և հրեշտակապետաց, մարգարէից, առաքելոց և արդարոց սրբոց։ Ապրեցո զիս զամբարիշտս շնորհօք ողորմութեան քո ընկալ զիս ի դրախտն փափկութեան ընդ կատարեալ արդարսն. ընկալ զաղօթս մեղուցեալ ծառայիս քո բարեխօսութեամբ սրբոցն որք հաճոյ եղեն քեզ։ Յիսուս Քրիստոս տէր մեր, որ ես՝ օրհնեալ ընդ հօր և սուրբ հոգւոյդ յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ՓՈԽԱՑԼԱԿՔ։

Ա. ՃԱՌՆ ԵՒ Բ.—Ի ՍԿԻԶԲՆ ԸՍՏ ՎԵՆԵՏԿԻ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԸՍՏ ՈՄԱՆՑ ԳՐՉԱԳՐԱՑ։

ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ՀԱՅՈՑ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ ԱՍԱՑԵԱԼ

ՃԱՌՍ ՅԱՃԱԽԱՊԱՏՈՒՄՍ ԵՒ ԼՈՒՍԱՒՈՐ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆՍ՝ ՅԱՂԱԳՍ ՕԳՏԻ ԼՍՈՂԱՑ։ [2]

Մի է էութիւն և գոյութիւն ամենասուրբ Երրորդութեանն. և իւր է ինքնութիւնն և ոչ յայլմէ գոյութենէ։[3] Զանսկզբանցն[4] ունի զպատճառսն[5] Հայր զՈրդւոյ և ըզՀոգւոյն։[6] Իսկութիւն անծին և էութիւն անսկիզբն, միշտնջենաւորութիւն անսահման և ճշմարտութիւն անփոփոխելի,[7] կեանք և կեցուցիչ ամենայն կենդանեաց։ Հայր է Որդւոյ, և և բղխումն Հոգւոյն.[8] Աստուած է և արարիչ արարածոց երևելեաց և աներևութից։

Պատճառ ասի ծննդեամբ Որդւոյ և բղխումն Հոգւոյն սրբոյ։ Իսկ ինքն անծին զէն անսկիզբն ծնեալ. միշտնջենաւորին անսահմանի զճշմարտութիւնն անփոփոխ ծնեալ, կենացն կենարարաց զկեանսն[9] կենսատու ծնեալ. լուսոյն կենդանեաց[10] զկենդանի լոյսն[11] ծնեալ,[12] բարւոյն զբարերարն ծնեալ,[13] արարչին զարարիչն ծնեալ ամենայն ա-

---

1 Ասացեալ ճառ յաճախապատում և լուսաւոր վարդապետութեամբ. Դ. 2. օգտի լողաց, Դ. 3. և յիւրմէ գոյութենէ, Կ. Դ. Ե. 4. Զի ի սկզբանց. Կ. Դ. Ե. 5. Այսպէս ունին և Գ. Ե: ըզպատճառսն գոլ. Կ. այլ՝ զպատճառն. 6. Այսպէս և Ե. այլք զսուրբ Հոգւոյ. 7. Այսպէս և Դ. Ե. Այլք՝ անփոփոխ. 8. Ոմանք՝ բղխող Հոգւոյն սրբոյ. 9. Կեանքն կենդանեաց զկեանքն. Կ. . . . զի կեանըս. Ե։ 10. Կենդանւոյ. Գ. 11 Զլոյսն կուսածին Ա. Բ. 12. Լուսոյն . . . . ծնեալ. չունին Կ. Դ. Ե. 13. Կ. Դ. Ե՝ պակասաւոր։

րարածոց երևելեաց և աներևութից: Երկնից հաստիչ և երկնային զօրութեանցն, երկրի և որ ի սմա են արարածք: Լի է և կատարեալ և զամենայն յամենայնի լնու, ինքն ոչ թերանայ, որ ոչ նորոգի և ոչ հնանայ, ոչ լնու և ոչ պակասէ. [1] որ նոյն կայ միշտ ի լիութեան իւրում և յանբաւութեան: Եւ չիք ուստեք եկամուտ կամ՝ յաւելուած [2] յանբաւ և յանհաս և յանսահման և յամենակատար բնութիւնն: [3] Որում ոչ հասու լինին միտք, նա և ոչ հրեշտակաց իմանի, թէպէտ և երագունք [4] են որպէս զմիտս մարդկան. այլ ուր ակնարկեն կամք արարչին, յայնոսիկ սպասաւորութիւնս առնեն յերկնաւորս և յերկրաւորս: Զի որպէս երկինք և ամենայն զարդք նոցա հաստատեալ կան բանիւ Աստուծոյ և Հոգւով ամենայն զօրութիւնք, նոյնպէս և երկիր լերամբք և դաշտովք, ծովով և գետովք և աղբերբք [5] և անտառախիտ ծառովք:

Եւ չիք այլ արարիչ, բայց միայն սուրբ Երրորդութիւնն, ամենազօր տէրութիւնն, յատակ և պարզ ամենակալ զօրութիւնն. [6] որ ասաց և եղեն, հրամայեաց և հաստատեցան: Որ նստի յերկինս երկնից և խնամէ զարարածս ամենայն, որ կանուխ գիտութեամբն և անբաւ իմաստութեամբն մատակարարէ զերկնաւորս և զերկրաւորս. և ամենեցուն կեանք է և կեցուցիչ, և յամենայնի [7] անբաւ է և անհաս և անճառ. սէր է՝ կենդանի երանութեամբք լցեալ. լոյս անմատոյց, ահեղ և զարմանալի: գիտութիւն և իմաստութիւն ի նմանէ են ստուգեալ. [8] կենդանի և կենդանարար. ողորմած և բարերար շնորհօք. երկայնամիտ է

1. Ոչ լնուի և ոչ պակասի. Կ. Ոչ պակասի. Դ. Դ. 2. Յօրինուած. Կ. Դ. Ե: 3. Բնութեան նորա. Կ: 4 Երագոյնք են. Ե: 5. Աղբերօք. Կ: 6. Յստակ . . . . չունին Դ. Ե: 7. Ամենայնէ. Դ. Ե: 8. ստոյգ եղ. Դ. Ե:

և դարմանիչ։ Ինքն սրբութիւն սրբոց մերձեցելոց ի նա սրբութեամբ և արդարութեամբ, լուսաւորիչ բանական բնութեանս միշտ. և ամենայնիւ ճշմարտութիւն է՝ յանդիմանելովն զմեզ և խրատելովն զմեղուցեալսն, զի ապրեսցին ի բարկութենէն՝ որ գալոցն է ի վերայ ամբարշտաց։ Այլ և խոստմամբք բարեաց յորդորէ,[1] զի արժանաւորք լիցուք պսակաց և փառացն յաւիտենից ամենաշահութեանցն։ Զի նաւահանգիստ է հանգստարար[2] ճգնաւորաց ի խնամս սուրբ սիրոյ իւրոյ. որ յանճառ երանութիւնս վայելէցուցանէ զաւաքինեալսն հոգւով։ Զի մեծութիւնք անքննինք են, անսկիզբն էութիւնն,[3] ի վեր քան զիմանալիս յանսահմանութեանն և յանքաւութեանն.[4] և խնամովք տեսչութեամբ լնու զամենայն արարածս։ Որ գիտէ զխորհուրդս սրտից, և քննէ զերիկամունս, և առաջնորդէ օրհնօք հոգւոյն կենդանարար անմահից յանմուաց ուրախութիւնս, յանդադար խնդութիւնս, յանճառ և յանպատում բարութիւնս, ժառանգելով զարքայութիւնն Աստուծոյ։

Արդ այս ամենայն արհեստք[5] ինքնաբոյսք անսահմանելի մշտնջենաւորին՝ դարմանիչք են յարարածս ըստ բարերարութեան[6] արարչութեան իւրոյ, զի կեցուցիչ[7] է ի խնամս իւր, որ անքաւ և անքննին է։ Որում ոչ բաւէ իմաստութիւն, հոգևորացն[8] հասու լինել, Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. այլ ի գործոց իւրոց և յերախտեաց իմանի և ճանաչի անմարմնոց և մարմնաւորաց մի աստուածութիւնն, ամենազօր տէրութիւնն։ Զի որպէս արև և լոյս և ջեր՝[9] միոյ արեգական[10] սահ և ոչ այլոց,[11] և որպէս

1. Յորդորէ զմեզ Գ. Կ։ 2. հանգստաբար նաւահանգիստ է . . Կ։ 3. էութեանն. նորա. Դ. Ե. Կ։ 4. իւրում. Կ։ 5. արուեստք. Գ. Դ. Ե. Կ։ 6. բարերար. Գ. Դ. Ե. Կ։ 7. կացուցիչ. Դ. Ե։ 8. հոգևոր զօրացն. Գ. Դ. Ե. Կ։ 9 ջերմ. Ե։ 10. արեգակն. Դ Ե։ 11. այլոց. Գ. Դ. Ե. Կ։

աղբիւր և ջուր և գետ ի միոյ ի բնութենէ[1] լսին, սոյնպէս[2] և միտք և բան և հոգի[3] իմանի ի մարդում, նոյնպէս և ստ[4] միոյ բնութեանն և ստուածութեանն[5] է իմանալ Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ։[6] Զի ոչ է արեգակն առանց լուսոյ և ջերմութեան, և ոչ աղբիւր առանց ջրոյ և բղխման, և ոչ միտք առանց բանի և հոգւոյ։ Այսպէս և ոչ էր[7] Հայր առանց Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ։

1· Ի միոյ բնութենէ· Գ· Դ· Ե· Կ։ 2· ոմանք՝ որպէս։ 3· բան հոգի· Գ· Դ· Ե· Կ։ 4· ըստ· Գ· Դ· Ե· Կ։ 5· բնութեանն է իմանալ· Գ· Դ· Ե· Կ։ 6· զբնութիւնն· Կ։ 7· և ոչ հայր . . . Գ· Դ· Ե· Կ։

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ՀԱՅՈՑ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ

ՃԱՌԵԱԼ ՃԱՌՍ ՅԱՃԱԽԱՊԱՏՈՒՄՍ[1]

Ի ՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹԵԱՆՆ ԱՌԱՆՁՆԱՒՈՐՈՒԹԻՒՆՍ։ [2]

Բ.

Կատարեալ է Հայր անձամբ և զօրութեամբ՝ գիտութեամբ և իմաստութեամբ՝ արարչութեամբ և բարերարութեամբ. և զամենայն իւր անծին իսկութիւնն[3] ունի։ Կատարեալ է և Որդի անձամբ և զօրութեամբ՝ գիտութեամբ և իմաստութեամբ՝ արարչութեամբ բարերարութեամբ. որ և զամենայն անսկիզբն էութիւն ունի։[4] Կատարեալ է և սուրբ Հոգին[5] անձամբ և զօրութեամբ՝ գիտութեամբ և իմաստութեամբ՝ արարչութեամբ և բարերարութեամբ. և զամենայն անսկիզբն էութիւն[6] ունի։ Մի է բնութիւն աստուածութեանն[7] և անփոփոխ իսկութեանն՝ մի արարչութիւն և մի բարերարութիւն՝ մի տէրութիւն և մի զօրութիւն. և չիք ուստեք եկամուտ և[8] յաւելուած փառաց յանսկիզբն Երրորդութիւնն։[9] Զի նա է աղբիւր ամենայն բարեաց՝ և ի նմանէ բաշխին ամենայն պարգևք արար-

---

1. Ճառ յաճախապատում. Գ. Դ. Ե. Կ. 2. երրորդութիւն. Գ. Դ Ե. Դարձեալ յայտնութիւն Հաւատոյ ս. Գրիգորի առ երրորդութիւնն և միութիւնն ամենասուրբ երրորդութեանն. և առ սէրն Նորին յարարածս իւր. Կ. 3. զիւր անծին իսկութեամբն. Գ. և զամենայն իւրածին իսկութիւնն ունի. Ե. իւրածին իսկութեամբն. Դ Կ. 4. իւրածին իսկութիւն . . . Գ. Ե. Հայրածին իսկութեամբն . . . . Կ. 5. Նոյնպէս և Հոգին սուրբ . . . Ա. Բ. 6. մշտնջենաւորութիւն. Դ. Ե. Կ. 7. իսկութեան. Կ. 8. և զօդուած կամ. Գ. 9 էութեան(ամենասուրբ) երրորդութեան. Կ Ե.

չութեան յարարածս ամենայն։ Որ յօրինէ և դարմանէ և մնուցանէ բարերարութեամբն իւրով զերևելիս և [1] զաներևոյթսն հոգւով և ճշմարիտ վարդապետութեամբ, և առաջնորդէ յիւր արքայութիւնն և ի փառսն, որք հաւատան ի նա և կատարեսցեն զսրբութիւնս ահիւն Աստուծոյ ի սուրբ սրտէ և յանկեղծաւոր հաւատոց, որպէս և գրեալ է։ [2]

Այսպէս ընկալաք զհաւատոյն բան. և դուք այսպէս հաւատացէք յամենասուրբ Երրորդութիւնն, յարարիչն Աստուած և ի հաստիչն տէր և ի կենսատու շնորհիւ։ [3] Որ կենդանարար լուսովն և սուրբ սիրովն ժառանգորդս առնէ իւր անճառ արքայութեանն. և լինի յորդորիչ յիշումն [4] խոստացեալ անպատում պարգևացն, որ կայ և պահի յուսացելոցն ի նա հաւատով և սիրով։ Վասն զի սէր արարչութեանն ստիպեաց արարչին [5] առնել զարարածս ամենայն, որ երևին և որ ոչն երևին. ոչ ի պէտս իւրոյ աստուածութեանն արարեալ, այլ երևեսցին նորա փառքն, որ արարածովքս իմացեալ տեսանիւր անմարմնոց և մարմնաւորաց։ Որպէս ոչ առնու ինչ ի կենդանեաց, այլ տայ նոցա զկենդանութիւնս, որպէս ոչ լոյս յաչաց՝ այլ ի լուսոյ [6] լուսաւորք և տեսանէ զինքն, [7] այսպէս և տէր կեցուցանէ [8] և լուսաւորէ զարարածս իւր, զմտաւորս և զբանաւորս. և բաժանէ ի նոսա շնորհս որպէս կամի։ Թէպէտ և բաժինք շնորհաց են, այլ Աստուած նոյն է՝ որ յաջողէ զամենայն յամենայնի։ [9] Եւ տուեալ պատիւ հրեշտակաց և մարդկան իշխանական կամս, զի փառաւորեսցեն զբարեգործն Աստուած, որ յոչնչէ ի լինելութեան էած, [10] և զհանգա-

---

1. Այլ և Գ. Դ. Ե. 2. Ա. Տիմ. Ա. 5. 3. Նորա. Կ. 4. յիշեցուցիչ. Կ.
5. զինքն Կ. 6. լոյս ի լուսոյ. Դ. Ե. Կ. 7. չէք՝ զինքն. Դ. Ե. Կ.
8. կացուցանէ. Դ. Ե. Կ. 9. ա. Կորն. ԺԲ, 4. 10. էած զամենայն. Կ.

մանս բարեպաշտութեանն ուսոյց գրովք սրբովք. զի կարասցեն խոյս տալ ի չարէն և առնել զբարին, և դարձեալ նորոգել փառաց [1] ի փառս:

Յայսոսիկ երևի Աստուծոյ սէրն ի մեզ, զի վասն մեր արար զերկինս և զերկիր և որ ի նոսա արարածք են, և այսու խնամով ցուցեալ զբարերարութիւն սիրոյ իւրոյ: Այնպէս և արարածք ճշմարտեալ [2] սիրով մերձեսցին [3] առ Աստուած հաւատով և յուսով և պատուիրանապահութեամբ. և լինի պարգևատու: Զի յամենայնի գոհանալով զբարերարութեան խնամոց, և խոստովանողք և դաւանողք առ ճըշմարտութիւնն լիցուք, և կայցուք ի հնազանդութեան հանդիսից՝ [4] որ առ հաճոյս տէրութեանն իցէ. ի նեղութեան և յանդորրու անքակ մնալ ի սէրն որ առ Աստուծոյ է՝ ամենայն սրբութեամբ, հոգւով և մարմնով առեմ [5] միշտ: Եւ ոչ զանուն արարչին՝ արարածոց կոչել, և ոչ զճշմարտութիւնն մոլորեցուցանել ի սուտս: Այլ առողջ անբիծ անարատ երախտեօք սիրոյն կալ ի մտերմութեան միշտ: Եւ այս ամենայն յօրինուածք իրուանց և արդարութեան կայ և մնայ արարչին առ արարածս միշտ: [6]

Վասն այսորիկ լռեսցուք [7] ի դատարկ և ի վայրապար քննութենէ, և զհետ երթիցուք խրատուց գրոց սրբոց հնոց և նորոց: [8] Եւ չիք [9] այլ ոք՝ [10] որ պատմէ զիրաւունս, զի նովաւ կեանք և շարժիմք և եմք: Նմա լուիցուք [11] և ի նա յուսասցուք, որ փրկեաց զմեզ յամենայն վտանգից, և փոխէ յերկնից արքայութիւնն: «Արդ՝ եկայք, որդեակք իմ

1· Փառօք· Դ· Կ, 2 ճշմարիտ· Դ· Ե· Կ: 3· ոմանք՝ մերձ, 4· հանդիսից լաւութեան· Դ· Ե, 5· առեմք· Գ, 6· ոմանք չունին՝ միշտ: 7· ոմանք՝ դադարեսցուք: 8· հնոյ և նորոյս· Գ· Ե· Կ, 9· Զի ես եմ, ասէ, Աստուած, և չիք . . . Դ· Ե· Կ, 10· բաց յինէն· Ե, 11· ոմանք՝ Նմա լուիցուք, որ փրկեաց . . . .

և լուարուք ինձ. և զերկիւղ տեառն ուսուցից [1] ձեզ» ասէ ի սաղմոսերգութիւնն. [2] որ կոչէ զամենայն [3] ի հնազանդութիւն հոգևոր օրինացն։ Եւ զի «Որ պահէ զպատուիրանս իմ՝ ասէ տէրն՝ նա է որ սիրէն զիս՝ և որ սիրէն զիս՝ սիրեսցի ի Հօրէ իմմէ. և առ նա եկեսցուք և օթեւանս առ նմա արասցուք»։ Որպիսի անճառ սիրով պատուեալք [4] եղաք։

Արդ մի խոտան գտցուք յԱստուծոյ՝ զի մի անկցուք յերանելի կենացն՝ զոր խոստացաւ սրբոցն։ Զի արդարք ժառանգեսցեն զբարիսն՝ և մեղաւորք կրեսցեն [5] զպատիժսն։ «Որք հոգւովն Աստուծոյ՝ ասէ՝ վարին՝ նոքա են որդիք Աստուծոյ. իսկ որ ըստ մարմնոյ կեան՝ հաճոյ Աստուծոյ ոչ կարեն լինել։ [6] Զի հոգևոր վարուք այսու կենօք վայելեսցուք յամենայն բարութիւնս յերկնաւորս։ Ո՜րքան է մեծութիւն աննման և անհամեմատ և անկշիռ այնր անվախճան կենացն՝ [7] զի անպատումէ. ի հոգւոյն [8] սրբոյ ի սիրոյ [9] արարչին պատրաստեալ՝ [10] որ ոչ լսի և ոչ իմանի՝ զոր տայ սիրողացն զնա [11] զի նորա կենարար սիրովն վայելեսցեն ի բարութիւնսն՝ որ ի վեր է քան զամենայն միտս և զխորհուրդս և քան զզօրաց երկնաւորացն՝ զի հանգուցանէ յանմահ կարգսն։ Որոյ և ընտրութիւնք լինին յօթևանսըն ըստ արժանաւորութեանն՝ անքննին վայելչութիւն։ [12]

Զի որպէս հոգիք մտաւորք կենդանի են և անմահք՝ և չունին զպայման հասակին և զսահմանս գնացից՝ զի թէպէտ և քան զերկինս ի վեր բարձրանան և քան զծով

---

1 Ուսուցանեմ։ Դ. Ե. Կ. 2. սաղմոսն. Ե. 3. այլք՝ զամենեսեան. 4. պատուեալ. Դ. Կ. 5. կրեն. Գ. Վ. 6. հա Ը, 8. 7 որ է ըստ մեծութեան անհամեմատ և անկշիռ այնր անվախճան կենացն. Կ. Որք այն է . . . . Ե. 8. հոգւոյն. Դ. Ե. Կ. 9. սիրոյ. Դ. Ե Կ. 10. արարչին՝ որ . . . . Դ. Ե. Կ. 11 իւրոց. Կ. 12. ոմանք՝ վայելչութեան և սրբութեանն.

անդր ելանեն յիշատակօք գիտութեան իմաստութեան՝ [1] որ յառաջնորդութենէ [2] գրոց սրբոց, այլ որպէս յական թօթափել անդրէն ամփոփին ի մարմնոյն, [3] այսպէս և մարմինք ի յարութեան [4] անդր՝ փոխին յանճառ և յանպատում կեանսն, ի բիւրակերպեան [5] ճառագայթմն և ի կենդանի լոյսն և ի փառսն. լուցանին հրով հոգւոյն յանշիջանելի լոյսն: Եւ որպէս անարգ և տխուր է տեսիլ մարմնոյս քան զհոգւոց կենդանեացն զանմահից, այսպէս ամենայն նշոյլք և ճառագայթք ամենայն երևելի արարածոցս և լուսաւորացս որ շիջանելոց է, զի ոչ համեմատի և ոչ մինայ առ [6] կենդանի և անանց ճառագայթս արեգականն արդարութեան փառացն, զոր զգենլոց են սուրբք յանմահական կեանսն հասարակ հոգւոց և մարմնոց, որպէս զգեցեալ ոք զարեգականն զլոյսն [7] բաւականայ տեսանել յարևելից յարևմուտս որ շիջանելի լոյս է ըստ բանին տեառըն. «Արեգակն և լուսին խաւարեսցին, ասէ, և աստեղք ծածկեսցին, և արդարք փայլեսցեն իբրև զարեգակն յարքայութեան [8] Աստուծոյ: «Զի յորժամ Քրիստոս յայտնեսցի՝ կեանքն ձեր, ասէ առաքեալ, յայնժամ և դուք ընդ նմա յայտնեսջիք փառօք» [9] լուցեալք աստուածային հրովն ի լոյսն անշիջանելի և սուրբ: Եւ յորժամ իւրով լուսովն զանշիջանելին [10] զգենուցու [11] զլոյսն արեգականն արդարութեանն և վայելէ ի պայծառութիւն սրբոցն, կայ մնայ միշտ կենդանի և լուսաւորեալ: Ի սուրբ սիրոյն երանաւետեալք և փառօք փառաւորեալ ի չափս և յանչափս կատարմանն Քրիստոսի, [12] զի ոչ կարէ ասել ոք զայս, զի ե-

---

1. Յիշատակօք իմաստութեան. Կ: 2 Որ ի գիտութենէ. Դ. Ե. Ա: 3. ի կայանս մարմնոյն կենաց Գ. Վ. 4 ի յարութիւնն. Գ. Վ: յանմահութիւն Դ. Կ. 5. Հրակերպեան. Դ. Ե. Կ 6. այլ. Գ. Վ: 7. Զլոյսն ըստ բանին տեառն. Դ. Ե. Կ 8. երկնից Աստուծոյ. Ե: երկնից. Դ. Կ 9 Կող Գ. Կ 10. անշիջանելեաւն. Գ. Վ. 11 զգենուցուն Կ. 12. յանչափս Քրիստոսի. Դ. Կ

զեցի Աստուած յամենայնի։[1] Լի է բարեօք անմահիւք ըստ բանին Տեառն, որ խնդրէ ի Հօրէ. զի «Որպէս դու և ես մի եմք, այսպէս հաւատացեալք և սուրբք ի մեզ իցեն։»[2] Զի այսպէս սիրեաց Աստուած զմարդիկ, որ և զաստուածութեանն զպատիւ և զփառս շնորհեաց մեզ։ Արար Աստուած զաշխարհս զայս վասն մարդկան ի ծնունդ և ի սընունդ և ի կեանս իւրեանց և արդարութեան. և առաքինութեան հանդիսիւք պատուիրանապահութեամբ[3] զայն զանմահ և զանուշակ զաստուածեղէն փառսն շնորհէ, փոփոխելով յանանց բարիսն և յանսպառ ուրախութիւնսն։

Եւ զայս զոր ասացաք, սուղ ինչ է ի բիւրաւորացն բարեացն։ Որպէս տղայք յորովանի մարցն ոչ գիտեն յորպիսի հասակս փոփոխելոց են և տեսանել զարարածս Աստուծոյ և վայելել, սոյնպէս և ոչ մեզ է իմանալի։[4] Այլ ըստ բանի Առաքելոյն որ ասէ. «փոքր ի շատէ գիտեմք և փոքր ի շատէ մարգարէանամք. այլ յորժամ եկեսցէ կատարումն, փոքր ի շատէս խափանեսցի։»[5] Զի առաւելեալ է յամենայնի և անճառ, և ոչ անմարմնոց է իմանալի, թող թէ մարմնաւորացս զմտաւ ածել և ասել ոք կարասցէ։ Զիորպէս խաւար ի լուսոյ փախչի, այսպէս և երկրաւորքս յերկնաւորացն և յանմահից կենացն։ Վասն այսր բարութեանց զամենայն բարութեանն ջանս ի մեզ ունելով, և[6] կալ մնալ ի մշակութեան հաճոյից Աստուծոյ, որ աւետեօք բարեաց լըցեալ է[7]։ Եւ փախիցուք[8] յաղտեղի և ի գարշ ցանկութեանց և չարեաց, որ վշտագին սպառնալեօք է պատուհասն. և զհետ երթիցուք[9] հանդիսի վերնոցն մաքուր վարուք։ Լի-

---

1. Ա. Կորն. ԺԵ, 28. 2. Յովհ. ԺԷ, 9, 11. 3. պատուիրանապահութեան. Կ. 4. իմանալ. Գ. Վ. վերինն այն ոչ է իմանալի և գիտելի Կ. 5. Ա. Կորնթ. ԺԳ, 9. 6. փոյթ ի մեզ բերցուք և . . Կ. 7. լիացեալ է Գ. Վ. 8. Այլք՝ փոխեսցուք. 9. հետևեսցուք. Կ.

նել երախտաւոր եղբարց սիրով յամենայն ի պէտս կենաց՝ մշակել զբարի զաւանդս ի փրկութիւն[1] հոգւոց և մարմնոց. զի հրաւիրեալք և կոչեցեալք իցեմք յորդեգրութեանն շնորհս: Զի բարս բարիս[2] անկեալ ի մեզ Աստուծոյ, այլ և զիշխանական կամս, եթէ կամեսցուք միշտ զբարին առնել: Զի հոգևոր օրէնքն հաստատեսցի ի սիրտս մեր, յոյս սէր, հաւատ, այլովքն հանդերձ յանձնիշխանական կամս հրեշտակաց և մարդկան: Որպէս զի ժառանգորդք լիցուք փառաւորեալ կենացն, և պատուեալ յարարչէն երանութեամբքն՝ որ անճառելին է:

Եւ ետ անձնիշխան արարածոյս երկուս դաստիարակս որպէս որդւոց,[3] զպատուիրս և զաւետիս. երկնչել ի սպառնալեացն և փախչել ի վնասակարացն, և ցանկալ աւետաւոր բարւոյն[4] և երթալ զհետ արդարութեան: Ի ձեռն ճշմարիտ սուրբ Գրոց խրատուց իրաւանց և իշխանութեանն[5] հնազանդել յաղագս բարեձևութեանն: Զի վասն այսորիկ ետ զմարգարէս և զառաքեալսն և զհայրապետս, վարդապետս և ուսուցիչս. զի տեղեակ և հմուտ և հաստ առնիցեն բարի կամացն Աստուծոյ զմեզ. որ զամենայն մարդ կամի՝ զի կեցցեն և ի գիտութիւն ճշմարտութեան եկեսցեն և երախտաւոր լինել[6] գործովք արդարութեան Հօրն երկնաւորի և Որդւոյն միածնի և Հոգւոյն սրբոյ.[7] որ տայ զկենդանութիւն արարածոց իւրոց գործակից լինել նոցա բարերար կամացն Աստուծոյ: Այսու իրաւամբք և արդարութեամբ Աստուած[8] եմոյծ ի ժառանգութիւն աստուածութեանն իւրոյ ըստ Առաքելոյ բանին. «Ժառանգք Աստուծոյ և ժառանգակիցք Քրիստոսի լիցուք», ասէ[9]: Եթէ Ն-

1. Փրկանս Գ. Վ. 2. Զի Բարիս. Գ. Վ. 3. Որդւոյ. Գ. Վ. 4. Բարւացն. Գ. Վ. 5 Արդարութեան. Գ. Կ. 6. լեալ. Գ. Վ. 7. Հոգւոյն ճշմարտի. Ե. Կ. 8. Էած և. Գ. Վ. 9. Գաղ. Դ. 7.

մանակից Քրիստոսի լինիցուք, և փառացն կցորդ։» Արդ մի հեղգասցուք ի կեանս մեր, այլ ուշ եդեալ ի կէտ կոչմանն անվեհեր փութով ուսուցանել և առնել զկամս նորա, զի մեծ կոչեսցի[1] յարքայութեանն Աստուծոյ։

Եւ այսու վարդապետեալս, որ արար և ուսոյց ընտրելոց ի տնօրէնութեան իւրում՝ զի հայեցեալք յետս գնացից Փրկչին մերոյ՝ նմանողք լիցուք։ [2] Եւ մարգարէութեամբ և առաքելական քարոզութեամբ և հայրապետութեամբ [3] ծանիցուք զՀայրն ամենակալ և զՈրդին համագոյ և զՀոգին համագործ։ Եւ ծանիցեն [4] և գիտասցեն և ընդանեսցին հաճոյից արարողին ուղղափառ հաւատովք, անքակ մնալ ի սիրոյ արարչին ի նեղութեան և յանդորրու, և արդարացեալք երախտաւորք կամարարք [5] բարերարին։ Ցվասատակս . .

(մնացածն ըստ կարգին. տես վերև էջ. 10 տ. 188.)

---

1. Այնպիսի. Կ. 2. Եբր. ԺԲ. 2. 3. Եւ ի մարգարէից և ի հայրապետաց . . . Կ. Եւ մարգարէութեամբ և հայրապետութեամբ Դ. Ե. հայրապետութեամբք. Գ. Վ. 4. ծանիցուք . . Կ. 5. կամօք. Գ. Վ.

ԼՈՒՍԱԲԱՆՈՒԹԻՒՆՔ·

ՃԱՌ Ա.

Սուրբ Գրիգոր Լուսաւորչի լեզուն. կարելի է ասել՝ մի տեսակ առանձնայատկութիւն ունի՝ որով դարձել է Հայաստանեայց ս. Եկեղեցու աստուածաբանական գրութիւնների հիմունք: Թէև Հայոց ս. Հայրերը չեն ունեցել մի բանակարգուած աստուածաբանութիւն, այնով Հանդերձ Հայաստանեայց ս. եկեղեցում այնքան կենդանի է եղել աստուածային յայտնութեան գիտութիւնն և այնքան ծաղկած, որ իբրև մի անփոփոխելի և անփոխարինելի դրոշմ մնացել են լուսաւորչահիմն հաստատութեամբ՝ թէ մի առանձին ոգի, թէ որոշ սկզբունքներ ու դաւանանքներ, թէ հաւատալիքի կամ յայտնութեան ճշմարիտ հայեցողութիւն և թէ մինչև անգամ սեփական կազմակերպուած ոճ: Ուստի և Հայոց ուսումնական շրջանը միշտ աւազի վրայ շինած կլինի իւր խախուտ տունը, եթէ անվեհերութեամբ դոցա վրայ չհաստատէ: Յաճախ թեթև աչքով են նայում Հայոց ս. Հայրերի գրուածների վրայ այն թերուս մարդիկ, որոնք կարծում են թէ շատ տեսութիւններ լոկ պատահական են, կամ թարգմանութիւնների ստրկութիւն են, բայց դժբախտաբար չգիտեն որ այդ բոլորը մի աւանդական ս. դպրանոցից է բղխել և թարգմանութեան են արժանացել միմիայն այն գրութիւններն, որոնք օտար ու խորթ չեն եղել աստուածային լուսաւորչահաստատ ոգուն, սկզբունքներին և հայեցողութեան: Հաւատքը մեր ս. Հայրերի մէջ այնքան զօրաւոր է եղել, որ նոքա միշտ պատրաստ են եղել ճշմարտութիւնը «ի վերայ լերինն բարձու» հռչակել, հիմնաւորապէս գիտեցել են իւրեանց սուրբ Հօր ճշմարիտ վարդապե-

տութիւնն, որի մէջ թագաւորում է միայն Սուրբ գիրքը և Առաքելոց աւանդութիւնը, ուստի և երբէք չեն խաբուել և չեն շլացել և չեն կամեցել խեղել, թիւրել ու մկրատել նախնական նպատակագէտ վարդապետութիւնը ի հաճոյս թշնամուն. մինչդեռ այս շաւղից շեղուել են և կշեղուեն նոքա, որոնք իբրև «եղէգն շարժուն ի հողմոյ» պատրաստ են ծառայելու առաւել մարդկան, քան թէ Աստուծոյ, լսում են բանը, սակայն «հոգք աշխարհիս և պատրանք մեծութեան հեղձուցանեն զբանն, և լինի անպտուղ»:

«Մի է ինքնութիւն գոյութեանն». ինքնութիւն բառը սովորաբար Աստուծոյ մասին է գործածւում ցոյց տալու համար, որ Աստուած կախումն չունի, այլ իւր գոյութիւնը ինքնաբար, անկախաբար ունի: Այս բառի նման են և «իսկութիւն», «իսկ» և «է» բառերը, իսկութիւնը նորա շիփ շիտակ, հաստատ և ճշմարիտ լինելն է. Աստուած է միայն «իսկ» և «է». մինչդեռ մարդս միայն յարաբերաբար, կախումով է «իսկ» և «է»: Վերջինս վերցրած է Ելից Գ, 13-ից որտեղ Աստուած յայտնում է իւր անունը Մովսէս մարգարէին. այդ անունը եբրայեցերէն կոչւում է «Եհովահ» «Որ էն», այսինքն թէ Աստուած է այն՝ որ է, այնպէս որ նա է «Աստուած, որ էն և որ էր և որ գալոցն է» (Յայտն. Ա, 8), նա է կեանքի Աստուածը, նա անկախաբար ունի իւր մէջ կեանք (Յովհ. Ե, 26). նա է յաւիտենական, անփոփոխ և ուրեմն դէպի մարդիկ սուրբ է և հաւատարիմ:

Տ. 18. Ամբաւութիւն նշանակում է մարդկային բաւականութիւնից շատ աւելի լիութեամբ կամ կատարելութեամբ:

23. «Ու չեն լեալ բաւական» յըմբռնել կամ ի տեսանել զկատարեալ զօրութիւնն Աստուծոյ:

70. Որքան անհասանելի է Ս. Երրորդութեան խորհուրդը մեր սահմանափակ մտքերի համար, դարձեալ ս. Գ. Լուսաւորիչը երկրային օրինակով ևս գեղեցկապէս ըմբռ-

նելի է անում մեր հարցասիրութեան գոհութիւն տալու համար։

75. «Հոգի ասի կենդանութիւնս . . .» խօսքերից պարզ երևում է որ Հայոց մէջ ընդունուած էր՝ Հոգու մէջ երեք կարողութիւններ նկատել։ Խօսողութիւն՝ նոյն է թէ բանականութիւն։— Սակայն երբէք չպէտք է ընդունենք թէ որ և իցէ երկրաւոր բացատրութեամբ կարող ենք լիապէս ամփոփել մեր սահմանափակ մտքի մէջ Աստուծոյ անսահմանութիւնը. մենք կարող ենք Աստուծոյ մասին այնքան գաղափար ունենալ, որքան նա մեզ յայտնում է, որովհետև նա Արարիչ է, իսկ մենք լոկ արարած։ Գիտնական բացատրութիւնները մեզ հարկաւոր են միմիայն այնոր համար, որ մենք մեր ճշմարիտ և անփոփոխելի հաւատալիքներն ու Հայաստանեայց Ս. Եկեղեցու վարդապետութիւնները մեր հոգու ոչ միայն զգացմունքի և կամքի, այլ և մտքի՝ ունեցուածքը դարձնենք. այս է իսկական հաւատքը։ «Խնդամ է, գիտելով ճշմարիտ՝ զի գոյ Աստուած. հաւատարիմ է ինձ. զօրութիւն նորա ոչ գիտեմ. ես որ երևինս՝ զայս և եթ գիտեմ, զաներևոյթն Աստուծոյ՝ Աստուած միայն գիտէ»։ (Եղիշէ)։

Այս ամբողջ ճառը նուիրուած է ամենասուրբ Երրորդութեան բացադրութեան, որ իւր կարճութեամբ հանդերձ շատ գեղեցիկ է և ըմբռնելի։

ՃԱՌ. Բ.

25. Այստեղից սկսած ս. Գրիգոր լուսաւորիչը գեղեցկապէս բացատրում է Աստուծոյ սիրուց բղխած արարչագործութիւնը, թէ Աստուած ինչ է պահանջում մարդկանցից իւր անհամեմատ երախտեաց համար և թէ ճշմարիտ հաւատացողին ինչպիսի՞ բարիքներ է տալիս նոյն իսկ հանդերձեալում։

156․ «Ե՛ զայս ասացաք իբրև ի մասն մի, որպէս տըղայ յորովայնի մօր . . .» այսինքն սահմանափակէ մեր գիտութիւնը Աստուծոյ մեծագործութեան մասին և մեր գիտութիւնն այն ժամանակ կատարելանայ, երբ վայելենք հանդերձեալի բարիքները։

161․ Նկարագրութիւն է քրիստոնէական կենցաղի։

180․ Սպառնալիքը կասեցնում է մարդու չարագործ ընթացքին, իսկ աւետիքը (ստանալի բարեաց) խթան է արիաջան հաւատացողի յառաջադիմութեան։ Ըստ այսմ և բացատրուած է ամբարշտի և երկիւղածի վարձատրութիւնը։ Առ հասարակ այս ճառի մնացած մասում արժանապէս նկարագրուած է՝ թէ ինչպէս Աստուած ոչինչ չէ խնայում մի նպատակի համար, այն է՝ որ իւրաքանչիւր մարդ սեփական կամքով, որպէս վայել է մարդու բանականութեան, ուղղուի և աստուածային ճշմարիտ ճանապարհով գնայ։ Դորան ապացոյց է Աստուծոյ Որդու սքանչելի պատարագը (20․474)։

ՃԱՌ Գ․

Ս Գրիգոր Լուսաւորիչը այս ճառում յորդորում է զօրաւոր լինել հաւատքով, պինդ պահել հաւատալիքները և միշտ սրբոց շաւղով ընթանալ, որովհետև մարդկային իմացուածքը բաւական չէ Աստուծոյ փառքին և մեծութեան հասու լինելու համար, ինչպէս ցոյց է տալիս Մովսէս մարգարէի պատմութիւնը։ Աստուծոյ մասին գիտենք այնքան, որքան Նա մեզ յայտնում է, սակայն մենք էլ մեր հաւատքն ու յոյսն այնպէս պէտք է ունենանք, որ կարծես թէ ամեն ինչ մեր հոգու առաջ իսկապէս տեսնում ենք։ Հապա և որքան էլ զգանք Աստուծոյ մեծութիւնը, առաւել ևս պէտք է փառաբանենք Նորա անունը, վասն զի երբեք չեն կարող նոյն իսկ բոլոր արարածները միասին ար-

ժամապէս փառաբանել Նորա անքննին զօրութիւնն ու փառքը։ Այս ամենն զգալով վայելչապէս, պէտք է շարունակ ձգտենք դէպի առաջ իբրև անձնիշխան արարածներ և ի վերջոյ մեր անմահութիւնը գտնենք Յիսուս Քրիստոսի մէջ։

71. «Որպէս երեւմամբք լինել»—այսինքն մեր յոյսն այնպէս հաստատ ունենանք, ինչպէս եթէ ամէն բան երեւում լինէր մեզ։

ՃԱՌ Գ.

Յիշելով Աստուծոյ արարչագործութիւնը, ցոյց է տալիս մարդու բարերարութիւնը. Աստուած ամէն ինչ մարդու համար է ստեղծել, ըստ որում և մարդը պէտք է այդ բոլոր ստացուածքը գործադրէ ի հաճոյս Աստուծոյ կամքին, այսինքն Աստուծոյ արդարութեան պատուիրանի համաձայն։ Արարածական աշխարհում ամէն ինչ օգտակար է և մարդըն է իշխան բոլորի, թէ յայտնի և թէ դեռ անյայտ իրերի։ Բոլորն ևս ծառայում են մարդու աշխատութեամբ աշխարհի շինութեան համար։ Այսպէս է աշխարհի յառաջադիմութիւնը։ Ով որ Աստուծոյ այս նախագծեալ ճանապարհով է ընթանում և պատուիրանազանց չէ գտնւում, վայելում է յաւիտենական ուրախութիւն, իսկ որ ոչ՝ կրում է իւր պատիժը, մանաւանդ նա որ Աստուծոյ արարածն է պաշտում։ Ճշմարիտ մարդը տիրապետում է աշխարհն, իսկ ամբարշտին հակառակ են ելնում բոլոր արարածները. ուստի մարդ իւր բոլոր յառաջադիմութեան մէջ պէտք է Աստուծոյ լուսով առաջնորդուի, որ տալիս է մեզ ս. գիրքը։ Եւ ինչպէս Աստուած իւր գործերով ճանաչւում է և մեզնից փառաբանւում, այնպէս էլ մենք մեր գործերով պէտք է արժանանանք Աստուծոյ անչափ վարձատրութեան։

ՃԱՌ Ե.

Ինչպէս Աստուած արարչագործական մեծագործութեամբ ցոյց տուաւ իր անսահման բարերարութիւնը և իւրաքանչիւր մարդու որոշ պատիւ և շնորհ տուաւ, այնպէս էլ ամեն ոք պէտք է ջանայ Աստուծոյ բարեգործութեան նմանել, Աստուծոյ աշակերտ լինել և գործել աշխարհի շինութեան համար այն աստիճանում, ինչ աստիճանի ձեռնհասութեան շնորհ է ստացել: Աստուածանման գործ կատարողը հրեշտակային երանութեան է ժառանգորդ, իսկ Աստուծուն հակառակ ընթացողը—սատանային է գործակից և նորա պատիժը պէտք է կրէ մշտապէս:

Աստուած տալիս է աւետիք, որ բարի մարդիկ քաջալերուեն, և սպառնալիք՝ որ չարերը յետ կասեն. սակայն երբ մարդ կարծում է թէ պատիժ չի տեսնելու և շարունակում է չարագործութիւն, այն ժամանակ Աստուած նորան պատժի է ենթարկում: Պատիժներ գիտենք թէ Ս. գրքից և թէ մեր կեանքին իւրաքանչիւր քայլափոխից, ըստ որում ամեն մի դժբաղդութիւն մեր մեղաց պատճառով է լինում, վասն զի Աստուած տուել է մարդկանց ձիրք և շնորհքներ, որ նոքա Աստուծոյ ճանապարհով գործեն և բախտաւոր լինին, պատիժների ենք հանդիպում, երբ այդ շնորհները գործադրել չգիտենք: Ուստի և քրիստոնէութեան և աստուածպաշտութեան կարգերը պէտք է միշտ ուղղեն բարքերը և մարդկանց դէպի ճշմարիտ ճանապարհ տանեն: Ուրեմն ամեն մարդ պէտք է կատարէ այն առաքինութիւնք, որոնք մի առ մի յիշատակուում են ճառիս վերջում վերստին:

ՃԱՌ Զ.

Բացատրութիւն Ս. Երրորդութեան և աստուածային կատարելութեանց: (Գ. «Այս առակք» այսինքն՝ օրինակ, լու-

սաքանական նմանութիւնք)։ Ով որ ճշմարիտ հաւատացող է և հաւատքով դիմած է դէպի Քրիստոս և մեղսական ապականութիւնից ազատուած՝ նորա համար ոչինչ է մահը՝ նոյնպէս և ամենայն մեղք՝ ինչպէս նախամարդի համար դրախտում։ Ինչ մեղք և թշուառութիւն Ադամի ժամանակ չկար և յետոյ մտաւ պատուիրանազանցութեամբ՝ այն ամենը վերացաւ Քրիստոսի անմեղ պատարագով հաւատացելոց միջից։ Այնուհետև երևեցան ընտիր անձնաւորութիւնք՝ որոնք փայլեցան իւրեանց գործերով· իսկ որոնք դեռ ևս յողդողդ են՝ նոցա ևս Աստուած ուղղում է սպառնալիքով և Ս. գրոց խրատներով՝ նոցա տալիս է միջոց ապաշխարութեան։ Առաքինի մարդը թէ այստեղ մխիթարւում է և թէ հանդերձեալում անվախճան ուրախութեան մէջ է ընկնում՝ ազատ տրտմական րոպէներից։ Ուրեմն ամեն մարդ պէտք է սրտով ու հոգով նուիրած լինի Աստուծոյ և ամեն ջանքով ձգտի դէպի նորա ճշմարտութիւնը՝ այս ձգտման և անձկութեան ապացոյց պէտք է լինին մարդու գործերը։

ՃԱՌ Է·

Աստուած նախապատրաստեց ժողովուրդը՝ որ նա կարողանայ ճանաչել և կատարել աստուածահաճոյ գործեր։ Նոյն իսկ աշխարհը մեզ ուսուցանում է թէ ինչպիսի ճանապարհով պէտք է ընթանանք։ Այդպէս մարդիկ Աստուծոյ խնամքի տակ միշտ կարող են ամեն ինչ աշխարհում օգտաշահ դարձնել· մինչև անգամ այն որ մեր աչքում պակասութիւն է նկատուում՝ այն ևս ունի իւր շահը մեզ համար՝ որովհետև կամ մրցման առիթ է լինում կամ չափազանցութեան մեղմացուցիչ։ Բայց և օգտակար իրերն չափից և սահմանից ելնող մարդուն համար տանջանք են դառնում և ուղղում մինչդեռ միմիայն կանոնաւոր կեն-

ցաղավարողին են բազմապատիկ վարձատրում։ Ուրեմն վար-
ձատրուել կամ պատժուելը՝ ինչպէս մեր ձեռքին է և
եթէ Աստուած պատժում է, պատժում է միայն ի դարձ
բերելու համար։

ՃԱՌ․ Ը․

Մարգարէների և առաքեալների քարոզութիւնները
օգտակար են մեզ թէ հոգեպէս և թէ մարմնաւորապէս։
Մենք պէտք է պահենք Աստուծոյ պատուիրանները, սիրենք
ընկերին և միշտ դիմենք դէպի առաքինութիւն, որով տա-
ճար Աստուծոյ կդառնանք։ Ըստ այսմ պէտք է հեռու փախ-
չենք պոռնկութիւնից և այլ գարշելի ախտերից, որոնք տա-
նում են մեզ դէպի հոգևոր և մարմնաւոր կորուստ ու տան-
ջանք։ Այստեղ մանրամասն խօսուած է նոյն աղտեղի ախտի
վրայ, որ մտրակուած է Պօղոս առաքեալի առ Հռովմ․ գրած
թղթում․ սոդոմեան և լեսպոսեան կեղտոտ ախտեր գոր-
ծողն ինքը պէտք է զզուի իւր անձից, եթէ մանանեխի հա-
տիկի չափ մարդկային նշոյլ ունենայ։ Ս․ Գ․ լուսաւորիչը
արդար զայրոյթով խօսում է այդ աններելի, զզուելի, ա-
պականուած սրտից բղխած ախտերի վրայ, որոնք մարդուն
անասունի խելօքութիւնից էլ ստորացնում են։ Բայց նա չէ
ուզում երկար խօսել «զոր ասելն կամ լսելն զազիր է» (64)։
Սակայն հոգևորականք ևս պարտաւոր են անվախ հալածել
այդ ախտերը և ուղղել ժողովուրդը (230), նոյնպէս և երկ-
րի պետերը կամ օրինական վերակացուները։

ՃԱՌ․ Թ․

Աստուած ամեն բանի մէջ չափ է դրել և եթէ մարդիկ
այդ կանոնաւոր չափի համաձայն ընթանան, բախտաւոր
կլինին այստեղ, երանելի կեանք կստանան հանդերձեալում
և ուրեմն կշախշախեն սատանայի գլուխը, որ իւր չափից

ելու և այժմ մարդկանց որսում է դէպի կորուստը: Նախամարդը չկարեցաւ պահել կանոնուած չափին, ուստի և դրախտից զրկուեց. պահքը դրուած է սրբութեան վարժուելու, մեղքերի դէմ զգաստանալու, առ Աստուած դիմելու, բոլոր զգայարանքները դէպի ճշմարտութիւն ուղղելու և մարմինն անգամ բժշկելու համար: Այսպիսով մեզ գեղեցիկ օրինակ են տալիս մարգարէներն և նոյն իսկ Քրիստոս: Բոլոր սուրբ մարդիկ միայն պահքով են կարողացել իւրեանց հոգուն ոյժ և տոկունութիւն տալ մեղքի դէմ մաքառելու: Սակայն պահք պահողը պէտք է գիտենայ թէ ինչ նպատակով է ժուժկալում մսեղէն, զօրացուցիչ և գրգռեցուցիչ ուտեստներից. նա պէտք է պահքով իւր վարքն ուղղէ, մի խօսքով պահքը մի սանձ է անզուսպ խորխորատից ոչ հեռու ընթացող մարդու բերանում: Հակիրճ և ազդու է վերջաբան ներբողը 267 տողից սկսեալ:

ՃԱՌ Ժ.

Աստուած ամենքին խնամում է, որ իւրաքանչիւր ոք ստանալով երկնային շնորհներ՝ թէ գործերով արդիւնաւորէ և թէ աշխատի ծառայեցնել և ընկերների բարեկարգման համար: Նա որ այսպէս գործելով՝ օգնում է այլոց, հաճելի է Աստուծոյ և միշտ կվարձատրուի, իսկ զըրկողը, սպանողը, արդարութիւն և իրաւունք ոտնակոխ անողը կդատապարտուի թէ այստեղ և թէ հանդերձեալում: Անձնիշխան կամքից է ծնւում չարը կամ բարին և ուրեմն մարդուցն է կախուած թէ նա՞ որ ճանապարհով կգնայ, միայն թէ իսկական բարի կամք ունեցողները կվայելեն Քրիստոսի երանութիւնները, այդպիսիք պէտք է ունենան հոգու աղքատութիւն, հեզութիւն, սգաւորութիւն, արդարութիւն, քաղց և ծարաւ, սրտի սրբութիւն, խաղաղասիրութիւն և այլն (տես. իմ «Գոհարներ Քրիստոսի քա-

բողութիւններից» Ս. Էջմիածին 1894. կամ նոյն թուի «Արարատը»:)

Ով ինչպէս որ աշխատում է, արդարութեան համար անձնուէր նահատակւում է, ըստ իր կատարելութեան աստիճանին էլ վարձատրւում է. նոյնպէս և արդարացի վարձատրւում է ամբարիշտն ըստ իր ամբարշտութեան աստիճանին: Մարմնաւոր մտածողը ձգտում է միայն դէպի մարմնաւոր իրեր, իսկ ով որ հոգևորի վրայ է մտածում, նա է որ գտնւում է Ս. Հոգուն հովանու տակ: Աղատը պէտք է առաքինութեամբ պահէ իր աղքատութիւնը, նոյնպէս և մեծատունը պէտք է առաքինութեամբ գործադրէ իր ունեցուածքը: Այսպէս և առողջն ու հիւանդն, իշխանն ու հպատակը պէտք է առաքինութեան սահմանից չելնեն, իշխանը պէտք է իր մտքից չձգէ Աստուծոյ անունը, հոգևորականն էլ իբրև ժողովրդի առաջնորդ՝ պէտք է աշխարհական պերճութեամբ, շուքով և զօրութեամբ չճօխանայ: Ամեն մարդ պէտք է Աստուծոյ հաւատարիմ լինի, ճշմարիտ ծառայ և որդի լինի և համոզուած լինի, որ Աստուած ամեն խորհուրդ գիտէ և ամենքին հատուցանելու է ըստ գործոց:

ԾԱՌ ԺԱ

Աստուած է տալիս մարդկանց բոլոր շնորհները: Շնորհների տակ լուսաւորուելով, սրբերը փայլել են մաքուր և սուրբ գործունէութեամբ և այդպէս են ծառայել ամենասուրբ տէրութեան: Առաքեալք հրաման ստացան սրբակեաց մարդկանց տալ եկեղեցու սպասաւորութիւնը. սակայն վարքի սրբութեան հիմնաքարը հաւատքն է, որ մեր մէջ սրբութիւն է հաստատում և սէր. ուստի և հալածում է բոլոր մեղքերը: Սէրը թէ շինող է աշխարհի բարեզարդութեան, թէ անձի բարեխայելչութեան և թէ հանդերձեալ

կեանքի արժանացնող է։ Նկատելի է միայն, որ սէրը, հաւատքն ու յոյսը ճշմարտապէս անբաժան են և միասին երանելի են դարձնում մարդու գործունէութիւն ու կեանքը։ Դոցանից ծագում է և հեզութիւն, որի գովեստն արդէն առաջ ևս արուած է։ Հեզութեան հետ ներբողում է և քաղցրութիւնը (քաղցրաբարոյ վարուեցողութիւն), որ միաւորուած է լինում խոնարհութեան, հնազանդութեան և հեզութեան հետ։ Այդ առաքինութիւնները տանում են մարդկանց դէպի հաւատքի և վարքի միաբանութիւն, որ ժողովրդի և ամէն գործի հաստատող և ամրացնողն է։

Եւ որպէս զի միաբանութիւնը բազմութեան մէջ կարելի և շահաւէտ լինի, պէտք է անպատճառ գթութիւն ունենայ իւրաքանչիւր ոք դէպի իւր ընկերը, որպէս զի օգնական լինի նորան, և զգայարանքների զգաստութիւն ունենայ՝ թէ չարն ու բարին ընտրելու և թէ բարին առաջ տանելու և չարն արմատախիլ անելու համար։ Եթէ մարդու զգայարանքները գործեն հաւատքով և առաքինութեան ճանապարհով Աստուծոյ պատուիրաններին համաձայն, այն ժամանակ կդառնան յաջողութեան, օգտաշահութեան և երանութեան զէնքեր ու գործիքներ և վայելքներ կընձեռուեն Աստուածանից իւրաքանչիւր այդպիսի մարդուն համար։

ՃԱՌ. ԺԲ։

Աստուած բազմատեսակ երախտիքներով առատացրել է ստեղծած աշխարհն, որպէս զի մարդիկ վայելելով հանդերձ ճմարտութեան մշակ լինին։ Վերին զօրքն և Տիրանուէր մարդիկ արբանեակ են Աստուծոյ կամաց, նոյնպէս առհասարակ ամէն մարդ պէտք է լինի, որովհետև ծնւում է աննշան, բայց յետոյ զիրք ստանում։ Ուստի մարդ նախ պէտք է ճանաչէ Աստուծուն և յետոյ բարեկեաց լինի և բարեգործ դէպի շրջապատողները։ Ով որ այսպէս է ապրում, Աստուծոյ սիրե-

լին է և երբէք չի անհետանալ աստուածային գրքի յիշատակարանից, իսկ մեղաւորները պահւում են վերջին դատաստանում հատուցումն ստանալու համար: Մարդ մեռնում է և նորա հոգին ուղարկւում է առ Աստուած, որ և տանում են հրեշտակները սաղմոսերգութեամբ. երկինք ուրախանում է ամեն հոգու համար, որ Քրիստոսի պատարագով հաշտութիւն և թողութիւն է գտել: Ուրեմն նոքա, որոնք հեթանոսական յուսահատական լաց ու կոծ են անում անդադրում, նոքա անհանգիստ են անում ոչ միայն ննջեցեալի հոգուն, այլ և Աստուծուն և երկնաւոր զօրքերին, ուստի և ծանր պատուհասների են հանդիպում: Մարդու կեանքը երեք աստիճան ունի, ծննդեան, աշխարհակեցութեան և հանդերձեալում, ուրեմն և այդ աստիճանները ուրախութեամբ անցնելու երանութեան մէջ մտնելու համար պէտք է պատուիրանապահ լինել: Ողբալի են այն մեռեալները, որոնք ամբարշտութեամբ են վերջացրել իւրեանց կեանքը. իսկ առաքինի մարդկանց վրայ յուսահատ լալը վնաս է թէ նորա հոգուն և թէ լացողին. այլ պէտք է ողբը միայն հոգով անել առ Աստուած և մեղքերի թողութիւն խնդրել աղօթքով և Քրիստոսի պատարագով. այս է իսկական սիրողի հոգը: Աստուծոյ սուրբերին մահը պատուական է, զի նոքա Աստուծոյ հաճելի կեանք են վարել, մինչդեռ վատ կեանք ունեցողը կենդանի մեռեալ է աշխարհում: Իսկ մեղաւորի մահը չար է, վասն զի այս աշխարհում բարի բան չէ գործել և գնում է հոգևոր յաւիտենական տանջանքի մէջ:

ՃԱՌ ԺԳ:

Աստուած իւր ամենագիտութեամբ և ամենիմաստութեամբ յորդորում է ամենքին, որ պատուիրանապահ լինին և երանութիւն ժառանգեն հանդերձեալում, այստեղ ևս բարեկեաց լինին և այլոց օրինակ: Հասարակութիւնը պէտք է իւր

շահը մէկ նկատէ. անցողները օրինակ պէտք է լինին եկողներին և եկողները նոցա յուսով և ժառանգութեամբ արժանապէս գործեն: Կենդանիները կարող են հաւատքով աղօթել մեռելոց հոգու համար, նոյնպէս և նոցա բարեխօսութիւնը խնդրել և այդ ընդունելի է Աստուծոյ, ինչպէս ցոյց է տալիս Ս. Գիրքը, վասն զի արդարները Աստուծոյ առաջ են միշտ: Քրիստոս փրկեց բոլորին և այժմ սրբերը Քրիստոսով են բարեխօսում ուստի և մենք բարեխօսութիւն ենք խնդրում պատարագով և մանաւանդ սուրբ սրտով մատուցած պատարագով, որ Աստուծոյ ընդունելի է: Պատարագով կատարւում է և առաքեալների ու նահատակների յիշատակը. դոքա աստուածահաճոյ կեանք անցկացնելով՝ հրեշտակային կարգն են անցել: Մեղաւորք ևս եթէ ապաշխարեն Քրիստոսով կվայելեն երկնքի արքայութիւնը. մի խօսքով ամենքն ևս հաւատքով դիմելով դէպի Քրիստոս կվայելեն երկնաւոր փառաց պսակը: Մինչև անգամ մահուան վերջին ժամում զղջացող, սրտով ապաշխարող ու Քրիստոսի կենարար մարմնի և արեան հաղորդողը փրկութեան յուսով կգնայ առ Աստուած, զի Քրիստոս ոչ մի դարձողի անտես չէ անում: Ամենքի գործն էլ աննկատ չի մնալ և կունենայ հատուցումն, ուստի և մեռելոց հոգու համար պատարագ ու աղօթքը ընդունելի խնդիր է թէ բարեխօսութեան և թէ մեղաւորի թողութեան համար: Միայն թէ այդ ամենը պէտք է ուղիղ սրտով և ճշմարիտ հաւատով կատարել:

ՃԱՌ ԺԴ:

Աստուած լուսաւորում է ամենքին և դէպի սրբութիւն առաջնորդում. ստեղծելով մարդուն, նորա տկար մարմնին զօրացուցիչ է դրել հոգուն, որ պէտք է ճշմարիտ հաւատքով ազատող լինի նորան ու ցոյց տայ Աստուծուց տուած շնորհները մարմնի տկարութեան մէջ: Աստուած ստեղծեց մար-

մնի բոլոր դարմանները, բայց հոգի փչելով մարմնի մէջ՝ նորան և անդարման չթողեց, այլ տուաւ «ումանց խրատներ»: Հոգու յաղթանակը լինում է այն ժամանակ, երբ մարդ ցոյց է տալիս նորա արիութիւնը մարմնական փորձանքների մէջ. այդպիսիներին է Աստուած պսակում: Միածինն էլ այդպէս արաւ, չարչարելի մարմին առնելով՝ ցոյց տուաւ իւր գերագոյն սէրը դէպի մարդիկ: Տկար է մեր մարմինն, որպէս զի երբ լսում ենք թէ Աստուած մեզ «ըստ պատկերի իւրում» է ստեղծել, չամբարտաւանինք սատանայի նման, այլ յոյսերնիս Աստուծոյ վերայ դնենք և նորա զօրութեամբ զօրացնենք մեր մարմինը: Սակայն Աստուծոյ իսկական երկրպագուները շարունակ կյառաջադիմեն առաքինութեան ասպարիզում և վերջապէս կմտնեն երանութեան գերապանծ վայելքների մէջ:

Այս ճառի մէջ լաւ բացատրուած է մարդեղութեան խորհուրդը:

ՃԱՌ ԺԵ:

Աստուած իւր մեծ մարդասիրութեան համեմատ խնամում է մարդկանց և ամեն կերպ կոչում նոցա դէպի իւր արքայութիւնն ու փառքը: Մարդ ծնւում, աճում է և ապա կրթւում աստուածգիտութեամբ, որ գիտենայ կեանքի ճշմարիտ ճանապարհը և ճանաչէ իւր Արարչին. Նա պէտք է ամեն համակում աշխատի և որպէս զի չծուլանայ, Աստուած նորան չէ յայտնում մահուան ժամը: Վաղ մեռնողը ազատւում է թերևս զանազան փորձանքներից, սակայն բոլորի հոգիները գնում են դարձեալ կեանքի մէջ ըստ իւրեանց արժանաւորութեան: Մենք էլ գիտենք թէ ովք են արժանաւորները, քանի որ մեր առաջ են Քրիստոսի երանիները: Բոլոր հոգիները վայելում են երանութիւններ մինչև Հասարակաց յարութիւնն և նոցա փառքի առաջնորդը

նոցա հաւատքն է և անցեալ կեանքի առաքինութիւնը։ Իսկ ամբարիշտները զուրկ են այդ բոլոր երանութիւններից՝ պատժապարտ են և ուրեմն իւրեանց մեղաց չափով տխրութեան մէջ խղճի դառն խայթոցով տանջւում են։ Հարկաւ այդ հատուցումը միմիայն մի նախաստուեր է այն փառաւոր հատուցման որ լինելու է հասարակաց յարութեան միջոցին։ Հոգին ևս իւր զարգացման աստիճանի մէջ լինելով՝ զգայուն է լինում միւս կեանքում և առաւել իմացող։ Հոգին կենդանութիւն է տալիս մարմնին և երբ հեռանում է՝ մահ է պատճառում․ իսկ ինքը գնում է անմահութեան օթևանը։ Քրիստոս փրկեց մեզ և վերստին գալով յարութիւն և անմահական կեանք պէտք է պարգևէ իւր ճըշմարիտ հաւատացելոց։

ՃԱՌ ԺԶ·

Կատարում ենք սրբոց յիշատակը՝ երանում ենք նոցա և նոցա բարեխօսութեամբ վարձ ստանում, սակայն աղօթք և օրհնութիւնք Աստուծոյ ենք մատուցանում խնդրելով որ մեզ արժանի անէ նոցա ժառանգութեան մասին։ Ամեն ոք պէտք է յիշէ նոցա մեծագործութիւնը՝ խնդրէ որ Աստուած ազատէ փորձանքից՝ ինչպէս նոցա՝ և զօրացնէ մեզ չարի վրայ յաղթանակելու։ Այս է նաև սրբոց կամեցածը՝ ինչպէս և Պօղոս ու Բառնաբաս աւելի պատիւ չկամեցան՝ մինչդեռ սատանան կամեցաւ Աստուած դառնալ՝ ընկաւ և արհամարհեց սրբերին՝ որոնք գիտէին սատանայի ամբարտաւանութիւնն և անկումն ու խոնարհների բարձրանալը։ Նոքա բարեխօսութեամբ և իւրեանց կեանքի օրինակով առաջնորդում են դէպի փրկութիւն։ Ուրեմն պէտք է գընանք սրբերի հետքով՝ մեր այստեղի աշխատութեամբ հանդերձ խնդրենք հանդերձեալ հանգիստը՝ սրբուենք և նոցա ժառանգութեան հաղորդ լինենք։ Սրբոց հոգիքը հոգևոր

բարեխօսութեամբ Աստուծոյ ողորմութիւն են բերում աշխարհի վրայ, իսկ նոցա նշխարների մէջ երեւում է Աստուծոյ սէրը. տեսանելի բաներով անտեսանելին պէտք է ճանաչենք եւ նորան տանք փառաբանութիւն։

ՃԱՌ ԺԷ.

Բարեգործութիւն անելով եւ ճշմարտութեան ձգտելով՝ մարդիկ յարգում են իւրեանց անձն, ազատում վնասակարից եւ բարին մտածում։ Այդով նոքա խղճով հանգիստ եւ այլոց բարի օրինակ են լինում. գործը մարդուն բարձրացնում է, Աստուած էլ նորան յաջողեցնում է տենելով նորա բարի ձգտումները։ Իսկ ով որ վերակացու է, նա առաւել եւս պէտք է աշխատի գործել ճշմարտութեամբ, ապա թէ ոչ մահուամբ կզրկուի իւր շնորհներից. այդ երեւում է եւ Ս. Գրքի օրինակներից։ Ինչպէս առաւել է վերակացուի (հոգեւորականի) պատիւն Աստուծոյ առաջ եւ վարձը, նոյնպէս ծանր է ծոյլ, անհոգ եւ անպարտաճանաչ հոգեւորականի պատիժը։ Առաջնորդն ու վարդապետը նոյնպէս պարտաւոր են վարքով օրինակ լինել, իսկ անդադար քարոզութեամբ խրատող եւ ուսուցանող։

ՃԱՌ ԺԸ.

Աստուած ստեղծեց երկնաւոր զօրքերին եւ մարդկանց, որպէս զի նոքա ըստ աստուածային կամաց գործադրեն իւրեանց ստացած շնորհներն ի փառս Աստուծոյ։ Խոստում եւ սպառնալիք եւս տալիս է, որ միշտ իւրեանց սեփական կամքով ճշմարտութեան՝ այսինքն աստուածային պատուիրաններին հետեւեն։ Եւ որովհետեւ Աստուած կամենում է որ ամեն մարդ իւր ազատ կամքով գործէ եւ ճշմարտութեան պսակ ստանայ, ուստի անպակաս չի լինում եւ չարը, պատ-

ժելի չարագործութիւնը. այդպիսի վիճակում ստացած պսակն է արժանաւոր: Հոգևոր օրէնքն էլ խսկապէս մի լաւ փորձաքար է արժանեաց ընտրութեան համար: Քաջերը բազմոգիմի պատերազմ պէտք է մղեն աշխարհային չարեաց դէմ և պէտք է ունենան ճշմարիտ հաւատք, ճշմարտութիւն քարոզեն, բարեգործ լինին, միաբանութիւն սիրեն, սրտով օգնեն նեղեալներին, Աստուծոյ շնորհները շահեցնեն, սուրբ մնան, հեզ և խոնարհ լինին, ձգտեն դէպի երկնաւոր հանգիստ և Քրիստոսի մարմնի և արեան հաղորդութեամբ մաքուր և զինուած պահեն իւրեանց անձը:

ՃԱՌ ԺԹ.

Աստուած երկիւղածներին կոչեց դէպի անվախճան կեանքի լոյսն, որոնք և արի հանդիսացան աստուածային գործունէութեան մէջ ու փառաւորուեցան, մինչդեռ ծոյլ և անհնազանդները կորստեան են մատնուում: Սակայն դարձողներին ևս անտես չէ առնում, այցելում է փրկում, ուստի և նոցա դարձն է կամենում: Ուրեմն պէտք է ապաշխարողը նախ աղօթքով և պահքով սգայ իւր յանցանքները, հապա ատէ մեղքն ու մեղսակցին, սիրէ արդարներին, խորշէ յանցաւորներից, առաւել սիրով նեղութիւն կրէ արդարների հետ, քան թէ անիրաւների հետ հանգստութիւն ունենայ, սրտից Աստուծոյ երկիւղը չձգէ, մոռանէ իւր փըրկութեան համար, չծուլանայ, ճանաչէ իւր անձը, Աստուծոյ պատուիրանները պահէ և բարեգործութեամբ արժանանայ Քրիստոսի կենարար մարմնի և արեան հաղորդութեան: Այս ամենի մէջ պէտք է զղջման արտասուքն անպակաս լինի, որպէս զի խսկական դարձումը բնաւորուի մարդու մէջ, ապա թէ ոչ՝ մեղքերը կը թագաւորեն նորա մարմնում և հոգում: Առաջինները վարձ ու պսակ կստանան իսկ վերջինները չարաչար կպատժուին: Մենք պէտք է հո-

գով աղօթենք Աստուծոյ և խնդրենք սրբութիւն. Նա մեզ տալիս է թողութիւն նախ աւազանով և ապա պատարագով։ Միշտ ապաշխարութիւնը պէտք է, միայն թէ այդ ևս ըստ տեսակ տեսակ մեղաց է։ Ապաշխարութիւնն էլ ոչ միայն զղջմամբ և աղօթքով, այլ և իւրաքանչիւր մեղքի փոխարէն բարութիւն գործելով կլինի։ Այդպէս սրբութիւն պահելով՝ կվայելենք երկնաւոր ուրախութիւնը։

ՃԱՌ Ի.

Շնորհատու Աստուածը դրել է մեզ տէր աշխարհումս, որ գործենք ճշմարտութեամբ և հատուցումն ստանանք, պահելով ադամային այն սրբութիւնն, որ ունենք Քրիստոսով։ Նա մեզնից ոչինչ չէ ուզում, այլ մեր փոխադարձ յարաբերութեան արդար դատաւոր է, իր նմանողներին վարձատրում է, իսկ հակառակորդներին պատժում։ Մեղքերից պէտք է փախուստ տանք և գիտենանք, որ հանդերձեալի բարիքները մեր տեսածներից գեր ի վերոյ է, նոյնպէս և մեղաւորի պատիժները մեր գիտեցածներից շատ ծանր է։ Դորա համար մեր բոլոր զգայարանները պէտք է ծառայեն աստուածային ճշմարտութեան, որպէս զի լուսաւոր լինի մեր հոգին։ Որովհետև մեր բոլոր մարմնի մասերով մեղապարտ էինք, Քրիստոս մեզ ամբողջապէս միացրեց իր աստուածութեան հետ և փրկեց, ուստի և այդ սրբութիւնը պէտք է ամբողջ մարմնով շահագործենք, ճշմարիտ սիրով սիրելով նորան և նորա պատուիրանները կատարելով։ Եւ քանի որ Աստուած ամէն ինչ բարի է ստեղծել, պարզ է որ ամէն ոք կարող է չար լինել և ըստ իր կամաց ընկնել պատժի մէջ, ինչպէս սատանան. այնպէս որ չարագործն ու չարութեան հրապուրողը միապէս պատժելի են ըստ իւրեանց չար կամեցողութեան։ Մինչդեռ աւետարանի ճշմարիտ գործակիցները, արդարակամ քահանաները կամ

Հոգևոր պաշտօնեաները երանութեան ժառանգորդ կլինին։ Եւ ինչպէս որ երկնքում հրեշտակներն ու սատանաները օրոշուեցան իրարից, այնպէս էլ երկրումս բարի և չար մարդիկ իրարից որոշուում են նաև հանդերձեալ դատաստանի առաջ. մարդիկ իրեանք են գնում և ժառանգակից դառնում սատանայի տանջանքներին։ Այդ տանջանքները հասնում են չար մարդուն վրայ նաև այս աշխարհում, բայց սխալ է այն կարծիքը, որ իբր թէ այդ պատիժները սատանան է տալիս։ Աստուծոյ հարուածները մարդկանց զգաստացնելու համար են, որ մենք մեր կամքով գնանք դէպի ճշմարտութիւն։ Աստուած անչափ բարիք է արել մարդկանց, ուրեմն ապերախտները պէտք է պատժուլին, մենք, սակայն, կարող ենք Աստուծոյ պատիժը վարձի փոխել, կատարելով նորա հրամանները։ Մեր գործով կարող ենք հրեշտակ լինել և մեր գործով սատանայ—այդ մեր կամքն է՝ ինչպէս կամենանք, այնպէս կլինինք։ Մեր աշխատութեամբ ուրեմն պէտք է փառաւորենք Աստուծոյ անունն և արքայութիւնը սեփականենք։ Աստուծոյ դատաստանը արդար է և ոչ ոք չի մնալ առանց հատուցման, Աստուծոյ առաջ խտրութիւն չըկայ մարմնաւոր մեծի և փոքրի, այլ խտրութիւն կայ հոգևոր մեծութեան և փոքրութեան։

ՃԱՌ ԻԱ.

Աստուած իւր բազմախնամ բարերարութեամբ մեծամեծ շնորհներ է տուել մարդկանց և ում շատ է տուել, շատ և արդիւնք է պահանջում նորանից ըստ քանքարների առակին։ Շնորհքն ևս ըստ արժանեաց է տալիս, ինչպէս և չարը թափուում է մարդու վրայ ըստ վարքին արժանեաց։

Սակայն Աստուած անարժաններին էլ է տալիս շնորհներ, թէև նոցա միտքը խաւարուած է և չեն նկատում. և որովհետև նոքա չեն նկատում, շնորհքն ևս նոցանից արգել-

ուում է։ Աստուած տալիս է իմաստութեան շնորհք ամենքին, որպէս զի արդարների յառաջադիմութիւնն և արիութիւնը գնահատելի լինի, ապա թէ ոչ՝ չարագործները կարդարացնեն իրենց անձն, ասելով որ զուրկ են շնորհներից։

Իսկ աստուածասէրները շարունակ առաւելանում են շնորհներով իրենց աշխատութեամբ և Աստուծոյ հովանաւորութեամբ։ «Որ ոչն գուցէ, և զոր ունիցին՝ բարձցի ի նմանէ», բայց «որ գուցէ՝ տացի նմա և յաւելցի»։ (Մատթ. ժԳ, 12)։

ՃԱՌ ԻԲ.

Աստուածային անպակաս ամենակարողութիւնն երևում է նորա արարչութիւնից, այլ և նորա ընտրած մարգարէների, առաքեալների և սրբերի գործունէութիւնից։ Աշխարհումս բոլոր արարածները փոփոխական են, բայց Աստուած անփոփոխ, զի նա է ամենայնի Արարիչ և բոլորն էլ Աստուծոյ օգնականութեան են կարօտ, նորանից են ստանում ամենայն գիտութիւն և հանճար։ Աստուած է բոլորի զօրացուցիչ և քաջալերը, պահապան և յաջողիչը։ Ուստի դատապարտելի և պատժապարտ են թէ նոքա, որոնք թերանում են այս հաւատքում և թէ նոքա, որոնք Աստուծոյ պաշտօնեաներին կամ արարածներին են բարձր համարում։ Ուրեմն բոլորն և ս մեծից մինչև վերջին չնչին փոքրը պէտք է փառաբանեն և օրհնեն Աստուծոյ անունը ըստ սուրբ մանկանց օրհնութեան. մեր բոլոր ուրախութիւններն ու տօները պէտք է այդ օրհնութեան հետ միայարուած լինին, որովհետև ամենայն ինչ Աստուածանից է սկիզբն առել և Աստուածանից է ստանում՝ իւր պահպանութիւնը։

Ս. Գրիգոր Լուսաւորչի այս խրատը հրաշապէս արձագանք է գտել հետագայ դարերում շարունակ և նորա ճըշմարիտ հետևորդներից ոչ մէկը չէ շեղուել գծած սուրբ սահ-

մանից։ Աւելորդ չենք համարում դնել այս տեղ մի գեղեցիկ գրութիւն, որ ս. լուսաւորչի ոճով ամփոփում է մեր կանոնական անփոփոխելի հաւատալիքն, և որ գրուած է Է. դարի սկզբում իբրև մի ուխտ յաւիտենական։

ԹՈՒՂԹ ԿՈՄԻՏԱՍՈՒ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ Ի ՊԱՐՍՍ։

«Ամենայն բան ջանիւ», ասէ ուրեմն ժողովողն ի խօսսըն իւրում իմաստունն Սողոմոն, մանաւանդ խօսել բանս մտաւորս և լսել յումեքէ զհանճարովն ասացեալն, որք են աշխարհական զրօսանաց և ցնորից երկրի խօսք ի մարդկանէ ասացեալք։ Որչափ ևս առաւել ի Գրոց Սրբոց բերանովք արժանաւոր մարդկան սպասաւորաց պատգամացն Աստուծոյ ճառք գտցին աշխատութեամբ լի լսողաց իմանալ, քան թէ սոցա ասել Հոգւոյն շնորհիւ։ Վասնորոյ կարօտանամ յոյժ շնորհին Քրիստոսի ես ասողս, զոր մարդոյ բերանով ոչ է արժան ումեք խօսել, բայց թէ բերան Աստուծոյ ոք կարասցէ լինել զպատուականն հանելով յանարգէ. և կամ որպէս միւսն, թէ «եդ զբերան իմ որպէս սուսեր սուր». ապա համարձակեսցի խօսել հրամանաւ Տեառն, և ոչ լռել. զի ժողովուրդ բազում լիցի Քրիստոսի։ Եւ մանաւանդ յոյժ դժուարին է լինել հասկաքաղ ի հունձս և ճռաքաղ ի կութըս զայլս յառաջագոյն զբանս Գրոց ասացեալ մեծաւ քըննութեամբ. ոմանց թերևս և ի գիրս տպաւորեալ է զիմաստըն, վասն զի բազմաժամանակեայն է և հինն, որպէս գինի, յախորժելի է յարբմունս քան զնորս. նոյնպէս և տարրացեալ զբանն զբազում ժամանակս ի լսողացն միտս, մանաւանդ զի և ոչինչ սխալանք ուղիղ հաւատոյ գտանիցեն յառաջագոյն ասացեալսն, և ոչ աննշանից ոմանց կամ սակաւուց վարդապետութիւն բանից իցէ լեալ։

Իսկ իմ յաստուածայինն թևակոխելով մտածութիւնս

զյառաջբերութիւն բանիցն ընծայեցից, և զայս ոչ նորոգաձևութեամբ յաղագս վերին և լուսաշաւիղ գանձուն պատուականի, որ է փրկութիւն աշխարհի, թէպէտ և յամենից ծանեալ ըստ առաքելոյն ձայնի: Վասն զի չէ ծանեալ առ նոսա լուսաւորութիւն Աւետարանի փառացն Քրիստոսի. բայց ոչ թագչի ի սիրողաց իւրոց՝ հասանէ առ ցանկացողս իւր, զի զմտաւ ածելով զնմանէ՝ կատարեալ իմաստութիւն է ուսարտել զանուն նորա ուղիղ հաւատովք արմատ անմահութեան, ըստ Սողոմոնեան բանին, առաւելեալք որ ի մահ Որդւոյն Աստուծոյ կենդանացեալք հաղորդացն անճառաբար՝ զհոգւոյն Սրբոյ զյորդեգրութեան շնորհս յինքեանս բերելով:

Գրեալ է թէ «իմաստունն ի ժամանակին յայնմիկ լռեսցէ», բայց այժմ ժամանակս զիս պահանջէ վասն արտաքնոցն, որք ոչ են յայսմ գաւթէ, և համարձակութիւն տայ թէ՝ «զընացէք՝ մինչ զլոյսն ունիք ի բարեաց գործոցն առաքինութիւնս անխափան», և թէ «յամենայն ժամ պարտ է ի բարիս նախանձաւոր լինել»: Եւ դարձեալ. «խօսեցայ զվկայութիւնս քո առաջի թագաւորաց և ոչ ամաչեցի, առանց դանդաղանաց». մեք եղիցուք սատարութիւն ազօթից իմոցս հօտի, քաջալերեալք հասցուք ի կատարումն բարեաց և ի նշանակեալ նպատակ երանելոյն Պօղոսի, որոյ պարծանք խաչն և ազատութիւն յերկինս և կատարիչն Յիսուս: Եւ դարձեալ թէ՝ «յիշեցէք զառաջնորդս ձեր, որք խօսեցան ձեզ զԲանն Աստուծոյ, հայեցեալ յելս գնացից նոցա, նըմանողք եղերուք հաւատոցն նոցա»: Եւ դարձեալ թէ՝ «նախանձաւոր լերուք շնորհացն՝ որ լաւն են», և մի տարրասցի յիմն խորհրդեան լռութեամբ պատուել զսակաւաբանութիւնս իմ և մի յուլացեալ լքայց զօգիտութիւնն բաղբաղելով և մի քան զեդեալն օտարաձայնեալ, այլ որպէս բանս է թէ հաստատուն հիմն Աստուծոյ կայ և ու-

նի զկնիքս զայս. քանզի գիտեմ յո՛ հաստատեալն եմ և հաւատացեալն եմ, թէ կարող է զաւանդն իմ պահել և ըղգաւանութիւն ուղղափառ հաւատոյ, զի ոչ նոր սքանչելիք՝ ու՞ր զի և հովւացն ընդունել շնորհս մարգարէութեան, և ձկնորսաց լինել աւետարանիչ բանին Աստուծոյ, և Սարեփթուհի ի սովի կերակրել մարգարէին, և բանի և աղբիւր ջրոյ կենդանւոյ անձին Սամարուհւոյ:

Ունիմ և յոյս քաջալերութեան յաստուածաշունչ գըրոց յարմարական տեսողութեամբ ըստ զանազան դիմաց ընդ միտ ածելով զայնոսիկ, որք այսպիսեօքս վարեցան. առ որս առատապէս զեղան շնորհք մարգարէութեան Քրիստոսի, քանզի նոյն Տէր է՝ բաւական բոլորեցուն, որ կարդան առ նա:

Պարգևեսցի և ինձ բան ի բանէն ի բանալ բերանոյ իմոյ՝ խօսել զխորհուրդն Քրիստոսի՝ պապանձեցուցանել զթշնամիսն ուղղափառ հաւատոյ, քանզի են ոմանք՝ ըստ Աւետարանին պատմութեան, ունելով զզգեստ գառանց և զլեզուս իւրեանց սրեալ ի հայհոյութիւն Ս. Երրորդութեան. յորմէ հրաժարեցոյց զմեզ Որդին Որոտման ոչ ընդունել ի տուն և ոչ ողջունել բանիւ, և զնոցին վարդապետութիւնըս անուանել ամպս անջրդիս, ծառս պտղակորոյս կրկնամեռս, նիւթս հրոյն յաւիտենականի, որք վառեն անձանց զհուր գեհենին՝ սնուցանեն զորդն անմահ:

Արդ՝ ոչևս յամել ի նախերգութեանս, այլ պատրաստաբար և խոհականագոյնս յաստուածայինսն վերաձգեալ ըղմիտս, ես և հաւատացեալ ինձ հօտս, այսպէս հաւատամք և խոստովանիմք, որպէս և հանգիտապատիւ սուրբն Գրիգորիոս Հայրապետ սրբոյ Եկեղեցւոյս Հայաստան աշխարհիս ուսոյց մեզ:

Հաւատամք ի մի Աստուած ի Հայր, ի Տէր, յԱրարիչ երկնի և երկրի, երևելեաց և աներևութից, և ի միածին յՈր-

դին Աստուծոյ, որ ի Հօրէ և առ Հօր և ընդ Հօր, և ի Ս. Հոգին՝ որ ի նոցունց էութենէ, և նովաւ արար զամենայն, որ է մի տէրութիւն, մի զօրութիւն, մի աստուածութիւն, Հայր յանձնէ, Որդի ի Հօրէ, Հոգի ի նոցունց, նոցին խկութեամբն, էութեամբն, աստուածութեամբն, երեք անձինք, մի կատարեալ կամք, Հարթ, Հաւասար, Հասարակ, ի բարձրութիւնս, ի խորութիւնս, ի լայնութիւնս, յերկայնութիւնս. մի բնութիւն աստուածութեան, մի պսակ երրորդութեան և լի են երկինք և երկիր փառօք նորա: Այսպէս Հաւատամք և խոստովանիմք և երկրպագեմք սրբոյ Երրորդութեանն ի միութիւն անդր. նոյնպէս և սրբոյ միաւորութեանն յերրորդութիւն անդր, անպարառք, անխառնք, անսկզբունք, Համագոյականք: Զի որպէս անխառնելի է Ս. Երրորդութիւնն, նոյնպէս և անբաժանելի: Անխառնելի է յաղագս յիւրաքանչիւր յատուկ առանձնաւորութեան. իսկ անբաժանելի, վասն զի ամենակալ է Հայր, ամենակալ Որդի, ամենակալ Ս. Հոգին, մի բնութիւն աստուածութեան, մի իշխանութիւն, մի զօրութիւն, մի պետութիւն: Եւ վերջին ժամանակս Միածին Որդին Աստուծոյ կամօք Հօր և իւր Սրբոյ Հոգւոյն վասն մեր և վասն մերոյ փրկութեան խոնարհեցոյց զերկինս և էջ յարգանդ կուսին, և առ մարմին ի Մարիամայ սրբոյ կուսէն աստուածածնէ և միացոյց զանմեռն ընդ մեռոտն, և զապականացուն և զմահկանացուն ընդ անմահ աստուածութեան իւրոյ խառնեաց և միացոյց և արար անապական, զի առանց ամենայն Հակառակութեան նուաղն ի լաւէ անտի օրհնեսցի: Աստուած վայելչաբար ծընաւ ի սրբոյ կուսէն, որոյ հետք կուսութեան ոչ ապականեցան, և ի խանձարուրս պատեցաւ՝ կաթնասուն լեալ. և յետ երկոտասան ամի եկն ի տաճարն, զի յայտնի արասցէ զիւր աստուածութիւնն: Ի վերայ երկրի երևեցաւ, ընդ մարդկան շրջեցաւ միաւորութեամբ տնօրէնութեանն. քաղ-

ցեաւ և ծարաւեցաւ ոչ սոսկ մարդկօրէն բնութեամբ, այլ միաւորութեամբ անօրէնութեանն աստուածավայելչաբար: Եւ յետ Լ. ամի եկն ի մկրտութիւն, մկրտեցաւ ի Յորդանան ի Յովհաննէ, վկայեցաւ ի Հօրէ՝ «դա է Որդի իմ սիրելի»: Պահեալ զքառասուն տիւ և զքառասուն գիշեր, յետ այսորիկ փորձեցաւ ի սատանայէ, բանն մարմնացեալ ըղկոյրսն լուսաւորեաց և զգիշերն ի տիւ փոխեաց, զչորեքօրեայն զ«ո՞ւր եդիք»ն զոյգընթաց արար: Բանն մարմնացեալ ապտակեցաւ և չարչարեցաւ, ոչ սոսկ մարդոյն ասեմ ըղչարչարանսն զխաչն և զմահն, և ոչ զնշանագործութիւնսն միայնում Բանին Աստուծոյ, այլ միաւորութեանն անօրէնութեամբ, քանզի Բանին Աստուծոյ մարմնացելոյ են ամենայն բարձրագոյնքն և խոնարհագոյնքն: Եւ այսպէս կամօքն եկն ի խաչ, մեռաւ և թաղեցաւ և յերրորդ աւուր յարեաւ ըստ գրոց, զի տիրեսցէ կենդանեաց և մեռելոց: Եւ յետ Խ. տունջեան և Խ գիշերայ համբարձաւ յերկինս, որպէս «տեսին առաքեալքն.» և նստաւ ընդ աջմէ Հօր, որպէս ետես ս. Ստեփաննոս ի վկայելն իւրում, ասէ, «տեսանեմ զերկինս բացեալ և զՅիսուս, զի կայ ընդ աջմէ Աստուծոյ»: Եւ գալոց է նովին մարմնովն և փառօք ի դատել զկենդանիս և զմեռեալս, որոյ թագաւորութեան ոչ գոյ վախճան:

Եւ յետ այսորիկ, որպէս Նազիանզն Գրիգոր աստուածաբանն ասէ, «մի է Աստուած Հայր կենդանի Բանին, էական իմաստութեան և զօրութեան կերպարան իւրոյ, կատարեալ՝ կատարելոյ ծնող. Հայր Որդւոյ միածնի. մի Տէր մի միայն ի միայնոյ, Աստուած յԱստուծոյ, կերպարան և պատկեր աստուածութեան, Բան գործաւոր, իմաստութիւն պարունական, ամենեցուն ընդ լինելութեամբ անկելոցս զօրութիւն և բոլորից արարող. Որդի ճշմարիտ անտեսանելւոյն անապական անապականին, անմահ անմահին, մշտնջենաւոր մշտնջենաւո-

րին, մի Ս. Հոգի՝ Աստուծոյ զէութիւն ունելով. և Որդւով երևեալ յայտնապէս մարդկան, պատկեր Որդւոյ, կատարեալ ի կատարելոյ։ Պատճառ կենդանութեան, սրբութիւն՝ սրբութեանց շնորհօղ, որով ծանուցանի Հայր, որ ի վերայ ամենեցուն և յամենեսին, և Որդի Աստուած՝ որով ամենեքեան։ Երրորդութիւն կատարեալ փառօք և մշտնջենաւորութեամբ և թագաւորութեամբ, անբաժանելի և անօտարելի, ոչ ստեղծական ինչ և ոչ ծառայական յԵրրորդութեան, և կամ ի ներքսածական, որպէս թէ յառաջագոյն ոչ եղելոյ՝ զկնի ի ներքս ածաւ. և ոչ երբէք նուազեաց Որդի ի Հօրէ, և ոչ յՈրդւոյ Հոգի, այլ անփոփոխելի և անայլայլելի է միշտ երրորդութիւնն։

Եւ մեք երկրպագեմք Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, Աստուած զՀայր, Աստուած զՈրդի, Աստուած զՍուրբ Հոգի. մի բնութիւն երիցն առանձնաւորութեանցն իմանալեաց կատարելոց ըստ ինքեանց յէութիւնս բաժանելոց թուով, ոչ բաժանելոց Աստուածութեամբն։

Ընդունիմ և զերկոտասան գլուխս երանելւոյն Կիւրղի, որ ընդդէմ Նեստորի տացեալսն է, այսպէս թէ՝ «Որ ոչն հաւատայ թէ բանն Աստուած չարչարեցաւ մարմնով, խաչեցաւ մարմնով, ճաշակեաց զմահ մարմնով, եղև անդրանիկ մեռելոց, քանզի միշտ կենդանի է և կենդանացուցանէ զամենեսեան որպէս զԱստուած, եղիցի նզովեալ»։ Եւ յետ այսորիկ որպէս աստուածաբանն Գրիգորիոս, և Գրիգոր Նէոյ Կեսարեայ, և Բասիլիոս Կեսարու եպիսկոպոս, և Աթանասիոս, և Կիւրղոս հայրապետ Աղէքսանդրի, և Ս. Գրիգոր Պարթև հայրապետն Հայոց Մեծաց, ուսումնասիրութեամբ և գիտութեամբ սոցա ճանաչեալ զՀին և զՆոր կտակարանս, այնչափ հաւատ եղեալ մի բնութեան աստուածութեան երից անձնաւորութեանցն, ըստ որում

աներկբայելի հաւատով և զարդարիմք երիւք ժողովեալքս այսօքիւք ի պատիւ ամենասուրբ Երրորդութեանն՝ սահմանաւ զոր եդեալ է ՅԺԲ· աստուածաշունչ ս· հարցն որ ի Նիկիա, որոնց գլխաւոր Ս· Ռստակէս հայրապետ Հայոց Մեծաց, և առացին այսպէս վասն բանին մարմնանալոյ, թէ Աստուած էր յԱստուծոյ, լոյս ի լուսոյ, Աստուած ճշմարիտ յԱստուծոյ ճշմարտէ, ծնեալ և ոչ արարեալ՝ իջեալ ի յերկնից, մարմնացեալ և մարդացեալ ի ս· կուսէն Մարիամայ, չարչարեալ՝ այսինքն խաչեալ և թաղեալ, և յերրորդ աւուր յարուցեալ, համբարձեալ յերկինս և գալ դատել ըզկենդանիս և զմեռեալս, որոյ թագաւորութեանն ոչ է վախճան: Նոյնպէս և զամենայն աղանդսն նզովեցին և արտաքըս ընկեցին ի կաթուղիկէ առաքելական Եկեղեցւոյ:

Նախ առաջին զԱրիոս, որ զՈրդի արարած կոչէ, և ոչ զբանն մարմնացեալ ի ս· կուսէն, այլ ասէ՝ «Նա է անդրանիկ ամենայն արարածոց և նովաւ արար զամենայն: Ըստ նմին և հարիւր յիսունքն որ ի Կ· Պոլիս ժողովեցան, որք զՄակեդոն՝ որ մարտնչէր ընդ Հոգին Սուրբ՝ նզովեցին և ի բաց ընկեցին: Նոյնպէս երկերիւրքն որ յԵփեսոս ժողովեցան և զամբարիշտն Նեստորիոս նզովեցին և արտաքս ընկեցին ի կաթուղիկէ Առաքելական Եկեղեցւոյ, որ յանդուգն բերանով ասէ, «Ոչ է պարտ և արժան զՄարիամ Ակոյս Աստուածածին խոստովանել, այլ մարդածին, և ոչ ըզխաչեալն Քրիստոս՝ Աստուած այլ տաճար եղեալ Աստուծոյ Բանին և զԲան ոչ խոստովանեալ մարմին եղեալ ըստ Աւետարանին աւանդութեանց, այլ Աստուած ի մարմնի բնակեալ, այսինքն ի Քրիստոսին՝ ի Մարիամայ ծնեցելոյ մարդոյն, զուգապատիւ զնա կամեցեալ ցուցանել, կամ նուազ ինչ մեծագոյն միում ի սրբոց և ի հոգեկիր արանց, և բազում և այլ հայհոյութիւնս խօսեցաւ, զի յորժամ զսորա աղանդակցաց բանս ի մէջ բերցուք, պատմեսցուք զբովանդակն:

Նզովեցին և զՆեստորէս, որ էր վանական Իկոն կղզւոյ, որ զմարմինն տէրունական առ աչօք խոստովանի և ոչ ի մարդկային ի բնութենէս, այլ ինքն իսկ մարդ կերպացաւ, ասէ, յարգանդի կուսին, ոչ ինչ առնելով ի բնութենէ կուսին։ Նզովեցին և զՍաբել Լիբիացի, որ զսուրբ Երրորդութիւնն մի դէմ խոստովանի և ոչ երիս անձինս կատարեալս։ Նզովեցին և զԱպողինարոս Լաւոդիկեցի, որ մասն ինչ առեալ, ասէ, Քրիստոսի, այսինքն մարմին միայն, և ոչ բովանդակ մարդ եղեալ. աստուածային էր, ասէ, Հոգևորութեամբ հոգիացեալ, և պէտք ինչ ոչ էին նմա մարդկեղէն հոգւոյ։ Նզովեցին և զՄարկիոն Պոնտացի, որ ասաց թէ Աստուած որ զամենայն արար՝ չէ բարերար, և ոչ Հայր բարերարին Քրիստոսի, այլ այլ ոմն է արդար և ստոյգ, և Քրիստոս մարմին ի մէնջ ոչ էառ։ Նզովեցին և զՄարկեղոս և զՓոտինոս, և զՍոփրոնիոս, որ զբանն ազդումն ասեն, և զազդումնն բնակեալ յայնմ, որ ի զաւակէն Դաւթի եղև, և ոչ էութիւն ինչ անձնաւոր։ Նզովեցին և արտաքս ընկեցին ի կաթուղիկէ առաքելական Եկեղեցւոյ զՊօղոս Սամոստացի և զտումարն Լևոնի և զժողովն Քաղկեդոնի, զի ասացին երկուս բնութիւնս և երկուս կերպարանս ի Քրիստոս Յիսուս յետ միաւորութեան տնօրէնութեան ի ս. կուսէն, որ լինին յայտնապէս երկու անձինք։ Նզովեցին և զՍևերոս, որ ասաց թէ մարմինն Քրիստոսի ապականացու էր մինչև ցյարութիւնն, և յետ յարութեան արար զնա անապական։ Նզովեցին և զՄոնտանոս, որ զինքն Հոգին սուրբ անուանէ և կախարդութեամբ և պոռնկութեամբ վարի։ Նզովեցին և զՄակեդոնիոս, որք զՀայր և զՈրդի խոստովանին և զՀոգին Սուրբ ուրանան։ Նզովեցին և զՄելքիսեդեկիտսն, որ զՄելքիսեդեկ Աստուած անուանեն թէ նա է Որդին Աստուծոյ։ Նզովեցին . . . իոս, որ զմարդկային բնութենէ ասեն՝ գրի, որպէս մոմ մատանեաւ, և շուրջ գան

ոգւոք փոփոխմամբք և ցանկութեամբք ի միմեանս իջանեն։ Նզովեցին զՀերովդէնոս, որ ասեն թէ Հերովդէս էր Քրիստոսն և արդ նմա մնան։ Նզովեցին և զԱրքանդեղիտոն, որ զՀրեշտակապետն Աստուած գոլ ասեն թէ նա մարմնացաւ ի ս. կուսէն։ Նզովեցին և զՆաւատիանոսս, որ զապաշխարութիւն ոչ ընդունեն։ Նզովեցին և զՎաղենտինոն և զՄանի, և զկումբիկլիոս, և զԹէոդորոս Տարսոնացի, և ըզԹէոդորիտոս, որ եպիսկոպոս էր Կիւրղոս քաղաքի, և զԱկակ, և զԲարծումա Ընծիշնացի, որ զբնութիւն Որդւոյ յերկուս բաժանեն և աստուածութեամբն անչարչարելի ասեն, զխաչն և զմահն մարդոյն միայն կազմեն, և ոչ միաւորութեան տնօրէնութեանն խոստովանին։

Ընդ նմին նզովեմք ես և հաւատացեալ ինձ ժողովուրդս և արտաքս ընկենումք ի Ս. Եկեղեցւոյ զամենայն հերձուածողս, զորս նզովեալ է սուրբ աստուածաշունչ հարցըն իմոց և վարդապետաց, քանզի գրեալ է թէ՝ «զգոյշ լերուք ի չար մշակացն և գիտասջիք զայնպիսիսն, որ այնպէս գնասցեն արտաքոյ վարդապետութեանն, զոր դուքն ուսարուք. և խորշեսջիք ի նոցանէ, զի այնպիսիքն Տեառն մերոյ Քրիստոսի ոչ ծառայեն»։ Եւ դարձեալ թէ՝ «զգոյշ կացէք անձանց և ամենայն հօտին, յորում եդ զձեզ Հոգին Սուրբ տեսուչս՝ հովուել զժողովուրդ Տեառն»։ Արդ և ես գոհացայ զԱստուծոյ ի վերայ այսոցիկ որ ասացանս յիմ նուաստիմաստ գիտութենէս և աղաչեսցուք զմարդասէրն Քրիստոս, տալ մեզ զգուշութիւն առ ի պահել, զոր ինչ լուաքս, և ծանեայք զուղիղ հաւատս, զի և մեք և դուք ուրախ լիցուք և հերձուածողքն զամօթ զգեցցին. խնդրեսցուք ի Տեառնէ, զի ընդ հաւատոցս վարձս արժանաւորս շնորհեսցէ մեզ, զի ի նորա փառս կեցցուք և մի՛ աստեօքս վրիպեցիմք ի յաւիտենական հանգստեանցն, զորս պատրաստեալ է ընտրելոց իւրոց։

Այլ բարեխօսութեամբ Ս. Աստուածածնին եղիցուք

Նմանողք այնոցիկ, որք հաւատովք և երկայնամտութեամբն ժառանգեցին զաւետիսն Աստուծոյ: Նմա փառք ամենատեառն, որ վասն մերոյ փրկութեան մարդացաւ և մարդակերպ շրջեցաւ, եկեր իբրև զմեզ և արբ, տանջեցաւ, չարչարեցաւ, խաչեցաւ, բևեռեցաւ, սպանաւ, թաղեցաւ, կենդանացաւ, յարեաւ և վերացաւ և նստաւ ընդ աջմէ Հօր ծնողին իւրոյ, և Հայր կենդանացոյց զամենեսեան, որ ի նա հաւատացին և հաղորդեցան աստուածեղէն փառացն և նորոգեցան ի փառս անպատումս և իշխանութիւն ետ որդիս Աստուծոյ լինել և եցոյց նոցա Հայր շնորհաց զծընողն իւր և հրաման ետ մեզ Հայր կոչել զԱստուած: Արդ զճշմարիտ Որդւոյն Աստուծոյ եղբարք անուանեալ, զորս առեալ Որդւոյ առ Հայր մատուցանէ, թէ՝ «ահաւասիկ ես և մանկունք իմ, զոր ետուր ինձ՝ Հայր»: Եւ դարձեալ ասէ. «Պատմեցից զանուն քո եղբարց իմոց, ի մէջ եկեղեցեաց օրհնեցից զքեզ» որպէս վասն բարեօք դաւանութեան Պետրոսն զՔրիստոս Որդի Աստուծոյ ծանուցեալ. ըստ որում և զերանութեան անուն ժառանգեաց: Եւ թէ՝ «Դու ես վէմ և ի վերայ այդր վիմի շինեցից զեկեղեցի իմ և դըրունք դժոխոց զնա մի յաղթահարեսցեն». ընդ նմին հաւատացին նմա փականք արքայութեան երկնից, և տուաւ նմա կապելն և արձակելն ի յերկինս և յերկրի,* որոյ եղերուք դուք որդիք ժառանգաւորք նորին աթոռոյ (Անտիոքայ) ուղիղ հաւատով և բարւոք խոստովանութեամբ:

Յամբիշոյ մետրապօլիտն, Պօղոս Արուեստան եպիսկոպոս, Գաբրիէլ Տաճկայ եպիսկոպոս, Յովնան Հերթայ եպիսկոպոս, Սիմոն Նինուէի եպիսկոպոս. Սաբասխոյ, կոհենի Հորական եպիսկոպոս, Գաբրիէլ Քարմայ եպիսկոպոս, Բենիամին Որնկի եպիսկոպոս, Ստեփաննոս Արզնոյ եպիս-

* Հմմտ. վերև էջ 195, տ. 76.

կոպոս, և այլ բազում եպիսկոպոսունք եպիսկոպոսակցօք և սարկաւագօք և ուխտիւ ս. եկեղեցւոյ, որք խնդրեցին զհաւատ քրիստոսասէր Հայոց, որք ի դրան արքունի հասեալ կային: * Ի խնդրոյ ձերմէ հրամանաւ տերանց ես կոմիտաս Մամիկոնէից եպիսկոպոս, որ յաջորդեցայ ի կաթուղիկոսութիւն Հայոց Մեծաց, ետու զայս յետկարս բոլորով սրտիւ և աներկբայելի հաւատով առաջի բազում Նախարարաց Հայոց և այլ ազգաց քրիստոնէից, որք ի դրան արքունի հասեալ էին, մանաւանդ առաջի մեծի տանուտեառըն խոսրով Շումն կոչեցելոյ, որոյ ճանաչիւր անուն Սըմբատ յազգէ Բագրատունեաց. շինեալ ես և հաւատացեալ ինձ հօտս ի վերայ հիման առաքելոց և մարգարէից և ս. Գրիգորի կենդանի մարտիրոսին Քրիստոսի, և որք ըստ նըմանէ ս. հարքն, որով և մեք ոչ խոտորեցուք քան զասացեալ հաւատս, զուրբ և զաստուածաշունչ հարցն, ոչ յաջ և ոչ յահեակ, զի ճշմարիտ զովելին Աստուծոյ միայն վայել է գիտել, և որոց յայտնէ Ս. Հոգին մարդկան: Այլ ազգզուգեալ բանիւք վասն անբաւ լայնութեան ծովու յիմաստութեան. սակայն ի մեզ մին և եթ պահեսցի զգուշութեամբ, ուղիղ հաւատովք և առաքինի գործովք հասանել ի նաւահանգիստն խաղաղութեան երկնից արքայութեան անշարժելի հնազանդութեան հօրն հաւատոց յանմարմնոցն և կամարար մարմնականացն: Եւ ձայնակցելով մեզ ուղիղ հաւատով մի հօտ լիցուք քաջ հովուին և կամ որդիք ըստ Աւետարանին բանին, զի յերևել ճշմարիտ հովուապետին՝ արժանի լիցուք ընդունել զանվախճան և զանթառամ փառաց պսակ:

---

* Տես. իմ գրուածքը. Հայաստ. Եկեղ. և Բիւզ. ժողովոց պարակայք. Մոսկվա 1892. էջ. 117. 119.

ՃԱՌ ԻԴ.

Աշխարհային կեանքից հեռացած կրօնաւորները պէտք է զգոյշ լինեն խորհրդների, խօսքերի և գործերի մէջ, որ սատանայից չխաբուեն և դէպի չարը թեքուեն: Նոքա պէտք է ամեն մեղքի և յուզմունքների դիմաց փայլեցնեն իւրեանց արդարութիւնն ու քաղցրութիւնը, պէտք է թողնեն հին մարդուն և նորը հագնեն՝ աստուածային կեանք վարելով քաջութեամբ: Երբէք չպէտք է մոռանալ, որ կրօնաւորի զէնքը մարմնաւոր չէ բնաւ, այլ կատարելապէս հոգևոր է, որով նա պէտք է պարծենայ: Կրօնաւորը պէտք է բոլոր սրտով հաւատարիմ մնայ վանքի միաբանութեան, գործած մեղքը խոստովանի առաջնորդին և երբէք չգրժի իւր միաբանակիցներին ու դաւաճանի: Կրօնաւորը պէտք է սիրով կրէ Քրիստոսի թեթև լուծն, որ միայն աշխարհասէրների և պորտաբոյծների համար է ծանր. պէտք է ճշմարտասէր, հնազանդ և խաղաղասէր լինի, միշտ ձգտելով անխզելի պահել միաբանութեան սուրբ կապերը: Իսկ վերակացուն պէտք է հայրաբար խնամէ և խրատէ, շարունակ հսկելով միաբանների վարքի վրայ: Ամենքը պէտք է միաշունչ և միակրօն լինին՝ ընկերի անձը առաւել դասելով. ով որ այս ձգտումը չունի, նման է յիմար կոյսերին, որոնք չունէին իւղ իւրեանց լապտերի մէջ: Իւրաքանչիւրն ուրեմն պէտք է քաջալերէ ընկերներին, աղօթքի համար արի և ջանասէր լինի, Աստուծուն յիշէ և առաջնորդին կատարեալ վստահութեամբ հնազանդուի: Միաբանութեան ամեն մի անդամը պէտքական է և միայն ապականուած փչացած անդամները պէտք է կտրուին, որ չվնասեն առողջներին: Պաշտօն ստանալու համար չպէտքէ յառաջ ընկնել, այլ միայն այն ժամանակ պէտք է ընդունել դըժուարութեամբ, երբ բոլորն էլ խնդրեն և եկեղեցու օգուտն

այդ պահանջէ։ Իսկ վանքից և եղբայրութիւնից հեռանալու ոչ ոք իրաւունք չունի, բայց եթէ միայնութեան մէջ մըտնել կամենայ, պէտք է բոլորի գիտութեամբ անէ։ Վերակացուն պէտք է հսկէ ամենքին և խրատէ, տնտեսը պէտք է բոլորը լաւ պահպանէ և ըստ իւրաքանչիւր պիտոյքին արդարութեամբ մատակարարէ, հիւրընկալը պէտք է բարեխըղճութեամբ դարմանէ և աղօթքից չփախչի պատճառանքներով, ագարակապետն ևս պարտաւոր է արդիւնքը շատացնել միաբանութեան համար, մի խօսքով բոլոր պաշտօնեաներն էլ պէտք է շարունակ ծառայեն միաբանութեան շինութեան համար, վա՜յ նորան, ով որ բամբասանքով, բանսարկութեամբ և այլ չարութիւններով է պարապում. Նա Աստուծոյ ծանր պատիժը կկրէ։ Ըստ ամենայնի օրինակելի պէտք է լինի վերակացու վանահայրը, իբրև ճշմարիտ հոգևոր հայր, միաբաններն ևս ճշմարիտ որդիք։ Սակայն ամենքն էլ պարտաւոր են անարատ վարքով ձգտել դէպի երկնաւորն և երկնաւոր զօրքին նմանել և այստեղ հրեշտակային կարգ պահելով, ընկած հրեշտակների այն է՝ սատանայ դարձածների տեղը բռնել։ Այդով կլինի նոր երկիր և նոր երկինք։ Ուրեմն բոլորն էլ պարտաւոր են միաւորութիւն պահել իրար հետ, իբրև մի մարմին լինել ի Քրիստոս, անշարժ պահպանել սուրբ հաւատը, մէկ հոգով կապուած լինել՝ անխզելի կապերով պնդուած և երբէք ոչ մի բանով չըդրժել կապերի կամ միութեան դէմ և չթուլացնել միութեան ամրութիւնը։ Այս է հրամայել Քրիստոս, սէր է քարոզել իւր աշակերտներին և միայն ճշմարիտ միաբանութիւն պահողներին է որ հանդերձեալ լուսաւոր բարիքներն ու փառքն ինչպէս հայելու մէջ ցոյց է տալիս, ըստ որում և նոքա են արժանապէս կարող վայելել Քրիստոսի ազատութիւնը կենարար մարմնի և արեան հաղորդութեամբ, որոնք իսկապէս սիրում են Աստուծուն և կոչուել են «ի կարգ աստուածային»։

Արդ «պինդ կալցուք զխոստովանութիւն անշարժ յուսոյն՝ և սովին հաւատովք կատարեալք լիցուք՝ կապեալք միով հոգւով յարմարմամբք յօդիւք՝ պնդեալք սովին հաւատովք անխզելի կապակցութեամբ։

ԸՆԹԵՐՑՈՒԱԾՔ․

ԳԼ․ Ա․ և Բ։

1․ Ասացեալ ճառ յաճախապատում․ և լուսաւոր վարդապետութեան՝ օգտի լսողաց․ Դ։ Ասացեալ ճառս յաճախապատումն և լուսաւոր վարդապետութեան յաղագս օգտի լսողաց․ Վ։ Վարդապետութիւն ս․ Գրիգորի Հայոց լուսաւորչի։ Ճառ յաճախապատումն յաղագս միութեանն և երրորդութեանն Աստուծոյ․ և բարի բնութեան Նորին․ և խնամոցն և սիրոյն առ արարածս իւր․ Կ։ Օգնեա՛ Հոգիդ սուրբ Աստուած, ապիկար անձին իմոյ․ Ե։

2․ Մի է բնութիւն և գոյութիւն ամենասուրբ երրորդութեանն․ և իւր է ինքնութիւն և ոչ յայլմէ գոյութենէ․ Վ․ Գ։ ․ ․ ․ և յիւրմէ գոյութենէ․ Կ․ Դ․ Ե․ Զանսկզբանցն ունի զպատճառսն Հայր զՈրդւոյ և զՀոգւոյ․ Վ․ զի ի սկզբանց ․ ․ ․ Կ․ Դ․ Ե։ Զպատճառն գոլ ․ ․ ․ Կ։

3․ Անփոփոխելի․ Վ․ Դ․ Ե։ 4․ կեանք և կեցուցիչ ․ ․ ․ Վ․ Գ․ Դ․ Ե։ կեանք է և կենդանացուցիչ․ Կ․ 5․ Հայր է Որդւոյ և բղխումն (բղխող Կ․) Հոգւոյ, Աստուած է և արարիչ արարածոց երևելեաց և աներևութից․ Վ․ Գ․ Դ․ Ե։ Պատճառ (սկի․ Վ․ պատճառս Ե․) ծննդեամբ Որդւոյ և բղխումն Հոգւոյն Սրբոյ, Վ․ Գ․ Դ․ Ե։

6․ Իսկ ինքն անծին ․ ․ ․ Վ․ Գ․ Դ․ Ե․ Կ։ ․ ․ ․ զի նա ըսկիզբն ․ ․ ․ Ա․ Բ։ 7․ Մշտնջենաւորին ․ ․ ․ Վ․ Գ․ Դ․ մշտնջենաւորն անսահման․ Կ։ 8․ Կեանքն կենդանեաց զկեանքն․ Կ․ զի կեանս ․ ․ ․ Կ։ 9․ ․ ․ ․ կենդանեաց․ Վ․ Գ․ Դ․ Ե։ 10 Լոյսն ծնեալ․ Վ․ Գ։ Լուսոյն ․ ․ ․ չունին․ Կ․ Դ․ Ե։ Բարւոյն զբարեբարն ծնեալ․ Վ․ բարերարն զբարերարն ծնեալ․ Գ․ Դ․ Ե․ Կ։

12․ Արարիչն․ Վ․ Գ․ Դ․ Ե․ Կ։ 13․ ․ ․ ․ Ծնեալ ամենայն արարածոց երևելեաց և աներևութից։ Երկնից հաստիչ և երկնային զօրութեանցն, երկրի և որ ի սմա են արարածք։

Լի է . . . վ. կ. գ. դ. ե։ 14. Որ վ. կ. դ. ե։ 15. Եւ. Նոքին։
16. Եւ Նոքին։ 17. Որ նոյն կայ. վ. գ։ Որ նոյն իսկ կայ. դ. ե.կ։
18. Ցօրինուած. կ. դ. ե։ 19. Ցամենակատար բնութեան նո-
րա. կ։ . . . Բնութիւնն։ Որում ոչ հասու լինին միտք. նաև
ոչ հրեշտակաց իմանի, թէպէտ և երագունք են որպէս զմի-
տըս մարդկան, այլ ուր . . . . կամք արարչին, յայնոսիկ ըս-
պասաւորութիւնս առնեն յերկնայինս և յերկրայինս. (յերկ-
նաւորս և յերկրաւորս. վ)։ Զի որպէս երկինք և ամենայն
զարդք նոցա հաստատեալ կան բանիւ Աստուծոյ և հոգւով
ամենայն զօրութիւնք, նոյնպէս և երկիր լերամբք և դաշ-
տովք, ծովովք և գետովք և աղբերբք (աղբերօք. կ.) և ան-
տառախիտ ծառովք (անտառախիթ ծառք դ. ե.) և չիք այլ
արարիչ, բայց միայն ամենասուրբ (սուրբ. վ. գ.) Երրորդու-
թիւնն ամենազօր տէրութիւնն, յատակ . . . վ. գ. դ. ե. կ։

20. Որ ասաց և եղեն, հրամայեաց և հաստատեցան։
Որ նստի յերկինս երկնից և խնամէ զարարածս ամենայն,
որ կանուխ գիտութեամբն և անբաւ իմաստութեամբն մա-
տակարարէ զերկնաւորս և զերկրաւորս. և ամենեցուն կեանք
է և կեցուցիչ և յամենայնի (յամենայնէ կ.) անբաւ և ան-
հաս և անճառ, սէր է՝ . . . լոյս անմատոյց ահեղ և զար-
մանալի։ Գիտութիւն և իմաստութիւն ի նմանէ են ստու-
գեալ (ստոյգ են դ. ե.) կենդանի և կենդանարար, ողորմած
և բարերար շնորհօք, երկայնամիտ է և դարմանիչ։ Ինքն
սրբութիւն սրբոց մերձեցելոց ի նա սրբութեամբ և արդա-
րութեամբ, լուսաւորիչ բանական բնութեանս միշտ. և ա-
մենայնիւ ճշմարտութիւն է՝ յանդիմանելովն զմեզ և խրա-
տելովն զմեղուցեալսն, զի ապրեսցին ի բարկութենէն՝ որ
գալոցն է ի վերայ ամբարշտաց։ Այլ և խոստմամբք բարեաց
յորդորէ զմեզ, զի արժանաւորք լիցուք պսակաց և փառա-
ցըն յաւիտենից ամենաշահութեանցն։ Զի նաւահանգիստ է
հանգստաբար ճգնաւորաց ի խնամս ս. սիրոյ իւրոյ, որ յան-
ճառ երանութիւնսն վայելեցուցանէ զառաքինացեալսն հոգ-

ւով։ Զի մեծութիւնք անքննինք են՝ անսկիզբն էութիւն՝ ի վեր քան զիմանալիս յանսահմանութեան և յանբաւութեան (յորում՝ կ·) և խնամովք տեսչութեամբ լնու զամենայն արարած։ Որ գիտէ զխորհուրդս · · · վ· կ· գ· դ· ե։

21· Օրինօք Հոգւոյն կենդանարար անմահից յանմոռաց ուրախութիւնս՝ յանդադար խնդութիւնս՝ յանճառ և յանպատում բարութիւնսն ժառանգելով (ժառանգել· կ·) զարքայութիւնն Աստուծոյ վ· գ։

22· Արհեստք՝ վ· գ։ 23· Անսահմանելի մշտնջենաւորին՝ կ· վ· գ· դ· ե։ 24· Յարարած՝ ըստ բարերարութեան (բարերար՝ դ· ե· կ։) արարչութեան իւրոյ՝ զի կեցուցիչ է ի խնամս իւր · · · վ· գ· դ· ե· կ։

25· Հոգևորացն՝ (վ· գ·) հասու լինել Հօր և Որդւոյ՝ վ· կ· գ· դ· ե։ 26· Իմանի վ· կ· գ· դ· ե։ 27· Ճանաչի անմարմնոց և մարմնաւորաց մի աստուածութիւն՝ ամենազօր տէրութիւն։ Զի · · · վ· կ· գ· դ· ե։ 28· Ջեր՝ վ· գ·դ·կ։ Ջերմ՝ ե։ Միոյ արեգական (մի արեգակն դ· ե·) աւի և այլ այլոյ (այլոց՝ վ· գ·) և որպէս աղբիւր և ջուր և գետ ի միոյ բնութենէ (ի բնութենէ՝ վ·) լինի՝ որ և (սոյնպէս՝ վ· գ· ե·) միտք և բան և ոգի (հոգի վ·) իմանի ի մարդում՝ նոյնպէս և (աստ՝ վ· գ·) միոյ բնութեան (և աստուածութեան՝ վ· գ·) է իմանալ Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ (ըղբնութիւնն՝ կ·)։ Զի ոչ է արեգակն առանց լուսոյ և ջերմութեան՝ և ոչ աղբիւր առանց ջրոյ և բղխման՝ և ոչ միտք առանց բանի և հոգւոյ։ Այսպէս և ոչ (էր·վ· գ·) Հայր առանց Որդւոյ և Հոգւոյն սրբոյ։ (վերջ) գ· դ· ե· վ· կ։ 29· Եւ զամբարտաւանեալսն · · · կ։ 30· Եւ յօրինէ վ·գ։ 31· Եւ յարին բարերարութեան իւրոյ ի սնուցանելն և ի դարմանելն՝ պէսպէս շնորհք իւրոյ գիտութեան և իմաստութեան՝ դ· ե· կ։ 32· Հնարագէտս՝ դ· ե· կ։

33· Պահպանութեամբ՝ դ· ե։ 34· Շահեցէ՝ դ· ե· կ։ 35· Որով յորդորեալ՝ դ· ե· կ։ 36· Պսակէ՝ դ· ե։ Ուր պսակէ

զսուրբս իւր, Կ։ 37· *Սիրով* Ա· Բ։ 38· ի *Հանդերձեալսն*, Գ· Ե։ 39· ի *նորա երանութիւնսն յանճառսն*, Գ· Ե· Կ։ *որ կայ նովաւ ի նորա անճառ երանութիւնսն*, Կ։ 40· *Եւ այսպէս*, Վ· Գ։ 41· *Նկարել*։ Գ· Ե։ 42· *Ազատութեան*, Գ· Ե· Կ։ 43· *Արդարութեանն* Ա· Բ։ 44· *Տեառն յարգանօք*, Գ· Ե· Կ· Գ· Վ։ 45· *Անհաւատք*, Գ· Վ։ 46· *Առաջի Տեառն*, Գ· Ե· Կ։ 47· *Ողորմութեամբ*, Գ· Ե· Կ։ 48· *Այլք՝ Հրաւիրեն*։ 49· *Այլք՝ յարգանս*։ 50· *Վայելեն* Գ· Ե· Կ· Գ· Վ։ 51· *Խնամք* Գ· Վ։ 52· *Յամենեցունց*, Գ· Ե· Կ։ 53· *Արկանեն*, Կ։ 54· *Յաւիտենից*, Գ· Ե· Կ։ 55, ի *պէսպէս Հնարս*, Գ· Ե· Կ։ 56· *Որ ի Տէր*, Գ· Ե· Կ։ 57· *սպառնացումն*, Գ· Ե· Կ։ 58· *Զնիւթեալ բարկութիւնն*, Գ· Գ· Ե· Կ· Վ։ 59· *Տաղաւորեալք*, Գ· Ե· Կ։ 60· *Ասիցէ*, Գ· Ե։ 61· *Նշխարք*, Գ· Ե· Վ։ *Նշմար*, Գ· Կ։ 62· *Այլք՝ զի*։ 63· *Ըսպառնալեօք*, Կ։ 64· *Ընտրեալք ի Տեառնէ*, Գ· Գ· Ե· Կ· Վ։ 65· *Այլք՝ յիւրմէ*։ 66· *Վասն բարերարութեանն իւրոյ և բարերար* · · · Գ· Վ։ 67· *Նիւթական Հրոյս* · · · *Այլք*։ 68 *Յաշակերտութիւն*, *Նախ* · · · Գ· Ե· Կ։ 69· *Պօղոս*, *և որ զկնի այսորիկ*, Գ· Ե· Կ։ 70· *զշնորհն ի գործ կոչմանն* · · Գ· Վ։ 71· *Յարութեան*, Գ։ 72· *և մշակ*, Վ· Գ։ 73 *Եռամսեան* Ե։ 74 *Զտիեզերս*, Գ։ 75 *Յօրինակ ճշմարտութեանն*, Գ· Վ։ 76 *Որբոց*, Գ· Ե· Վ· Կ։ *Սրբոց*, Գ։ 77 *Այլք՝ առ մեղուցեալսն*։ 78 *Հաստատել ճշմարտութեամբ* · · Գ· Ե· Կ։ 79 *Խնամածեալ*, Գ· Ե։ *Խնամածել*, Գ· Վ։ 80 *Մերձ կացուցանէ*, Գ· Վ։ 81 *Յընտրութիւն օրինացն*, Գ։ 82 *Առաքինութեանցն*, Գ· Ե· Կ։ 83 *Ըստ Համբերութեան իւրեանց ի ջանս*, Գ· Կ։ 84 *Խոստովանողք զսրբութիւն և զառաքինութիւն*, Գ· Ե։ · · · *Ապաշխարողք զթողութիւն*, Գ· Գ· Ե· Վ· Կ։ 85 *Եւ*, Գ· Վ։ 86 *Երևեալ*, Գ· Ե· Կ։ 87 *Կան*, Գ· Ե· Կ։ 88 *Այլք՝ ըստ արժանեացն*։

89· *Յորդորէ*, Կ։ 90 *Ոմանք զձեզ*։ 91 *Որոյ*, Կ։ 92 ի *Հոգւոյն սրբոյ*, Կ։ 93 *Օծմամբ և*, Գ։ Վ։ 94 *Հօրն Քրիստոսի*, Գ· Գ· Ե· Վ։ 95 *Կացցեն*, Գ· Ե· Կ։ 96 *Եւ կենդանանայ ար-*

դարութեամբ, Ա. Բ: *կենդանի յարքայութեան յամենայն*:
97 *Այլք՝ հասանել*, Գ. Դ. Ե. Կ. Վ:

98. *Մարմնոյ*, Դ. Ե. Կ: 99. *Այլք՝ առ սպասաւորութիւն*:
100 *Զմարգարէութիւն*, Ա. Բ: 101 *Եւ Աստուծոյ սիրողք*, Դ. Ե. Կ: 102 *կարիս*, Գ. Վ: *կայանսն*, Գ. Վ: *Բարիսն*, Դ. Ե. Կ:
104 *Ցանկացողացն. այլք*: 105 *Էութեան*, Կ: 106 *Որ ասաց ընդ իւր*, Կ: 107 *Ստերիւրեալ ի հոգս մոլութեան*, Դ. Ե. Կ:
108 *Զիարդ*, Դ. Ե. Կ:

109 *Հոգւոր*, Դ. Ե. Կ: 110 *Բղխեաց*, Կ: 111 *Նորոգեաց զաշխարհս*, Կ: 112 *Խոնարհութեամբն*, Դ. Ե. Կ: 113 *Կեցցուք*, Դ. Կ:

ԳԼ. Գ.

1. *Առ էութիւնն Աստուծոյ և առ խնամս նորա յարարածս իւր*, Կ: 2. *Հաւատոց*, Կ. Գ: 3. *Եւ մտացն շարժմանց* . . . Դ, Ե: 4. *Խորհրդոյն . . . չունին* Ա. Բ: 5. *Զգեցեալ*, Դ.Ե.Կ: 6. *Որ՝ չիք*, Ա. Բ: *Զմիտսն*, Դ. Ե. Կ: 7. *Եւ՝ չիք* Ա. Բ: 8. *Իբրև ի տեսիլ*, Կ: *Որպէս տեսիլս*, Վ. Գ: 9. *Լոյս*, Վ. Կ: 10 *Զի և այն ևս լոյս* . . . Կ: 11 *Տէրութեանն մեծութիւն անքննին* Կ: 12 *Որ*, Կ: 13 *Զունին* Գ. Դ. Ե. Կ. Վ: Կ. *խառնէ*: 14 *Մարտակիցն*, Կ. Վ. Գ. Դ. Ե: 15 *Էութեանն*, Դ. Ե: 16 *Զգրաւական* Կ. Վ. Գ. Դ. Ե: 17 *Սիրոյ*, Ա. Բ. Վ. Գ: 18 *Նորին՝* Կ:

19 *Զամենայնս*, Գ: 20 *Աստուածութեան մեծի* . . Դ. Ե: *Աստուածութեանն փառաց*, Կ: 21 *Դասքն*, Դ. Ե. Կ: 22 *Զուարթունքն*, Վ. Գ: 23 *Ոչ յինքենէ, այլ ի նոյն իսկ յԱստուծոյ*, Վ. Դ, Կ. Գ. Ե: Գ. *պակասաւոր*: 24 *Աստուածութեանն*, Ե. *Աստուածգիտութեանն* Կ. Գ: 25 *Ոմանք՝ օրինօք*: 26 *Եւ ամենաբարի սիրովն*, Կ. Դ. Ե: 27 *Մխացուցանէ*: Վ. Գ: *Պակասաւորեն* Ա. Բ: 28 *Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ անփոփոխ* . . . Ա. Բ:

29 *Արդարութեամբ և սրբութեամբ*, Վ. Կ. Ե, *Սրբու-*

թեամբ՝ Գ. Դ։ 30 Զղջաւոր՝ Կ. Դ. Ե։ 31 Երբեմն՝ զօրական Դ. Ե։ Երեւմամբք՝ Վ։ 32 Բարերարութիւնքն զոր վկայեն՝ Կ. Դ. Ե։ 33 Զարարածս իւր՝ Կ։ 34 Էութիւնն՝ Ա. Բ։ 35 Սըրտիւ՝ Կ. Դ։ 36 ի խնամս փրկութեան՝ Կ. Դ. Ե։ 37 Գան ճըշմարտութիւնք՝ Կ. Դ. Ե։ 38 Նախ քան զարարածս եւ յետոյ քան . . . Վ. Գ. Դ. Ե. Կ։ 39 Անբաւ՝ Վ. Կ Գ. Դ. Ե։

40. Անհաս՝ Ե։ Անբաւ՝ Դ։ 41. Մեծութեամբ՝ Վ։ 42 Մարմնոյ՝ բնութեան Դ. Ե։ Իմուն Գ։ 43 Կարեն Դ. Ե.Կ։ 44 Նմա ըստ մասին՝ Կ։ 45 Կամաց բարերարին Աստուծոյ՝ Դ. Ե. Կ։ 46 Բարուք՝ Վ. Գ։ 47 Շնորհօք զընդրեալ առաքինիսն առաքինութեամբ՝ Կ։ 48 Ի մահկանացուէս Դ. Ե։

ԳԼ. Դ.

1. Մոլար մտաց եւ ընծայութիւն . . . Վ. Գ. Դ. Ե։ 2. Ամենալոյս՝ Կ. Վ. Գ. Դ. Ե։ 3. Երկայնութեամբ՝ Վ. Կ. Գ. Դ. Ե։ 4. Ամենասուրբ երրորդութեանն՝ Դ. Ե. Կ։ 5. Մարդկան՝ Վ. Գ՝ Դ. Ե. Կ։ 6՝ Իւրաքանչիւր։ Եւ որ Վ. Գ։ . . Պտղովք եւ Ձկունք . . . Դ. Ե. Կ։

7. Ցրարան՝ Վ. Գ։ 8. Անագ՝ Ա. Բ։ 9. Հոգւով՝ Կ։ 10 Զնա Վ. Կ. Գ։ 11 Մարմնացելոյն՝ Բ։ 12 Հանգամանաց առի . . . Ա. Բ։ 13 Առ աղէտս . . . որոց . . . Դ. Ե։ 14 Շարժէ առ ի ներգործութիւն՝ Վ. Գ. Դ. Ե. Կ։ 15 Ցարգոյք՝ Կ. Ցարգք՝ Դ՝ Ե։ 16 Պակասումէ՝ Վ. Գ. Դ. Ե. Կ։ 17 Երեւելեացս . . . Վ. Դ. Ե. Կ։ 18 Կարասցէ՝ Վ. Գ. Դ. Ե։ 19 Զիրաւանց իշխանականօք՝ Դ. Ե. Կ։ 20 Զարարածս՝ Վ. Գ. Դ. Ե. Կ։ 21 Զլցուցիչն՝ Ա. Բ։

22 Ճշմարտութեանցն Ա. Բ։ 23 յԱստուածպաշտութիւն՝ Դ. Կ։ 24 Գտանին Աստուծոյ՝ Դ. Վ։ 25 Հռ. Ա. 21 26 Մեզ՝ Դ. Կ։ 27 Այս տեղից պակասում են Ա. Բ՝ մինչև հետեւեալ ճառի երրորդ պարպերութեան երկրորդ կէսը՝ «զարթուցանել ի գործ . . . ։» 28 Կերպն՝ Վ։

29 Ինքեանք եղեն, Կ։ 30 ի նոսա կենդանիք՝ Կ։ 31 Ապականելոց Գ. Ե. Կ։ 32 Զեռագէտ։ Գ. Վ։ 33 Եղծանեն, Գ։ 34 զԱստուածս, Գ։ 36 Եւ եղծանելիք, Կ։ 36 Կազմին, Գ.Ե.Կ։ 37 Աստուծոյ, Գ. Վ։ 38 Ըստ սահմանելոյն Աստուծոյ, Կ։ 39 Մանրապատում իմն, Գ. Վ։ 40 Արարողին, Գ. Կ։ 41 ի վատթարն և Գ։ 42 Սանձեաց զժպիրհն, Գ։

43 Որ է ճանապարհ՝ որ տանի . . . Գ. Ե։ Լայն, Կ։ 44 ի դրունս, Գ. Ե. Կ։ 45 Ժպրհութիւն, Կ։ 46 Ցարդարեալ՝ Գ. Ե. Կ։ 47 Ստոյգ, Գ. Վ։ 48 Իմաստից, Գ. Վ։ 50 Որպէս տախուծքն, Կ։ 51 Եւ ամենայն, Վ. Գ։ 52 Ցանեն Գ. Վ։ 53 Նոյնքան, Կ։ 54 Արբանեկել զպիտոյսն, Գ. Վ։

55 Պակասում է այս երկտողը՝ Գ. Ե. Կ։ 56 Մինչ վնասեն Կ։ 57 Պակասում է՝ օձին, Գ. Ե.Գ. Վ։ 58 Եւ անընտել գազանք վէրս առնեն անձանօթից և մահ, Կ։ 59 Բնութեան, Գ.Վ։ Բնութեան եթէ ոչ բժշկիցին, Կ։ 60 Այլ խորհեան Գ. Ե։ 61 փոխել ի վնասակարէն ի լաւն, Գ. Ե. Կ։ 62 Եւ յաղագս, Գ. Դ. Ե. Վ։

63 Ցանհնազանդութեան, Գ. Վ։ 64 Արար զսատանայ, Գ. Վ։ 65 Եւ չար դևք, Կ։ 66 Զհրամանս, Գ. Ե։ Զհետևմունըս, Կ։ 67 Այլք որքոց։ 68 Ոմն յուսուցանելն և ոմն յուսանելն, Կ։ 69 Քարոզութեան, Կ։ 70 Բարեկամն Գ. Ե։

71 ի ս. գրոց, Գ. Ե. Կ։ 72 Շարժի, Գ. Ե. Կ։ 73 Յօղով, Գ. Ե. Կ։ 74 Կացուցիչ, Գ։ Կացուցանէ զանուանս, ... Կ։ 75 Ուրախութիւնսն, Գ. Ե։ Ուրախութեանցն, Կ։ 76 Անտի Աստուծոյ, Կ։ 77 Որովք, Վ. Գ։ 78 ի պատուիրանին պահպանութեան, Գ. Վ։

79 Յետ յաստեացս ելանելոյ է՝ Կ։ 80 Աստուծոյ, Գ. Վ։ 81 Կոր. Բ. 9։ 82 Այլ յայնժամ ի կատարածի յայտնի ի յայտնութեան աւուրն և յարութեան . . . Գ. Վ։ 83 Զօրաց Գ. Ե. Կ։ 84 ի պատուիրանի, Գ. Վ։ 85 Լուսաւորեցան վարք . . . Գ. Վ։ 86 Այլ Արարչին բոլորից և ամենեցուն Տեառն . . . Գ. Ե. Կ։ 87 Զպատրաստեալ բարութիւնսն, Կ։

ԳԼ. Ե.

1. Անփոփոխ ճշմարտութիւն, անսահման . . . կ։ 2. Երդ-
խող. կ։ 3. ի մարդկանէ, Աստուած և Արարիչ գոլով. կ։
4. Ջսոսա, գ. վ։ 5. Յուցանել, գ. ե. կ։ 6. կենդանա-
տու, գ. վ։

7. գործակցութեամբ, գ. վ։ 8. Ըստ իւր բարերարու-
թեանցն. գ. ե. կ։ 9. Յուցին, կ։ 10 Յերկինս, կ։ 11 Մար-
տիրոսութեան, կուսութեան . . . գ. վ։ 12 Նոցա, կ։ 13 Պա-
տուիրանաց գ. վ։ 14 Ուսուցանիցեն. գ. վ։ 15 Բարեխոր-
հրդութեան. գ. վ։ 16 Ջհրեշտակացն, զի զնոյն. գ. վ։

17. Պակասաւոր են գ. ե, Ա, Բ։ 18 Ուղիղ, գ, ե, կ։
19, Զաղտեղեալսն, գ, ե. կ։ 20 Գործակցութեամբ, գ, ե, կ։

21 Ըստ ամենայնի և ամենայնիւ Զարդարեալ նորին
միրով վայելեսցէ զայնոսիկ կեանսն։ Ա.Բ։ 22 Ծարաւեցայ,
գ, վ։ 23 իսկ որ ծուլանայ ի բարի գործսն, գ. ե. (որ ծու-
լանան) կ։ 24 Անհաւատութեամբ, գ.վ։ 25 վրիպել, գ. ե.կ։
26 Տանջանացն, գ. գ. ե. վ. կ։ 27 Գրաւեալք ահաւոր ըն-
պատնալեօք, Ա. Բ։ 28 վարուցն, գ. ե. կ։ 29 ի մոլորեցու-
ցանել, գ. վ։ 30 Եւ եթէ ի մարմնաւորացս, գ. ե. կ։ 31 Պա-
րուրիւր, պատճառ բազմաստեան անօրէնութեամբք, գ. ե։
Պարարի որպէս պաճար, կ։ 32 Բազմանայ, գ. վ։ 33 Բազ-
մամանս կ։ 34 Յուսոյն, գ. ե. կ։ 35 Որ որդն նոցա, գ. վ։
36 Եա. կԶ, 24։ 37 ի չարութիւն, գ. ե. կ։

38 Ընդունիցին, գ. ե. կ։ 39 կորիցեն, գ. վ։ 40 Ար-
դար Աստուծոյ կշռօքն, գ. գ. ե. վ։ 41 Զլաւն, գ. ե. կ։
42 ի լաւութեան, գ. ե. կ։ 43 կարասցեն, գ. ե. կ։ 44 Քա-
րոզութեամբ, կ։ 45 Մարդ, գ. ե. կ։ 46 կենացն յուսոյն, կ։
47 Ապաշխարութեան վարուք, գ. ե. կ։ Ապաշխարութեան
արտասուօք, գ։ Ապաշխարութեամբ . . . վ։ 48 Հաւատով
ամենայն արդարութեան, կենացս այսմ . . . Բ։ 49 Առաքե-
լական գ. ե. կ։ Առաքինութեան, Բ։ 50 Սուտապատիր, գ.

Ե.Գ։ 51 Ոմանք՝ քրիստոնեայքն։52 Եւ զխորհուրդս և, Գ.Ե. Կ։ 53 Առաքինացեալք, Գ. Ե. Կ։

54 Վարուց, Գ. Ե. Կ։ 55 Շնորհաւոր, Գ. Ե. Կ։ 56 Եւ զամենայն արդարութեան փոխել զբարս աշխարհէ ատելոր դիւրակորուստ առնէ հեռաւորին և մերձաւորին, Բ։ 57 Ըստ որդեգրութեան շնորհին, Կ։ Կուսութիւն սրբութեան, Բ։ 59 Մտանեն և ժառանգեն զանմահ կեանսն ի փառս ս. երրորդութեանն, Բ։ 60 Խաբս Դ. Ե. Վ։ 61 Մաղ, Գ. 7։ 62 Եւ չարին խաբէութեանց, Գ. Վ։ 63 Մրցանս, Բ։

64 Զգատեալսն, Բ։ 65 Զհիւանդացեալսն, Դ. Ե. Կ։ 66 Արարչին, Բ։ 67 Ծուալէ ի զարթուցանել, Կ։ 68 Եւ զանանց կեանսն, Կ։ 69 Ի շնորհացն Դ. Ե. Գ. Թերի է աստ։ 70 Առ ի սրբեալսն . . . առի լուսաւորեալսն, Դ. Ե. Կ։ 71 Եւ զնորին, Կ։ 72 Ժառանգեսցէ, Դ. Ե. Կ։ 73 Ինքն, Գ. Վ։ 74 Որ յԱստուծոյ հրամայեցաւ շինիլ, Կ։ . . . Հրամայեցաւ Դ. Ե։ 75 Տեսցես դչարութեան և զտրտմութեան, զի . . . Բ։

76 Անհնազանդութիւն, Բ։ 77 Գիրք աստուածեղէնք, Դ. Ե. Կ։ 78 Եւ հնարք, Դ. Կ։ Անհնարք, Ե։ 79 Գիւտի և հընարագիտութիւնք, Կ։ Հնարագիտաց, Դ. Ե։ 80 Այլք՝ հընարք։ 81 Տուողին, Գ. Վ։ 82 Բերսելիէլին, Դ. Ե։ 83 Ցայսըմ Դ. Կ։ 84 Հոգայ, Գ. Վ։ 85 Ցօրինուածս, Գ. Վ։ 86 Ըզմտաւորութիւն, Դ. Ե. Կ։ 87 Զարուեստն, Կ։ Զնոսա առնեն, Գ. Վ։ Այս և ուշն . . . աստ յանկուցանէ, Կ։

89 Խառնեն, Դ. Ե. Կ։ 90 Զգուշանալ, Դ. Ե. Կ։ 91 Ի բարին, Կ։ 92 Մեծի գիտութեան, Դ. Ե։ 93 Առնելստոյգ . . . Դ. Ե. Կ։ 94 Առաջնորդել ըստ արարչութեան, Գ։ Ըստ արարութեան, Ե։ 95 Ուտիճ. Դ. Ե. Կ։ 96 Նենգաւորին և չարին, Կ։ 97 Զսիրտս, Ի. Գ. Վ։

98 Ցերկրաւորաց իրաց Դ.Ե. Կ։ 99 Ս. գրոց Աստուծոյ, Գ. 100 Անտի, Կ։ 101 Առատամիտ, Դ. Ե. Կ։ 102 Օգտակար, Գ. Վ։ 103 Պարտ է, Կ։ 104 Բանից, Կ։ 105 Կորուսցէ Գ. Վ։ 106 Բերիցեն, Գ. Վ։ 107 Զամենայն ժարժմունս, Գ. Վ։

108 *կամ զբարւոյն կամ* . . . Գ. Ե. Կ։ 109 *Զարմտիս* Գ. Վ։ 110 *Որք վայելեսցեն զկեանսն* . . . Կ։ *Մինչ այստեղ պակասում է, երկու երես, սկսեալ «խորտկարար այլ»* . . . Բ։ 111 *Որոց միտս,* Գ. Ե։ *Զարին բուսանին ի միտս,* Կ։ 112 *Յայտնի են ի բանիցն ընկալեալ* . . . Գ. Ե։ (*յայտնին*) Կ։ 113 *Ընկալան,* Գ. Ե. Կ։ 114 *Եւ զանմաՀ որդունքն,* Գ. Ե. Կ։

115 Ի *բարի խորՀուրդ,* Գ. Ե. Կ։ *Բարերարութիւն,* Գ. Վ։ 116 *Զ լոյս սիրել, զ լոյս պաՀել,* Գ. Ե. Կ։ 117 *Յայսմ ամենայնի,* ։ 118 *Զչարութիւնս,* Գ. Ե. Կ։ 119 *Պիղծ,* Գ. Ե. Կ։ 120 *Զսոսկ չարիր ցանկութեանց,* Գ. Ե. Կ։ 121 Ի *մեղկութեան,* Գ. Ե. Կ։ 122 *Այլ ի միասին անուանի լինել բարեաւն մեզ,* Բ։ 123 *Այստեղ շփոթուած է գրչագրաց մէջ։*

124 *Երթալ,* Գ. Կ։ *Երթեալ,* Ե։ 125 *Անվախճան,* Ե։ 126 *Զոր ապականել,* Գ. Ե. Կ։ 127 *Հեթանոսաց,* Կ։ Հռ. Զ։ 128 *Յաւիտենից Հրոյն։* Գ. Ե. Կ. 129 *Լեալ,* Կ։

130 *Ամբարշտութեամբ* Գ. Վ, 131 *Որ Զմեղաւորսն տանջէ և Զարդարսն պսակէ.* Բ։ 132 *Առնիցէ.* Գ, Ե. Կ։

ԳԼ. Զ.

1. Ի *Հօրէ,* Գ։ 2. *Առ Հայր,* Գ. Ե. Կ։ 3. *Իսկութեամբք,* Գ։ 4. Ի *Հրոյ,* Կ։ 5. *Զիք՝ լոյս,* Ե։ *Տալ և ճառագայթ, յարեգականէ,* Կ։ *Տալ արեգակն,* Գ։ 6. *Մտաց,* Գ։ 7. *Շարժել առանձնաւորութիւնս, այլ* . . . Ա. Բ։ *Առ անձնաւորութիւնսըն,* Ե։ 8. *Այլ կացեալ,* Կ։ 9. *Բնութեանցն։* 10 *Յանձնաւորթեան,* Ե։ *Յաւանձնաւորութիւն,* Կ։ 11 *Այլ առակք ծշմարտութեանն,* Ա. Բ։ 12 *Կեանք և կեցուցիչ,* Գ. Ե։ 13 *Կամք Արարչին։ Եւ բարերարն և Հաստիչն՝ Աստուած էր* . . . Կ։ 14 *Անվաղճանս,* Գ. Ե։ 15 *Առի խնամս, ի խնամս,* Ա։ 16 Ի *յիւրում անփոփոխմամբ,* Գ. Ե։ 17 *Արարածոց անվրէպ։* Ա. Բ։ 18 *Գիտութիւնն* . . . Ա. Բ։ 19 *Էր յիւրում* . . . Գ։ 20 *Իրաւունքն,* Ա. Բ։ 21 *Առ արարածս* . . . Կ։ 22 *Կենդանարար,*

Գ. Վ, 23 *Խրատիւք յանփոփոխ* . . . Գ. Վ: *Խրատիւք. Անփոփոխ*, Ե. Կ: 24 *Ցիւրոյ*, Գ: 25 *Խորհրդոյ*, Գ. Ե. Կ: *Ցաւէրժ* . . . Գ: 26 *Էր և է յիւրում գոյութենէ էր*, Ե: *Գոյութեան*, Գ. Վ. Կ: 27 *Առ ի զօրացուցանել*, Գ. Ե. Վ. Կ: *Զզօրս* Գ. Ե. Կ: 28 *Պատերազմիս*, Գ. Գ. Ե. Վ: 29 *Ցերևելիս և աներևոյթ լիեալ*, Վ: *Երևելի և աներևոյթ լինել*, Գ. Ե: *Ցերևելիս և աներևոյթս լինել*, Գ: *Լինիլ յաղթօղ յերևելիս և յաներևոյթս*, Կ: 30 *Երանութեամբ*, Ե. Կ: 31 *Աստուած*, Կ: 32 *Այրեսցի խնամեալ պահել*, Գ. Ե: *Բոլբոքմամբ առ խնամեալսն* Կ:

33 *Սրբութեամբն (սրբութեամբքն)* Գ. Ե. Կ: 34 *Բազմաշող*, Գ. Ե. Կ: 35 *Գիտութեանցն* . . . Բ: *Խնամօքն* . . . Գ. Ե. Կ: 36 *Երևելեաց և աներևոյթից*, Գ. Ե. Կ: 37 *Ողորմութեամբ շնորհօք*, Գ. Ե. Կ: *Շնորհօք*, Գ: 38 *Արդարութեանն*, Ս. Բ: 39 *Երևել*, Բ: *Ներել*, Գ. Ե. (*պակասաւոր*, Գ. *և* Ա.) 40 *Ամենասուրբ, երրորդութիւն կամօք իւրովք*, Գ. Ե: 41 *Դարմանօք* Վ: 42 *Առող ի գանս*, Բ: 43 *Կշտամբանս*, Գ. Ե: *Զշահաւորս և զօգտակարս* . . . Գ. Ե. Կ: 45 *Գիտութեան իւրոյ*, Գ. Ե. *գիտութեամբ իւրով*, Կ: 46 *Քաջաւէտ*, Գ. Կ: *Քաջարուեստ*, Ե: 47 . . . *Այսպիսի յուսով*, Բ: *Հաւանեալ և հնազանդեալ*, Գ. Ե. Կ: 48 *Աշակերտիլ*, Կ: *Աշակերտ*, Կ: *Աշակերտեալք եղեն*, Ե: 49 *Հասցէն*, Գ. Ե. Կ: 50 *Իւրում* Գ. Կ. Վ: 51 *Երանութեամբքն*, Գ. Վ: 52 *Որ է Հայր*, Վ: 53 *Եւ իւր* . . . Կ: 54 *Զիք՝ ամենագիտ հանճարով*, Վ:

55 *Զիք՝ և*, Բ: 56 *Խաբէութիւնն*, Գ. Ե: *Խաբէութեան ստութիւն բանսարկուին*, Կ: 57 *Մոլորութիւնն*, Բ: *Ցառաջագայեալ*, Կ: 58 *Ատելեացն*, Գ. Ե. *յատելն*, Կ: 59 *Եւ լսել* . . . Բ. Գ. Ե. Կ: 60 *Հաւատոյ*, Ե. Կ: 61 *Զէր* . . . Գ, Ե. Կ: 62—63 *Երևեալ*, Գ. Կ: 64 *Ցառաջ*, Կ: 65 *Զմեզ*, Վ: 66 *Այլք թերի*: 67 *Ի մէջ*. Բ: *Ի մեզ*, Կ: 68 *Անձասիրութիւն*, Բ: 69 *Պարտաւորեալ*, Վ: 70 *Նախ յասելն*, «*Ուսարուք յինէն, զի հեզ եմ և խոնարհ սրտիւ. և գտջիք հանգիստ*» (*և լինի հան-*

գխտ. Գ.) Գ. Ե. Կ: 71 Ամենագութն ողորմելով . . . Կ: 72 Զիք, Գ.Ե.Կ: 73 Մինչ ոչ էին մաքրութիւնքն սրբութեանց աստուածային շնորհացն . . . Գ. Ե: Յորժամ ծագեցին սրբութիւնք շնորհաց, Բ. Գ:

74 Գործակցօքն, Գ. Ե. Կ: 75 Սատանայիւ և դիւօք նորին, Կ: 76 Ի սկզբանց անտի, Գ. Վ: 77 Այսօքիկ յետոյ, Գ. Վ: 78 Ի նոցայն, Գ. Վ: 79 Սուրբ . . . Ե: 80 Որ կենագործեաց, Գ. Վ: Մի թերթ պակաս, Բ: 81 Զամբարիշտ հըպարտս, Գ. Ե. Կ: 82 Մահուն, Գ. Կ. Վ: 83 Զունին, Գ. Ե: 84 Յարենէ Աբելի, Գ. Ե: 85 Փոխելոյն, Գ. փոխելոցն, Ե: 86 Ոմանք պակասաւոր: 87 Յոյսն, Գ. Ե:

88 Խնամօք, Գ. Վ: 89 Ի բարեգործութիւն կամաց, Գ.Ե: 90 Զբարերարութիւնքն, Գ. Ե: 91 Զղջանալով վասն որոց, Վ: 92 Զի եթէ . . . Վ. որ ասէ, Գ. Ե: (Ղուկ. ժէ, 10) 93 Եւ ապա զի՞նչ . . . Ե: 94 Ճգնաւորաց և . . . Ե: 95 Շարժմունս, Գ. Վ: 96 Սիրոյն, Գ. Ե. Կ: 97 Յաւետարանսն ի տեառնէ . . . Վ: 98 Եւ չար, Վ. Գ:

99 Մատթ, Ը. 29: 100 Պիտանիքն իցեն . . : 101 Եւ հանդերձս պայծառս արկեալ զիւրև . . : 102 Փակէ, և վըկայէ երկոքին . . : Գ. Ե: 103 Ակնկալութեան, Բ: 104 Շնորհացն Քրիստոսի, Ե: 105 Ամենեցուն, Բ: 106 Բարերարութեան Բ: 107 Զիք որ, Բ:

108 Եւ ոչ տայ քակել . . . 109 Ի բարերարէն. Գ. Ե. Կ: Ի մշտնջենաւորսն. Վ: Մշտնջենաւորն, Գ: 110 Եւ զգոյն. Գ: 111 յօրինէ. Բ: 112 Եւ զերկմտեալսն և զվրիպեալսն, Բ: 113 Զխստութիւն, Բ: 114 Կազմեաց աստուածային իմաստութեամբք իւրով ի լուսաւորութիւն . . . Բ: . . . Խրատուց Վ: 115 Հաղորդեալ, Գ: 116 Եւ ի շահել բարձր մտածմամբ, Գ. Ե: 117 Մեծ, Գ. Ե: 118 Շնորհօք աներևոյթիւք և երևելիօք որպէս լուսաւորք . . . Բ: 119 Եւ կեալ անբիծ, Գ. Վ: 120 Յուցանել, Ե. Կ. Վ: 121 Այլ, Բ: 14 ստանալ, Բ:

122 Եւ առ բեկեալ միտս . . . Գ. Ե: 123 Եւ անճառե-

լի խնդութեամբքն, Բ։ Այլք չունին անճառ բարերարութեամբ-քըն, Գ։ 124 Եւ յամենասուրբ Հոգին։ 125 Մարմնականք, Գ· Ե· Կ։ 196 Բղխեն, Բ· Գ· Ե· Կ։ 127 Սրբոյ, Գ· Ե· Կ։ 128 Կառչեալ, Գ· Ե· Կ։ Անկեալ, Բ։ 129 Գոլեալ, Բ։ 130 Հաւա-տալ, Բ։ 131 Ցինէն, Գ· Կ։

132 Ցանպատում։ Գ· Վ։ 133 Անհատ խնդրովք, Գ· Վ։ Անհասական գրովք պայծառացեալք և լուսաւոր զիւղն · · · Բ։ 134 Ի սուրբ կոչման աւետեացն, Գ· Ե։ 135 Ցորդորել, Գ· Ե· Կ։ 136 Բանիւն հաղորդութեան, Բ։ 137 Մեղուանոցն, Գ· Ե· Կ։ 138 Կերակրոյ, Բ։

139 Ցաւուրն, Գ· Ե· Կ։ 140 Ցնծութեամբ, Բ։ 141 Ճա-շակել զանուշակ քաղցրութիւն, Գ· Ե· Կ։ 142 Մերձեալ, Բ· Գ· Կ։ Մերձենալ, Ե։

143 Հայեցութեանցն։ Գ· Ե· Կ։ 144 Միտս, Գ· Ե։ 145 Զամենայն, Գ· Դ· Ե· Կ։ 146 Միշտ, Բ։ 147 Ցարեգակնէ ճառագայթեալ, Գ· Ե· Կ։ 148 Փրկիլ, Գ· Ե· Կ։ 149 Բար-եացն, Բ։ 150 Զիք՝ փրկեալք, Գ· Ե· Կ։ 151 Լինել· Գ· Ե· Կ։ 152 Երանաւէտ, Բ։ Երանութիւնսն վայելել, Գ· Դ· Ե· Կ։ 153 Ի գեղեցկագոյն փառն, Գ· Ե· Կ։ 154 Փառաւորեալ միշտ զամենասուրբ երրորդութիւնն այժմ և միշտ · · ·

փառք քեզ Աստուած յաղագս ամենայնի։

ԳԼ· Է·

1, Աստցեալ, Ե։ 2· Զբանն, Գ։ Բանն, Ե, Կ։ 3· Փարո-զութեան, Գ· Վ։ 4· Սփռեալ, Գ· Ե։ 5· Իմաստքն, Բ։ 6· Գի-տութեան, Բ։ 7· Խորատն, Գ· Ե։ Զխորատն, Կ։ 8· Հանճարից, Ե· Կ։ 9· Լինել, Բ։ 10 Զիք, Գ· Ե· Կ։ 11 Ի դժնդակ վարս, Գ· Դ· Ե։ Վարուց, Կ։ 12 Եւ պատահմունս, որ լինի հեռա-ւորաց և մերձաւորաց ի փրկութիւն, Բ։ 13 Զիք, Գ· Ե· Կ։ 14 Զիք, Բ։ Եւ լուսաւոր, Գ· Ե։ 15 Հոգևորական, Բ։ 16 Պահպանեսցի, Վ։ Պահեսցին, Գ· Ե· Կ։ 17 Օրինացն, Բ։

18 Լինել, Դ. Ե. Կ: 19 Աշխարհ, Բ: 20 Յառնել և ի կազմել, Դ. Ե. Կ: 21 Նախախնամութիւն, Բ: 22 Բարուքն, Բ:

23 Առաքինութեանցն, Դ. Ե. Կ: 24 Պարգևել, Դ. Ե.Կ: 25 Մշտնջենաւոր, Վ: 26 Որի Բ: 27 Զմտացն, Վ: Ի մտացն, Դ. Ե. Կ: 28 Ի մշակութեան, Բ: 29 Զընդրութեանն, Բ: 30 Զգրոյն, Ե. Կ. Վ: 31 Անուանն կարգասցէ, Վ: 32 Զի միւսն միւսոյն, Դ. Ե: 33 Են, Վ: Պիտոյանան, Կ: 34 Զի սուէ, Դ. Ե. Կ: էր աներևոյթ, Բ: 35 Կարգելոյ պատմութեան, Վ: 36 Յանուանէ, Կ. Վ: 37 Գործոց մարդոյն, Կ: 38 Գիւտ, Բ: Իցեն աշխատութեամբ, Վ: 39 Զտիւ ի գործակալութիւն, Կ: 40 Զգիշերն քնոյ, Դ. Ե. Կ:

41 Ի ձեռն բժշկացն, Դ. Ե. Կ: 42 Ի մարդն, Դ. Ե. Կ: 43 Սառն, Դ. Ե. Կ: 44 Երկաքանչիւրքն, Դ. Ե. Կ: 45 Զէք, Դ. Ե. Կ: 46 Եւ ոչ կարասցեն շարժել ի սահմանէն, Դ. Ե. Կ: 47 Սահման ետ, Դ. Վ: 48 Ի պէս պէս իրաց, Ե: 49 Եւ ոչ օտարաւ ընութեամբ, Բ: Հարկօք, Վ: 50 Մարդկան են, Դ. Ե. Կ: 51 Կարօտանան, Բ: 52 Այլք չունին՝ գտցէ: 53 Ցուցանէ ի յազգս մարդկան, Բ: 54 Զէք, Բ: Միութեամբն ամենայն արուեստք . . .

55 Բարք, Բ: 56 Զհամարձակելն, Դ. Ե: 57 Զվարսն, Դ. Ե: 58 Եւ զմշտնջենաւոր և զանմահ կեանսն զոր ի հրեշտակաց ստասն զանուանսն առնուն, Ա. Բ: 59 Տնանկութիւն, Ա. Բ: 60 Ի մշտնջենաւորութենէն, Դ. Ե. Կ: 61 Եւ զկենացն զայն ժառանգութիւն, Ա. Բ: 62 Եւ մեծութիւն, Ա. Բ: 63 Զեռն տուեալ, Դ. Ե. Կ: 64 Զմի տնանկութիւն զքաղցրութիւն և զխոնարհութիւն, Դ. Ե. Կ:

65 Առ իմաստունս, Ա. Բ: 66 Զայնոսիկ, որ. Պ: 67 Իսկ որ ըստ.. Ա. Բ: 68 Որ ի վերինս տանի ի փառսն, Դ. Վ. Դ.Ե.Կ: 69, դատապարտեալ՝ Ա. Բ: 70. Յարութեան. Ե: 71 Եւ քուն Ա. Բ. 8: 72 Եւ այսր ամի աշակերտ արար զմարտն, զի անձնիշխան կամօք խնդրէ Դ. Վ. Դ. Է. Կ: 73 Աստ համբերութեամբ. Դ. Ե. Կ: համբերութեամբ, Ա. Բ: 74 Զհամարձակու-

թեան, Ա․ Բ։ 75 *Օրինաց*, Գ․ Ե․ Կ։

76 *Պատրաստեալ*, Գ․ Ե․ Կ։ 77 *Պակաս մինչև այլ ղի ասաց* ․ ․ ․ Ա․ Բ։

78 *Իցեն սոյնպիսի մեծամեծ* ․ ․ ․ Ե։ 79 *Յամբարշտու- թենէ*, Գ․ Վ։ 80 *Որպէս ասաց մարգարէն*, Ե։ 81 *Բարու- թեան* Վ․ Գ։

82 *Ասէ Տէր*, *գիրուստ*, Ե։ 83 *Եւ արդ՝ լսեա*, Ե։ 84 *Ինչ ձերէ*, Վ․ Գ։ 85 *Եթէ մահ*, *դի մահն*, Վ։

86 *Վկայութեամբ*, Գ։ 87 *Այլ զանազան տանջանօք*, Ա․ Բ։ *Այլ ազգի ազգի չարչարանօք*, Ե։ 88 *Նորոգել*, Ա․ Բ։ 89 *Առաքեալն*, Գ․ Ե․ Կ։ 90 *Կենդանի եմ ես*, *և այսուհետև* Ա․ Բ։ 91 *Կամս* Ա․ Բ։ 92 *Զայն որ ըստ հոգւոյն* Ա․ Բ։ 93 *Ինչ- պէս*, Վ, Գ։ 94 *Եւ զպատուիրանն*, Ե։

95 *Զարքայութիւն կամարարաց իւրոց*, Ե։

ԳԼ․ Ը․

1․ *Ասացեալ*, Գ․ Ե․ Կ։ 2․ *Բանին*, Ա․ Բ։ 3․ *Քրիստոսի*, Գ․ Ե․Կ։ 3․ *Եւզպատուականն յանարգէն*, Ե։ 4․ *Վարիմք*․ Կ։5․ *ի միմեանս առաքինութեանցն*․ Գ․ Ե։ *առաքինութեանցն և մոլութեանցն*․ Կ։ 6․ *Զի նախ նա իսկ որ ամենայնի Տէր և Արարիչ և աղբիւրն է բարեաց Երկնաւորաց և* ․ ․ ․ Ա․ Բ։ 7․ *Ամենայն կենդանեաց*, Գ․ Կ։

9․ *Զանկարգութիւն՝ որ զբարկութիւն շարժէ* ․ ․ ․ Ե։ 10 *Վրիպեալ*, Ա․ Բ։ 11 *Եւ երթալ ի պատրանս մեղացն յա- նառակութիւնս*, Ա. Բ։ 12 *Ամենայն չարեաց*, Գ Գ Ե Վ։ 13 *Պատուհասիք պէսպէս*, Գ։ 14 *Յօգնականութիւն*, Ա․Բ․Ե։ 15 *Ժպրհութիւնք*, *և սուտթիւնք և սուտ երդմունք*, Ա. Բ։ 16 *Եւ քէնք առ օտարս*, Գ. Վ։ 17 *Զի ունոյ տէրն*, Ա. Բ։ *Զի ունէ տէրն*, Գ. Ե. Կ։

18 *Զկատարեալ են*, Ա. Բ։ 19 *Զի արբեալ է ախտի- պոռնիկն*, Գ․ Վ։ 20 *Ոչ է տեսեալ*, Գ Ե Կ։ 21 *Օրէնքն*

զայսպիսիքս, Ե։ 22 Իսկ որ Քրիստոսին տուան օրէնք նորս . . . Ա. Բ։ 23 Ժողովրդեան, Ա. Բ։ 24 Այլ զգուշութեան, Դ. անզգուշութեան, Կ։ 25 Երանի այնոցիկ Ե։ 26 Ով բաւական է ասել զորբոցն զհատուցումն, Գ. Վ։ 27 Յանպատումն, Վ, Գ։ 28 Իսկ, Վ, Գ։

29 Զոր ասել անհնարին ինձ զկայենիցն և զբարեացն անճառից, Ա. Բ։ 30 Լուցկիկ, Ա, Բ։ 31 Յանդամն, Ա, Բ, Գ։ Յանդաստանս, Ե. Կ։ 32 Լծիլ, Ա. Բ։ Աճել, Ե. Կ։ 33 Զցանկութեան, Գ. Դ Ե. Վ. Կ։ 34 Կոչեալ, Ա. Բ. 35 Գործ, առ. ԺԵ, 29։

36 Անարատութեամբ և հաւատով, Ա. Բ։ Ընթացեալք հաւատով, Գ։ 37 Ի յաւիտենից խոստացեալ բարիսն, Գ. Ե։ 38 Ճմլեն, Գ. Կ։ 39 Մի խաբիք, եղբարք, Գ. Կ։ 40 Ոչ մեռանի, Գ. Վ։ 41 Գոյ, Վ. Գ։

42 Հոգի է, ընկղմեալ ի կենդանիս բնութեան, Ա. Բ։ 43 Վասն, Ա. Բ։ 44 Որ վաղճանի ի կորուստ, Ա. Բ։ 45 Մեռանն, Գ. Ե։

46 Զանօրէնութիւնս, Գ. Ե. Կ։ 47 Խրատէ զմեզ.. Կ։ 48 Աւուրքն Ա. Բ։ Աւուրբն. Գ. Վ։ 49 Հրամանաւն, Գ. Ե. Կ։ 50 Արուեստիւք, Ա. Բ. Գ. Վ։ 51 Վրիպեսցի, Գ. Դ. Կ. Վ։

52 Զի ասէ առաքեալն։ 53 Կուրացան անմտութեամբ սիրտ նոցա, 54 Վասն ինքն է Աստուած և տէր, որ հրաւիրեաց . . . Ա. Բ։ 55 Պատկառ կալ, Գ. Վ։

ԳԼ. Թ.

1. Ամենայն արուեստ պահոց, Ա. Բ։ Յաղագս ամենարուեստ, Կ։ 2. Ասացեալ, Ե. Կ։ 3. Որում փառք . . . Ե։ 4. Օրինացն Աստուծոյ Կ։ 5. Ի տեսանել, Կ։ 6. Ընկալցուք զհամբերութիւն և . . . Ա. Բ։ 7 Յարքայութիւն երկնից, Ա. Բ։ Ի մշտնջենաւորն, Գ. Վ։ 8. Եւ հոգեբարձու լեալ յերկնաւորըն երևի, Ե։

9. Սոյնպէս և զօրաց երկնաւոր հրեշտակաց են կար-
գաւորութիւն, Ա. Բ։ 10 Որպէս, Կ։ 11 Ամենայն զօրութիւնք
և զուարթունք, Ա. Բ։ Զօրութիւնք և զօրք, Գ. Ե. Կ։ 12 Հա-
ւանել և հնազանդել ի հաճոյս տէրութեանն և աստուածու-
թեանն, որով ուրախացեալք ի պայծառութիւն Արարչին միշտ,
Ա. Բ։ 13 Ուրախացեալք ցնծան, Կ։ 14 Կատարեալ, Ա. Բ։
5 Գրաւեալ է, Գ. Ե. Կ. Վ։ 16 Զպատուէրս նորա, Ա. Բ։
7 Ի մշակութեան նորին, Կ։

18 Ի սուրբ, Գ. Ե. Կ։ 19 Յառաջեալ, Գ. Ե. Կ։ 20
Զի զարդարն. Ա. Բ։ 21 Հաստատեաց, Ա. Կ։ 22 Եւ ի նորս
օրէնս կենաց. . . Ա. Բ։ 23 Զիշխանութիւնս մահու. . .
Գ. Կ։ 24 Նաքլութեամբ, Գ. Ե. Կ։ 25 Համբերութեամբ որ
ի վտանգս, Գ. Կ։

26 Խլեացէ զմոլորութիւնն Ա. Բ։ 27 Յորդեալք, Ա. Բ։
23 Լեալ, Ա. Բ. Վ։ 29 Ի մտանել ի դրախտն, Գ. Ե. Կ։
30 Պահք ի ս. հարցն առաջնոյ և մանաւանդ ի յԱստուծոյ Ե։
31 Որ կայ և պահի, Գ. Ե։

32 Յուխտին Տեառն, Ե։ 33 Ապրեալք, Ա. Բ։

34 Բազմարուեստք են, Ա. Բ։ 35 Արտաքս, Ա. Բ։ 36 Զան-
ըմբեր լուծս, Գ. Ե։ 37 Զարին կամաց, Գ. Ե. Կ։ 38 Պահոցն
ժուժկալութեան, և ի զգաստութեան մնալով, ի համբերու-
թեան և ի զգուշութեան և յորդորեալք . . . Ա. Բ։

39 Եղիաս, Գ, Ե. Կ։ 40 Երկրորդ Ա, Բ. Ե, Կ։ 41 Խարայ-
էլի սուրբ, Գ. Ե. Կ։ Սուրբն, Գ. Վ։ 42 Տէրն մեր Քս. մի-
ածին հօր Աստուծոյ.. Ե։ 43 Ի լոյս հոգւոյն վերանալ և
լսել, Ա. Բ։

44 Մարմնեղէնս, Գ. Վ։ 45 Աղտեղեալ են, Ա. Բ. Կ։
46 Որպէսզի ազատեալ և հոգով սրբով սրբեալ և լուա-
ցեալ ի մեղաց անտի, Ա. Բ։ 47 Եւ ամենայն սուրբք, Ե։
48 Եղեն վկայք, Ա. Բ։

49 Պատիրս, Վ։ 50 Արբեցողաց և շռայլաց, Ա. Բ։ 50 Ա-
նուշահոտ բուրէ, Ա. Բ։ Անուշահոտ և սուրբ լինի, Կ։

51 Վերստին ստեղծումն, Գ: Զի մերձեալ պահք ի մարմինս՝ վերաստեղծու ի սրբութիւնս, Վ: Վերստին հաստատութիւն, Ա. Բ: 52 Հաստատեն զյոյս մնաց, Ա. Բ: 53 Ի մահ ալեկոծելով, Ա. Բ: 54 Զարդարեալ, Ա. Բ: 55 Ի յարձակեալ, Ա. Բ: 56 Ծուլութիւն, Ե: 57 Զերկիւղն Աստուծոյ ի բաց մերժէ, Ե: 58 Զայս յուշ առնելով, Գ. Ե. Կ: Իսկ ես ոչ տկարացն Ա. Բ:

59 Այրէ զորովայնն հարկանելով, Ա. Բ: 60 Եւ կաղմէ մեքենայ զգայութեան Ա. Բ: 61 Ի պարկեշտութեան ջանս, Ա. Բ: Ջանս, զի արժանի լիցուք խոստացելոց բարեացն ի Քրիստոս . . . Ե:

ԳԼ. Ժ.

1. Աստցեալ յաղագս երախտաւորութեան, Ե: 2. Երանութեանն, Գ. Ե: 3. Անարատ Գ. Ե: 4. Սիրոյ և կենաց, Ա. Բ: 5. Յորդորմամբ, Գ. Վ: 6. Առնել, Ա. Բ: 7. Շնորհացըն եմք, Կ: 8. Բերրի, Ա. Բ: 9. Պսկասումէ մինչև՝ որք կաշառօք . . . Ա. Բ: 10 Բարութեան զարդիւնս, Ե:

11 Խրատու, Վ. Գ: 12 Որ ի միասին կայէ, Գ. Ե. Կ: 13 Ոմանք՝ արդարութիւն 37: 14 Բանան ինքեանց ստ զգրունս սրոյ . . . Կ:

15 Բանք . . Կ: 16 Իսկ որ արասցէ և ուսուսցէ, նա մեծ կոչեսցի արքայութեան երկնից, ասէ Տէրն: Գ. Ե. Կ: 17 Վարեալ անցուցին զկեանս, և կացուցանէ ի բարութեան և ի սրբութեան . . . Ա. Բ: 18 Անարգեցին, Ե: 19 Յանձինս, Գ. Կ: 20 Սոյնպէս, Ե: 21 Եւ պատճառք այսմ ամենայնի անձնիշխան կամք մեր եղեալ են, որ զանկրևելիսն Ա. Բ: 22 Ի խնամակալութենէ, Գ. Կ: 23 Զի զանապառ . . . Ե:

24 Զերանութիւնսն զոր ասաց Տէրն, երանի . . . Ե: 25 ընթանալ ի կամս, Ա. Բ: Հաւատով զկամս, Ե: 26 Զի և նաւօք հոգւոյն . . . Գ. Ե: Զի թևօք հոգւոյն, Կ: Զի են և որք հոգւով, Ա. Բ: 27 Յանձնասիրութենէ, Գ. Ե. Կ: 28 Որ ամենայն իրօք, Ա. Բ: 29 Ապաստանօք, Ա. Բ:

30 Ի խնդիրս, Ա. Բ: 31 Անմեկնելի ի նմանէ լինել, Գ.Վ: 32 Զանճառելիսն, որ ոք տրտմի վասն մեղաց իւր, զնոսա է իմանալ սգաւորս . . . Ա. Բ: 33 Զքաւութիւն յանցանաց, Ա. Բ: 34 Որ լինէ անմահութեամբք, Գ. Վ: 35 Կենացն յաւիտենից, Գ. Ե. Կ: 36 Ոյք լան այժմիկ, Ա. Բ: 37 Որ զերծեալ, Ա. Բ: 38 Անձուկ սիրոյն, Գ. Ե. Կ: 39 Զպէտս կարեւորս, Ա. Բ:

40 Զի և նա լիցի արժանի առնուլ ասա, Ա. Բ: 41 Ցանկութեանց, Գ. Վ: 42 Հայել և տեսանել իմանալեօքն իմանալիս աստուածութեանն . . . Ա. Բ: 43 Արեգական, Բ: Արեգակնն, Ա: 44 Նոյնպէս ասէ, Վ. Գ: 45 Խաղաղ, Կ:

46 Առաքինեաց, Ա. Բ: 47 Երկրաւորս, Գ. Վ: 48 Աւետարանին Քրիստոսի, Ա. Բ: 49 Կեալ ի Քրիստոս, Ե: Կեալ ի Հալածանս, Ա. Բ: 50 Մոլորեալք ի մոլորեցուցանել: 51 Հայրական, Ա. Բ: 52 Արդարութեանն, Ա. Բ: 53 Ասիցեն, Ա. Բ: 54 Պատիւ, Գ. Վ: 55 Որք զանազան տանջանօք փորձանացըն . . . Ե: Սոյնպէս և սրբոց վարք և գործք, որ . . Ա. Բ:

56 Արժանեացն, Ա. Բ. Գ. Ե: 57 Զկնի իմ, Ա. Բ: 58 Փորձութիւնքն, Գ. Ե: Տանջանքն, Ա. Բ: 59 Եւ ամենայն մարդկանէ և ի չարաչար տանջանաց ոչ յաղթահարի, Ա. Բ: 60 Աբարածք, Ե: Արատք, Գ: Բիծք, Վ: 61 Տանել, Ա. Բ:

62 Որդի Վ: 63 Կանխեալ, Ա. Բ: 64 Խափան, Վ:

65 Մատթ. Է. 6. Խոզաց: Մատթ. ԺԲ. 35 Հանէ զչարիս: Պակասումէ մինչև՝ ի ճշմարտութենէ և գործեցին զչար . . . Ա. Բ: 66 Զի անձնիշխան կամօքն ի վեր բերէ և շարժէ . . . Ե: Յետ երկիցս և երիցս խրատեցելոյ ի բաց հրաժարեսջիր, Ե: 67 Յանձինս զոր լսենն: 68 Աղքատութեամբ, Գ. Ե. Կ: 68 Անարատքն, Գ. Վ: 69 Զմեղս, Գ. Ե. Կ:

70 Զանմեղս, Վ: 71 Իւրաքանչիւրոցն, Գ. Ե. Կ: 72 Ըզշնորհս Գ. Ե. Կ: 73 Հռ. ԺԳ, 1.

74 Ահաւոր և սոսկալի բեմին, Ե: 75 Հրամանացն Գ.Վ: 76 Վերակացուք ճշմարիտք, Գ. Ե. Կ: 77 Ի հաւատոյն, Ա. Բ:

78 Չիք այս կտորը, Գ. Ե։

79 Իրաւանցն, Ա. Բ։ 80 Խնդրեցից. Գ. Ե։ 81 անդա-դար, Գ. Ե։

82 Որք դառնան նու նա ի չարեաց, Գ. Ե. Կ։ 83 Եւ այս է . . . Գ. Վ։ 84 Բաց յինէն, Ե. Կ։ 85 Ի մեղաց շնորհօք . . . Գ. Վ։ 86 Հայր։ Վ. Գ. Ե։

87 Վարդապետօք, Գ. Վ։ 88 կենացն յաւիտենից, Գ. Գ. Ե. Կ։

ԳԼ. ԺԱ.

1. Ասացեալ վասն . . . Ե։ 2. Երանեցան, Գ. Ե. Կ։ 3. Ցորդորէ, Գ. Վ։ 4. Եւ որք . . . Վ։ 5. փառաւոր արասցեն, Գ. Ե. Կ։ 6. Շրջեալ, Գ. Ե. Կ։ 7. Անբաւ յուսով, Ա. Բ։ 8. Հաճեցան, Գ. Ե. Կ։ 9։ Ժուժկալութեամբ ի պահս, Կ։ 10 Ցիշատակաւ, Վ. Գ։

11 Ծաղկեցան, Ա. Բ։ 12 փառացն Քրիստոսի, Գ. Ե. Կ։ 13 Զարդարութիւն է . . . Ա. Բ. Գ։ 14 Երկնաւորաց փառք, Գ։ 15 Լուսեղէն, Գ. Ե. Կ։ 16 Երրորդութեան, Ա. Բ։ 17 Առաքեալքն ի Տեառնէ, Ե։ 18 Ս. պատարագին, Ե։ 19 Հոգի մարմնոյն, Կ։ Հոգի և մարմին . . . Գ։ 20 Հաւասարութեամբ Գ. Ե. Կ։

21 Եւ զաներևոյթն յերևելիս, Գ։ Եւ երևելիս և զաներևոյթս, Ա. Բ։ 22 Անկապտելի, Ա. Բ։ 23 Զերանութիւնսն, Վ։ 24 Զի, Վ։ 25 Ո՞րք են, Գ. Վ։ 26 Ամենայն վարուք, Կ։ 27 Որք սիրեցին ի նմանէ, և որք խնդրեն ի նմանէ . . . Գ. Կ։ 28 Պահէ, Գ. Ե։ 29 Մտաց, Գ. Վ։ 30 Զանհաւանութիւն, Գ. Ե։ 31 Համբաւի, Ա. Բ։ 32 Ի Քրիստոս և շնորհօք նորին, Գ։ 33 Շիջուցէ, Գ. Ե. Կ։

34 Բարուց ցանկութեան, Գ. Վ։ 35 Աւետեաց զարարածս, Ա. Բ։ Պակասաւոր։ 36 Մեծութեանն, Ա. Բ։ 37 Միշտ կենդանի շնորհ ի Քրիստոս ամենաշահ երանութեամբքն յոր-

դեգրութիւն և ի գովեստ . . . Ա. Բ: Են ի կենդանի շնորհն Քրիստոսի, Կ: Շնորհօք, Գ: 38 Սէր աւետիք կենդանի յուսոյն ցրիչ նեղութեան . . . Կ: 39 Զխռովութիւն, Գ. Վ: 40 Որ զանազան ծաղկօք պաղովք խաղողով . . . Ե:

41 Տրախտին. Գ. Կ: 42 Մեղասիրաց, Ա. Բ. Գ. Ե. Կ: 43 Հօրն հնարս, Ա. Բ: 44 Վայելեցին . . . Բարերարութիւն. Ա. Բ: 45 Անյագ բաղկանօք, յորդ . . . Գ. Ե. Կ:

46 Հաստատութեան, Գ. Կ: 47 Հաւատացեալսն, Գ. Գ. Ե. Կ: 48 Կենդանութեամբքն. Գ. Վ: 49 Բարութեանց. Գ. Վ: 50 Զգայարանսն. Գ: 51 Կամացն Աստուծոյ . . . Վ:

52 Խոտղման, Ա. Բ: 53 Զի պահեսցի, Ա. Բ: Պա՞հեսցին անձինք մեր. Կ: 54 Յանդգնել, Գ. Ե. Կ: Ի լկտութեան ի ըստահակութեան և ի թշնամանս յանդգնել . . . Ա. Բ: 55 Խըռովութեան, Ա. Բ: 56 Զքարեքաշտութիւն տխրելոց, Գ. Ե. Կ: Զերաշտութիւն տխրացելոց, Ա. Բ: 57 Կարգաւոր կարգաց, Ա. Բ. Գ. Ե. Կ: 58 Յորդորեալ, Գ: 59 Փոյթ յառաքինութեան գործս ի սրբութիւն, Գ. Ե:

60 Խորհուրդ մարմնոյն, Ա. Բ: 61 Առ ի շիջուցանել, Կ: 62 Մտօք և (ամենայն) անդամօք, Ա. Բ. Գ. Ե. Կ: 63 Ապաշխարութեան, Գ. Ե. Կ: 64 Տնանկքն հեզութեամբ, Կ: Տնանկացն մեծութեամբն, Գ. Վ:

65 Համահամ՝ մտացն, Գ. Ե. Կ: 66 Անարգամեծար Տէր է Գ. Վ: 67 Քարոզողս, Գ: 68 Առ ապստամբ, Կ: Առ ապստամն, Գ:

68 Վերափոխի, Գ. Վ: 69 Եղեր, Գ. Վ: Տեառն, Կ: Երանութեանն, Ե: 70 Վերստին հաւատացելոց ամենեցուն, Գ. Վ: 71 Հաւաստութենէ, Ա. Բ: 72 Առ արածելն, Վ: Խոնարհին՝ պսակին . . . Գ: 73 Հեզ և խոնարհ, Ա. Բ:

74 Նորոգող, Կ. Նորոգ, Գ. Ե: 75 Երկնաւոր Հօրն, Կ:

76 Հաստեցուցիչ, Գ. Ե. Կ: 77 Վշտագնելոց, Գ. Կ: Վըշտացելոց, Ե: 78 Եկն Տէրն, Ե: 79 Յապաշխարութիւն, Ա. Բ: 80 Երախտեօք երանութեամբքն, Գ. Վ: 81 Զի առողջ, Ա. Բ.

Դ. Ե. Կ: 82 Առաքինութեան ճառումն, Գ: Յորդորումն, Ե:

83 Ի պատիժս յաւիտենական, Ե: 84 Զի որ այսպիսի ունի սիրով հոգւոյն, Դ. Ե: Զսէր, Կ: 85 Յանցանաց, Կ. Վ:

86 Ընդունիչ, Ա. Բ: 87 Քնէից, Ա. Բ. Դ. Ե. Կ: 88 Զոլել, Դ. Ե. Կ: 89 Արձակէ, Ա. Բ: Դ. Ե. Կ: 90 Զամբիծ, Դ. Ե. Կ: 91 Ծառ որ անկեալ է, Ա. Բ:

92 փրկեսցէ ի կատարումն . . . խլեալ . . . Գ: 93 Զի խլեալ է . . . Դ. Ե: Զի խլեսցէ, Ա. Բ: 94 Սերմանիք, Դ. Ե. Կ: 95 Զանխրատութիւն, Ա. Բ: 96 Յարդարեալ, Դ. Ե. Կ: 97 Առաքինութեանց, Ե: 98 Նուաստանան. Ա. Բ. Գ: Զգաստանան, Կ: 99 Ի զգուշութիւն սրտից, Ա. Բ: 100 Շնորհս, Ե: 101 Անարատ անբծութեան և անբիծ սիրով, Դ. Կ: 102 Փրկչին մերոյ, Ե: 103 Վնասուց հոգևորաց, Ե: 104 Բառնայ, Գ: 105 Քաղցրութիւն, Ա. Բ: 106 Որ անճառէ մեծութիւն, Դ. Ե. Կ: Ի մեծութիւն, Ա. Բ:

107 Այգ, Դ. Վ: 108 Զի սաստ այժմ, Կ: 109 Անարատութեամբ և ամենայն երախտօք, Ա. Բ: Վասն սիրոյն . . . Գ: 110 Բարիսն վայելեսցէ. Դ. Ե. Կ: 111. Անապառ. Դ. Ե. Կ: 112. Ընթացիւքն. Դ. Ե. Կ: 113. Քաղցրութեամբ Ա. Բ:

114. Զարեացն զբարիսն. Ա. Բ. Գ. Դ. Ե. Վ: 115. Զպատիժս Ե, Զպատիրս, Կ: 126 Լոյս նա է, Գ. Վ: Լոյս նորա է, Կ:

117 Զանքննելիսն, Ե: 118 Ի նշոյլս, Ա. Բ. Դ. Ե: 119 Զարթուցանէ, Ա. Բ: 120 Սիրով, Ա. Բ: 121 Տանջանաց գեհենին, Գ. Վ: 122 Յանարատութիւն, Ա. Բ: 123 Տեառն Յիսուսի Քրիստոսի, Ե: 124 զՍաղմոսաց, Ա. Բ. Կ:

125 Սպասաւորութիւնք, Գ: 126 Հատոյն, Ա. Բ. Վ: 127 Նովաւ, Ա. Բ: 128 Ի փառաբանութիւն, Ե: 129 Ոռոգանել, Դ. Ե: Ոռոգանողք, Կ: 130 Ճշմարտեալ հաւատով, Ե: 131 Վերաստեղծու առ ի գիտել, Ա. Բ: 132 Որ ի բերանոց լսէ, Դ. Ե. Կ: 133 Բարութիւնսն, Գ. Վ: 134 Հաստատեսցին, Դ. Ե:—Զհաս գիտութեան, Կ:

135 Ի հօրէ, Ա. Բ: 136 Հաստատելիք, Վ: 137 Երկիրպա-

գանեն՝ Ա. Բ։ 138 Զարդարութեան և զանիրաւութեան՝ զգան՝ Ա. Բ։ 139 Զխնամս՝ Դ. Ե. Կ։ Զկամսն՝ Գ. Վ։

140 Ուրախութեամբն՝ Ե։ 141 Ձեռքս այս։ Գ. Վ։ 142 Ճշմարիտ հաւատով՝ Գ. Վ։

143 Ընձեռէ՝ Գ. Վ։ 144 Սրբութեամբ՝ 145 Բարիսն՝ Դ. Ե. Կ։ 146 Վերստին՝ Գ։ 147 Գնացիւք՝ Գ. Վ։ 148 Վերնոցն՝ Գ. Դ. Ե. Կ։ 149 Օձն տարանակալ՝ Ե։ 150 Արդարութեան՝ Գ. Վ։

151 Ժառանգեսցեն յաւիտեան՝ Ա. Բ։ 152 Փութացուք ծառայել՝ Կ։ 153 Ըստ Դաւթայ ասելոյն՝ Ե. Կ։ 154 Զարթնու՝ Դ. Ե։ Զարթնուցու՝ Կ։

ԳԼ. ԺԲ։

1. Անհնազանդ ստահակաց՝ Ե։ 2. Վարուց լուսաւորութեան՝ Դ. Ե։ Բարի և լուսաւոր վարուց՝ Կ։ 3. Իւրաքանչիւրոցն՝ ցուցանին Դ. Ե։ Իւրաքանչիւրքն Կ։ 4. Հաւանական՝ Դ. Կ։ 5. Կարդալով՝ Դ. Ե. Կ։ 6. Յանձրևոյթն և յերևելիս՝ Վ։

7. Ոմամբ՝ Գ. Վ։ 8. Ընդ՝ Գ. Վ. Կ։ 9. Ընդրել՝ Գ. Վ։

10 Գիրկսն կեալ՝ Գ. գիրսն կեալ՝ Վ։ 11 Թէ՝ Վ։ 12 Պահին մարմինքն՝ Կ։ 13 Պաշտօնեայքն իմ եղիցին՝ Գ. Վ։ 14 Եւ ածէ անձրև ի վերայ արդարոց և մեղաւորաց՝ Ե։ 15 Յանձ յանտգնութեանց՝ Դ. Կ։ 16 Քրիստոսի՝ Ա, Բ։

17 Զժողովուրդ՝ Վ. Գ։ Որ Վ. 18 Գ։ 19 Ժառանգելոց են՝ Կ։ 20 Խաւար ածէ՝ Ա. Բ։ 21 Եփես՝ Դ. 18. 22 Իսկ անտ՞ուր՝ Վ։ Իսկ անտ է հուր՝ Ա. Բ։ Իսկ անդ հուր ի հուր . . . Գ։ 23 և կրճել ատամանց՝ Ե։ 24 Անօրէնոցն և պղծոց՝ Ա. Բ։ 25 Ժող՝ ԺԲ՝ 7՝ 26 Սուրբ հոգիքն՝ Ա. Բ։ 27 Փափոխէ՝ Ա. Բ. Գ։ 28 զՔրիստոս անմահ գառն՝ Ե։ 29 Սակաւ լեր՝ Ա. Բ։ 30 Խոնարհութիւն՝ Գ. Վ։ 31 Պիտոյ ես է զկացեալսն՝ Կ։ 32 Հանդուցելոցն Ա. Բ։ 33 Զհրաժարեալսն յաշխարհէ՝ Ե։ Այսուհիկ՝ Դ. Ե. Կ։ Յուզարկեալ՝ Ա. Բ։

34 Բաժանել զհանգիստ՝ Գ. Վ։ 35 Կոծին զհրաժար-

եալսն, Ա· Բ։ ցոխւն, Գ· Ե· Կ։ 36 Որ լնու զամենայն և յԱստուծոյ · · · Ա· Բ։ 37 Հանգուցելոյն, Վ· Գ։ 38 Հռ· Բ, Շ։ 39 Եւ քանզի զերխ իրս, Գ· Ե· Կ։ 40 Ի ժամ, Ե։ 41 Բարեաց, Գ· Ե· Կ։ 42 Կարէ, Գ· Ե· Կ։

43 Գիրք միայն, Գ· Վ։ 44 Ոչ իմիք, Ե։ Եւ ոչ մի ուիք, Գ· Կ։ 45 Տեառն ճանաչեն, որ սաէ 6։ յայնժամ ծակեսցեն, Է։ 46· Արտաքս ի կամացն· Գ· Ե· Կ։

47 Քանզի արտասուք, Է։ 48 Զանձինս, Ա· Բ։ 49 Յերկնային· Գ· Վ։ 50, Քրիստոսի մարմնով սուրբ· · · Է։ 51 զԳնացեալսն· Ա· Բ։ 52 զվախճանեալսն, Գ· Վ։ 53 Եւ զի զաւուրս, Ե։ Եւ զօրս, · Բ։ 54 Որ վրիպեցան, Վ· Գ։ 55 Սրբոց Աստուծոյ, Վ· Գ։

56 Յայսոցիկ, յերկնաւոր, · Բ։ 57 Վերափոխին, Ե։ 58 Մեռելոյն մեղօք թաղեալ · · · Ա· Բ։ Որպէս և Տէրն Յուցանէ · · · ասելով, վայ ձեզ · · · Ե։

59 Ըստ Ղազարու, Ե· Կ։ 60 Ուղղափառ, · Բ։ 61 Փոփոխումն յայնոսիկ, · Բ։

Գ․Լ․ ԺԳ․

1· փոխելոյ, Ա· Բ։ 2· կատարեն, Ա· Բ։ 3· Ասացեալք Գ· Ե· Կ։ 4· կենաց, Վ· Գ։ 5· փրկութեան, ի հանգիստն, Գ· Ե· Կ։ 6· Ի կեանս այս, Ե։

7· Եւ ճշմարիտ, Ե։ 8· Հաստատել զանձինս յանտի լոյսըն և մտերիմ սիրովն, Ա· Բ։ 9· Ունելով զնոսա, Կ։ 10 Զի որք կատարեալ հետևողք լինիցին ճշմարիտ լրման · · · Գ, Ե· 11 Յուսոյն, Գ· Վ։ Միաշահէ, Ա· Բ։ 12 Օրինակ լինին Գ· Ե· Կ։ 13 Սուրբ խոստովանութեամբ, Գ· Ե· Կ։ 14 Ազատեալք, Ա· Բ։ 15 Վաստակոց, Գ· Վ։ Զայդ վարուց, Ե։ 16 Բարեխօսութեամբ, Գ· Վ։ 17 Հանոյ և անարատ, Գ· Ե· Կ։

18 Իսրայէլ, Ա· Բ։ 19 Զայլս բազումս, Գ· Վ։ 20 Առհարսն մեր խոստացեալ եղև, Կ։ 21 Իւրոց ի յելս, Կ։ 22 Բնիւրք,

Գ. Վ: 22 *օրինակների մէջ կիսատ է*: Գ. *Թադ.* ԺԹ, 34:

23. *որբութեան*. Գ. Վ: 24. *Պարտապան էր*. Ա. Բ: 25. *Ուտիցէք ի մարմնոյ իմմէ, զյիշատակ*. . . Ա. Բ. Է: 26 *և ամենեքեան լնուն նոքա, որ ըստ*. . Ա. Բ: 27 *Աւետեաց*. Գ. Ե. Վ:

28 *Զաներևոյթն երևեցոյց*. Ա. Բ: *Զաներևոյթն երևելովեցոյց*. Գ: 29. *Զվիշտս վշտագինս*. Ա. Բ: 30. *Զտես հանելով*: Ա. Բ:

31 *Տեսանե՞ս*, Ա. Բ: 32 *Զրկեսցին*, Գ. Վ: 33 *Ամենայնիւ*, Գ. Ե. Կ: 34 *Ուրախութիւն յուսով*, Գ. Ե. Կ: 35 *Իսկ են*, Վ. Գ:

36 *Զի՞նչ առ յոյս* . . . Գ. Վ: 37 *Մարմնով և արեամբ*, Վ: *Մարմնոյ և արեամբն*, Գ:

38 *Ելանելոյ յաշխարհէս*, Գ. Ե. Կ: 39 *Պարտ է ցուցանելոյ*, Կ: *Ցուցանէ*, Ա. Բ: 40 *Գործոյն*, Գ. Վ: 41 *Երկիւղիւ*, Գ. Ե: 42 *Եւ ամենայն անհնարինք*, Գ. Վ: 43 *Եւ որ ոչ երկնչի յերկիւղէ Տեառն*, Ա. Բ:

44 *Անուանն նորա*, Գ. Կ: *Իւրոց*, Գ. Վ: 45 *Վկայութեամբ սրբոց իւրոց*, Ա. Բ: *Սիրոյն իւրոյ՝ սրբոց իւրոց*, Վ:

46 *Ծածկագէտ տեսողէն*, Ե: *Ի տեսողէն գաղտնեաց*, Կ:
47 *Ի տառն տանջանաց*, Գ. Ե. Կ: 48 *Յուրախութիւն*. Գ. Վ:
49 *Սուրբ Հոգւով, յանհրաժեշտ* . . . Ա. Բ:

ԳԼ. ԺԳ.

1. *Ասացեալ*, Ե: 2. *Յաղագս որ յԱստուծոյ* . . . Կ: *Յաղագս մարգարէութեան*, Ա. Բ: 3. *Պսակեսցի*, Գ. Ե. Կ: 4. *Որոշի ի սուտ և ապիրատ մոլորութենէ*, Ե: *Որոշի ի ստապատիր* . . , Ե. Կ: 5. *Կենացն յաւիտենականաց*, Ե: 6. *Ճգնութեան համբերութեան* . . . Ա. Բ:

7. *Համբերութեան*, Վ. Գ: 8. *Կարգի*, Գ. Ե. Կ: *Կատարի* Գ. Վ: 9. *Յարդարին*, Գ. Ե. Կ: *Յարփին*, Գ: 10 *Պիտք ի սնունդս*, Կ: 11 *Ղուղակըք*, Ա. Բ. Գ: 12 *Ցուցանեն*, Ա. Բ. Ե: *Ցուցանիցեն*, Կ: 13 *Այսու*, Գ. Կ:

14 Զարչարեալ լինէր, որ վշտագին աշխատեալն էր, Կ: Զարչարեալ լինէր և վշտագին, որ աշխատեալ լինէր, Դ. Ե: վշտաւորին, Գ. Վ: 15 Տեսանեմք, Ա. Բ: 16 Զարմատս, Ա. Բ: 17 Զորս, Ա. Բ: 18 Մարդասիրութեանս մերոյ, Ա.Բ: 19 կեանք էր սնունդ, Ա. Բ: 20 Զգէր . . . Գ. Դ. Ե. Կ. Վ:

21 կեանք, Ա. Բ. Գ. Ե. Կ: 22 վատնել, Դ. Ե. Կ: 23 Լըսիցեմք, Գ. Վ: Լսեմք, Ա. Բ: 24 զաստուածամարտն Սատայէլ, Ե: 25 Խորտակեաց, Ա. Բ: 26 Սնոտի յոյսն, Ե: 27 Կատարեցին, Ա. Բ: 28 Յառաջադէմն նկրտի, Գ. Վ:

ԳԼ. ԺԵ.

1. Ասացեալ, Ե: 2. Մարդկութեանս, Գ. Դ. Ե: 3. Կամօքն Աստուծոյ, զի ամենայն արարածք, Դ. Ե. Կ: 4. Օրինացն, Դ. Ե. Կ: 5. Ի կէտ կոչմանն վերին շնորհացն, Գ. Վ:

6. Երկնաւորացս, Դ. Ե. Կ: 7. Սակայն, Դ. Ե. Կ: 8. Մընացեն, Կ: 9. Ի տգիտութեան, Ա. Բ: 10 Զվախճանն, զերծեալ, Գ. Վ: 11 Եւ ի հոգւոց աշխարհականաց, Կ: 12 Եւ փախին ի յոյս . . . Կ: 8. Զունին՝ երանութեանցն, Դ. Ե. Կ: 13 Յուսացելոց իւրոց անճառ և անքննին, Կ: Յուսացելոց իւրոց անճառքն . . . Դ. Ե: 14 Աղքատացան առ ժառանգութիւն արքայութեան . . . Կ: 15 Որ անբաւ բարութիւն է, Դ. Ե. Կ: 16 Ժառանգեն, Ա. Բ: 17 Ի խորոց, Դ. Ե: Ի խոնարհութենէ, Վ: 18 Ունին, Կ. Գ. Վ: 19 Են, Գ. Վ:

20 Քրիստոսի, Դ. Ե. Կ: 21 Զոր, Դ. Ե. Կ: 22 Ունի զոր, Վ. Գ: Մուծանեն, Գ. Վ: 23 Բարութեանցն, Գ. Վ: 24 Ուրախութիւնսն, Ա. Բ: 25 Որք, Կ: 26 Ըստ, Ա. Բ: Ընդդէմ նոցա, Կ: 27 Յանդգնութեան, Դ. Ե. Կ: 28 Սրտիւք, Դ. Ե. Կ: 29 Ի տխրական տեղիսն. Դ. Ե. Կ: Ի տխրական տեղիք, Գ. Վ: 30 Դատաստանին, Կ:

31 Որ ի Քրիստոսն է, Ե: Ի Քրիստոսն է, Գ. Կ: 32 Եւ մի որդիս, Գ: 33 Արդարոց սրբոց, Դ. Ե. Կ: Սրբոց, Գ. Վ: 34

Յառաջամարտաց, Դ· Ե· Կ։ 35 Առնուցուն, Ե։ 36 Ժամանա-կըն, Դ· Վ։

37 Զատտիս անձն · · · Գ։ 38 Նախախնամութեամբն · · · Կ։ 39 Ստանայ, Դ· Ե· Կ։ 40 Եւ վասն · · · Գ։ 41 Յորդորեսցին, Ե· Կ։ Յորդորեսցին, Գ։ 42 Արդարութեան, Դ· Ե· Կ։ 43 Եւ Վ· Գ։ 44 Եւ անդէն, Ա· Բ։ 45 Օգնութեամբք, Ա· Բ։ 47 Տան, Դ· Վ։ 48 Գիտելութիւն, Դ· Վ։ 49 Իմաստնիցն է · · · Ե։ 50 Տեսչութիւնն, Դ· Ե· Կ։ 51 Զլաց միաւորեալ, Ե։ 52 Կոչէ, Դ· Ե։ Կոչեալ, Կ։ 53 Առաքես զոգի · · · Վ· Գ։

54 Նորոգին, Ա· Բ։ 55 Զի հոգեացն դարձ ի մարմինն այս են, Դ· Ե· Կ։ 56 Զի բերան, Ե։ 57 Հոգով տերամբն, Ե։ Տէր, Ա· Բ։ Ցիւծելն, Ա· Բ։ 58 Հոգւոյն զի մարմնոյս, Դ· Ե· Կ։ 59 Զգայութիւնքն է (են) Դ· Ե· Կ։ 60 Կենդանութիւն, Դ· Վ։ 61 Սրբութեան, Ա· Բ։ 62 Զիւրեանց բնութեան բարուցն, Դ· Վ։ 63 Աղտեղիս և չարչարելիս, Վ· Գ։ 64 Մարմնոյ և արեանն իւրոյ, Ե։ 65 Մերձենան, Դ· Ե· Կ։

66 Երանութիւնսն, Դ· Ե· Կ։ 67 Վարուք, Կ։ Վարս մը-ճարել, Դ· Ե։ 68 Զսիրելիս իւր ի կեանսն, Կ։ Կեանսն, Դ· Ե։

ԳԼ· ԺԶ·

1· Ասացեալ, Ե։ 2· Բարեխօսելոյն, Դ· Ե· Կ։ 3· Սրբոցն ի լոյս, Դ· Ե· Կ։ 4· Ժողովք, Դ· Կ։ 5· Կանխելով ի սուրբ սըր-տէ, Կ։ 6· Փառաբանութեամբ, Վ· Գ։ 7· Առցեն, Կ։

8· զԱստուած զնոսա արհամարհեցան, Գ։ 0· Եւ քանզի այսպիսի · · · Ե։ 10 Ծառայիցն· Կ։ 11 Սատանայի, Վ· Գ։ 12 Ամբարտաւանեալ։ 13 Տեառնէն, Գ· Վ։ 14 Տանջանօք, Ա· Բ։

15 Խղել, Գ·Գ·Ե·Վ։ 16 Բարեխօսել, Դ·Ե· Կ։ 17 Եւ կոչեալ հրաւիրեաց յերկնից արքայութիւն, Կ։ 18 Աստեօք, Վ· Գ։ 19 Ճշմարիտ սիրովն, Դ· Ե· Կ։ 20 Սրբոցն արժանի, Դ· Ե· Կ։ 21 Ցասուով և հաւատով տօնեսցուք · · · Կ։ 22 Եւ զխըրա-քանչիւր պատարագս ընծայեն Աստուծոյ, Ե։ 23 Հաւատա-

ցելոց ժողովրդեան, Գ. Ե. Կ: 24 Ցայտն. Գ. 10: 25 ժողո-
վրրդեանն, Ա. Բ: 26 Ի Տէր մեր, Ե: 27 Առ սրբոցն ժողո-
վուրդս, Ա. Բ: 28 զԱստուծոյ, Գ: Առ Աստուծոյ. Ա. Բ:
29 Մերձաւորութեամբն, Գ. Ե. Կ: 30 Զօրութիւն, Ա. Բ.
31 Առին զպարգեւսն, Գ. Ե. Կ: 32 կատարման սրբոց . . . Գ. Ե. Կ:

ԳԼ. ԺԷ.

1. Նորին երանելոյն, Ա. Բ. Գ. Կ: 2. Ոմանք լոկ՝ Գրիգո-
րի: 3. Ի պատիւս և ի պատիժս, Կ: Պատիւ և պարծանք,
Ա. Բ: 4. Գրեալ, Ա. Բ: 5. Պատրաստեցին, Գ. Ե. Կ: 6. Եւ
մերձաւորս, Վ. Գ: 7. Յարգարէ, Ե: 8. Զիք՝ ատենին, Ա. Բ:
9. Ծուլացի և հեղգացի, Ե: 10 Գայցէ, Գ. Ե. Կ: 11
Որ ի Տեառնէ, Գ. Ե. Կ: 12 Ամաչեսցեն, Ա. Բ: Եւ դարձեալ
Դանիէլ, Գ: Եւ մարգարէն Դանիէլ, Ե: 13 Եւ ամբարշտու-
թիւն զրպարտչացն, Ա. Բ: 14 Պաշողաց, Վ. Գ: 15 Զնոսա,
Գ. Վ: 16 Զարձակեալն քո յերկրի, Կ: 17 Հաւատով եղիցի
արձակեալ յերկինս . . . Կ: 18 Իսկ պատիժս սպառնալեացն
առ Պետրոս, Գ. Ե. Կ: 19 Այս տողը պակասումէ, Գ. Կ:
20 Լինել, Կ: 21 Երկնից, Ա. Բ: 22 Զստուգութիւն, Գ. Ե. Կ:
23 Գործոցն, Գ. Վ: 24 Նշանք, Գ: 25 Փառք են, Կ: 26 Ի լու-
սաւոր վարդապետութեան վարս . . . Գ. Ե. Կ:
27 Ընկալեալ, Գ. Ե: Ընկալեալ զՔրիստոս, Կ: 28 Մտա-
ւոր, Վ: 29 Եւ դուք նման նմա լինելոց էք փառօք, Ե:

Հետևեալ ճառի վերջը, սկսեալ «Զի հոգևոր օրէնքն կենդանարար են . . .» շարունակութիւն է դարձել այս ճառին Ա. և Բ. օրինակների մէջ:

ԳԼ. ԺԸ.

1. Գոհութիւնք. Գ. Ե. Կ: 2. Պարգևք նորին, Ե: 3. Զօ-
րութիւնքն, Գ. Կ: 4. Երկրաւորքս, Գ. Ե. Կ: 5. Զհոգևորսն
խրատուն, Գ. Կ: 6. Կամնն, Կ: 7. Հնազանդեաց, Գ. Ե. Կ:

8· Արարչին բարերար կամք, Գ· Վ։ 9· Ըստ, Գ· Վ։ 10 Չի զամենայն զմիտս, Գ· Ե· Կ։ 11 Յորդորեսցին · · · Գ· Ե· Կ։

12 Ատէ, Գ· Ե· Կ։ 13 Նութիւն, Կ։ 14 Աւետարանի, Գ։ 15 Որպէս ողորմութեամբ, Վ· Գ։ 16 Եւ ի վայր, Կ։ 17 Դարձուցանեն, Գ· Ե· Կ։

18 Արդ են արք · · · Ա· Բ։ 19 Տանջանք, Գ· Վ։ 20 Երկնից ժառանգաւոր, Վ· Գ։ 21 Լցոյց, Կ։ 22 Աստի պակաս է, Ա· Բ։ Մինչև «Ութերորդ · · · 23 Զանհամբերութեան ստունգանութեան և զայլանդակութեան· Կ։ Զհամբերութեան, Գ· Ե։ 24 Եւ սիրովն և · · · Ե։ 25 Ընկենուլ, Գ· Ե· Կ։ 26 Թօթափել, Գ· Ե· Կ։

27 Ոչ մոլորի յերախտաւոր, Գ· Ե· Կ։ 28 Դատն, Վ· Գ։ 29 Որ ի· Վ· Գ։ 30 Ի պատիժս, Գ· Վ։ 31 Մեղաւորս, Ա· Բ։ Ղեղաւորս, Վ· Գ։ 32 Յորս Կ։ Զոր ստեն, Գ։ 33 Զանհաւատութեան, Վ· Գ։ 34 Ոչ խղէ, Գ։ 35 Կորիցեն, Գ· Ե։ 36 Քանզի այս են · · · Ե։ 37 Արտասուացն ջրով, Ե։ 38 Տուեալ, Գ· Ե· Կ։ Ի Քրիստոս եղեն, Գ· Վ։ 39 Հոգւոյն ճշմարտի, Ե։ 40 Ապաւէն է յուսացելոց Վ։ 41 Եւ քանզի առաջին, Ե։

42 Ճշմարիտ, Գ· Ե· Կ։ 43 Առ Աստուած, յուսոյն որ ոչ · · · Ա· Բ։ 44 Քարոզութեան, Գ· Ե· Կ· Ա· Բ։ 45 Զմարմնաւորական, Գ· Ե· Կ։

46 Խորամանկութեան, Ա· Բ։ 47 Երթիցուք նորա, Կ։ 48 Վարուցն, Գ· Վ։ 49 Խոկալ, Կ· Ե։ 50 Պարգևսն, Ա· Բ։ 51 Կայանսն, Գ· Վ։ 52 Ուրախութիւնսն, Ա· Բ· Կ։

53 Աւէ մարգարէն, Ե· Կ։ 54 Եւ փառաւորէ, Կ։

ԳԼ· ԺԹ·

1· Խոստովանութեան, Գ· Ե· Կ։ 2· Կամաւ և յօժարութեամբ իւրեանց · · · Ե։ 3· Կատարած այնպիսեացն · · · Ե· Կ։ 4· Որտին, Վ· Գ։ 5· Ըստ մարգարէին, Ե։ 6· Ընդունակութեան, Գ· Ըստ ունակութեան, Վ։

7. Մարդասէր բանն, Գ. Ե. Կ։ 8. Եկեսցեն Ե. հասցեն Կ։ 9. Առաջի Աստուծոյ, Ե։ 10 Յարգի, Գ.Ե. Կ։ 11 Տրտմութիւն, Գ. Ե. Կ։ 12 Առնել. Կ։ 13 Խորշիլ, Կ։

14 Հոկել, Գ. Վ։ 15 Անապաշխարիցն, Վ. Գ։ 16 Յիշատակս, Ա. Բ։ Յիշատակաւ, Կ։ 17 Խորհուրդն տէրունական, Գ. Ե. Կ։ 18 Խորհրդակից, Գ. Ե. Կ։ 19 Ուրախութեամբ, Գ. Ե. Կ։ Կող. Գ։ 20 Ապաշխարեցին, Ա. Բ։ Հաւատով, Ե։ 21 Ջիջուցանէ, Գ. Վ. Կ։ 22 Ջմեղսն, Գ. Ե. Կ։ 23 Անարատութեամբ, Ա. Բ։ 24 Կորուստ, Վ. Գ։ 25 Պաղատանս, Վ. Գ։

26 Հոկումն, Գ. Ե. Կ։ 27 Աղօթիւք և խնդրուածովք, Ա. Բ։ 28 Յիշատակս, Վ. Գ։ 29 Խնամակալից, Գ. Ե։ 30 Էին, Գ. Ե. Կ։ Են, Ա. Բ։ 31 Յափշտակութենէ, Գ. Ե։

32 Ի զգայութիւնս զգաստութեան . . . Գ, Ե, Կ։ 33 Շահաւորն, Վ. Գ։ 34 Շնորհք. Է։ 35. Ոխակալութեան. Գ. Է. Կ։ 36 Մտացն Գ. Կ։

37 Յայսոսիկ պարտ է. Կ։ 38. յարքայութեանն երկնից Յամենայն զօր Արարչէն, Ե։ 39 Եւ ոչ արկին զանձինս իւրեանց ի ներքոյ . . . Ե։ 40 Դարձուցանեն Վ. Գ։ 41 Մարդասէր Տէրն, Ա. Բ։

42 Տէրն, Ե. Կ։ 43 Յերթալ ձեր յաշխարհ, Ե։ 44 Լուսոյ, Գ. Ե։ 45 Ջճշմարտելս, Ա. Բ։ 46 Սիրելեաց, Ա. Բ։ Սիրողաց իւրոց, Կ։ 47 Ասելն, Վ. Գ։ 48 Յիշէր. Գ. Ե. Կ։ 49 Եւ զի. Վ. Գ։ 50 Ա յոռքիկ. Վ. Գ։ 51 Որոշեն և զատուցանեն. Վ։ 52 Ընդկրակաւ. Գ. Ե։ Ընդկրօնաւ. Կ։ 53 Որոշեն և զատուցանեն. Վ։ 54 Ջթարախն և զփուտն. Ե։

55 Պսակիլ և վայելել Գ. Ե. Կ։ 56 Ստունգանել Գ. Ե։ 57 Մեղացն, Գ. Ե։ 58 Եւ զմտաց, Ե։ 59 Սպառնալեաց, Գ. Կ։ 60 Յորում ակն ունիցի, Ա. Բ։ 61 Եղիցի, Վ. Գ։ 62 Երկուածս, Գ։ Ներկուածս, Ե։ 63 Յորդորել, Ե։

64 Վայելչութիւնք բարեաց, Ե։ 65 Ուր կան և մնան հանապազորդ . . . Կ։

Ա. և Բ։ օրինակների մէջ այս ճառի շարունակութիւնն

է հետեւեալ ճառի վերջը, սկսեալ՝ «խլել զամենայն բոյսս անօրէնութեան ի մտաց և ի զգայութեանց . . . :»

Գլ. Ի.

1. Ոմանք՝ խրատու: 2. Իշխան և տէր կացոյց, Դ. Ե.Կ: 3. ժամանակի, Գ. Վ: 4. Ջոյն, Դ. Կ: 5. Մատնեաց, Դ. Կ: 6. Որ և, Կ: 7. Կացցուք, Կ: 8. Բարութեանց, Դ. Ե. Կ:

9. փոխարինք, Գ: փոխարէնն, Ե: փոխարէնք, Կ: 10 Եւ պատժեցաւ ի Տեառնէ կայէն, Ե. Կ: 11 Վրէժս արդար . . . Ե: 12 Որ է զկորուսեալն գտանել . . . Կ: 13 Ազատեաց ըզ-տիեզերս, Կ: 14 Ի վայելումն՝ Կ: 15 Հայրն, Ե. Կ: Ամենակալ Հայրն, Ե: 16 Ընդդէմ տղմոյն, Դ. Ե. Կ: 17 Բարերարութեան, Դ. Ե. Կ:

18 Ուրախութեանցն, Դ. Ե. Կ: 19 Ժամանակաց, Գ.Վ: 20 Եւ թռչնոց ջոկք և երամք, Կ: 21 Որդւոց մարդկան, Ա. Բ: 22 Եւ մարգարտաց պայծառաց և այլ սոցին նմանեաց, Ե: 23 Որպէս և ասէ առաքեալն երանելին Պօղոս, Ե: 24 Եւ զյաւիտենական խնդութիւնսն, Ե: 25 Տանջանք կարծրագոյնք, Ե:

26 Գործակից, Դ. Ե. Կ: 27 կամօք, Դ. Վ: 28 Որ շնորհիւ, Ե: 29 Քարոզի, Դ. Ե. Կ:

30 Զհաւատացեալս, Գ. Դ. Կ: 31 Գովիչք, Վ. Գ: 32 Գոհութիւնք, Գ. Վ: 33 Եւ ընտանիք նորին սիրոյ, Ա. Բ: 34 Միշտ և հանապազ, Ե: 35 Յորդորէ, Դ. Ե. Կ: 36 Հրաշանգեալ յԱստուծոյ, Ա. Բ: 37 Ի ճշմարտութենէ, Ե: 38 Տալ զպատշաճն, Վ. Գ:

39 Զհոգւոր և զբարին և զպատշաճն, Ե: Զպատճառն և զպատշաճն, Ա. Բ: 40 Լինին խաւարին, Վ. Գ: 41 Խաւարին արտաքին, Վ. Գ: 42 Զհարկ, Ա. Բ: 43 Եւ գրոց սրբոց, Ե: 44 Առնէ, Վ. Գ: 45 կենարար, Դ. Ե. Կ: 46 Արբցեն, Ա. Բ: 47 Դատաստանի, Ե: 48 Զբոց հօտոյ, Ա. Բ: 50 Ցամենայն

զարշութեանց, որպէս և առաքեալն ասէ, Դ. Ե. Կ: 51 Ի Քրիստոս, Դ. Ե. Կ: 52 Ի կեանս, Գ. Վ: 53 Առաքինութիւն, Ա. Բ: 54 Որք ատելին, Ա. Բ: 55 Աշխարհականաց, Ա. Բ: 56 ժահոտիցն . . . Ա. Բ: ժախից, Վ.: 57 Տանջանաց, Ե:

58 Զգործ, Ա. Բ: 59 Ոչ դանդաղել, Դ. Ե: 60 Առողջութիւն, Կ: 61 Ցամօթմն, Դ. Կ: 62 կամ տանջեն, կամ զրկեն, կամ յափշտակեն բռնութեամբ . . . Ե: 63 Երիվարք Վ. Գ: 64 Եւ հաճութիւն կամաց տէրութեան, Դ. Ե. Կ: 65 Վերին Երուսաղէմի, Ե: 66 Իսկ որք ատեցին զաշխատութիւն հոգևորաց ոտից և զարտուղեցան ոտիւք . . . Ե: 67 Զարտուղեցան յուղիղ . . . Ա. Բ: 68 Զարաչար գնացիւք, Ե: 69 Ցղիղն, Գ. Վ: Ուղղոյ գլուխն, Ա. Բ:

70 Իսկ որք, Ա. Բ: 71 Ըստ ասելոյ մարգարէին, Ե: 72 Ասէ մարգարէն, Ե. Կ: 73 Եւ հոգի ուղիղ նորոգեա ի փորի իմում, Կ:

74 Հոգւոյն, Ա. Բ: 75 Որդեգրութեան, Ե. Կ: 76 Տժնտակացեալս, 77 Բաւէ ոք, Դ. Ե. Կ: 78 Փորոտին, Վ. Գ: 79 Ունին, Վ. Գ: 80 Պարտաւորեալ, Վ. Գ: 81 Արդարացեալք, Ա. Բ: 82 Ի ծառայութենէ, Գ. Վ: 83 Իւր, Վ. Գ: 84 Խափանէ ի մեղաց, Կ: 85 Եւ սուրբ առ, Գ. Վ: 86 ժառանգք, Գ.Ե: 87 Պակասաւոր, Կ: զՏէրն, Ե: 88 Եղեն չար դեք, Գ. Վ: 89 Լինէ . . . 90 Պատրեցան, Դ. Ե. Կ: 91 Ասելով այսպէս, Ե: 92 Տանջեա, Վ. Գ: 93 Զպատուականն, Գ. Վ: 94 Կիսատ, Ա. Բ: 95 Քարոզութեան, Դ. Ե. Կ:

96 Բազում ժողովուրդք, Գ. Ե. Վ: 97 Հրեշտակաց, Գ. Ե. Կ: 98 Բանդակալաց, Գ. Վ: 99 Զարդուք, Ա. Բ: Զարդուքըն, Գ. Վ: 100 Անօրինաց, Ա. Բ: 101 Զպէտս, Գ. Ե. Կ: 102 Ի վաղճանի աշխարհի, Ե:

103 Եւ ի յերկրէ զմարդ և զամենայն կենդանիս, զի զանօրէնսն պատուհասեաց, Կ: 104 Այրեցան, Ե: 105 Եւ անիրաւաց, Դ. Ե. Կ: 106 Եւ ի բոյսս, Ե: 107 Խրատատու, Ե: 108 Տէր Վ. Գ: 109 Հնազանդեալս, Գ. Վ: 110 Զաստուա-

ծայնոցն, Դ. Ե. Կ: 111 *Աշխարհական*, Ե: 112 *Զի են այն շահիւք*, Ա. Բ: 113 *Ըստ բնութեան հօրն իւրոյ*, Դ. Ե. Կ: 114 *Ոմանք՝ առցեն*: 115 *կատարեսցեն*:

116 *Անօրէնութեան երթիցէ*, Դ. Ե. Կ: 117 Ի *վերայ արդարոց*, Կ:

118 *Զառնիցեն*, Կ: 119 *Սիրել*, Ե: 120 *Քրիստոսի*, Դ. Ե. Կ: 121 *կամ*, 122 *վճարելոցն սատի և մահուանն*, Ե: 123 *Տանջանքն և*, Ե: 124 Ի *բարի*, *ուելի* . . . Ա. Բ. Գ. Վ: 125 *Իրաւադատք*, Ա. Բ: 126 Ի *խնամս*, Ա. Բ:

ԳԼ. ԻԱ:

1. *Սրբոյն Գրիգորի*, *ոմանք*: 2. *Արարչին Աստուծոյ*, Ե: 3. *Առ*, Դ. Ե. Կ: 4. *Ցաւելուածոցն*, Ա. Բ: 5. *Բարերար կամացն Աստուծոյ* . . . Կ: 6. *Զայլս լաւութիւն կանխագիտութեան* . . . Գ. Վ: *Զայս լուսաւոր կանուխգիտութիւն*. Ա.Բ: 7. Ղուկ. Է. 47: 8. *Շնորհացն* . . . Դ. Ե. Կ: *Զիրաւունս*, Ա. Բ: 9. *Բարերարն Աստուծոյ*, Ե: 10 *Հռ*. Բ, 11: 11 *Իրաւանց*, Ա. Բ: 12 *Մտահոսանան խորհուրդք*, Գ. Վ: *Մտահոսական* . . . Դ. Ե. Կ: 13 *Զհաւանեցուցանեն*, Ա. Բ:

14 *Ցառաջագայն*, Կ: 15 *Համարձակութեամբ*, Դ. Ե. Կ: 16 *Բազմացուցանել*, Դ. Ե. Կ: 17 Է *իմացն*, Կ: *Իմացաւ*, Ա. Բ. Ե: 18 *Անձանց*, Կ: 19 *Ընդ սուրբս*, Ա. Բ: 20 *Եւ ճշմարտութեան*, Ե: 21 *Ընդ*, Դ. Ե. Կ: 22 *Ցորդորեալ*, Դ. Ե. Կ: *Զարդարեալ*, Ա. Բ:

ԳԼ. ԻԲ.

1. *Այլ միտք այնպիսեացն տկար է* . . . Ե: *Այլ միտք*, Դ: *Այլամիտք* [1] Ա. Բ: 2. *Զօրացուցէ*, Վ: 3. *Եւ ոչ թերանայ*, Ա. Բ: 4. *Հաստատ*, Ա. Բ: 5. *Մարգարէին*, Դ. Կ: 6. *Փախուցանէ*, Գ. Ա. Բ: *Խափանէ*, Ե: 7. *Ժամանակաց*, Վ. Գ:

8. *Առ արարածս*, Դ. Ե. Կ: 9. *Ցօգուածք*, Ա. Բ. Կ. 10

Առաջի է գիտութիւն, վ. գ: 11 Բարձրելոյն, դ. ե. կ: 12 Առանց հրամանի Նորա, Ա. Բ: 13 Վտանգելոց և տարակուսելոց, եթէ ոչ նոյն բարերարն Աստուած, Ա. Բ:

14 Օգնութիւն, վ: Զօգնութիւն, գ: 15 ի փառաբանութիւն ամենասուրբ երրորդութեան, և միաբան տէրութեանն, զի ամէնն, Ա. Բ: 16 Երրորդութեանն, ե: 17 Զերկինս, վ. գ:

18 Երգոց, կ: 19 Բարիսն, դ. ե. կ: 20 Սրբոյ յաւիտենից, վ. գ:

ԳԼ. ԻԳ.

1. Ճգնաւորաց, գ. վ: 2. Որ յառաքինութիւն յորդորեն, գ. վ: 3. Ամենայն որք, գ. վ: 4. Ճգնաւորել, վ. գ: 5. կալ, գ. վ: 6. Թշնամանաց զբարեբանութիւն, գ. վ:

7. Ճակատամարտս: Զի միշտ յայտսիկ . . . կ: 8. վեհագոյնս առնել, վ. գ: 9. Մերկանալ զաշխարհական ցանկութիւնս, գ. վ: 10 Սիրով, կ: 11 Առաջնորդեալ, կ: 12 Բարեձևութեամբ, կ: 13 Զի զինուորութիւն, դ. ե: 14 ի Ներքըս ածել, կ: 14 Զստուգաբանութիւն, վ:

15 փախուցանել, ե: 16 Պահեսցի, կ: 17 Եղբայրութեան, վ. գ: 18 Ամրացեալ, դ. ե. կ: 19 ի սրբութեան, ի քաղցրութեան, ի բարութեան, գ. վ:

20 Սրբեցից, գ. վ: 21 կատարեսցեն, կ: 22 Լծովն Քրրիստոսի, ե: 23 Ցաղագս վարձուցն, դ. ե: 24 Դատաստանի, ե: 25 Վերակացութեան, դ. ե: 26 Զի, կ:

27 կայցեն ի հաւանութիւն, կ: 28 Զի դ. կ: 29 Լուսոյ: 30 Եղբայրութեան, նոքա նմանեալք են . . . և զիւղ սիրոյն ոչ ունին, որոց . . . վ. գ: 31 Բարեաց, վ. գ: 32 Հանգաման, վ: 33 Լաւութեան և պիտանութեան, վ. գ: 34 ի Նա, վ. գ: 35 Հաճոյ Աստուծոյ, վ. ժ:

36 Առաջնորդին, դ. ե. կ: 37 Զյիշատակսն, վ. գ: 38

Տիւրահաւանութիւն, վ. գ: 39 Հայրն, գ. կ:

40 կամօքն, կ: 41 Յուցանեն, կ: 42 ի դատաստանին և յաւիտենից, դ. ե: 43 Եւ ի հասարակաց եղբայրութենէն ի պէտս եկեղեցւոյն, դ. ե: 44 Հաւատարմութիւն, վ. գ: 45 վերակացուին, վ. գ: 46 Պարսպեցան, գ: 47 Սկզբման, վ. գ:

48 Ջնոյն, դ. ե. կ: 49 Նամեծ կոչեցի . . . դ. ե: 50 Արարեալ, վ. գ: 51 ի ծառայից, գ: ի ծախս առից, վ: 52 Մայրենի, վ. գ:

53 Հիւանդացն, ե: 54 Խնդիրսն, վ. գ: 55 Խնամելոյ, վ. գ: 56 վայելեն, վ. գ: 57 Ոգւոյն, կ: 58 Եւ օտարացեալք յԱստուծոյ, ե: 59 Եւ խաւարեցուցանէ, ե: 60 Անարատ սուրբ և անբիծ դ. ե. կ: 61 Հաւաստիք երևել, վ. գ:

62 Զհամեմատութիւն, դ. ե. կ: 63 Ժառանգակիցք, դ. կ: 64 Գտանել, ե: 65 կատարել: կ: 66 Եկեղեցւոյ, ե. կ: 67 Ընտրողութիւն, դ. ե. կ: 68 Զգաստութեամբ, դ. ե. կ:

69 Ընդ մեզ, ե. կ: 70 Առէ նոցա, վ. գ: 71 Պակասեսցէ, վ. գ: 72 Որ մնխացաւ ընդ ճգնաւորաց կարգաց և կրօնից, դ. ե. կ: 73 Ունելով, կ: 74 Նոյին, կ: 75 Զայնակցեալք դ. ե. կ: 76 Հաստուցեն, դ. ե. կ:

77 Եւ երկինք որ (որպէս) պայծառ գլխաւորութեամբ, դ. ե. կ: 78 Իւրոյ, վ. գ: 79 Լինիցին, կ: 80 Տժնտակ իրացըն, գ: 81 Իցեն, կ: 82 Այստեղից մինչև նոր պարպերութիւնը չիք, դ. ե. կ:

83 Ուրեք, ե. ե. կ: 84 Սովորութեանն, գ. վ: 85 Եւ Որդւոյն Միածնին և Ս. Հոգւոյն ճշմարտին և մարդասիրի, ե: 86 Առաքեալ ատտ, կ: 87 Զլեալսն, դ. ե: Զկեալսն, կ: 88 Զհետ երթալ, դ. ե. կ: 89 Արհամարհելով, դ. ե: կ: 90 Մեկնեալ, դ. ե. կ: 91 Նորին չունին՝ աշխարհիս: 92 Ի հրեշտակայինսն լինել, դ. ե. կ: 93 Վարս ոչ հայելով յերկրաւորս, այլ լինել ընդունակ լուսոյն աստէն, գ. վ: 94 Ի զգայութիւն, ե: 95 Եւ մաքրութեամբ հոգւոյ և մարմնոյ ատտ և կենդանարար Քրիստոսի ազատութեամբն ազատանալ, որ . . . ե: 96 Յորժամ գայցէ փառօք հօր (Տէրն Քրիստոս) . . . դ. ե: 97 Յուսացելոց և սիրողաց իւրոց, ե: 98 Որում վայելէ փառք պատիւ և երկրպագութիւն . . . կ:

ՀՍԽՀ ՀՈՒՐՈՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Научная Библиотека
7/XI 1922
имени Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՑԱՆԿ ՆԻՒԹՈՑ

Ադամ	99
Աբրահամ	163
Աղքատ հոգւով	106
Աղքատ	114
Աշխատութիւն	69
Ապաշխարութիւն	92, 168, 206
Ամուսնութիւն	150
Ամբարիշտք	182
Առաքինութիւն	51, 203
Առաքեալ	79
Առողջութիւն	116
Առաջնորդ	196
Աստուածպաշտութիւն	30, 173, 206
Աստուածանմանութիւն	219
Արարչութիւն	5, 68, 27—28
Արդարք	181
Աւետիք	10, 61, 198
Բարեգործութիւն	41, 44
Բարի	52
Բարեխօսութիւն	163
Բարեպաշտութիւն	39
Գիրք աստուածային	105
Գթութիւն	136
Գործք	171, 192, 236
Դատաւոր	104
Դատաստան	151
Դարման	174
Դաւթի զղջումը	213
Դժոխք	221, 231
Դրախտ	94

Դժնդակութիւնք . . . . . . 81՝ 83
Եղիա 97
Եպիսկոպոս 112
Երախտիք Աստուծոյ 199
Երանիք . . . . . 106՝ 180
Երկիւղ Աստուծոյ 127
Երրորդութիւն սուրբ . . . 1՝ 39՝ 55
Եւա 99
Զգաստութիւն 137
Զղջումն . . . . . 209՝ 235
Ընկերսիրութիւն 104
Ընտանիք Աստուծոյ 168
Թագաւոր 104
Ժառանգաւորք 104
Ժուժկալութիւն 95
Իմանալիք 136
Իսահակ 163
Իսրայէլ 163
Իրաւախորհ 105
Իշխան 116
Լալ . . . . . 108՝ 154
Խաղաղարար 109
Խնամք 179
Խոնարհութիւն 133
Խոստովանող 45
Խոստովանութիւն 207
Խրատ 114
Ծիծաղել 108
Ծնունդ . . . . . 150՝ 183
Ծոյլ 206
Կամք . . . . . 105՝ 199
Կենդանի մեռեալ 158

կենցաղ 179, 180
կոծ 154
կուապաշտութիւն 31
կրօնաւոր 248
Հայր Աստուած . . 1, 2, 39, 55, 57, 234
Հաղորդութիւն . . . 45, 46, 209—
Հարուածք 233
Հանդերձեալը 220
Հատուցումն 172, 182
Հաւատք 123
Հեզ 107, 128
Հնազանդութիւն . . . 105, 133
Հիւանդ 116
Հոգի սուրբ . . . 1, 2, 39, 55, 57
Հոգիք 181, 14
Հրեշտակ 30, 40, 91, 189
Ճգնաւորիլ . . . 175, 200, 278
Ճշմարտեալք հաւատով . . . 146
Մահ 20, 480, 57, 157
Մարգարէ 45, 253
Մարտիրոս 111, 117
Մարդեղութիւն 185
Մեծատուն 1174
Մեղաւոր 156
Մեղքեր . . . 50, 57, 93, 96, 99, 104
Միաբանութիւն 135
Մկրտութիւն 45, 213
Մովսէս 97, 113
Յաղթութիւն 203
Յայրատ 114
Յարութիւն 168
Յովսէփ 161
Յոյս . . . 117, 121, 126, 162
Նահատակ 163
Նոյ 163
Շնորհք 40, 174, 241
Ողորմածք 108
Որդի Աստուծոյ . . 1, 2, 39, 55, 57,
Ջար 52, 199

Չարագործութիւնք 43
Պահք 90
Պատարագ 153, 162, 166
Պատիժք 47, 76, 88, 105
Պատերազմ առաքինութեան 114
Պիղծ 84
Պետրոս 214
Պոռնկութիւն 80
Ջրհեղեղ 231
Ռուբէն 164
Ս. Երրորդութիւն 1, 39, 55
Սատանայ 19, 57, 59, 60, 91, 188, 228
Սէր 104, 105, 123, 227
Սգաւոր 107
Սուրբք 98, 112, 121, 164
Սուրբ սրտիւք 109, 124
Սպասաւոր 122
Սպառնալիք 10, 61, 198
Սրբութիւն 122, 219
Ստահակ 114
Վարդապետ 10, 197
Վարձ 70, 75, 111, 112
Վատք 199
Վերակացուք 117, 193, 257
Վկայ 45
Տաղանդ 240
Տաճար 80
Տնտես 257
Փառք 104
Փրկութիւն 20, 165, 175
Քաղցրութիւն 133
Քաղցեալ և ծարաւի 108
Քահանայութիւն 10, 17, 45, 112, 229
Քահանայապետք 101
Քաջք 199, 201
Քարոզութիւն 79
Օթևան սուրբ 102
Օծումն 44
Օրինակ 161
Օրէնք 200

ՅԱՆԿ ԳԼԽԱԿԱՐԳՈՒԹԵԱՆՑ

1՝ Յառաջաբան. . . . . Է—ԺԷ
2՝ Ի Ս. Երրորդութիւնն 1
3՝ Առանձնաւորութիւնք 4
4՝ Միտք Հաւատոյ 22
5՝ Յանդիմանութիւն մոլորելոց ի գիտութիւն աստուածպաշտութեան 27
6. Հաստատութիւն ճշմարտութեան և առաջնորդութիւն կենարար խրատուց 39
7՝ Յանդիմանութիւնք ծանծկութեց իրաց որ զաներևոյթսն յերևելիս անծ 55
8՝ Վասն յօրինուածոյ արարածոց . . 68
9՝ Յանդիմանութիւն դժնդակ վարուց և ընծայութիւն առաքինութեան Հանդիսից . . 79
10՝ Վարդապետութիւն կատարեալ ի տէր ամենարուեստ պաՀոց 90
11՝ Երախտաւորութիւն անզեղջ բարերար կամացն և յորդորումն ի լաւն և յառաւելն ըստ ճշմարիտ առաքինութեանն ի փառս ամենասուրբ Երրորդութեանն ճառեալ 103
12՝ Վասն վարուց առաքինութեան որ Հանդիսիւք լաւութեան պսակեալ երանին . . . 121
13՝ Վարդապետութիւն բարերար արարչին խընամոց և կշտամբութիւն անՀնազանդութեան և ստաՀակութեան և առաջնորդութիւն բարութեան բարեացն լաւութեան 149
14՝ Հանդէս վասն լաւութեան յիշատակաց ի պէտըս օգտից զաներևոյթսն յերևելիս ցուցանելով ի գործս առաքինութեան փախել ի յայսն կենդանի ի բանակս զուարթնոցն որ աստ կատարեցին զՀաճոյսն Աստուծոյ 161

15՝ Յաղագս մարդկութեան որ յԱստուծոյ խնամք տեսչութեան 173
16՝ Վասն հոգւոյ մարդկան բացայայտութիւն 179
17՝ Վասն մարտիրոսացն վարդապետութիւն ուսմանց 187
18՝ Զգուշութիւն զգաստութեան շահաւոր պատրաստութեան ընդ մտերիմն և ընդ դժնդակն պատիւ և պատիժս 192
19՝ Գովութիւնք Աստուծոյ երախտեացն հանդիսիւք մարտիրոսաց քաջաց և առաքինեաց . 198
20՝ Յորդորումն ապաշխարութեան խոստովանեալ 206
21՝ Առաջնորդութիւն ամենարուեստ խրատուց, հանգամանք գիտութեան և իմաստից . . 218
22՝ Վասն տրոց իմաստութեան որ ի հոգւոյն Սրբոյ պարգևեցաւ սուղ ինչ բանս . . 240
23՝ Վասն անփոփոխ ինքնութեան էութեանն Աստուծոյ 243
24՝ Խրատք ճգնութեան և ցոյցք հանդիսից որ յառաքինութեան յորդորմունս . . . 248
25՝ Աղօթք յորժամ յորոգայթ անկանիցի ոք 266
26՝ Փոխայլակք Ա. ճառի . . . 268
27՝ — Բ. ճառի . . . 271
28՝ Ընթերցուածներ 281
29՝ Լուսաբանութիւնք և առաջնորդութիւն ընթերցանութեան . . . . . .
30՝ Ցանկ նիւթոց 349
31՝ Ցանկ գլխակարգութեանց . . 353
Ուղղելիք . . . .

ԿԱՐԵՒՈՐ ՈՒՂՂԵԼԻՔ

Էջ.	Տող.	տպուած է.	պէտք է լինի
Գ.	3, ներք.	ընծայաբէրէ	ընծայաբերէ
Ե.	1, »	նորո ապէս	նորոգապէս
ԺԳ.	15 վեր.	իջիք	լիջիք
5,	33	բարերարութիւնն, իւր	բարերարութիւնն իւր
»	36	սաացուածոց	ստացուածոց
7	112	առաջնորդութենէ	յառաջնորդութենէ
»	»	510	110
8	134	ըստ	Ըստ
9	142	ըստ	. Ըստ
10	197	ամբարտաւանեալս	ամբարտաւանեալս 29
11	205	աներևութիւնքն	աներևութիւքն,
15	348	նորոգե	նորոգել
23	27	ամ	ժամ
28	23	բնութեամբ	բնութեամբք
»	38	զպատկերի	ըստ պատկերի
30	84	գլխնամիչն	զարարածս ի
31	140	երկիր և չենն և ամենայն․․ յոչնչէ,	երկիր և ամենայն․․ յոչնչէ, և
«	»	աստուածք.	չեն աստուածք . . .
34	206	արարածք	արջ
»	»	եղեն	եղն
«	225	ընդուել	ընդունել
50	342	շարժմուն	շարժմունք
53	341	հակառակորդն, որ	հակառակորդն, . . . զոր
»	ծան. **	թեսաղ.	Բ. Թեսաղ.
57	64	բխումն	բղխումն
58	100	ագահութիւն և	ագահութիւն ոչ էր և
70	79	վայելեսցեն	վայելեսցէ
76	* ծան.	եղկե.	Եղեկ.
87	240	իբբև	իբրև
113	332	սրտէ	սրտի
125	135	զկեաան	զկեանան
133	386	Հոգւնոյ	Հոգւոյն

Էջ.	Տող.	սպրւած է	պէտք է լինի.
138	516	Այլք	Այլ
144	710	լկամս	զկամս
145	746	անկէ	անկէ
147	790	արդարութիւն	արդարութեամբ
»	793	լուսովն	յուսովն
150	41	պատրաստութեամբ	պատրաստութեամբ
151	ծան.	Սաղմ. ԼԸ.	Սաղմ. ՃԼԸ, 7
152	84	չարեաց	չարաց
153	125	ի բազմաձեւնութեամբ	բազմաձեռնութեամբ
155	171	իւիք	իրիք
157	** ծան.	Բ. Մակ. ԺԲ.	Բ. Մակ. Դ. ԺԲ.
158	266	թաղեալ	թաղել
»	269	վարուց	վարուց,
»	* ծան.	իմոստ	իմաստ.
»	** »	Թ.	Թ.
114	95	աղօթիւք	աղօթք
»	98	նորա։	նորա
165	130	զօրութիւն	զզօրութիւն
166	*** ծան.	Ե,	Ե,
170	244	մարմնոյ և արեան	մարմնով և արեամբ
»	258	գործն	գործքն
171	284	նոցա	նորա
174	27	շնորք	շնորհք
157	70	ու	որ
176	88	կայ	որ կայ
183	171	մարգարէ	մարգարէի
»	* ծան.	60 Բ.	ՃԲ,
186	224	յուխտենից	յաւիտենից
188	25ա	յորդորեցին	յորդորեսցին
»	28ա	Քրիստոս	Քրիստոսի
»	26բ	Աստուածս	աստուածս
»	43	զի	զ'ի
»	44	զի	զ'ի

Էջ.	Տող.	տպուած է	պէտք է լինի.
189	76	լուծանելով	լուծանելոյ
192	10	զհայրն ձեր բարիս՝ և փառաւորեսցեն զհայրն ձեր երկնաւոր.	զհայրն ձեր երկնաւոր».
»	15	քարոզք ճշմարտութիւնն	քարոզք ճշմարտութեանն, ճշմարտութիւնն
193	**** ծան.	Հռ.	Հռ. Ժ.
196	99	օտարեն	օտար են.
197	127	վատթարն	վատթարէն
207	25	ցաւուցն	ցաւոցն
»	* ծան.	ՃԺԹ	ՃԺԸ.
209	100	կորստեան	կորուստ
211	144	ի խորութենէ	որ ի խորութենէ
214	249	Զի	Զի որ
228	296	կայ	հակառակ կայ
»	297	հակառակ էր	հակառակէր
229	315	մեզ	զմեզ
230	363	վնասսուց	վնասուց
»	366	տպըստամբեալք	ապստամբեալք.
231	376	յաբարշտութեան	յամբարշտութեան
»	394	Նըրա	Նորա
»	385	վառն	վասն
232	418	տեառն տէր	տեառն
234	458	արարարիչ	արարիչ
»	462	մարգարիւն	մարգարէիւն
»	479	է ած	է Աստուած
236	532	զնկերս	զընկերս
238	580	գոյ	գոլ
241	26	երկասիրաց	երկրասիրաց
244	38	ժարշմանց	շարժմանց
»	52	յառաջ գիտութիւն	յառաջգիտութիւն
245	54	բարձեալ *	բարձեալ
248	1'	ոք	որք
»	16	յարատութեանն	յայրատութեանն
249	41	աշխարհական	յաշխարհական

Էջ.	Տող.	տպուած է.	պէտք է լինի.
250	64	Թ․ւլուԹեանն.	ԹուլուԹեանն
255	209	Աստուծայ	Աստուծոյ
259	ծան.	Իե	Իէ
313	վերջում.		Ս. Գրիգոր Լուսաւորչի աղօթքը չգտանք գրչագրների մէջ. թէ այս և թէ մի ուրիշն էս, որ այնքան էլ վեհութիւն չէ արտացոլում. տպուած կայ նաև Եփրեմ Խուրին Ասորւոյ աղօթագրքի մէջ, Երուսաղէմ, 1848. էջ. 81—87. միայն չգիտենք՝ և տարակուսումենք թէ վերնագրի «Նորին» խօսքը Ս. Գրիգոր Լուսաւորչին վերաբերում լինի.

25n

3394

Г-41